ՀԵԿՏՈՐ ՄԱԼՈ

Վառնիկ և տնպատեիմի

Նկարազարդումը՝ Շառլոթ Դեմաթոնսի

1915.info

ռեպատրիացիայի 1915 info կայքը

Boulogne sur Mer
Montreuil
Abbeville
Picardie
St Quentin
Beauvais
Seine
Evreux
PARIS
Fontenay-sous-Bois
Marne
Gentilly
Charenton
Corbeil
Fontainebleau
Melun
Montereau
Moret
Troyes
Champagne
CANAL DU LOING
Montargis
Auxerre
Joigny
Seine
Châtillon-s-Seine
CANAL DE LA BOURGOGNE
Yonne
CANAL DU NIVERNAIS
Loire
Gien
(Dreuzy)
Saône
Morvan
Côte d'Or
Dijon
Cher
Bourges
Châtillon-en-Bazois
Creuse
St Amand
Decize
Moulins
Chalon-s-Saône
Lac de Genève
Vevey
CANAL DU CENTRE
Charolles
Mâcon
Montluçon
Digoin
Vichy
La Bourboule
Loire
Culoz
Seyssel
Aubusson
Bourg-Lastic
Chavanon
Royat
Clermont-Fd
Lyon
Rhône
Ussel
St Nectaire
Issoire
Vienne
Isère
Tournon
Vézère
St Flour
Auvergne
Aurillac
Valence
Dordogne
Montélimar
la bastide Murat
Lot
Mende
Quercy
Rouergue
Cévennes
St Andéol
(Varses)
Causses du Méjean
Alès
Avignon
Tarascon
Arles
Tarn
Languedoc
Frontignan
Toulouse
Béziers
Sète
CANAL DU MIDI
Villefranche-de-Lauragais
Avignonet
Lauragais
Carcassonne
Aude
Ecluses de Fonserannes
Garonne
Canal du Midi

թվայնացրել է 1915.info կայքը

ՀԵԿՏՈՐ ՄԱԼՈ

Առանց ընտանիքի

Նկարազարդումը՝

Շաուլոթե Դեմաթոնսի

Թարգմանությունը ռուսերենից՝

Աիդա Հայրապետյանի

ԶՈՒՆԳԱՒԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

թվայնացրել է 1915.info կայքը

ՀՏԴ 821.133.1–31 Մալո
ԳՄԴ 84 (4Ֆր)–44
Մ 167

Մալո Հեկտոր
Մ 167 Առանց ընտանիքի: Վեպ/Հեկտոր Մալո.— Եր.: «Զանգակ» հրատ., 2019.— 384 էջ:

«Առանց ընտանիքի» վեպը ֆրանսիացի վիպասան Հեկտոր Մալոյի ամենահայտնի երկն է: Վեպի գլխավոր հերոսը Ռեմին է. ընկեցիկ մի տղա, որին տասը տարեկան հասակում հայրացուն՝ Բարբերենը, վաճառում է շրջիկ երաժիշտ Վիտալիսին: Սկսվում են Ռեմիի հետաքրքիր արկածները Ֆրանսիայի ու Անգլիայի գյուղերում ու քաղաքներում: Չնայած բազմաթիվ դժվարություններին՝ Ռեմին երբեք չի հուսահատվում և իր բարեկամների՝ Մատտիա երաժշտի, Կապիշան և Հոգյակ անունով կապիկի հետ հաղթահարում է բոլոր փորձությունները:

ՀՏԴ 821.133.1–31 Մալո
ԳՄԴ 84 (4Ֆր)–44

ISBN 978–9939–68–752–0

© 2016 illustrations Charlotte Dematons

Originally published under the title Alleen op de wereld by Uitgeverij J.H. Gottmer/ H.J.W. Brecht bv, Haarlem, The Netherlands; a division of Gottmer Uitgeversgroep BV

© Zangak–97 LLC (Armenian edition), 2019

© «Զանգակ–97» ՍՊԸ (հայերեն հրատ.), 2019

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Սույն հրատարակության որևէ հատված չի կարող վերարտադրվել մեխանիկական, էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և/կամ այլ եղանակներով՝ առանց հրատարակչի գրավոր համաձայնության:

թվայնացրել է 1915.info կայքը

ԱՌԱՋԱԲԱՆ

1878 թ. Փարիզում՝ «Էդուար Դանտյու» հրատարակչությունում, լույս է տեսնում «Առանց ընտանիքի» *(Sans famille)* վեպը, որը շատ արագ դառնում է երեխաների կողմից ամենաընթերցվող գրքերից մեկը, իսկ ժամանակի ընթացքում՝ ճանաչվում որպես մանկական գրականության դասական երկ: Գրքի հեղինակը իրավաբան, գրաքննադատ և վիպասան Հեկտոր (Էկտոր) Անրի Մալոն էր:

Տասնիններորդ դարավերջին Ֆրանսիայում բացառիկ բարենպաստ միջավայր էր ստեղծվել մանկական գրականության և գրատպության զարգացման համար: Հրատարակվում էին մանկական մատենաշարեր ու ամսագրեր, կանոնավոր լույս էր տեսնում ժամանակի ամենաբարձր հեղինակություն վայելող մանկական պարբերականը՝ «Հանդես կրթության և զվարճանքի» (*Magasin d'éducation et de récréation*):

Բնավ «չխորշելով» մանուկ ընթերցողի համար ստեղծագործելուց՝ պարբերականին թղթակցում էին այնպիսի մեծանուն հեղինակներ, ինչպիսիք էին Ալֆոնս Դոդեն, Ալեքսանդր Դյուման, Ժորժ Սանդը, Ժյուլ Վեռնը և այլք: Այս նույն շրջանում, սակայն, կար հեղինակների մի այլ խումբ, որոնք թեև զիջում էին առաջիններին յուրատիպ հեղինակային ոճի տեսանկյունից, սակայն ուշագրավ իրադարձություններով ու արկածներով լի պատմություններ շարադրելու անգերազանց վարպետներ էին: Այդպիսիք էին Ադոլֆ Բադենը («Ժան Կաստեյրա. երեք երեխաների արկածները Ալժիրում», 1888 թ.) և Հեկտոր Մալոն:

Վերջինիս հեղինակած շուրջ յոթանասուն գրքերից միայն երեքն էին, որ լայն ճանաչում ունեցան և իրենց մնայուն տեղը գրավեցին ֆրանսիական գրականության մեջ. «Ռոմեն Կալբրի» (1869 թ.), «Ընտանիքում» (1893 թ.) (այս վեպը ժամանակին արևմտահայերեն թարգմանեց հայ արձակագիր և հրապարակախոս Երվանդ Սրմաքեշխանլյանը՝ Երուխանը՝ տպագրելով «Արևելք» թերթում 1894–1895 թթ.) և «Առանց ընտանիքի» երկերը:

թվայնացրել է 1915.info կայքը

«Առանց ընտանիքի» վեպի հերոսին՝ Ռեմիին, ութ տարեկանում վաճառում են շրջիկ երաժիշտ Վիտալիսին: Մալոն իր հերոսին «ուղեկցում է» Ֆրանսիայի և Անգլիայի քաղաքներով, ավաններով ու գյուղերով: Տարբեր փորձությունների միջով անցնելով՝ տղան հասունանում է, իմաստնանում, ձևավորվում է նրա աշխարհընկալումը: Ռեմիին կարելի է համարել ճանապարհի «որդեգիր»: Գրական այս ժանրի՝ հասունացման պատմության (récit initiatique) նախատիպը ֆրանսիական մանկագրության մեջ արդեն կար: Գրքի հրատարակությունից մեկ տարի առաջ լույս էր տեսել Գ. Բրունոյի (Օգյուստին Ֆույեի գրական կեղծանունը) «Երկու երեխաների ճամփորդությունը Ֆրանսիայով» վեպը, որը միաժամանակ ծառայում էր որպես աշխարհագրության դասագիրք:

Այսօր Մալոյի «Առանց ընտանիքի» վեպն ունի բազմաթիվ թարգմանություններ, հին ու նոր վերապատումներ, փոխադրություններ: Վեպից հատընտիր էջեր ներառված են դպրոցական ընթերցարանների մեջ: Գրքի հիման վրա ստեղծվել են բազմաթիվ ֆիլմեր, որոնցից վերջինը (2018 թ.) Անտուան Բլոսիեի «Ռեմին առանց ընտանիքի» ֆիլմն է: Նշենք նաև 1984 թ. խորհրդային տարբերակը, որտեղ Վիտալիսի դերում հանդես էր գալիս ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը:

Վեպի ներկա թարգմանությունը Աիդա Հայրապետյանի ռուսերենից արված տարբերակն է, որն ունեցել է երկու հրատարակություն՝ 1957 և 1978 թթ.: Այս շնորհալի թարգմանչի ջանքերով հայ պատանի ընթերցողը ծանոթացել է ֆրանսիական գրականության այնպիսի հայտնի երկերին, ինչպիսիք են Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» (II հատոր, 1966 թ.), «Ասկանիո» (1968 թ.), «Վիկոնտ դը Բրաժելոն կամ տասը տարի անց» (1984 թ.), Ռոբերտ Լուիս Ստիվենսոնի «Առևանգվածը. Քաթրիոնա» (1970 թ.) վեպերը:

Ռուսերենով միջնորդավորված թարգմանական երկերը ֆրանսիական մանկական գրականության հայերեն թարգմանությունների թվում ուրույն տեղ են զբաղեցնում, թեև դրանց կարևորությունը հայ մանկագրության զարգացման գործում հաճախ թերագնահատվել է: Միջնորդավորված թարգմանությունը, որպես կանոն, նախորդում է բնագրային թարգմանությանը՝ վկայելով այն մասին, որ ընթերցողի, մասնավորապես մանուկ ընթերցողի համար առավել էական է գեղարվեստական երկի՝ որպես մշակութային իրադարձության իրազեկությունը, քան բնագրին թարգմանության համարժեքության աստիճանը:

թվայնացրել է 1915.info կայքը

Գրականության պատմությանը հայտնի են միջնորդավորված թարգմանություններ, որոնց դերն անգնահատելի է: «Հազար ու մեկ գիշերի» եվրոպական լեզուներով թարգմանությունների մեծ մասը նախ արվել է Անտուան Գալանի ֆրանսերեն տարբերակից (1704–1717 թթ.), որ շրջադարձային դեր խաղաց արևմտաեվրոպական գրական ճաշակի հետագա զարգացման մեջ:

Հայ թարգմանական մանկագրության մեջ նման երկերի անժխտելի գեղարվեստական որակը բացատրվում էր ինչպես բնագրի վերստեղծման խնդրում թարգմանչին ներկայացվող խիստ պահանջների, այնպես էլ լուրջ հրատարակչական գրաքննության առկայությամբ: Էական դեր էր խաղում նաև այն, որ որպես թարգմանիչներ հանդես էին գալիս նաև նշանավոր գրական դեմքեր, որոնք, հենվելով միջնորդ լեզվի վրա, ստեղծում էին բարձրարժեք երկեր (Աթաբեկ Խնկոյան, Հայրապետ Հայրապետյան, Գեղամ Սարյան, Սուրեն Վահունի, Սաղաթել Հարությունյան և այլք):

Մալոյի վեպի թարգմանական տարբերակներում (անգլերեն, ռուսերեն, հայերեն) ինչ–ինչ նկատառումներով արված են կառուցվածքային փոփոխություններ. վերանայվել է գլուխների քանակը, կրճատվել են պատմության վերջաբանն ու այն ամփոփող նեապոլյան երգի նոտագիր էջերը: Հանվել է հեղինակի՝ դստերն ուղղված գեղեցիկ և հուզիչ ընծայագիրը, որն ամբողջությամբ բերում ենք ստորև.

«Այս գիրքը գրելիս մշտապես քո մասին էի մտածում, զավակս, և քո անունն ամեն վայրկյան շուրթերիս է եղել: Արդյո՞ք Լյուսին զգալու է դա: Արդյո՞ք կհավանի: Հավիտյանս ի՛մ Լյուսի: Անունդ, որ այդքան հաճախ եմ արտաբերել, պետք է որ դրոշմված լիներ գրքի էջագլուխներին: Չգիտեմ ինչ ճակատագիր է սպասում այս էջերին, բայց, ինչ էլ լինի, դրանք գրելն ինձ պարճառել է հաճույք, որ ցանկացած հաջողությունից կարևոր է: Այդ հաճույքը գիրքը քեզ առաջարկելու բերկրանքն է և այն մտքի գիտակցումը, որ դու, հնարավոր է, կարդալու ես այն»:

Ալվարդ Ջիվանյան

Ալպիական վարդ։ 1915 թուական

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Գլուխ 1. Գյուղում
Գլուխ 2. Ընտանիքի կերակրողը
Գլուխ 3. Սինյոր Վիտալիսը և նրա թատերախումբը
Գլուխ 4. Հարազատ տունը
Գլուխ 5. Ճանապարհին
Գլուխ 6. Իմ առաջին ելույթը
Գլուխ 7. Ես կարդալ եմ սովորում
Գլուխ 8. Դատը
Գլուխ 9. Ես մնում եմ մենակ
Գլուխ 10. Լողացող տնակը
Գլուխ 11. Իմ առաջին ընկերը
Գլուխ 12. Ընկեցիկը
Գլուխ 13. Ձյունն ու գայլերը
Գլուխ 14. Հոգյակը
Գլուխ 15. Ես ընկնում եմ Փարիզ
Գլուխ 16. Գարաֆոլին
Գլուխ 17. Ժանտիլիայի քարհանքը
Գլուխ 18. Լիզան
Գլուխ 19. Ես աշխատում եմ պարտեզում
Գլուխ 20. Սնանկացած ընտանիքը

ալայնացրել է 1915.info կայքը

ԼՂՀՄԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ 1915.info ԱԶԳԱՅԻՆ

Digitized by the Internet Archive in 2015. http://archive.org/details/pamphletsonbiol

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 1

ԳՅՈՒՂՈՒՄ

Ես ընկեցիկ եմ: Բայց մինչև ութ տարեկան այդ չգիտեի և համոզված էի, որ ուրիշ երեխաների նման ես նույնպես մայր ունեմ, որովհետև, երբ լաց էի լինում, ինչ–որ մի կին քնքշորեն գրկում ու մխիթարում էր ինձ, և արցունքներս իսկույն չորանում էին:

Երեկոյան, երբ անկողին էի մտնում, այդ նույն կինը մոտենում ու համբուրում էի ինձ, իսկ ձմռան ցուրտ օրերին իր ձեռքերով տաքացնում էր սառած ոտքերս, և այդ ժամանակ երգում էր այն երգը, որի եղանակն ու բառերը ես մինչև հիմա էլ շատ լավ հիշում եմ:

Երբ մեր կովը արածեցնում էի հովիտներում, և հանկարծ ամպրոպ էր ճայթում, նա ընդառաջ էր վազում և աշխատելով պաշտպանել անձրևից՝ գլխիս և ուսերիս էր գցում իր բրդյա շրջազգեստը:

Ես պատմում էի նրան իմ վշտերի, ընկերների հետ ունեցած ընդհարումների մասին, և մի քանի քնքուշ խոսքով նա միշտ կարողանում էր հանգստացնել ու խելքի բերել ինձ:

Նրա մշտական հոգատարությունը, ուշադրությունն ու բարությունը, նույնիսկ նրա քրթմնջոցը, որի մեջ այնքան քնքշանք կար, ամեն բան ստի-

թվայնացրել է 1915.info կայքը

պում էր ինձ, որ նրան իմ մայրը համարեմ: Բայց ահա թե ինչպես իմացա, որ ես միայն նրա որդեգիրն եմ:

Շավանոն գյուղակը, որտեղ ես մեծացել եմ ու անցկացրել իմ վաղ մանկությունը, Կենտրոնական Ֆրանսիայի ամենաաղքատ գյուղերից մեկն է: Հողն այստեղ ծայրաստիճան անբերրի է, և պետք է միշտ պարարտացնել. այդ պատճառով մշակված, ցանված դաշտերն այս կողմերում շատ քիչ են, և ամենուրեք տարածվում են հսկայական անմշակ տարածություններ: Այդ տարածություններից այն կողմ սկսվում են տափաստանները, որտեղ սովորաբար փչում են սառը, խստաշունչ քամիները, որոնք խանգարում են ծառերի աճելուն. այդ պատճառով այստեղ ծառերը հազվադեպ են, և եղածն էլ՝ գաճաճ, խամրած ու այլակերպված: Իսկական, մեծ ծառերը՝ գեղեցիկ, փարթամ շագանակենիներն ու հզոր կաղնիները, աճում են միայն հովիտներում՝ գետերի ափին:

Այդպիսի հովիտներից մեկում արագահոս, ջրառատ գետակի մոտ էր մեր տնակը, որտեղ անց եմ կացրել իմ մանկության առաջին տարիները: Այդ տնակում ապրում էինք միայն ես ու մայրիկս. մայրիկիս ամուսինը քարտաշ էր և, ինչպես այդ վայրերի գյուղացիների մեծ մասը, ապրում և աշխատում էր Փարիզում: Այն ժամանակից, ինչ ես մեծացել ու սկսել էի հասկանալ շրջապատս, նա ոչ մի անգամ տուն չէր եկել: Ժամանակ առ ժամանակ գյուղ վերադարձող ընկերներից որևէ մեկի միջոցով նա լուր էր ուղարկում իր մասին:

— Բարբերեն մորաքույր, Ձեր ամուսինը ողջ և առողջ է: Նա շատ ու շատ բարև է անում և խնդրել է այս փողը հանձնել Ձեզ: Ահա՛: Հաշվե՛ք, խնդրեմ:

Բարբերեն մայրիկը լիովին բավարարված էր այդ հակիրճ տեղեկություններով. ամուսինն առողջ է, աշխատում է, ապրուստի փող է վաստակում:

Բարբերենը միշտ ապրում էր Փարիզում, որովհետև այնտեղ աշխատանք ուներ: Նա ցանկանում էր մի քիչ փող հավաքել, իսկ հետո վերադառնալ գյուղ՝ իր պառավի մոտ: Հավաքած փողով նա հույս ուներ յոլա գնալ այն տարիներին, երբ իրենք կծերանան և այլևս ուժ չեն ունենա աշխատելու:

Մի անգամ՝ նոյեմբերյան մի երեկո, ինչ–որ անծանոթ մարդ կանգ առավ մեր բակի դռնակի մոտ: Ես կանգնած էի տան շեմքին և վառարանի համար ցախ էի ջարդում: Այդ մարդը, դռնակը չբացելով, նայեց դռան վերևից ու հարցրեց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Այստե՞ղ է ապրում Բարբերեն մորաքույրը:

Ես նրան խնդրեցի ներս մտնել:

Անծանոթը հրեց դռնակը և դանդաղ քայլերով մոտեցավ տանը: Հավանաբար, նա երկար ժամանակ քայլել էր ջրով ողողված վատ ճանապարհներով, քանի որ ոտքից գլուխ ցեխոտված էր:

Բարբերեն մայրիկը, լսելով, որ ես խոսում եմ ինչ–որ մեկի հետ, անմիջապես վազելով եկավ, և մարդը դեռ չէր հասցրել ոտքը շեմքից ներս դնել, երբ արդեն կանգնած էր նրա դիմաց:

— Ես Փարիզից տեղեկություններ եմ բերել Ձեզ համար,— ասաց անծանոթը մայրիկին:

Այդ հասարակ բառերը առաջին անգամ չէր, որ լսում էինք, այնուամենայնիվ արտասանվեցին ոչ այնպես, ինչպես արտասանվում էին սովորաբար, այլ բոլորովին ուրիշ տոնով:

— Տե՛ր Աստված,— բացականչեց Բարբերեն մայրիկը՝ վախեցած իրար սեղմելով ձեռքերը:— Ժերոմին հավանաբար դժբախտություն է պատահել:

— Այո՛, միայն թե կարիք չկա վախենալու և գլուխը կորցնելու: Ճիշտ է, Ձեր ամուսինը շատ է վնասվել, բայց կենդանի է: Հավանաբար հաշմանդամ կմնա: Հիմա նա հիվանդանոցում է: Ես էլ էի այնտեղ պառկած. հենց նրա կողքի մահճակալին էի: Իմանալով, որ վերադառնում եմ գյուղ, Բարբերենը խնդրեց, որ գամ Ձեզ մոտ և պատմեմ այդ դիպվածի մասին: Մնաք բարո՛վ, շատ եմ շտապում, դեռ մի քանի կիլոմետր էլ կա, իսկ մութը շուտով կընկնի:

Բարբերեն մայրիկը, իհարկե, ցանկանում էր ամեն բանի մասին մանրամասն իմանալ և սկսեց համոզել անծանոթին, որ մնա ընթրելու և գիշերելու:

— Ճանապարհները վատ են: Ասում են, որ գայլեր են երևացել: Ավելի լավ է՝ վաղն առավոտյան ճանապարհ ընկնեք:

Անծանոթը նստեց վառարանի մոտ և ընթրիքի ժամանակ պատմեց, թե ինչպես է տեղի ունեցել դժբախտությունը:

Այն շինարարությունում, որտեղ աշխատում էր Բարբերենը, քանդվել էին վատ ամրացված փայտամածները և իրենց ծանրությամբ ճզմել Բարբերենին: Տերն ասում էր, որ Բարբերենն իր մեղքով է մնացել փայտամածների տակ, և հրաժարվում էր հաշմանդամության համար նպաստ վճարելուց:

— Խեղճի բախտը չբերեց, բախտը չբերեց... Վախենում եմ, որ Ձեր ամուսինը ամենևին ոչ մի բան չստանա:

թվայնացրել է 1915.info կայքը

Կրակի առաջ կանգնած, ցեխից կոշտացած իր շալվարը չորացնելով՝ նա այնպիսի անկեղծ դառնությամբ էր կրկնում «բախտը չբերեց» բառերը, որից զգացվում էր, որ նա ինքն էլ հաճույքով հաշմանդամ կդառնար, եթե դրա համար կարելի լիներ վարձատրություն ստանալ:

— Համենայն դեպս,— ասաց նա՝ իր պատմությունն ավարտելով,— ես խորհուրդ տվեցի Բարբերենին դատի տալ տիրոջը:

— Դատի տա՞լ: Բայց դրա համար պետք է շատ փող ծախսել:

— Իսկ եթե դատը շահես...

Բարբերեն մայրիկը շատ էր ցանկանում Փարիզ գնալ, բայց այդպիսի հեռավոր ճամփորդությունը շատ թանկ կնստեր: Նա խնդրեց, որ նամակ գրեն այն հիվանդանոցին, որտեղ պառկած էր Բարբերենը: Մի քանի օր հետո մենք ստացանք պատասխանը, որի մեջ ասվում էր, որ կարիք չկա, որ մայրիկը Փարիզ գնա, բայց նա պետք է մի քիչ փող ուղարկի, որովհետև Բարբերենը դատի է տվել տիրոջը:

Անցնում էին օրերն ու շաբաթները, և ժամանակ առ ժամանակ նամակներ էին գալիս փողի նոր պահանջով: Վերջին նամակում Բարբերենը գրում էր, որ եթե փող չկա, ապա պետք է անմիջապես կովը վաճառել:

Ով մեծացել է գյուղում՝ աղքատ գյուղացիների շրջապատում, միայն նա կհասկանա, թե ինչպիսի մեծ վիշտ է կով վաճառելը:

Կովն է գյուղական ընտանիքի կերակրողը: Որքան էլ բազմանդամ ու աղքատ լինի ընտանիքը, այն երբեք սոված չի մնա, եթե գոմում կով ունի: Հայր, մայր, երեխաներ, մեծից փոքր՝ բոլորն էլ ողջ են ու կուշտ շնորհիվ կովի:

Ես ու մայրիկս էլ նույնպես վատ չէինք սնվում, չնայած համարյա երբեք միս չէինք ուտում: Բայց մեզ համար կովը ոչ միայն մեր կերակրողն էր, այլև մեր ընկերը:

Կովը խելացի ու բարի կենդանի է և շատ լավ է հասկանում մարդու խոսքերն ու գուրգուրանքը: Մենք միշտ խոսում էինք մեր Շեկոյի հետ, շոյում ու փայփայում էինք նրան: Մի խոսքով, մենք նրան էինք սիրում, նա էլ՝ մեզ: Եվ այժմ, ահա, ստիպված էինք բաժանվել նրանից:

Գնորդը եկավ տուն, դժգոհ տեսքով գլուխը թափահարելով՝ նա երկար ժամանակ ուշադրությամբ ամեն կողմից զննում էր Շեկոյին: Հետո հարյուր անգամ կրկնելով, որ դա բոլորովին իր ուզած կովը չէ, որովհետև կաթ քիչ է տալիս և այն էլ ոչ յուղալի, նա, ի վերջո, հայտարարեց, որ կգնի մեր կովը միայն այն պատճառով, որ ինքը բարի մարդ է և ցանկանում է օգնել այնպիսի լավ կնոջ, ինչպիսին Բարբերեն մորաքույրն է:

թվայնացրել է 1915.info կայքը

Խեղճ Շեկոն, կարծես գլխի ընկնելով, թե ինչ է կատարվում, չցանկացավ դուրս գալ գոմից և աղիողորմ բառաչեց:

— Մոտեցի՛ր ու մտրակի՛ր,— դիմեց ինձ գնորդը՝ իր վզից կախված մտրակը հանելով:

— Պետք չէ,— առարկեց Բարբերեն մայրիկը: Եվ կովի սանձը բռնելով՝ քնքշորեն ասաց:— Գնանք, սիրունի՛կս, գնանք:

Շեկոն, առանց ընդդիմանալու, խոնարհաբար դուրս եկավ դեպի ճանապարհը: Նոր տերը կապեց նրան իր սայլից, և Շեկոն իր կամքից անկախ գնաց ձիու հետևից: Մենք վերադարձանք տուն, բայց դեռևս երկար ժամանակ լսում էինք նրա բառաչը:

Հիմա այլևս ո՛չ կարագ ունեինք, ո՛չ կաթ: Առավոտյան՝ մի կտոր հաց, երեկոյան՝ աղ արած կարտոֆիլ:

Շեկոյին վաճառելուց հետո շուտով Բարեկենդան եկավ: Անցյալ տարի՝ Բարեկենդանին, Բարբերեն մայրիկը համեղ յուղաբլիթներ ու կարկանդակներ թխեց, և ես այնքան շատ կերա, որ նա անչափ գոհ մնաց: Բայց այն ժամանակ մենք Շեկո ունեինք: «Հիմա ո՛չ կաթ ունենք, ո՛չ յուղ,— տխրությամբ մտածում էի ես,— և մենք չենք կարող կարկանդակ թխել»: Բայց ես սխալվում էի: Բարբերեն մայրիկն այս անգամ էլ էր որոշել ուրախացնել ինձ:

Չնայած մայրիկը բոլորովին չէր սիրում որևէ մեկից պարտք վերցնել, բայց և այնպես նա մի հարևանուհուց մի քիչ կաթ խնդրեց, մյուսից՝ մի կտոր կարագ: Կեսօրին տուն վերադառնալով՝ ես տեսա, որ նա ալյուր է լցնում կավե մեծ թասի մեջ:

— Ալյո՛ւր,— զարմացած բացականչեցի ես՝ մոտենալով նրան:

— Այո՛,— պատասխանեց մայրիկը:— Մի՞թե չես տեսնում: Հիանալի ցորենի ալյուր է: Հո՛ւտ քաշիր, տե՛ս, թե ինչ անուշ է բուրում:

Ես շատ էի ցանկանում իմանալ, թե նա ինչ է պատրաստելու այդ ալյուրից, բայց սիրտ չարի հարցնել՝ չցանկանալով հիշեցնել նրան, որ Բարեկենդան է: Բայց մայրիկն ինքը խոսք բացեց.

— Ալյուրից ի՞նչ են պատրաստում:

— Հաց:

— Էլ ինչ:

— Շիտոթ:

— Էլ ինչ:

— Ճիշտն ասած չգիտեմ...

թվայնացրել է 1915.info կայքը

— Ո՛չ, դու շատ լավ գիտես և հիանալի հիշում ես, որ այսօր Բարեկենդան է, երբ յուղաբլիթներ ու կարկանդակներ են թխում: Բայց մենք ո՛չ կաթ ունենք, ո՛չ յուղ, իսկ դու լռում ես, որովհետև չես ուզում ինձ վշտացնել: Այնուամենայնիվ, ես որոշել եմ քեզ համար տոնել այս օրը և նախօրոք հոգացել եմ ամեն բանի մասին: Ապա նայի՛ր մեծ արկղին:

Ես արագորեն բարձրացրի արկղի կափարիչը և այնտեղ տեսա կաթ, յուղ, ձվեր և երեք խնձոր:

— Ձվերը տո՛ւր ինձ և խնձորները կլպիր,— ասաց մայրիկը:

Մինչ ես մաքրում և բարակ շերտերով կտրատում էի խնձորները, մայրիկը ձվերը կոտրեց և գցեց ալրի մեջ, իսկ հետո սկսեց, հետզհետե խմորի մեջ կաթ լցնելով, խմորը հունցել, ապա մայրիկն այն դրեց տաք մոխրի վրա, որ խմորը թթվի: Հիմա մնում էր միայն համբերությամբ սպասել մինչև երեկո, որովհետև յուղաբլիթներն ու կարկանդակները պետք է ուտեինք ընթրիքին:

Ճիշտն ասած, օրն ինձ շատ երկար թվաց, և ես հաճախ էի բարձրացնում սրբիչը, որով ծածկված էր կավե թասը:

— Խմորը կսառեցնես,— ասում էր մայրիկս:— Խմորը չի բարձրանա:

Բայց խմորը հիանալի կերպով բարձրանում էր, և թթվող խմորից ձվի ու կաթի հաճելի հոտ էր գալիս:

— Չոր ցախ պատրաստիր,— կարգադրեց մայրիկը:— Վառարանը պետք է շատ տաք լինի և չպետք է ծխա:

Վերջապես մութն ընկավ, և մոմը վառեցինք:

— Վառարա՛նը վառիր:

Ես անհամբերությամբ սպասում էի այդ բառերին և դրա համար չստիպեցի, որ նորից խնդրեն: Շուտով վառարանում բոցավառվեց թեժ կրակը և իր երերուն լույսով լուսավորեց սենյակը: Մայրիկը թարեքից վերցրեց կոթավոր տապակը ու դրեց կրակին:

— Յո՛ւղը տուր ինձ:

Դանակի ծայրով նա յուղի մի փոքրիկ կտոր վերցրեց ու դրեց տապակի մեջ, և այն վայրկենապես հալվեց:

Ա՛խ, ինչ անուշ բույր տարածվեց սենյակում, որքան աշխույժ և ուրախ ճարճատեց ու թշշաց յուղը: Ես լիովին կլանված էի այդ հիանալի երաժշտությամբ, բայց հանկարծ ինձ թվաց, որ բակում ոտնաձայն լսվեց: Ո՞վ կարող էր անհանգստացնել մեզ այդ ժամին: Հավանաբար հարևանուհին ուզում է կրակ խնդրել: Բայց ես իսկույն դադարեցի այդ մասին մտածելուց,

թվայնացրել է 1915.info կայքը

որովհետև Բարբերեն մայրիկը, մեծ գդալը խորասուզելով թասի մեջ, խմոր վերցրեց ու լցրեց տապակի մեջ: Միթե կարելի էր այդպիսի մի րոպեի մտածել կողմնակի բանի մասին:

Անսպասելիորեն լսվեց ուժեղ բախոց, և դուռն աղմուկով բացվեց:

— Ո՞վ է,— հետ չնայելով՝ հարցրեց Բարբերեն մայրիկը:

Ներս մտավ մի մարդ, որը հագել էր քաթանե բլուզ և ձեռքին ուներ մեծ ձեռնափայտ:

— Պա՛հ, այստեղ իսկական խնջույք է: Խնդրեմ, չքաշվեք,— կոպտությամբ ասաց նա:

— Ա՛խ, տե՛ր իմ Աստված,— բացականչեց Բարբերեն մայրիկը և տապակը արագորեն դրեց հատակին:— Միթե այդ դու ես, Ժերո՛մ:

Հետո նա բռնեց իմ ձեռքից և հրեց դեպի շեմքին կանգնած մարդը:

— Ահա՛ քո հայրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 2

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՐԱԿՐՈՂԸ

Ես մոտեցա, որ գրկեմ նրան, բայց նա ձեռնափայտով մի կողմ հրեց ինձ:

— Ո՞վ է սա:

— Ռեմին:

— Դու ինձ գրել էիր...

— Այո՛, բայց... դա ճիշտ չէր, որովհետև...

— Ա՛խ, այդպես ուրեմն, ճիշտ չէր:

Եվ ձեռնափայտը բարձրացնելով՝ նա մի քանի քայլ արեց դեպի ինձ: Ես բնազդաբար հետ քաշվեցի:

Ինչ է պատահել: Ո՞րն է իմ մեղքը: Ինչո՞ւ նա ինձ հրեց, երբ ես ցանկացա նրան գրկել:

Բայց ես ժամանակ չունեի իմ հուզված հոգում խռնվող այդ հարցերը պարզելու:

— Տեսնում եմ, որ դուք Բարեկենդան եք նշում,— ասաց Բարբերենը:— Հիանալի է, ես շատ սոված եմ: Դու ինչ ես պատրաստում ընթրիքի համար:

— Կարկանդակ:

— Բայց միթե կարկանդակով ես կերակրելու մի մարդու, որը ոտքով այսքան կիլոմետր ճանապարհ է անցել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մենք ուրիշ ոչինչ չունենք: Մենք քեզ չէինք սպասում:

— Ինչպե՞ս թե: Ոչինչ չկա՞ ընթրիքի համար:

Նա հայացքը պտտեցրեց շուրջը:

— Հրես յուղ:

Հետո աչքերը բարձրացրեց դեպի առաստաղի այն մասը, որտեղ մենք սովորաբար խոզի ճարպ էինք կախում: Բայց վաղուց արդեն այնտեղ ոչինչ չկար կախված՝ բացի սոխի ու սխտորի կապուկներից:

— Ահա սոխ էլ,— ասաց նա՝ ձեռնափայտով ցած գցելով կապուկներից մեկը:— Չորս-հինգ սոխ, մի կտոր կարագ, և կստացվի լավ ապուր: Ապա կրակի վրայից վերցրո՛ւ կարկանդակները և սո՛խ տապակիր:

Կարկանդակները վերցնել կրակի վրայից: Բայց Բարբերեն մայրիկը չառարկեց: Ընդհակառակը, նա շտապեց կատարել այն, ինչ կարգադրեց ամուսինը, իսկ վերջինս նստեց անկյունում դրված նստարանին՝ վառարանի մոտ:

Չհամարձակվելով շարժվել տեղիցս, ուր նա ձեռնափայտով քշել էր ինձ, ես, սեղանին հենված, նայում էի նրան:

Նա մոտ հիսուն տարեկան մարդ էր՝ տգեղ, դաժան դեմքով: Հաշմանդամ դառնալուց հետո նրա գլուխը մի կողմի վրա էր թեքված, և այդ նրան ինչ-որ սպառնալից տեսք էր տվել:

Բարբերեն մայրիկը տապակը կրկին դրեց կրակին:

— Միթե դու ցանկանում ես այդպիսի փոքր կտոր կարագով ապուր պատրաստել,— հարցրեց Բարբերենը: Եվ վերցնելով ափսեն, որի մեջ դրված էր կարագը, շրջեց տապակի մեջ:— Յուղ չկա, կարկանդակներ էլ չեն լինի:

Ուրիշ ժամանակ ինձ հավանաբար կցնցեր այդպիսի աղետը, բայց հիմա ես արդեն չէի երազում ո՛չ կարկանդակների, ո՛չ յուղաբլիթների մասին, այլ մտածում էի միայն, որ այդ կոպիտ, դաժան մարդը իմ հայրն է:

«Իմ հայրը, իմ հայրը»,— մտքումս կրկնում էի ես:

— Տեղումդ քարացած նստելու փոխարեն՝ ափսեները շարիր սեղանին,— որոշ ժամանակ անց դիմեց նա ինձ:

Ես շտապեցի կատարել նրա կարգադրությունը: Ապուրը պատրաստ էր: Բարբերեն մայրիկը ապուրը լցրեց ափսեները: Բարբերենը նստեց սեղանի մոտ և սկսեց ագահորեն ուտել՝ ժամանակ առ ժամանակ կանգ առնելով, որ նայի ինձ:

Ես այնքան վշտացած էի, որ մի գդալ ապուր անգամ չկարողացա ուտել: Ես նույնպես նայում էի նրան, բայց գաղտագողի և նրա հայացքին հանդիպելիս աչքերս ցած էի խոնարհում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչ է, սա միշտ այսքան քիչ է ուտում,— աննպաստելի հարցրեց Բարբերենը՝ մատնացույց անելով ինձ:

— Ա՛հ, ո՛չ, նա լավ է ուտում:

— Ափսո՛ս: Ավելի լավ կլիներ, եթե ոչինչ չուտեր:

Հասկանալի է, որ ո՛չ ես, ո՛չ Բարբերեն մայրիկը խոսելու ցանկություն չունեինք: Մայրիկը շարունակ պտտվում էր սեղանի շուրջը՝ աշխատելով կատարել ամուսնու քմահաճույքները:

— Ուրեմն դու սոված չե՞ս,— հարցրեց ինձ Բարբերենը:

— Ո՛չ:

— Այդ դեպքում գնա պառկի՛ր և աշխատի՛ր իսկույն քնել, թե չէ կբարկանամ:

Բարբերեն մայրիկը նշանով հասկացրեց ինձ, որ ենթարկվեմ, չնայած ես չէի էլ մտածում ընդդիմանալու մասին:

Ինչպես սովորաբար լինում է գեղջկական տներում, խոհանոցը մեզ համար միաժամանակ նաև ննջարան էր: Վառարանի մոտ դրված էր այն ամենը, ինչ պետք էր ճաշելու համար՝ սեղան, մթերքների արկղ, ամաններով լի պահարան: Խոհանոցի մյուս մասում՝ մի անկյունում, դրված էր Բարբերեն մայրիկի մահճակալը, մյուսում՝ իմը, որը վարագուրված էր կարմիր կտորով:

Ես արագ հանվեցի և պառկեցի, բայց քնել, իհարկե, չկարողացա: Ես չափազանց հուզված էի և շատ դժբախտ: Մի՞թե այդ մարդն իմ հայրն է: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ նա ինձ հետ այնպես կոպիտ վարվեց: Շրջվելով դեպի պատը՝ իզուր էի աշխատում վանել այդ տխուր մտքերը: Քունս չէր տանում: Որոշ ժամանակ անց ոտնաձայն լսեցի. ինչ–որ մեկը մոտենում էր իմ մահճակալին:

Դանդաղ ու ծանր քայլերից իսկույն իմացա, որ Բարբերենն է: Մազերիս զգացի նրա տաք շունչը:

— Դու քնա՞ծ ես,— լսեցի նրա խուլ ձայնը:

Ես ոչինչ չպատասխանեցի: «Կբարկանամ» սարսափելի բառը դեռ հնչում էր ականջներումս:

— Քնած է,— ասաց Բարբերեն մայրիկը:— Նա հենց որ պառկում է, անմիջապես քնում է: Կարող ես հանգիստ խոսել ամեն ինչի մասին. նա քեզ չի լսի: Ինչո՞վ վերջացավ դատը:

— Դատը տանուլ տվեցի: Դատավորները որոշեցին, որ իմ մեղքն է եղել, որ եղել եմ փայտամածների տակ, և դրա համար տերն ինձ ոչինչ չպետք է վճարի,— այստեղ նա բոունցքը խփեց սեղանին և մի քանի հայհո-

թվայնացրել է 1915.info կայքը

յական բառեր շպրտեց:— Փողը կորավ, ես հաշմանդամ դարձա, մեզ սպասում է աղքատությունը: Այդ հերիք չէ, վերադառնում եմ տուն, գտնում եմ այս երեխային: Բացատրի՛ր, խնդրեմ, ինչո՞ւ դու չարեցիր այնպես, ինչպես կարգադրել էի:

— Որովհետև չէի կարող...

— Չէի՞ր կարող նրան ընկեցիկների մանկատուն տանել:

— Դժվար է բաժանվել մի երեխայից, որին ինքդ ես մեծացրել և որին սիրում ես հարազատ որդու պես:

— Բայց չէ՞ որ դա քո երեխան չէ:

— Հետո ես ուզում էի նրան մանկատուն տանել, բայց նա հիվանդացավ:

— Հիվանդացա՞վ:

— Այո՛, հիվանդացավ, և եթե այն ժամանակ նրան մանկատուն տանեի, նա այնտեղ կմեռներ:

— Իսկ երբ առողջացավ:

— Նա երկար ժամանակ չէր առողջանում: Մի հիվանդությունը հետևեց մյուսին: Անցավ բավականին ժամանակ: Եվ ես որոշեցի, որ եթե կարողացել եմ կերակրել նրան մինչև հիմա, ապա կկարողանամ կերակրել նաև հետագայում:

— Հիմա նա քանի՞ տարեկան է:

— Ութ:

— Դե լավ, նա ութ տարեկանում կգնա այնտեղ, որտեղ պետք է գնար ավելի վաղ:

— Ժերո՛մ, դու այդ չես անի:

— Չե՞մ անի, իսկ ո՞վ կխանգարի ինձ: Մի՞թե դու կարծում ես, որ մենք ընդմիշտ պետք է պահենք նրան մեզ մոտ:

Տիրեց լռություն, և ես կարողացա շունչ առնել: Հուզմունքից կոկորդս այնպես սեղմվեց, որ քիչ մնաց՝ խեղդվեմ:

Բարբերեն մայրիկը շարունակեց.

— Որքա՞ն է փոխել քեզ Փարիզը: Առաջ դու այդքան դաժան չէիր:

— Փարիզը ոչ միայն փոխել է ինձ, այլև հաշմանդամ է դարձրել: Ես աշխատել չեմ կարող, փող չունենք: Կովը վաճառված է: Կարո՞ղ ենք մենք արդյոք հիմա կերակրել մի օտար երեխայի, երբ ինքներս ուտելու ոչինչ չունենք:

— Բայց նա իմն է:

— Նա նույնքան քոնն է, որքան իմը: Այդ երեխան վարժված չէ գյուղական կյանքին: Ես ընթրիքի ժամանակ զննեցի նրան: Նա փխրուն կազմվածք ունի, նիհար է, ձեռքերն ու ոտքերը թույլ են:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բայց նա շատ լավ տղա է՝ խելացի, բարի: Նա կաշխատի մեզ համար:

— Դեռևս մենք պետք է աշխատենք նրա համար, իսկ ես այլևս աշխատել չեմ կարող:

— Բայց եթե նրա ծնողները հայտնվեն, այն ժամանակ ինչ կպատասխանես նրանց:

— Կուղարկեմ մանկատուն: Բայց հերիք է շատախոսենք. արդեն ձանձրացա: Վաղը ես կտանեմ նրան համայնքապետի մոտ: Իսկ այսօր ուզում եմ գնալ Ֆրանսուայի մոտ: Մի ժամից կվերադառնամ:

Դուռը բացվեց ու փակվեց: Նա գնաց:

Այդ ժամանակ ես իսկույն վեր թռա ու ձայն տվեցի Բարբերեն մայրիկին:

— Մայրի՛կ, մայրի՛կ:

Նա վազելով եկավ մահճակալիս մոտ:

— Միթե դու ինձ մանկատուն կուղարկես:

— Ո՛չ, իմ փոքրի՛կ Ռեմի, ո՛չ:

Եվ նա քնքշորեն համբուրեց ինձ՝ ամուր սեղմելով իր գրկում: Այդ շոյանքը սիրտ տվեց ինձ, և ես դադարեցի լաց լինելուց:

— Ուրեմն դու քնած չէի՞ր,— քնքշորեն հարցրեց ինձ մայրիկը:

— Ես մեղավոր չեմ:

— Ես քեզ չեմ նախատում: Ուրեմն դու լսեցիր այն ամենը, ինչ ասաց Ժերոմը: Պետք է որ ես վաղուց պատմած լինեի քեզ ճշմարտությունը: Բայց ես սովորել էի քեզ իմ որդին համարել, և ինձ համար դժվար էր խոստովանել, որ ես քո հարազատ մայրը չեմ: Ո՞վ է քո մայրը, և արդյոք կենդանի՞ է նա. ոչինչ հայտնի չէ: Քեզ գտել եմ Փարիզում, և ահա թե ինչպես է պատահել այդ: Մի անգամ՝ վաղ առավոտյան աշխատանքի գնալիս, Ժերոմը փողոցում մանկան լացի ձայն է լսում: Մի քանի քայլ առաջ գալով՝ տեսնում է, որ այգու դարպասի մոտ՝ գետնի վրա, մի փոքրիկ երեխա է պառկած: Միաժամանակ նկատում է ինչ–որ մարդու, որը թաքնվում էր ծառերի հետևում, և գլխի է ընկնում, որ այդ մարդն ուզում էր տեսնել, թե իր թողած երեխային կվերցնե՞ն արդյոք: Ժերոմը չգիտեր, թե ինչ անի. երեխան բարձրաձայն լաց էր լինում՝ կարծես հասկանալով, որ իրեն կարող են օգնել: Այդ ժամանակ ուրիշ բանվորներ էլ են մոտենում և Ժերոմին խորհուրդ են տալիս երեխային ոստիկանատուն տանել: Այնտեղ երեխային մերկացնում են: Պարզվում է՝ դա հինգ–վեց ամսական առողջ, գեղեցիկ տղա է: Ոչ մի բան այլևս չհաջողվեց իմանալ, քանի որ նրա սպիտակեղենի և խանձարուրի վրա եղած բոլոր անվանանիշերը կտրված էին: Ոստիկանապետն ասում է, որ ստիպված կլինեն երեխային հանձնել ընկեցիկների մանկատունը: Այդ

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ Ժերոմն առաջարկում է վերցնել քեզ իր մոտ, մինչև քո ծնողները հայտնվեն: Հենց այդ ժամանակ ես երեխա էի ունեցել և կարող էի երկուսիդ էլ կերակրել: Այդպես ես դարձա քո մայրը:

— Օ՛, մայրի՛կ:

— Երեք ամիս անց իմ երեխան մահացավ, և ես ավելի շատ կապվեցի քեզ հետ: Ես բոլորովին մոռացա, որ դու իմ հարազատ որդին չես: Բայց Ժերոմն այդ չի մոռացել: Տեսնելով, որ քո ծնողները չեն հայտնվում, որոշեց քեզ տանել մանկատուն: Դու արդեն գիտես, թե ես ինչու չլսեցի նրան:

— Օ՛, միայն ոչ մանկատուն,— գոռացի ես՝ փաթաթվելով նրան:— Աղաչում եմ քեզ, մայրի՛կ, ինձ մի՛ տար մանկատուն:

— Ո՛չ, զավա՛կս, դու այնտեղ չես գնա. ես այդ գործը գլուխ կբերեմ: Ժերոմը բոլորովին էլ չար մարդ չէ: Վիշտը և կարիքն են ստիպում նրան այդպես վարվել: Մենք կաշխատենք, դու նույնպես կաշխատես:

— Այո՛, ես ամեն բան կանեմ, ինչ ցանկանաս: Միայն թե ինձ մի՛ տար մանկատուն:

— Լավ, չեմ տա, բայց մի պայմանով, որ դու հիմա իսկույն ևեթ քնես: Ես չեմ ուզում, որ Ժերոմը վերադառնա և տեսնի, որ դու քնած չես:

Նա ամուր համբուրեց և դեմքս դեպի պատը շրջելով՝ պառկեցրեց: Ես շատ էի ցանկանում քնել, բայց այնպես էի ցնցված ու հուզված, որ երկար ժամանակ չէի կարողանում հանգստանալ:

Ուրեմն Բարբերեն մայրիկը, որն այդքան բարի է ու քնքուշ, իմ հարազատ մայրը չէ: Բայց այդ դեպքում ո՞վ է իմ իսկական մայրը: Երևի նա ավելի լավն է ու քնքուշ. ո՛չ, անհնարին է:

Բայց ես շատ լավ հասկացա ու զգացի, որ հարազատ հայրը չէր կարող այդքան դաժան լինել, որքան Բարբերենը. նա չէր կարող այդպիսի չար աչքերով նայել ինձ ու փայտը թափահարել ինձ վրա: Նա ուզում է ինձ մանկատուն տանել: Ես գիտեի, թե ինչ է մանկատունը, և տեսել էի մանկատան երեխաներին, որոնց վզներից մետաղյա համար կար կախված, նրանք կեղտոտ էին, վատ հագնված, նրանց վրա ծիծաղում էին, հալածում ու ծաղրում: Իսկ ես չէի ցանկանում, որ իմ վզից համար կախված լինի, ես չէի ցանկանում, որ իմ հետևից վազեին ու գոռային «մանկատա՛ն տղա, մանկատա՛ն տղա»: Այդ մտքից միայն մարմնովս սարսուռ էր անցնում, և ատամներս իրար էին զարնվում:

Բարեբախտաբար, Բարբերենը վերադարձավ ոչ այնքան շուտ, որքան խոստացել էր, և մինչ նրա գալը ես արդեն քնած էի:

Գլուխ 3

ՍԻՆՅՈՐ ՎԻՏԱԼԻՍԸ ԵՎ ՆՐԱ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

Ողջ գիշեր ես իմ կրած վշտի տպավորության տակ էի: Արթնանալով առաջին հերթին շոշափեցի անկողինս և նայեցի շուրջս՝ ցանկանալով համոզվել, որ ինձ ոչ մի տեղ չեն տարել:

Բարբերենը լոում էր, և ես սկսեցի հույս տածել, որ մայրիկը համոզել է նրան, որ ինձ թողնեն իրենց մոտ:

Բայց կեսօրին Բարբերենը պատվիրեց, որ գլխարկս դնեմ ու գնամ իր հետ: Ես վախով նայեցի մայրիկին՝ օգնություն աղերսելով նրանից: Նա ծածուկ նշան արեց, որ վախենալու ոչինչ չկա: Այդ ժամանակ առանց ծպտուն հանելու գնացի Բարբերենի հետևից:

Մեր տնից մինչև գյուղ ոչ պակաս, քան մի ժամվա ճանապարհ էր: Այդ մի ժամվա ընթացքում Բարբերենը, ոչինչ չասելով, լուռ քայլում էր առջևից՝ ժամանակ առ ժամանակ հետ նայելով, որ տեսնի, թե գնո՞ւմ եմ արդյոք իր հետևից:

Ո՞ւր էր տանում նա ինձ: Խիստ անհանգստացած՝ սկսեցի մտածել, թե ինչպես խուսափեմ ինձ սպառնացող վտանգից: Դրա համար սկսեցի հետ

թվայնացրել է 1915.info կայքը

ընկնել՝ որոշելով մոտակա առվում թաքնվել: Բայց Բարբերենը կռահեց իմ մտադրությունը. նա բռնեց ձեռքս և ստիպեց, որ գնամ իր կողքով: Այդպես էլ մտանք գյուղ: Անցորդները հետ էին շրջվում և հետաքրքրությամբ նայում էին մեզ, որովհետև ես բարկացած շան տեսք ունեի, որի վզնոցից բռնած՝ քարշ են տալիս: Երբ մենք անցնում էինք մի պանդոկի մոտով, շեմքին կանգնած տերը ձայն տվեց Բարբերենին և հրավիրեց ներս: Բարբերենը բռնեց ականջս և հրելով ինձ՝ իր հետևից ծածկեց դուռը:

Ես հանգստացա: Գյուղական պանդոկը բոլորովին չէր վախեցնում ինձ: Ընդհակառակը, ես վաղուց էի ցանկանում այնտեղ լինել: Շատ անգամներ պանդոկի մոտով անցնելիս լսում էի, թե ինչպես էին այնտեղ գոռգոռում ու երգում այնպես բարձրաձայն, որ ապակիները ցնցվում էին: Ինչ էին անում այնտեղ: Ինչ էր կատարվում այդ կարմիր վարագույրների հետևում: Հիմա ես այդ կիմանամ:

Բարբերենը պանդոկի տիրոջ հետ նստեց սեղանի առջև, իսկ ես տեղավորվեցի օջախի մոտ ու սկսեցի չորս կողմս նայել:

Դիմացի անկյունում նստած էր մի ծերունի՝ մեծ, սպիտակ մորուքով, և այնպիսի տարօրինակ հագուստ էր հագել, որի նմանը ես երբեք չէի տեսել: Նրա գլխին կանաչ, կարմիր փետուրներով ֆետրե սրածայր գլխարկ կար, որի տակից մազերի երկար փնջերն իջնում էին մինչև ուսերը: Գառան մորթե բաճկոնակը կիպ գրկում էր նրա մարմինը: Բրդյա գուլպաները համարյա հասնում էին մինչև ծնկները և խաչաձև կապված էին կարմիր ժապավեններով: Նա, ծնոտն աջ ձեռքին հենած, անշարժ նստել էր աթոռին և նման էր փայտե արձանի: Նրա աթոռի տակ պառկած տաքանում էին երկու գանգրամազ շներ, որոնցից մեկը սպիտակ էր, իսկ մյուսը՝ սև. կար նաև մի ուրիշ մոխրագույն փոքրիկ շնիկ, որն ուներ չարաճճի, քնքուշ մռութ: Սպիտակ շան գլխին կար ոստիկանի մաշված կեպի, որը կաշվե փոկով ամրացված էր ծնոտի տակ:

Մինչ ես հետաքրքրությամբ զննում էի ծերունուն, Բարբերենը և պանդոկի տերը կիսաձայն խոսում էին միմյանց հետ: Ես հասկանում էի, որ խոսքն իմ մասին է:

Բարբերենը պատմեց նրան, որ եկել է գյուղ՝ գյուղապետին խնդրելու, որ մանկատնից նպաստ տան ինձ համար: Ուրեմն Բարբերեն մայրիկը որոշ չափով ազդել էր ամուսնու վրա: Ես իսկույն մտածեցի, որ եթե Բարբերենը նպաստ ստանա, հարկ չկա վախենալու, թե ինձ մանկատուն կտանեն:

թվայնացրել է 1915.info կայքը

Թվում էր, թե ծերուկը չի լսում նրանց խոսակցությունը, բայց հանկարծ նա դեպի ինձ մեկնեց աջ ձեռքը և, Բարբերենին դիմելով, հարցրեց.

— Ուրեմն այս տղան քեռ է Ձեզ համար:

— Այո՛:

— Եվ կարծում եք, որ մանկատան ղեկավարությունը կհամաձայնվի նրան պահելու համար Ձեզ փոխ վճարել:

— Սատանան տանի, բայց եթե նա ծնողներ չունի, և ես եմ նրան կերակրում ու հագցնում, ուրեմն որևէ մեկը պետք է վճարի դրա համար: Ինձ թվում է, որ այդ արդարացի կլիներ:

— Ձեմ առարկում: Իսկ վստահ եք, որ միշտ արվում է այն, ինչ արդարացի է:

— Իհարկե ոչ:

— Հենց այդ պատճառով էլ երբեք չեք ստանա Ձեր ցանկացած դրամական նպաստը:

— Այդ դեպքում նա կգնա մանկատուն: Չկա այնպիսի օրենք, որը ստիպի ինձ պահել նրան, երբ ես այդ չեմ ցանկանում:

— Դուք ժամանակին համաձայնվել եք վերցնել երեխային, ուրեմն պարտավորություն եք ստանձնել նրան պահելու:

— Դեհ, իսկ ես մտադիր չեմ պահել. նրանից կազատվեմ, ինչ կերպ էլ լինի:

— Ինձ թվում է, որ ես կարող եմ Ձեզ սովորեցնել, թե ինչ միջոցով կկարողանաք ազատվել երեխայից և որոշ բան էլ վաստակել,— մի րոպե մտածելով՝ ասաց ծերունին:

— Ասեք, թե որն է այդ միջոցը, և ես մեծ հաճույքով մի շիշ գինի բերել կտամ:

— Պատվիրեք գինին: Ձեր գործը հաջողված է:

— Ճի՞շտ եք ասում:

— Ճիշտ եմ ասում:

Ծերուկը վեր կացավ և նստեց Բարբերենի դիմաց: Այն րոպեին, երբ նա վեր կացավ աթոռից, նրա՝ գառան մորթե բաճկոնը տարօրինակ ձևով փքվեց, կարծես նրա ձախ թևի տակ ինչ–որ կենդանի արարած լիներ:

— Դուք ցանկանում եք, որ այս երեխան այլևս Ձեր հացը չուտի, և կամ էլ նրան պահելու համար Ձեզ վճարեն, ճի՞շտ է,— հարցրեց ծերուկը:

— Ճիշտ է, որովհետև…

Հարգելի ընթերցող, այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը իր սեփական միջոցներով: Այս և բազմաթիվ այլ գրքեր կարող եք անվճար ներբեռնել մեր կայքից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Թե ինչու եք այդպես ցանկանում, ինձ բոլորովին չի հետաքրքրում: Ինձ համար բավական է իմանալ միայն այն, որ Դուք չեք ցանկանում երեխային պահել: Որ այդպես է, տվեք ինձ, ես կպահեմ նրան:

— Տալ Չեզ:

— Այո՛, սատանան տանի: Չէ՞ որ ուզում եք նրանից ազատվել:

— Այդպիսի դուրեկան, այդպիսի հրաշալի երեխային տալ Չեզ: Հապա մի նայեք նրան:

— Ես նրան տեսել եմ:

— Ռեմի, մո՛տ արի:

Վախից դողալով՝ մոտեցա սեղանին:

— Դե լավ, մի՛ վախենա, փոքրի՛կս,— ասաց ծերունին:

— Դե, նայեք,— շարունակեց Բարբերենը:

— Միթե ես ասում եմ, որ տղան տգեղ է: Ես բոլորովին էլ չեմ ցանկանում այլանդակ երեխա ունենալ:

— Ա՛խ, եթե նա լիներ այլանդակ կամ երկգլխանի կամ գոնե թզուկ...

թվայնացրել է 1915.info կայքը

— Այն ժամանակ չէիք մտածի նրան մանկատուն տանելու մասին: Դուք շատ լավ գիտեք, որ այլանդակ երեխան թանկարժեք բան է, որից մեծ օգուտ կարելի է քաղել: Բայց այս տղան ո՛չ թզուկ է և ո՛չ էլ այլանդակ. նա շատ նորմալ է և այդ պատճառով ոչ մի բանի պետք չէ:

— Ինչպե՞ս թե, նա կարող է աշխատել:

— Ո՛չ, այսպիսի երեխան գյուղական աշխատանքի համար պիտանի չէ: Ապա թող նա գութան քշի, կտեսնեք, թե որքան կդիմանա:

— Տասը տարի:

— Մի ամիս էլ չի դիմանա:

— Ինչ եք ասում, հապա նայե՛ք նրան:

— Դուք ինքնե՛րդ նայեք:

Ես կանգնած էի Բարբերենի ու ծերունու միջև, որոնք ինձ այս ու այն կողմ էին հրում:

— Միևնույնն է,— հայտարարեց ծերուկը,— ինչպես որ նա կա, այդպես էլ վերցնում եմ: Միայն թե, պարզ է, ես նրան ո՛չ թե Ձեզնից գնում եմ, այլ վարձում եմ աշխատանքի: Եվ տալիս եմ նրա համար տարին քսան ֆրանկ[1]:

— Քսան ֆրանկ:

— Լավ գին է: Վճարը՝ կանխիկ: Դուք միանգամից ստանում եք ամբողջ գումարը և ազատվում եք երեխայից:

— Մանկատունը նրա համար կվճարի ամիսը տասը ֆրանկից ոչ պակաս:

— Ավելի ճիշտ՝ յոթ կամ ութ, բայց Դուք ստիպված կլինեք նաև նրան կերակրել:

— Նա կաշխատի:

— Իսկ եթե մանկատան վարչությունը տղային Ձեզ մոտ չթողնի, այլ տա ուրիշի, այդ դեպքում բացարձակապես ոչինչ չեք ստանա: Իսկ հիմա ժամանակն է, որ մեկնեք Ձեր ձեռքը…

Ծերուկը ձեռքը տարավ գրպանը, դուրս բերեց կաշվե դրամապանակը, հանեց մի քանի արծաթե դրամներ և զրնգոցով գցեց սեղանին:

— Տվե՛ք քառասուն ֆրանկ:

— Ո՛չ, այն աշխատանքը, որ նա ինձ մոտ կատարելու է, այդքան չարժե:

— Իսկ ի՞նչ է անելու նա: Նրա ոտքերն ամուր են, ձեռքերը՝ նույնպես: Բայց և այնպես, Ձեր կարծիքով նա ի՞նչ գործում կարող է պիտանի լինել:

Ծերունին ծաղրաբար նայեց Բարբերենին և բաժակից կում–կում գինի խմելով՝ պատասխանեց.

---

[1] Ֆրանկ — ֆրանսիական դրամ, որն այն ժամանակ հավասար էր 37,5 կոպեկի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նա ինձ պետք է որպես ընկեր: Ես ծերանում եմ, երեկոները՝ ծանր աշխատանքից հետո կամ վատ եղանակին, երբ ես տխուր եմ լինում, նա ինձ կզվարճացնի:

— Դե, դրա համար նրա ոտքերը հավանաբար բավականաչափ ամուր են:

— Ո՛վ է իմանում: Նա պետք է պարի, թռչկոտի, շատ քայլի, իսկ դրանից հետո նորից թռչկոտի ու պարի: Մի խոսքով, նա լինելու է սինյոր Վիտալիսի խմբի դերասան:

— Իսկ ո՞ւր է Ձեր խումբը:

— Սինյոր Վիտալիսը ես եմ, ինչպես Դուք, հավանաբար, արդեն գլխի եք ընկնում, իսկ իմ խումբը, եթե ցանկանում եք նրա հետ ծանոթանալ, հիմա կներկայացնեմ:

Այդ ասելով՝ նա բացեց ոչխարենու բաճկոնակը և դուրս բերեց այնտեղից ինչ–որ տարօրինակ կենդանի:

Դա ի՞նչ կենդանի էր և արդյոք կենդանի՞ էր: Ես չգիտեմ ինչպես կոչել այդ կենդանուն, որին առաջին անգամ էի տեսնում:

Նա հագել էր կարմիր բաճկոն, որի եզրերը ասեղնակարված էին ոսկե թելով: Բայց նրա ձեռքերն ու ոտքերը մերկ էին: Դրանք ոչ թե թաթեր էին, այլ իսկական ձեռքեր ու ոտքեր. միայն մաշկը ոչ թե մարմնագույն էր, այլ սև: Սև էր նաև նրա գլուխը, որը համարյա իմ բռունցքի չափ էր. դեմքը լայն էր, քիթը՝ կճատ, մեծ ռունգերով, շագանակագույն շուրթերով: Բայց ամենից շատ ինձ զարմացրին նրա աչքերը, որոնք խիստ մոտ էին իրար, շարժուն և հայելու պես պսպղուն:

— Ինչ զզվելի կապիկ է,— բացականչեց Բարբերենը:

Հիմա ես ամեն բան հասկացա: Ես երբեք կապիկ չէի տեսել, բայց հասկանալի է, որ լսել էի դրանց մասին: Ուրեմն իմ առաջ ոչ թե մի թուխ երեխա էր կանգնած, այլ կապիկ:

— Ահա՛ իմ խմբի առաջին դերասանը՝ սինյոր Հոգյակը: Հոգյա՛կ, բարեկա՛մս, ողջունի՛ր այստեղ հավաքված հասարակությանը:

Հոգյակը ձեռքը շուրթերին հպեց և օդային համբույր ուղարկեց մեզ:

— Ահա՛ և երկրորդ դերասանը,— շարունակում էր Վիտալիսը՝ մատնացույց անելով սպիտակ շանը:— Հիմա սինյոր Կապին իր ընկերներին կներկայացնի հարգարժան հասարակությանը:

Սպիտակ շնիկը, որը մինչ այդ րոպեն անշարժ պառկած էր, արագ վեր թռավ, կանգնեց հետևի թաթերին, առջևի թաթերը խաչեց կրծքին և այնպես խոնարհվեց, որ գլուխը համարյա կպցրեց հատակին:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո նա շրջվեց դեպի մյուս շները և թաթով նշան արեց, որ նրանք մոտենան:

Շներն իսկույն վեր թռան և թաթերը միմյանց մեկնելով, ինչպես այդ անում են մարդիկ իրար ձեռք տալիս, լուրջ տեսքով վեց քայլ առաջ եկան, հետո երեք քայլ հետ գնացին և գլուխ տվեցին:

— Նա, ում ես կոչում եմ Կապի («կապիտան» բառի կրճատ ձևով), շնիկների ավագն է: Նա մյուսներից խելոք է և հաղորդում է նրանց իմ հրամանները: Այս սև բրդով երիտասարդ պճնամոլը կոչվում է Ջերբինո, որը նշանակում է «սիրալիր»: Իսկ այս չնաշխարհիկ դեռատի օրիորդը, որն այդպիսի խոնարհ մոութ ունի, սինյորա Դոլչեն է. նա լիովին արժանի է իր «հեզ» մականվանը: Այս հիանալի, տաղանդավոր դերասանների հետ ես ճամփորդում եմ աշխարհով մեկ և ապրուստի փող վաստակում, երբեմն շատ, երբեմն քիչ, դե, ոնց բախտներս բերի: Կա՛պի, մո՛տ արի:

Շնիկը թաթերը խաչեց կրծքին:

— Իմ դերասանները հիանալի են դաստիարակված, և ես նրանց հետ շատ քաղաքավարի եմ վարվում: Կա՛պի, բարի՛ եղիր և այս տղային, որը զարմանքով նայում է քեզ, ասա՛, թե ժամը քանիսն է հիմա:

Կապին մոտեցավ իր տիրոջը, բացեց ոչխարի մորթե բաճկոնը, թաթը խոթեց նրա բաճկոնի գրպանը և հանեց այնտեղից մի մեծ արծաթյա ժամացույց: Թվացույցին նայելով՝ նա բարձրաձայն և պարզորոշ կլանչեց երկու անգամ, իսկ հետո՝ երեք անգամ, բայց արդեն ավելի թույլ: Իսկապես, ժամը երկուս անց տասնհինգ էր:

— Շա՛տ լավ,— ասաց Վիտալիսը:— Շնորհակալ եմ, Կա՛պի: Հիմա խնդրի՛ր սինյորա Դոլչեին, որ ցատկի պարանի վրայից:

Կապին խառնեց տիրոջ գրպանը և այնտեղից դուրս քաշեց պարանը: Հետո նշան արեց Ջերբինոյին, որը շտապով կանգնեց նրա դիմաց: Կապին նետեց պարանի ծայրը, որը Ջերբինոն ատամներով բռնեց:

Այդ ժամանակ Դոլչեն սկսեց ցատկել պարանի վրայից՝ իր գեղեցիկ, քնքուշ աչքերը տիրոջից չկտրելով:

— Դուք տեսնո՞ւմ եք, թե որքան խելոք են իմ աշակերտները,— ասաց Վիտալիսը:— Բայց խելքն իր արժանի գնահատականն է ստանում միայն համեմատության ժամանակ: Ահա, թե ինչու եմ տղային հրավիրում իմ խումբը: Նա պետք է հիմարի դեր խաղա և հենց դրանով առավել ևս ընդգծի կենդանիների արտասովոր խելքը:

— Օ՛, հիմարի դեր խաղալու համար...— ընդհատեց նրան Բարբերենը...

թվայնացրել է 1915.info կայքը

— Պետք է շատ խելոք լինել,— շարունակեց Վիտալիսը։— Ես վստահ եմ, որ տղան բավականաչափ խելք ունի։ Բայց մենք հիմա այդ կտեսնենք։ Մի փոքր քննություն կատարենք։ Եթե տղան խելոք է, նա կհասկանա, որ սինյոր Վիտալիսի հետ ինքը հնարավորություն կունենա շրջելու ողջ Ֆրանսիայով և տեսնելու բազմաթիվ այլ երկրներ։ Իսկ եթե հիմար է, նա կսկսի լաց լինել, գոռալ, և սինյոր Վիտալիսը, որը չի սիրում քմահաճ երեխաներ, նրան իր հետ չի տանի։ Այդ դեպքում խեղճ տղան ստիպված կլինի գնալ մանկատուն, որտեղ նրան կաշխատեցնեն շատ և կկերակրեն վատ։

Ես բավականին խելոք էի, որ հասկանայի նրա բառերը։ Իհարկե, սինյոր Վիտալիսի սանները շատ զվարճալի էին, և հետաքրքրական կլիներ նրանց հետ ճամփորդելը։ Բայց դրա համար պետք էր բաժանվել Բարբերեն մայրիկից։ Իսկ եթե ես հրաժարվեմ գնալ նրանց հետ, ապա ամենայն հավանականությամբ չեմ մնա նաև մայրիկի մոտ, որովհետև ինձ կուղարկեն մանկատուն։

Տեսնելով, որ ես կանգնած եմ հուզված, արցունքն աչքերիս, Վիտալիսը քնքշորեն թոթվեց այտս։

— Դե՛հ, այսպես, տղան ամեն բան հասկացավ և լաց չի լինում, ուրեմն վաղը…

— Թողե՛ք ինձ մայրիկի մոտ,— գոռացի ես,— աղաչում եմ Ձեզ։

Ես չհասցրի որևէ բան ավելացնել, երբ Կապիի ուժեղ հաչոցն ընդհատեց խոսքս։ Շունը նետվեց դեպի սեղանը, որի վրա նստած էր Հոգյակը։ Հարմար րոպե որսալով, երբ բոլորը շրջվել էին դեպի ինձ, կապիկը կամացուկ վերցրել էր գինու բաժակը և արդեն պատրաստվում էր խմելու։ Բայց Կապին նկատեց կապիկի արարքը և որոշեց խանգարել նրան։

— Սինյո՛ր Հոգյակ,— խստորեն ասաց Վիտալիսը,— դու քաղցրասեր ես և գող։ Կանգնի՛ր անկյուն, քի՛թդ՝ դեպի պատը, իսկ դու, Զերբի՛նո, հսկի՛ր նրան։ Եթե հանգիստ չկանգնի, խփի՛ր։ Կա՛պի, դու լավ շուն ես։ Թա՛թդ ինձ տուր, որ սեղմեմ։

Մինչդեռ կապիկը կամացուկ փնթփնթալով կատարում էր հրամանը, երջանիկ և հպարտ Կապին թաթը մեկնեց տիրոջը։

— Հիմա,— շարունակեց Վիտալիսը,— անցնենք գործի։ Տալիս եմ Ձեզ երեսուն ֆրանկ։

— Ո՛չ, քառասուն։

Առևտուրը վերսկսվեց, բայց հանկարծ Վիտալիսն ասաց.

— Տղան այստեղ կձանձրանա, թող գնա պանդոկի բակը և խաղա այնտեղ։

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ ասելիս նա նշան արեց Բարբերենին:

— Ճիշտ է,— պատասխանեց Բարբերենը,— գնա՛ բակը և ոչ մի տեղ չգնաս, մինչև որ քեզ կանչեմ: Թե չէ կբարկանամ:

Ինձ մնում էր միայն ենթարկվել:

Ես գնացի բակ, բայց, իհարկե, խաղալ չկարողացա: Նստեցի քարին ու սկսեցի մտածել: Այդ րոպեին որոշվում էր իմ ճակատագիրը: Ինչ է լինելու: Ցրտից ու հուզմունքից ատամներս զարկվում էին իրար: Վիտալիսի ու Բարբերենի վեճը երկար տևեց, և անցավ մի ժամից ավելի, երբ վերջապես Բարբերենը եկավ ինձ կանչելու: Նա մենակ էր:

— Գնա՛նք տուն,— ձայն տվեց նա:

«Տուն: Ուրեմն ես կմնամ մայրիկի մո՞տ»: Բայց ես չհամարձակվեցի հարցնել նրան այդ մասին, որովհետև նա խիստ բարկացած էր:

Մենք վերադառնում էինք տուն միանգամայն լուռ:

Մինչ տուն հասնելը մոտ տասը րոպեի ճանապարհ էր մնացել, երբ Բարբերենը, որը գնում էր առջևից, կանգ առավ:

— Հիշի՛ր,— ականջս բռնելով՝ կոպտությամբ ասաց նա,— եթե մի բառ անգամ մորդ ասես, ինչ այսօր լսեցիր, ես քո ճաշը կեփեմ, հասկացա՞ր...

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 4

ՀԱՐԱՋԱՏ ՏՈՒՆԸ

— Ինչ ասաց համայնքապետը,— հարցրեց մեզ Բարբերեն մայրիկը, երբ վերադարձանք:

— Մենք նրան չտեսանք:

— Ինչո՞ւ:

— Ես հանդիպեցի ընկերներիս և նրանց հետ պանդոկ մտա, իսկ երբ այնտեղից դուրս եկանք, գյուղապետի մոտ գնալու համար արդեն ուշ էր: Ոչինչ, վաղը կգնանք:

Բարբերենի վերջին բառերը հանգստացրին ինձ:

Եթե վաղը մենք պետք է կրկին գնանք գյուղապետի մոտ, ուրեմն նա չի ընդունել Վիտալիսի առաջարկը:

Չնայած Բարբերենի սպառնալիքին՝ ես, իհարկե, կասեի մայրիկին կասկածներիս մասին: Բայց հակառակի պես Բարբերենը ողջ երեկոն մնաց տանը և մեզ ոչ մի րոպե մենակ չթողեց: Ես պառկեցի քնելու՝ այդպես էլ հնարավորություն չունենալով խոսելու մայրիկի հետ:

Քնելիս որոշեցի, որ նրան կպատմեմ վաղն առավոտյան: Բայց երբ արթնացա, Բարբերեն մայրիկն արդեն տանը չէր:

— Ո՞ւր է մայրիկը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նա գնացել է գյուղ և կվերադառնա միայն կեսօրից հետո:

Չգիտեմ ինչու, բայց նրա բացակայությունը շատ անհանգստացրեց ինձ: Նախորդ երեկոյան մայրիկը չէր պատրաստվում որևէ տեղ գնալու: Չհասկանալով, թե ինչ վտանգ է ինձ սպառնում, համենայն դեպս աղոտ կերպով նախազգում էի այն:

Բարբերենը ինչ–որ խորհրդավոր հայացքներ էր նետում ինձ վրա, և դա ավելի էր անհանգստացնում ինձ: Ցանկանալով ազատվել այդ հայացքներից՝ դուրս եկա այգի: Մեր փոքրիկ այգում աճում էր ամեն բան, ինչ անհրաժեշտ էր մեր տնտեսության համար՝ կարտոֆիլ, բակլա, կաղամբ, գազար, շաղգամ: Թվում էր, թե այգում ոչ մի ազատ տեղ չկա: Բայց մայրիկն ինձ հատկացրել էր մի փոքրիկ հողակտոր: Այնտեղ ես ցանել էի զանազան բույսեր, խոտեր, մամուռներ, որոնք հավաքել էի այն վայրերից, որտեղ արածեցնում էի կովը:

Մեր այգում չկային ո՛չ ավազապատ ծառուղիներ, ո՛չ հավասար շարքերով ձգվող հազվագյուտ ծաղիկների ծաղկեթմբեր: Անցորդները կանգ չէին առնում, որ տատասկաթփերի ցանկապատի վրայից աքանչանան մեր այգիով: Բայց այն իմ աշխատանքի արդյունքն էր. ես էի կարգի բերել այգին և երբ խոսում էի դրա մասին, հպարտությամբ կոչում էի՝ «իմ այգին»:

Անցյալ ամառ ես զանազան բույսեր հավաքեցի ու տնկեցի մեր այգում, որոնք շուտով պետք է ծաղկեին: Ժոնկիլիաների վրա արդեն կոկոններ էին հայտնվել, որոնք սկսում էին դեղնել, կապտին էին տալիս մանուշակների փոքրիկ թերթիկները, իսկ գարնանածաղիկների կծկված տերևների միջից արդեն երևում էին կոկոնները: Ինչպե՞ս են ծաղկելու դրանք: Ինձ այդ շատ էր հետաքրքրում:

Բայց իմ այգում կար մի անկյուն, որ ես խնամում էի այնպիսի զգացումով, որ ավելին էր, քան հասարակ հետաքրքրասիրությունը, կարելի է ասել՝ նույնիսկ հուզմունքով:

Այգու այդ մասում ես գետնատանձ[2] էի ցանել. ինձ ասել էին, որ դա շատ ավելի համեղ է, քան կարտոֆիլը: Ցանել էի այդ արմատապտուղները՝ Բարբերեն մայրիկին ոչինչ չասելով, երբ դրանք ծիլ տվեցին, ես հավատացրի մայրիկին, որ դրանք ծաղիկներ են: Մի հիանալի օր, երբ գետնատանձը հասնի, մայրիկի բացակայությամբ ես կհանեմ հողից և կեփեմ: Թե ինչպես

---

[2] Կարտոֆիլի ընտանիքին պատկանող արմատապտուղ, որն օգտագործվում է սննդի մեջ, գետնախնձոր:

թվայնացրել է 1915.info կայքը

պետք է այդ անեի, ես ինքս էլ լավ չգիտեի, բայց այդ մանրուքն ինձ քիչ էր հետաքրքրում:

Որքա՜ն կզարմանա մայրիկը: Որքա՜ն գոհ կլինի նա: Չէ՞ որ ձանձրալի դարձած կարտոֆիլի փոխարեն մենք նոր, համեղ ճաշ կունենանք, և մայրիկն այդքան չի տխրի խեղճ Շեկոյին վաճառելու պատճառով: Իսկ ո՞վ է հորինել այդ նոր ճաշը: Ես՝ Ռեմին: Ուրեմն ես կարող եմ որևէ բանով օգտակար լինել:

Հասկանալի է, որ ես մեծ ուշադրությամբ էի հետևում իմ գետնատանձերի մեծանալուն: Ամեն օր գալիս էի՝ տեսնելու, թե ինչ վիճակում են դրանք: Այնքան անհամբեր էի, որ ինձ թվում էր, թե դրանք երբեք չեն մեծանա:

Ես ծնկաչոք խոնարհվել էի դեպի հողը, երբ լսեցի, որ ինչ–որ մեկն անհամբերությամբ ձայն է տալիս ինձ: Բարբերենն էր: Ի՞նչ է ուզում նա: Ես շտապ վերադարձա տուն: Որքա՜ն մեծ էր իմ զարմանքը, երբ տեսա սինյոր Վիտալիսին ու նրա շներին:

Ես վայրկենաբար ամեն բան հասկացա: Վիտալիսը եկել է ինձ տանելու, և որպեսզի Բարբերեն մայրիկը ինձ պաշտպանության տակ չառնի, Բարբերենն առավոտից գյուղ էր ուղարկել նրան:

թվայնացրել է 1915.info կայքը

Զգալով, որ Բարբերենից կարեկցանք սպասելն իզուր է, ես մոտ վազեցի Վիտալիսին:

— Աղաչում եմ, մի՛ տարեք ինձ,— գոռացի ես և լաց եղա:

— Լսի՛ր, փոքրի՛կ,— ասաց նա քնքշորեն,— քեզ համար վատ չի լինի ինձ մոտ: Ես չեմ ծեծում, չեմ նեղացնում երեխաներին, իսկ իմ սաները, որոնց հետ դու պետք է ապրես, չափազանց սիրալիր են ու զվարճալի: Ինչ ունես ափսոսելու:

— Մայրիկիս, մայրիկիս:

— Համենայն դեպս, դու այստեղ չես մնա,— հայտարարեց Բարբերենը՝ կոպտությամբ ականջս բռնելով:— Ինքդ ընտրի՛ր՝ կամ այս մարդու մոտ, կամ մանկատուն:

— Ո՛չ, ես միայն մայրիկին եմ ուզում:

— Արդեն դու ինձ ձանձրացրիր,— սաստիկ բարկացած գոռաց Բարբերենը:— Եթե ցանկանում ես, որ քեզ փայտով դուրս քշեն այս տնից, ապա ես այդպես էլ կանեմ:

— Տղայի համար ծանր է բաժանվել մորից. դրա համար հարկավոր չէ նրան ծեծել: Նա զգայուն տղա է, և դա լավ է:

— Եթե սկսեք խղճալ նրան, նա ավելի շատ լացուկոծ կանի:

— Հիմա գործի անցնենք:

Այդ ասելով՝ Վիտալիսը սեղանին թափեց մի քանի արծաթ դրամ, որոնք Բարբերենն անմիջապես գրպանը դրեց:

— Ո՞ւր են տղայի իրերը,— հարցրեց Վիտալիսը:

— Ահա՛,— պատասխանեց Բարբերենը՝ ցույց տալով քաթանե երկնագույն թաշկինակի կապոցը:

Վիտալիսը բացեց կապոցը և նայեց, թե ինչ կա մեջը:

Կապոցում կար երկու շապիկ և քաթանե վարտիք:

— Սա այն չէ, ինչի մասին որ մենք պայմանավորվել էինք: Դուք պետք է տայիք նրա իրերը, իսկ այստեղ ես տեսնում եմ միայն ցնցոտիներ:

— Նա ուրիշ ոչինչ չունի:

— Եթե հարցնեի երեխային, նա կպատասխաներ, որ դա ճիշտ չէ: Բայց ես չեմ ուզում վիճել: Ժամանակ չունեմ, պետք է ճանապարհ ընկնենք: Գնա՛նք, փոքրի՛կ: Ինչ է անունդ:

— Ռեմի:

— Գնանք, Ռեմի: Վերցրո՛ւ կապոցն ու առա՛ջ ընկիր: Կա՛պի, քայլով մա՛րշ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես աղերսագին նայեցի նրան, հետո՝ Բարբերենին: Երկուսն էլ երեսները շրջեցին, իսկ Վիտալիսը բռնեց ձեռքս: Հարկավոր էր գնալ: Երբ ոտքս դուրս դրեցի մեր աղքատիկ տնակի շեմքից, ինձ թվաց, որ սիրտս թողեցի այնտեղ:

Ես արագ շուրջս նայեցի, բայց արցունքակալած աչքերս չտեսան ոչ ոքի, ումից կարող էի օգնություն խնդրել. թե՛ ճանապարհին և թե՛ դաշտում ոչ ոք չկար:

Ես ձայն տվեցի.

— Մայրի՛կ, մայրի՛կ:

Ինձ ոչ ոք չպատասխանեց, և ես դառնորեն լաց եղա:

Ստիպված էի հետևել Վիտալիսին, որը բաց չէր թողնում ձեռքս:

— Բարի՛ ճանապարհ,— ձայն տվեց Բարբերենը և մտավ տուն:

Ամեն ինչ վերջացած էր:

— Դե՛հ, Ռեմի, գնանք,— քնքշորեն քարշ տվեց ինձ սինյոր Վիտալիսը:

Ճանապարհը, որով մենք քայլում էինք, ոլորապտույտ բարձրանում էր սարն ի վեր, և ամեն մի պտույտի ժամանակ ես կարող էի տեսնել Բարբերեն մայրիկի տնակը, որը հետզհետե ավելի ու ավելի էր փոքրանում: Ես հաճախ էի անցել այդ ճանապարհով և գիտեի, որ երբ հասնենք ամենավերին պտույտին, ես վերջին անգամ կտեսնեմ տնակը, իսկ հետո, հենց որ մի քանի քայլ գնանք ճանապարհով, այն այլևս չի երևա:

Մենք բավականին երկար ժամանակ բարձրանում էինք և վերջապես հասանք սարի գագաթը: Վիտալիսը առաջվա պես բաց չէր թողնում ձեռքս:

— Թո՛ւյլ տվեք՝ մի քիչ հանգստանամ,— խնդրեցի ես:

— Հաճույքո՛վ, տղա՛ս:

Նա բաց թողեց ձեռքս, բայց նշանակալից հայացքով նայեց Կապիին, որը հավանաբար հասկացավ նրան: Իսկույն ևեթ, ինչպես անում են հովվական շները, կանգնեց իմ կողքին: Ես հասկացա, որ Կապին իմ պահապանն է, և եթե ես փորձեմ մի շարժում անգամ անել փախչելու համար, նա ոտքս կբռնի:

Նստեցի ճմապատ ճանապարհի եզրին: Կապին պառկեց կողքիս:

Ցածում փռված էր հովիտը, որով մենք քիչ առաջ անցնում էինք: Իսկ ավելի հեռու միայնակ կանգնած էր այն տնակը, որտեղ անցել էր իմ մանկությունը: Ծառերի մեջ դժվար չէր գտնել այն, որովհետև ծխնելույզից քուլա–քուլա ծուխ էր բարձրանում, որը համարյա հասնում էր մեզ: Թվաց, որ այդ ծխի հետ ինձ հասավ կաղնու չոր տերևների բուրմունքը, որ ես նստած եմ մեր օջախի մոտ՝ փոքրիկ նստարանին, իսկ քամին, վառարանի խողովակը մտած, ծուխն ուղիղ երեսովս է տալիս: Չնայած հեռավորությանն ու մեծ

Дёгтяной остров. 1915. Литография

թվայնացրել է 1915.info կայքը

բարձրությանը՝ այստեղից բոլոր առարկաները, ճիշտ է, շատ փոքրացած, բայց պարզ երևում էին: Մեր ունեցած միակ հավը քուջուջ էր անում աղբակույտի վրա: Այստեղից նա կարծես փոքրիկ թռչուն լիներ: Տան անկյունում ես տեսնում էի տանձի ծառը, որի բունը ծոմոված էր, և որը հեծած՝ սիրում էի ճոճվել: Ավելի հեռվում՝ կանաչ խոտի միջով՝ պայծառ ժապավենի պես ձգվող գետակի մոտ, իմ առվակն էր խոխոջում: Ես դա փորել էի մեծ դժվարությամբ, որ շարժման մեջ դնեմ իմ պատրաստած ջրաղացի անիվը: Ավաղ, չնայած իմ ջանքերին, այդ անիվը ոչ մի անգամ չպտտվեց: Ամեն ինչ այնտեղ նախկինի պես էր, ամեն ինչ սովորական տեղում՝ և՛ ձեռնասայլակը, և՛ ծուռ կոճղից պատրաստված գութանը, և՛ արկղը, որի մեջ ես ճագարներ էի պահում, և՛ այգին, իմ թանկագին այգին…

Ո՞վ է տեսնելու, թե ինչպես են ծաղկելու իմ սիրելի ծաղիկները: Ո՞վ պետք է խնամի իմ գետնատանձերը: Իհարկե, Բարբերենը, զզվելի ու չար Բարբերենը:

Մի քայլ միայն, և ամեն բան կանհետանա ընդմիշտ…

Հանկարծ գյուղից տուն տանող ճանապարհին ես նկատեցի մի սպիտակ գլխաշոր, որը անհետացավ ծառերի հետևում, հետո կրկին հայտնվեց: Այդ հեռավոր տարածությունից ես կարող էի նշմարել սպիտակ գլխաշորը միայն, որը գարնանային սպիտակ թիթեռի պես երևում ու անհետանում էր ճյուղերի մեջ: Բայց կան րոպեներ, երբ սիրտն ավելի լավ է տեսնում և ավելի հեռու, քան ամենասրատես աչքը: Ես ճանաչեցի Բարբերեն մայրիկին: Այդ նա էր, ես համոզված էի, ես դա զգում էի:

— Դեմի,— ասաց ինձ Վիտալիսը,— շարունակե՛նք ճանապարհը:

— Մի քիչ էլ սպասենք, խնդրում եմ:

— Ուրեմն ինձ ճիշտ չեն ասել. քո ոտքերը թույլ են: Դու արդեն հոգնել ես: Դա այնքան էլ լավ նշան չէ:

Բայց ես ոչինչ չպատասխանեցի ու շարունակում էի անթարթ նայել:

Այո՛, դա Բարբերեն մայրիկն էր. նրա գլխաշորը, նրա կապույտ շրջազգեստը:

Նա քայլում էր արագ–արագ, կարծես շտապում էր հնարավորինս շուտ վերադառնալ տուն: Դարպասին մոտենալով՝ նա հրեց դուռը և շտապով մտավ բակը:

Ես իսկույն վեր թռա՝ մոռանալով Կապիի մասին, որը թռչկոտում էր շուրջս:

թվայնացրել է 1915.info կայքը

Բարբերեն մայրիկը տանը երկար չմնաց: Նա իսկույն դուրս եկավ բակը և ձեռքերն առաջ մեկնած՝ սկսեց հետ ու առաջ վազել: Անկասկած, նա ինձ էր փնտրում:

Ես առաջ նետվեցի ու բարձրաձայն գոռացի.

— Մայրի՛կ, մայրի՛կ:

Բայց իմ ձայնը նրան չհասավ, որովհետև ձայնս չկարողացավ խլացնել առվակի քչքչոցը:

— Ի՞նչ է պատահել քեզ: Դու խելագարվե՞լ ես,— հարցրեց Վիտալիսը:

Ես, աչքս Բարբերեն մայրիկից չկտրելով, լռեցի: Բայց մայրիկը չգիտեր, որ ես այդքան մոտ եմ, և եթե վերև նայի, իսկույն ինձ կտեսնի: Նա վազեց բակով մեկ, կրկին դուրս եկավ ճանապարհը և սկսեց ամենուրեք փնտրել ինձ: Ես ավելի ուժեղ գոռացի, բայց այս անգամ էլ անօգուտ:

Այդ ժամանակ Վիտալիսը հասկացավ, թե ինչ է պատահել, և մոտեցավ ինձ: Նա իսկույն նկատեց սպիտակ գլխաշորը:

— Խե՛ղճ փոքրիկ,— կիսաձայն քրթմնջաց նա:

— Աղաչում եմ, թո՛ւյլ տվեք՝ վերադառնամ,— նրա բառերից սրտապնդված՝ բացականչեցի ես:

Բայց նա բռնեց ձեռքս և ստիպեց ցած իջնել ու գալ դեպի ճանապարհը:

— Դու արդեն հանգստացա՛ր, դե՛ գնանք:

Ես ուզում էի դուրս պրծնել նրա ձեռքից, բայց նա ամուր բռնել էր ինձ:

— Կա՛պի, Ջերբի՛նո,— ձայն տվեց Վիտալիսը:

Շները շրջապատեցին ինձ: Ստիպված էի գնալ Վիտալիսի հետևից:

Մի քանի քայլ անելով՝ ես հետ նայեցի, բայց մենք արդեն սարի ստորոտից ցած էինք իջել, և ես այլևս չտեսա ո՛չ մեր հովիտը, ո՛չ մեր տնակը: Միայն երկնագույն բլուրներն էին, որոնք կարծես ձգվում էին մինչև երկինք:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 5

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Լեռան ստորոտում, որը բաժանում է Լուարա և Դորդոնի գետերի ավազանները, Վիտալիսը բռնեց ձեռքս, և մենք իսկույն սկսեցինք ցած իջնել սարալանջով: Միայն այն ժամանակ, երբ մենք մոտ քառորդ ժամ քայլեցինք, Վիտալիսը բաց թողեց ձեռքս:

— Հիմա սուսուփո՛ւս քայլիր իմ կողքով և հիշի՛ր, որ եթե դու փախչելու փորձ անես, Կապին ու Զերբինոն մի ակնթարթում քեզ կբռնեն: Իսկ նրանց ատամները շա՛տ սուր են:

Փախչել: Ես շատ լավ հասկանում էի, որ փախչելն անհնարին է, և հետևաբար չարժե նույնիսկ փորձել: Եվ որպես պատասխան՝ ծանր հառաչեցի:

— Դու շատ ես տխրում,— շարունակեց Վիտալիսը,— ես լիովին հասկանում եմ դա: Եթե ցանկանում ես, կարող ես լաց լինել: Բայց աշխատի՛ր հասկանալ մի բան. այն, ինչ պատահել է, դժբախտություն չէ: Ի՞նչ էր սպասում քեզ: Հավանաբար դու կընկնեիր մանկատուն: Մարդիկ, որոնք մեծացրել են քեզ, քո ծնողները չեն: Մայրդ, ինչպես դու ինձ ասացիր, շատ բարի էր քո նկատմամբ: Դու սիրում ես նրան, քեզ համար ծանր է բաժանվել նրանից, դա ճիշտ է, բայց մտածի՛ր, մի՞թե նա կարող էր ամուսնու կամքին հակառակ քեզ իր մոտ պահել: Մյուս կողմից՝ նրա ամուսինը գուցե այնքան էլ վատ

թվայնացրել է 1915.info կայքը

մարդ չէ, որքան դու կարծում ես: Նա ապրուստի միջոց չունի. նա հաշմանդամ է, աշխատելու անընդունակ և արդարացի կերպով մտածում է, որ ինքը չի կարող մեռնել սովից, որպեսզի կերակրի քեզ: Հասկացի՛ր, տղա՛ս, կյանքը ծանր պայքար է, և միշտ չէ, որ վարվում ես այնպես, ինչպես ցանկանում ես:

Անկասկած, դրանք իմաստուն խոսքեր էին, համենայն դեպս այնպիսի մի մարդու խոսքեր, որը կյանքի փորձ ուներ: Բայց այդ րոպեին ես այնպիսի մեծ վիշտ էի ապրում, որ ոչ մի խոսք ինձ մխիթարել չէր կարող:

Ես այլևս երբեք չեմ տեսնի նրան, ով ինձ մեծացրել է, փաղաքշել, նրան, ում ես սիրում էի հարազատ մոր պես: Այդ մտքից կոկորդս սեղմվում էր, և արցունքները խեղդում էին ինձ: Բայց չնայած դրան՝ Վիտալիսի կողքով քայլելով՝ ակամայից մտածում էի այն ամենի մասին, ինչ նա ինձ ասաց: Իհարկե, նա իրավացի էր: Բարբերենն իմ հայրը չէ, և պարտավոր չէ հանուն ինձ ապրել կարիքի մեջ: Նա իր կամքով ապաստան էր տվել ինձ, ցանկացել էր պահել, մեծացնել: Եթե հիմա նա ինձնից ազատվեց, ապա միայն այն պատճառով, որ ինձ պահելու միջոցներ չուներ: Եվ ես պետք է շնորհակալությամբ հիշեմ այդ տարիները, որ անց եմ կացրել նրա տանը:

— Լա՛վ մտածիր ասածներիս մասին, փոքրի՛կ,— խոսքն ավարտեց Վիտալիսը:— Դու քեզ վատ չես զգա ինձ մոտ:

Ջառիթափով բավականին իջնելուց հետո մենք հայտնվեցինք մի ընդարձակ հարթավայրում: Այնտեղ ո՛չ ծառ կար, ո՛չ տուն: Ամենուրեք շիկավուն հավամրգիով ծածկված հարթություն էր, ուր մերթ այստեղ, մերթ այնտեղ բարձրացել էին վայրի փշաթփերը, որոնք օրորվում էին քամուց:

Երկար ժամանակ մենք գնում էինք այդ ամայի և տխուր ճանապարհով: Շուրջբոլորը ոչինչ չկար՝ բացի մերկագագաթ թմբերից:

Ես բոլորովին այլ կերպ էի պատկերացնում ճանապարհորդությունը: Եվ այն, ինչ տեսնում էի, բոլորովին նման չէր հիանալի երկրներին, որ ես պատկերացնում էի իմ մանկական երևակայության մեջ:

Վիտալիսը գնում էր մեծ, հավասար քայլերով և տանում էր Հոգյակին մերթ ուսին նստեցրած, մերթ տոպրակի մեջ դրած, իսկ շները մանր քայլերով վազում էին նրա մոտով:

Ժամանակ առ ժամանակ Վիտալիսը քնքշորեն դիմում էր նրանց՝ երբեմն ֆրանսերենով, երբեմն էլ ինձ համար անհասկանալի ինչ–որ լեզվով:

Ո՛չ նա, ո՛չ շները հավանաբար բոլորովին չէին հոգնել: Այլ էր իմ վիճակը: Ֆիզիկական հոգնածությունից և հոգեկան ցնցումից լիովին ուժասպառ էի

թվայնացրել է 1915.info կայքը

եղել: Ես հազիվ էի շարժում ոտքերս՝ դժվարությամբ քարշ գալով տիրոջս հետևից: Բայց չէի համարձակվում խնդրել նրան, որ կանգ առնենք:

— Դու հավանաբար շատ ես հոգնել քո սաբոներով[3],— ասաց Վիտալիսը:— Յուսելում ես քեզ համար կոշիկներ կառնեմ:

Այդ խոսքերն ինձ քաջալերեցին: Ես վաղուց էի երազում իսկական կոշիկներ ունենալու մասին: Մեր գյուղում միայն գյուղապետի և պանդոկապանի տղաներն էին կոշիկ հագնում:

— Իսկ Յուսելը դեռ հեռո՞ւ է:

— Դու հավանաբար շատ ես ցանկանում կոշիկներ ունենալ,— ծիծաղեց Վիտալիսը:— Լա՛վ, քեզ համար կառնեմ այն կոշիկներից, որոնց ներբաններին մեխեր են խփված, բացի այդ կառնեմ նաև թավշյա վարտիք, բաճկոն և գլխարկ: Հուսով եմ, որ դա կուրախացնի քեզ և կօգնի անցնելու այն մի քանի կիլոմետրը, որ մնում է մեզ:

Ինչ բարի մարդ է իմ տերը: Մի՞թե չար մարդն ուշադրություն կդարձներ այն բանի վրա, որ ինձ հոգնեցնում է ծանր սաբոն:

Կոշիկներ, մեխերով կոշիկներ: Թավշյա վարտիք, բաճկոն, գլխարկ: Ա՛խ, եթե Բարբերեն մայրիկը տեսներ ինձ, որքան երջանիկ կլիներ, ինչպես կհպարտանար ինձնով... Շա՛տ ափսոս, որ Յուսելը դեռ այդքա՛ն հեռու է: Չնայած խոստացած կոշիկներին ու թավշյա վարտիքին՝ ես զգում էի, որ այլևս առաջ գնալու ուժ չունեի:

Բարեբախտաբար, ինձ օգնության հասավ եղանակը: Երկինքը, որ առավոտից ջինջ էր, երեկոյան դեմ ծածկվեց գորշ ամպերով, և շուտով սկսեց բարակ անձրև մաղել:

Վիտալիսն իր գառան մորթու բաճկոնով լավ էր պաշտպանված անձրևից, ինչպես և Հոգյակը, որն անձրևի առաջին կաթիլները տեսնելուն պես շտապով թաքնվեց Վիտալիսի ծոցում: Բայց ես ու շները ծածկոց չունեինք և շուտով ամբողջովին թրջվեցինք: Ես ցրտից փայտացել էի:

— Դու շո՞ւտ ես մրսում,— հարցրեց ինձ տերս:

— Չգիտեմ: Ես չեմ հիշում, որ երբևէ հիվանդացած լինեմ:

— Հիանալի է, հիանալի: Քո մեջ, անշուշտ, ինչ-որ լավ բան կա: Բայց և այնպես ես չեմ ցանկանում իզուր վտանգի ենթարկել քո առողջությունը: Ահա գյուղ է երևում, մենք այնտեղ կգիշերենք:

---

[3] Սաբո — կոշիկներ, որոնք պատրաստված են փայտից, կամ որոնց ներբանները փայտից են: Ֆրանսիայում սովորաբար հագնում են գյուղացիները:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց այդ գյուղում պանդոկ չկար, և ոչ ոք չէր ցանկանում օթևան տալ մի թափառաշրջիկի, որի հետևից էլ քարշ էին գալիս ոտքից գլուխ ցեխաթաթախ մի երեխա և երեք շուն:

«Այստեղ գիշերել չի կարելի»,— ասում էին մեզ և հենց քթներիս փակում դուռը:

Ինչ կարող էինք անել: Գնալ Յուսֆլ... բայց մինչև այնտեղ հասնելը դեռ մի քանի կիլոմետր կար: Գիշերը վրա էր հասնում, սառը անձրևը սարսռեցնում էր մեզ, ես զգում էի, որ ոտքերս փայտացել են:

Վերջապես մի գյուղացի, որն ավելի գթառատ էր, քան իր հարևաննե-րը, համաձայնվեց ներս թողնել մեզ իր ցախատունը: Բայց նա մեզնից խոսք առավ, որ կրակ չենք վառի:

— Տո՛ւր ինձ լուցկիդ,— դիմեց նա Վիտալիսին,— վաղն առավոտյան, երբ որ գնաք, ես լուցկին կվերադարձնեմ ձեզ:

Մենք հաճույքով համաձայնվեցինք, քանի որ երջանիկ էինք արդեն նրանով, որ ապաստան գտանք և այլևս անձրևի տակ չէինք թրջվում:

Վիտալիսը շրջահայաց մարդ էր և երբեք ճանապարհ չէր ընկնում առանց ուտելիքի պաշարի: Նրա զինվորական տոպրակում, որը նա տանում էր ուսին գցած, հացի մեծ կտոր կար: Այդ հացը նա չորս մասի բաժանեց:

Այդտեղ առաջին անգամ տեսա, թե ինչպես է նա կարգապահություն և հնազանդություն պահպանում իր խմբում:

Մինչդեռ մենք գյուղում այս ու այն կողմ էինք ընկնում՝ օթևան փնտրելով, Զերբինոն ներս վազեց մի տուն և արագորեն դուրս թռավ այնտեղից՝ մի կտոր հաց ատամներում բռնած: Վիտալիսը, այդ տեսնելով, ասաց. «Մինչև երեկո, Զերբի՛նո»:

Ես արդեն մոռացել էի այդ գողության մասին, բայց երբ մեր տերը հացը սկսեց բաժանել, տեսա, որ Զերբինոն պոչը քաշեց ու կծկվեց:

Մենք նստել էինք երկու խտիտ խոտի վրա. Վիտալիսն ու ես՝ կողք կողքի, Հոգյակը՝ մեր միջև: Շները՝ Կապին և Դոլչեն, պառկել էին մեր դիմաց՝ աչքերն իրենց տիրոջը հառած, իսկ Զերբինոն՝ պոչը կախած և ականջները սրած:

— Թող գողը հեռանա՛ այստեղից և անկյո՛ւն կանգնի,— խստությամբ ասաց Վիտալիսը:— Այսօր նա կքնի առանց ընթրելու:

Իսկույն ևեթ Զերբինոն թողեց իր տեղը և սողալով գնաց ցույց տրված անկյունը: Նա գլխովին թաղվեց խոտի մեջ այնպես, որ մենք նրան չէինք տեսնում և լսում էինք միայն նրա խղճալի հառաչանքն ու թույլ կլանչոցը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ջերբինոյին պատժելով՝ Վիտալիսն ինձ մեկնեց մի կտոր հաց, մյուս կտորն էլ ինքը վերցրեց: Հոգյակին, Կապիին, Դոլչեին հատկացված բաժինները նա մանր կտորների բաժանեց:

Չնայած վերջին ժամանակներս Բարբերեն մայրիկի մոտ ես լավ չէի սնվում, բայց իմ կյանքում տեղի ունեցած փոփոխությունը բավականին զգալի էր:

Որքա՜ն համեղ էր թվում ինձ հիմա տաք ապուրը, որը երեկոները եփում էր Բարբերեն մայրիկը և նույնիսկ երբ այն եփում էր առանց յուղի: Որքա՜ն հաճելի էր նստել անկյունում՝ վառարանի մոտ, ինչպիսի՜ հաճույք էր պառկել անկողնում ու վերմակը քաշել մինչև քիթդ:

Բայց ավա՜ղ: Այդ մասին խոսք անգամ լինել չէր կարող: Դեռ լավ էր, որ մենք պառկած էինք խոտին: Հոգնածությունից ջարդված, սաբոյից հարված ոտքերով՝ ես իմ թաց հագուստի մեջ դողում էի ցրտից:

Արդեն շատ ուշ էր, իսկ ես դեռ քնել չէի կարողանում:

— Դու դողում ես: Միսում ես հավանաբար,— ասաց ինձ Վիտալիսը:

— Այո՛, մի քիչ:

Ես նկատեցի, որ նա բացեց պարկը:

— Ես շատ սպիտակեղեն ու հագուստեղեն չունեմ,— ասաց նա,— բայց ահա քեզ չոր շապիկ և բաճկոնակ: Հանի՛ր թաց շորերդ և հագի՛ր սրանք: Հետո թաղվի՛ր խոտի մեջ, աշխատի՛ր տաքանալ ու քնել:

Բայց այդուհանդերձ, ես սարսափելի մրսում էի և երկար ժամանակ շուռումուռ էի գալիս: Ես այնքան վշտացած էի ու դժբախտ, որ քնել չէի կարողանում: Մի՞թե հիմա ես միշտ ստիպված եմ լինելու առանց հանգստանալու քայլել անձրևի տակ, գիշերել ցախատանը, դողալ ցրտից, ընթրիքին ստանալ մի կտոր չոր հաց և չունենալ ոչ մեկին, որը սիրի ու խղճա ինձ: Իմ սիրելի՛, թանկագի՛ն մայրիկ...

Ես տարվել էի այդ տխուր մտքերով, և արցունքներն առատորեն հոսում էին իմ աչքերից: Հանկարծ դեմքիս զգացի ինչ–որ մեկի ջերմ շունչը:

Ձեռքս մեկնելով՝ շոշափեցի թավամազ բուրդը: Կապին էր: Զգուշորեն սողալով խոտի վրայով՝ նա կամացուկ մոտեցավ ինձ և հոտոտեց: Հետո Կապին պառկեց կողքիս և սկսեց քնքշորեն լիզել ձեռքս: Այդ շոյանքից զգացված՝ ես բարձրացա և համբուրեցի Կապիի սառը քիթը: Ի պատասխան՝ նա կամացուկ կլանչեց:

Ես մոռացա հոգնությունս ու վիշտս: Արցունքներս այլևս չէին խեղդում, և ես ազատ շունչ առա: Հիմա ինձ մենակ չէի զգում. ես ընկեր ունեի:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 6

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԵԼՈՒՅԹԸ

Հետևյալ օրը մենք ճանապարհ ընկանք շատ վաղ: Անձրևը դադարել էր, երկինքը պարզ էր, գիշերվա քամուց ցեխը համարյա չորացել էր, թռչուններն ուրախ–ուրախ ծլվլում էին ճամփեզրի թփերում, իսկ շները ցատկոտում էին մեր չորսբոլորը: Ժամանակ առ ժամանակ Կապին կանգնում էր հետին թաթերին ու հաչում դեմքիս: Ես շատ լավ հասկանում էի այդ հաչոցի նշանակությունը. «Մի՛ ընկճվիր, համարձակ եղիր»,— կարծես ասում էր նա ինձ:

Ես բացի մեր գյուղից ուրիշ ոչ մի տեղ չէի եղել, այդ պատճառով շատ էի ցանկանում իսկական քաղաք տեսնել: Բայց պետք է խոստովանեմ, որ Յուսելն ինձ վրա մեծ տպավորություն չթողեց: Նրա՝ հնամյա աշտարակներով զարդարված տներին, որ, անկասկած, մեծ արժեք էին ներկայացնում հնագետների համար, ես նայում էի լիակատար անտարբերությամբ: Ճիշտն ասած՝ ինձ շատ քիչ էր հետաքրքրում այդ տների գեղեցկությունը: Ես միայն մի բանի մասին էի մտածում. կաշվե կոշիկների, որ ինձ խոստացել էր Վիտալիսը: Մոտենում էր ժամը, երբ ես պետք է դրանք հագնեի: Որտեղ է այդ հիանալի կրպակը, որտեղ վաճառվում են կոշիկներ: Ես աչքերով փնտրում էի այն, իսկ մնացյալը՝ աշտարակները, կամարները, սյուները, ինձ բոլորովին չէին զբաղեցնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ պատճառով միակ բանը, ինչ մնաց իմ հիշողության մեջ Յուսելից, մութ ու մրոտ խանութն էր, որը շուկայի մոտ էր: Նրա ցուցափեղկում դրված էին հին հրացաններ, արծաթյա ուսադիրներով և եզրակարերով ինչ-որ մի հագուստ, բազմաթիվ լամպեր և մետաղյա հին իրեր ու ամենից շատ կողպեքներ ու ժանգոտած բանալիներ: Երեք աստիճան ցած իջնելով՝ մենք ընկանք մի մեծ սենյակ, որտեղ հավանաբար ցերեկվա լույսը երբեք չէր թափանցում:

Ինչպես կարող էր կոշիկների պես հիանալի բանը վաճառվել այս սարսափելի տեղում:

Բայց Վիտալիսը գիտեր, թե ինչ էր անում: Շատ շուտով ես արդեն հագել էի ներբաններին մեխեր խփած կոշիկներ, որոնք, համենայն դեպս, մի տասը անգամ ավելի ծանր էին, քան իմ սաբոն: Վիտալիսի առատաձեռնությունը դրանով չսահմանափակվեց: Բացի կոշիկներից՝ նա գնեց ինձ համար կապույտ թավշյա բաճկոն, բրդյա վարտիք և ֆետրե գլխարկ. մի խոսքով՝ այն ամենը, ինչ խոստացել էր:

Ես հագել եմ թավիշ, ես, որ երբեք, բացի քաթանից, ուրիշ ոչինչ չեմ հագել: Ես ունեմ կոշիկներ, գլխարկ: Մինչև հիմա իմ գլխին երբեք ոչինչ չի եղել՝ բացի մազերիցս: Իսկապես, որ Վիտալիսն ամենալավ մարդն էր աշխարհում, ամենաառատաձեռն ու ամենահարուստը:

Ճիշտ է, բաճկոնակի թավիշը շատ տրորված էր, իսկ վարտիքը՝ մաշված. բացի այդ՝ ֆետրի սկզբնական գույնը շատ դժվար էր որոշել. այնքա՜ն էր գունափոխվել՝ անձրևից ու փոշուց, բայց ես այնպես էի շլացել այդ ողջ շքեղությամբ, որ ոչ մի թերություն չէի նկատում:

Ես ուզում էի հնարավորին չափ շուտ հագնել այդ գեղեցիկ հագուստը, բայց Վիտալիսը նախ զբաղվեց նրա ձևափոխմամբ, որը և ինձ չափազանց վշտացրեց:

Պանդոկ վերադառնալով՝ նա իր տոպրակից հանեց մկրատն ու վարտիքը կարճացրեց, և քանի որ շփոթված նրան էի նայում, ասաց.

— Ովքե՞ր ենք մենք: Դերասաններ, ճի՞շտ է, խեղկատակներ, որոնք նույնիսկ իրենց տեսքով պետք է հետաքրքրություն առաջ բերեն: Եթե մենք հագնված լինենք սովորական քաղաքացիների կամ գյուղացիների պես, մեզ վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնի:

Ահա թե ինչու առավոտյան, երբ ես ֆրանսիացի էի, երեկոյան դարձա իտալացի:

թվայնացրել է 1915.info կայքը

Վիտալիսը կարճացրեց վարտիքը մինչև ծնկները, իսկ գուլպաները խաչաձև կապկպեց կարմիր ժապավեններով: Ֆետրե գլխարկը նա նույնպես զարդարեց բազմապիսի ժապավեններով և ամրացրեց ծաղիկների մի փունջ:

Չգիտեմ՝ ինչ կարծիք ունեին իմ մասին շրջապատի մարդիկ, բայց պետք է խոստովանեմ, որ ինքս ինձ շատ դուր էի գալիս: Կապին թերևս լիովին հավանություն տվեց իմ նոր զգեստին, որովհետև զննելով ինձ՝ մեկնեց իր թաթը: Բայց Հոգյակը հագուստս փոխելու ամբողջ ընթացքում կանգնել էր դիմացս և ծաղրում էր ինձ:

— Հիմա անցնենք աշխատանքի,— դիմեց ինձ Վիտալիսը:— Վաղը շուկայի օր է, և ես մտադիր եմ մեծ ներկայացում կազմակերպել, դու էլ պետք է մասնակցես: Հիմա մենք կփորձենք քո դերը:

Իմ զարմացած հայացքից նա զգաց, որ ես նրան չհասկացա:

— Դեր ասելով՝ նկատի ունեմ այն, ինչ դու պետք է կատարես մեր ներկայացման ժամանակ: Ես քեզ բերել եմ ինձ հետ ոչ քո հաճույքի համար, ես այդքան հարուստ չեմ: Դու պետք է աշխատես: Կատակերգության մեջ պետք է Հոգյակի և շների հետ խաղաս:

— Բայց ես խաղալ չգիտեմ,— վախեցած բացականչեցի ես:

— Ա՛յ, հենց դրա համար էլ պետք է սովորեցնեմ քեզ: Դու շատ լավ հասկանում ես, որ Կապին ինքն իրեն չի սովորել քայլել ետին թաթերին, իսկ Դոլչեն պարանի վրայից ցատկում է ոչ սեփական հաճույքի համար: Մինչև Կապին սկսել է քայլել ետին թաթերին, իսկ Դոլչեն ցատկել պարանի վրայից, նրանք ստիպված են եղել երկար ու երկար սովորել: Ա՛յ, հիմա դու էլ ստիպված կլինես աշխատել, որ սովորես այն դերերը, որոնք դու պետք է կատարես նրանց հետ: Այսպես, ուրեմն սկսում ենք:

Ես ապշած էի: Մինչև այժմ ես կարծում էի, որ աշխատել նշանակում է հող փորել, ծառեր կտրել, քար տաշել. այլ աշխատանք ես պատկերացնել չէի կարող:

— Պիեսը, որ մենք խաղալու ենք, կոչվում է «Գեներալ Հոգյակի ծառան»: Ահա դրա բովանդակությունը. գեներալ Հոգյակը մինչ այսօր ուներ մի ծա-

թվայնացրել է 1915.info կայքը

ռա. Կապին էր, որից տերը շատ գոհ էր: Բայց Կապին ծերացել էր, և գեներալը ցանկացավ նոր ծառա վարձել: Կապին գտավ նրա համար գեղջուկ մի տղա, որի անունը Ռեմի է:

— Նրա՞ն էլ են կոչում այնպես, ինչպես ինձ:

— Նա հենց դու ես: Դու եկել ես գյուղից, որ դառնաս գեներալ Հոգյակի ծառան:

— Կապիկները ծառա չեն ունենում:

— Կատակերգության մեջ ունենում են: Դու հայտնվում ես գեներալի մոտ, և նա համարում է, որ դու հիմարի տեսք ունես:

— Ինձ այդ բոլորովին դուր չի գալիս:

— Քեզ համար միևնույն չէ՞, եթե այդ արվում է ծիծաղի համար: Պատկերացրո՛ւ, որ դու իսկապես գալիս ես տիրոջ մոտ, որպեսզի ծառա վարձվես, և քեզ կարգադրում են, օրինակ, սեղանը սարքել: Ահա՛ սեղանը, որը մենք պիտի օգտագործենք ներկայացման ժամանակ: Մոտեցի՛ր և սեղա՛նը սարքիր ճաշի համար:

Սեղանին դրված էին ափսեներ, բաժակ, դանակ, պատառաքաղ և սպիտակ անձեռոցիկ: Ինչպե՞ս պետք է դասավորել այդ ամենը: Դրա մասին մտածելով՝ կանգ առա՝ ձեռքերս առաջ մեկնած և բերանս բաց՝ չիմանալով ինչից սկսել:

Իմ տերը ծափ զարկեց և բարձրաձայն ծիծաղեց:

— Բրա՛վո, բրա՛վո, հիանալի է: Դու ուղղակի անզուգական ես: Այն տղան, որն աշխատում էր ինձ մոտ մինչև քեզ վերցնելս, խորամանկ դեմք էր ընդունում և իր ողջ տեսքով ասում էր. «Հիմա դուք կտեսնեք, թե ես ինչքա՜ն լավ հիմար կձևանամ»: Դու ոչինչ ձևացնել չես ցանկանում, դու չես խաղում, և քո միամտությունը սքանչելի է:

— Ես ուղղակի չգիտեմ, թե ինչ պետք է անեմ:

— Դու հենց դրանով ես լավ: Վաղը կամ մի քանի օր հետո դու շատ լավ կիմանաս, թե ինչ պետք է անես: Այդ ժամանակ դու արդեն ստիպված կլինես մտաբերել այն շփոթմունքը, որ զգում ես հիմա, և պատկերել մի բան, որ այլևս չես զգում: Եթե դու կարողանաս ըստ քո ցանկության դեմքիդ տալ այս արտահայտությունը, ընդունել այս դիրքը, ես քեզ մեծ հաջողության երաշխիք եմ տալիս: Ո՞ւմ ես պատկերում դու իմ կատակերգության մեջ: Երիտասարդ գյուղացու, որը կյանքում ոչինչ չի տեսել և ոչ մի տեղ չի եղել: Քեզ վարձում է կապիկը, և պարզվում է, որ դու ավելի քիչ բան գիտես և քիչ բան

թվայնացրել է 1915.info կայքը

կարող ես անել, քան նա: Քո դերն այն է, որ դու Հոգյակից հիմար լինես: Այդպես խաղալու համար դու պետք է մնաս այնպիսին, ինչպիսին հիմա ես:

«Գեներալ Հոգյակի ծառան» փոքրիկ կատակերգություն էր, որի ցուցադրումը տևում էր 20 րոպեից ոչ ավելի: Իսկ մեր փորձը տևեց մոտ երեք ժամ, որովհետև Վիտալիսը ինձ և շներին մի քանի անգամ ստիպում էր ամեն ինչ նորից սկսել: Ինձ ծայրաստիճան զարմացնում էր մեր տիրոջ համբերատարությունն ու հեզությունը: Վիտալիսը երկարատև փորձի ամբողջ ընթացքում ոչ միայն ամենևին չբարկացավ, այլև նույնիսկ ոչ մի անգամ չհայհոյեց:

— Սկսենք սկզբից,— խստությամբ ասում էր նա, երբ այն, ինչ պահանջում էր, չէին կատարում:— Կա՛պի, դա վատ է: Հոգյա՛կ, դու անուշադիր ես, ես քեզ վրա կզայրանամ:

Այդքան միայն, և դա բավական էր:

— Դե՛հ, ի՞նչ ես կարծում, կկարողանա՞ս մասնակցել ներկայացմանը,— փորձը վերջացնելուց հետո հարցրեց նա ինձ:

— Չգիտեմ:

— Դու չձանձրացա՞ր:

— Ո՛չ, ինձ շատ դուր եկավ:

— Ուրեմն ամեն ինչ լավ կլինի: Դու հասկացող տղա ես, իսկ առավել գնահատելին այն է, որ ուշադիր ես: Եթե դու այսուհետև ևս ուշադիր ու լսող լինես, մեծ հաջողության կհասնես: Նայի՛ր շներին և համեմատի՛ր նրանց Հոգյակի հետ: Հոգյակն ավելի խելոք է և աշխույժ, բայց անհնազանդ է: Նա հեշտությամբ սովորում է ամեն բան, ինչ նրան ցույց են տալիս, բայց իսկույն ևեթ բոլորը մոռանում է: Բացի դրանից՝ նա հաճախ տհաճությամբ է կատարում այն, ինչ նրանից պահանջում են: Եթե ճար ունենար, չէր ենթարկվի ինձ. նա սիրում է միշտ հակառակել: Այդպես է նրա բնավորությունը, և դրա համար ես նրա վրա չեմ բարկանում: Ուշադի՛ր եղիր, տղա՛ս, խելո՛ք եղիր: Բարեխղճորեն կատարի՛ր քո պարտականությունները: Կյանքում դա է հաջողության գրավականը:

Այդ ժամանակ ես համարձակվեցի նրան ասել, որ փորձի ժամանակ ինձ չափազանց զարմացրեց նրա անսահման համբերատարությունը:

Ի պատասխան՝ նա հեզ ժպտաց:

— Հավանաբար մինչև հիմա դու ապրել ես այնպիսի մարդկանց մեջ, որոնք դաժանությամբ են վարվել կենդանիների հետ:

— Ո՛չ, Բարբերեն մայրիկը շատ քնքուշ էր վարվում մեր կովի՝ Շեկոյի հետ,— նկատեցի ես:

թվայնացրել է 1915.info կայքը

— Քո ասածներից զգացվում է, որ Բարբերեն մայրիկը շատ լավ կին էր: Նա հասկանում է, որ կոպտությամբ կենդանիներին ոչինչ չես ստիպի անել: Ես շատ բան եմ սովորեցրել իմ կենդանիներին միայն շնորհիվ այս բանի, որ երբեք չեմ բարկացել նրանց վրա: Եթե ես սկսեի ծեծել կենդանիներին, նրանք վախկոտ կդառնային, իսկ վախը բթացնում է միտքը: Բացի այդ, եթե ես բորբոքվեի, ապա այսքան համբերատար չէի լինի, որքան հիմա, որովհետև ուրիշներին դաստիարակելով՝ դու դաստիարակում ես ինքդ քեզ: Իմ շներն ինձ ավելի քիչ դասեր չեն տվել, քան ես՝ նրանց: Ես կոփել եմ նրանց միտքը, իսկ նրանք՝ իմ բնավորությունը:

Դա ինձ այնքան տարօրինակ թվաց, որ ես ծիծաղեցի:

— Քեզ ծիծաղելի է թվում, որ շունը կարող է որևէ բան սովորեցնել մարդուն: Այնուամենայնիվ, դա այդպես է: Պատկերացրու, որ Կապին սովորեցնելիս ես սկսեի բարկանալ ու բորբոքվել: Կապին նույնպես չար ու կատաղած կդառնար, այսինքն՝ ինձ ընդօրինակելով՝ կփչանար: Ջուսպ և փաղաքշող տիրոջ շունը միշտ դաստիարակված է ու սիրալիր:

Իմ նոր բարեկամները՝ շներն ու կապիկը, սովոր էին ելույթ ունենալ հանդիսատեսի առաջ և դրա համար կարող էին վաղվա օրից չվախենալ: Նրանք պետք է անեին այն, ինչ արդեն շատ անգամ արել էին, մինչդեռ ես պետք է ելույթ ունենայի առաջին անգամ: Դրա համար, երբ հետևյալ առավոտյան մենք գնում էինք քաղաքային հրապարակը, որտեղ պետք է տեղի ունենար մեր ներկայացումը, ես շատ էի անհանգստանում:

Վիտալիսը գնում էր առջևից: Գլուխը բարձր պահած և կուրծքը դուրս գցած՝ նա ֆլեյտա էր նվագում, ոտքերը ներդաշնակորեն դոփելով: Նրա հետևից վազում էր Կապին, որի մեջքին նստած էր Հոգյակը՝ անգլիական գեներալի կոստյումով, դեմքին անտարբեր արտահայտություն. նա հագել էր ոսկեգույն եզրակարով սերթուկ և անդրավարտիք ու դրել հսկայական փետուրով զարդարված գլխարկ: Նրանցից մի քանի քայլ հեռավորությամբ

թվայնացրել է 1915.info կայքը

կողք կողքի վազում էին Ջերբինոն ու Դոլչեն: Ես գնում էի նրանց հետևից: Այսպիսով՝ մեր խումբը ձգվում էր փողոցով մեկ:

Յուսելի բնակիչները մոտենում էին դռներին, որպեսզի նայեն մեզ. բոլոր լուսամուտների վարագույրներն արագ–արագ բարձրանում էին: Երեխաները վազում էին մեր հետևից, զարմացած քաղաքացիները միանում էին նրանց, և երբ մենք հրապարակ հասանք, մեր չորսբոլորն ահագին ժողովուրդ էր հավաքվել:

Մենք արագ բեմ պատրաստեցինք: Չորս ծառից պարան կապեցինք, մի քառակուսի տարածություն անջատեցինք և տեղավորվեցինք նրա կենտրոնում:

Ներկայացման առաջին մասում մենք ցույց էինք տալիս զանազան աճպարարություններ, որոնք կատարում էին շները: Ես հիմա չեմ կարող ասել, թե ինչ հնարքներ էին դրանք, որովհետև զբաղված էի դերիս կրկնությամբ և չափազանց հուզված էի առաջիկա ելույթիս համար: Մտաբերում եմ միայն այն, որ Վիտալիսը ֆլեյտան փոխարինեց ջութակով և նրանով նվագակցեց շներին՝ կատարելով մերթ պարեղանակներ, մերթ ինչ–որ քնքուշ, մեղմ մեղեդիներ: Հանդիսատեսների ամբոխը գնալով ավելանում էր, և ես տեսնում էի ինձ ուղղված բազմաթիվ փայլփլուն աչքեր:

Երբ ներկայացման առաջին մասն ավարտվեց, Կապին ատամներով վերցրեց փայտյա գավաթը և հետին թաթերին կանգնելով՝ սկսեց շրջել «հարգարժան հասարակության» մեջ: Եթե որևէ մեկը դրամ չէր նետում, Կապին կանգ էր առնում, մի կողմ էր տանում գավաթը, և իր առջևի թաթերը ժլատ հանդիսատեսին մեկնելով՝ մի քանի անգամ խփում էր նրա գրպանին: Այդ ժամանակ ներկաները սկսում էին բացականչել, ուրախ դիտողություններ անել և միմյանց ծաղրել:

— Խորամանկ շուն. գիտի, թե ում գրպանն է լիքը:

— Ապա մի քսակդ թաքփ տուր:

— Ոչ մի դեպքում չի տա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի՛ վախենա, փողդ չի պակասի, քեռուցդ ժառանգություն ես տացել:

Եվ դրամները ի վերջո թափվում էին գավաթի մեջ:

Վիտալիսն այդ ժամանակ, ջութակի վրա ուրախ եղանակներ նվագելով, հայացքով լուռ հետևում էր գավաթը թափվող դրամներին:

Շուտով Կապին վերադարձավ տիրոջ մոտ՝ հպարտությամբ բերելով ատամներով բռնած լիքը գավաթը:

Վրա հասավ իմ և Հոգյակի բեմ դուրս գալու ժամանակը:

— Հարգելի՛ հանդիսատեսներ,— դիմեց ժողովրդին Վիտալիսը,— շարունակում ենք մեր ներկայացումը: Հիմա դուք կտեսնեք մի հետաքրքիր կատակերգություն, որը կոչվում է «Գեներալ Հոգյակի ծառան»: Ես այնպիսի մարդ չեմ, որ նախօրոք գովեմ իմ պիեսը և իմ դերասաններին: Միայն մի բան կասեմ ձեզ. լսե՛ք՝ ականջներդ սրած, աչքներդ լայն բացած, և ձեռքներդ պատրաստ պահեք ծափահարության համար:

Այն, ինչ նա կոչում էր «հետաքրքիր կատակերգություն», իրականում դիմախաղ էր միայն: Այլ կերպ չէր էլ կարող լինել այն պարզ պատճառով, որ երկու գլխավոր դերասանները՝ Հոգյակը և Կապին, բոլորովին չգիտեին խոսել, իսկ երրորդը, այսինքն՝ ես, ի վիճակի չէի երկու բառ նույնիսկ արտասանելու: Բայց որպեսզի դերասանների խաղը հասկանալի դառնա, Վիտալիսը պիեսի ընթացքում բացատրություններ էր տալիս: Կամացուկ նվագելով ջինվորական քայլերգ՝ նա հայտարարեց, որ հիմա բեմ է դուրս գալիս անգլիական գեներալ Հոգյակը, որը Հնդկաստանի հետ ունեցած պատերազմի ժամանակ տիտղոսներ է ստացել և մեծ կարողության տեր դարձել: Մինչև այսօր գեներալ Հոգյակը միայն մի ծառա ուներ՝ Կապին, բայց հիմա նա ցանկացավ, որ իր ծառան մարդ լինի: Կենդանիները չափազանց երկար ժամանակ եղել են մարդկանց ստրուկը, հիմա թող լինի հակառակը: Ծառայի գալստյանը սպասելով՝ գեներալը, սիգար ծխելով, հետ ու

թվայնացրել է 1915.info կայքը

առաջ էր քայլում: Պետք էր տեսնել, թե ինչպես էր նա ծուխը բաց թողնում հանդիսատեսների դեմքին:

Բայց ահա գեներալը համբերությունից դուրս եկավ, նա սկսեց զայրացած պտտել աչքերը, կծոտել շրթունքները և ոտքը խփել գետնին: Այդ րոպեին ես բեմ դուրս եկա Կապիի ուղեկցությամբ: Եթե ես մոռանայի, որ պետք է բեմ դուրս գամ, Կապին ինձ կհիշեցներ այդ մասին: Նա ինձ մեկնեց թաթը և տարավ գեներալի մոտ:

Գեներալը, ինձ տեսնելով, վշտացած թափ տվեց ձեռքերը: Ինչպե՜ս թե: Սա՞ է այն ծառան, որ իրեն առաջարկում են: Ուղիղ դեմքիս նայելով, ուսերը թոթվելով՝ նա պտտվեց շուրջս: Նրա մռութն այնքան զվարճալի տեսք ուներ, որ հանդիսատեսները բարձրաձայն ծիծաղեցին: Բոլորը հասկացան, որ գեներալը ինձ իսկական հիմարի տեղ դրեց: Այդպիսին էր հանդիսատեսների տպավորությունը:

Պիեսն էլ հենց այդպես էր մտածված, որ ամեն ինչով ընդգծի իմ հիմարությունը:

Յուրաքանչյուր տեսարանում ես պետք է մի նոր հիմարություն անեի, մինչդեռ Հոգյակը, ընդհակառակը, ցույց էր տալիս իր խելքն ու ճարպկությունը:

Ինձ երկար զննելուց հետո գեներալը կարգադրեց սեղան սարքել նախաճաշելու համար:

— Գեներալը կարծում է, որ ուտելուց հետո տղան կխելոքանա,— բացատրեց Վիտալիսը:— Տեսնենք:

Ես նստեցի փոքրիկ սեղանի մոտ, որտեղ դրված էին նախաճաշի պարագաները, ինչպես նաև մի ափսե, որի վրա մի անձեռոցիկ կար:

Ինչ անեմ անձեռոցիկը: Ես այդ չգիտեի և որոշեցի դրանով մաքրել քիթս:

Գեներալը ծիծաղից թուլացավ, իսկ Կապին, ասես խոցված իմ հիմարությունից, թավալվեց մեջքին՝ թաթերը վեր բարձրացրած: Տեսնելով, որ հիմար բան եմ արել՝ կրկին զբաղվեցի

թվայնացրել է 1915.info կայքը

անձեռոցիկով: Այդ ժամանակ գլուխս մի միտք եկավ. անձեռոցիկը փողկապի պես կապեցի վզիս: Կրկին գեներալի ծիծաղը, կրկին Կապիի վրդովմունքը: Այդ ձևով շարունակվում էր ներկայացումը. ի վերջո համբերությունից դուրս եկած գեներալը ինձ ցած գլորեց աթոռից, ինքը նստեց իմ տեղը և կերավ իմ նախաճաշը:

Ա՛խ, ինչ ճարպկությամբ էր օգտագործում անձեռոցիկը գեներալը: Ինչպիսի նրբագեղությամբ մտցրեց անձեռոցիկը իր համազգեստի մեջքի մեջ և փռեց ծնկներին: Որքա՜ն գեղեցիկ էր կտրում հացը և խմում բաժակից: Բայց մարդկանց հիացմունքն իր գագաթնակետին հասավ այն ժամանակ, երբ նախաճաշից հետո ատամփորիչ պահանջեց և սկսեց մաքրել ատամները:

Չորս կողմից թնդացին ծափահարությունները, և ներկայացումն ավարտվեց մեր լիակատար հաղթանակով: Որքա՜ն խելոք է կապիկը, և որքա՜ն հիմար է ծառան:

Պանդոկ վերադառնալիս Վիտալիսը հենց այդպես էլ ասաց, բայց ես արդեն ինձ այնքան էի դերասան զգում, որ այդ ընդունեցի որպես գովասանք:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 7

ԵՍ ԿԱՐԴԱԼ ԵՄ ՍՈՎՈՐՈՒՄ

Չնայած սինյոր Վիտալիսի խմբի դերասանները շատ տաղանդավոր էին, բայց նրանց ծրագիրը բավականին միապաղաղ էր, և երեք–չորս ներկայացումից հետո ստիպված էինք ամեն բան նորից կրկնել: Այդ պատճառով մենք պետք է միշտ մի տեղից մյուսը տեղափոխվեինք:

Երեք օր Յուսելում մնալով՝ մենք կրկին ճամփա ընկանք:

— Ո՞ւր ենք գնալու,— ես արդեն այնքան էի ընտելացել Վիտալիսին, որ կարող էի նրան այդպիսի հարց տալ:

— Միթե դու ծանոթ ես երկրին,— հարցրեց նա:

— Ո՛չ:

— Այդ դեպքում ինչո՞ւ ես հարցնում:

— Դե, իսկ Դո՞ւք: Դուք ծանո՞թ եք այս կողմերին:

— Ես էլ երբեք այստեղ չեմ եղել:

— Բայց Դուք գիտեք, թե մենք ուր ենք գնում:

Վիտալիսը ուշադրությամբ նայեց ինձ:

— Դու հավանաբար կարդալ չգիտես:

— Չգիտեմ:

— Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է գիրքը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո՛:

— Երբ մենք կնստենք հանգստանալու, ես քեզ ցույց կտամ մի գիրք, որի մեջ կան այն վայրերի և երկրների անուններն ու նկարագրությունները, որտեղով մենք պետք է անցնենք: Մարդիկ, որոնք եղել կամ ապրել են այդ վայրերում, գրել են գրքում այն, ինչ իրենք տեսել են ու գիտեն նրանց մասին: Բավական է՝ միայն բացեմ գիրքն ու կարդամ և ամեն բան իմանամ: Ես կարող եմ այդ վայրերը պատկերացնել նույնքան լավ, որքան եթե տեսած լինեի սեփական աչքերով:

Ես վայրենու պես էի մեծացել և Վիտալիսի բառերն իսկական հայտնություն էին ինձ համար: Չնայած ես հաճախել եմ դպրոց, բայց իմ ուսումը տևել է ընդամենը մի ամիս: Այդ ընթացքում ես ոչ մի անգամ ձեռքս գիրք չեմ վերցրել, ինձ ոչ մի բան չէին սովորեցրել՝ ո՛չ կարդալ և ո՛չ գրել:

Ինչ ես ասում եմ, կարող է անհավատալի թվալ: Բայց այն ժամանակ, որին վերաբերում է իմ պատմությունը, Ֆրանսիայի շատ գյուղերում դպրոցներ չկային, իսկ այնտեղ, ուր կային, հաճախ էին հանդիպում այնպիսի ուսուցիչներ, որոնք այս կամ այն պատճառով երեխաներին ոչինչ չէին սովորեցնում: Նրանք միայն հսկում էին երեխաներին՝ կարծելով, որ դա է իրենց գլխավոր պարտականությունը: Այդպես էր և մեր գյուղական դպրոցում: Մեր ուսուցիչն ինքը որևէ բան գիտեր արդյոք: Հավանաբար գիտեր. ես չեմ ուզում մեղադրել նրան տգիտության մեջ: Միայն թե դպրոցում եղածս ժամանակամիջոցում ո՛չ ինձ, ո՛չ իմ ընկերներին նա ոչ մի դաս չտվեց: Մասնագիտությամբ նա կոշկակար էր: Առավոտից երեկո փայտյա կոշիկներ էր պատրաստում և այնպիսի ջանասիրությամբ էր աշխատում, որ նրա շուրջը կույտ–կույտ թափված էին լինում հաճարենու և ընկուզենու տաշեղներ: Մենք զրուցում էինք միայն եղանակի և մեր տնային գործերի մասին: Ընթերցանության կամ թվաբանության մասին մի խոսք անգամ չէինք լսում: Նա պատվիրել էր, որ այդ առարկաները մեզ հետ պարապի իր աղջիկը, որը դերձակուհի էր: Աղջիկն էլ ճիշտ հոր նման վարվեց: Այն ժամանակ, երբ հայրը ջանասիրությամբ աշխատում էր ռանդայով, աղջիկը ոչ պակաս ջանասիրությամբ աշխատում էր ասեղով:

Մենք՝ աշակերտներս, տասներկու հոգի էինք: Մեզնից յուրաքանչյուրի համար վճարում էին 50 սանտիմ[4], որը մի ամսում կազմում էր վեց ֆրանկ: Երկու հոգու համար անհնարին էր ապրել այդ կոպեկներով: Այն, ինչ չէր կարող տալ դպրոցը, հայր ու աղջիկ ստիպված էին լրացնել՝ զգեստներ կա-

[4] Մանր դրամ, որ հավասար է ֆրանկի մեկ հարյուրերորդական մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

րելով և սաքո պատրաստելով: Զարմանալի չէ, որ ես դպրոցում ոչ մի բան չսովորեցի, նույնիսկ տառերը չգիտեի:

— Իսկ շա՛տ դժվար է կարդալ սովորելը,— երկար խորհրդածելուց հետո հարցրի Վիտալիսին:

— Ով չունի ընդունակություններ և սովորելու ցանկություն, նրա համար իհարկե դժվար է: Իսկ դու խելո՛ք տղա ես:

— Չգիտեմ, բայց կարծում եմ, որ եթե ինձ սովորեցնեք, ես հաճույքով կսովորեմ:

— Տեսնենք: Մեր տրամադրության տակ շատ ժամանակ կա:

«Շատ ժամանակ». իսկ ինչո՛ւ հենց հիմա չսկսենք: Ինձ թվում էր, որ բավական է բացել գիրքը, և արդեն կարելի է կարդալ, թե ինչ է գրված նրա մեջ:

Հետևյալ օրը ճանապարհին Վիտալիսը կոացավ և գետնից բարձրացրեց տախտակի փոշոտ մի կտոր:

— Ահա այն գիրքը, որով դու կարդալ ես սովորել,— հայտարարեց նա:

Այս տախտակը գի՞րք է: Ես նայեցի Վիտալիսին՝ մտածելով, որ նա կատակում է: Բայց Վիտալիսը հավանաբար խոսում էր ամենայն լրջությամբ, և ես ուշադրությամբ նայեցի նրա գտածին: Դա իսկապես տախտակ էր, հաճարենու սովորական, հարթ տախտակ՝ մարդու ձեռքի երկարությամբ և տասը մատնաչափ լայնությամբ: Դրա վրա ոչինչ չկար՝ ո՛չ գրություն, ո՛չ նկար:

— Դուք ծաղրո՞ւմ եք ինձ:

— Ամենևին, տղա՛ս: Ծաղրել մի մարդու, որը որևէ մի բան չգիտի, վատ է և անիմաստ: Սպասի՛ր՝ մինչև հասնենք այ՛ այն ծառերին: Այնտեղ մենք կնստենք հանգստանալու, և դու կտեսնես, թե ինչպես այս տախտակի կտորի օգնությամբ քեզ կարդալ կսովորեցնեմ:

Մենք շուտով հասանք մատնացույց արված տեղը և մեր պարկերը ցած դնելով՝ նստեցինք կանաչ խոտին, որի մեջ այս ու այնտեղ փթթել էին մարգարտածաղիկները: Հոգյակին բաց թողեցինք, նա ճարպկորեն բարձրացավ մի ծառ և սկսեց ճյուղերը ցնցել, կարծես ընկույզ էր թափ տալիս: Շները հանգիստ պառկեցին մեր կողքին:

Այդ ժամանակ Վիտալիսը հանեց դանակը և տախտակից կտրեց մի ոչ մեծ ու բարակ շերտ: Հետո այդ շերտը երկու կողմերից հղկեց ու այն բաժանեց փոքրիկ քառակուսիների: Ստացվեց տասներկու հատ հարթ ու հավասար կտորներ:

Ես մեծ ուշադրությամբ հետևում էի նրան, բայց խոստովանում եմ, որ չէի կարողանում հասկանալ, թե ինչպես պիտի այդ փայտի փոքրիկ կտորնե-

թվայնացրել է 1915.info կայքը

րից նա գիրք պատրաստի: Չնայած ես անուս էի, բայց և այնպես գիտեի, որ գիրքը բաղկացած է որոշ քանակի էջերից, որոնց վրա տպագրված են սև նշաններ: Իսկ ոմր են էջերը, ոմր են այդ սև նշանները:

— Այս փայտյա կտորների երկու երեսին էլ վաղը ես կփորագրեմ այբուբենի տառերը,— ասաց Վիտալիսը:— Այդպիսով՝ դու կսովորես զանազանել տառերը: Իսկ երբ անսխալ կերպով բոլորը կիմանաս, դու կկարողանաս բառեր կազմել: Եթե սովորես բառեր կազմել, դու կկարողանաս և գրքեր կարդալ:

Իմ գրպանները այժմ լի էին փայտի փոքրիկ կտորներով, և շուտով արդեն գիտեի այբուբենի բոլոր տառերը: Բայց կարդալ սովորելն այնքան էլ հեշտ բան չէր, և ես շատ անգամ ափսոսում էի, որ ցանկացել եմ սովորել:

Շատ ժամանակ անցավ, մինչև որ կարողացա գիրք կարդալ:

— Հիմա դու կարդալ գիտես,— ասաց Վիտալիսը:— Իսկ ուզոմ ես նոտաներ սովորել:

— Եթե ես նոտաներ իմանամ, կկարողանամ Ձեզ նման երգել:

Վիտալիսը երբեմն երգում էր: Նա չէր էլ ենթադրում, որ ես մեծագույն հաճույքով լսում եմ նրա երգը:

— Դու ուզոմ ես երգել ինձ նման:

— Իհարկե, ոչ Ձեզ պես. ես շատ լավ հասկանում եմ, որ դա անհնարին է: Բայց ես ցանկանում եմ երգել սովորել:

— Քեզ դոմր է գալիս իմ երգը:

— Անչափ: Սոխակը հրաշալի է երգում, բայց ինձ թվում է, որ Դուք ավելի լավ եք երգում: Ձեզ լսելիս ես կարող եմ լաց լինել, ծիծաղել, իսկ երբ որևէ տխուր կամ քնքուշ բան եք երգում, հիշում եմ իմ թանկագին մայրիկին և տեսնում եմ նրան մեր տնակում, չնայած երգի բառերը չեմ էլ հասկանում, որովհետև Դուք երգում եք իտալերեն:

Ես նայեցի նրան և տեսա, որ նրա աչքերը լի են արցունքով: Այդ ժամանակ հարցրի, թե արդյոք չվշտացրի նրան իմ խոսքերով:

— Ո՛չ, սիրելի՛ս,— հուզված պատասխանեց նա,— դու չես վշտացնում ինձ: Ընդհակառակը, հիշեցնում ես իմ պատանեկության մասին, անցած լավ օրերի մասին: Հանգի՛ստ մնա, ես քեզ կսովորեցնեմ երգել, և քանի որ դու բարի սիրտ ունես, դու էլ կստիպես մարդկանց լաց լինել և ուրախանալ... Ա՛յ, կտեսնես...

թվայնացրել է 1915.info կայքը

Նա հանկարծ կանգ առավ, և ես հասկացա, որ այլևս չի ցանկանում խոսել այդ մասին: Ինչո՞ւ: Այդ հարցին պատասխան չէի գտնում: Տարիներ հետո միայն իմացա, թե ինչն էր ստիպում նրան լռել:

Հետևյալ օրը Վիտալիսն ինձ համար նոտաներ պատրաստեց, այնպես, ինչպես այբբենարանն էր պատրաստել, այսինքն՝ նոտաներ փորագրեց փայտյա փոքրիկ քառակուսիների վրա: Ամեն մի քառակուսու վրա հինգ զուգահեռ գիծ անցկացնելով՝ նա մի կողմում փորագրեց սոլի բանալին, մյուսում՝ բասի:

Երբ ամեն բան պատրաստ էր, սկսվեցին դասերը, և պետք է խոստովանեմ, որ դրանք ավելի դժվար էին, քան գրագիտության դասերը: Հաճախ Վիտալիսը, որն այնքան համբերատար էր կենդանիների նկատմամբ, հուսահատվում էր իմ պատճառով:

— Կենդանիների հետ ես ինձ զսպում եմ, որովհետև գիտեմ, որ դրանք միայն կենդանիներ են, բայց դու կարող ես համբերությունից հանել ինձ:— Նա ձեռքերը երկինք էր մեկնում, հետո ուժեղ խփում ծնկներին:

Հոգյակը, որը սիրում էր կրկնել ամեն բան, ինչ նրան զվարճալի էր թվում, ընդօրինակեց այդ շարժումը, և քանի որ նա համարյա միշտ ներկա էր իմ դասերին, ապա բավական էր, որ ես սխալվեմ, և նա անմիջապես ձեռքերը մեկնում էր դեպի երկինք և Վիտալիսի օրինակով խփում ծնկներին:

— Նույնիսկ Հոգյակն է ծաղրում քեզ,— բացականչում էր Վիտալիսը:

Եթե համարձակվեի, կառարկեի նրան, որ Հոգյակը ծաղրում է ոչ միայն աշակերտին, այլև ուսուցչին: Բարեբախտաբար, ինչ–որ անբացատրելի երկյուղ և հարգանք, որ տածում էի դեպի ուսուցիչը, խանգարում էին նման դիտողություն անել:

Վերջապես առաջին դժվարությունները հաղթահարված էին, և ես կարողացա երգել սոլֆեջիոն, որը գրել էր Վիտալիսը մի թղթի կտորի վրա:

Այդ օրը նա ձեռքերը չխփեց ծնկներին, այլ քնքշորեն այտս շոյելով՝ հայտարարեց, որ եթե ես շարունակեմ այսպես աշխատել, ապա լավ երգիչ կդառնամ:

Հասկանալի է, որ մեր դասերը շարունակվում էին: Շաբաթներ, նույնիսկ ամիսներ շարունակ իմ գրպանները լի էին փոքրիկ, փայտյա քառակուսիներով:

Վիտալիսը կարողանում էր ինձ հետ պարապել միայն ազատ ժամերին: Շատ ժամանակ էր կորչում մի տեղից մյուսը հասնելու համար. եթե գյուղերը միմյանցից հեռու էին, ճանապարհը ավելի երկարատև էր լինում, և ընդհակառակը: Մենք պետք է ներկայացում տայինք այնտեղ, որտեղ հույս

թվայնացրել է 1915.info կայքը

ունեինք լավ փող վաստակել, շների և Հոգյակի հետ փորձել դերերը, ուտելիք պատրաստել մեզ համար, և միայն այդ բոլոր գործերից հետո կարելի էր մտածել ընթերցանության կամ երաժշտության մասին: Ամենից հաճախ մեր պարապմունքները տեղի էին ունենում դադարի ժամերին ծառի բնին կամ քարերի կույտին նստած: Սովորաբար ես իմ փայտի կտորները շարում էի ուղղակի խոտի վրա կամ ճանապարհին:

Եվ չնայած դրան՝ ես շատ բան սովորեցի: Բացի այդ՝ արդեն կարողանում էի երկար ճանապարհ գնալ, և դա ինձ համար պակաս օգտակար չէր, քան Վիտալիսի դասերը: Քանի դեռ ես ապրում էի Բարբերեն մայրիկի մոտ, ես բավական վտիտ երեխա էի: Բայց թափառական կյանքը և մշտական մաքուր օդում լինելը ամրացրին իմ ոտքերն ու ձեռքերը, թոքերս զարգացան, մաշկս կոշտացավ, և ես հեշտությամբ էի տանում ցուրտն ու շոգը, արևն ու անձրևը, զրկանքներն ու հոգնածությունը: Կոփման այդ դպրոցը օգնեց ինձ դիմանալու ճակատագրի դաժան հարվածներին, որոնք ողջ պատանեկության ընթացքում շատ անգամ էին բաժին հասնում ինձ:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 8

ԴԱՏԸ

Մի անգամ՝ երեկոյան, մենք հասանք մի քաղաք, որը գետի ափին էր: Տներն այդտեղ մեծ մասամբ տգեղ էին և կառուցված էին կարմիր աղյուսից, իսկ փողոցները սալահատակված էին փոքրիկ, սուր խճաքարով, որոնք այնքան էլ հաճելի չէին հոգնած ճամփորդների համար: Վիտալիսն ինձ ասաց, որ այս քաղաքը կոչվում է Տուլուզա, և որ մենք ապրելու ենք այստեղ երկար ժամանակով:

Սովորականի պես մենք նախ և առաջ մտածեցինք մեր ներկայացումների համար հարմար տեղ գտնելու մասին: Այդպիսի տեղեր շատ կային, նամանավանդ քաղաքի այն մասում, որտեղ բուսաբանական այգին էր: Այնտեղ կար բարձր ծառերով շրջապատված մի գեղեցիկ մարգագետին, և որի շուրջբոլորը պուրակներ էին: Այդպիսի մի պուրակում էլ մենք տեղավորվեցինք: Հենց առաջին իսկ ներկայացմանը շատ հանդիսատեսներ հավաքվեցին:

Դժբախտաբար, պահակակետում կանգնած ոստիկանը բացահայտ դժկամությամբ դիմավորեց մեզ: Թերևս նա չէր սիրում շներին կամ էլ դժգոհ էր, որ մենք խախտեցինք նրա թաղամասի կարգ ու կանոնը, բայց մեզ կարգադրեց անմիջապես հեռանալ այստեղից:

թվայնացրել է 1915.info կայքը

Իհարկե, շատ ավելի ողջամիտ կլիներ գլուխ չդնել ոստիկանի հետ և կատարել նրա ասածը: Բայց Վիտալիսը, չնայած իր համեստ դիրքին, շատ հպարտ էր: Բացի այդ՝ նա կարծում էր, որ իր արածն ապօրինի բան չէ, և դրա համար հրաժարվեց ոստիկանին ենթարկվելուց:

Երբ Վիտալիսը ցանկանում էր զսպել իր զայրույթը, նա մարդկանց դիմում էր չափազանցված հարգանքով:

— Կարո՞ղ է արդյոք իշխանության մեծարգո ներկայացուցիչը մատնանշել այն օրենքը, որն արգելում է մեզ նման ողորմելի խեղկատակներին հասարակական վայրում զբաղվել իրենց արհեստով,— հարցրեց Վիտալիսը՝ գլխարկը հանելով և խոր գլուխ տալով:

Ոստիկանը պատասխանեց, որ Վիտալիսը պարտավոր է ենթարկվել և ոչ թե փիլիսոփայել:

— Անկասկա՛ծ: Եվ ես խոստանում եմ անմիջապես ենթարկվել Ձեր կարգադրությանը, հենց որ Դուք նշեք, թե որ օրենքի համաձայն եք անում այդ կարգադրությունը:

Այդ օրը ոստիկանը շրջվեց ու հեռացավ, իսկ Վիտալիսը, գլխարկը ձեռքին, խոնարհաբար կռացած, հարգալից հայացքով ճանապարհ դրեց նրան:

Բայց հետևյալ օրը ոստիկանը կրկին մոտեցավ մեզ, ցատկեց պարանի վրայից և հենց ներկայացման կեսին հարձակվեց մեզ վրա:

— Բարեհաճե՛ք դնչկալներ հագցնել շներին,— կոպտությամբ գոռաց նա Վիտալիսի վրա:

— Դնչկալներ իմ շների՞ն:

— Այդ մասին կա ոստիկանության որոշումը, և Դուք պարտավոր եք այդ իմանալ:

Մենք հենց նոր էինք սկսել պիեսը, որ կոչվում էր «Հիվանդը լուծողական է խմում»: Որովհետև Տուլուզայում մենք առաջին անգամ էինք կատարում այդ պիեսը, ուստի հանդիսատեսները դիտում էին մեծ հետաքրքրությամբ:

Ոստիկանի միջամտության պատճառով լսվեցին դժգոհ բացականչություններ:

— Մի՛ ընդհատեք: Թողե՛ք ներկայացումն ավարտեն:

Վիտալիսը ձեռքի շարժումով խնդրեց բոլորին լռել:

Հանելով ֆետրե գլխարկը և այնքան խոր գլուխ տալով, որ գլխարկի փետուրները դիպան գետնին, նա մոտեցավ ոստիկանին:

— Լսողությունս չի՞ դավաճանում ինձ: Իշխանության հարգարժան ներկայացուցիչն իսկապե՞ս կարգադրեց դնչկալներ հագցնել իմ դերասաններին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո՛, դնչկալներ հագցրե՛ք շներին և, որքան կարելի է, շուտ:

— Դնչկալներ հագցնել Կապիին, Ջերբինոյին և Դոլչեին,— բացականչեց Վիտալիսը՝ ավելի շատ դիմելով հասարակությանը, քան ոստիկանին:— Բայց ի՞նչ է կարծում Ձերդ ողորմածությունը, ինչպե՞ս կարող է հանրահռչակ բժիշկ Կապին բուժել հիվանդին, եթե դնչկալ հագած լինի: Թո՛ւյլ տվեք, սինյո՛ր, Ձեր ուշադրությունը դարձնել այն բանին, որ հիվանդը դեղը ընդունում է բերանով: Բժիշկ Կապին երբեք իրեն թույլ չէր տա այսպիսի մի ընտիր հասարակության առջև դա կատարել այլ միջոցներով:

Այդ բառերը լսելով՝ մարդիկ բարձրաձայն ծիծաղեցին:

Պարզ էր, որ հանդիսատեսներն արդարացնում էին Վիտալիսի վարմունքը:

Ծիծաղում էին ոստիկանի վրա, հատկապես զվարճացնում էր Հոգյակը, որը ծամածռություններ էր անում «իշխանության ներկայացուցչի» թիկունքում, վերջինիս պես գլուխը հետ գցած՝ ձեռքերը խաչելով կամ բռունցք արած՝ կողքին դնելով: Նրա շարժուձևը և դեմքի արտահայտությունն իսկապես շատ ծիծաղաշարժ էին:

Վիտալիսի ճառից և հանդիսատեսների ծիծաղից բարկացած՝ ոստիկանը թափով հետ շրջվեց: Այդ ժամանակ նա տեսավ կապիկին, որը բացահայտ ծաղրում էր իրեն: Մի քանի վայրկյան մարդն ու կենդանին անթարթ նայում էին միմյանց՝ կարծես սպասելով, թե նրանցից ով առաջինը ցած կխոնարհի աչքերը: Ծիծաղի նոր պոռթկումը ընդհատեց այդ տեսարանը:

— Եթե վաղը շները դնչկալներով չլինեն,— գոռաց ոստիկանը՝ բռունցքով սպառնալով մեզ,— ես Ձեզ դատի կտամ:

— Մնաք բարո՛վ, սինյո՛ր, վաղը կհանդիպենք,— ասաց Վիտալիսը:

Ես կարծում էի, որ Վիտալիսը շների համար դնչկալներ կառնի, բայց նա այդ չարեց և երեկոյան ոչինչ չասաց իր և ոստիկանի ընդհարման մասին:

Այդ ժամանակ որոշեցի ինքս հիշեցնել նրան այդ մասին:

— Որպեսզի վաղը՝ ներկայացման ժամանակ, Կապին դեն չնետի դնչկալը, պետք է նրան նախօրոք վարժեցնել դրան:

— Միթե դու կարծում ես, որ ես Կապիին երկաթյա դնչկալ կհագցնեմ:

— Բայց ոստիկանը մեզ հանգիստ չի տա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի՛ անհանգստանա: Ես այնպես կանեմ, որ ուսիկանը չկարողանա մեզ ձեռք տալ, և միաժամանակ իմ սաները չտառապեն: Բացի այդ՝ թող հանդիսատեսները մի քիչ զվարճանան: Ուսիկանի շնորհիվ մենք լավ կվաստակենք: Նա ինքն էլ, այդ չիմանալով, նույնպես կմասնակցի ներկայացմանը և կխաղա կոմիկ դեր, որը ես նրա համար պատրաստել եմ: Դա բազմազանություն կմտցնի մեր ծրագրի մեջ: Դու վաղը ներկայացման վայրը կգնաս մենակ և քեզ հետ կտանես Հոգյակին: Պարանը կկապես և կնվագես մի քանի երգ, իսկ երբ հասարակությունը հավաքվի, և ուսիկանը գա, շների հետ կհայտնվեմ ես: Հենց այդ ժամանակ էլ կսկսվի զվարճալի տեսարանը:

Ես այդ մասին այլ կարծիք ունեի: Ես բոլորովին չէի ցանկանում գնալ առանց տիրոջս և մենակ նախապատրաստել մեր ներկայացումը: Բայց ծանոթ լինելով սինյոր Վիտալիսի բնավորությանը՝ հասկանում էի, որ առարկելն անօգուտ է: Նա ոչ մի դեպքում չի հրաժարվի այդ տեսարանը խաղալու մտադրությունից:

Հետևյալ առավոտ ես մենակ գնացի մեր ներկայացումների սովորական վայրը և արագ կապեցի պարանը: Դեռ հազիվ էի մի քանի տակտ նվագել, երբ բոլոր կողմերից եկան, հավաքվեցին հանդիսատեսները և խիտ շարքերով շրջապատեցին ներկայացման վայրը:

Վերջին ժամանակներս Վիտալիսը սովորեցնում էր ինձ տավիղ նվագել, և ես արդեն բավականին լավ կատարում էի մի քանի երգ: Ես երգում էի նեապոլյան մի երգ ու տավիղի վրա նվագակցում ինքս ինձ, և այդ երգը միշտ դուր էր գալիս ունկնդիրներին:

Ես ինձ արդեն իսկական դերասան էի զգում և հաճախ մեր խմբի հաջողությունը վերագրում էի իմ տաղանդին, բայց այսօր ես շատ լավ հասկանում էի, որ մարդիկ բոլորովին էլ իմ երգը լսելու համար չեն հավաքվել: Նախորդ օրը՝ ուսիկանի հետ ունեցած ընդհարմանը, ներկաները կրկին եկել էին և իրենց հետ բերել ընկերներին: Տուլուզայում այնքան էլ չեն սիրում ուսիկաններին, և բոլորին հետաքրքրում էր, թե ծեր իտալացին ինչպես պիտի գլուխ հանի երեկվա պատմությունից: Չնայած Վիտալիսն ասաց միայն՝ «վաղը կհանդիպենք, սինյո՛ր», բոլորն էլ շատ լավ հասկացան, որ առաջիկա ներկայացումը շատ հետաքրքրական է լինում, և կարելի է ծիծաղել մանրախնդիր ու չար ուսիկանի վրա: Հանդիսատեսներից շատերը, տեսնելով ինձ ու Հոգյակին, մասամբ հուսախաբվեցին և անդադար հարցնում էին. «Չի՞ գալու արդյոք ծեր իտալացին»:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նա շուտով կգա,— պատասխանում էի ես և շարունակում էի երգել:

Բայց առաջինը հայտնվեց ոչ թե տերս, այլ ոստիկանը: Հոգյակն իսկույն նկատեց նրան: Ոստիկանին նմանվելով՝ նա ձեռքը կողքին կանթեց և գլուխը հետ գցած՝ գոռոզ տեսքով ու ծիծաղելի կեցվածքով սկսեց անցուդարձ անել:

Հանդիսատեսները սկսեցին ծիծաղել և ծափահարել: Ոստիկանը շփոթվեց ու կատաղի հայացք նետեց ինձ վրա: Պարզ է, որ դա կրկնապատկեց ներկաների հրճվանքը:

Ես խիստ անհանգստացա: Ինչո՞վ կվերջանա այս ամենը: Ի՞նչ պատասխան տամ ոստիկանին, եթե նա դիմի ինձ:

Ոստիկանը հավանաբար սարսափելի բարկացած էր: Նա քայլում էր պարանի երկայնքով և այնպիսի շանթող հայացքով էր նայում ինձ, որ սկսեցի վախենալ, թե վախճանը վատ է լինելու: Հոգյակը, չհասկանալով մեր դրության լրջությունը, ծաղրում էր ոստիկանին: Նա նույնպես անցուդարձ էր անում պարանի երկայնքով, բայց ներսի կողմից, և այնպիսի սրամտությամբ էր ծաղրում ոստիկանին, որ հանդիսատեսներն անդադար ծիծաղում էին:

Չցանկանալով համբերությունից հանել ոստիկանին՝ մոտ կանչեցի Հոգյակին, բայց նա չենթարկվեց և հեռու փախավ, իսկ երբ ցանկացա նրան բռնել, դուրս պրծավ ձեռքիցս:

Չգիտեմ, թե դա ինչպես պատահեց, բայց ոստիկանը, հավանաբար կատաղությունից կուրացած, ենթադրեց, որ ես եմ դրդում կապիկին, և արագ ներս թռավ պարանի վրայից: Երկու ոստյունով նա հայտնվեց կողքիս և մի ապտակով ցած գլորեց ինձ:

Երբ ես ոտքի կանգնեցի, Վիտալիսը, որ կարծես գետնի տակից հայտնվեց, կանգնեց մեր միջև և բռնեց ոստիկանի ձեռքը:

— Ինչպե՞ս եք համարձակվում ծեծել երեխային,— բացականչեց նա:— Դա ստորությո՛ւն է:

Ոստիկանն ուզում էր ազատվել, բայց Վիտալիսն ամուր բռնել էր նրա ձեռքը:

Մի քանի վայրկյան նրանք անթարթ նայում էին միմյանց: Ոստիկանը կատաղությունից գլուխը կորցրել էր: Վիտալիսը հոյակապ էր. նա բարձրացրել էր իր ճերմակահեր գեղեցիկ գլուխը, նրա դեմքը վրդովմունք էր արտահայտում և շիկնել էր զայրույթից:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինձ թվում էր, հենց միայն նրա տեսքից ոստիկանը պետք է գետնի տակն անցներ, բայց ոչ մի նման բան տեղի չունեցավ. ուժեղ շարժումով նա ազատեց իր ձեռքը, բռնեց Վիտալիսի օձիքից և կոպտությամբ նրան հրեց:

Զայրացած Վիտալիսը շտկվեց և ցանկանալով ազատվել՝ ուժեղ հարվածեց ոստիկանի ձեռքին:

— Ինչ եք ուզում մեզնից,— հարցրեց Վիտալիսը:

— Ես պետք է Ձեզ ձերբակալեմ: Գնա՛նք ոստիկանատուն:

— Բայց մի՞թե դրա համար անհրաժեշտ էր ծեծել երեխային,— զայրացած ասաց Վիտալիսը:

— Լռե՛լ և հետևե՛լ ինձ:

Վիտալիսը զսպեց իրեն, նա ոչինչ չառարկեց և շրջվելով դեպի ինձ՝ ասաց.

— Գնա՛ պանդոկ և մնա՛ այնտեղ շների հետ: Ես քեզ կհաղորդեմ, թե հետո ինչ պետք է անես:

Նա չկարողացավ խոսքը շարունակել, որովհետև ոստիկանը կոպտությամբ քարշ տվեց նրան իր հետևից:

Ես, վշտացած և խիստ անհանգստացած, վերադարձա պանդոկ:

Արդեն վաղուց անցել էր այն ժամանակը, երբ ես վախենում էի Վիտալիսից: Ես անկեղծորեն կապվել էի նրան, և մեր մտերմությունը օրեցօր աճում էր: Մենք ոչ միայն առավոտից երեկո միասին էինք, այլև երբեմն չէինք բաժանվում նաև գիշերները, որովհետև հաճախ քնում էինք կողք կողքի՝ ծղոտի վրա: Հարազատ հայրն անգամ չէր կարող ավելի շատ հոգ տանել իր երեխայի մասին, քան նա իմ մասին: Վիտալիսը սովորեցրեց ինձ կարդալ, գրել, հաշվել, երգել: Ցուրտ օրերին նա տալիս էր ինձ իր վերմակը, շոգ ժամանակ օգնում էր տանելու իրերը, որոնցով բեռնված էի լինում: Սեղան նստելիս՝ ավելի ճիշտ կլինի ասել ուտելու ժամանակ, որովհետև մենք հազվադեպ էինք սեղան նստում, Վիտալիսը երբեք լավ պատառներն իր համար չէր պահում, այլ միշտ հավասար բաժանում էր և՛ լավը, և՛ վատը: Ճիշտ է, երբեմն նա քաշում էր ականջս կամ հասցնում էր ծոծրակիս, բայց ես դրա համար չէի նեղանում, որովհետև միշտ հիշում էի նրա հոգատարությունը, բարի խոսքերը և սրտառուչ ուշադրությունը: Մի խոսքով, նա սիրում էր ինձ, ես էլ սիրում էի նրան:

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Բաժանումը խիստ վշտացրեց ինձ: Ինչ պետք է անեմ առանց նրա: Ինչպե՞ս և ինչո՞վ պետք է ապրեմ:

Վիտալիսը սովորաբար փողն իր մոտ էր պահում և գնալիս ժամանակ չունեցավ դա ինձ տալու: Իմ գրպանում ընդամենը մի քանի մանր դրամ էր մնացել: Պարզ է, որ դրանով ես չէի կարող կերակրել բոլորին՝ Հոգյակին, շներին, ինձ:

Երկու օր անցկացրի սարսափելի տագնապի մեջ՝ չհամարձակվելով դուրս գալ պանդոկից: Վերջապես երրորդ օրը ինչ–որ մի մարդ ինձ նամակ բերեց Վիտալիսից:

Նա գրում էր, որ բանտում է և մոտ օրերս կկանգնի դատարանի առաջ իշխանությանը դիմադրություն ցույց տալու և ոստիկանին վիրավորելու մեղադրանքով: «Ես մեծ սխալ կատարեցի, որ չզսպեցի զայրույթս և դրա համար հավանաբար ստիպված կլինեմ թանկ վճարել: Դատավարության ժամանակ արի՛, դա քեզ համար լավ դաս կլինի»: Հետո նա խորհուրդներ էր տալիս, թե ինչպես պետք է պահեմ ինձ: Վերջում նա գրկում էր ինձ և խնդրում իր փոխարեն շոյել Կապիին, Հոգյակին, Դոլչեին և Զերբինոյին:

Ես իմացա, որ դատական նիստը սկսվում է առավոտյան ժամը տասին: Շաբաթ օրը՝ ժամը իննին, ես արդեն կանգնած էի դատարանի դռան մոտ և առաջինը մտա դահլիճ: Հետզհետե դահլիճը լցվեց, և ես տեսա մի քանի մարդու, որոնք ներկա էին եղել մեր և ոստիկանի ընդհարմանը:

Գաղափար անգամ չունեի, թե ինչ է դատարանը, բայց բնազդաբար անզուսպ զզվանք էի տածում դեպի այն: Չնայած դատվում էր Վիտալիսը և ոչ

թվայնացրել է 1915.info կայքը

թե ես, բայց ինձ թվում էր, որ ինձ նույնպես վտանգ է սպառնում: Ես թաքնվեցի վառարանի հետևում և պատին սեղմված՝ կծկվեցի:

Սկզբում դատում էին ինչ–որ կողմնակի մարդկանց՝ ոմանց գողության համար, մյուսներին՝ կռվի, ընդ որում՝ նրանցից ոչ մեկն իրեն հանցավոր չէր ճանաչում, բայց բոլորն էլ դատվեցին: Վերջապես մեղադրական աթոռին՝ երկու ոստիկանների միջև, նստեց Վիտալիսը:

Ինչ էր ասվում, ինչ էին հարցնում, և ինչ էր պատասխանում նա, չեմ հիշում: Ես չափազանց հուզված էի, որ կարողանայի լսել և հասկանալ: Ի դեպ, ես չէի էլ աշխատում լսել, այլ միայն նայում էի: Ես նայում էի տիրոջս, որը, իր ճերմակ երկար մազերը հետ գցած, կանգնած էր ամոթահար և ընկճված: Ես նայում էի դատավորին, որը հարցաքննում էր նրան:

— Այսպես ուրեմն,— ասում էր դատավորը,— Դուք խոստովանո՞ւմ եք, որ հարվածներ եք հասցրել ոստիկանին, որ Ձեզ բռնել էր:

— Ո՛չ հարվածներ, պարո՛ն նախագահ, այլ միայն մի հարված, որպեսզի ազատվեմ նրա ձեռքից: Մոտենալով այն վայրին, ուր պետք է տեղի ունենար մեր ներկայացումը, տեսա՝ ինչպես ոստիկանն ապտակեց իմ խմբի տղային:

— Բայց նա Ձեր երեխան չէ:

— Այո՛, իմը չէ, պարո՛ն նախագահ, բայց ես սիրում եմ նրան հարազատ որդուս պես: Երբ ես տեսա, որ ոստիկանը հարվածեց տղային, վրդովվեցի և բռնեցի նրա ձեռքը՝ վախենալով, որ երկրորդ անգամ կխփի երեխային:

— Բայց Դուք ինքներդ հարվածե՞լ եք ոստիկանին:

— Ոստիկանը բռնեց իմ օձիքից, և ես, բնազդաբար ցանկանալով ազատվել, խփեցի նրան:



թվայնացրել է 1915.info կայքը

— Ձեր հասակում չի կարելի ձեռքերին ազատություն տալ:

— Ճիշտ է, բայց, դժբախտաբար, միշտ չէ, որ վարվում ես այնպես, ինչպես պետք է:

— Լսենք ոստիկանին:

Ոստիկանը պատմեց պատահածի մասին՝ ավելի շատ շեշտելով ոչ թե իր ստացած հարվածը, այլ այն, որ իրեն ծաղրի են ենթարկել:

Նրա ցուցմունքների ժամանակ Վիտալիսն այս ու այն կողմ էր նայում: Ես հասկացա, որ նա ինձ է փնտրում: Այդ ժամանակ որոշեցի դուրս գալ իմ թաքստոցից և հետաքրքրասեր մարդկանց միջով անցա առաջին շարքը:

Վիտալիսն ինձ տեսավ, և նրա տխուր դեմքը պայծառացավ: Զգացի, որ նա ուրախ է ինձ տեսնելու համար, և աչքերս ակամայից լցվեցին արցունքներով:

— Դուք Ձեզ արդարացնելու համար այլևս ոչինչ չեք կարող ասել,— դիմեց նրան դատավորը:

— Ո՛չ, անձամբ ինձ համար ես ոչինչ չեմ խնդրում: Բայց հանուն երեխայի, ում ես քնքշորեն սիրում եմ, և որը հիմա մենակ է մնում, ես խնդրում եմ դատարանին ներողամիտ լինել և հնարավորինս քիչ ժամանակով բաժանել մեզ միմյանցից:

Ես վստահ էի, որ Վիտալիսին կազատեն: Բայց այդպես չեղավ:

Դատարանական մյուս պաշտոնյան խոսեց մի քանի րոպե: Հետո նախագահը խիստ ձայնով հայտարարեց, որ Վիտալիս կոչվող անձնավորությունը մեղադրվում է խոսքով և գործողությամբ ոստիկանին վիրավորելու համար ու դատապարտվում է երկու ամիս բանտարկության ու հարյուր ֆրանկ տուգանքի:

Երկու ամիս բանտարկությո́ւն:

Արցունքների միջից տեսա՝ ինչպես փակվեց դուռը Վիտալիսի և նրան տանող ոստիկանի հետևից:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 9

ԵՍ ՄՆՈՒՄ ԵՄ ՄԵՆԱԿ

Երբ ես, խորապես վշտացած, արցունքից կարմրած աչքերով, վերադարձա պանդոկ, շեմքում ինձ կանգնեցրեց պանդոկապանը:

— Դե՛հ, ի՞նչ եղավ տերդ:

— Դատապարտվեց:

— Որքա՞ն ժամանակով:

— Երկու ամսով:

— Իսկ որքա՞ն տուգանք նշանակեցին:

— Հարյուր ֆրանկ:

— Երկու ամի՜ս, հարյուր ֆրա՜նկ...— մի քանի անգամ կրկնեց նա: Ես ուզում էի գնալ, բայց նա նորից կանգնեցրեց ինձ:— Լա՛վ, իսկ դու հիմա ի՞նչ ես անելու:

— Չգիտեմ:

— Հուսով եմ, որ դու փող ունես քեզ և կենդանիներիդ կերակրելու համար:

— Ո՛չ:

— Ուրեմն դու հույս ես դրել, որ կարող ես ապրել ինձ մո՞տ:

— Ո՛չ, ես ոչ ոքի վրա հույս չեմ դրել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այդ հարցում դու իրավացի ես,— շարունակեց պանդոկապանը:— Քո տերն առանց այդ էլ բավականին պարտք է ինձ: Ես չեմ կարող երկու ամիս պահել քեզ՝ չիմանալով, թե նա կկարողանա՞ վճարել դրա համար: Դու ստիպված ես հեռանալ այստեղից:

— Հեռանա՞լ, բայց ո՞ւր:

— Դա ինձ չի վերաբերում: Ես ո՛չ քո հայրն եմ, ո՛չ էլ տերը:

Մի վայրկյան քարացա տեղումս, բայց հետո որոշեցի, որ նա իրավացի է. ինչո՞ւ պետք է նա հոգ տանի իմ մասին:

— Դե՛հ, վերցրո՛ւ շներիդ, կապիկիդ և գնա՛: Բայց տիրոջդ տոպրակը դու, իհարկե, ինձ կթողնես: Բանտից դուրս գալով՝ նա կգա տոպրակը տանելու, և մենք կմաքրենք մեր հաշիվները:

— Եթե Դուք հավատացած եք, որ տերս վերադառնալով կվճարի Ձեզ իր պարտքը, այդ դեպքում թո՛ւյլ տվեք ինձ մնալ մինչև նրա վերադարձը: Նա կվճարի Ձեզ մեր ապրուստի համար:

— Դու այդպե՞ս ես կարծում, աղավնյա՛կս: Բայց այլ բան է վճարել մի քանի օրվա համար, այլ է վճարել երկու ամսվա համար:

— Ես կաշխատեմ, որքան հնարավոր է, քիչ ուտել:

— Իսկ կենդանինե՞րը: Ո՛չ, հեռացի՛ր: Դու կարող ես գյուղերում ներկայացումներ տալով վաստակել ու ապրել:

— Բայց իմ տերը, բանտից դուրս գալով, ինչպե՞ս կգտնի ինձ:

— Լսի՛ր, դու ինձ ձանձրացրիր: Հեռացի՛ր այստեղից և հնարավորինս շուտ: Քեզ հինգ րոպե ժամանակ եմ տալիս պատրաստվելու համար: Եթե վերադառնամ և տեսնեմ, որ դու դեռ այստեղ ես, վատ կլինի:

Ես հիանալի կերպով զգում էի, որ պնդելն անօգուտ է:

Ախոռ մտնելով՝ արձակեցի շներին ու Հոգյակին, վերցրի տոպրակս և տավիղն ուսիս առնելով՝ դուրս եկա պանդոկից: Պանդոկապանը, որը կանգնած էր շեմքին, հետևում էր ինձ:

— Եթե քեզ նամակ լինի,— ձայն տվեց նա,— կպահեմ:

Ես շտապում էի հեռանալ քաղաքից, որովհետև իմ շները դնչկալներ չունեին: Ինչ պետք է ասեմ, եթե հանդիպեմ ոստիկանին: Եվ իսկապես, գրպանումս մի քանի խղճուկ կոպեկներ էին մնացել: Իսկ եթե հանկարծ նա ինձ էլ ձերբակալի՞: Վիտալիսը բանտում է, եթե ես էլ բանտ ընկնեմ, ի՞նչ կանեն շներն ու Հոգյակը: Հիմա ես էի խմբի տերը, ընտանիքի ավագը և գիտակցում էի ինձ վրա ընկած ողջ պատասխանատվությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

Շներն արագ–արագ վազում էին առջևից, բայց ժամանակ առ ժամանակ բարձրացնում էին գլուխները և խղճալի հայացքով նայում ինձ: Ես հասկանում էի, որ նրանք սոված են: Հոգյակը, որը նստած էր իմ տոպրակում, անդադար բռնում էր ականջս՝ ստիպելով շրջվել իր կողմը, և այդ ժամանակ սկսում էր ուժգնորեն տրորել փորը: Ես ինքս էլ սարսափելի սոված էի: Բայց մեզ մոտ եղած փողով մենք կարող էինք ուտել միայն մեկ անգամ, և ես կարծում էի, որ ավելի նպատակահարմար կլինի այդ անել ավելի ուշ:

Մոտ երկու ժամ էր արդեն, որ մենք քայլում էինք, իսկ ես դեռևս վախենում էի կանգ առնել: Շներն ավելի ու ավելի աղերսագին էին նայում ինձ, իսկ Հոգյակն ավելի հաճախ էր քաշում ականջս և ավելի ուժեղ տրորում փորը:

Վերջապես որոշեցի, որ բավականին հեռացել ենք Տուլուզայից և կարող ենք հիմա չվախենալ ոստիկանից:

Մտնելով առաջին պատահած խանութը՝ խնդրեցի մեկուկես ֆունտ հաց կշռել:

— Ա՛յ, սա լավ հաց է, ուղիղ երկու ֆունտ է,— ասաց հացավաճառ կինը:— Ձեր գազանանոցի համար սա շատ չէ: Պետք է կերակրել խեղճ գազաններին:

Իհարկե, մեզ համար դա շատ չէր, բայց եթե ես երկու ֆունտ առնեի, ապա իմ փողից ոչինչ չէր մնա վաղվա համար:

Արագորեն մտքումս հաշվելով՝ հացավաճառ կնոջը ասացի, որ մեկուկես ֆունտ հացը ինձ լիովին բավական է, և խնդրեցի ավելին չտալ:

— Լա՛վ, լա՛վ,— պատասխանեց նա:

Վեցֆունտանոց հիանալի հացից, որը մենք հաճույքով ամբողջը կուտեինք, նա կտրեց իմ պահանջածի չափով, դրեց կշեռքին և թեթևակի հրեց կշեռքի թաթը:

— Այստեղ երկու սանտիմ ավելի է,— նկատեց նա և դարակը գցեց իմ փողը:

Ես հաճախ եմ հանդիպել այնպիսի մարդկանց, որոնք մանր փողը չեն վերցնում՝ ասելով, որ դա իրենց պետք չէ: Բայց ինձ համար այդ երկու սանտիմը զգալի նշանակություն ուներ, և ես ոչ մի դեպքում դրանից չէի հրաժարվի:

Բայց ես չհամարձակվեցի հետ պահանջել այդ փողը և լուռ դուրս եկա խանութից: Շները, հացը տեսնելով, ուրախ–ուրախ ցատկոտեցին, իսկ Հոգյակը ծվծվում էր ու քաշում մազերս: Մենք հեռու չգնացինք: Ճանապարհին՝ առաջին իսկ պատահած ծառի մոտ, ես տավիղս դեմ արեցի ծառաբնին

թվայնացրել է 1915.info կայքը

և մեկնվեցի խոտի վրա: Շները նստեցին իմ դիմաց. Կապին՝ մեջտեղում, մի կողմում՝ Դոլչեն, մյուս կողմում՝ Ջերբինոն: Միայն Հոգյակը, որ բոլորից քիչ էր հոգնել, կանգնել էր կողքիս, որպեսզի թոցնի այն կտորը, որը որ իրեն ավելի դուր կգա:

Հացը բաժանելը հեշտ գործ չէր: Ես կտրատեցի հինգ գրեթե հավասար մասերի և փոքրիկ կտորներով սկսեցի տալ նրանց: Ամեն մեկը հերթով ստանում էր իր բաժինը: Հոգյակը, որին ավելի քիչ էր պետք, քան մեզ, շատ շուտ կշտացավ: Այդ ժամանակ ես նրա բաժնից վերցրի երեք կտոր և պահեցի տոպրակում՝ որոշելով, որ հետո կտամ շներին:

Կարճատև հանգստից հետո ճանապարհ ընկնելու ազդանշան տվեցի: Ինչ գնով էլ լիներ, մենք պետք է փող վաստակեինք հաջորդ օրը սոված չմնալու համար:

Մոտավորապես մի ժամից մենք հասանք մի գյուղակ, որն ինձ լիովին հարմար էր թվում իմ ծրագրերի իրագործման համար:

Ներկայացման համար հագցրի դերասաններիս, և մենք կազմ ու պատրաստ մտանք գյուղ: Դժբախտաբար, մեզ հետ չէր Վիտալիսն իր ֆլեյտայով: Սովորաբար նրա ազդեցիկ կերպարանքը գրավում էր բոլորի ուշադրությունը: Ես փոքր էի, վտիտ, և իմ դեմքն արտահայտում էր անհանգստություն և անվստահություն:

Գյուղ մտնելու ժամանակ ես նայում էի չորս կողմս՝ ցանկանալով տեսնել, թե մենք ինչ տպավորություն ենք գործում: Ավմո, մարդիկ նայում էին մեզ, բայց ոչ ոք չեկավ մեր հետևից:

Հասնելով ոչ մեծ մի հրապարակ, որի կենտրոնում՝ սոսիների հովանու տակ, շատրվան կար, վեցգոի տավիոս և վայս նվագեցի: Երանակն ուրախ

թվայնացրել է 1915.info կայքը

եղանակ էր, մատներս թեթևորեն սահում էին լարերի վրայով, բայց սիրտս տխուր էր ու դառնացած:

Ես կարգադրեցի Ջերբինոյին ու Դոլչեին, որ վալս պարեն: Նրանք հնազանդորեն սկսեցին պտտվել երաժշտության տակտով:

Մի քանի կին, իրենց տների շեմքին նստած, հյուսում էին և զրուցում միմյանց հետ, բայց նրանցից ոչ մեկը տեղից չշարժվեց և մեզ չմոտեցավ:

Ես շարունակում էի նվագել, Ջերբինոն և Դոլչեն շարունակում էին պարել:

Հանկարծ մի փոքրիկ երեխա, այնքան փոքր, որ հազիվ էր քայլում, հեռացավ իր տան շեմքից և ուղղվեց դեպի մեզ: Ես սկսեցի կամաց նվագել, որ չվախեցնեմ, այլ, ընդհակառակը, գրավեմ նրան:

Ձեռքերը մեկնած, օրորվելով՝ երեխան դանդաղ մոտենում էր: Մի քանի քայլ անելով՝ նա հայտնվեց մեր կողքին: Նրա մայրը գլուխը բարձրացրեց և վախեցավ՝ տեսնելով, որ երեխան իր կողքին չէ: Բայց դեպի նա վազելու փոխարեն, ինչպես ես հույս ունեի, մայրը կանչեց երեխային, և փոքրիկը սուսուփուս վերադարձավ:

Գուցե տեղի բնակիչները պարեր չե՞ն սիրում: Ես կարգադրեցի Ջերբինոյին և Դոլչեին պառկել և երգեցի իմ նեապոլյան երգը: Երևի երբեք այդպիսի ջանասիրությամբ չէի երգել:

Արդեն երկրորդ քառյակն էի երգում, երբ նկատեցի բաճկոն հագած ֆետրե գլխարկով մի մարդու, որն արագ քայլերով մոտենում էր մեզ:

Վերջապե՜ս: Ես սկսեցի ավելի ոգևորված երգել:

— Է՛,— գոռաց նա,— ի՞նչ ես անում այստեղ, սրիկա՛:

Այդ բառերից շշմած՝ լռեցի:

— Վերջապես պատասխանելո՞ւ ես ինձ,— որոտաց նա:

— Երգում եմ, պարո՛ն:

— Իսկ դու մեր շրջանի հրապարակում երգելու թույլտվություն ունե՞ս:

— Ո՛չ, պարո՛ն:

— Այդ դեպքում կորի՛ր այստեղից, քանի դեռ ես չեմ բռնել քեզ:

— Բայց, պարո՛ն…

— Խնդրեմ՝ ինձ գյուղական պահնորդ կոչես, և հետո էլ կորի՛ր այստեղից, զզվելի՛ մուրացկան:

Գյուղական պահնորդ. իմ տիրոջ փորձից արդեն գիտեի, որ չի կարելի հակաճառել ո՛չ ոստիկաններին, ո՛չ գյուղական պահնորդներին:

Ես իսկույն շրջվեցի և արագ–արագ գնացի այն ճանապարհով, որով եկել էի: Մուրացկա՛ն: Դա ճիշտ չէ. ես ողորմություն չեմ խնդրել: Իմ օրվա

թվայնացրել է 1915.info կայքը

հացը վաստակելու համար եմ ես երգել ու պարել: Միթե ես որևէ վատ բան եմ արել:

Հինգ րոպե հետո ես արդեն դուրս եկա այդ անհյուրընկալ, բայց լավ պաշտպանված գյուղից: Շները, գլուխները տխուր կախած, վազում էին իմ հետևից՝ հավանաբար հասկանալով, որ մենք անհաջողության ենք մատնվել:

— Հիմա ստիպված ենք գիշերել բաց երկնքի տակ և առանց ընթրիքի,— դիմեցի նրանց:

Ընթրիքի մասին խոսելիս ընդհանուր փնթփնթոց լսվեց:

Ես ցույց տվեցի նրանց ինձ մոտ մնացած փողը:

— Ահա, բոլորն ինչ մնացել է: Եթե մենք այսօր փողը ծախսենք, առավոտյան ոչինչ չենք ունենա ուտելու: Բայց քանի որ մենք այսօր արդեն կերել ենք, պետք է ողջամիտ լինենք ու մտածենք վաղվա մասին:

Եվ փողը կրկին գրպանս դրեցի:

Կապին ու Դոլչեն լուռ խոնարհեցին գլուխները, բայց Ջերբինոն, որն այնքան էլ հնազանդ չէր, շարունակում էր փնթփնթալ:

Այդպես վճռելով ուտելու հարցը՝ ես հիմա պետք է հոգ տանեի գիշերելու մասին: Բարեբախտաբար, եղանակը հիանալի էր, և բաց երկնքի տակ քնելը՝ նույնիսկ հաճելի: Պետք էր միայն գտնել այնպիսի մի տեղ, ուր կարելի լինի թաքնվել գայլերից, եթե նրանք լինում են այս վայրերում, ինչպես նաև գյուղական պահնորդներից: Վերջիններից ես ավելի էի վախենում, քան գայլերից:

Ճանապարհի վերջը չէր երևում: Մայր մտնող արևի վերջին շողերը անհայտացան, իսկ մենք դեռ գիշերելու տեղ չէինք գտնում:

Հիմա մենք անցնում էինք մեծ անտառով: Մերթ այստեղ, մերթ այնտեղ բացատներ կային: Այդ բացատների միջև վեր էին ցցվում գրանիտի զանգվածներ: Տխուր և աչքաթող արված տեղ էր դա, բայց ես մտածեցի, որ գրանիտի այդ զանգվածը կարող է օգտակար լինել և մեզ պաշտպանել գիշերային ցրտից: Ճանապարհից շեղվելով՝ ես սկսեցի առաջ գնալ քարերի միջով: Շուտով ես տեսա գրանիտի մի մեծ զանգված, որը կարծես քարանձավ լիներ: Քամին քշել բերել էր այստեղ եղևնու չոր փշատերևներ: Ավելի լավ բան մենք երազել անգամ չէինք կարող: Մենք ունեինք անկողին, որտեղ կարող էինք պառկել, կար առաստաղ, որը մեզ պաշտպանում էր: Պակասում էր միայն ընթրելու համար մի կտոր հաց: Բայց այդ մասին պետք էր մոռանալ:

թվայնացրել է 1915.info կայքը

Նախքան պառկելը ես կարգադրեցի Կապիին հսկել մեզ: Եվ հավատարիմ շունը մնաց դրսում՝ պահակություն անելու: Ես կարող էի շատ հանգիստ քնել. Կապին կնախազգուշացնի, եթե որևէ մեկը մոտենա մեզ:

Հոգյակին փաթաթեցի բաճկոնիս մեջ, ես էլ մեկնվեցի չոր փշատերևներով սարքած մահճիս: Ջերբինոն և Դոլչեն կծկվեցին ոտքերիս մոտ: Բայց քնել չէի կարողանում. անհանգստությունը հոգնածությունից ուժեղ էր:

Մեր ճամփորդության առաջին օրը բավականին անհաջող էր: Ինչպես կլինի վաղը: Ինձ մոտ մնացել էր ընդամենը երեք սու: Ինչպես կկերակրեմ կենդանիներին և ինձ, եթե չկարողանամ ներկայացումներ տալ: Որտեղից ձեռք բերեմ դնչկալներ և երգելու թույլտվություն: Միթե մենք ստիպված կլինենք մեռնել սովից մի որևէ տեղ՝ անտառում՝ թփի տակ:

Մտածելով այդ մասին՝ նայում էի աստղերին, որոնք շողշողում էին մութ երկնքում: Լիակատար լռություն էր տիրում. ո՛չ տերևների շրշյունն էր լսվում, ո՛չ թռչունների ձայնը, ո՛չ էլ ճանապարհով անցնող սայլերի ճռճռոցը: Որքա՜ն մենակ ու լքված էի ես: Աչքերս լցվեցին արցունքով, և ես դառնորեն լաց եղա: Սիրելի Բարբերե՜ն մայրիկ: Խե՜ղճ Վիտալիս:

Հանկարծ մազերիս վրա թեթև շունչ զգացի, խոնավ ու տաք լեզուն լիզեց դեմքս: Դա Կապին էր: Լսելով, որ ես լալիս եմ, նա եկել էր ինձ մխիթարելու: Ես ամուր համբուրեցի նրա փոքրիկ դունչը: Նա աղիողորմ կլանչեց, և ինձ թվաց, որ նա նույնպես լաց է լինում ինձ հետ:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 10

ԼՈՂԱՑՈՂ ՏՆԱԿԸ

Երբ արթնացա, արդեն ուշ էր: Թռչունները ճռվողում էին ճյուղերին: Ինչ–որ տեղ՝ հեռվում, ղողանջում էր եկեղեցու զանգը: Արևն արդեն բարձրացել էր: Նրա կիզիչ կենսատու շողերը ջերմացնում էին մարմինս ու հոգիս:

Արագ կարգի բերելով մեզ՝ մենք գնացինք այն ուղղությամբ, որտեղից լսվում էր զանգի ձայնը: Այնտեղ կար գյուղ, ուր կար, անկասկած, հացի խանութ: Երբ քաղցած ես քնում, սովը իրեն զգացնել է տալիս վաղ առավոտից: Ես որոշեցի ծախսել վերջին կոպեկները, իսկ հետո մի բան կմտածենք:

Կարիք չունեի հարցնելու, թե որտեղ է հացի խանութը: Իմ հոտառությունը համարյա նույնքան սուր էր դարձել, որքան շներինը, և ես հեռվից զգացի տաք հացի ախորժելի հոտը: Նախաճաշը կերանք վայրկենաբար, որովհետև յուրաքանչյուրիս մի փոքրիկ կտոր հասավ միայն: Մեր ունեցած փողով մենք չկարողացանք գնել նույնիսկ մի ֆունտ հաց:

Հիմա պետք է մտածեինք փող վաստակելու մասին: Ես սկսեցի գյուղում հարմար տեղ փնտրել ներկայացման համար՝ զննելով մարդկանց, աշխատելով կռահել, թե նրանք ինչպես կվերաբերվեն մեզ:

Ես չէի պատրաստվում իսկույն ևեթ ներկայացում կազմակերպելու. դեռ շատ վաղ էր: Ես ցանկանում էի հարմար հրապարակ գտնել և վերադառնալ

թվայնացրել է 1915.info կայքը

այստեղ կեսօրին: Ես լիովին կլանված էի այդ մտքով, երբ հանկարծ հետևում բարձր գոռոց լսեցի: Արագ հետ շրջվելով՝ տեսա, որ մի պառավ ընկել է Ջերբինոյի հետևից. օգտվելով առիթից, որ ես զբաղված եմ, Ջերբինոն մտել էր ինչ–որ տուն և մի կտոր միս փախցրել:

— Բռնեք գողին,— բղավում էր պառավը:— Բռնեք նրան, դրանց բոլորին բռնեք:

Հանցավոր զգալով իմ շան արարքի համար՝ սկսեցի վազել: Ինչ պետք է անեմ, եթե պառավը ինձնից պահանջի գողացված մսի փողը: Ես փող չունեմ, որ վճարեմ, և ինձ կարող են բանտարկել: Կապին և Դոլչեն հետ չէին մնում ինձնից, իսկ Հոգյակը, որը նստած էր իմ ուսին, ամուր ճանկել էր վիզս, որ չընկնի: Մեզ հավանաբար չէին հասնի, բայց կարող էին բռնել դիմացից եկող մարդիկ: Բարեբախտաբար, մեր ճանապարհին հանդիպեց խաչաձև մի փողոց: Ես նետվեցի այնտեղ, և մենք ամբողջ ուժով առաջ սլացանք, մինչև որ հայտնվեցինք բաց դաշտում: Ես կանգ առա միայն այն ժամանակ, երբ արդեն չէի կարողանում շնչել: Մենք վազել էինք համարյա երկու կիլոմետր: Ես հետ նայեցի. ոչ ոք չկար: Կապին ու Դոլչեն վազում էին իմ հետևից, իսկ Ջերբինոն հետ էր ընկել՝ հավանաբար գողացած միսն ուտելու համար:

Ես կանչեցի նրան: Բայց նա, շատ լավ գիտակցելով իր մեղքը, հեռու փախավ ինձնից: Ես պետք է խստորեն պատժեի Ջերբինոյին, հակառակ դեպքում մյուս շներն էլ կարող էին հետևել նրա օրինակին: Բայց ինչպե՞ս ստիպեմ, որ նա վերադառնա: Ստիպված եղա դիմել Կապիի օգնությանը:

— Ինձ մո՛տ բեր Ջերբինոյին,— կարգադրեցի նրան:

Կապին սուսուփուս գնաց՝ իմ կարգադրությունը կատարելու:

Շներին սպասելով՝ որոշեցի հանգստանալ և ուշքի գալ: Բացի այդ՝ այն տեղում, ուր կանգ էի առել, շատ հարմար էր հանգստանալու համար:

Բոլորովին աննպաստելի կերպով հայտնվեցինք Հարավային ջրանցքի ափին: Ջուրը, կանաչ ծառերը, թարմ խոտը, փարթամ բուսականությամբ ծածկված ժայռի ճեղքվածքից բխող գետակը. ամեն բան շոյում էր մարդու աչքը, և շատ հաճելի էր սպասել այստեղ շների վերադարձին:

Բայց անցավ մի ժամ, իսկ շները չէին հայտնվում: Ես արդեն սկսեցի անհանգստանալ: Վերջապես վազեվազ եկավ Կապին՝ մենակ, գլխահակ:

— Իսկ ո՞ւր է Ջերբինոն:

Կապին մեղավոր տեսքով պառկեց ոտքերիս մոտ, և այդ ժամանակ նկատեցի, որ նրա մի ականջը արնոտված է: Ուրեմն Ջերբինոն չի ենթարկվել: Ստիպված էի սպասել, մինչև որ նա հոժարակամ վերադառնա՝ մեղա գալու:

թվայնացրել է 1915.info կայքը

Պառկեցի ծառի տակ և կապեցի Հոգյակին՝ վախենալով, որ նրա խելքին էլ կփչի Ջերբինոյին հետևել: Կապին և Դոլչեն պառկեցին իմ կողքին:

Ժամանակն անցնում էր: Ջերբինոն չէր հայտնվում, և ես աննկատելիորեն քնեցի:

Երբ արթնացա, արևն արդեն բարձրացել էր իմ գլխավերևում: Բայց առանց արևին նայելու ես գիտեի, որ արդեն ուշ է, և շատ ժամանակ է անցել այն րոպեից, երբ ես կերա վերջին կտոր հացը: Երևում էր, որ շները և Հոգյակը նույնպես շատ սոված են: Կապին և Դոլչեն նստել էին ընկճված տեսքով: Հոգյակը ծամածռություններ էր անում: Իսկ Ջերբինոն այդպես էլ չէր հայտնվում:

Ես նրան կանչում էի, սուլում, բայց նա չէր գալիս: Լավ նախաճաշելով նա երևի հանգիստ քնած էր որևէ մի տեղ՝ թփի տակ:

Իմ դրությունն անելանելի էր դառնում: Եթե ես գնամ, Ջերբինոն կարող է կորչել և մեզ չգտնել. եթե մնամ ու սպասեմ, չեմ կարողանա ոչ մի բան վաստակել մեր ուտելիքի համար: Իսկ սովը ավելի ու ավելի էր նեղում: Շները հուսահատությամբ աչքները չէին կտրում ինձնից, Հոգյակը տրորում էր փորը և դժգոհությամբ փնթփնթում:

Գուցե կենդանիներն իրենց լավ զգան, եթե որևէ ուրախ բան նվագեմ: Համենայն դեպս, եթե ես նվագեմ, իսկ շներն ու Հոգյակը պարեն, ապա ժամանակն ավելի արագ կանցնի:

Ես վերցրի տավիղը և մեջքով դեպի ջրանցքը կանգնած՝ վալս նվագեցի: Սկզբում, հավանաբար, իմ դերասանները բոլորովին տրամադրված չէին պարելու, մի կտոր հացը նրանց համար ավելի ցանկալի կլիներ, բայց կամաց-կամաց նրանք աշխուժացան, երաժշտությունն իր բարերար ազդեցությունը գործեց, նրանք մոռացան սովը: Ես նվագում էի, իսկ շները պարում էին:

— Բրա՛վո,— հանկարծ լսվեց մանկական զրնգուն մի ձայն:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես արագ հետ նայեցի և տեսա ոչ մեծ մի լաստանավ, որը քաշում էին հակառակ ափում գտնվող երկու ձի: Այդպիսի տարօրինակ լաստանավ ես երբեք չէի տեսել: Դա շատ ավելի փոքր էր այն նավերից, որոնք սովորաբար լողում են ջրանցքներով: Լաստանավի տախտակամածում տաղավար կար՝ փաթաթվող բույսերով վարագուրված: Այդ տաղավարում կանգնած էր երիտասարդ մի կին՝ գեղեցիկ, բայց տխուր դեմքով, իսկ նրա կողքին պառկած էր իմ տարիքի մի տղա: Հավանաբար այդ նա էր «բրավո» բղավողը:

Երբ զարմանքս անցավ, և ես որոշեցի, որ այստեղ կարծես թե ինձ վտանգ չի սպառնում, գլխարկս բարձրացրի, որպեսզի շնորհակալություն հայտնեմ ծափահարողներին:

— Դուք սեփական հաճույքի համա՞ր եք նվագում,— հարցրեց ինձ երիտասարդ կինը, որը խոսում էր օտարերկրացու առոգանությամբ:

— Իմ դերասաններն ամեն օր պետք է վարժություն անեն, և բացի այդ՝ ես ցանկանում էի մի քիչ զվարճանալ:

Տղան նշան արեց, և կինը խոնարհվեց նրա կողմը:

— Դուք էլի որևէ բան չե՞ք նվագի,— գլուխը բարձրացնելով՝ հարցրեց նա ինձ:

Մի՞թե ես կարող էի հրաժարվել նվագելուց այդպես ժամանակին հայտնված հանդիսատեսների համար:

— Ինչ կցանկանաք. պա՞ր, թե՞ կատակերգություն:

— Իհարկե կատակերգություն,— բացականչեց տղան:

Բայց կինն ընդհատեց նրան՝ ասելով, որ գերադասում է պարը:

— Պարը շատ կարճ կտևի,— առարկեց տղան:

— Պարից հետո, եթե հարգարժան հանդիսատեսները ցանկանան, մենք կարող ենք ցույց տալ զանազան աճպարարություններ, որոնք կատարվում են Փարիզի լավագույն կրկեսներում:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդպես էր ասում Վիտալիսը, և ես աշխատում էի այդ բառերը կրկնել ոչ պակաս արժանապատվությամբ, քան նա:

Ինչ լավ է, որ նրանք հրաժարվեցին կատակերգությունից: Ինձ համար շատ դժվար կլիներ ներկայացումն անցկացնել առանց Ջերբինոյի, բացի այդ ես չունեի անհրաժեշտ իրեր ու զգեստներ:

Ես կրկին վերցրի տավիղս ու վալս նվագեցի: Կապին իսկույն թաթիկնեռով գրկեց Դոլչեին, և նրանք սկսեցին պտտվել: Հետո Հոգյակը պարեց մենակ: Դրանից հետո մենք ցույց տվեցինք մեր բոլոր հնարքները և բոլորովին մոռացանք հոգնածության մասին: Իմ դերասանները հավանաբար հասկացան, որ իրենց ջանքերի համար ուտելիք կստանան և չէին խնայում իրենց ուժերը, այնպես, ինչպես ես չէի խնայում ինձ:

Համարներից մեկի ժամանակ թփի տակից աննպաստելիորեն դուրս եկավ Ջերբինոն: Երբ ընկերները հավասարվեցին նրան, նա, կարծես ոչինչ պատահած չլիներ, գրավեց իր տեղը և սկսեց կատարել իր դերը:

Տավիղի վրա նվագելով և հետևելով իմ դերասաններին՝ ես միևնույն ժամանակ նայում էի տղային: Ինձ զարմացնում էր, որ նա բոլորովին չի շարժվում, չնայած նրան հավանաբար շատ էր դուր գալիս մեր ներկայացումը: Նա պառկած էր ձգված, անշարժ՝ բարձրացնելով միայն ձեռքերը, որ մեզ ծափահարի: Թվում էր, թե նա կապված էր այդ տախտակին, որի վրա պառկած էր:

Քամին աննկատելիորեն մոտեցրեց լաստանավը մեր ափին, և այժմ ես կարող էի լավ զննել նրան:

Տղան շեկ մազեր ուներ և այնպիսի գունատ դեմք, որ ճակատի բարակ մաշկի տակից թափանցում էին կապույտ երակները: Նրա դեմքի արտահայտությունը հիվանդագին էր, հեզ ու տխուր:

— Որքա՞ն պետք է վճարենք ներկայացման համար,— հարցրեց ինձ երիտասարդ կինը:

— Դա կախված է նրանից, թե որքան դուր եկավ Ձեզ մեր ներկայացումը:

— Այդ դեպքում, մայրի՛կ, պետք է շատ թանկ վճարել,— հայտարարեց տղան:

Հետո նա մի քանի բառ ավելացրեց ինձ համար անհասկանալի լեզվով:

— Արթուրը ցանկանում էր մոտիկից տեսնել Ձեր դերասաններին,— դիմեց ինձ երիտասարդ կինը:

Ես նշան արի Կապիին, և նա թռավ տախտակամած:

— Իսկ մյուսնե՞րը,— ձայն տվեց Արթուրը:

Ջերբինոն և Դոլչեն հետևեցին իրենց ընկերոջը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ կապի՞կը:

Բայց ես չհամարձակվեցի Հոգյակին տախտակամած թողնել: Ես նրան չէի վստահում: Վախենում էի, որ տախտակամածում հայտնվելով՝ Հոգյակն այնպիսի խաղեր անի, որոնք դուր չգան երիտասարդ կնոջը:

— Մի՞թե Ձեր կապիկը չար է,— հարցրեց կինը:

— Ո՛չ, բայց Հոգյակը շատ չարաճճի է, և ես վախենում եմ, որ նա իրեն լավ չի պահի:

— Որ այդպես է, Դուք էլ նրա հետ եկեք:

Այդ ասելով՝ կինը նշան արեց ղեկի մոտ կանգնած մարդուն, և վերջինս, նավակի ծայրը գալով, ափ գցեց կամրջակը: Հիմա ես կարող էի, տավիղը ուսիս գցած և Հոգյակը ձեռքիս, հանգիստ բարձրանալ տախտակամած:

— Կապի՛կը, կապի՛կը,— գոչեց Արթուրը:

Ես մոտեցա տղային, և մինչդեռ նա շոյում ու փաղաքշում էր Հոգյակին, ես ուշադրությամբ զննում էի նրան:

Զարմանալի բան: Նա իսկապես, որ կապված էր տախտակին:

— Դու հայր ունե՞ս, զավա՛կս,— հարցրեց ինձ երիտասարդ կինը:

— Այո՛, բայց ներկայումս մենակ եմ մնացել:

— Երկա՞ր ժամանակով:

— Երկու ամսով:

— Խեղճ տղա, իսկ դու ինչպե՞ս պետք է մենակ ապրես երկու ամիս:

Ես պատմեցի նրան, թե ինչպես Վիտալիսին բանտ նստեցրին ինձ պաշտպանելու համար, և ինչպես այդ օրվանից ես ոչ մի սու[5] չեմ վաստակել:

Իմ պատմելու ընթացքում Արթուրը խաղում էր շների հետ, բայց նա ամեն բան լսեց:

— Դուք երևի շատ սոված եք,— բացականչեց նա:

Նրա բառերը լսելով՝ շները սկսեցին հաչել, իսկ Հոգյակը տենդագին տրորեց փորը:

— Մայրի՛կ...— ասաց Արթուրը:

Մայրը հասկացավ նրա խնդիրքը. նա մի քանի նախադասություն ասաց ինձ համար անծանոթ լեզվով, և կինը, որը կիսաբաց դռնից նայում էր մեզ, իսկույն բերեց փոքրիկ սեղանը ուտելիքներով հանդերձ:

— Նստի՛ր, զավա՛կս,— դիմեց ինձ երիտասարդ կինը:

Ես չստիպեցի երկրորդ անգամ կրկնելու հրավերը, տավիղս ցած գցեցի և արագ նստեցի սեղանի մոտ, շները տեղավորվեցին իմ շուրջը, իսկ Հոգյակը բարձրացավ ծնկներիս:

---

5 Մանր դրամ Ֆրանսիայում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Քո շները հաց ուտո՞ւմ են,— հարցրեց ինձ Արթուրը:

Հաց ուտո՞ւմ են: Ես նրանց մեկական կտոր հաց տվեցի, որոնք ագահաբար կուլ տվեցին նրանք:

— Իսկ կապի՞կը:

Բայց Հոգյակն արդեն հոգացել էր իր մասին: Այն ժամանակ, երբ ես կերակրում էի շներին, նա ճանկեց մի կտոր կարկանդակ, որն արդեն ագահորեն խժռում էր սեղանի տակ: Ես նույնպես մի կտոր հաց վերցրի, և եթե չէի խժռում, ինչպես Հոգյակը, ապա նրանից պակաս ագահությամբ չէի ուտում:

Արթուրը, աչքերը լայն բացած, նայում էր մեզ՝ մեր ախորժակով զարմացած:

— Իսկ դուք այսօր որտե՞ղ կճաշեիք, եթե չհանդիպեիք մեզ,— հարցրեց Արթուրը:

— Հավանաբար մենք ամենևին էլ չէինք ճաշի:

— Իսկ վա՞ղը որտեղ պետք է ճաշեք:

— Հնարավոր է, որ վաղը մեզ կհաջողվի որևէ բան վաստակել:

Արթուրը դադարեց հարցեր տալուց և շրջվեց դեպի մայրը:

Նրանք երկար ժամանակ խոսում էին իրար հետ նույն, ինձ համար անհասկանալի լեզվով:

Թվում էր, թե նա ինչ–որ բան էր խնդրում մորը, որի հետ մայրը չէր համաձայնվում, կամ որի դեմ ինչ–որ առարկություններ ուներ: Հանկարծ Արթուրը կրկին դեպի ինձ շրջեց դեմքը:

— Ուզո՞ւմ ես մեզ մոտ մնալ,— հարցրեց նա:

Ես լուռ նայում էի նրան: Այդպիսի հարցի ես չէի սպասում:

— Իմ տղան հարցնում է՝ ցանկանո՞ւմ ես դու մնալ այստեղ:

— Լաստանավո՞ւմ:

— Այո՛: Արթուրը հիվանդ է, բժիշկները պատվիրել են նրան անշարժ պառկել տախտակին: Որպեսզի նա չտխրի, ահա այսպես ճամփորդում ենք: Մնա՛ մեզ մոտ, շներն ու կապիկը ներկայացումներ կտան, իսկ դու մեզ համար տավիղ կնվագես: Քո հասակի տղայի համար այնքան էլ հեշտ չէ փող աշխատելը:

Ես իսկույն հասկացա, թե ինչպիսի փրկություն էր ինձ համար այդ անսպասելի հրավերը, և երիտասարդ կնոջ ձեռքը բռնելով՝ շնորհակալությամբ համբուրեցի: Նա հավանաբար զգացվեց դրանից և քնքշորեն շոյեց գլուխս:

— Խե՛ղճ տղա,— շշնջաց նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Քանի որ ինձ խնդրել էին տավիղ նվագել, ապա ինձ թվում էր, որ պետք էր անմիջապես կատարեի նրանց ցանկությունը: Ես վերցրի գործիքս, նստեցի լաստանավի ծայրին ու սկսեցի նվագել:

Այդ ժամանակ երիտասարդ կինը շուրթերին դրեց արծաթյա փոքրիկ մի սուլիչ: Լսվեց ուժեղ սուլոց: Ես իսկույն դադարեցրի նվագս՝ չհասկանալով, թե բանն ինչումն է:

Արթուրը, որը նկատում էր ամեն բան, ինչ կատարվում էր շուրջը, հասկացավ իմ անհանգստության պատճառը:

— Մայրիկը սուլում է, որպեսզի նավավարին նշան անի,— բացատրեց նա ինձ:

Եվ իսկապես, լաստանավը հեռացավ ափից և կամացուկ առաջ շարժվեց ջրանցքով, ջուրը զարնվում էր նավախելին, իսկ գետի երկու ափերին ձգվող ծառերը, մայր մտնող արևի շեղակի ճառագայթներով լուսավորված, արագությամբ անցնում էին մեր կողքով:

— Էլի որևէ բան նվագի՛ր,— խնդրեց Արթուրը:

Գլխի շարժումով նա մոտ կանչեց մորը, և մինչ ես զանազան եղանակներ էի նվագում, որոնք սովորեցրել էր ինձ Վիտալիսը, նա բռնել էր մոր ձեռքը ու բաց չէր թողնում:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 11

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԿԵՐԸ

Տիկին Միլլիգանը՝ Արթուրի մայրը, անգլուհի էր: Սկզբում կարծում էի, որ Արթուրը նրա միակ տղան է, բայց հետո իմացա, որ նա մի տղա էլ է ունեցել՝ Արթուրի ավագը, որը մի քանի տարի առաջ ինչ–որ խորհրդավոր հանգամանքներով կորել էր:

Այն ժամանակ տիկին Միլլիգանի ամուսինը մերձիմահ հիվանդ էր, իսկ ինքը՝ տիկինը, նույնպես պառկած էր ծանր հիվանդությամբ ուշակորույս վիճակում: Այդ պատճառով երեխայի որոնումները հանձն առավ ամուսնու եղբայրը՝ Ջեյմս Միլլիգանը: Այդ ընտրությունն անհաջող էր, որովհետև Ջեյմս Միլլիգանը ամենևին շահագրգռված չէր, որ կորած երեխան գտնվի: Անգլիական օրենքների համաձայն՝ Ջեյմս Միլլիգանը ժառանգում էր իր եղբոր տիտղոսն ու կարողությունը այն դեպքում, եթե եղբայրը մեռներ առանց զավակ թողնելու: Բայց Ջեյմս Միլլիգանին չհաջողվեց ստանալ սպասված ժառանգությունը, որովհետև շուտով տիկին Միլլիգանը ունեցավ մի տղա ևս՝ Արթուրին: Ճիշտ է, այդ երեխան այնքան թույլ էր, որ բժիշկները նրան երկար կյանք չէին խոստանում: Ամեն մի դրպե նա կարող էր մեռնել, և այն ժամանակ Ջեյմս Միլլիգանը կդառնար իր ավագ եղբոր կարողության ժա-

թվայնացրել է 1915.info կայքը

ռանգորդը: Ջեյմս Միլլիգանը հավատացած էր՝ վաղ թե ուշ իր հույսերը կիրականանան, պետք է միայն համբերությամբ սպասել: Եվ նա սպասում էր:

Բայց բժիշկների գուշակությունները չարդարացան, մոր հոգատարությունն ու խնամքը փրկեցին Արթուրի կյանքը: Չնայած տղան միշտ հիվանդանում էր, և բժիշկները բազմիցս մահվան էին դատապարտել նրան, բայց ամեն անգամ նա փրկվում էր:

Վերջին ժամանակներս Արթուրը հիվանդացավ մի նոր ու ծանր հիվանդությամբ՝ ազդրի ոսկրախտով: Բժիշկները պատվիրել էին նրան պառկել անշարժ: Այդ ժամանակ տիկին Միլլիգանը Բորդոյում գնեց մի փոքրիկ լաստանավ և այն դարձրեց լողացող տնակ: Շնորհիվ դրա՝ Արթուրը կարող էր միշտ լինել մաքուր օդում, և միայն վատ եղանակին էին նրան տանում սենյակ:

Մի ամիս առաջ մայր ու տղա դուրս էին եկել Բորդոյից և Հարոննայով դեպի վեր նավարկելով՝ ընկել էին Հարավային ջրանցքը: Այստեղից, լճերի ու ջրանցքների մի ամբողջ շարք անցնելով, նրանք կարող էին դուրս գալ Սենա, հասնել Ռուան և այնտեղ շոգենավ նստելով՝ վերադառնալ Անգլիա:

Լաստանավում լինելու առաջին օրը (լաստանավը կոչվում էր «Կարապ») ես ծանոթացա միայն այն նավախցիկին, որտեղ ինձ տեղավորել էին: Այդ փոքրիկ սենյակը երկու մետր երկարություն ուներ և մոտ մեկ մետր լայնություն, բայց այնտեղ կար ամեն բան, ինչ անհրաժեշտ էր: Նավասենյակի ողջ կահավորանքը միայն մի կամոդ էր, բայց այդ ինչ հիանալի կամոդ էր: Վերջին տախտակը բարձրանում էր թե չէ, հայտնվում էր անկողինը՝ ներքնակով, վերմակով ու բարձով: Իհարկե, այդ անկողինը այնքան էլ ընդարձակ չէր, բայց միանգամայն հարմար էր քնելու համար: Անկողնու տակ մի արկղ կար, որը բաժանված էր մասերի, ուր կարելի էր դնել սպիտակեղենն ու հագուստը: Անկողնու գլխավերևում ամրացված էր մի շարժական տախտակ, որը ծառայում էր որպես սեղան: Ոտքերի մոտ կար երկրորդ շարժական տախտակը՝ նստելու համար: Փոքրիկ, կլոր լուսամուտից բավականաչափ լույս և օդ էր թափանցում:

Երբ հանվեցի և մտա անկողին, մեռածի պես իսկույն քնեցի: Այս անկողինը որքա՜ն փափուկ էր այն փշատերևներից, որոնց վրա քնել էի նախորդ գիշերը: Գիշերային լռությունն արդեն չէր վախեցնում, իսկ լուսամուտից ներս նայող աստղերն ինձ աշխուժություն և հույս էին ներշնչում:

Որքան էլ քաղցր լիներ իմ քունը այս նոր բնակավայրում, բայց և այնպես ես արթնացա լուսաբացին, որովհետև անհանգստանում էի սաներիս

թվայնացրել է 1915.info կայքը

համար: Ես նրանց գտա տախտակամածում, որտեղ նախորդ երեկոյան տեղավորել էի նրանց: Նրանք այնքան խաղաղ էին քնել, կարծես վաղուց ապրելիս լինեին այստեղ: Երբ ես մոտեցա, շներն արթնացան և ընդառաջ նետվեցին: Միայն Հոգյակը չշարժվեց տեղից, չնայած մի աչքը կիսաբաց էր, այլ, ընդհակառակը, սկսեց բարձրաձայն խռմփացնել: Ես իսկույն հասկացա, թե պատճառն ինչն է: Սինյոր Հոգյակը նեղացել էր ինձնից, որ նրան չեմ տարել իմ նավախցիկը:

Նավավարը, որին ես տեսել էի նախորդ օրը, արդեն վեր էր կացել և մաքրում էր տախտակամածը: Իմ խնդրանքով նա կամրջակներն իջեցրեց, և ես կարող էի խմբիս հետ ափ իջնել:

Շների ու Հոգյակի հետ խաղալով ու վազվզելով, թռչելով առվակների վրայից և բարձրանալով ծառերը՝ ժամանակն աննկատելի անցավ: Երբ մենք վերադարձանք նավը, ձիերն արդեն լծված էին և սպասում էին միայն ազդանշանի, որ ճանապարհ ընկնեն:

Ես շտապեցի բարձրանալ տախտակամած: Մի քանի րոպե անց խարիսխը բարձրացվեց, նավաստին կանգնեց ղեկի մոտ, ձիերին քշողը հեծավ ձին, նավը կապող պարանի ճախարակը ճռռաց, և մենք շարժվեցինք:

Ինչպիսի՛ հաճույք է գետով նավարկելը: Մեր լաստանավը թեթևորեն սահում էր ջրի վրայով: Անտառապատ ափերը դանդաղորեն անցնում էին մեր մոտով, և ոչ մի ձայն չէր լսվում՝ բացի ջրի ճողփյունից և ձիերի վզներին կապված զանգակների ղողանջից:

Տախտակամածին կանգնած՝ ես նայում էի բարձր բարդիներին և առավոտյան խաղաղ օդում սարսռացող տերևներին: Բարդիները շարան–շարան ձգվում էին ափի երկայնքով, կարծես թանձր, կանաչ վարագույր էին կազմել, որը ներս չէր թողնում արևի վառ ճառագայթները, այլ միայն տերևների միջից դուրս էր ցայտում մեղմ ու քնքուշ լույսը: Որոշ տեղերում ջուրը թվում էր բոլորովին սև, կարծես նրա տակ անհատակ խորություն կար, ուրիշ տեղերում, ընդհակառակը՝ թափանցիկ էր, և կարելի էր տեսնել փայլփլուն քարերն ու թավշյա ջրախոտերը:

Լիովին կլանված էի այդ ամենը դիտելով, երբ հանկարծ լսեցի, որ ինձ կանչում են: Իսկույն հետ նայեցի: Ձայն տվողը Արթուրն էր, որին դուրս էին բերել տախտակամած: Նրա հետ էր և մայրը:

— Ինչպե՞ս քնեցիր,— հարցրեց ինձ Արթուրը,— երևի լավ, քան դաշտում:

Ես մոտեցա նրան և քաղաքավարությամբ պատասխանեցի՝ միաժամանակ դիմելով մորն ու որդուն:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ո՞ւր են շները,— շարունակեց Արթուրը:

Ես կանչեցի շներին ու Հոգյակին: Նրանք մոտեցան բարևելու, իսկ Հոգյակը սկսեց ծամածռություններ անել, ինչպես միշտ անում էր մեր ներկայացումներից առաջ:

Բայց այդ առավոտ ներկայացման մասին խոսք լինել չէր կարող: Տիկին Միլլիգանը տղային պառկեցրեց ստվերում, և ինքն էլ նստեց նրա կողքին:

— Խնդրում եմ՝ շներին ու կապիկին տանես,— դիմեց նա ինձ,— մենք հիմա պարապելու ենք:

Ես անմիջապես խմբիս հետ քաշվեցի ամենահեռավոր անկյունը:

Ինչ կարող էր պարապել այդ խեղճ, փոքրիկ հիվանդը: Ես տեսա, որ մայրը պատվիրեց նրան կրկնել դասը, իսկ ինքը գրքով ստուգում էր նրան: Տախտակին պառկած՝ Արթուրը պատասխանում էր, ավելի ճիշտ՝ փորձում էր պատասխանել, որովհետև անդադար կանգ էր առնում, սխալվում և չէր կարողանում նույնիսկ երեք բառ կապակցված արտասանել: Մայրը համբերությամբ, բայց համառորեն ուղղում էր նրան:

— Դու էլի չգիտես առակը,— ասաց նա:

— Օ՛հ, մայրի՛կ,— վշտացած պատասխանեց Արթուրը:

— Ինչո՞ւ չես սովորել:

— Չկարողացա:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ... որովհետև չեմ կարող... որովհետև ես հիվանդ եմ...

— Քո գլուխը չի ցավում: Եվ ես երբեք թույլ չեմ տա, որ դու հիվանդության պատրվակով տգետ մնաս: Ինչո՞ւ ես ինձ այդպես վշտացնում:

Ինձ թվում էր, որ տիկին Միլլիգանը չափազանց խիստ էր, չնայած նա խոսում էր խաղաղ ու քնքուշ ձայնով:

— Մայրի՛կ, ես չեմ կարող: Հավատացնում եմ քեզ, որ չեմ կարող:

Եվ Արթուրը լաց եղավ:

Նրա արցունքները չտատանեցին տիկին Միլլիգանին, չնայած նա թվում էր հուզված ու վշտացած:

— Ես ուզում էի թույլ տալ, որ դու այս առավոտյան խաղաս Ռեմիի և նրա շների հետ,— շարունակեց տիկին Միլլիգանը,— բայց դու չես խաղա նրանց հետ այնքան ժամանակ, մինչև որ անսխալ չպատասխանես ամբողջ առակը:

Այդ ասելով՝ նա գիրքը տվեց Արթուրին և գնաց իր նավախցիկը:

Մենակ մնալով՝ Արթուրը սկսեց կրկնել դասը. ես տեսա, թե ինչպես էին շարժվում նրա շուրթերը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ակներև էր, որ նա ջանք չէր խնայում և աշխատում էր սովորել: Բայց այդ աշխատասիրությունը երկար չտևեց: Շատ շուտով նա սկսեց գրքին նայել վերևից, և նրա հայացքը, որը այս ու այն կողմն էր թափառում, հանդիպեց իմ աչքերին:

Ես նրան նշան արի, որ զբաղվի դասով:

Նա հեզորեն ժպտաց՝ կարծես շնորհակալություն հայտնելով խորհրդի համար, և աչքերը հառեց գրքին: Բայց շուտով կրկին սկսեց չորս կողմը նայել:

— Ես շատ եմ ուզում առակը սովորել, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում,— դիմեց նա ինձ:

Ես մոտեցա նրան:

— Բայց դա բոլորովին էլ դժվար չէ,— ընդհատեցի ես:

— Ընդհակառակը, շատ դժվար է:

— Ես կարող եմ անգիր ասել,— առաջարկեցի ես:

Արթուրը գիրքը վերցրեց, իսկ ես սկսեցի ասել առակը: Նա ուղղեց ինձ ընդամենը երեք թե չորս անգամ:

— Ա՛յ, քեզ հրաշք: Դու իսկապես որ առակը գիտես,— զարմացած բացականչեց Արթուրը:

— Ոչ շատ լավ: Բայց ինձ թվում է, որ հիմա արդեն կարող եմ անսխալ պատասխանել:

— Երբ հասցրիր սովորել:

— Երբ մայրիկդ բարձրաձայն կարդում էր, ես ուշադրությամբ լսում էի, իսկ հետո պարզորոշ պատկերացրի այն ամենը, ինչի մասին, որ խոսվում է առակում՝ ոչխարներին, ուլերին, նախիրը, պահապան շներին ու հովվին:

— Հիանալի է,— բացականչեց Արթուրը:— Հիմա ես էլ եմ տեսնում այդ ամենը: Եվ գիտես, համոզված եմ, որ հիմա կսովորեմ առակը:

Եվ իսկապես, քառորդ ժամ չանցած, նա անգիր սովորեց առակը: Այդ ժամանակ եկավ տիկին Միլլիգանը:

Մեզ միասին տեսնելով՝ նա բարկացավ՝ մտածելով, որ մենք խաղում ենք, բայց Արթուրը ժամանակ չտվեց նրան որևէ բան ասելու:

— Ես առակը գիտեմ,— բացականչեց նա,— Ռեմին ինձ օգնեց սովորել:

Տիկին Միլլիգանը զարմանքով նայեց ինձ: Այդ ժամանակ Արթուրը, նրա խնդրանքին չսպասելով, անգիր ասաց առակը: Նա արտասանեց դա հաղթական ուրախությամբ՝ առանց կապ ընկնելու և սխալվելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես նայում էի տիկին Միլլիգանին: Սկզբում ժպիտը լուսավորեց նրա դեմքը, իսկ հետո աչքերում արցունք երևաց:

— Դու լավ տղա ես,— ասաց նա ինձ:

Ես շատ մանրամասնորեն պատմեցի այս դեպքը, որովհետև այդ օրից սկսած՝ նրա վերաբերմունքը իմ հանդեպ միանգամայն փոխվեց: Նախորդ օրը ինձ և իմ շներին ու կապիկին հրավիրել էին հիվանդ երեխային զվարճացնելու և զբաղեցնելու համար: Այսօրվա դասից հետո դարձա Արթուրի ընկերը, ավելի ճիշտ՝ բարեկամը:

Տիկին Միլլիգանին խիստ վշտացնում էր այն հանգամանքը, որ իր որդին ոչինչ չի սովորում: Չնայած որդու հիվանդությանը՝ մայրն ուզում էր որոշ չափով վարժեցնել նրան, որ առողջանալուց հետո կարողանար սկսել կանոնավոր ուսումը:

Մինչև այժմ տիկին Միլլիգանը քիչ արդյունքի էր հասել: Արթուրը սովորելուց չէր հրաժարվում, բայց հարկ եղած ուշադրություն ու ջանասիրություն չէր ցուցաբերում: Դրա համար էլ տիկին Միլլիգանը շատ ուրախացավ, երբ լսեց, որ Արթուրը ինձ հետ սովորել է առակը և այն էլ կես ժամում, երբ իրեն չէր հաջողվել նույնիսկ մի քանի օրում սովորեցնել:

Այդ դեպքից հետո ես և Արթուրը արագ մտերմացանք, և որքան էլ դա տարօրինակ թվա, ոչ մի անգամ չկռվեցինք:

Գետի վրա ճամփորդելը հիանալի էր: Մենք ո՛չ ձանձրանում էինք, ո՛չ հոգնում, որովհետև մեր ժամանակը ճիշտ էր բաշխված: Եթե շրջակայքը մեզ դուր էր գալիս, օրը մի քանի կիլոմետր էինք միայն առաջ շարժվում, եթե վայրերը միօրինակ էին, նավարկում էինք ավելի արագ: Երբ արևը մայր էր մտնում, ու վրա էր հասնում գիշերը, մենք կանգ էինք առնում այնտեղ, ուր հասել էինք, և մնում էինք մինչև լուսաբաց:

Ցուրտ օրերին մենք տեղավորվում էինք ճաշասենյակում, որտեղ վառում էին վառարանը, որովհետև խոնավությունն ու մառախուղը վնաս էին հիվանդին: Վառում էին լամպերը, Արթուրին մոտեցնում սեղանին: Ես նստում էի նրա մոտ, և տիկին Միլլիգանը ցույց էր տալիս մեզ պատկերազարդ գրքեր կամ զանազան տեսարանների լուսանկարներ: Երբ մենք հոգնում էինք նկարները նայելուց, նա վերցնում էր գիրքը և բարձրաձայն կարդում կամ պատմում լեգենդներ ու պատմական դեպքեր՝ կապված այն վայրերի հետ, որտեղից անցնում էինք: Պատմելիս նա աչքը չէր կտրում տղայից, հուզիչ էր տեսնել, թե ինչպիսի ջանք էր թափում նա, որպեսզի իր պատմածը հետաքրքրական և հասկանալի լիներ որդուն:

թվայնացրել է 1915.info կայքը



Պարզ, տաք երեկոներին ես վերցնում էի տավիղս և ափ իջնելով՝ կանգնում որևէ տեղ՝ ծառի տակ, երգեր էի երգում և նվագում զանազան եղանակներ: Արթուրը մեծ հաճույքով էր լսում երաժշտությունը և հաճախ բացականչում էր. «Էլի՛ նվագիր»: Այդ ժամանակ ես կրկնում էի այն, ինչ քիչ առաջ նվագել էի:

Ես, որ Բարբերեն մայրիկի աղքատիկ խրճիթից և Վիտալիսի հետ անցկացրած դժվարին թափառումներից բացի, ոչինչ չէի տեսել, առաջին անգամ էի ապրում հանգիստ ու անհոգ:

Որքան տարբեր էին հոգնեցուցիչ, երկար թափառումները, երբ մինչև ծնկներս ցեխի մեջ՝ տիրոջս հետևից քարշ էի գալիս անձրևի կամ կիզիչ արևի տակով, և այս ճամփորդությունը՝ լողացող տնակով:

Արդեն երկու անգամ ես ապրել էի սիրածս մարդկանցից բաժանվելու ծանր զգացումը. առաջինը՝ երբ ինձ տարան Բարբերեն մայրիկից, երկրորդը՝ երբ բաժանեցին Վիտալիսից: Եվ ահա հիմա, երբ բոլորովին մնացի միայնակ՝ առանց օգնության ու նեցուկի, ես հանդիպեցի այնպիսի մարդկանց, որոնք կարեկցեցին ինձ, և որոնց ես անկեղծ սիրեցի: Իսկ իմ սիրտը այնքա՜ն էր փափագում սեր և մտերմություն: Քանի–քանի անգամ էի նախանձով նայել տախտակին գամված գունատ, հիվանդ Արթուրին. ես, որ առողջ էի և ուժեղ…

թվայնացրել է 1915.info կայքը

Նախանձում էի Արթուրին ոչ թե նրան շրջապատող հարստության համար, ոչ թե, որ գրքեր ու խաղալիքներ ունի, ո՛չ, ես նախանձում էի, որ նա ունի մայր, որն այդքա՜ն քնքշորեն սիրում էր նրան:

Ես տխրությամբ ասում էի ինքս ինձ, որ մայր չունեմ և երբեք էլ չեմ ունենա: Եթե երբևէ ես կրկին տեսնեմ Բարբերեն մայրիկին, ապա երբեք չեմ կարող առաջվա պես «մայրիկ» անվանել նրան, որովհետև գիտեմ, որ նա իմ հարազատ մայրը չէ: Ես միայնակ եմ և ընդմիշտ կմնամ միայնակ: Այդ միտքը ստիպում էր ինձ ավելի շատ գնահատելու տիկին Միլլիգանի և Արթուրի բարի վերաբերմունքը:

Բայց որքան էլ լավ լիներ իմ նոր կյանքը, ես շատ շուտով պետք է հրաժեշտ տայի դրան և վերադառնայի հին կյանքին:



Գլուխ 12

ԸՆԿԵՑԻԿԸ

Մոտենում էր Վիտալիսի՝ բանտից դուրս գալու օրը: Այդ միտքը միաժամանակ ուրախացնում և անհանգստացնում էր ինձ, և որքան մենք ավելի էինք հեռանում Տուլուզայից, իմ անհանգստությունն աճում էր:

Հիանալի էր նավարկել «Կարապ»–ով՝ հոգսերից ու վշտից ազատ: Բայց չէ՞ որ վերադարձին այդ ողջ տարածությունը ես պետք է անցնեի ոտքով:

Որոշեցի խորհրդակցել տիկին Միլլիգանի հետ և հարցնել, թե որքան ժամանակ է պետք Տուլուզա գնալու համար, որտեղ բանտի դռան մոտ պետք է հանդիպեի Վիտալիսին:

Իմ հարցը լսելով՝ Արթուրը բարձրաձայն գոռաց.

— Մայրի՛կ, ես չեմ ուզում, որ Ռեմին գնա:

Ես պատասխանեցի, որ ինքս չեմ տնօրինում իմ կյանքը, որովհետև պատկանում եմ տիրոջս, որը վարձել է ինձ իմ ծնողներից: Բայց խոսելով ծնողների մասին՝ ես չասացի, որ դրանք իմ հարազատ հայրն ու մայրը չեն, հակառակ դեպքում ստիպված կլինեի խոստովանել, որ ինձ գտել են փողոցում:

— Մայրի՛կ, Ռեմին պետք է մնա մեզ մոտ,— շարունակեց Արթուրը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես ինքս էլ ուրախ կլինեի, որ Ռեմին մնար,— պատասխանեց տիկին Միլլիգանը.— դուք ընկերացել եք, ես նույնպես կապվել եմ նրա հետ: Բայց դրա համար անհրաժեշտ է իմանալ, թե ինքը՝ Ռեմին, ցանկանո՞ւմ է այդ:

— Իհարկե ցանկանում է,— ընդհատեց նրան Արթուրը:— Ճի՞շտ չէ, Ռե՛մի, դու չես ուզում հեռանալ:

— Բացի այդ,— շարունակեց տիկին Միլլիգանը՝ իմ պատասխանին չսպասելով,— մենք չգիտենք՝ կհամաձայնվի՞ արդյոք Ռեմիի տերը հրաժարվել նրա վրա ունեցած իրավունքներից:

— Բայց դա Ռեմիի գործն է,— կրկին ընդհատեց նրան Արթուրը:

— Նախքան պատասխան տալը Ռեմին պետք է լավ մտածի: Եթե նա մեզ մոտ մնա, նրան միայն հաճույք և ճամփորդություն չի սպասում. նա պետք է շատ աշխատի, քեզ հետ միասին լրջորեն սովորի: Բացի այդ,— շարունակում էր տիկին Միլլիգանը,— պետք է ստանալ նրա տիրոջ համաձայնությունը: Ես կգրեմ նրան, որ գա այստեղ՝ Սետ: Երբ նա իմանա, թե ինչու մենք չենք կարող ինքներս գնալ Տուլուզա, նա հավանաբար կընդունի իմ հրավերը: Իսկ հետո արդեն ստիպված կլինենք պայմանավորվել Ռեմիի ծնողների հետ, որովհետև նրանց համաձայնությունը նույնպես պետք է ստանալ:

Մինչև հիմա ամեն բան այնպես էր ընթանում, կարծես մի բարի հրեշտակ կախարդական գավազանի հարվածով փոխում էր իմ կյանքը: Բայց տիկին Միլլիգանի վերջին բառերը ինձ իսկույն վերադարձրին տխուր իրականությանը:

«Պայմանավորվել ծնողներիս հետ»: Ես հիշեցի՝ ինչպես էին մեր գյուղում արհամարհում այն երեխաներին, որոնք ծնողներ չունեին և ապրում էին մանկատանը:

Արթուրն ու տիկին Միլլիգանը կիմանան, որ ես ընկեցիկ եմ, և երես կդարձնեն ինձնից: Դա ինձ համար մահ էր:

Տիկին Միլլիգանը, պատասխանի սպասելով, զարմանքով նայում էր ինձ, բայց ես լուռ էի: Հավանաբար որոշելով, որ ինձ հուզում է տիրոջս գալստյան միտքը՝ նա ինձ հանգիստ թողեց:

Բարեբախտաբար, այդ խոսակցությունը տեղի էր ունենում երեկոյան՝ քնելու ժամից քիչ առաջ, և ես կարող էի նավախցիկում մենակ մնալ մտածմունքներիս և երկյուղիս հետ: Դա առաջին ծանր ու անհանգիստ գիշերն էր, որ անցկացրի «Կարապի» վրա: Ի՞նչ պատասխանեմ: Ինչպե՞ս վարվեմ:

Ի վերջո ես ընդունեցի մի պարզ որոշում. ոչ մի բան չնախաձեռնել և ոչինչ չասել: Ինչ լինելու է, թող լինի: Ամենահավանականն այն է, որ Վիտալիսը չի

թվայնացրել է 1915.info կայքը

ցանկանա բաժանվել ինձնից: Այդ դեպքում ես կգնամ նրա հետ, և ոչ ոք չի իմանա ճշմարտությունը:

Իսկ այդ ճշմարտության նկատմամբ ունեցած վախը (ճշմարտություն, որը ամոթալի էի համարում) այնքան մեծ էր, որ ես ի սրտե սկսեցի ցանկանալ, որ Վիտալիսը չհամաձայնվի տիկին Միլլիգանի առաջարկությանը: Ես ստիպված կլինեմ հեռանալ Արթուրից և նրա մորից, հրաժարվել նրանց հետ երբևէ հանդիպելու մտքից, բայց նրանք իմ մասին վատ չեն հիշի:

Վիտալիսին նամակ գրելուց երեք օր հետո տիկին Միլլիգանը նրանից պատասխան ստացավ: Վիտալիսը հաղորդում էր, որ ընդունում է տիկին Միլլիգանի հրավերը և մոտակա շաբաթ օրը ժամը երկուսի գնացքով կգա Սետ:

Ես տիկին Միլլիգանից կայարան գնալու թույլտվություն խնդրեցի և շներին ու Հոգյակին հետս վերցնելով՝ գնացի տիրոջս դիմավորելու: Շներն անհանգիստ էին. նրանք կարծես ինչ–որ բան էին նախազգում, Հոգյակն անտարբեր էր, իսկ ես՝ սարսափելի հուզված: Ինձ տանջում էին ամենահակասական զգացումները:

Ես քաշվեցի կայարանի ամենահեռավոր անկյունը: Երեք շների սանձափոկերից բռնած, Հոգյակին բաճկոնիս տակ դրած՝ սրտատրոփ սպասում էի՝ չնկատելով, թե ինչ է կատարվում շուրջս:

Շներն ինձնից շուտ զգացին տիրոջ ներկայությունը, նրանք թափով առաջ նետվեցին, և քանի որ դա ինձ համար անսպասելի էր, սանձափոկերը դուրս պրծան ձեռքիցս, և նրանք ուրախ հաչոցով փախան ինձնից: Համարյա նույն րոպեին տեսա Վիտալիսին՝ շներով շրջապատված: Կապին արդեն բարձրացել էր Վիտալիսի գիրկը, իսկ Զերբինոն ու Դոլչեն փաթաթվեցին նրա ոտքերին:

Երբ ես մոտեցա, Վիտալիսը ցած իջեցրեց Կապիին և գիրկն առավ ինձ: Առաջին անգամ նա համբուրեց ինձ՝ մի քանի անգամ կրկնելով:

— Բարև՛, թանկագի՛ն զավակս:

Վիտալիսը միշտ բարի էր իմ նկատմամբ, բայց նա երբեք չէր գուրգուրում ինձ, և ես սովոր չէի նրա քնքշանքի արտահայտություններին, ուստի նրա անսպասելի շոյանքը արտասվելու չափ հուզել էր ինձ: Վիտալիսին նայելով՝ հասկացա, որ նա շատ էր ծերացել, կորացել ու գունատվել, նրա շուրթերը համարյա սպիտակ էին:

— Ինչ է, Ռեմի, ես շա՞տ եմ փոխվել,— հարցրեց նա:— Բանտը վատ ապաստան է, իսկ կարոտը հիվանդությունից էլ վատ է: Բայց հիմա ամեն

թվայնացրել է 1915.info կայքը

բան լավ կլինի:— Հետո նա փոխեց խոսակցությունը:— Իսկ դու որտեղից ես ճանաչում այդ կնոջը, որն ինձ նամակ էր գրել:

Ես նրան պատմեցի, թե ինչպես եմ հանդիպել «Կարապ»-ին, պատմեցի՝ ինչպես եմ ապրել տիկին Միլլիգանի մոտ, ինչ եմ տեսել և ինչով զբաղվել այս ժամանակամիջոցում: Իմ պատմությունը շատ երկար տևեց, որովհետև վախենում էի խոսքս ավարտել՝ հասնել այն հարցի քննարկմանը, որն ինձ ամենից շատ էր անհանգստացնում: Ես չէի կարող խոստովանել Վիտալիսին, որ սրտիս խորքում երազում էի նրանից ստանալ տիկին Միլլիգանի մոտ ինձ թողնելու համաձայնությունը: Մենք հյուրանոց հասանք նախքան իմ պատմության ավարտելը: Վիտալիսն այլևս ոչինչ չասաց նամակի և տիկին Միլլիգանի առաջարկության մասին:

— Այդ տիկինը սպասո՞ւմ է ինձ,— հարցրեց նա, երբ մենք հյուրանոց մտանք:

— Այո՛, ես Ձեզ հիմա կուղեկցեմ նրա մոտ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Պետք չէ: Ասա՛ նրա սենյակի համարը և սպասի՛ր ինձ այստեղ՝ շների և Հոգյակի հետ:

Ես երբեք չէի առարկում իմ տիրոջը: Բայց հիմա համարձակվեցի խնդրել, որ նա թույլ տա միասին գնալու տիկին Միլլիգանի մոտ: Բայց նա ձեռքի շարժումով ստիպեց ինձ լռել: Ես շների հետ սուսուփուս նստեցի հյուրանոցի դռան առջև դրված նստարանին: Շներն էլ էին ցանկանում գնալ տիրոջ հետևից, բայց նրանք էլ ինձ նման չէին համարձակվում հակառակվել: Վիտալիսը գիտեր կարգադրել:

Ինչո՞ւ Վիտալիսը չի ցանկանում, որ ես ներկա լինեմ իր և տիկին Միլլիգանի խոսակցությանը: Ես դեռ չէի պատասխանել այդ հարցին, երբ Վիտալիսը վերադարձավ:

— Գնա՛, հրաժեշտ տո՛ւր: Ես քեզ այստեղ կսպասեմ: Տասը րոպե հետո մենք գնում ենք:

Ես այնպես էի ցնցվել, որ տեղիցս չշարժվեցի:

— Ուրեմն Դուք նրան ասացի՛ք...

— Ես ասացի, որ դու ինձ պետք ես, և որ ես էլ քեզ եմ անհրաժեշտ: Հետևաբար, ես մտադիր չեմ զիջել քեզ վրա ունեցած իմ իրավունքները: Գնա՛ և շո՛ւտ վերադարձիր:

Նրա խոսքերը ինձ մի քիչ հանգստացրին: Այն սևեռուն միտքը, թե տիկին Միլլիգանը և Արթուրը կիմանան, որ ես ընկեցիկ եմ, գլխիցս դուրս չէր գալիս:

Մտնելով տիկին Միլլիգանի սենյակը՝ ես տեսա, որ Արթուրը լաց է լինում, իսկ մայրը խոնարհված աշխատում էր մխիթարել նրան:

— Ռեմի, դու չես գնա մեզնից, այնպես չէ՞,— գոռաց Արթուրը:

— Ես խնդրեցի սինյոր Վիտալիսին, որ նա քեզ այստեղ թողնի,— ասաց տիկին Միլլիգանը այնպիսի ձայնով, որ աչքերս արցունքով լցվեցին,— բայց նա չհամաձայնվեց:

— Նա չար մարդ է,— բացականչեց Արթուրը:

— Ո՛չ, նա բոլորովին էլ չար չէ,— շարունակեց տիկին Միլլիգանը,— և հավանաբար անկեղծորեն սիրում է Ռեմիին: Ինձ թվում է, որ նա արժանավոր ու ազնիվ մարդ է: Ահա թե ինչպես նա բացատրեց իր մերժումը. «Ես սիրում եմ Ռեմիին, և Ռեմին էլ սիրում է ինձ: Կյանքի դաժան դպրոցը, որ նա կանցնի՝ ինձ հետ ապրելով, շատ ավելի օգտակար կլինի նրա համար, քան ծառայի կարգավիճակը, որ լինելու է Ձեզ մոտ, եթե նույնիսկ Դուք այդ չցանկանաք: Դուք նրան կկրթեք ու կդաստիարակեք, կզարգացնեք նրա

թվայնացրել է 1915.info կայքը

միտքը, բայց չեք կոփի բնավորությունը: Դուք չեք կարող նրան Ձեր զավակը համարել, իսկ ես կարող եմ: Դա շատ ավելի լավ է, քան հիվանդ երեխայի խաղալիք լինելը, թեկուզ և այնպիսի հեզ ու քնքուշ երեխայի, ինչպիսին Ձեր տղան է: Ես նույնպես նրան կրթություն կտամ»:

— Բայց չէ՞ որ նա Ռեմիի հայրը չէ,— առարկեց Արթուրը:

— Ճիշտ է, բայց Ռեմին պարտավոր է ենթարկվել, որովհետև Վիտալիսը վարձել է նրան ծնողներից:

— Ես չեմ ուզում, որ Ռեմին գնա:

— Այնուամենայնիվ, նա պետք է գնա: Հուսով եմ՝ ոչ երկար ժամանակով: Մենք կգրենք նրա ծնողներին և կստանանք նրանց համաձայնությունը:

— Օ՛հ, ո՛չ,— բացականչեցի ես:

— Ինչո՞ւ ոչ:

— Ո՛չ: Ես Ձեզ շատ եմ խնդրում:

— Բայց մեզ մոտ վերադառնալու միակ հնարավորությունն այդ է:

— Պետք չէ, ես Ձեզ շատ եմ խնդրում:

Եթե տիկին Միլլիգանը խոսք չբացեր իմ ծնողների մասին, ես շատ ավելի ժամանակ կկորցնեի հրաժեշտի համար, քան այդ տասը րոպեն, որ թույլատրել էր Վիտալիսը:

— Դու Շավանոնից ես, այնպես չէ՞,— հարցրեց տիկին Միլլիգանը:

Ոչինչ չպատասխանելով՝ մոտեցա Արթուրին, գրկեցի նրան և մի քանի անգամ համբուրեցի: Հետո նրա գրկից պոկվելով՝ մոտեցա տիկին Միլլիգանին և համբուրեցի նրա ձեռքը:

— Խեղճ տղա,— շշնջաց նա՝ ճակատս համբուրելով:

Ես արագ ուղղվեցի դեպի դուռը:

— Արթո՛ւր, ես միշտ սիրելու եմ քեզ… և Ձեզ, տիկի՛ն, նույնպես երբեք չեմ մոռանա,— ասացի ես բեկբեկուն ձայնով:

— Ռե՛մի, Ռե՛մի,— լացակումած բղավում էր Արթուրը:

Այլևս ոչինչ չլսեցի: Ես դուրս փախա սենյակից և ծածկեցի դուռը: Մի րոպե անց տիրոջս կողքին էի:

— Գնա՛նք,— ասաց նա:

Այսպես բաժանվեցի ես իմ առաջին ընկերոջից և կրկին ոտք դրեցի զրկանքներով լի այն կյանքը, որից կարող էի ազատվել, եթե միայն անմիտ նախապաշարմունքից դրդված՝ չվախենայի ասելու, որ ես ընկեցիկ եմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 13

ՁՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ

Նորից օրեր շարունակ քայլում էի մեծ ճանապարհով Վիտալիսի հետևից՝ անձրևի ու արևի տակով, քայլում փոշու ու ցեխի միջով, և տավիղի փոկը հարում, ցավեցնում էր ուսս: Կրկին ստիպված էի հիմարի դեր խաղալ, լաց լինել ու ծիծաղել, որպեսզի զվարճացնեմ «հարգարժան հասարակությանը»:

Ինձ համար շատ ծանր էր, երբ երեկոները, կեղտոտ գյուղական պանդոկում պառկած, մտաբերում էի «Կարապի» վրա անցկացրած իմ երջանիկ օրերը: Այլևս երբեք ես չեմ խաղա Արթուրի հետ, երբեք չեմ լսի տիկին Միլլիգանի քնքուշ ձայնը:

Ինձ մխիթարում էր միայն այն, որ հիմա Վիտալիսն ավելի մեղմ էր ու քնքուշ: Ես այլևս ինձ այնքան միայնակ չէի զգում, որքան առաջ, և գիտեի, որ Վիտալիսն ինձ համար ոչ միայն տեր է, այլև մտերիմ ու հարազատ մարդ: Ես հաճախ ցանկանում էի համբուրել նրան և դրանով արտահայտել իմ սերը, բայց, չգիտես ինչու, չէի համարձակվում այդ անել: Ինձ հետ էր պահում ոչ թե վախը, այլ ինչ–որ անորոշ մի զգացում՝ ավելի շուտ՝ հարգանքը:

Կարծես տրամադրությունս ավելի վատացնելու համար եղանակն անտանելի դարձավ: Մոտենում էր ձմեռը, և անձրևի տակով անվերջ մի տեղից մյուսը տեղափոխվելը ավելի ծանր էր դառնում: Երբ երեկոյան, մինչև

թվայնացրել է 1915.info կայքը

ոսկորներս թրջված, ոտքից գլուխ ցեխոտված, գալիս էինք որևէ պանդոկ կամ ամբար, բառիս իսկական իմաստով մեռնում էինք հոգնությունից, և ես պառկում էի քնելու ամենատխուր մտքերով:

Վիտալիսը ձգտում էր, որքան հնարավոր է, շուտ հասնել Փարիզ, որովհետև միայն մեծ քաղաքում մենք կարող էինք ձմեռը ներկայացումներ տալ: Բայց երկաթուղով գնալու փող չուներ, և մենք պետք է ողջ ճանապարհը ոտքով անցնեինք:

Երբ լավ եղանակ էր լինում, մենք փոքրիկ ներկայացումներ էինք տալիս ճանապարհին հանդիպող քաղաքներում ու գյուղերում և մի քանի կոպեկ վաստակելով՝ կրկին ճամփա էինք ընկնում: Մինչև Շատիլյոն հասնելը դեռ ամեն ինչ տանելի էր, չնայած մենք անվերջ տառապում էինք ցրտից ու խոնավությունից, բայց այդ քաղաքից դուրս գալուց հետո անձրևը դադարեց, և փչեց հյուսիսային քամին:

Ճիշտն ասած՝ հաճելի բան չէ, երբ հյուսիսային քամին փչում է ուղիղ դեմքիդ, բայց մենք դրանից չէինք գանգատվում: Քամին ավելի լավ է, քան այն սարսռեցնող խոնավությունը, որը հետապնդում էր մեզ այդ մի քանի շաբաթը: Դժբախտաբար, հսկայական սև ամպերը ծածկեցին երկինքը: Արևը անհետացավ, և ամեն բանից զգացվում էր, որ շուտով ձյուն է գալու:

Երբ մենք պանդոկ հասանք, Վիտալիսը կարգադրեց ինձ անմիջապես պառկել քնելու:

— Վաղը ճամփա կընկնենք հնարավորինս շուտ, վախենում եմ՝ դեռ տեղ չհասած՝ ձյուն գա,— ասաց Վիտալիսը:

Նա ինքը չպառկեց քնելու, այլ նստեց անկյունում՝ վառարանի մոտ՝ փորձելով տաքացնել Հոգյակին, որն ամբողջ օրը տանջվել էր ցրտից և անդադար տնքում էր՝ չնայած նրան, որ փաթաթել էինք տաք վերմակի մեջ:

Հետևյալ առավոտ ես շատ վաղ արթնացա: Դեռ լույսը չէր բացվել, երկինքը սև էր, ոչ մի աստղ չկար, թվում էր, թե երկրի վրա ինչ–որ հսկայական գորշ բան էր կախվել, որը ճզմելու էր մեզ:

Երբ բաց էին անում մուտքի դուռը, խստաշունչ քամին ներս էր խուժում և բոցավառում օջախի վաղուց հանգած կրակը:

— Լավ կանեք՝ չգնաք,— դիմեց մեզ պանդոկապանը,— հիմա ուր որ է ձյուն կգա:

— Ես շատ եմ շտապում,— պատասխանեց Վիտալիսը,— և հույս ունեմ, որ մինչև ձյան գալը կհասնենք քաղաք:

թվայնացրել է 1915.info կայքը

— Երեսուն կիլոմետրը մի ժամում չես անցնի,— առարկեց պանդոկապանը:

Այնուամենայնիվ, մենք որոշեցինք շարունակել ճանապարհը:

Վիտալիսը Հոգյակին տանում էր բաճկոնի տակ դրած՝ աշխատելով տաքացնել նրան իր մարմնի ջերմությամբ, իսկ շները, գոհ, որ անձրև չի գալիս, ուրախ–ուրախ վազում էին մեր առջևից: Դիժոնայում Վիտալիսն ինձ համար ոչխարենու քուրք գնեց, որը ես հագել էի, և դիմացից փչող հյուսիսային քամին այն ամուր հպում էր մարմնիս: Մենք քայլում էինք լուռ, արագ՝ ցանկանալով ոչ միայն տաքանալ, այլև շուտ հասնել Տրուա: Երկինքը, չնայած լուսաբացին, առաջվա պես մնում էր գորշ: Միայն արևելքում երևաց մի սպիտակ շերտ, և այժմ բոլոր առարկաները կարծես ավելի հստակ էին երևում: Գիշերը վերջացավ, բայց այդպես էլ օրը չլուսացավ:

Այն վայրը, որտեղով մենք գնում էինք, չափազանց ամայի էր ու մռայլ: Ուր նայում էիր, ամենուրեք մերկ դաշտեր էին, մերկ բլուրներ, դեղնած անտառներ: Չէր լսվում ո՛չ սայլերի ճռռոց, ո՛չ մտրակի շառաչ: Լիակատար լռություն էր: Միայն կաչաղակներն էին, որ պոչները վեր ցցած՝ ցատկոտում էին ճանապարհին, և երբ մոտենում էինք, թռչում էին, նստում ծառերի կատարներին և այնտեղից ճանապարհ դնում մեզ իրենց կչկչոցով, որը նման էր հայհոյանքի կամ ինչ–որ չարագուշակ սպառնալիքի:

Անսպասելիորեն քամին փոխեց իր ուղղությունը և սկսեց փչել արևմուտքից: Երկնքով անցան ծանր ու ցածրիկ ամպեր, որոնք, թվում էր, կպչում էին ծառերի կատարներին: Մեր աչքերի առաջ փայլփլեցին ձյան հատուկենտ փաթիլներ, որոնք նման էին սպիտակ թիթեռնիկների. նրանք բարձրանում էին, իջնում ու պտտվում օդում: Հետո հյուսիս–արևմուտքից եկող ամպերը կախվեցին ուղիղ մեր գլխավերևում, և սկսեց սաստիկ ձյուն տեղալ: Մի քանի վայրկյանում ամեն բան սպիտակ դարձավ՝ քարերը, խոտը, չոր ճյուղերն ու թփերը: Ձյունը թափվում էր մեզ վրա, խցկվում ամենուրեք և իսկույն հալվում: Ես զգում էի, թե ինչպես են սառը շիթերը օձիքիցս հոսում ներս: Վիտալիսը, որը կիսաբաց էր արել քուրքը, որպեսզի Հոգյակը կարողանար շնչել, նա էլ էր նույն վիճակում:

Մենք առաջ էինք շարժվում դանդաղորեն, մեծ դժվարությամբ, ձնից կուրացած, թրջված, սառած՝ երբեմն–երբեմն կանգ առնելով, որ շունչ առնենք: Շներն արդեն առջևից չէին վազում, այլ քարշ էին գալիս հետևից՝ մեր հետքերով: Դրությունը բավականին տխուր էր: Եվ ոչ մի տեղ՝ բնակավայրի ոչ մի նշույլ: Մեր առջև մութ անտառն էր, որը թվում էր, թե վերջ չուներ: Ժամա-

թվայնացրել է 1915.info կայքը

նակ առ ժամանակ Վիտալիսն ուշադրությամբ նայում էր դեպի ձախ, կարծես ինչ–որ բան էր որոնում: Բայց այնտեղ ոչինչ չէր երևում՝ բացի մեծ բացատից, որտեղ հավանաբար գարնանը կտրատել էին ծառերը:

Հանկարծ նա մեկնեց ձեռքը և ցույց տվեց ինչ–որ մի գորշ կետ: Այդ ուղղությամբ նայելով՝ ես տեսա ձյունով ծածկված մի հյուղակ: Մենք արագ դուրս եկանք ճանապարհից և շուտով գտանք դեպի հյուղակ տանող արահետը: Հյուղակը պատրաստված էր չոր ճյուղերից ու ձողերից, իսկ տանիքը՝ խիտ հյուսված ճիպոտներից, այնպես որ ձյունը ներս չէր թափանցում: Վերջապես մենք ապաստան ունեինք: Շներն առաջինը ներս վազեցին հյուղակ և ուրախ հաչոցով սկսեցին թավալվել չոր գետնին:

— Ես այդպես էլ ենթադրում էի,— ասաց Վիտալիսը,— որ այստեղ անպայման փայտահատի հյուղակ կլինի:

Այժմ ձյունը մեզ համար սարսափելի չէր: Մեր նոր բնակարանը ո՛չ դուռ ուներ, ո՛չ լուսամուտ, և ներսում ոչինչ չկար՝ բացի ճմից սարքած նստարանից և մի քանի մեծ քարից, որոնք նստարանի դեր էին կատարում, բայց այստեղ աղյուսներից սարքված օջախ կար:

Ինչ երջանկություն, մենք կարող էինք կրակ անել:

Ճիշտ է, դեռ փայտ էլ էր պահանջվում, բայց մեր ապաստարանում վառելանյութ գտնելը դժվար չէր: Մենք կարող էինք պատերից և տանիքից ճյուղեր դուրս քաշել, միայն թե զգուշությամբ, որպեսզի հյուղակը չվնասվեր:

Շուտով վառ կրակը ուրախ բոցկլտում էր օջախում:

Ա՛խ, ինչ հրաշալի կրակ էր: Ճիշտ է, հյուղակը արագորեն լցվեց ծխով, բայց մեզ դա քիչ էր հուզում. մենք տաք տեղում էինք, և տվյալ րոպեին այդ ամենակարևորն էր:

Մինչ ես երկու ձեռքով, գետնին հենված, կրակն էի բորբոքում, շները պառկեցին օջախի մոտ՝ աշխատելով տաքանալ: Շուտով Հոգյակն էլ քիթը հանեց տիրոջ բաճկոնի տակից, հետո արագ ցած թռչելով և ընտրելով ամենալավ տեղը՝ դեպի կրակը մեկնեց իր դողացող փոքրիկ ձեռքերը:

Հիմա, երբ մենք մի քիչ տաքացել էինք, ժամանակն էր մտածել նաև ուտելու մասին:

Բարեբախտաբար, Վիտալիսը շատ հեռատես մարդ էր: Դեռ առավոտյան՝ մինչև իմ արթնանալը, նա ճանապարհի պատրաստություն էր տեսել. գնել էր մի կտոր հաց և մի քիչ պանիր: Այդպիսի րոպեների շատ էլ խստապահանջ չես լինում, և հացը տեսնելով՝ բոլորս էլ շատ ուրախացանք: Բայց, դժբախ-

թվայնացրել է 1915.info կայքը

տաբար, մեզ տրված բաժինները այնքան էլ մեծ չէին, և ես շատ հուսախաբվեցի, երբ ողջ հացի փոխարեն Վիտալիսը տվեց մեզ միայն նրա կեսը:

— Ճանապարհին ինձ անծանոթ է,— ասաց նա՝ ի պատասխան իմ հարցական հայացքի,— և ես չգիտեմ՝ ճանապարհին որևէ պանդոկ կա՞, որտեղ կարողանանք մի որևէ բան ուտել: Բացի այդ՝ հայտնի չէ, թե որքան է ձգվում այս անտառը: Հնարավոր է նույնիսկ, որ ձյան պատճառով ստիպված լինենք երկար մնալ այս հյուղակում: Պետք է գոնե մի անգամվա ուտելու հաց թողնել:

Ես լիովին համաձայնվեցի նրա փաստարկներին, մանավանդ որ նույնիսկ այդ խղճուկ ուտելիքը կազդուրեց մեզ: Մենք ունեինք օթևան՝ կենսատու ջերմությամբ, կրակը պարուրում էր մեզ, և մենք կարող էինք հանգիստ սպասել ձյան տարափի վերջանալուն:

Շները քնած էին կրակի մոտ, մեկը՝ կծկված, մյուսը՝ մեկնված, իսկ Կապին քիթը թաղել էր մոխրի մեջ: Ես որոշեցի հետևել նրանց օրինակին, որովհետև շատ վաղ էի արթնացել:

Չգիտեմ՝ որքան ժամանակ էի քնել, երբ արթնացա և դուրս նայեցի, ձյունն արդեն դադարել էր: Ո՞ր ժամն էր: Ես չէի կարող այդ մասին Վիտալիսին հարցնել: Դիժոնայում նա վաճառել էր իր ժամացույցը, որպեսզի ինձ համար քուրք և այլ անհրաժեշտ իրեր գնի: Հիմա մենք ստիպված էինք ժամանակը որոշել ցերեկվա լույսով, բայց քանի որ գետինը ծածկված էր կուրացուցիչ սպիտակ ծածկոցով, իսկ օդում կախված էր մառախուղը, ես ոչինչ չկարողացա որոշել:

Մուտքին մոտենալով՝ ես դիտում էի, թե ինչ է կատարվում դրսում, մինչև որ Վիտալիսը ձայն տվեց.

— Ինձ թվում է, որ շուտով նորից ձյուն կգա, ուստի ճամփա ընկնել չի կարելի: Ավելի լավ է՝ սպասել մինչև ձյունը դադարի. այստեղ տաք է, և մենք չենք թրջվի:

Այդ որոշման հետ ես լիովին համաձայն էի, եթե ինձ չանհանգստացներ ուտելու հարցը: Ճաշին Վիտալիսը բաժանեց հացի մնացորդը: Ավա՛ղ: Հացն այնքան քիչ էր, որ մենք համարյա վայրկենաբար բոլորը ոչնչացրինք, չնայած աշխատում էինք ուտել շատ փոքրիկ կտորներով:

Շուտով մենք արդեն հազիվ էինք նշմարում, թե ինչ է կատարվում հյուղակից դուրս, որովհետև օրը մոայլ էր, ու գիշերն արագ վրա հասավ: Կրկին սաստիկ ձյուն տեղաց, և սև երկնքից անդադար շարունակում էին թափվել մեծ, սպիտակ փաթիլները: Քանի որ մենք այստեղ պետք է գիշերեինք, լավն այն կլիներ, որ հնարավորինս շուտ քնեինք: Ես հետևեցի շների օրինակին և,

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

փաթաթվելով քուրքիս մեջ, որն արդեն չորացել էր, մեկնվեցի օջախի մոտ ու գլուխս դրեցի տափակ քարի:

— Քնի՛ր,— ասաց Վիտալիսը,— ես կարթնացնեմ քեզ, երբ քնելու ցանկություն ունենամ: Չնայած այս հյուղակում կարող ենք չվախենալ ո՛չ մարդկանցից, ո՛չ գազաններից, բայց հարկավոր է, որ մեզնից մեկը արթուն մնա ու պահպանի կրակը: Եթե ձյունը դադարի, կարող է ուժեղ սառնամանիք լինել:

Ես չստիպեցի կրկնել այդ առաջարկը և անմիջապես քնեցի: Երբ Վիտալիսն ինձ արթնացրեց, թվաց, թե լուսաբացը մոտ է: Ձյունը դադարել էր, օջախում առաջվա պես վառվում էր կրակը:

— Հիմա հսկելու հերթը քոնն է,— հայտարարեց Վիտալիսը:— Տե՛ս՝ որքան փայտ եմ պատրաստել քեզ համար: Կամաց-կամաց օջախը կդնես:

Իսկապես որ, կողքիս չոր փայտի մի կույտ կար: Վիտալիսը չէր ուզում, որ ես ամեն անգամ, հյուղակի պատից ճյուղեր դուրս քաշելով, արթնացնեմ իրեն, և նախօրոք ինձ համար վառելիքի պաշար էր պատրաստել: Ավա՛ղ, նրա հեռատեսությունը այնպիսի տխուր հետևանքներ ունեցավ, որոնք մեզնից ոչ մեկը չէր սպասում:

Տեսնելով, որ ես արթնացել եմ և պատրաստ եմ անցնելու իմ պարտականությունների կատարմանը, Վիտալիսը մեկնվեց կրակի մոտ՝ կողքին դնելով վերմակի մեջ փաթաթված Հոգյակին, և շուտով Վիտալիսի համաչափ շնչառությունից ես հասկացա, որ նա քնել է:

Այդ ժամանակ, ցանկանալով տեսնել, թե ինչ է կատարվում դրսում, ես վեր կացա և ոտներիս թաթերին՝ մոտեցա մուտքին: Ձյունը ծածկել էր ամեն ինչ՝ խոտը, թփերը, ջահել անտառն ու ծառերը: Մեր շուրջն ամենուրեք փռվել էր անհարթ, բայց նույն սպիտակ ծածկոցը: Երկինքը ծածկված էր շողշողուն աստղերով, ձյունը նույնպես աղոտ լույս էր սփռում, որը լուսավորում էր շրջակայքը: Գիշերվա տրտում լռության մեջ երբեմն ճարճատյուն էր լսվում, և դա նշան էր, որ ձյունե ծածկոցը սառչում է: Իսկապես, մեր բախտը բերեց, որ մենք գտանք այս հյուղակը: Ինչ պետք է անեինք անտառում այսպիսի սառնամանիքին:

Չնայած ես տեղիցս վեր կացա շատ կամացուկ, բայց և այնպես Ջերբիոնն արթնացավ և մոտ վազեց: Ես հրամայեցի նրան վերադառնալ իր տեղը: Նա հնազանդվեց, բայց նստեց՝ դունչը դեպի մուտքը՝ որպես մի համառ շուն, որը չի հրաժարվել իր մտադրությունից: Ես որոշ ժամանակ դեռ նայում էի ձյանը, հետո վերադարձա կրակի մոտ և մի քանի ճյուղ օջախը

թվայնացրել է 1915.info կայքը

գցելով՝ նստեցի այն քարին, որն ինձ ծառայել էր բարձի տեղ: Տերս հանգիստ քնած էր: Շներն ու Հոգյակը՝ նույնպես: Բոցը գեղեցիկ ոլորապտույտ վեր էր խոյանում մինչև հյուղակի առաստաղը՝ փայլփլուն կայծեր սփռելով, որոնց ճարճատյունը խախտում էր լռությունը:

Բավական ժամանակ այդ կայծերով հմայված՝ զվարճանում էի, բայց կամաց–կամաց հոգնածություն եկավ վրաս, և ես սկսեցի ննջել: Եթե ձեռքիս տակ վառելիքի պաշար չլիներ, ես ստիպված կլինեի վեր կենալ և ման գալ խրճիթում, բայց անշարժ նստած՝ չկարողացա հաղթահարել նիրհս և քնեցի: Արթնացա սարսափելի հաչոցից:

Հավանաբար շատ երկար էի քնել, որովհետև կրակը հանգել էր, և խրճիթում մութ էր: Հաչոցը շարունակվում էր. Կապին էր հաչում: Բայց տարօրինակ էր. ո՛չ Զերբինոն, ո՛չ Դոլչեն նրան չէին պատասխանում:

— Ի՞նչ է պատահել,— արթնանալով բացականչեց Վիտալիսը:

— Չգիտեմ:

— Դու քնել ես, և կրակը հանգել է:

Կապին նետվեց դեպի մուտքը, բայց դուրս չվազեց, այլ հաչում էր մուտքի մոտ: Կապիի հաչոցին ի պատասխան՝ լսվեց աղիողորմ ոռնոց, և ես ճանաչեցի Դոլչեի ձայնը: Այդ ոռնոցը լսվում էր ինչ–որ մոտիկ տեղից՝ հյուղակի հետևից:

Ես ուզում էի դուրս գալ, բայց տերս կանգնեցրեց ինձ:

— Նախ փա՛յտ դիր օջախը:

Մինչ ես կատարում էի կարգադրությունը, նա օջախից հանեց մխացող մի խանձող և կրակը բորբոքելու համար սկսեց փչել:

Երբ խանձողը բռնկվեց, նա ձեռքն առավ:

— Գնանք տեսնենք, թե ինչ է եղել, բայց դու արի՛ հետևիցս: Կա՛պի, առա՛ջ ընկիր:

Հանկարծ սարսափելի ոռնոց լսվեց: Կապին վախեցած փախավ դեպի հյուղակը:

— Այդ գայլերն են ոռնում: Ո՞ւր են Զերբինոն և Դոլչեն:

Ինչ կարող էի պատասխանել: Հավանաբար, երբ ես քնել էի, շները դուրս էին փախել: Զերբինոն առաջ էլ արդեն ցանկացել էր այդ անել, բայց ես խանգարեցի նրան. միթե նրանց տարել են գայլերը:

— Վերցրո՛ւ խանձողը,— կարգադրեց ինձ Վիտալիսը:— Գնանք նրանց օգնության:

թվայնացրել է 1915.info կայքը

Չնայած ես շատ էի վախենում գայլերից, բայց հիմա առանց տատանվելու արագ վերցրի այրվող խանձող և գնացի տիրոջս հետևից:

Մենք դուրս եկանք բացատը, բայց ո՛չ գայլերին տեսանք, ո՛չ շներին: Մենք գնացինք հյուղակը շրջանցող հետքերով: Մթության մեջ կարելի էր նկատել, որ մի տեղ ձյունը տրորված էր, կարծես այնտեղ կենդանիներ էին թավալվել:

— Փնտրի՛ր, Կա՛պի, փնտրի՛ր,— բղավեց տերս և սկսեց սուլել ու կանչել Ջերբինոյին ու Դոլչեին:

Բայց ոչ մի ձայն չխախտեց անտառի մռայլ լռությունը, իսկ Կապին փնտրելու փոխարեն, ինչպես նրան կարգադրված էր, վախեցած սեղմվում էր մեր ոտքերին: Դա բոլորովին նման չէր նրան: Կապին միշտ էլ եղել էր հնազանդ ու քաջ:

Վիտալիսը կրկին բարձրաձայն կանչեց Ջերբինոյին ու Դոլչեին: Մենք շարունակում էինք ականջ դնել: Լիակատար լռություն էր: Սիրտս վշտից ճմլվում էր: Խեղճ Ջերբինո, խեղճ Դոլչե: Վիտալիսը հաստատեց իմ կասկածները:

— Նրանց հոշոտել են գայլերը: Ինչո՞ւ թողեցիր, որ նրանք դուրս գան:

Ավա՛ղ, ես ոչ մի բան չէի կարող պատասխանել այդ հարցին:

— Պետք է նրանց փնտրել,— ասացի ես և առաջ նետվեցի:

Բայց Վիտալիսն ինձ կանգնեցրեց:

— Ինչպես պետք է փնտրես այս մթության ու ձյունի մեջ: Եթե նրանք չպատասխանեցին իմ կանչին, ուրեմն... շատ հեռու են,— շարունակեց նա:— Բացի այդ՝ գայլերը կարող են հարձակվել մեզ վրա, իսկ մենք պաշտպանվելու ոչինչ չունենք:

Ինձ համար առավել ծանր էր անօգնական թողնել խեղճ շներին, մեր հավատարիմ բարեկամներին, որովհետև ինձ մեղավոր էի զգում: Եթե չքնեի, նրանք չէին փախչի:

Վիտալիսը գնաց դեպի հյուղակը, ես հետևեցի նրան, ամեն քայլափոխի կանգ առնելով և շուրջս նայելով՝ ականջս ձայնի, բայց ես ոչինչ չէի տեսնում՝ բացի ձյունից, և ոչինչ չէի լսում՝ բացի ձյան ճարճատյունից:

Խրճիթում մեզ նոր անախորժություն էր սպասում: Ճյուղերը, որոնք ես օջախն էի գցել, մեր բացակայության ժամանակ բոցավառվել էին և այժմ լուսավորում էին հյուղակի ամենամութ անկյունները, բայց և այնպես Հոգյակը ոչ մի տեղ չէր երևում: Վերմակը ընկած էր օջախի մոտ, բայց կապիկը նրա տակ չէր: Ես ձայն տվեցի Հոգյակին, Վիտալիսն էլ կանչեց, բայց նա չէր արձագանքում: Ո՞ւր է կորել նա: Վիտալիսը մտաբերեց, որ երբ ինքն

թվայնացրել է 1915.info կայքը

արթնացել էր, Հոգյակը պառկած էր իր հետ, ուրեմն նա անհետացել է այն ժամանակ, երբ մենք փնտրում էինք շներին:

Մի քանի բոցավառ ճյուղեր վերցնելով՝ մենք առաջ գնացինք՝ լուսավորելով ճյունը և փնտրելով Հոգյակի հետքերը, բայց ոչինչ չգտանք: Ճիշտ է, բոլոր հետքերը խառնվել էին, որովհետև ինչպես շները, այնպես էլ մենք, անցել էինք այդ նույն տեղով, բայց ոչ այնքան, որ չկարողանայինք գտնել կապիկի հետքերը:

Ուրեմն Հոգյակը դուրս չէր եկել: Մենք վերադարձանք, որ տեսնենք, թե նա արդյոք չի՞ թաքնվել որևէ տեղ՝ չոր ճյուղերի կույտի հետևում: Մեր թափառումները երկար տևեցին: Տասը անգամ մենք անցանք միևնույն տեղով և նայեցինք բոլոր անկյունները: Ես բարձրացա Վիտալիսի ուսերին և հետազոտեցի տանիքը: Այնտեղ էլ ոչ ոք չկար:

Ես հարցրի Վիտալիսին, թե նա չի կարծում արդյոք, որ գայլերը տարել են նաև Հոգյակին:

— Ո՛չ,— պատասխանեց Վիտալիսը,— գայլերը չէին համարձակվի լուսավորված հյուղակը մտնել: Ես կարծում եմ, որ նրանք հարձակվել են Ջերբինոյի և Դոլչեի վրա, երբ վերջիններս դուրս են վազել հյուղակից: Հնարավոր է, որ մեր բացակայության ընթացքում, Հոգյակը վախենալով, դուրս է թռել խրճիթից և թաքնվել մոտակա որևէ տեղում: Ես շատ անհանգիստ եմ, որովհետև այսպիսի սարսափելի եղանակին նա կմրսի, իսկ ցուրտը նրա համար մահու չափ վտանգավոր է:

— Այդ դեպքում էլի փնտրենք:

Եվ մենք կրկին սկսեցինք մեր որոնումները: Բայց նույնքան անհաջող էր, որքան և առաջին անգամ:

— Ստիպված կլինենք սպասել լուսաբացին,— ասաց Վիտալիսը:

— Իսկ շո՞ւտ կլուսանա:

— Կարծում եմ՝ երկու–երեք ժամից:

Եվ նա նստեց կրակի մոտ՝ գլուխը ձեռքերի մեջ առած:

Վախենալով նրան անհանգստացնել՝ ես լուռ նստել էի Վիտալիսի կողքին և ժամանակ առ ժամանակ ցախ էի ավելացնում կրակին: Երբեմն Վիտալիսը վեր էր կենում և մոտենում մուտքին, նայում էր երկնքին, ականջ դնում, հետո նորից վերադառնում: Ես կգերադասեի, որ նա բարկանար ինձ վրա ու հայհոյեր և ոչ թե լուռ նստեր այդպիսի հուսահատ տեսքով:

Երեք ժամը, որ ասել էր տերս, անցնում էր շատ դանդաղ: Թվում էր՝ գիշերը ծայր չունի: Վերջապես աստղերը գունատվեցին, երկինքը պարզվեց. լույսը բացվում էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց լուսաբացին սառնամանիքն ուժեղացավ: Հնարավոր է, որ գտնենք Հոգյակին, բայց նա կենդանի՞ է արդյոք, իսկ եթե հանկարծ կրկին ձյուն գա, այդ դեպքում ինչպե՞ս փնտրենք նրան: Բարեբախտաբար, այդպես չեղավ, երկինքը մաքրվեց ամպերից և վարդագունեց. դա լավ եղանակի կանխանշան էր: Հենց որ առավոտյան շողը լուսավորեց թփերն ու ծառերը, մենք դուրս եկանք հյուղակից: Մեզնից յուրաքանչյուրը մի մեծ փայտ վերցրեց: Կապին մոռացել էր իր գիշերային վախը և հիմա միայն ազդանշանի էր սպասում, որ առաջ նետվի:

Այն ժամանակ, երբ մենք դրսում փնտրում էինք Հոգյակին, Կապին գլուխը բարձրացրեց և ուրախ հաչեց: Դա նշանակում էր, որ պետք էր փնտրել վերևում և ոչ թե ցածում: Եվ իսկապես, մենք տեսանք, որ տանիքի վրա թեքված մի մեծ ճյուղի մոտ հյուղակը ծածկող ձյունը տրորված էր: Դա մեծ կաղնու ճյուղն էր, իսկ ծառի ծայրին երևում էր կծկված փոքրիկ, գորշ մի կերպարանք: Այժմ մեզ համար ամեն բան հասկանալի դարձավ: Երբ մենք դուրս էինք եկել հյուղակից, գայլերից վախեցած Հոգյակը ցատկել էր տանիքը և մագլցել ծառը: Այնտեղ իրեն անվտանգ զգալով՝ նա սեղմվել էր ճյուղերին և չէր պատասխանում մեր կանչին:

Տերս քնքշորեն ձայն տվեց նրան, բայց նա չէր շարժվում. կարծես մեռած լիներ: Մի քանի րոպե շարունակ Վիտալիսը կանչում էր նրան, բայց Հոգյակը կենդանության ոչ մի նշան ցույց չէր տալիս: Ես ցանկանում էի որևէ կերպով քավել մեղքս:

— Թո՛ւյլ տվեք՝ ես ցած բերեմ նրան:

— Գլուխդ կջարդես:

— Մի՛ անհանգստացեք:

Բարձրանալ մեծ ծառը, որի բունն ու ճյուղերը ծածկված էին ձյունով, և՛ վտանգավոր էր, և՛ դժվար: Բարեբախտաբար, դեռ մանկությունից ես սովոր էի ծառեր մագլցել: Բնի երկայնքով մի քանի փոքրիկ ճյուղեր էին աճում, դրանք ինձ համար աստիճաններ եղան: Վերևից թափվող ձյունը լցվում էր աչքերս, բայց շուտով Վիտալիսի օգնությամբ հասա առաջին ճյուղերին, դրանցից հետո բարձրանալը շատ ավելի հեշտ էր:

Բարձրանալիս քնքշորեն խոսում էի Հոգյակի հետ, որը, անշարժ նստած, պսպղուն աչքերով նայում էր ինձ: Ես համարյա հասել էի նրան և արդեն մեկնեցի ձեռքս, որ բռնեմ, բայց հանկարծ մի ոստյունով նա ցատկեց մյուս ճյուղին:

Ես հավանաբար երբեք չկարողանայի բռնել Հոգյակին, եթե ճյուղերին ձյուն չլիներ: Ձյունը թրջեց Հոգյակի թաթերը, և դա նրան դուր չեկավ: Այդ

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ ճյուղից ճյուղ ցատկելով՝ նա թռավ տիրոջ ուսին և թաքնվեց նրա բաճկոնի տակ:

Հիմա պետք էր փնտրել շներին: Մի քանի քայլ գնալով՝ մենք հասանք այնտեղ, որտեղով անցել էինք գիշերով ու նկատել տրորված ձյունը: Հիմա, երբ արդեն լույս էր, մենք պարզորոշ պատկերացրինք, թե ինչպես էր տեղի ունեցել այդ ամենը:

Շները խրճիթից դուրս թռչելով՝ վազել էին իրար հետևից: Մենք նշմարում էինք նրանց հետքերը, որոնք միմյանցից քսան մետր հեռավորություն ունեին: Հետո դրանց կողքին հայտնվեցին ուրիշները: Ապա մենք տեսանք փորփրված և արնաթաթախ ձյունը:

Որոնումները շարունակելն անօգուտ էր: Այստեղ խեղճ շներին գայլերը հոշոտել էին ու տարել անտառի խորքը: Բացի այդ՝ պետք էր հնարավորինս շուտ տաքացնել սառած Հոգյակին:

Մենք վերադարձանք խրճիթ: Մինչ Վիտալիսը Հոգյակին պահել էր կրակի մոտ, ես տաքացրի վերմակը, որի մեջ հետո խնամքով փաթաթեցինք Հոգյակին: Բայց տաք վերմակից բացի՝ Հոգյակին անհրաժեշտ էր նաև ջեռոցով անկողին և տաք խմիչք, իսկ մենք այդ չունեինք:

Մենք անշարժ նստել էինք օջախի մոտ և լուռ նայում էինք կրակին. խեղճ Ջերբինո և Դոլչե, մեր խեղճ դերասաններ: Նրանք մեզ հետ բաժանում էին և՛ վիշտ, և՛ ուրախություն, իսկ մենակության ծանր օրերին նրանք եղել էին ինձ ընկեր, եղել էին համարյա իմ երեխաները, և այժմ ահա ես դարձա նրանց մահվան պատճառը:

Ինձ ոչ մի բան արդարացնել չէր կարող: Եթե ես չքնեի և հսկեի, ինչպես հարկն է, նրանք դուրս չէին փախչի: Իսկ գայլերը չէին համարձակվի հյուղակի վրա հարձակվել:

Ես ուզում էի, որ Վիտալիսը հայհոյի ինձ, ես պատրաստ էի խնդրելու, որ նա ինձ ծեծի:

Բայց նա լուռ էր և նույնիսկ իմ կողմը չէր նայում: Նա գլխահակ նստել էր օջախի մոտ և հավանաբար մտածում էր, թե ինչ անենք:

Ինչպե՞ս պիտի առանց շների ներկայացումներ տանք: Ինչո՞վ պիտի ապրենք:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 14

ՀՈԳՅԱԿԸ

Եղանակը լավացավ, ինչպես խոստանում էր լուսաբացը: Անամպ երկնքում փայլում էր արևը: Անտառը, որը նախորդ օրն այնքան տխուր էր ու մռայլ, ձյան ծածկոցի տակ կուրացուցիչ փայլ էր ստացել:

Ժամանակ առ ժամանակ Վիտալիսը ձեռքը տանում էր վերմակի տակ ու շոշափում Հոգյակին, որը դեռ չէր տաքացել, և երբ ես խոնարհվում էի դեպի Հոգյակը, լսում էի, թե ինչպես էին ցրտից չխկչխկում նրա ատամները:

— Հարկավոր է, ինչ գնով էլ լինի, գյուղ հասնել,— ասաց Վիտալիսը՝ ոտքի կանգնելով,— հակառակ դեպքում Հոգյակն այստեղ կմեռնի: Լավ կլինի, որ գոնե ճանապարհին էլ դիմանա: Գնա՛նք:

Լավ տաքացնելով վերմակը և Հոգյակին մեջը փաթաթելով՝ տերս նրան դրեց իր բաճկոնի տակ:

— Մենք շատ թանկ վճարեցինք այս հյուրընկալ ապաստանի համար...— ասաց նա երերուն ձայնով:

Շուտով, երբ մենք դուրս եկանք մեծ ճանապարհը, տեսանք մի սայլ, որի սայլապանը մեզ ասաց, թե մինչև մոտակա գյուղը մի ժամվա ճանապարհ էլ չկա: Մենք արագացրինք մեր քայլերը, չնայած որ համարյա գոտկատեղը հասնող ձյան միջով գնալը դժվար էր ու տանջալից:

թվայնացրել է 1915.info կայքը

Մերթ ընդ մերթ ես հարցնում էի Վիտալիսին, թե ինչպես է զգում իրեն Հոգյակը, նա ինձ պատասխանում էր, որ Հոգյակը դեռևս դողում է ցրտից:

Վերջապես երևացին ինչ–որ մեծ գյուղի սպիտակ տանիքները. ևս մի ճիգ, և մենք տեղ կհասնենք:

Սովորաբար մենք լավագույն հյուրանոցներում չէինք իջևանում, այլ շատ չծախսելու համար գյուղ մտնելու ճանապարհին կամ քաղաքի արվարձանում ընտրում էինք որևէ աղքատ տնակ: Բայց այս անգամ Վիտալիսը քայլերն ուղղեց դեպի հյուրանոց, որի ճակատին գեղեցիկ, ոսկեզօծ ցուցանակ էր կախված: Խոհանոցի բաց դռնից երևում էր մթերքներով ծանրաբեռնված սեղանը, իսկ մեծ օջախին ուրախ թշշում էին կաթսաները, որոնցից ելնող գոլորշին քուլա–քուլա բարձրանում էր դեպի առաստաղը: Նույնիսկ փողոցում զգալի էր յուղոտ ապուրի դուրեկան հոտը, որը ախորժալի գրգռում էր մեր հոտառությունը:

Վիտալիսը, գլխարկը չհանելով, մտավ խոհանոց և տիրոջից խնդրեց մի լավ սենյակ, որտեղ բուխարի լիներ: Սկզբում հյուրանոցի տերը, որ գեղեցիկ և աչքի ընկնող արտաքինով մի տղամարդ էր, չուզեցավ նույնիսկ նայել մեզ: Բայց Վիտալիսի ծանրակշիռ շարժուձևը նրան հարգանք ներշնչեց, և նա կարգադրեց սպասուհուն, որ մեզ դեպի սենյակ ուղեկցի:

— Շո՛ւտ, պառկի՛ր,— կարգադրեց ինձ Վիտալիսը, մինչ սպասուհին կրակ էր վառում:

Ես ապշեցի, ավելի լավ չի՞ լինի նախ սեղան նստել և հետո պառկել քնելու:

— Դե՛, շո՛ւտ արա,— կրկնեց Վիտալիսը:

Ստիպված եղա ենթարկվել:

Անկողնու վրա փետրավերմակ կար: Վիտալիսը մինչև կզակս ծածկեց ինձ այդ վերմակով:

— Աշխատի՛ր տաքանալ: Որքան շուտ տաքանաս, այնքան լավ:

Մինչդեռ փետրավերմակի տակ տաքանում էի, Վիտալիսը, ի զարմանս սպասուհու, կրակի վրա բռնած, այս ու այն կողմ էր շրջում խեղճ Հոգյակին, կարծես ուզում էր նրան խորովել:

— Դե՛հ, տաքացա՛ր,— մի քանի րոպե անց հարցրեց Վիտալիսը:

— Ես ուղղակի խեղդվում եմ շոգից:

Դա հենց այն է, ինչ պետք է ինձ:

Վիտալիսը շուտով Հոգյակին փետրավերմակի տակ դրեց և խնդրեց ինձ ավելի ամուր սեղմվել նրան: Խեղճ, փոքրիկ կենդանին, որը սովորաբար համառում էր, երբ նրան առաջարկում էին անել այն, ինչ նրան դուր չէր գա-

թվայնացրել է 1915.info կայքը

լիս, հիմա անտրտունջ հնազանդվում էր: Հոգյակը պառկել էր անշարժ, ինձ սեղմված. նա չնայած այլևս չէր մրսում, բայց նրա մարմինը այրվում էր:

Տերս իջավ խոհանոց և այնտեղից բերեց տաք գինի և շաքար:

Նա ուզում էր, որ Հոգյակը գոնե մի քանի գդալ խմի, բայց վերջինս չէր կարողանում բացել բերանը և տխրությամբ նայում էր մեզ իր պապուն աչքերով՝ կարծես խնդրելով, որ իրեն հանգիստ թողնեն, բայց վերմակի տակից հանեց իր թաթը ու մեկնեց մեզ:

Վիտալիսը բացատրեց ինձ, որ երբ ես դեռ իրենց խմբում չէի, Հոգյակը հիվանդացել էր թոքերի բորբոքումով, և նրա թաթից արյուն էին վերցրել: Հիմա կրկին իրեն վատ զգալով՝ նա մեկնում էր թաթը, որ նորից արյուն վերցնեն և բուժեն իրեն: Այդ անչափ սրտաճմլիկ էր: Վիտալիսը ոչ միայն հուզված էր, այլև շատ անհանգստացած: Խեղճ Հոգյակը հիվանդ է և շատ ծանր, եթե հրաժարվում է նույնիսկ քաղցր գինուց, որն այնքան սիրում էր:

— Խմի՛ր գինին և անկողնուց դուրս մի՛ արի,— կարգադրեց ինձ Վիտալիսը:— Ես գնում եմ բժիշկ բերելու:

Խոստովանում եմ, որ ես նույնպես շատ էի սիրում շաքարով գինի և բացի այդ՝ սարսափելի սոված էի: Ես չստիպեցի, որ նա նորից կրկնի իր խնդիրքը: Մինչև վերջին կաթիլը խմելով՝ կրկին մտա վերմակի տակ, ուր քիչ մնաց շոգից խեղդվեմ:

Վիտալիսի բացակայությունը երկար չտևեց: Նա շուտով վերադարձավ ոսկյա ակնոցներով մի պարոնի հետ: Դա բժիշկն էր:

Վախենալով, որ այդպիսի պատկառելի անձնավորությունը չի ցանկանա նեղություն քաշել հանուն կապիկի, Վիտալիսը չէր ասել, թե ինչ հիվանդի մոտ է կանչում նրան:

Տեսնելով ինձ անկողնում՝ վարդի պես շառագունած՝ բժիշկը մոտեցավ և շոշափեց ճակատս:

— Ջերմում է,— ասաց նա:

Եվ այնպիսի տեսքով թափահարեց գլուխը, կարծես վիճակս խիստ անմխիթարական էր:

Ես որոշեցի դուրս բերել նրան մոլորությունից՝ վախենալով, որ նա կարող է արյուն վերցնել ինձնից:

— Հիվանդը ես չեմ:

— Ինչպե՞ս թե դու չես: Երեխան զառանցում է:

Ես, վերմակը մի քիչ բարձրացնելով, ցույց տվեցի Հոգյակին, որը թաթիկով գրկել էր պարանոցս:

— Ահա՛ հիվանդը:

թվայնացրել է 1915.info կայքը

Բժիշկը հետ ցատկեց և շրջվեց դեպի Վիտալիսը:

— Կապիկը,— բացականչեց նա:— Եվ Դուք համարձակվել եք այսպիսի եղանակին անհանգստացնել ինձ կապիկի համար:

Ես համոզված էի, որ բժիշկն իսկույն ևեթ կհեռանա: Բայց Վիտալիսը գիտեր լեզու գտնել մարդկանց հետ և շուտ չէր կորցնում գլուխը: Նա քաղաքավարությամբ կանգնեցրեց բժշկին և պատմեց նրան ամեն բան, թե ինչպես ենք ձյան պատճառով մնացել ճանապարհին, ինչպես էր Հոգյակը, գայլերից վախենալով, բարձրացել կաղնու ծառը և այնտեղ մրսել:

— Այո՛, ես Ձեզ կանչել եմ կապիկի համար: Բայց եթե Դուք իմանայիք, թե ինչպիսի արտակարգ կապիկ է սա: Նա մեզ համար ավելին է, քան ընկերը: Նա մեր բարեկամն է: Ինչպե՞ս կարելի է այսպիսի արտիստի կյանքը վտանգել հասարակ անասնաբույժի: Բոլորին հայտնի է, որ բժիշկները գիտության մարդիկ են, իսկ գյուղական անասնաբույժները իսկական ավանակներ են:

Ամենախուլ գյուղում բժշկից կարելի է ստանալ օգնություն և մեծահոգի վերաբերմունք: Բացի այդ՝ գիտնականները համարում են, որ կապիկներն այնքան մոտիկ են մարդկանց, որ հիվանդանում են նույն հիվանդություններով, ինչ մարդիկ: Մի՞թե հետաքրքրական չէ գիտական և բժշկական արվեստի տեսակետից ուսումնասիրել,

թե այդ հիվանդություններն ինչով են նման և ինչով են տարբերվում մարդկանց հիվանդություններից:

Մինչդեռ մեր տերը խոսում էր, Հոգյակը, հասկանալով, որ ակնոցավոր մարդը բժիշկ է, անդադար մեկնում էր թաթը, որպեսզի արյուն վերցնեն:

— Տեսե՛ք՝ որքան խելոք կապիկ է, նա գիտի, որ Դուք բժիշկ եք, և թաթիկը մեկնում է Ձեզ, որպեսզի ստուգեք զարկերակը:

Այդ վերջնականապես համոզեց բժշկին:

— Իսկապես որ,— հայտարարեց բժիշկը,— բավականին հետաքրքրական դեպք է:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց մեզ համար, ավա՛ղ, դա շատ տխուր դեպք էր: Պարզվեց, որ խեղճ Հոգյակը թոքերի բորբոքում ունի: Բժիշկը բռնեց նրա փոքրիկ թաթիկը ու նշտարով բացեց երակը, և պետք է ասեմ, որ Հոգյակը նույնիսկ չտնքաց. նա գիտեր, որ դա իրեն կարող է օգնել:

Արյուն բաց թողնելուց հետո նրա մեջքին մանանեխի սպեղանի, տաք թրջոցներ դրեցին և զանազան դեղեր տվեցին: Ես արդեն անկողնում պառկած չէի, այլ Վիտալիսի ղեկավարությամբ խնամում էի հիվանդին: Խեղճ, փոքրիկ Հոգյակին դուր էր գալիս իմ հոգատարությունը: Նա շնորհակալությամբ ժպտում էր և նայում ինձ իսկական մարդկային աչքերով:

Սովորաբար աշխույժ, անհնազանդ և համառ Հոգյակը, որը սիրում էր միշտ կատակներ անել մեզնից որևէ մեկի հետ, այժմ դարձել էր չափազանց հնազանդ: Թվում էր, թե նա կարեկցանքի կարիք ունի, և պահանջում է դա նույնիսկ Կապիից, որը շատ անգամ էր եղել նրա չարաճճիությունների զոհը: Երես տված երեխայի պես նա ցանկանում էր, որ բոլորս իր մոտ լինենք, և բարկանում էր, եթե մեզնից որևէ մեկը դուրս էր գալիս սենյակից:

Հոգյակի հիվանդությունը՝ թոքերի բորբոքումը, ընթանում էր սովորական ձևով: Շուտով սկսվեց հազը, որը նրան շատ էր տանջում: Ես մի քիչ փող ունեի և որոշեցի նրա համար խանձաշաքար գնել: Բայց օգնելու փոխարեն նրան միայն վնասեցի: Հոգյակը շատ շուտ նկատեց, որ ես նրան խանձաշաքար եմ տալիս այն ժամանակ, երբ սկսում է հազալ, ուստի ցանկանալով ստանալ համեղ դեղը՝ նա սկսեց րոպեն մեկ հազալ:

Զգալով, որ նա խորամանկում է, ես թաքցրի խանձաշաքարը, բայց Հոգյակը չհանգստացավ: Նա սկսեց աղերսագին նայել ինձ, իսկ հետո, տես-

թվայնացրել է 1915.info կայքը

նելով, որ դա չի օգնում, նստեց մահճակալին և սկսեց ուժգին հազալ: Նրա դեմքը կարմրատակեց, ճակատի երակները փքվեցին, աչքերից արցունքներ հոսեցին, և բանը վերջացավ նրանով, որ նա իսկապես սկսեց շնչահեղձ լինել:

Վիտալիսը երբեք ինձ մասնակից չէր դարձնում իր պլաններին, բայց հիմա հարկ համարեց խախտել այդ սովորությունը:

Մի առավոտ նա ինձ հաղորդեց, որ հյուրանոցի տերը պահանջում է անմիջապես վճարել ամբողջ վարձը:

Վիտալիսն այդ դժվարին դրությունից դուրս գալու մի ելք էր տեսնում միայն. հենց նույն երեկոյան ներկայացում տալ: Բայց ինչպես կազմակերպել ներկայացումն առանց Զերբինոյի, Դոլչեի և Հոգյակի: Համենայն դեպս, ինչ գնով էլ լիներ, պետք էր փրկել Հոգյակին: Բժշկի վարձը, դեղորայքը, վառելափայտը, սենյակի վարձը. այդ բոլորի համար պետք էր ոչ պակաս, քան քառասուն ֆրանկ:

Հավաքել քառասուն ֆրանկ այսպիսի մի գյուղում, այսպիսի սառնամանիքին, այն էլ մեր սուղ հնարավորություններով, իսկապես հրաշք կլիներ:

Բայց Վիտալիսն առանց երկար մտածելու իսկույն գործի անցավ: Մինչ ես նստած էի հիվանդի մոտ, նա գտավ մի ընդարձակ սենյակ, քանի որ ձմեռ օրով բացօթյա ներկայացում կազմակերպելն անհնարին էր: Նա նկարեց և փակցրեց ազդեր, մի քանի տախտակից բեմ պատրաստեց, իր վերջին դրամը տվեց մոմի, և որպեսզի լույսը շատ լինի, մոմերը կիսեց:

Սենյակի լուսամուտից տեսնում էի՝ նա ինչպես մի քանի անգամ հետ ու առաջ գնաց հյուրանոցի մոտ: Ես հարցնում էի ինքս ինձ, թե ինչպիսին է լինելու այդ ներկայացման ծրագիրը:

Բայց շուտով այդ իմացա, որովհետև գյուղի թմբկահարը կանգնեց հյուրանոցի մոտ և որոտալից թմբկահարությունից հետո հայտարարեց առաջիկա ներկայացման մասին: Վիտալիսը չէր խնայել ամենաանհավանական խոստումները. հիշվում էր աշխարհահռչակ դերասանը, որը Կապին էր, և «տաղանդավոր, երիտասարդ երգիչը», այսինքն՝ ես:

Լսելով թմբուկի ձայնը՝ Կապին ուրախ–ուրախ հաչեց, իսկ Հոգյակը չնայած այդ րոպեին իրեն շատ վատ էր զգում, նույնիսկ բարձրացավ տեղից: Անկասկած, երկուսն էլ հասկացան, որ բեմադրություն է նախապատրաստվում:

Հոգյակը ցանկանում էր վեր կենալ, և ստիպված էի ուժով պահել նրան: Ես հասկացա՝ մեզ համար շատ դժվար կլինի ստիպել Հոգյակին, որ հրաժարվեր ներկայացմանը մասնակցելու մտադրությունից, և որ ստիպված կլինենք գնալ նրանից գաղտնի:

թվայնացրել է 1915.info կայքը

Դժբախտաբար, Վիտալիսն այդ չգիտեր և հյուրանոց վերադառնալով՝ իսկույն կարգադրեց պատրաստել տավիղը և այն ամենը, ինչ անհրաժեշտ էր ներկայացման համար:

Լսելով իրեն լավ ծանոթ բառերը՝ Հոգյակը սկսեց աղաչել, որ իրեն էլ տանենք մեզ հետ: Եթե նա խոսել իմանար, ապա հազիվ թե ավելի լավ արտահայտեր իր ցանկությունը, քան այդ անում էր դիմախաղով, շարժումներով ու ծամածռություններով: Նրա աչքերից իսկական արցունքներ էին հոսում, և նա Վիտալիսի ձեռքերը ծածկում էր համբույրներով:

Սրտաճմլիկ էր տեսնել, թե ինչպիսի ճիգ էր գործադրում այդ փոքրիկ, հազիվ շնչող արարածը՝ աշխատելով համոզել մեզ: Բայց կատարել նրա ցանկությունը նշանակում էր անմիջապես մահվան դատապարտել նրան:

Հասավ ժամը, երբ մենք պետք է գնայինք: Ես օջախում կրակ արեցի, մեծ փայտեր դրեցի, որոնք կարող էին երկար ժամանակ վառվել, և վերմակով փաթաթեցի դառնորեն արտասվող խեղճ Հոգյակին:

Մեր սովորական պիեսների մասին խոսք անգամ լինել չէր կարող, և դրա համար մեր բոլոր հույսերը պետք է արդարացնեինք ես ու Կապին: Ինչ գնով էլ լիներ, հարկավոր էր հավաքել քառասուն ֆրանկ:

Քառասուն ֆրանկ: Միթե այդ հնարավոր է:

Վիտալիսն ամեն բան նախօրոք պատրաստել էր, մնում էր միայն վառել մոմերը: Բայց այդպիսի շքեղություն մենք կարող էինք թույլ տալ միայն այն ժամանակ, երբ դահլիճը կլցվեր հանդիսատեսներով, հակառակ դեպքում մեր մոմերը կարող էին վերջանալ ավելի շուտ, քան ներկայացումը:

Կապիին նախապատրաստելով՝ կանգնեցի այան մոտ և հետևում էի, թե ինչպես է հավաքվում ժողովուրդը: Շուտով թմբուկի զարկեր լսվեցին մոտակայքում, և փողոցում խառնաշփոթ աղմուկ լսեցի. մոտ քսան տղա քայլում էին թմբկահարի հետևից՝ ոտքերը գետնին դոփելով: Թմբկահարը, շարունակելով թմբկահարել, կանգ առավ մուտքի մոտ՝ երկու վառ լապտերների միջև, իսկ հանդիսատեսները սկսեցին գրավել իրենց տեղերը՝ սպասելով ներկայացման սկսվելուն:

Դժբախտաբար, հանդիսատեսները շատ դանդաղ էին հավաքվում, չնայած թմբկահարը շարունակում էր մուտքի մոտ ուրախ թմբկահարել: Ճիշտ է, գյուղի բոլոր երեխաները հավաքվել էին, բայց միթե այդ տղաները կարող էին ապահովել մեր քառասուն ֆրանկը: Մեզ հետաքրքրում էին լիքը քսակներով առատաձեռն ու պատկառելի մարդիկ:

Հարգելի ընթերցող, այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը
իր սեփական միջոցներով: Այս և բազմաթիվ այլ գրքեր կարող եք անվճար ներբեռնել մեր կայքից:

թվայնացրել է 1915.info կայքը

Վերջապես Վիտալիսը որոշեց, որ ժամանակն է սկսելու: Դահլիճը դեռ կիսով չափ դատարկ էր, բայց մոմերի պատճառով սպասել այլևս չէինք կարող:

Ես ստիպված եղա առաջինը ելույթ ունենալ: Կատարեցի երկու երգ՝ ինքս ինձ նվագակցելով տավիղով: Ճիշտն ասած, ինձ բաժին հասած ծափահարությունները շատ թույլ էին: Ես երբեք մեծամիտ չեմ եղել, բայց այս անգամ հասարակության սառն ընդունելությունը խիստ վշտացրեց ինձ: Ես այժմ երգում էի ոչ թե հաջողության համար, այլ հանուն խեղճ, հիվանդ Հոգյակի: Ա՛խ, որքան էի ցանկանում հուզել, բորբոքել հանդիսատեսներին, ստիպել, որ նրանք գլուխները կորցնեն, բայց ես տեսնում էի, որ հանդիսատեսները շատ քիչ են հետաքրքրվում ինձնով, և որ նրանք ամենևին էլ համաձայն չեն, որ ես «տաղանդավոր երգիչ եմ»: Կապին ինձնից երջանիկ եղավ. նրան շատ ծափահարեցին և բավականին երկար: Ներկայացումը շարունակվում էր և Կապիի շնորհիվ ավարտվեց «բրավո» բացականչություններով: Եվ ոչ միայն ծափահարում էին, այլև ոտքերով դոփում էին գետինը:

Հասավ վճռական րոպեն: Մինչ ես Վիտալիսի նվագակցությամբ պարում էի իսպանական պարը, Կապին, գավաթն ատամներով բռնած, շրջում էր հասարակության մեջ: Քառասուն ֆրանկ նա կհավաքի արդյոք: Սիրտս անհանգստությունից ճմլվում էր, բայց ես հաճոյաբար ժպտում էի հասարակությանը: Ես այնքան էի հոգնել, որ հազիվ էի շնչում, բայց շարունակում էի պարել, որովհետև պետք է սպասեի, մինչև Կապին վերադառնար: Իսկ Կապին բոլորովին չէր շտապում, և երբ նրան փող չէին տալիս, թաթը խրում էր այն մարդու գրպանը, որը չէր ցանկանում վճարել: Վերջապես նա վերադարձավ, և ես արդեն ուզում էի դադարեցնել պարելը, բայց Վիտալիսը կարգադրեց շարունակել: Ես պարելով մոտեցա Կապիին և տեսա, որ գավաթը կիսով չափ դատարկ է:

Գավաթին նայելով՝ Վիտալիսն էլ ոտքի կանգնեց և դիմեց հասարակությանը.

— Ես կարծում եմ, որ մենք կատարեցինք խոստացած ծրագիրը: Բայց քանի դեռ մոմերը վառվում են, ու եթե հասարակությունը ցանկանա, կարող եմ մի քանի երգ երգել:

Չնայած Վիտալիսն ինձ սովորեցրել էր երգել, բայց ես երբեք չէի լսել, թե նա ինչպես է երգում: Ավելի ճիշտ, նա երբեք չէր երգել այնպես, ինչպես այս երեկո: Այն ժամանակ ես դեռ չէի հասկանում, թե ինչ է իսկական արվեստը: Բայց հիշում եմ, թե ինչպիսի մեծ տպավորություն գործեց ինձ վրա նրա երգը: Ես քաշվել էի բեմի անկյունը և լալիս էի: Արցունքների միջից տեսնում էի

թվայնացրել է 1915.info կայքը

առաջին կարգում նստած երիտասարդ մի տիկնոջ, որն ուժգին ծափահարում էր: Ես առաջ էլ էի նկատել նրան: Նրա հետ մի տղա կար, որը ամբողջ ուժով ծափահարում էր Կապիին: Հավանաբար որդին էր, որովհետև շատ նման էր նրան:

Առաջին ռոմաննսից հետո Կապին կրկին սկսեց փող հավաքել, և ես զարմանքով տեսա, որ տիկինը ոչինչ չդրեց գավաթի մեջ: Երբ Վիտալիսը երգեց վերջին երգը, տիկինը մոտ կանչեց ինձ.

— Ես ուզում եմ խոսել տիրոջդ հետ:

Ինձ մի քիչ զարմացրեց, որ երիտասարդ տիկինը ցանկանում է ինչ–որ բան ասել Վիտալիսին: Ավելի լավ կլիներ, եթե նա մի քիչ փող դներ գավաթը: Բայց և այնպես ես նրա խնդրանքը հաղորդեցի Վիտալիսին: Այդ ժամանակ Կապին վերադարձավ: Երկրորդ անգամ նա ավելի քիչ փող էր հավաքել, քան առաջին:

— Ինչ է ուզում ինձնից այդ տիկինը,— հարցրեց Վիտալիսը:

— Նա ուզում է Ձեզ հետ խոսել:

— Ես նրա հետ խոսելիք չունեմ:

— Նա ոչինչ չտվեց Կապիին, գուցե հիմա որևէ բան կտա:

— Այդ դեպքում Կապին պետք է գնա նրա մոտ, և ոչ թե ես:

Բայց նա համենայն դեպս գնաց՝ հետը տանելով Կապիին:

— Ներեցեք, որ Ձեզ անհանգստացրի, բայց ես դաշնակահարուհի եմ, և այդ է պատճառը, որ ինձ վրա այդպիսի ազդեցություն գործեց Ձեր տաղանդը:

Ինչպես: Վիտալիսը՝ փողոցային երգիչը և կենդանիներ վարժեցնողը, մեծ տաղանդ ունի: Ես զարմանքից քարացա:

— Ինչ տաղանդ կարող է ունենալ ինձ նման ծերունին:

— Մի՛ կարծեք, որ ես խոսում եմ Ձեզ հետ սոսկ հետաքրքրասիրությունից,— շարունակեց տիկինը:

— Իսկ ես պատրաստ եմ բավարարելու Ձեր հետաքրքրասիրությունը: Ձեզ, իհարկե, զարմացրել է, որ կենդանիներ վարժեցնողը երգել գիտի:

— Ես հիացած եմ Ձեր երգով:

— Բայց դա շատ պարզ բացատրություն ունի: Ես միշտ չէ, որ եղել եմ այն, ինչ հիմա եմ... Իմ պատանեկության տարիներին ես... այո՛, ես հայտնի երգչի սպասավոր էի: Թութակի նման նրան նմանվելով՝ սովորեցի մի քանի երգ, որոնք տերս կատարում էր իմ ներկայությամբ: Ահա և բոլորը:

Տիկինը ոչինչ չպատասխանեց, բայց շեշտակի նայեց Վիտալիսին, որը շփոթված տեսքով կանգնած էր նրա դիմաց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ցտեսությո́ւն, պարո́ն,— ասաց նա՝ շեշտելով «պարոն» բառը,— ցտեսությո́ւն, և թո́ւյլ տվեք մի անգամ էլ շնորհակալություն հայտնել Ձեզ այն հաճույքի համար, որը ես ստացա:

Դեպի Կապին թեքվելով՝ նա գավաթի մեջ դրեց ոսկե մի դրամ:

Ես կարծում էի, որ Վիտալիսը ճանապարհ կդնի տիկնոջը մինչև մուտքի դուռը, բայց նա չարեց այդ, իսկ երբ տիկինը հեռացավ, մի քանի հայհոյանք մրմնջաց իտալերենով:

— Բայց չէ՞ որ նա Կապիի գավաթը ոսկե դրամ դրեց,— բացականչեցի ես:

Վիտալիսն ուզում էր հասցնել ծոծրակիս, բայց միտքը փոխեց և ձեռքն իջեցրեց:

— Ոսկե դրա՛մ,— արտասանեց նա՝ կարծես սթափվելով:— Ա՛խ, այո՛, ճիշտ է, ես բոլորովին մոռացել էի Հոգյակին, գնա՛նք նրա մոտ:

Արագ-արագ մեր իրերը հավաքելով՝ վերադարձանք հյուրանոց:

Ես շտապով սենյակ վազեցի: Կրակը չէր մարել, բայց արդեն թուլացել էր: Վառեցի մոմը և սկսեցի փնտրել Հոգյակին՝ զարմանալով, որ նրա ձայնը չի լսվում:

Հոգյակը վերմակի տակ ձգված պառկած էր, և թվում էր, թե քնած է: Ես թեքվեցի դեպի նա և որպեսզի չարթնացնեմ, կամացուկ բռնեցի թաթիկը: Թաթը սառն էր:

Այդ րոպեին սենյակ մտավ Վիտալիսը: Ես շրջվեցի նրա կողմը:

— Հոգյակը բոլորովին սառն է:

Վիտալիսը նույնպես խոնարհվեց Հոգյակի վրա:

— Ավա՛ղ,— բացականչեց նա:— Հոգյակը մեռել է: Սպասելի էր: Գիտես ինչ, Ռեմի, ես հավանաբար ճիշտ չվարվեցի, որ վերցրի քեզ տիկին Միլլիգանից: Կարելի է մտածել, որ ճակատագիրը պատժում է ինձ: Ջերբինոն, Դոլչեն... այսօր էլ Հոգյակը... Եվ սա դեռ վերջը չէ:

Գլուխ 15

ԵՍ ԸՆԿՆՈՒՄ ԵՄ ՓԱՐԻԶ

Փարիզ հասնելու համար մենք պետք է շատ երկար տարածություն անցնեինք ձյունածածկ ճանապարհներով, հյուսիսային սառը քամու ուղեկցությամբ, որը փչում էր ուղիղ մեր դեմքին:

Որքա՜ն տխուր էին այդ անվերջ տեղափոխությունները: Մենք գնում էինք շարքով. Վիտալիսը՝ առջևից, ես՝ նրա հետևից, իսկ Կապին քարշ էր գալիս պոչից:

Ցրտից կապտած, թաց ոտքերով և դատարկ ստամոքսով՝ մենք ժամերով ոչ մի բառ չէինք փոխանակում միմյանց հետ:

Ճանապարհին հանդիպող մարդիկ կանգ էին առնում և նայում մեր հետևից: Նրանց անհասկանալի էր թվում, թե այդ բարձրահասակ ծերունին ուր է տանում տղային ու շանը: Ինձ համար այդ լռությունն անչափ ծանր էր: Ես ուզում էի խոսել, որպեսզի միտքս ցրեմ: Բայց իմ բոլոր հարցերին Վիտալիսը պատասխանում էր կցկտուր և միօրինակ՝ նույնիսկ չշրջվելով իմ կողմը:

Բարեբախտաբար, Կապին ավելի սրտաբացությամբ էր վարվում, և ես հաճախ ձեռքիս վրա զգում էի նրա խոնավ ու տաք լեզվի հպումը: Կարծես թե նա ինձ ցանկանում է ասել. «Այդ ես եմ՝ Կապին՝ քո բարեկամը»: Այդ

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ ես կամացուկ շոյում էի նրան, և թվում էր, որ նա երջանիկ է իմ ուշադրությունից, որքան ես՝ նրա շոյանքից:

Մեզ շրջապատող բնությունը նույնպես տխրալի էր: Ամենուրեք փռված էր ձյունե սպիտակ ծածկոցը, արևը չէր երևում, օրերը մռայլ էին ու ամպամած: Դաշտում և գյուղերում լռություն էր տիրում: Ո՛չ ձիու խրխինջ էր լսվում, ո՛չ եզների բառաչ. միայն ագռավներն էին, որ ծառերի կատարների մերկ ճյուղերին նստած՝ սովից կռկռում էին: Դե, պարզ է, այդպիսի սառնամանիքին մարդիկ նստում են վառարանի մոտ կամ աշխատում փակ շինություններում՝ ախոռում, ամբարներում:

Իսկ մենք քայլում էինք անհարթ, սայթաքուն ճանապարհով, գնում էինք առանց կանգ առնելու՝ հանգստանալով միայն գիշերը՝ քնելով որևէ ախոռում կամ ոչխարների փարախում: Քնելուց առաջ մի փոքրիկ կտոր հաց էինք ուտում, որը միաժամանակ և՛ մեր ճաշն էր, և՛ ընթրիքը: Մենք երջանիկ էինք զգում մեզ, երբ հաջողվում էր քնել փարախում, որովհետև ոչխարների ջերմությունը մեզ էլ էր տաքացնում: Երբեմն հովիվներն ինձ հյուրասիրում էին ոչխարի կաթով, և առավոտյան ես ինձ զգում էի ավելի ամուր ու առողջ:

Հետևում թողած կիլոմետրերը գնալով աճում էին. մենք մոտենում էինք Փարիզին: Դա զգացվում էր և՛ աշխույժ երթևեկությունից, և՛ ճանապարհի կեղտոտ ձյունից, որն այնքան քիչ էր նման Շամպանիի հարթավայրերի ձյանը: Պարզ էր, որ մենք մոտենում ենք մեծ քաղաքի:

Բայց տարօրինակ է. շրջակայքն ավելի գեղեցիկ չէր դառնում. ծառերն այնպիսին էին, ինչպես ամենուրեք:

Շատ լսած լինելով Փարիզի հրաշքների մասին՝ սպասում էի, որ տեսնելու եմ ինչ–որ արտակարգ մի բան… ոսկե ծառեր, մարմարյա հրաշալի պալատներ, փողոցներ և մետաքսյա շքեղ զգեստներ հագած բնակիչներ:

Մեր ներկա աղքատիկ վիճակով ինչպե՞ս պետք է ապրենք Փարիզի պես քաղաքում: Ես սիրտ չէի անում այդ մասին հարցնել Վիտալիսին, որովհետև նա մռայլ էր ու լուռ:

Բայց մի անգամ նա ինքը սկսեց խոսել ինձ հետ: Առավոտ էր. մենք բարձրացանք մեծ բլուրը և հեռվում տեսանք ծխի սև ամպեր, որոնք փռվել էին մեծ քաղաքի վրա:

Ես լայն բացեցի աչքերս՝ աշխատելով որևէ բան տեսնել, բայց ոչինչ չտեսա՝ բացի անհամար տանիքներից, զանգակատներից և մառախուղի ու թանձր ծխի մեջ կորած աշտարակներից:

Վիտալիսը մոտեցավ ինձ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այսպես, ուրեմն սկսվում է նոր կյանք,— արտասանեց նա, կարծես թե շարունակելիս լիներ սկսված խոսակցությունը,— չորս ժամից մենք կլինենք Փարիզում:

— Ուրեմն այնտեղ՝ հեռվում, Փարիզն է:

— Այո՛, և Փարիզում մենք ստիպված կլինենք բաժանվել:

Աչքերս մթնեցին: Վիտալիսը նայեց ինձ և իմ գունատ դեմքից ու դողացող շուրթերից հասկացավ, թե ինչ է կատարվում ինձ հետ:

— Ես տեսնում եմ, որ դու շատ վախեցար ու վշտացար:

— Բաժանվել Զեզնից,— բացականչեցի ես, երբ մի քիչ ուշքի եկա:

— Խեղճ տղա:

Այդ բառերը, մանավանդ ձայնը, որով դրանք արտասանվեցին, արցունքով լցրին աչքերս: Ես վաղուց ի վեր ոչ մի փաղաքշական բառ չէի լսել:

— Որքա՜ն բարի եք Դուք:

— Ո՛չ, այդ դու ես լավ ու բարի, դու խիզախ սիրտ ունես: Գիտես, լինում են րոպեներ, երբ այդպիսի զգացմունքները հատուկ արժեք են ստանում և չափազանց հուզում: Եթե ամեն բան լավ է, գնում ես քո ճանապարհով ու չես մտածում կողքիդ մարդկանց մասին, բայց երբ վատ վիճակում ես, երբ բախտը չի ժպտում, երբ ծեր ես ու ապագա չունես, այդ ժամանակ կարիք ես զգում հենվել նրանց, ովքեր կողքիդ են, և երջանիկ ես զգում, որ մենակ չես: Այդ քեզ տարօրինակ է թվում: Բայց դա ճիշտ է:



թվայնացրել է 1915.info կայքը

Միայն շատ ժամանակ անց, ինչպես հարկն է, ես զգացի ու հասկացա նրա բառերի ճշմարտացի լինելը:

— Ինձ համար ծանր է,— շարունակեց Վիտալիսը,— որ ստիպված ենք բաժանվել հենց այն ժամանակ, երբ դու, Ռեմի, առանձնապես կարիք ունես մտերիմ մարդու:

— Բայց,— նկատեցի ես,— միթե Դուք պատրաստվում եք թողնելու ինձ Փարիզում:

— Ո՛չ, իհարկե: Ինչ պետք է անես Փարիզում մենակ, իմ խեղճ տղա: Եվ բացի այդ՝ ես իրավունք չունեմ քեզ լքելու, հիշի՛ր այդ: Այն օրը, երբ վերցրի քեզ տիկին Միլլիգանից, ես պարտավորություն ստանձնեցի դաստիարակելու քեզ: Հակառակի պես իրադարձություններն իմ դեմ շրջվեցին: Ներկայումս ոչինչ չեմ կարող տալ քեզ. ահա թե ինչու ստիպված ենք բաժանվել: Ոչ ընդմիշտ, իհարկե, այլ որոշ ժամանակով, մինչև ձմռան վերջը: Մեզ մնացել է միայն Կապին. մենք Փարիզում ոչինչ չենք կարող վաստակել:

Իր անունը լսելով՝ Կապին մոտ վազեց:

Վիտալիսը քնքշորեն շոյեց նրան:

— Դու էլ ես բարի, շնի՛կս: Բայց աշխարհում միայն բարությամբ ապրել չես կարող: Դա անհրաժեշտ է շրջապատիդ մարդկանց երջանիկ դարձնելու համար միայն, բայց բարությունից բացի՝ հարկավոր է և մի այլ բան, որը մենք չունենք: Դու հասկանո՞ւմ ես, որ մենք հիմա ներկայացումներ տալ չենք կարող:

— Իհա՛րկե հասկանում եմ:

— Փարիզի տղաները կծաղրեն մեզ, խնձորի մնացորդներ կշպրտեն մեզ վրա: Օրվա ընթացքում քսան սու նույնիսկ չենք հավաքի: Իսկ քսան սուով անհնարին է երեքով ապրել: Ցուրտ, անձրևային կամ ձյունոտ եղանակին մենք ավելի քիչ փող կվաստակենք:

— Ես տավիղ կնվագեմ:

— Եթե քեզ նման մի տղա էլ ունենայի, այդ դեպքում գուցե գործը առաջ գնար: Կամ եթե ավելի ծեր լինեի ու կույր... բայց, դժբախտաբար, դեռևս այդքան ծեր չեմ: Փարիզում, որպեսզի քեզ կարեկցեն, պետք է շատ խղճուկ տեսք ունենաս, բացի այդ՝ պետք է ամեն ինչ մի կողմ դնել ու ողորմություն խնդրել, իսկ ես երբեք չեմ կարող այդ անել: Պետք է այլ ելք փնտրել: Ահա՛, թե ինչ եմ մտածել ու որոշել: Ես քեզ կտամ մի պադրոնեի[6], և դու, տավիղ նվագելով, փող կվաստակես ու այդպես կգլորես ձմեռը: Իսկ ես կսկսեմ երաժշտու-

---

6 Պադրոնե (իտալերեն) — տեր:

թվայնացրել է 1915.info կայքը

թյան դասեր տալ: Փարիզում ինձ ճանաչում են. ես այնտեղ երկար եմ ապրել և շատ դասեր կունենամ: Այսպիսով՝ ամեն մեկս առանձին–առանձին կկարողանանք մի կերպ անցկացնել ձմեռը: Միաժամանակ Ջերբինոյի և Դոլչեի փոխարեն ես կզբաղվեմ նոր շներ վարժեցնելով: Գարնանը, երբ ես նրանց կվարժեցնեմ, մենք կրկին կվերսկսենք մեր ճամփորդությունները և այլևս չենք բաժանվի: Ճակատագիրը երկար ժամանակ երես չի թեքում նրանցից, ովքեր քաջություն ունեն պայքարելու նրա դեմ: Ես քեզնից ահա պահանջում եմ այդ քաջությունն ու հնազանդությունը: Գարնանը մենք կրկին կսկսենք ազատ կյանք վարել, դու կտեսնես Գերմանիան, Անգլիան: Դու արդեն մեծացել ես: Ես շատ բաներ կսովորեցնեմ քեզ և իսկական մարդ կդարձնեմ: Տղա՛ս, այ կտեսնես, որ ամեն բան դեռ կորած չէ:

Հավանաբար, դա իսկապես որ միակ ելքն էր: Այժմ մտաբերելով մեր վիճակը՝ տեսնում եմ, որ Վիտալիսն արեց ամեն բան, ինչ հնարավոր էր, որ ելք գտնի ստեղծված դժվարին դրությունից դուրս գալու համար: Բայց այն ժամանակ Վիտալիսից բաժանվելը և նոր պադրոնե ունենալու միտքը ցնցել էր ինձ:

Գյուղերում ու քաղաքներում ճամփորդելու ժամանակ շատ էի հանդիպել այդ պադրոնեներին, որոնք երեխաներ էին վերցնում դաստիարակելու և

բռունցքի հարվածներ էին ուտեցնում նրանց: Կոպիտ, մանրախնդիր, արբեցող, հայհոյանքն ու անեծքը շրթունքներին և միշտ պատրաստ հարվածելու՝ նրանք ամենևին նման չէին Վիտալիսին: Ես կարող էի ընկնել այդպիսի սարսափելի մի պադրոնեի ձեռք: Եթե նույնիսկ բախտը ժպտա ինձ, և ես լավ տեր ունենամ, ապա այդ էլ մի նոր փոփոխություն է իմ կյանքում: Բարբերեն մայրիկից հետո՝ Վիտալիսը, իսկ հիմա էլ՝ ինչ–որ նոր մարդ: Մեր համատեղ կյանքի ընթացքում ես կապվել էի Վիտալիսին, ինչպես հարազատ հորս:

Շատ, անչափ շատ էի ուզում առարկել Վիտալիսին, բառերը պատրաստ էին դուրս թռչելու շուրթերիցս, բայց ես լռում էի: Տերս պահանջում էր ինձնից քաջություն և հնազանդություն: Որոշեցի հնազանդվել և չառարկել, որ չավելացնեմ նրա վիշտը:

Շուտով մենք մոտեցանք մի գետի և անցանք այնպիսի կեղտոտ կամուրջով, որի նմանը ես դեռ երբեք կյանքումս չէի տեսել: Ծեծված ածխի պես սև ձյունը փխրուն շերտով սփռվել էր ճանապարհին, և ոտքերս մինչև կոճերը խրվում էին այդ ցեխի մեջ:

Կամրջի մյուս կողմում նեղ փողոցներով մի գյուղ կար, որից հետո կրկին տարածվեցին դաշտերը, որտեղ կային աղքատիկ անշուք տնակներ:

Ճանապարհով անդադար անցնում էին կառքեր ու սայլեր: Ես հավասարվեցի Վիտալիսին և քայլում էի նրա աջ կողմով: Կապին վազում էր հետևից: Շուտով գյուղական վայրերը վերջացան, և մենք հայտնվեցինք մի փողոցում, որի ծայրը չէր երևում: Փողոցի երկու կողմում աղքատիկ և կեղտոտ տներ էին: Որոշ տեղերում՝ ձյան կույտերի վրա թափված էին հոտած բանջարեղեն, մոխիր ու աղբ: Անտանելի գարշահոտություն էր փչում: Գունատ դեմքերով երեխաները խաղում էին տների առաջ: Անվերջ անցնում էին ծանր կառքերը, որոնցից երեխաները ճարպկորեն խույս էին տալիս:

— Որտե՞ղ ենք մենք,— հարցրի ես Վիտալիսին:

— Փարիզում, տղա՛ս:

Մի՞թե սա Փարիզն է: Իսկ ո՛ւր են մարմարյա պալատները: Ո՞ւր են մետաքս հագած անցորդները: Որքան էր տարբերվում շրջապատող իրականությունը իմ մանկական վառ երևակայության ստեղծած պատկերից: Մի՞թե սա այն Փարիզն է, որտեղ ես անհոգորեն փափագում էի ընկնել: Եվ այստեղ ես ստիպված եմ ապրել ամբողջ ձմեռ՝ առանց Վիտալիսի ու առանց Կապիի:



Գլուխ 16

ԳԱՐԱՖՈԼԻՆ

Քանի մենք առաջ էինք շարժվում, այնքան հուսախաբությունն ավելի էր համակում ինձ: Կեղտաջրի առուները ծածկված էին սառույցով, ցեխախառն ձյունը գնալով ավելի ու ավելի սև էր դառնում: Այդ ցեխի շիթերը դուրս էին ցայտում կառքերի անիվների տակից և թռչում դեպի անցորդները, ցուցանակներն ու տների լուսամուտները, որտեղ պատսպարվել էին խղճուկ կրպակները:

Մի բավականին լայն փողոցով երկար քայլելուց հետո Վիտալիսը թեքվեց դեպի աջ, և մենք հայտնվեցինք աղքատիկ մի թաղամասում: Բարձր ու սև տները կարծես վերևում ձուլվում էին միմյանց. փողոցի միջով հոսում էր կեղտոտ, գարշահոտ ջուրը, բայց դրա վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում. թաց մայթում բազմաթիվ մարդիկ էին խռնված: Ոչ մի տեղ ես չեմ տեսել այդպիսի գունատ դեմքեր, ոչ մի տեղ չեմ հանդիպել այդպիսի հանդուգն ու սանձարձակ երեխաների, ինչպիսին անցորդների միջև վխտացող երեխաներն էին: Բազմաթիվ գինետներում տղամարդիկ ու կանայք, անագե վաճառասեղանների առաջ կանգնած, խմում էին և բարձրաձայն երգում: Անկյունում կարդացի փողոցի անունը՝ Դե–Լուրսին:

թվայնացրել է 1915.info կայքը

Թվում էր՝ Վիտալիսը լավ գիտեր, թե ուր էր գնում: Նա զգուշորեն անցնում էր բազմության միջով, որը խմբված էր ճանապարհին: Ես կրնկակոխ գնում էի նրա հետևից և ավելի ապահով լինելու համար բռնել էի նրա բաճկոնի փեշը:

Անցնելով բակը՝ մենք հայտնվեցինք ինչ–որ մոայլ մի փոսում, որտեղ հավանաբար երբեք արև չէր թափանցում: Ավելի վատթար ու զզվելի տեղ, քան դա, երբեք կյանքումս չէի տեսել:

— Գարաֆոլին տա՞նն է,— հարցրեց Վիտալիսը ինչ–որ մի մարդու, որը, լապտերը ձեռքին, պատին փալասներ էր փռում:

— Ես ի՞նչ գիտեմ: Գնացե՛ք և ինքնե՛րդ տեսեք: Նրա դուռն ամենավերևումն է՝ աստիճանների դիմաց:

— Գարաֆոլին այն պադրոնեն է, որի մասին ես քեզ ասում էի,— բացատրեց ինձ Վիտալիսը՝ բարձրանալով աստիճաններով, որոնք այնքան սայթաքուն էին ու կեղտոտ, որ կարծես փորված լինեին խոնավ հողի մեջ:— Նա այստեղ է ապրում:

Փողոցը, տունն ու աստիճանները արդեն զզվանք էին ներշնչում: Իսկ ինչպիսի՞ն կլինի տերը:

Բարձրանալով չորրորդ հարկը՝ Վիտալիսը առանց բախելու բացեց դուռը, և մենք հայտնվեցինք մի մեծ սենյակում, որը նման էր ընդարձակ ձեղնատան: Սենյակի միջին մասը դատարկ էր, իսկ պատերի երկայնքով դրված էին տասներկու մահճակալ: Առաստաղն ու պատերը, որ մի ժամանակ սպիտակ էին, հիմա ծխից, փոշուց ու կեղտից շատ անորոշ գույն էին ստացել, ծեփը որոշ տեղերում թափվել էր: Պատերից մեկի վրա՝ ածխով նկարված դիմանկարի կողքին, ծաղիկներ ու թռչուններ էին պատկերված:

— Գարաֆոլի՛, Դուք տա՞նն եք,— հարցրեց Վիտալիսը՝ ներս մտնելով,— ես ոչ ոքի չեմ տեսնում: Պատասխանե՛ք, խնդրեմ, Ձեզ հետ խոսում է Վիտալիսը:

Պատին կախված աղոտ լամպով լուսավորված սենյակը դատարկ էր թվում, բայց տիրոջս խոսքերին արձագանքեց մանկական մի թույլ ձայն:

— Սինյոր Գարաֆոլին տանը չէ. նա կվերադառնա երկու ժամից:

Մեզ մոտեցավ մոտ տասը տարեկան մի տղա: Նա հազիվ էր քարշ գալիս, և ինձ այնքան զարմացրեց նրա տարօրինակ տեսքը, որ նույնիսկ հիմա, երբ այսքան տարիներ են անցել, կանգնած է աչքիս առջև: Թվում էր, թե նա իրան չուներ, իսկ անչափ մեծ գլուխը ուղղակի նստած էր ոտքերի վրա, ինչպես հաճախ պատկերում են ծաղրանկարներում: Նրա դեմքին խոր թախիծ և հեզություն կար: Զգացվում էր, որ նա հնազանդվել էր իր ճակատագրին:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա տգեղ էր, բայց մեծ, հեզահամբույր աչքերը և արտահայտիչ շուրթերը ինչ–որ առանձնահատուկ հմայք ունեին:

— Դու վստա՞հ ես, որ տերդ երկու ժամից կվերադառնա,— հարցրեց Վիտալիսը:

— Լիովին վստահ եմ, սինյո՛ր: Այդ ժամին մենք ճաշում ենք, և ճաշը ինքն է բաժանում:

— Եթե նա ավելի շուտ վերադառնա, ասա՛, որ Վիտալիսը երկու ժամ հետո կգա այստեղ:

— Երկու ժամ հետո՞: Լա՛վ, սինյո՛ր:

Ես ուզում էի գնալ Վիտալիսի հետևից, բայց նա արգելեց ինձ:

— Մնա՛ այստեղ մինչ իմ վերադարձը, գոնե մի քիչ կհանգստանաս:

Տեսնելով, որ ես վախեցա՝ նա ավելացրեց.

— Մի՛ անհանգստացիր, ես կվերադառնամ:

Երբ Վիտալիսի ծանր քայլերի ձայնը աստիճաններին լռեց, տղան շրջվեց իմ կողմը:

— Դու մեր երկրի՞ց ես,— հարցրեց նա ինձ իտալերեն:

Վիտալիսի հետ ապրելով՝ ես այնքան լավ էի սովորել իտալերեն, որ ազատ հասկանում էի ամեն բան, չնայած ինքս իտալերեն չէի խոսում:

— Ո՛չ,— պատասխանեցի ես ֆրանսերեն:

— Ա՛խ, շա՛տ ափսոս,— ասաց նա՝ իր մեծ աչքերով տխուր նայելով ինձ,— ես կուզենայի, որ դու մեր երկրից լինեիր:

— Ո՞ր երկրից:

— Լուկայից[7]: Այդ դեպքում դու ինձ որևէ նորություն կհաղորդեիր:

— Ես ֆրանսիացի եմ:

— Ավելի լավ:

— Մի՞թե դու ֆրանսիացիներին ավելի ես սիրում, քան իտալացիներին:

— Ո՛չ: Ես ասում եմ, որ այդ քեզ համար ավելի լավ է, որովհետև իտալացին կգար այստեղ հավանաբար նրա համար, որ ծառայի սինյոր Գարաֆոլիին, իսկ այդ այնքան էլ նախանձելի վիճակ չէ:

— Մի՞թե սինյոր Գարաֆոլին այդքան չարն է:

Տղան ոչինչ չպատասխանեց, բայց նրա հայացքը բառերից էլ պերճախոս էր: Հետո, կարծես չցանկանալով շարունակել այդ խոսակցությունը, մեջքով շրջվելով դեպի ինձ, գնաց դեպի մեծ վառարանը, որը սենյակի ծայրում էր: Վառարանում թեժ կրակ էր վառվում, իսկ կրակին դրված էր թուջե

---

[7] Լուկա — քաղաք Իտալիայում:

թվայնացրել է 1915.info կայքը

մեծ կաթսա: Ցանկանալով տաքանալ՝ ես մոտեցա վառարանին և նկատեցի, որ այդ կաթսան ինչ–որ յուրահատուկ կաթսա էր: Դա ուներ նեղ խողովակ, որի միջից գոլորշի էր դուրս գալիս, իսկ կափարիչը մի կողմից քիփ ամրացված էր կաթսային, իսկ մյուս կողմից կողպված էր:

Ես արդեն հասկացել էի, որ կարիք չկա անհամեստ հարցեր տալու Գարաֆոլիի մասին, բայց կաթսայի մասին հարցնել կարելի էր:

— Ինչո՞ւ է կաթսան կողպված:

— Որպեսզի չկարողանամ ինձ համար ապուր լցնել:

Ես չկարողացա զսպել ժպիտս:

— Քեզ համար, իհարկե, ծիծաղելի է,— տխրությամբ շարունակեց նա:— Դու, հավանաբար, մտածում ես, որ ես երևի սարսափելի շատակերն եմ: Ո՛չ, ես ուղղակի սոված եմ և ապուրի բուրմունքից ավելի եմ սովածանում:

— Մի՞թե սինյոր Գարաֆոլին սովամահ է անում ձեզ:

— Եթե դու աշխատես նրա մոտ, ապա կիմանաս, որ այստեղ սովից չեն մեռնում, բայց չարաչար տանջվում են, իսկ ամենից շատ ես եմ տանջվում, որովհետև այդպիսին է իմ պատիժը:

— Պատի՞ժը: Մեռնել սովից:

— Այո՛, այդ մասին ես կարող եմ պատմել: Եթե Գարաֆոլին դառնա քո տերը, դա կարող է քեզ պետք գալ... Սինյոր Գարաֆոլին իմ քեռին է, նա ինձ վերցրել է՝ ողորմածությունից դրդված: Պետք է ասեմ, որ իմ մայրը այրի է և շատ աղքատ: Երբ անցյալ տարի Գարաֆոլին եկավ մեր գյուղը՝ երեխաներ հավաքելու, նա առաջարկեց մորս ինձ տանել իր հետ: Մայրիկիս համար շատ դժվար էր բաժանվել ինձնից: Բայց ի՞նչ արած, եթե այդ անհրաժեշտ էր: Իսկ այդ անհրաժեշտ էր, որովհետև մայրիկս վեց երեխա ուներ, և ես ամենամեծն էի: Գարաֆոլին կգերադասեր վերցնել եղբորս՝ Լեոնարդոյին, որովհետև Լեոնարդոն շատ գեղեցիկ է, իսկ ես՝ այլանդակ: Գեղեցիկ մարդու համար ավելի հեշտ է փող վաստակելը, բայց մայրս չցանկացավ տալ Լեոնարդոյին: «Մեծը Մատտիան է, թող նա էլ գնա»,— որոշեց նա: Եվ ահա ես եկա քեռի Գարաֆոլիի հետ: Պատկերացնում ես, թե որքան ծանր էր ինձ համար թողնել տունը, լացող մորս և մանավանդ փոքրիկ քրոջս՝ Քրիստինային, որը շատ էր սիրում ինձ: Բացի այդ՝ ես ցավում էի, որ պետք է բաժանվեմ եղբայրներիցս, ընկերներիցս և հարազատ գյուղից:

Ես շատ լավ գիտեի, թե որքան ծանր է բաժանվել սիրելի տնից, և մինչև հիմա չէի մոռացել, թե ինչպես ճմլվեց սիրտս, երբ վերջին անգամ տեսա Բարբերեն մայրիկի սպիտակ գլխաշորը:

թվայնացրել է 1915.info կայքը

Փոքրիկ Մատտիան շարունակեց իր պատմությունը:

— Երբ մենք մեկնում էինք, ինձնից բացի ոչ ոք չկար Գարաֆոլիի մոտ, բայց ութ օր հետո դարձանք տասներկու հոգի, և բոլորս էլ եկանք Ֆրանսիա: Ա՛խ, որքան երկար ու տխուր թվաց ինձ և իմ ընկերներին այս ճանապարհը: Ի վերջո, մենք հասանք Փարիզ: Այստեղ մեզ տեսակավորեցին. ովքեր ավելի ամրակազմ էին, դարձրին վառարանագործներ և ծխնելույզ մաքրողներ, իսկ թույլերին ստիպեցին նվագել ու երգել փողոցներում: Պարզվեց, որ ես բավականաչափ ուժեղ չեմ, որ աշխատեմ, և ոչ էլ այնքան գեղեցիկ, որ հույս ունենամ, թե կիթառ նվագելով՝ լավ կվաստակեմ: Դրա համար Գարաֆոլին ինձ երկու սպիտակ մուկ տվեց, որոնք ես պետք է ցույց տայի դարպասատակերում, և հայտարարեց, որ ամեն օր տուն պետք է բերեմ ոչ պակաս, քան 30 սու: «Որքան սու դրանից պակաս բերես,— ավելացրեց նա,— այդքան մահակի հարված կստանաս երեկոյան»: Երեսուն սու հավաքելը շատ դժվար է, բայց մահակի հարվածներին դիմանալը՝ ավելի դժվար, մանավանդ, երբ ծեծում է Գարաֆոլին: Ես անում էի ամեն բան, ինչ կարող էի, որ հավաքեմ պահանջված գումարը: Չգիտեմ՝ ինչու, բայց իմ ընկերներն ինձնից ավելի երջանիկ էին: Դա զայրացնում էր Գարաֆոլիին: «Ինչ ապուշն է այդ Մատտիան»,— ասում էր նա: Վերջապես տեսնելով, որ ծեծից բան դուրս չի գալիս, Գարաֆոլին այլ միջոց հորինեց. «Ամեն մի պակասող սուի փոխարեն ես քո ընթրիքից մի կարտոֆիլ կպահեմ,— հայտարարեց նա:— Հուսով եմ, որ ստամոքսդ ավելի զգայուն կլինի, քան մաշկդ: Այդպիսի սովահարությունից մեկ թե մեկուկես ամիս անց ես կարգին նիհարեցի: Գունատվեցի, այնքան գունատվեցի, որ հաճախ լսում էի, թե ինչպես են իմ մասին ասում. «Ահա մի երեխա, որը մեռնում է սովից»: Մեր թաղամասում ինձ սկսեցին խղճալ, և հաճախ ես ստանում էի մի կտոր հաց կամ մի ափսե ապուր: Ինձ համար դրանք լավ օրեր էին: Գարաֆոլին այլևս չէր ծեծում ինձ, իսկ երբ ընթրիքի ժամանակ զրկում էր կարտոֆիլից, ես շատ էլ չէի վշտանում, որովհետև արդեն որոշ բան կերել էի ճաշին: Բայց մի անգամ Գարաֆոլին տեսավ, որ մրգավաճառ մի կին ինձ ապուր է տալիս, և հասկացավ, թե ինչու ես չէի գանգատվում սովից: Այդ ժամանակ նա որոշեց այլևս ինձ փողոց չթողնել, այլ ստիպում էր ապուր եփել և կարգի բերել սենյակը: Բայց որպեսզի ապուրը պատրաստելիս ես համը չտեսնեմ, նա առավոտյան՝ նախքան տնից դուրս գալը, կաթսայի մեջ է դնում տավարի միս ու բանջարեղեն, իսկ հետո կողպում է կափարիչը: Ես պետք է հետևեմ, որ ապուրը եփվի: Նեղ խողովակից ապուր լցնելն անհնարին է: Այն օրից, ինչ աշխատում եմ խոհանոցում,

թվայնացրել է 1915.info կայքը

ինձ շատ վատ եմ զգում: Տաք ապուրի բուրմունքը միայն սաստկացնում է իմ քաղցը: Ասա՛, ես շա՞տ գունատ եմ: Ինձ ոչ ոք ճշմարտությունը չի ասում, իսկ այստեղ հայելի չկա:

Իմանալով, որ չի կարելի վշտացնել հիվանդներին, ասելով, թե նրանք վատ տեսք ունեն, ես պատասխանեցի.

— Ո՛չ, ո՛չ, դու բոլորովին էլ գունատ չես:

— Ճիշտ չես ասում, ուզում ես հանգստացնել ինձ: Բայց իզուր: Ես երջանիկ կլինեմ, եթե իմանամ, որ գունատ եմ ու հիվանդ: Այնքա՜ն եմ ուզում մի լավ հիվանդանալ:

Ես զարմացած նայեցի նրան:

— Քեզ համար դա անհասկանալի՞ է,— հարցրեց նա ժպտալով:— Բայց դա շատ պարզ բան է: Երբ մարդը հիվանդ է, նրան կա՛մ բուժում են, կա՛մ թողնում, որ մեռնի: Եթե ես մեռնեմ, ապա այլևս սովից չեմ տանջվի, ինձ չեն ծեծի: Իսկ եթե որոշեն ինձ բուժել, ապա հիվանդանոց կտանեն, իսկ հիվանդանոց ընկնելն իսկական երջանկություն է:

Ես, ընդհակառակը, շատ էի վախենում հիվանդանոցից, երբ ես մեռնում էի հոգնածությունից, բավական էր միայն մտածել հիվանդանոցի մասին և կրկին ի վիճակի էի շարունակելու ճանապարհս: Դրա համար էլ Մատիայի խոսքերը խիստ զարմացրին ինձ:

— Եթե իմանայիր, թե որքան լավ է հիվանդանոցում,— շարունակեց նա,— ես արդեն մի անգամ եղել եմ: Այնտեղ մի բարձրահասակ բժիշկ կա՝ շեկ մազերով, նրա գրպանում միշտ խանձաշաքար է լինում: Ճիշտ է, կտորտանքն է լինում, որն ավելի էժան է, բայց միևնույնն է, շատ համեղ է: Իսկ հիվանդապահ կանայք խոսում են այնպես քնքուշ. «Այսպես արա՛, փոքրի՛կ»: «Ապա լեզուդ ցո՛ւյց տուր, խղճո՛ւկս»: Ես շատ եմ սիրում, երբ ինձ հետ քնքուշ են խոսում: Մայրիկս էլ էր միշտ քնքուշ խոսում ինձ հետ: Իսկ երբ դու սկսում ես առողջանալ, քեզ տալիս են համեղ մսաջուր և գինի: Հիմա իմ միակ հույսն այն է, որ Գարաֆոլին ինձ հիվանդանոց ուղարկի: Դժբախտաբար, ես դեռ այնքան հիվանդ չեմ, որ այդ խանգարի Գարաֆոլիին, և նա ինձ պահում է տանը: Բայց, իմ բախտից, Գարաֆոլին չի հրաժարվում պատժել իր սիրած սովորությամբ: Ութ օր առաջ նա ամբողջ ուժով փայտով հարվածեց գլխիս: Այս անգամ, կարծում եմ, որ ցանկությունս կկատարվի: Գլուխս ուռել է: Ա՛յ, տեսնում ես՝ ինչ է եղել: Երեկ Գարաֆոլին ասաց. «Հավանաբար ուռուցք է»: Չգիտեմ, թե ինչ է նշանակում «ուռուցք», բայց նրա տոնից հասկացա, որ դա ինչ–որ լուրջ բան է: Համենայն դեպս, ես շատ եմ տանջվում:

թվայնացրել է 1915.info կայքը

Այնպիսի ցավեր եմ զգում, ատամնացավից էլ՝ վատ: Գլուխս ծանր է կաթսայի պես և պտտվում է, սիրտս խառնում է, իսկ գիշերը երազումս տնքում եմ ու գոռում: Հուսով եմ, որ երկու–երեք օր հետո Գարաֆոլին ստիպված կլինի ինձ հիվանդանոց ուղարկել: Իմ տնքոցով ես բոլորին խանգարում եմ քնելու, իսկ Գարաֆոլին չի սիրում, երբ իրեն անհանգստացնում են: Ինչ երջանկություն, որ փայտով ուժեղ խփեց: Դեմ, իսկ հիմա անկեղծորեն ասա՛, ես շա՞տ գունատ եմ:

Նա կանգնեց դիմացս և նայեց ուղիղ աչքերիս: Չնայած ես հիմա լռելու պատճառ չունեի, բայց և այնպես սիրտ չարեցի ճիշտն ասել, որ նրա այրվող մեծ աչքերը, ներս ընկած այտերը և անգույն շրթունքները սարսափելի տպավորություն էին գործում:

— Ես կարծում եմ, որ դու իսկապես հիվանդ ես և պետք է գնաս հիվանդանոց:

— Վերջապե՛ս:

Եվ նա փորձեց շարժել հիվանդ ոտքը: Հետո մոտեցավ սեղանին և սկսեց սրբել այն:

— Հերիք է խոսենք,— հայտարարեց նա:— Գարաֆոլին հիմա կվերադառնա, իսկ ես դեռ ոչ մի բան չեմ արել: Եթե դու կարծում ես, որ հիվանդանոց ընկնելու համար ես բավականաչափ ծեծ կերել եմ, ուրեմն կարիք չկա նորից ծեծվելու:

Նա կաղալով քայլում էր սեղանի շուրջը և շարում ափսեները: Ես հաշվեցի քսան ափսե: Ուրեմն Գարաֆոլիի մոտ քսան երեխա էր ապրում: Բայց տասներկու մահճակալ կար միայն, հավանաբար նրանք քնում էին երկուսով մի մահճակալի վրա: Եվ ինչ մահճակալներ էին: Նրանք սավաններ չունեին, այլ ծածկված էին միայն դեղնած վերմակներով, որոնք երևի գնված էին մի որևէ ախոռից, երբ նրանք այլևս պիտանի չէին եղել ձիերի համար:

— Միթե ամենուրեք այսպես է,— սարսափով հարցրի ես:

— Ինչը ամենուրեք:

— Որ երեխաների հետ վարվեն այսպես վատ և այսպես վատ կերակրեն:

— Չգիտեմ: Ես ուրիշ ոչ մի տեղ չեմ եղել: Միայն թե դու աշխատի՛ր մի այլ տեղ ընկնել:

— Ո՞ւր:

— Միևնույնն է, թե ուր: Կարծում եմ, որ ամեն տեղ ավելի լավ կլինի, քան այստեղ:

թվայնացրել է 1915.info կայքը

«Միևնույնն է, թե ուր»,— դա շատ անորոշ էր, և ինչպես կարող էի ստիպել Վիտալիսին, որ նա փոխեր իր որոշումը:

Մինչ ես մտածում էի այդ մասին, դուռը բացվեց, և ներս մտավ մի տղա: Նա մի ձեռքով բռնել էր ջութակ, իսկ մյուսով՝ բավականին մեծ մի տախտակ, որը հավանաբար գտել էր ինչ–որ շինարարությունում:

— Տո՛ւր ինձ այդ փայտը,— դիմեց Մատտիան ներս եկած տղային:

Բայց վերջինս տախտակն արագ թաքցրեց:

— Ո՛նց չէ:

— Տո՛ւր, ապուրն ավելի համեղ կլինի:

— Ինչ է, դու կարծում ես, որ սա քարշ եմ տվել ապուրի համա՞ր: Այսօր ես չորս սու եմ հավաքել և դրա փոխարեն տախտակը կտամ Գարաֆոլիին:

— Քո փայտի կտորը չի օգնի: Ուզում ես, թե ոչ, բայց ստիպված կլինես պատժվել: Քո հերթն էլ հասավ:

Մատտիան այդ ասաց այնպիսի չարությամբ, կարծես նրան ուրախացնում էր, որ ընկերը պատժվելու է: Ինձ զարմացրեց նրա դեմքին հայտնված դաժան արտահայտությունը:

Հասավ Գարաֆոլիի սաների վերադարձի ժամը: Փայտ բերած տղայից հետո եկավ մի ուրիշը, իսկ հետո՝ էլի տասը երեխա: Ներս մտնելով՝ ամեն մեկն իր գործիքը կախում էր անկողնու գլխավերևում խփած մեխից: Մեկը ջութակ ուներ, մյուսը՝ տավիղ, երրորդը՝ սրինգ կամ շվի: Նա, որը փողոցում առնետներ և ծովախոզուկներ էր ցուցադրում, այժմ վանդակն էր դնում նրանց:

Շուտով աստիճաններին ծանր քայլերի ձայն լսվեց, և ես հասկացա, որ եկողը Գարաֆոլին էր:

Երերուն քայլերով ներս մտավ բորբոքված դեմքով ցածրահասակ մի մարդ: Նրա հագին ոչ թե իտալական կոստյում էր, այլ մոխրագույն սովորական վերարկու:

Նա նախ նայեց ինձ. ես ոտից գլուխ սարսռացի նրա հայացքից:

— Որտեղի՞ց է եկել այս տղան,— հարցրեց նա:

Մատտիան քաղաքավարությամբ հաղորդեց նրան այն, ինչ խնդրել էր Վիտալիսը:

— Ա՛, ուրեմն Վիտալիսը Փարիզո՞ւմ է: Ի՞նչ է ուզում նա ինձնից:

— Չգիտեմ,— պատասխանեց Մատտիան:

— Ես քեզ չեմ հարցնում, այլ այս տղային:

թվայնացրել է 1915.info կայքը

— Վիտալիսը հիմա գալու է: Նա ինքը Ձեզ կբացատրի, թե ինչ է ուզում,— ասացի ես:

— Այս տղան գիտի խոսքերի գինը: Դու իտալացի՞ ես:

— Ո՛չ, ֆրանսիացի եմ:

Հենց որ Գարաֆոլին ներս մտավ, մոտեցան երկու տղա և կանգնեցին նրա մոտ՝ սպասելով, որ նա ավարտեր խոսակցությունը: Հետո մեկը նրա ձեռքից վերցրեց գլխարկը և զգուշորեն դրեց մահճակալին, մյուսը աթոռ տվեց: Նրանց հարգալից վերաբերմունքից հասկացա, թե որքան են սարսափում Գարաֆոլիից, որովհետև նրանք, իհարկե, սիրուց դրդված չէին այդքան ջանքեր թափում:

Երբ Գարաֆոլին նստեց, երրորդ տղան նրան մատուցեց լցված ծխամորճը, իսկ չորրորդը մոտեցրեց վառած լուցկին:

— Լուցկուց ծծմբի հոտ է գալիս, ավանա՛կ,— մռնչաց Գարաֆոլին, երբ տղան լուցկին մոտեցրեց ծխամորճին:

Գարաֆոլին ճանկեց լուցկին և նետեց վառարանը:

Մեղավորը, ցանկանալով ուղղել իր սխալը, նոր լուցկի վառեց և մինչ տիրոջը կառաջարկեր, բավականին պահեց:

Բայց վերջինս չցանկացավ ընդունել նրա ծառայությունը:

— Կորի՛ր, հիմա՛ր,— կոպտությամբ հրեց նա տղային:

Հետո շրջվելով դեպի մյուս տղան՝ սիրալիր ժպիտով ասաց.

— Ռիկարդո՛, բարեկա՛մս, լուցկի՛ տուր ինձ:

«Բարեկամը» շտապեց կատարել նրա խնդիրքը:

— Հիմա,— ասաց Գարաֆոլին՝ վառված ծխամորճը ձեռքին բռնած և հարմար տեղավորվելով,— զբաղվենք մեր հաշիվներով, սիրելի՛ հրեշտակներս: Մա՛տտիա, ո՞ւր է մատյանը:

Նա դեռ չէր պահանջել հաշվեմատյանը, որ Մատտիան արդեն նրա առջև դրեց ոչ մեծ, կեղտոտ մի տետրակ:

Գարաֆոլին նշան արեց այն տղային, որը տվել էր վատ վառված լուցկին:

— Դու երեկ ինձ պարտք մնացիր մի սու և խոստացար վերադարձնել այսօր: Որքա՞ն ես բերել:

Տղան երկար ժամանակ սիրտ չէր անում պատասխանելու. նա կաս–կարմիր կտրեց:

— Ես մի սու պակաս եմ բերել:

— Ինչպե՛ս, դու մի սու պակաս ես բերել և այդ մասին ասում ես ամենայն խաղաղությա՞մբ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես երեկվա սուի մասին չեմ ասում, ես այսօր եմ մի սու պակաս բերել:

— Ուրեմն պակաս է երկու սու: Նման հանդգնություն ես դեռ չեմ տեսել:

— Ազնիվ խոսք, ես մեղավոր չեմ:

— Հերիք է հիմարություններ դուրս տաս, դու գիտես մեր օրենքը: Հանի՛ր բաճկոնդ. երկու հարված կստանաս երեկվա համար, երկուսը՝ այսօրվա: Բացի այդ՝ հանդգնությանդ համար զրկում եմ քեզ կարտոֆիլից... Ռիկարդո՛, բարեկա՛մս, դու այնքան լավ տղա ես, որ լիովին արժանի ես այդ հաճույքը վայելելու: Վերցրո՛ւ գոտին:

Ռիկարդոն այն նույն տղան էր, որը պատրաստակամությամբ Գարաֆոլիին մատուցեց երկրորդ լուցկին: Նա պատից վերցրեց կարճ բռնակով մտրակը, որի ծայրին կախված էին մեծ հանգույցներ ունեցող երկու կաշվե փոկ: Մինչ այդ այն տղան, որը երկու սու պակաս էր բերել, հանեց բաճկոնը և շապիկն իջեցրեց մինչև գոտկատեղը:

— Մի քիչ սպասի՛ր,— զզվելի քմծիծաղով կանգնեցրեց նրան Գարաֆոլին:— Հազիվ թե դու մենակ մնաս, իսկ խմբովին ամեն բան շատ ավելի հաճելի է լինում: Բացի այդ՝ Ռիկարդոն էլ ստիպված չի լինի մի քանի անգամ զբաղվել նույն գործով:

Երեխաները, որոնք լուռ և անշարժ կանգնել էին իրենց տիրոջ դիմաց, այդ դաժան կատակը լսելով՝ ծիծաղեցին ինչ–որ շինծու ծիծաղով:

— Ես վստահ եմ, որ նա, ով ամենից բարձր է ծիծաղում, բոլորից քիչ է բերել: Դե՛հ, ո՛վ էր ամենաբարձր ծիծաղողը,— հարցրեց Գարաֆոլին:

Բոլորը մատնացույց արին այն տղային, որն առաջինն էր վերադարձել և բերել տախտակի կտորը:

— Որքա՞ն է պակասում քեզ:

— Ազնիվ խոսք, ես մեղավոր չեմ...

— Սրանից հետո ով պատասխանի, թե «ազնիվ խոսք, ես մեղավոր չեմ», ստանում է մի հարված ավելի, քան պետք է ստանար: Որքա՞ն է պակասում քեզ:

— Ես տախտակ եմ բերել, մեծ, լավ տախտակ...

— Մեծ բան է: Գնա՛ հացագործի մոտ և հարցրո՛ւ, թե նա տախտակիդ կտորը կփոխանակի՞ հացի հետ: Կտեսնես, որ ոչ: Դե՛հ, որքա՞ն է պակասում: Ասա՛:

— Ես ունեմ երեսունվեց սու:

թվայնացրել է 1915.info կայքը

— Պակասում է չորս սու, սրիկա՛, չորս սու: Եվ գոհ համարձակվել ես երևալ աչքիս: Ռիկարդո՛, բախտդ բերում է, չարաճճի՛, դու մի լավ կզվարճանաս: Հանի՛ր բաճկոնդ:

— Իսկ փայտը, որը ես բերել եմ…

— Թող քե՛զ մնա, ճաշին կուտես:

Մյուս երեխաները ծիծաղեցին նրա հիմար կատակի վրա: Այդ խոսակցության ժամանակ վերադարձան ևս տասը տղա, և բոլորը հերթով մոտենում էին՝ հաշիվ տալու, թե ինչ են վաստակել: Երկու պատժվածներին երեքն էլ ավելացան. նրանք բոլորովին ոչինչ չէին վաստակել:

— Ահա հինգ սրիկաներ, որոնք թալանում ու կողոպտում են ինձ,— գոռաց Գարաֆոլին:— Ահա, թե ինչ է նշանակում բարի մարդ լինել: Եթե դուք չաշխատեք, ինչպե՞ս պետք է վճարեմ հիանալի մսի և համեղ կարտոֆիլի համար, որով կերակրում եմ ձեզ: Բայց դուք ծուլանում եք աշխատել, զզվե՛լինե՛ր, դուք ցանկանում եք զվարճանալ: Դուք պետք է լաց լինեք, որպեսզի մարդիկ ձեզ խղճային, իսկ դուք գերադասում եք ծիծաղել ու խաղալ միմյանց հետ: Հանե՛ք ձեր բաճկոնները:

Ռիկարդոն բռնել էր մտրակը, իսկ հինգ պատժվածները շարվել էին նրա դիմաց:

— Ռիկարդո՛, չէ՞ որ դու գիտես,— դիմեց նրան Գարաֆոլին,— որ այս պատիժները սարսափելի տանջում են սիրտս, և դրա համար ես չեմ սիրում նայել, բայց հիշի՛ր, որ ես ամեն բան լսում եմ և ձայնից կարող եմ իմանալ, թե որքան են ուժեղ քո հարվածները: Ուժդ մի՛ խնայիր, սիրելի՛ս, դու վաստակում ես քո հացը:

Նա շրջվեց դեպի վառարանը՝ ձևացնելով, թե ի վիճակի չէ նայելու այդ ամենին: Բոլորից մոռացված՝ ես կծկված կանգնել էի անկյունում և դողում էի զայրույթից ու վախից: Եվ այդ մարդը պետք է իմ տերը լինի: Եթե ես նրա համար չբերեմ նշանակված երեսուն կամ քառասուն սուն, ես նույնպես ստիպված պիտի լինեմ մեջքս դեմ տալ մտրակի հարվածներին: Հիմա հասկացա, թե ինչու էր Մատտիան այդքան հանգիստ խոսում մահվան մասին և նույնիսկ սպասում դրան՝ որպես փրկության միակ միջոցի:

Երբ տեսա մտրակի հարվածը, արցունքները դուրս ցայտեցին աչքերիցս: Ես կարծում էի, որ իմ մասին մոռացել են, բայց սխալվում էի: Գարաֆոլին ծածուկ հետևում էր ինձ:

— Ահա մի երեխա, որը բարի սիրտ ունի,— ասաց նա՝ մատնացույց անելով ինձ:— Նա նման չէ ձեզ, ավազակնե՛ր, դուք ծիծաղում եք ձեր ընկերների

թվայնացրել է 1915.info կայքը

դժբախտության և իմ վշտի վրա: Եթե նա դառնա ձեր ընկերը, ապա կարող է ձեզ համար օրինակ ծառայել:

Ես ոտքից գլուխ ցնցվեցի «դառնա ձեր ընկերը» բառերից:

Երկրորդ հարվածից հետո աղիողորմ հառաչանք լսվեց, իսկ երրորդից հետո՝ սրտաճմլիկ ճիչ: Գարաֆոլին ձեռքը բարձրացրեց, Ռիկարդոն կանգ առավ: Ես մտածեցի, որ Գարաֆոլին ուզում է ներել նրանց, բայց այդ բոլորովին էլ ներմանը չէր վերաբերում:

— Դու գիտե՞ս, թե որքան են ազդում ջղերիս վրա քո գոռոցները,— քնքշորեն ասաց Գարաֆոլին՝ դիմելով իր զոհին:— Մտրակը ծվատում է քո մաշկը, իսկ աղաղակներդ կտոր–կտոր են անում իմ սիրտը: Զգուշացնում եմ, որ ամեն նոր գոռոցի համար դու կստանաս մի հարված ավելին, և ինքդ կլինես դրա հանցավորը: Մտածի՛ր. չէ՞ որ ես կարող եմ վշտից հիվանդանալ: Եվ եթե դու գոնե մի կաթիլ շնորհակալության կամ կապվածության զգացում ունես իմ հանդեպ, դու չես գոռա: Ռիկարդո՛, սկսի՛ր:

Ռիկարդոն ձեռքը բարձրացրեց, և մտրակը իջավ դժբախտի մեջքին:

— Մայրի՛կ, մայրի՛կ,— լաց եղավ նա:

Բարեբախտաբար, ես այլևս ոչինչ չտեսա, դուռը բացվեց, և ներս մտավ Վիտալիսը:

Մի հայացքով նա հասկացավ, թե ինչ էին նշանակում այդ աղաղակները, որոնք ինքը լսել էր աստիճաններով բարձրանալիս: Նա մոտ վազեց Ռիկարդոյին և խլեց մտրակը:

Հետո արագորեն շրջվելով դեպի Գարաֆոլին՝ ձեռքերը խաչած կանգնեց նրա դիմաց: Այդ ամենն այնքան աննպաստելիորեն կատարվեց, որ Գարաֆոլին քարացավ տեղում: Բայց վայրկենաբար ուշքի գալով՝ նա, քաղցր ժպտալով, ասաց.

— Սարսափելի է, չէ՞: Այդ տղան շա՛տ անսիրտ է:

— Սա խայտառակությո՛ւն է,— բացականչեց Վիտալիսը:

— Ես համաձայն եմ Ձեզ հետ,— ընդհատեց նրան Գարաֆոլին:

— Հերի՛ք է ձևացնեք,— զայրացած շարունակեց Վիտալիսը:— Դուք շատ լավ գիտեք, որ ես այս տղայի մասին չեմ խոսում, այլ Ձեր մասին: Այո՛, ամոթալի ու ստոր բան է տանջել երեխաներին, անպաշտպան երեխաներին:

— Իսկ Ձեր ի՞նչ գործն է, հիմա՛ր ծերուկ,— հարցրեց Գարաֆոլին՝ իսկույն տոնը փոխելով:

— Իհա՛րկե, դա իմ գործը չէ. դա ոստիկանության գործն է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոստիկանության,— բղավեց Գարաֆոլին՝ տեղից վեր կենալով:— Այդ Դո՞ւք եք ինձ սպառնում ոստիկանությամբ:

— Այո՛, ես ինքս,— պատասխանեց տերս՝ ամենևին չվախենալով Գարաֆոլիի կատաղությունից:

— Լսե՛ք, Վիտալի՛ս,— ծաղրաբար նրան դիմեց Գարաֆոլին,— կարիք չկա բարկանալու և ինձ սպառնալու, չէ՞ որ ես էլ որոշ բաներ կարող եմ պատմել, և հազիվ թե դա Ձեզ դուր գա: Իհարկե, ես ոստիկանատուն չեմ գնա, այդ գործերը նրանց չեն վերաբերում: Բայց կան մարդիկ, որոնք Ձեզնով հետաքրքրվում են, և եթե ես նրանց պատմեմ այն, ինչ գիտեմ, եթե ասեմ մի անուն, միայն մի անուն, Դուք կկարմրեք ամոթից:

Տերս ոչինչ չպատասխանեց: Նա պետք է կարմրի ամոթից: Ես ապշած էի: Բայց մինչև ես ուշքի եկա զարմանքից, որն ինձ պատճառել էին այդ խորհրդավոր բառերը, Վիտալիսը բռնեց ձեռքս և քարշ տվեց դեպի դուռը:

— Իսկապես որ, ծերո՛ւկ,— ծիծաղելով ասաց Գարաֆոլին,— կարիք չկա կռվելու: Դուք ուզում էիք խոսել ինձ հետ ինչ–որ բանի մասի՞ն:

— Ես այլևս Ձեզ հետ խոսելիք չունեմ:

Եվ ոչ մի բան չավելացնելով, նույնիսկ հետ չնայելով՝ Վիտալիսը, ձեռքս ամուր բռնած, սկսեց իջնել աստիճաններից: Ինչպիսի՛ ուրախությամբ էի հետևում նրան: Ես ազատվեցի Գարաֆոլիից: Եթե համարձակվեի, կգրկեի Վիտալիսին:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 17

ԺԱՆՏԻԼԻԱՅԻ ՔԱՐՀԱՆՔԸ

Մինչ մենք գնում էինք մարդաշատ փողոցով, Վիտալիսը լուռ էր, իսկ երբ հայտնվեցինք ամայի նրբանցքում, նա նստեց մայթի անկյունաքարին և շփոթված մի քանի անգամ շփեց ճակատը:

— Լավ բան է մեծահոգի լինելը,— ասաց նա՝ կարծես ինքն իրեն դիմելով,— բայց ի՞նչ պետք է անենք, չգիտեմ: Մենք հայտնվեցինք Փարիզի մայթին՝ առանց ոչ մի սու գրպանում ունենալու և դատարկ ստամոքսով: Դու շա՞տ սոված ես:

— Բացի այն փոքրիկ հացի կտորից, որը Դուք տվեցիք այդ առավոտյան, ես ոչինչ չեմ կերել:

— Դե՛հ, ի՞նչ արած, ստիպված կլինենք այսօր չճաշել, միայն թե գիշերելու տեղ գտնենք:

— Դուք հույս ունեիք գիշերելու Գարաֆոլիի մո՞տ:

— Ես մտածում էի, որ դու այնտեղ կմնաս, իսկ ես նրանից կվերցնեմ քսան ֆրանկ և այդպիսով դուրս կգամ այս նեղ դրությունից: Բայց տեսնելով, թե ինչ դաժանությամբ է վարվում նա երեխաների հետ, ես չկարողացա ինձ զսպել: Դու հավանաբար շատ ուրախ ես, որ քեզ Գարաֆոլիի մոտ չթողեցի:

— Դուք շատ բարի եք:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո՛, բանից պարզվում է, որ ծեր թափառաշրջիկի սիրտը դեռ չի քարացել, և դա խախտեց իմ ամբողջ պլանները: Ո՞ւր պետք է գնանք հիմա, չգիտեմ:

Արդեն ուշ էր, սառնամանիքը սաստկանում էր և դառնում անտանելի: Փչում էր հյուսիսային քամին:

Վիտալիսը երկար ժամանակ նստած էր մի անկյունաքարի, իսկ ես և Կապին կանգնել էինք նրա դիմաց՝ նրա որոշմանը սպասելով: Վերջապես Վիտալիսը ոտքի կանգնեց:

— Ո՞ւր պետք է գնանք:

— Ժանտիլյե. կաշխատենք գտնել այն քարհանքը, որտեղ երբեմն գիշերել եմ: Դու շա՛տ ես հոգնել:

— Ո՛չ, ես հանգստացա Գարաֆոլիի մոտ:

— Դժբախտաբար, ես ոչ մի տեղ չեմ հանգստացել և բոլորովին ուժասպառ եմ եղել:

— Պետք է գնանք: Առա՛ջ:

Եվ ահա մենք կրկին գնում ենք Փարիզի փողոցներով: Մութ գիշեր էր, գազալապտերները վատ էին լուսավորում ճանապարհը, որովհետև քամին հանգցնում էր դրանք: Ամեն քայլափոխի մենք սայթաքում ենք սառցակալած մայթին: Վիտալիսը բռնել է ձեռքս, Կապին վազում է հետևից: Ժամանակ առ ժամանակ նա հետ է ընկնում՝ աշխատելով աղբի կույտի մեջ գտնել մի որևէ ոսկոր կամ հացի կտոր, բայց աղբը ծածկված էր սառույցով, և նրա որոնումները ապարդյուն էին:

Տխուր–տրտում Կապին վազում է, հասնում մեզ:

Մեծ փողոցներին հաջորդում են նրբանցքները: Հետո կրկին ձգվում են մեծ փողոցները, իսկ մենք գնում ենք ու գնում, և հազվադեպ անցորդները զարմանքով նայում են մեզ: Ինչն էր գրավում նրանց ուշադրությունը. մեր տարօրինակ հագո՞ւստը, թե՞ հոգնած տեսքը: Ոստիկանները շրջվում են և շեշտակի նայում մեր հետևից: Վիտալիսն առաջ է շարժվում լուռ, կորացած: Չնայած ցրտին՝ նրա ձեռքն այրվում էր ձեռքիս մեջ: Երբեմն նա կանգ էր առնում և հենվում իմ ուսին: Այդ ժամանակ ես զգում էի, որ նա ողջ մարմնով դողում է:

— Դուք հիվանդ եք,— ասացի նրան այդպիսի դադարներից մեկի ժամանակ:

— Վախենում եմ, որ այդպես է: Համենայն դեպս, սարսափելի հոգնել եմ: Վերջին օրերը խիստ հոգնեցուցիչ էին, իսկ այսօրվա ցուրտը չափազանց

թվայնացրել է 1915.info կայքը

դաժան է ծեր ոսկորներիս համար: Հիմա ինձ անհրաժեշտ է լավ անկողին և տաք ընթրիք... Բայց այդ բոլորը դատարկ երազներ են: Դե՛, գնանք:

Մենք արդեն դուրս էինք եկել քաղաքից և հիմա գնում էինք մերթ ինչ–որ պատերի տակով, մերթ գյուղական ամայի վայրերով: Անցորդներ ու ոստիկաններ չկային, անհայտացան լապտերներն ու գազի ճրագները: Քամին, որն ավելի խիստ և ուժեղ էր դառնում, փչում էր մեր մեջքին, և քանի որ իմ բաճկոնը թևքեր չուներ, ցուրտը թափանցում էր անցքերից, և ձեռքերս սառչում էին:

Չնայած մութ էր, և ամեն քայլափոխի ճանապարհները խաչաձևվում էին, Վիտալիսը գնում էր վստահ՝ հավանաբար իմանալով, թե ուր է գնում: Դրա համար էլ ես առանց տատանվելու հետևում էի նրան և միայն անհանգստանում, որ շուտ հասնենք քարհանք: Հանկարծ Վիտալիսը կանգ առավ:

— Դու առջևում ծառեր տեսնո՞ւմ ես:

— Ո՛չ, չեմ տեսնում:

— Ոչ մի բան չե՞ս նշմարում:

Ես չորս կողմս նայեցի: Հավանաբար մենք հարթավայրում էինք: Շուրջբոլորը ամայի էր: Միայն քամին էր սուլում անտեսանելի թփերում:

— Ա՛խ, եթե ես քեզ նման տեսողություն ունենայի,— տխրությամբ ասաց Վիտալիսը:— Ես շատ վատ եմ տեսնում: Մի անգամ էլ նայիր:

— Հավատացնում եմ Ձեզ՝ այնտեղ ոչ մի ծառ չկա:

— Ուրեմն մենք ուրիշ տեղ ենք ընկել: Մի քիչ էլ առաջ գնանք և եթե ծառեր չտեսնենք, վերադառնանք: Հնարավոր է, որ ես շփոթել եմ ճանապարհը:

Հիմա, երբ ես հասկացա, որ մենք ամենայն հավանականությամբ մոլորվել ենք, զգացի, որ շատ հոգնած եմ: Վիտալիսը քաշեց ձեռքս:

— Դե՛հ, ի՞նչ ես կանգնել:

— Ես այլևս քայլել չեմ կարող:

— Բայց միթե ես կարող եմ քեզ տանել: Ինքս էլ հազիվ եմ քայլում, բայց գիտեմ, որ եթե մենք նստենք, ապա այլևս վեր չենք կենա ու կսառչենք: Դե՛, գնանք:

Ես քարշ եկա նրա հետևից:

— Ճանապարհին խոր ակոսներ կա՞ն:

— Ոչ մի ակոս չկա:

— Պետք է վերադառնանք:

Քամին, որն առաջ մեջքներիս էր փչում, հիմա խփեց դեմքներիս այնպիսի սաստկությամբ, որ շունչս կտրվում էր: Մենք չէինք կարող արագ քայլել

Դեմոն 1915.info կայքը թեմատիկ

թվայնացրել է 1915.info կայքը

նույնիսկ այն ժամանակ, երբ առաջ էինք գնում, բայց հիմա հետ դառնալիս ավելի դանդաղ էինք շարժվում:

— Հենց որ ակոսներ տեսնես, ինձ ասա՛,— խոսեց նորից Վիտալիսը:— Այնտեղ պետք է լինեն նաև փշաթփեր:

Մոտ քառորդ ժամ մենք հետ էինք անցած ճանապարհով: Մեր քայլերը խուլ թնդում էին գիշերային խավարի մեջ: Չնայած ես ինքս հազիվ էի շարժում ոտքերս, բայց հիմա ստիպված էի քարշ տալ Վիտալիսին: Հանկարծ մի փոքրիկ կարմիր կետ առկայծեց մթության մեջ:

— Լո՛ւյս,— ուրախացա ես՝ մատնացույց անելով:

— Մեր ինչի՞ն է պետք այդ ճրագը,— բացականչեց Վիտալիսը:— Դա մի որևէ խեղճ աշխատավորի սեղանին վառվող լամպ է: Գյուղում գիշերը կարելի է բախել առաջին պատահած դուռը, բայց Փարիզի շրջակայքում դա անօգուտ է: Մեզ ոչ ոք ներս չի թողնի: Գնա՛նք:

Մենք քայլեցինք էլի մի քանի րոպե, և ես առջևում նկատեցի ինչ–որ մութ ուրվանկարներ, որոնք հավանաբար փշաթփեր էին: Ճանապարհը ծածկված էր խոր ակոսներով:

— Ահա՛, վերջապես, փշաթփերը: Ահա և ակոսները,— ուրախացա ես:

— Մենք փրկված ենք: Մինչև քարհանք հինգ րոպեի ճանապարհ է: Լա՛վ նայիր, այստեղ ծառեր պետք է լինեն:

Ինձ թվաց՝ ինչ–որ մութ ուրվագծեր եմ տեսնում և որոշեցի, որ դրանք ծառեր են:

— Ո՞ւր են տանում ակոսները:

— Դրանք ուղիղ գծով շարունակվում են:

— Քարհանքի մուտքը ձախ կողմում է: Մենք անցել ենք մուտքի մոտից ու չենք նկատել: Այսպիսի մթության մեջ հեշտությամբ կարելի է սխալվել:

Եվ մենք կրկին հետ դարձանք:

— Դու տեսնո՞ւմ ես ծառերը:

— Այո՛, տեսնում եմ ձախ կողմում:

— Իսկ ակոսնե՞րը:

— Ակոսներ չկան:

— Ինչ է, կուրացե՞լ ես,— ասաց Վիտալիսը:— Տո՛ւր ձեռքդ և գնանք ուղիղ դեպի ծառերը:

— Այստեղ բարձր պատ է:

— Չի կարող պատահել:

— Հավատացնում եմ Ձեզ՝ այստեղ պատ է:

թվայնացրել է 1915.info կայքը

Թե մեզնից ով էր իրավացի, ստուգելը դժվար չէր: Մենք պատից ընդամենը մի քանի քայլ էինք հեռու, և Վիտալիսը կարող էր ձեռքով շոշափել այն, ինչ ես պատ էի համարում. ընդամենը քարերի կույտ էր:

— Իսկապես որ պատ է. քարերը դրված են շարք–շարք, և ես զգում եմ ծեփը: Բայց ո՞ւր է մուտքը: Փնտրի՛ր ակոսները:

Ես գնացի մինչև պատի վերջը, հետո վերադառնալով Վիտալիսի մոտ՝ որոնումներս շարունակեցի մյուս կողմում, բայց նույնպես անարդյունք: Ամենուրեք պատ էր, և գետնին ոչ մի հետք չկար, որից զգացվեր, թե այդտեղ մուտք կա:

Դրությունը հուսահատական էր: Հավանաբար Վիտալիսը մոլորվել էր:

— Շարունակե՞մ որոնել:

— Ո՛չ: Պարզ է, որ քարհանքի մուտքը փակված է:

— Ի՞նչ անենք:

— Չգիտեմ... Մեռնենք:

— Օ՛, ո՛չ:

— Դու, իհարկե, մեռնել չես ուզում, դու երիտասարդ ես, և կյանքը քեզ համար թանկ է: Այդ դեպքում գնա՛նք:

— Իսկ ո՞ւր:

— Վերադառնանք Փարիզ: Կմոտենանք առաջին իսկ պատահած ոստիկանին և կխնդրենք, որ մեզ ոստիկանատուն տանի: Ես բոլորովին չէի ցանկանա այդ անել, բայց չեմ կարող թույլ տալ, որ դու սառչես: Դե՛հ, գնանք, Ռեմի, գնանք, թանկագի՛նս, մի՛ վհատվիր:

Եվ մենք բռնեցինք վերադարձի ճամփան: Ո՞ր ժամն էր: Կեսգիշեր էր, գուցե և ավելի: Քամին չէր դադարել, այլ փչում էր ավելի ուժգնությամբ: Նա բարձրացնում էր ձնափոշին և զարկում ուղիղ դեմքներիս: Տները, որոնց մոտով մենք անցնում էինք, փակ էին և մութ: Ինձ թվում էր, որ եթե այնտեղ տաք վերմակների տակ քնած մարդիկ իմանային, թե մենք որքան ենք մրսում, ներս կթողնեին մեզ:

Վիտալիսը շնչահեղձ էր լինում և հազիվ էր քայլում: Երբ ես որևէ բան էի հարցնում, նա չէր պատասխանում, այլ ձեռքի շարժումով հասկացնում էր, որ խոսելու ուժ չունի: Քաղաքի ծայրամասից մենք կրկին ընկանք քաղաք, մեր երկու կողմերում բարձրանում էին պատեր, որոնց վրա այս ու այնտեղ ճոճվում էին փողոցի լապտերները: Հանկարծ Վիտալիսը կանգ առավ, և ես հասկացա, որ նա այլևս չի կարող շարժվել:

— Թո՛ւյլ տվեք, որ բախեմ դռներից մեկը,— խնդրեցի ես նրան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Պետք չէ, չեն բացի: Այստեղ ապրում են այգեպաններն ու բանջարանոցապանները: Նրանք գիշերը վեր չեն կենա: Շարունակենք ճանապարհը:

Մի քանի քայլ անելով՝ Վիտալիսը կրկին կանգ առավ:

— Պետք է մի քիչ հանգստանանք... Ես այլևս չեմ կարող:

Մենք ինչ–որ դռնակի մոտ էինք, որը տանում էր դեպի այգին: Ցանկապատի հետևում բարձրանում էր գոմաղբի հսկայական մի կույտ, որը ծածկված էր ծղոտով, ինչպես հաճախ լինում է այգիներում: Քամին չորացրել էր ծղոտի վերին շերտը և ցաքուցրիվ արել փողոցում՝ ցանկապատի մոտ:

— Ես այստեղ կնստեմ,— դժվարությամբ ասաց Վիտալիսը:

— Չէ՞ որ Դուք ասացիք, որ եթե նստենք, ապա այլևս չենք կարողանա վեր կենալ և կսառչենք:

Ոչինչ չպատասխանելով՝ Վիտալիսը շարժումներով հասկացրեց ինձ, որ ծղոտ հավաքեմ, և ավելի շուտ ընկավ, քան նստեց այդ ծղոտին: Նրա ատամներն իրար էին զարկվում. նա ամբողջ մարմնով դողում էր:

— Էլի ծղո՛ւտ բեր, գոմաղբի կույտն էլ մեզ կպաշտպանի քամուց:

Ես, ինչքան կարողացա, ծղոտ հավաքեցի ու նստեցի նրա վրա՝ Վիտալիսի կողքին:

— Սեղմվի՛ր ինձ և գի՛րկդ առ Կապիին, նա քեզ կտաքացնի:

Վիտալիսը փորձված մարդ էր և հիանալի հասկանում էր, որ այսպիսի ցրտի ժամանակ, ամենայն հավանականությամբ, կսառչենք. նա որոշեց նստել միայն այն պատճառով, որովհետև բոլորովին ուժասպառ էր եղել: Գիտակցո՞ւմ էր նա արդյոք իր ծանր դրությունը, ես այդպես էլ չիմացա: Բայց այն րոպեին, երբ ծղոտով ծածկվելով՝ սեղմվեցի Վիտալիսին, նա խոնարհվեց և համբուրեց ինձ: Դա նրա երկրորդ և վերջին համբույրն էր:

Անկողնում թեթև ցուրտն անգամ խանգարում է քնելու, իսկ բաց երկնքի տակ խիստ սառնամանիքը թմրեցնում է և քուն է բերում: Այդպես էլ եղավ մեզ հետ: Հենց որ սեղմվեցի Վիտալիսին, իսկույն մոռացության մեջ ընկա, և աչքերս փակվեցին: Ես անասելի ճիգ էի գործադրում, որպեսզի բացեմ աչքերս և չէի կարողանում: Այդ ժամանակ ես կսմթեցի ձեռքս: Չնայած մաշկս համարյա անզգա էր դարձել, բայց և այնպես թեթևակի ցավ զգացի: Ես ուշքի եկա: Վիտալիսը նստել էր՝ մեջքը դռնակին դեմ տված, ընդհատ և ծանր շնչելով: Կապին, կրծքիս կծկված, քաղցր քուն էր մտել: Քամին փչում էր առաջվա նման և ծածկում մեզ ծղոտի կտորտանքով, որը ցած էր թափվում ծառից պոկված չոր տերևների պես: Փողոցներում ոչ մի մարդ չկար: Մեր շուրջն ու հեռվում մեռելային լռություն էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես սարսափեցի: Անորոշ վախը և տխրության ինչ–որ զգացում արցունքով լցրին աչքերս: Ինձ թվում էր, որ ես պետք է այստեղ մեռնեմ: Մահվան միտքը ինձ հիշել տվեց Շավանովը: Խեղճ Բարբերեն մայրիկ: Ես կմեռնեմ և երբեք չեմ տեսնի նրան, չեմ տեսնի մեր տնակը և իմ սիրելի այգին... Ինքս էլ չգիտեմ, թե ինչպես երևակայությունս ինձ տարավ այդ այգին: Ուրախ փայլում էր արևը, շոգ էր, ծաղկում էին դեղին նարգիսները, թփերում և փշաթփերի ցանկապատին երգում էին տորդիկները. Բարբերեն մայրիկը սպիտակեղեն էր փռում, որը հենց նոր լվացել էր քարերի միջև խոխոջացող առվակում: Հետո ես անսպասելիորեն հայտնվեցի «Կարապի» վրա: Արթուրը քնել էր իր մահճակալում, բայց տիկին Միլլիգանը քնած չէր և լսելով քամու ոռնոցը՝ մտածում էր, թե այս սառնամանիքին որտեղ եմ: Հետո աչքերս կրկին փակվեցին, սիրտս նվաղեց, և ես կորցրի գիտակցությունս:

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 18

ԼԻՋԱՆ

Երբ ուշքի եկա, տեսա, որ պառկած եմ անկողնում՝ ինչ–որ անծանոթ սենյակում: Ես շուրջս նայեցի: Վառարանի բոցը լուսավորում էր մահճակալիս մոտ կանգնած մարդկանց՝ մոխրագույն բաճկոն հագած մի տղամարդու և չորս երեխաների: Կրտսեր աղջիկը, որը հինգ–վեց տարեկան կլիներ, ինձ վրա էր հառել իր զարմացած, արտահայտիչ աչքերը: Ես բարձրացա տեղիցս: Նրանք իսկույն մոտեցան ինձ:

— Վիտալի՛ս...— թույլ ձայնով կանչեցի ես:

— Նա իր հորն է կանչում,— ասաց աղջիկը, որը հավանաբար երեխաներից ամենամեծն էր:

— Ո՛չ, նա իմ հայրը չէ, այլ տերս: Ո՞ւր է նա: Ո՞ւր է Կապին:

Եթե ես ասեի, որ Վիտալիսն իմ հայրն է, կվախենային միանգամից հաղորդել ինձ այն, ինչ պատահել էր: Բայց իմանալով, որ նա միայն իմ տերն է, նրանք պատմեցին ինձ հետևյալը:

Դարպասը, որի մոտ մենք վայր էինք ընկել, տանում էր այգեպանի այգին: Գիշերը՝ ժամը երկուսի մոտ, այգեպանը, պատրաստվելով շուկա գնալ, բացել էր դարպասը և տեսել, որ ծղոտի տակ ինչ–որ մարդիկ են պառկած: Նա խնդրել էր այդ մարդկանց, որ վեր կենան և ճանապարհ տան սայլակին:

թվայնացրել է 1915.info կայքը

Ի պատասխան՝ լսել էր Կապիի հաչոցը, բայց մեզնից ոչ մեկը չէր շարժվել: Փորձել էր արթնացնել, բայց մենք չէինք շարժվել: Այդ ժամանակ որոշել են, որ ինչ–որ բան է պատահել: Բերել են լապտերն ու տեսել, որ Վիտալիսը մեռած է, իսկ ես կիսակենդան եմ: Միայն շնորհիվ Կապիի, որը պառկած էր կրծքիս և դրանով մի քիչ տաքացրել էր ինձ, ես չէի սառել վերջնականապես և դեռ շնչում էի: Ինձ տարել են այգեպանի տունը և պառկեցրել անկողնում: Վեց ժամ ես ուշքի չեմ եկել: Հետո արյան շրջանառությունս վերականգնվել է, և ես սթափվել եմ: Չնայած իմ ծանր վիճակին՝ ես իսկույն հասկացա պատահածի ողջ սարսափելիությունը. Վիտալիսը մեռել է:

Մինչ մոխրագույն բաճկոն հագած մարդը, այսինքն՝ ինքը՝ այգեպանը, պատմում էր ինձ այդ ամենը, նրա փոքրիկ աղջիկը աչքն ինձնից չէր կտրում: Երբ հայրն ինձ հաղորդեց, որ Վիտալիսը մեռել է, նա հասկացավ, թե այդ նորությունն ինչ հարված էր ինձ համար: Արագությամբ վազելով հոր մոտ՝ աղջիկը բռնեց նրա ձեռքը, իսկ մյուս ձեռքով մատնացույց արեց ինձ և ինչ–որ տարօրինակ ձայն հանեց: Դրանք բառեր չէին, այլ ավելի շուտ կարեկցանքով լի քնքուշ հառաչանք: Պետք է ասեմ, որ նրա ձեռքի շարժումն այնքան պերճախոս էր, որ բառերն ավելորդ էին: Ես նրա հայացքում մեծ համակրանք կարդացի և Արթուրից բաժանվելուց հետո առաջին անգամ վստահություն ու քնքշանքի անբացատրելի զգացմունք ապրեցի, ինչպես այն օրերին, երբ Բարբերեն մայրիկը փաղաքշանքով նայում էր ինձ:

— Ինչ արած, իմ փոքրի՛կ Լիզա,— ասաց հայրը՝ դեպի աղջիկը խոնարհվելով,— անհրաժեշտ էր ասել նրան ճշմարտությունը: Միևնույնն է, այդ կաներ ոստիկանությունը:

Նրա հետագա պատմածներից իմացա, որ ստիպված էին եղել ոստիկաններ կանչել, որոնք և տարել էին Վիտալիսին:

— Իսկ ո՞ւր է Կապին,— հարցրի ես այգեպանին, երբ նա լռեց:

— Կապի՞ն:

— Այո՛, Կապին՝ իմ շունը:

— Չգիտեմ, նա անհայտացել է:

— Ո՛չ, նա վազեց պատգարակի հետևից,— ասաց երեխաներից մեկը:

Այգեպանն ու երեխաները գնացին հարևան սենյակը և ինձ մենակ թողեցին: Ես մեքենայաբար վեր կացա: Տավիղս դրված էր մահճակալին՝ ոտքերիս մոտ: Ես փոկն ուսիս գցեցի և ուղղվեցի հարևան սենյակը: Պետք էր գնալ, բայց ո՞ւր: Ես չգիտեի այդ, բայց զգում էի, որ պետք է գնամ: Նախ և առաջ ես պետք է տեսնեի Վիտալիսին. կենդանի լիներ, թե մեռած:

թվայնացրել է 1915.info կայքը

Անկողնում պառկած ժամանակ ես միայն զգում էի, որ մարմինս ջարդվում է, ու գլուխս ցավում, բայց երբ ոտքի կանգնեցի այնպիսի թուլություն եկավ վրաս, որ ստիպված էի հենվել աթոռին: Մի րոպե հանգստանալով՝ հրեցի դուռը և հայտնվեցի այգեպանի ու նրա երեխաների մոտ:

Նրանք նստած էին սեղանի շուրջը՝ վառարանի մոտ, որտեղ թեժ կրակ էր վառվում, և ճաշում էին: Ապուրի բուրմունքն ինձ հիշեցրեց, որ ես վաղուց արդեն ոչինչ չեմ կերել: Գլուխս պտտվեց, ես երերացի:

— Քեզ վա՞տ ես զգում,— հարցրեց այգեպանը կարեկցությամբ:

Ես պատասխանեցի, որ թույլ եմ և խնդրում եմ, որ մի քանի րոպե նստեմ կրակի մոտ: Բայց ես այնքան կարիք չունեի ջերմության, որքան սննդի: Ապուրի բուրմունքը, գդալների շխկշխկոցը, ճաշողների բերանի չփչփոցը ավելի էին թուլացնում ինձ:

Եթե ես համարձակվեի, ապա մի ափսե ապուր կխնդրեի: Բայց ես ավելի շուտ սովից կմեռնեի, քան կխոստովանեի, թե ուտել եմ ուզում: Փոքրիկ աղջիկը, որին հայրը Լիզա էր կոչում, նստած էր իմ դիմաց և ուտելու փոխարեն ուշադրությամբ նայում էր ինձ:

Հանկարծ նա վեր կացավ տեղից և իր ափսեով ապուրը վերցնելով՝ բերեց ինձ: Ես ուժ չունեի խոսելու և դրա համար ուզում էի ձեռքով հեռացնել ափսեն, բայց Լիզայի հայրը թույլ չտվեց, որ այդ անեմ:

— Կե՛ր, տղա՛ս: Եթե Լիզան առաջարկում է, ապա այդ անում է ի սրտե: Կե՛ր և եթե ցանկություն ունենաս, ափսեդ կրկին կլցնենք:

Ես մի քանի վայրկյանում կուլ տվեցի ապուրը: Երբ ցած դրեցի գդալը, Լիզան, որը կանգնած ուշադրությամբ նայում էր ինձ, կամացուկ ճչաց, բայց այս անգամ դա նման էր ոչ թե հառաչանքի, այլ հաճույքի արտահայտության: Հետո ափսեն վերցնելով՝ մեկնեց հորը, իսկ երբ վերջինս ափսեն լիքը լցրեց, Լիզան այնպիսի քնքուշ և խրախուսող ժպիտով կրկին տվեց ինձ, որ ես չնայած սոված էի, բայց մի վայրկյան մոռացա ապուրի մասին:

Ինչպես և առաջին անգամ, արագորեն դատարկեցի ափսեն: Ժպիտը, որով երեխաները նայում էին ինձ, փոխվեց անկեղծ ծիծաղի:

— Պարզվում է, որ դու հիանալի ախորժակ ունես,— հայտարարեց այգեպանը:

Ես զգացի, որ կաս-կարմիր եմ կտրում: Վախենալով շատակեր թվալուց՝ ես պատասխանեցի, որ երեկ չեմ ճաշել:

— Բայց դու նախաճաշե՞լ ես:

— Ոչ էլ նախաճաշել եմ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ տե՞րդ:
— Նա նույնպես ոչինչ չէր կերել:
— Ուրեմն նա մեռել է ոչ միայն ցրտից, այլև սովից:
Կերակուրը ուժ տվեց ինձ: Ես ոտքի կանգնեցի՝ պատրաստվելով գնալ:
— Ո՞ւր ես գնում,— հարցրեց այգեպանը:
— Ես ուզում եմ մի անգամ էլ տեսնել Վիտալիսին:
— Դու Փարիզում ընկերներ ունե՞ս:
— Ո՛չ:
— Հայրենակիցնե՞ր:
— Նույնպես, ո՛չ:
— Որտե՞ղ եք իջևանել դուք:
— Ոչ մի տեղ: Մենք երեկ ենք Փարիզ եկել:
— Ինչո՞վ ես զբաղվելու դու:
— Տավիղ կնվագեմ, երգեր կերգեմ և դրանով կվաստակեմ ապրուստս:
— Ավելի լավ է՝ վերադարձի՛ր հայրենիք՝ ծնողներիդ մոտ:
— Ես ծնողներ չունեմ:
— Դու ասացիր, որ մեռած ծերունին քո հայրը չէ:

— Հարազատ հայր ես չունեմ, բայց Վիտալիսը ինձ համար իսկական հայր էր:
— Իսկ մա՞յրդ ուր է:
— Ես մայր չունեմ:
— Գուցե դու բարեկամներ ունես. քեռի, մորաքույր, հորեղբոր աղջիկներ կամ տղաներ: Որևէ հարազատ կունենաս երևի:
— Ոչ ոք չունեմ:
— Իսկ դու որտեղացի՞ ես:
— Տերս վարձել էր ինձ իմ ստնտուի ամուսնուց: Դուք շատ բարի եղաք իմ նկատմամբ, և ես ի սրտե շնորհակալ եմ: Կիրակի օրը ես կգամ ձեզ մոտ և ձեզ համար տավիղ կնվագեմ: Երեխաները կարող են պարել, եթե ցանկանան:

Այդ բառերն արտասանելով՝ քայլերս ուղղեցի դեպի դուռը: Բայց հազիվ էի մի քանի քայլ արել, երբ Լիզան ձեռքս բռնեց և ժպտալով ցույց տվեց տավիղը:
— Դու ուզում ես, որ ես նվագե՞մ:
Նա գլխով արեց և ուրախ ծափ զարկեց:
— Դե՛հ, լավ,— համաձայնվեց հայրը,— որևէ բան նվագի՛ր նրա համար:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես վերցրի տավիղը, և չնայած սիրտս շատ տխուր էր, սկսեցի նվագել այն գեղեցիկ վալսը, որը կատարում էի բավականին հմտորեն: Ես ուզում էի հաճույք պատճառել փոքրիկ աղջկան, որն այնքա՜ն սիրալիր հայացք ուներ:

Սկզբում նա միայն լսում էր՝ շեշտակի նայելով ինձ, իսկ հետո ոտքերով սկսեց դոփել գետինը: Ապա կարծես երաժշտությամբ տարված՝ սկսեց պտույտ գալ խոհանոցում: Նա պարել չգիտեր և ընդունված ձևերով չէր պարում, բայց աշխուժորեն և նազանքով պտտվում էր երաժշտությանը համահունչ:

Հայրը, նստած բուխարու մոտ, աչքը չէր կտրում աղջկանից, որը զգացված ծափ էր զարկում: Երբ վերջացրի վալսը և կանգ առա, Լիզան մոտեցավ և սիրալիր խոնարհվեց: Հետո մատները տավիղին դնելով՝ խնդրեց, որ էլի նվագեմ:

Ես սկսեցի նվագել ու երգել այն նեապոլյան երգը, որը սովորեցրել էր ինձ Վիտալիսը:

Երբ հնչեցին առաջին ակորդները, Լիզան կրկին կանգնեց իմ դիմաց: Նրա շուրթերը շարժվում էին, կարծես նա ինքը իրեն կրկնում էր բառերը: Երբ երգեցի վերջին ամենատխուր քառյակը, նա մի քանի քայլ հետ գնաց և լաց լինելով՝ ընկավ հոր գիրկը:

— Բավական է,— ասաց հայրը:

Այդ ժամանակ ես տավիղը կախեցի ուսիս և ուղղվեցի դեպի դուռը:

— Ո՞ւր ես գնալու,— կրկին հարցրեց ինձ այգեպանը:

— Նախ ուզում եմ տեսնել Վիտալիսին, հետո կանեմ այն, ինչ նա ինձ սովորեցրել է. տավիղ կնվագեմ ու կերգեմ:

— Ուրեմն դու որոշել ես շարունակել դրանով զբաղվելը:

— Ես ուրիշ ոչ մի բան չգիտեմ:

— Քեզ չե՞ն վախեցնում մեծ ճանապարհները:

— Ես տուն չունեմ:

— Միթե այն, ինչ պատահեց քեզ այս գիշեր, չի ստիպում փոխել քո միտքը:

— Ես, իհարկե, կցանկանայի ունենալ իմ սեփական տաք անկյունը և քնել մահճակալի վրա, բայց ի՞նչ արած:

— Էհ, ինչ կա որ, դու կարող ես ունենալ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Մնա՛ մեզ մոտ: Իհարկե, դու ստիպված կլինես շատ աշխատել: Պետք է առավոտյան արթնանալ վաղ և ամբողջ օրը քլունգով աշխատել: Մի խոսքով ճակատի քրտինքով մի կտոր հաց վաստակել: Բայց դու ստիպված չես լինի գիշերել բացօթյա, չես մեռնի որևէ տեղ՝ ցանկապատի տակ: Իսկ երբ դու ուտես քո

թվայնացրել է 1915.info կայքը

վաստակած ճաշը, դա քեզ շատ ավելի համեղ կթվա: Ես կարծում եմ, որ դու լավ տղա ես, և մենք կսիրենք քեզ հարազատի պես:

Այդ առաջարկից զարմացած՝ ես սկզբում չհասկացա, թե նա ինչ է ասում ինձ:

— Դե՛ որոշիր, արդյոք հարմար է դա քեզ,— հարցրեց այգեպանը:

Ես անելանելի դրության մեջ էի: Հենց նոր էր մահացել այն մարդը, որի հետ ապրել էի մի քանի տարի, և որն ինձ վերաբերվում էր հարազատ հոր պես: Ես զրկվել էի և իմ սիրելի ընկերոջից՝ խելոք, բարի Կապիից: Այգեպանի առաջարկը, որ ես մնամ իրենց մոտ, մխիթարեց ու սիրտ տվեց ինձ: Ուրեմն դեռ ամեն բան կորած չէ. ես կարող եմ նոր կյանք սկսել:

Ինձ շատ էր գրավել ընտանիքում ապրելու հնարավորությունը. այս տղաները կդառնան իմ եղբայրները, սիրունիկ փոքրիկ Լիզան՝ իմ քույրը:

Երազանքներիս մեջ շատ անգամ էի պատկերացնում, թե իբրև ծնողներիս մոտ եմ, բայց ոչ մի անգամ չէի մտածել, որ կարող եմ քույրեր ու եղբայրներ ունենալ: Եվ այժմ դա կարող էր իրականանալ:

Ես արագությամբ ուսիցս ցած գցեցի տավիղի փոկը:

— Դա բավականին պերճախոս պատասխան է,— ժպտաց այգեպանը:— Տեսնում եմ, որ իմ առաջարկը քեզ դուր եկավ: Կախի՛ր տավիղդ այ այստեղ՝ մեխից, իսկ երբ ցանկանաս գնալ մեր մոտից, դու այն կվերցնես: Միայն թե

թվայնացրել է 1915.info կայքը

ծիծեռնակների և սոխակների պես դու էլ հարմար եղանակ ընտրիր ճանապարհ ընկնելու համար:

— Ես ձեզնից կգնամ միայն Վիտալիսին գտնելու համար:

— Ճիշտ է,— համաձայնեց այգեպանը:

Տունը, որի դռնակի մոտ մենք ցած էինք ընկել, պատկանում էր Ակեն ազգանունով մի այգեպանի: Այն ժամանակ, երբ ես նրանց տանն էի, ընտանիքը բաղկացած էր հինգ մարդուց՝ հայրը, երկու որդիները՝ Ալեքսիսը և Բենժամենը, և երկու աղջիկները՝ Էտյենետտան և Լիզան:

Լիզան համր էր, բայց ոչ ի ծնե: Նա խոսելու ունակությունը կորցրել էր ինչ–որ հիվանդությունից հետո՝ չորս տարեկանում: Այդ դժբախտությունը չէր ազդել նրա մտավոր ընդունակությունների վրա, ընդհակառակը, նա շատ զարգացած աղջիկ էր և ոչ միայն հասկանում էր ամեն բան, այլև շարժումներով կարողանում էր ազատ բացատրել: Աղքատ ընտանիքներում և առհասարակ շատ ընտանիքներում հիվանդ երեխան հաճախ լինում է աչքաթող արված ու չսիրված: Բայց Լիզան իր մեղմ ու բարի բնավորության շնորհիվ խուսափել էր այդպիսի ճակատագրից: Եղբայրները այնպես էին վերաբերվում, որ նա չէր զգում իր դժբախտությունը, հայրը չէր կշտանում նրան նայելուց, մեծ քույրը պաշտում էր նրան:

Նրանք մայր չունեին: Այգեպանի կինը մահացել էր Լիզային ունենալուց մի տարի հետո. այդ օրվանից մեծ քույրը՝ Էտյենետտան էր ընտանիքում ստանձնել մոր պարտականությունները: Նա հնարավորություն չուներ դպրոց հաճախելու: Հարկավոր էր կերակուր եփել, կարկատել հոր ու եղբայրների հագուստները, խնամել փոքրիկ Լիզային: Չնայած Էտյենետտան ինքն էլ դեռ երեխա էր, բայց ստիպված էր աշխատել ամբողջ օրը, նա պետք է արթնանար վաղ առավոտյան, հոր համար նախաճաշ պատրաստեր, որը պիտի գնար շուկա, պառկեր ուշ, բոլորից էլ՝ ուշ, որովհետև ընթրիքից հետո հարկավոր էր հավաքել ամանները և լվալ սպիտակեղենը: Ամառը՝ ազատ րոպեներին, նա, այդ բոլորից բացի, ջրում էր նաև ծաղիկները, իսկ ձմեռը վեր էր կենում գիշերով և ծղոտով ծածկում տունկերը, որպեսզի չսառչեն: Այդ հոգսերը ժամանակ չէին թողնում, որ Էտյենետտան ուրիշ երեխաների նման խաղա ու ծիծաղի: Տասնչորսերորդ տարում նրա հեզ ու սիրունիկ դեմքն արդեն մտահոգ էր ու տխուր:

Մատնացույց արված տեղում կախելով տավիղս՝ սկսեցի պատմել այն մասին՝ ինչպես էինք մենք հոգնած ու սոված վերադառնում Փարիզ՝ ապաս-

թվայնացրել է 1915.info կայքը

տան չգտնելով Ժանտիլիի քարահանքում: Այդ միջոցին հանկարծ լսեցի, որ ինչ–որ մեկը ճանկռոտում է դրսի դուռը, իսկ հետո լսվեց խղճալի կլանչոց:

— Կա՛պի,— բացականչեցի ես:

Լիզան արագ վազեց դեպի դուռը և բացեց այն: Կապին նետվեց դեպի ինձ, և երբ նրան գիրկս առա, սկսեց ուրախ հաչոցով լիզել դեմքս: Նա ամբողջ մարմնով դողում էր:

— Իսկ ի՞նչ անենք Կապիին,— հարցրի Ակենին:

— Կապին կմնա քեզ հետ:

Կապին, կարծես հասկանալով մեր խոսքերը, ցած թռավ և թաթը կրծքին սեղմելով՝ գլուխ տվեց: Դա շատ ծիծաղեցրեց բոլոր երեխաներին, նամանավանդ Լիզային, ապա նրանց զվարճացնելու համար ես ուզեցի ստիպել Կապիին, որ ցույց տա իր հնարքներից մեկը:

Բայց Կապին ինձ չլսեց: Ծնկներիս ցատկելով՝ նա նախ սկսեց քսմսվել ինձ, իսկ հետո ձգեց բաճկոնից թևքը:

— Կապին պահանջում է՝ գնամ նրա հետ:

— Նա ուզում է քեզ տանել տիրոջդ մոտ:

Ոստիկանները, որոնք տարել էին Վիտալիսին, ասել էին, որ պետք է հարցաքննեն ինձ, և որ իրենք կգան առավոտյան, երբ ես կտաքանամ և ուշքի կգամ: Բայց ես ուզում էի, որքան կարելի է, շուտ իմանալ ամեն բան Վիտալիսի մասին: Գուցե նա ամենևին էլ չի մեռել, ինչպես ենթադրում էին:

Տեսնելով իմ անհանգստությունը և կռահելով դրա պատճառը՝ Ակենն ինքը տարավ ինձ ոստիկանատուն: Այնտեղ ինձ սկսեցին հարցեր տալ, որոնց պատասխանեցի միայն այն ժամանակ, երբ համոզվեցի, որ Վիտալիսը մահացել է: Ես ասացի, որ ծնողներ չունեմ, և որ Վիտալիսը վարձել էր ինձ իմ ստնտուի ամուսնուց՝ որոշ գումար վճարելով նրան:

— Իսկ ի՞նչ ես անելու հիմա,— հարցրեց ինձ ոստիկանապետը:

Այստեղ խոսակցությանը խառնվեց Ակենը.

— Եթե թույլ տաք, ես նրան կվերցնեմ ինձ մոտ:

Ոստիկանապետը ոչ միայն հաճույքով թույլատրեց այգեպանին, այլև շնորհակալություն հայտնեց՝ ասելով, որ նա բարի գործ է կատարում:

Դրանից հետո ոստիկանապետն առաջարկեց ինձ պատմել այն ամենը, ինչ գիտեի Վիտալիսի մասին: Ինձ համար բավականին դժվար էր այդ անել: Չէ՞ որ ես ինքս համարյա ոչինչ չգիտեի նրա անցյալի մասին: Միակ փաստը, որը ժամանակին զարմացրել էր ինձ, այն երիտասարդ տիկինն էր, որին հուզել էր Վիտալիսի երգը: Բայց այդ ժամանակ մտաբերեցի Գարաֆոլիի

թվայնացրել է 1915.info կայքը

սպառնալիքները և մտածեցի, որ կարիք չկա ասելու Վիտալիսի գաղտնիքը, եթե ինքը թաքցնում էր:

Բայց միթե երեխան կարող է որևէ բան թաքցնել ոստիկանապետից: Այդ մարդիկ այնքան ճարպկորեն են հարցաքննում: Հինգ րոպե անց ոստիկանապետը ստիպեց ինձ պատմել ամեն բան, ինչ ես փորձում էի թաքցնել:

— Պետք է տղային տանել Դե–Լուրսին փողոցը,— կարգադրեց նա ոստիկաններից մեկին:— Դուք նրա հետ վերև կբարձրանաք և մանրամասն հարցուփորձ կանեք Գարաֆոլիին:

Մենք երեքով գնացինք՝ ոստիկանը, Ակենը և ես: Ես իսկույն ճանաչեցի տունը և չորրորդ հարկում հեշտությամբ գտա Գարաֆոլիի դուռը: Մատտիան այնտեղ չէր, ամենայն հավանականությամբ նա արդեն հիվանդանոցում էր:

Տեսնելով ինձ ու ոստիկանին՝ Գարաֆոլին վախեցած գունատվեց, բայց իսկույն հանգստացավ, երբ իմացավ, թե ինչու ենք եկել:

— Ուրեմն խեղճ ծերուկը մեռա՞վ,— հարցրեց նա:

— Դուք նրան ճանաչո՞ւմ էիք:

— Շա՛տ լավ:

— Այդ դեպքում պատմե՛ք ամեն բան, ինչ գիտեք նրա մասին:

— Նրան կոչում էին ոչ թե Վիտալիս, այլ Կառլո Բալզանի: Եթե Դուք ապրեիք Իտալիայում երեսունհինգ–քառասուն տարի սրանից առաջ, այդ անունը միայն Ձեզ ամեն բան կասեր: Կառլո Բալզանին նշանավոր երգիչ էր և շատ մեծ հաջողություն ուներ: Նա երգում էր բոլոր եվրոպական բեմերում՝ Նեապոլում, Հռոմում, Միլանում, Վենեցիայում, Ֆլորենցիայում, Լոնդոնում և Փարիզում: Մի դժբախտ օր արտիստը ձայնը կորցրեց և այլևս չկարողացավ մնալ թատրոնում: Բայց պետք էր մի կերպ ապրել: Նա փորձեց զբաղվել զանազան գործերով, բայց բախտը չէր բերում: Հետզհետե ավելի ու ավելի իջնելով՝ նա դարձավ շներ վարժեցնող: Նա շատ էր հպարտանում իր անցյալով և ավելի շուտ կմեռներ, քան թույլ կտար, որ մարդիկ իմանան, թե հանրահռչակ երգիչ Կառլո Բալզանին դարձել է աղքատ Վիտալիս:

Ահա այն գաղտնիքը, որ այնքա՜ն հետաքրքրում էր ինձ:

Խեղճ Կառլո Բալզանի, իմ բարի՛, սիրելի՛, թանկագի՛ն Վիտալիս:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 19

ԵՍ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՄ ՊԱՐՏԵԶՈՒՄ

Վիտալիսին պետք է թաղեին հաջորդ առավոտյան. այգեպան Ակենը խոստացավ տանել ինձ թաղմանը: Բայց հետևյալ օրը, դժբախտաբար, ես չկարողացա վեր կենալ անկողնուց: Գիշերը սկսեցի սաստիկ ջերմել: Ինձ թվում էր, որ կրծքումս կրակ է վառվում, և որ նույնիսկ հիվանդ եմ, ինչպես Հոգյակը՝ ծառի վրա անցկացրած գիշերվանից հետո:

Իմ հիվանդության ընթացքում ես հասկացա ու գնահատեցի Ակենի ընտանիքի բարությունը և մանավանդ Էտյենետտայի ինքնազոհությունը: Չնայած աղքատ մարդիկ ընդհանրապես բժիշկ չեն կանչում, բայց իմ դրությունը այնքան ծանր էր, որ ինձ համար բացառություն արեցին: Բժիշկը գտավ, որ ես թոքերի բորբոքում ունեմ, և պետք է ինձ հիվանդանոց ուղարկել:

Բայց այգեպանը չհամաձայնվեց:

— Եթե մենք նրան վերցրել ենք մեր ընտանիք,— պատասխանեց Ակենը,— ապա պարտավոր ենք ոտքի կանգնեցնել նրան:

Չնայած տնտեսության բազմաթիվ գործերին ու հոգսերին՝ Էտյենետտան խնամում էր ինձ հիվանդապահի համբերատարությամբ ու հմտությամբ՝ երբեք չդժգոհելով ու ոչ մի բանի մասին չմոռանալով: Եթե նրան պետք էր լինում որևէ տեղ գնալ, իր փոխարեն թողնում էր Լիզային:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի քանի գիշեր հարկ եղավ անդադար հերթապահել ինձ մոտ, որովհետև շատ վատ էի զգում, ուղղակի շնչահեղձ էի լինում: Այդ ժամանակ տղաները հերթով նստում էին անկողնուս մոտ:

Ես շուտ չառողջացա: Կազդուրվում էի շատ դանդաղ և միայն գարնանն ինձ վերջապես թույլ տվեցին դուրս գալ տնից: Կեսօրին, երբ արևը բարձրանում էր երկնքում, ես ու Լիզան Կապիի ուղեկցությամբ գնում էինք՝ գետափը զբոսնելու: Գարնանն այդտեղ խոտն առատ ու դալար էր, նրա զմրուխտե գորգին սպիտակին էին տալիս փոքրիկ մարգարտածաղիկները, իսկ ծառերի մատղաշ տերևների մեջ ճախրում էին շիկահավերը, սերինոսներն ու տորդիկները և իրենց ճռվողյունով հիշեցնում, որ մենք ոչ թե քաղաքում ենք, այլ գյուղում:

Այդ տարի գարունը հիանալի ու տաք էր, համենայն դեպս այդպիսին է մնացել հիշողությանս մեջ:

Վերջապես ուժերս այնքան վերականգնվեցին, որ սկսեցի աշխատել այգում: Ես անհամբերությամբ սպասում էի այդ րոպեին, որովհետև ցանկանում էի հնարավորին չափ շուտ հատուցել Ակենսներին այն ամենի համար, ինչ նրանք արել էին ինձ համար:

Տարվա այդ եղանակին Փարիզի շուկաներում սովորաբար վաճառում էին շահպրակներ, և Ակենի ողջ ընտանիքը զբաղված էր դրանք աճեցնելով: Մեր այգին լիքն էր այդ հրաշալի ծաղիկներով: Կարմիր, սպիտակ, մանուշակագույն և բազմապիսի այլ գույների ու երանգների ծաղիկները հիացնում էին: Երեկոյան նախքան դրանք կծածկեինք փեղկերով, օդը հագենում էր հրաշալի բուրմունքով:

Ինձ տվեցին ուժերիս համապատասխան աշխատանք: Ես առավոտյան պետք է հանեի ապակյա փեղկերը, իսկ երեկոները՝ մինչև գիշերվա ցուրտն ընկնելը, կրկին ծածկեի: Ցերեկը պետք է ծաղիկները ծածկեի ծղոտով կիզիչ արևից պաշտպանելու համար: Այդ դժվար գործ չէր, բայց շատ ժամանակ էր խլում, որովհետև հարկավոր էր օրը երկու անգամ տեղաշարժել մի քանի հարյուր փեղկ: Լիզան այդ ժամանակ հետևում էր ձիուն, որը շարժման մեջ էր դնում պոմպի լծակը: Պոմպը պարտեզը ջրելու համար ջուր էր քաշում: Եղբայրներից մեկը ջրում էր ծաղիկները, իսկ մյուսը օգնում էր հորը: Այդպես ամեն մեկը զբաղված էր իր գործով և անտեղի ժամանակ չէր կորցնում:

Ես գիտեի, թե որքան ծանր է գյուղացիների աշխատանքը գյուղում, բայց պատկերացում անգամ չունեի, թե ինչպիսի լարվածությամբ են աշխատում

թվայնացրել է 1915.info կայքը

Փարիզի շրջակայքի պարտիզպանները: Նրանք վեր էին կենում լույսը չբացված, պառկում էին ուշ և իրենց չխնայելով՝ աշխատում ամբողջ օրը:

Այգեպան Ակենի մոտ ես շատ բան սովորեցի: Երբ ես վերջնականապես առողջացա, հաճույքով զբաղվեցի ծաղիկներ աճեցնելով: Ես շատ էի հպարտանում իմ աշխատանքով ու հաջողություններով: Ես օգուտ էի տալիս և այդ ապացուցում էի գործով: Իսկ դա աշխատանքի լավագույն պարգևն է:

Չնայած ես շատ էի հոգնում, բայց շուտ ընտելացա նոր՝ աշխատանքային կյանքիս, որը բոլորովին նման չէր իմ՝ նախկին թափառական ապրելակերպին: Հիմա առավոտից իրիկուն կռացած աշխատում էի այգում: Իմ շուրջը բոլորն էլ աշխատում էին նույն ջանասիրությամբ: Տարբերությունը միայն այն էր, որ հոր ցնցուղն ավելի ծանր էր, քան երեխաներինը, և նրա շապիկն ավելի էր խոնավանում քրտինքից, քան մերը, բայց ամենակարևորն այն էր, որ այդ մարդիկ վարվում էին ինձ հետ հարազատի պես, և ես այլևս ինձ միայնակ չէի զգում: Ես ունեի իմ մահճակալը, իմ տեղը՝ սեղանի մոտ, որի շուրջը հավաքվում էինք բոլորով: Եթե երբեմն Ալեքսիսը կամ Բենժամենը հասցնում էին ծոծրակիս, ես ամենևին չէի բարկանում: Նրանք նույնպես չէին նեղանում, երբ ես պատասխան հարված էի տալիս:

Երեկոյան՝ սեղան նստելիս, մենք բարեկամներ էինք ու մտերիմ մարդիկ:

Բայց աշխատելուց բացի՝ մենք ունեինք նաև հանգստի ու զվարճության ժամեր: Իհարկե, դրանք երկար չէին տևում, բայց գուցե հենց այդ պատճառով էին առանձնապես հաճելի: Կիրակի օրերը մենք հավաքվում էինք տաղավարում, որը մեր տան մոտ էր: Ես վերցնում էի տավիղս, որը հանգիստ կախված էր լինում ամբողջ շաբաթը, և երեխաները սկսում էին պարել: Հասկանալի է, որ նրանցից ոչ մեկը պարել չէր սովորել, բայց Ալեքսիսն ու Բենժամենը մի անգամ եղել էին հարսանիքում և տեսել էին, թե ինչպես են պարում կադրիլ, այնպես որ այդ պարի մասին որոշ պատկերացում ունեինք: Երբ նրանք հոգնում էին, խնդրում էին, որ ես երգեմ իմ նեապոլյան երգը, որն ամեն անգամ մեծ տպավորություն էր գործում Լիզայի վրա:

Ամեն անգամ, երբ ես երգում էի վերջին քառյակը, նրա աչքերը լցվում էին արցունքով: Այդ ժամանակ, որպեսզի նրան ուրախացնեմ, Կապիի հետ որևէ ծիծաղաշարժ աճպարարություն էի ցույց տալիս: Կապիի համար նույնպես այդ կիրակիները մեծ տոներ էին: Դրանք հիշեցնում էին նրան անցյալը, և նա պատրաստ էր անվերջ կատարելու իր խաղերը: Նվագելով ես միշտ մտաբերում էի Վիտալիսին և աշխատում էի նվագել ու երգել այնպես, ինչպես եթե նա ներկա լիներ ու լսեր ինձ: Իմ թանկագին Վիտալիս: Որքան մե-

թվայնացրել է 1915.info կայքը

ծանում էի, այնքան ավելի էր աճում իմ հարգանքը նրա հիշատակի հանդեպ, և այնքան ավելի էի հասկանում, թե որքան բան է արել նա ինձ համար:

Այդպես անցավ երկու տարի: Ակենը ինձ հաճախ իր հետ տանում էր շուկա, ծաղիկների գետափը, զանազան պարտիզպանների ու ծաղկավաճառների մոտ, և ես հետզհետե ծանոթանում էի Փարիզին: Չնայած պարզվեց, որ Փարիզը մարմարից ու ոսկուց շինված քաղաք չէ, ինչպես պատկերացնում էի երբեմն, բայց և այնպես ես փոխեցի իմ նախնական կարծիքը նրա մասին: Ես ծանոթացա Փարիզի հուշարձաններին ու տեսարժան վայրերին, զբոսնում էի գեղեցիկ գետափով ու այգիների երկայնքով, եղա Լյուքսեմբուրգյան այգում, Տյուլերիում, Ելիսեյան դաշտերում, տեսա հիանալի արձաններ: Բայց իմ կրթությունը չէր սահմանափակվում միայն նրանով, ինչ տեսնում էի զբոսանքների կամ Փարիզում շրջագայելու ժամանակ:

Ակենը մինչև ինքնուրույն պարտիզպան դառնալը աշխատել էր բուսաբանական այգու ջերմոցում: Նա այնտեղ հանդիպել էր կրթված ու գիտուն մարդկանց, և այդ ծանոթությունները նրա մեջ արթնացրել էին ձգտում դեպի գիտությունը: Տարիներ շարունակ նա իր խնայողություններով գրքեր էր գնում, իսկ հանգստի սակավ ժամերին զբաղվում էր ընթերցանությամբ: Երբ նա ամուսնացել էր և երեխաներ ունեցել, այդ ազատ ժամերը հազվադեպ էին դարձել: Նա ստիպված էր եղել մտածել վաստակի մասին: Գրքերն աչքաթող արվեցին և պահվեցին պահարանում: Այժմ՝ ձմեռային երկար երեկոներին, մենք զբաղվում էինք այդ հին գրքերի ընթերցանությամբ: Մեծ մասամբ դրանք բուսաբանությանը վերաբերող գրքեր էին, բայց կային նաև ճամփորդական պատմվածքներ: Ալեքսիսն ու Բենժամենը չէին ժառանգել դեպի ընթերցանությունն ունեցած հոր սերը և երրորդ կամ չորրորդ էջի վրա արդեն քնում էին: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես շատ էի կարդում: Այդ ընթերցանությունը չնայած համակարգված չէր, բայց ինձ մեծ օգուտ տվեց:

Լիզան կարդալ չգիտեր, բայց տեսնելով, որ ամեն ազատ րոպե ձեռքս էի առնում գիրքը, ցանկանում էր իմանալ, թե դրանք ինչով են ինձ գրավում: Սկզբում նա խլում էր գրքերը, որովհետև դրանք խանգարում էին ինձ խաղալ նրա հետ: Բայց քանի որ ես նորից էի սկսում կարդալ, նա խնդրում էր, որ բարձրաձայն կարդամ: Ես ու նա շատ ժամեր ենք անցկացրել այդպես: Ես կարդում էի, իսկ նա նստում էր դիմացս՝ աչքն ինձնից չկտրելով:

— Դեմ,— ծիծաղելով հաճախ ասում էր Ակենը,— հիմա տեսնում եմ, որ շատ լավ արեցի, որ քեզ վերցրի ինձ մոտ: Լիզան հետո շնորհակալություն կհայտնի քեզ ամեն ինչի համար:

Ձմռան օյսր։ 1915։ Հովհաննիսիան

թվայնացրել է 1915.info կայքը

«Հետո» նշանակում էր այն ժամանակը, երբ Լիզան կսկսեր խոսել: Բժիշկները չէին կասկածում, որ վաղ թե ուշ նա պիտի խոսեր:

Լիզան ցանկանում էր, որ ես նրան տավիղ նվագել սովորեցնեմ, և շուտով ինձ նման սկսեց փոքրիկ մատներով հարվածել լարերին, բայց երգել, իհարկե, չէր կարողանում, և դա շատ էր բարկացնում նրան: Շատ անգամ արցունք էի տեսնում նրա աչքերում: Բայց նա իսկույն մխիթարվում էր, սրբում աչքերը և հնազանդ ժպիտով հասկացնում էր, որ «հետո» ինքը նույնպես կկարողանա երգել:

Հարազատ որդու պես ընդունված լինելով Ակենի ընտանիքում՝ ես հավանաբար ընդմիշտ կմնայի նրանց մոտ, եթե աննպասելի աղետը մի անգամ ևս չփոխեր իմ կյանքը:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 20

ՍՆԱՆԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԸ

Ես արդեն ասել եմ, որ գարնանն Ակենը շահպրակներ էր աճեցնում, իսկ երբ նրանք վերջանում էին, փոխարինում էր այլ ծաղիկներով, որովհետև լավ պարտիզպանի մոտ ոչ մի կտոր հող չպետք է մնար դատարկ: Շահպրակներից հետո Ակենը հսկայական քանակությամբ թավոտ աստղածաղիկներ, զանգակածաղիկներ ու դափնեվարդեր էր աճեցնում, և մեր ջերմոցները լի էին նրանցով:

Որպեսզի ծաղիկները ծաղկեին ցանկացած ժամկետի, պահանջվում էր հատուկ հմտություն, ինչպես նաև մեծ աշխատանք ու խնամք:

Օգոստոսի սկզբներին մեր պարտեզը հիանալի վիճակում էր: Բաց երկնքի տակ ծաղկում էին թավոտ աստղածաղիկները, իսկ փեղկերով ծածկված ջերմոցներում՝ զանգակածաղիկներն ու դափնեվարդերը:

Փարթամ թփերը ծայրեծայր ծածկված էին կոկոններով:

Ծաղիկները հրաշալի էին աճում, և Ակենը, ձեռքերը շփելով, ուրախ–ուրախ ասում էր.

— Մենք լավ կվաստակենք:

Ամառվա ընթացքում մենք քիչ չէինք աշխատել, նույնիսկ տոն օրերին էլ չէինք հանգստացել: Հիմա, երբ ամեն ինչ պատրաստ էր, հայրիկը ցանկացավ

թվայնացրել է 1915.info կայքը

մեզ մի քիչ ուրախություն պատճառել: Նա որոշեց առաջիկա կիրակի օրը ընտանիքով գնալ Արկեյլ՝ իր ընկերոջ մոտ, որը նույնպես պարտիզպան էր:

Այդ օրը մենք պատրաստվում էինք աշխատանքն ավարտելու ժամը երեքին կամ չորսին, իսկ ժամը մոտավորապես վեցին լինել Արկեյլում: Հետո այնտեղ ճաշելով՝ պետք է վերադառնայինք և շուտ պառկեինք, որպեսզի հաջորդ օրը թարմ ուժերով կրկին աշխատանքի անցնեինք:

Մենք բոլորս էլ շատ էինք ուրախացել, որ պետք է հաճելի զբոսանք կատարեինք:

Ժամը չորսին Ակենը կողպեց դարպասը և ուրախ ձայն տվեց.

— Գնանք, Կա՛պի, դե՛, առաջ:

Լիզայի ձեռքը բռնելով՝ ես առաջ վազեցի: Կապին նետվեց մեր հետևից՝ ուրախ հաչելով ու մեր շուրջը ցատկոտելով: Նա հավանաբար կարծում էր, թե մենք կրկին գնում ենք թափառելու, և դա շատ էր ուրախացնում նրան:

Մենք տոնական զգեստներ էինք հագել, և մարդիկ հետաքրքրությամբ նայում էին մեզ: Չգիտեմ, թե ես ինչ տեսք ունեի, բայց Լիզան իր երկնագույն շորով, ծղոտե գլխարկով ու մոխրագույն պարուսինե կոշիկներով սքանչելի էր: Նրա աչքերն ու դեմքը արտահայտում էին աշխուժություն և անկեղծ ուրախություն:

Ժամանակն անցավ աննկատելիորեն, բայց ճաշից հետո երեխաներից մեկը նկատեց, որ երկինքը ծածկվել էր չարագուշակ սև ամպերով: Մենք ճաշում էինք բացօթյա՝ մի մեծ ծառի տակ, և իսկույն հասկացանք, որ ամպրոպ է լինելու:

— Երեխաներ, պետք է տուն վերադառնանք,— ասաց Ակենը:

Այդ բառերը լսելով՝ բոլորս միաձայն բացականչեցինք. «Արդե՞ն»: Լիզան, իհարկե, ոչինչ չասաց, բայց բողոքում էր շարժումներով: «Կարող է քամին բարձրանալ և շրջել փեղկերը,— շարունակեց հայրիկը:— Ճանապարհ ընկնենք, շո՛ւտ»:

Մենք չառարկեցինք. բոլորս էլ շատ լավ գիտեինք, թե պարտիզպանի համար ինչ արժեն ապակյա փեղկերը: Եթե քամին ջարդի ապակիները, Ակենը կսնանկանա:

— Ես Ալեքսիսի ու Բենժամենի հետ արագ կգնամ, իսկ Ռեմին, Էտյենետտան և Լիզան կգան մեր հետևից:

Նրանք շտապով հեռացան: Ես և Էտյենետտան չէինք կարող արագ գնալ, որովհետև հարմարվում էինք Լիզայի քայլերին: Հիմա մենք այլևս չէինք ծիծաղում, չէինք թռչկոտում և ուրախանում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մրրիկը սաստկանում էր, երկինքը գնալով ավելի էր սևանում, քամին փոշու ամպեր էր բարձրացնում: Հեռվում ճայթում էր ամպրոպը, և նրա դղրդյունը գնալով ավելի էր մոտենում:

Կհասցնե՞նք տուն վերադառնալ: Կարևորն այն էր, որ Ակենը, Ալեքսիսն ու Բենժամենը ժամանակին հասնեին: Մենք կարող էինք միայն թրջվել անձրևից, բայց նրանք պետք է ժամանակին հանեին փեղկերը, որ քամին չտապալեր ու ջարդեր:

Ամպրոպը ճայթում էր ավելի ու ավելի հաճախակի, օրը բոլորովին մթնեց: Քամին պատառոտում էր ամպերը, և ամեն րոպե կարող էր տեղատարափ անձրև սկսվել: Հանկարծ ամպրոպի դղրդյունի հետ միասին մենք լսեցինք ինչ–որ սարսափելի ու անհասկանալի աղմուկ:

Կարկուտ էր: Սկզբում հատուկենտ հատիկներ էին թափվում, հետո դարձավ տեղատարափ:

Ստիպված եղանք թաքնվել մի դարպասատակում:

Մի րոպեում փողոցը սպիտակեց, կարծես ծածկվեց ձյունով: Կարկուտն աղավնու ձվի մեծություն ուներ, որը ցած էր թափվում խլացուցիչ դղրդյունով, և որին միախառնվում էր ջարդվող ապակիների զնգոցը: Կարկուտի հետ տանիքներից փողոց էին թռչում խավաքարտի կտորներ, պատի ծեփ ու կղմինդրի կտորտանք, որոնք սևին էին տալիս սպիտակ հետնապատկերի վրա:

— Ինչ կլինեն փեղկերը,— բացականչեց Էդյենետտան:

— Գուցե հայրիկը ժամանակին է տեղ հասել,— պատասխանեցի ես:

— Նույնիսկ եթե տուն հասած լինեն մինչև կարկուտի գալը, միևնույնն է, չեն հասցնի փեղկերը ծղոտով ծածկել, և հիմա հավանաբար ամեն բան ջարդվել է,— շարունակեց նա:

— Բայց ասում են, որ կարկուտը գալիս է տեղ–տեղ միայն:

— Մենք շատ մոտ ենք տանը և դրա վրա հույս դնել չենք կարող: Եթե կարկուտը նույն ուժգնությամբ տեղացել է պարտեզի վրա, ամեն ինչ կորած է: Տեր Աստված, հայրիկն այնքա՜ն մեծ հույսեր էր կապում ծաղիկների հետ և փողի այնպիսի՛ կարիք ունի:

Կարկուտը տևեց ընդամենը մի քանի րոպե և նույնքան հանկարծակի դադարեց, ինչպես սկսվել էր: Ամպերը հիմա շարժվում էին դեպի Փարիզ, և մենք սիրտ արեցինք վերջապես դուրս գալ մեր թաքստոցից:

Շատ շուտով մենք մոտեցանք տանը: Դարպասը բաց էր, մենք վազեցինք այգի:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչ սարսափելի տեսարան բացվեց մեր աչքերի առջև: Ամեն ինչ ջարդված էր, տակնուվրա եղած ու տրորված: Փեղկերը, ծաղիկները, ջարդված ապակիների կտորտանքը. այս ամենը իրար էին խառնվել: Մեր այգին, որը դեռ այս առավոտյան այնպես հրաշալի փթթում էր, այժմ խղճուկ ավերակ էր դարձել:

Մենք երկար ժամանակ չէինք կարողանում գտնել հայրիկին: Վերջապես գտանք նրան մեր ջերմոցի մոտ, որի բոլոր ապակիները ջարդվել էին: Ծայրաստիճան հուսահատված՝ նա նստել էր փոքրիկ նստարանին՝ ավերակների մեջ: Ալեքսիսն ու Բենժամենը կանգնել էին նրա դիմաց:

— Իմ խեղճ երեխաներ,— բացականչեց Ակենը՝ մեր ոտքի տակ խշխշացող ապակու ձայնից իմանալով, որ մենք եկել ենք:— Իմ խեղճ երեխաներ:

Եվ Լիզային գիրկն առնելով՝ դառնորեն լաց եղավ:

Դա մեծ աղետ էր: Տեսարանը սարսափելի էր, իսկ հետևանքները՝ ավելի սարսափելի:

Շուտով ես Էտյենետտայից և տղաներից իմացա, թե որքան անելանելի է նրանց հոր դրությունը:

Տասը տարի առաջ Ակենն այս պարտեզը վերցրել էր վարձով և տուն էր կառուցել: Այն մարդը, որը վարձով տվել էր այդ հողամասը, փոխարինաբար դրամ էր տվել՝ անհրաժեշտ գույք և կահավորում գնելու համար: Ակենը պարտավոր էր պարտքը վճարել տասնհինգ տարվա ընթացքում: Մինչև հիմա, շնորհիվ ջանասեր աշխատանքի և խնայողության, նա կանոնավոր կերպով վճարում էր դրամը: Վարկատուն սպասում էր վճարն ուշացնելուն, որպեսզի խլի նրանից հողամասը, տունը և գույքը՝ իհարկե, իրեն պահելով տասը տարվա ընթացքում վճարած դրամը: Նա համաձայնվեց հողամասը տալ՝ հույս ունենալով, որ տասնհինգ տարվա ընթացքում ի վերջո կգա այնպիսի մի օր, երբ Ակենը չի կարողանա ժամանակին վճարել փողը: Այդ ձևով պարտք տալով՝ նա ոչ մի բան վտանգի չէր ենթարկում:

Այդ օրը, որ վաղուց սպասում էր վարկատուն, աղետի պատճառով վրա հասավ: Ինչ էր լինելու հիմա:

Շատ շուտով մենք իմացանք այդ հարցի պատասխանը: Հերթական վճարումը չանելու հաջորդ օրը մեզ մոտ եկավ սև կոստյումով մի մարդ և Ակենին ինչ–որ թուղթ տվեց: Դատական կատարածուն էր:

Հիմա Ակենը համարյա տանը չէր լինում: Ո՞ւր էր գնում՝ չգիտեմ: Նա մեզ ոչինչ չէր ասում: Ամենայն հավանականությամբ նա շրջում էր դատարանները: Ես սարսափով էի մտածում դատարանի մասին: Չէ՞ որ Վիտալիսն էլ

թվայնացրել է 1915.info կայքը

դատվեց, և ես գիտեի, թե ինչով ավարտվեց դա: Բայց Ակենը ստիպված եղավ շատ ավելի երկար սպասել դատարանի որոշմանը, քան Վիտալիսը:

Անցավ ձմռան մի մասը: Մենք, իհարկե, չէինք կարող ապակի գցել փեղկերը և վերանորոգել ջերմոցները, այդ պատճառով զբաղվեցինք բանջարեղեն և այնպիսի ծաղիկներ աճեցնելով, որոնք մեծ խնամք չէին պահանջում: Դրանով մենք շատ վաստակել չէինք կարող, բայց և այնպես որոշ եկամուտ ստանում էինք:

Մի երեկո Ակենը վերադարձավ սովորականից ավելի ընկճված:

— Ամեն բան վերջացավ, երեխաներ:

Ես ուզում էի դուրս գալ, որովհետև հասկացա, որ նա ցանկանում է ինչ–որ կարևոր բան հաղորդել: Բայց նա չթույլատրեց:

— Միթե դու մեր ընտանիքի անդամը չես: Չնայած դու փոքր ես, բայց արդեն բավականին վիշտ տեսել ես և կհասկանաս ինձ: Երեխաներ, ես պետք է բաժանվեմ ձեզնից:

Մենք հուսահատության մեջ էինք: Լիզան ընկավ հոր գիրկը և լաց լինելով համբուրում էր նրան:

— Դուք, իհարկե, հասկանում եք, որ ես իմ կամքով երբեք չէի թողնի այնպիսի հրաշալի երեխաների, ինչպիսին դու և իմ սիրելի Լիզան եք,— ու նա քնքշորեն կրծքին սեղմեց նրան:— Բայց դատարանը որոշել է, որ ես պետք է վճարեմ պարտքս: Ես փող չունեմ, իսկ ունեցվածքի վաճառքը չի կարող ծածկել պարտքս: Դրա համար ես ստիպված եմ բանտ նստել հինգ տարի:

Մենք դառնագին լաց եղանք:

— Շատ վշտալի է, բայց ի՛նչ արած: Օրենքը մնում է օրենք: Հի՛նգ տարի: Ինչպես պետք է այդքան ժամանակ ապրեք առանց ինձ, իմ սիրելի՛ երեխաներ:

Տիրեց լռություն:

— Ես շատ մտածեցի և ահա թե ինչ որոշեցի: Ռեմին նամակ կգրի Դրեզի իմ քրոջը՝ Կատերինային, որպեսզի նա անհապաղ գա այստեղ: Նա խելացի ու գործնական կին է և կօգնի մեզ ճիշտ որոշում ընդունելու:

Կյանքումս առաջին անգամ նամակ էի գրում և այն էլ այսպիսի ծանր ու տխուր նամակ: Այն բոլորը, ինչ ասաց Ակենը, շատ անորոշ էր, բայց և այնպես նրա բառերի մեջ մեզ համար ինչ–որ հույսի նշույլ կար: Պետք է գար Կատերինա հորաքույրը, որը խելոք կին էր, և մեզ թվում էր՝ դա բավական էր, որ վերանային մեր բոլոր դժվարությունները:

Բայց ոստիկանները նրանից շուտ հայտնվեցին:

թվայնացրել է 1915.info կայքը

Ակենն այդ օրը պատրաստվում էր քաղաք գնալու իր ընկերներից մեկի մոտ, երբ եկան ոստիկանները, որպեսզի նրան բանտ տանեն: Ակենը սաստիկ գունատվեց և ոստիկաններից թույլտվություն խնդրեց՝ հրաժեշտ տալու երեխաներին:

Ես վազեցի այգի՝ տղաներին կանչելու: Երբ մենք եկանք, Ակենը գրկել էր Լիզային, որը դառնորեն լալիս էր: Ոստիկաններից մեկն ինչ–որ բան շշնջաց Ակենի ականջին, բայց թե ինչ, ես չլսեցի:

— Այո՛,— պատասխանեց հայրիկը,— Դուք իրավացի եք, այդպես է պետք:

Նա արագ ոտքի կանգնեց, Լիզային ցած իջեցրեց, չնայած Լիզան բռնել էր և չէր ուզում բաց թողնել նրա ձեռքը: Հետո Ակենը համբուրեց Էմյենետտային, Ալեքսիսին ու Բենժամենին: Ես կանգնել էի սենյակի անկյունում և լաց էի լինում: Նա կանչեց ինձ:

— Իսկ դու ինչո՞ւ չես ուզում ինձ հրաժեշտ տալ, Ռեմի: Մի՞թե դու իմ որդին չես:

Վշտացած ու շփոթված մենք չգիտեինք, թե ինչ անենք:

— Ինձ մի՛ ուղեկցի,— կարգադրեց հայրիկը:

Եվ Լիզայի թաթիկը Էմյենետտայի ձեռքի մեջ դնելով՝ արագ դուրս եկավ սենյակից:

Ես ուզում էի գնալ նրա հետևից, բայց Էմյենետտան չթողեց: Մենք խիստ վշտացած կանգնել էինք խոհանոցում, լաց էինք լինում և չգիտեինք, թե ինչ անենք:

Այդ վիճակում էլ գտավ մեզ Կատերինա հորաքույրը, որը եկավ Ակենին տանելուց մի ժամ հետո: Պարզվեց, որ նա շատ եռանդուն և վճռական բնավորության տեր կին է: Երբեմնի Կատերինա հորաքույրը, որպես ստնտու, աշխատել էր Փարիզում: Նա կարողանում էր լավ ճանաչել մարդկանց և գիտեր կարգի դնել իր գործերը: Մեզ համար մեծ օգնություն էր, որ նա իր վրա վերցրեց մեր ճակատագրի հոգսը:

Նրա գալուց մի շաբաթ չանցած՝ որոշվեց մեր բախտը. քանի որ երեխաները շատ փոքր էին և չէին կարող ինքնուրույն ապրել ու աշխատել, հարազատները որոշեցին նրանց վերցնել իրենց մոտ: Լիզան պետք է գնար Կատերինա հորաքրոջ մոտ, Ալեքսիսը՝ Վարս՝ հանքափոր հորեղբոր մոտ, Բենժամենը՝ մյուս հորեղբոր մոտ, որն այգեպան էր Սեն Կանտենում, իսկ Էմյենետտան գնալու էր հորաքրոջ մոտ, որն ապրում էր Էսնանդում: Ես

թվայնացրել է 1915.info կայքը

լսում էի ու սպասում, թե հերթը երբ կհասնի ինձ: Եվ քանի որ Կատերինա հորաքույրը լռում էր, ես հարցրի.

— Իսկ ե՞ս:

— Բայց չէ՞ որ դու մեր հարազատը չես:

— Ես աշխատել եմ բոլորի հետ միասին: Հարցրեք Ալեքսիսին և Բենժամենին, թե ես կարողանո՞ւմ եմ արդյոք աշխատել:

— Դու ուտել էլ գիտես, այնպես չէ՞:

— Նա մերն է, նա մեր ընտանիքի անդամն է,— գոռացին երեխաները:

Լիզան մոտեցավ հորաքրոջը և աղերսագին ծալեց ձեռքերը: Նրա շարժումները բառերից էլ պերճախոս էին:

— Փոքրի՛կս,— դիմեց նրան հորաքույր Կատերինան,— դու խնդրում ես, որ նա գա քեզ հետ: Բայց գիտե՞ս, որ կյանքում միշտ չէ, որ անում ես այն, ինչ ցանկանում ես: Դու իմ հարազատ եղբոր աղջիկն ես, և եթե իմ ամուսինը դժգոհի, որ դու եկել ես, բավական է միայն, որ ես նրան ասեմ. «Նա մեր հարազատն է: Ո՞վ պետք է խղճա նրան, եթե ոչ մենք»: Նույն բանը կարող են ասել և մյուս բարեկամները: Հարազատներին ընդունում են, իսկ օտարներին՝ ոչ: Մենք ինքներս էլ հազիվ ենք ապրում:

Չէի կարող առարկել. նա իրավացի էր: Չէ՞ որ ես նրանց հարազատը չեմ, միթե ես կարող էի որևէ բան պահանջել:

Կատերինա հորաքույրը երբեք չէր փոխում իր ընդունած որոշումները: Նա նախազգուշացրեց, որ մենք պետք է վաղը բաժանվենք, և կարգադրեց, որ պառկենք քնելու: Հենց որ մենք գնացինք հարևան սենյակը, երեխաները շրջապատեցին ինձ, իսկ Լիզան, արցունքն աչքերին, նետվեց պարանոցիս: Այդ ժամանակ հասկացա, որ նրանք չէին մոռացել ինձ, և խիղճը տանջում էր նրանց: Հանկարծ գլուխս անսպասելի մի միտք եկավ:

— Լսե՛ք,— ասացի ես,— չնայած ձեր հարազատները չեն ընդունում ինձ, բայց չէ՞ որ դուք ինձ հարազատ եք համարում:

— Այո՛,— միաձայն պատասխանեցին բոլորը,— դու միշտ մեր եղբայրը կլինես:

Լիզան բառերի փոխարեն սեղմեց ձեռքս և այնքան արտահայտիչ հայացքով նայեց ինձ, որ աչքերս արցունքով լցվեցին:

— Լավ, ես կլինեմ ձեր եղբայրը և կկարողանամ ապացուցել այդ:

— Ինչ ես որոշել,— հարցրեց Բենժամենը:

— Ես չեմ ուզում այստեղ աշխատանքի մտնել. չէ՞ որ այդ դեպքում ստիպված կլինեմ մնալ Փարիզում և զրկվել ձեզ տեսնելուց: Ես նորից թափառա-

թվայնացրել է 1915.info կայքը

կան երաժիշտ կդառնամ, կվերցնեմ տավիղս, կգնամ քաղաքից քաղաք և հերթով բոլորիդ կայցելեմ: Ես չեմ մոռացել իմ երգերն ու պարերը և կարող եմ դրանով վաստակել օրվա հացս:

Նրանց դեմքերի արտահայտությունից ես զգացի, որ իմ առաջարկությունը դուր եկավ: Մենք դեռ երկար ժամանակ խոսում էինք, ծրագրեր կազմում ապագայի համար, մտաբերում անցյալը:

Վերջապես Էդյենետտան ստիպեց, որ պառկենք քնելու: Բոլորս էլ վատ քնեցինք այդ գիշեր, մանավանդ ես:

Հետևյալ օրը՝ վաղ առավոտյան, Լիզան տարավ ինձ այգի, և ես հասկացա, որ նա ցանկանում է ինչ–որ բան ասել ինձ:

— Դու ցանկանում ես խոսել ինձ հետ,— հարցրի ես:

Շարժումներով ու դիմախաղով նա բացատրեց, որ սկզբում ես պետք է իմանամ, թե ինչպես են տեղավորվել Էդյենետտան, Ալեքսիսը և Բենժամենը, իսկ հետո գնամ Դրեզի և ամեն բան պատմեմ իրեն: Տեսնելով, որ ես հասկացա, նա ժպտաց:

Մեկնումը նշանակված էր առավոտվա ժամը ութին: Կատերինա հորաքույրը կառք էր վարձել, որպեսզի նախ՝ երեխաներին տանի բանտ՝ հորը հրաժեշտ տալու համար, իսկ հետո՝ կայարան:

Ժամը յոթին Էդյենետտան նույնպես ինձ այգի կանչեց:

— Մենք բաժանվում ենք: Ես ուզում եմ նվիրել քեզ այս փոքրիկ արկղը: Այստեղ կա թել, ասեղներ և մկրատ. դրանք ճանապարհին պետք կգան քեզ: Չէ՞ որ ես քեզ հետ չեմ լինի, որ կոճակդ կարեմ կամ կարկատեմ հագուստդ: Երբ ձեռքդ առնես արկղիկը, դու կհիշես մեզ:

Երբ Էդյենետտան տուն վերադարձավ, ինձ մոտեցան Ալեքսիսն ու Բենժամենը:

— Ես երկու դրամ ունեմ, յուրաքանչյուրը՝ հարյուր սու,— ասաց Ալեքսիսը,— և ես ցանկանում եմ, որ դու դրանցից մեկը անպայման վերցնես:

Ես ուզում էի հրաժարվել, բայց Ալեքսիսը ձեռքս դրեց արծաթյա մեծ դրամը:

Բենժամենը նույնպես չմոռացավ ինձ և նվիրեց իր սիրելի դանակը: Ինձ շատ հուզեց նրանց սիրո այդպիսի արտահայտությունը:

Իրերն արդեն դրել էին կառքը: Ես ձայն տվեցի Կապիին, որը, տավիղը ձեռքիս տեսնելով, ուրախ հաչեց: Նա հասկանում էր, որ մենք վերադառնում ենք մեր նախկին կյանքին, և որ հիմա ինքը կրկին կկարողանա ազատ վազվզել:

թվայնացրել է 1915.info կայքը

Հասավ բաժանման րոպեն: Կատերինա հորաքույրը մեզ շտապեցնում էր: Նա կառք նստեցրեց Էդյենետտային, Ալեքսիսին, Բենժամենին և կարգադրեց, որ ես Լիզային նստեցնեմ իր ծնկներին: Քանի որ ես շարունակում էի անշարժ կանգնած մնալ կառքի մոտ, նա կամացուկ մի կողմ հրեց ինձ և դռնակը փակեց:

— Իմ փոխարեն համբուրե՛ք հայրիկին...— բացականչեցի ես և դառնորեն լաց եղա:

— Քշի՛ր,— ձայն տվեց կառապանին Կատերինա հորաքույրը:

Ձիերը շարժվեցին:

Արցունքների միջից ես տեսնում էի Լիզային, որն օդային համբույրներ էր ուղարկում ինձ: Հետո կառքը թեքվեց մի ուրիշ փողոց և կորավ փոշու ամպերի հետևում: Ամեն ինչ վերջացած էր:

Տավիղին հենված՝ երկար ժամանակ կանգնել ու նայում էի նրանց հետևից, հետո տավիղի փոկը ուսիս գցեցի: Կապին, տեսնելով լավ ծանոթ այդ շարժումը, իսկույն ականջները սրեց, վեր թռավ և ինձ հառեց իր պսպղուն աչքերը:

— Կա՛պի, առա՛ջ:

Կապին բարձրաձայն հաչեց և սկսեց ուրախ–ուրախ ցատկոտել շուրջս:

ЦЁЛЬНЫЙ ОЛИСТВЕННЫЙ Г. 1915.ИЮЛЬ ЦЕЛЬНЫЙ



Հրատարակվել է 1915.info կայքում

LIBERTÉ ÉGALITÉ FRATERNITÉ

Ֆրանսիական դեսպանատունը Երևանում, 1915-ին կառուցված

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ 1. Առաջ
Գլուխ 2. Սև քաղաքը
Գլուխ 3. Ես հանքաքար եմ կրում
Գլուխ 4. Ջրհեղեղը
Գլուխ 5. Հանքախորշում
Գլուխ 6. Մենք փրկված ենք
Գլուխ 7. Երաժշտության դասը
Գլուխ 8. Կովը
Գլուխ 9. Բարբերեն մայրիկը
Գլուխ 10. Հին և նոր ընտանիքները
Գլուխ 11. Բարբերենը
Գլուխ 12. Որոնումներ
Գլուխ 13. Դրիսկոլների ընտանիքը
Գլուխ 14. Ես սարսափում եմ իմ ծնողներից
Գլուխ 15. Կապին գող է դառնում
Գլուխ 16. Խաբված հույսեր
Գլուխ 17. Տոները
Գլուխ 18. Գողացված ապրանք վաճառողները
Գլուխ 19. Բոբը
Գլուխ 20. «Կարապը»
Գլուխ 21. Երազները իրականացան
Գլուխ 22. Ընտանիքում

Ալեքսանդր Հյուսնիկյան © 1915-ից հայր

ЦДЛмһ оЈш·5Г6.ıпfo Ыwјрр Ғ 1915.info Ыwјцwgпbц

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 1

ԱՌԱՔ

Նախքան հեռավոր ճամփորդությունս սկսելը որոշեցի տեսնել նրան, ով այս վերջին տարիների ընթացքում ինձ համար հայր էր եղել: Չնայած ես երբեք չէի եղել բանտում և չգիտեի, թե որտեղ է դա, բայց չէի կասկածում, որ կգտնեմ:

Վախենալով ոստիկաններից՝ Կապիի վզից պարան կապեցի, և դա հավանաբար շատ վիրավորեց նրան: Այդպես՝ Կապիի վզկապից բռնած, ես գնացի՝ բանտը գտնելու:

Երբեք կյանքումս ավելի զզվելի ու մռայլ բան չեմ տեսել, քան բանտի այդ դարպասը: Մինչ դարպասից ներս մտնելը մի վայրկյան կանգ առա. ինձ թվում էր՝ այդ սարսափելի դարպասը, իմ հետևից փակվելով, այլևս երբեք չէր բացվելու:

Ինձ տարան ընդունարան, որտեղ շուտով եկավ Ակենը:

— Ես քեզ սպասում էի, թանկագի՛ն Ռեմի,— քնքշորեն դիմեց նա ինձ:— Ես նախատեցի Կատերինային, որ քեզ չէր բերել երեխաների հետ:

Այդ օրը ես շատ վշտացած ու ընկճված էի, բայց նրա բառերն ինձ մի քիչ մխիթարեցին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Երեխաներն ասացին,— շարունակեց նա,— որ դու ցանկանում ես կրկին դառնալ թափառաշրջիկ երաժիշտ: Միթե դու մոռացել ես, որ քիչ էր մնում քաղցից ու ցրտից մեռնեիր մեր դարպասի մոտ:

— Ո՛չ, ես ոչինչ չեմ մոռացել:

— Բայց այն ժամանակ քեզ հետ էր տերդ, իսկ քեզ նման փոքրիկ տղան մենակ թափառել չի կարող:

— Կապին ինձ հետ է:

— Իհարկե, Կապին հավատարիմ շուն է, բայց չէ՞ որ ընդամենը շուն է: Իսկ ինչպե՞ս ես փող վաստակելու:

— Կնվագեմ ու կերգեմ. Կապին էլ հնարքներ ցույց կտա:

— Լսի՛ր, Ռեմի, հիմարություն մի՛ անի, այստեղ մի որևէ գործի՛ անցիր: Դու արդեն սովորել ես լավ աշխատել, և ամենքն էլ քեզ ուրախությամբ կվարձեն: Իսկ դա շատ ավելի լավ է, քան մեծ ճանապարհներով քարշ գալը:

Ակենի բառերը խիստ հուզեցին ինձ, նամանավանդ, որ ինքս էլ շատ էի մտածել այդ մասին: Բայց որքան կվշտանա Լիզան, եթե նրա մոտ չգնամ: Նա կմտածի, որ ես այլևս չեմ սիրում իրեն կամ էլ մոռացել եմ: Չէ՞ որ նա այս երկու տարվա ընթացքում այնքա՜ն սեր և ուշադրություն էր ցուցաբերել իմ նկատմամբ: Հիմա հասել է իմ հերթը, որ այդ բոլորի համար հատուցեմ նրան:

— Միթե Դուք չեք ցանկանում տեղեկություններ ստանալ Ձեր երեխաներից,— հարցրի ես:

Նա շեշտակի նայեց ինձ, հետո ձեռքերս բռնելով՝ ասաց.

— Լսի՛ր, տղա՛ս, ես պետք է համբուրեմ քեզ այդ խոսքերիդ համար. դա ապացուցում է, որ դու բարի սիրտ ունես:

Մենք մենակ էինք ընդունարանում, նստած էինք նստարանին՝ կողք կողքի: Ես նետվեցի նրա գիրկը, և մենք միաժամանակ լուռ էինք:

Հանկարծ Ակենը սկսեց ինչ–որ բան փնտրել բաճկոնակի գրպաններում և դուրս բերեց այնտեղից մի մեծ արծաթյա ժամացույց, որն ամրացված էր կաշվե փոկով:

— Ես ուզում եմ որևէ հիշատակ տալ քեզ: Ահա՛, իմ ժամացույցը նվիրում եմ քեզ: Սա արժեք ունեցող բան չէ, այլապես ես արդեն վաղուց վաճառած կլինեի: Բացի այդ՝ այնքան էլ լավ չի աշխատում, բայց սա միակ բանն է, որ մնացել է ինձ:

Այդ ասելով՝ նա ինձ հանձնեց ժամացույցը: Երբ ես հրաժարվեցի ընդունել այդպիսի հրաշալի նվերը, նա տխրությամբ ավելացրեց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինձ այստեղ ժամացույց պետք չէ: Բանտում ժամանակը դանդաղ է անցնում, և ես տխրությունից կմեռնեմ, եթե հաշվեմ ժամերը: Մնաս բարո՛վ, սիրելի՛ Ռեմի, մի անգամ էլ գրկի՛ր ինձ, դու լավ տղա ես և միշտ մնա՛ այդպիսին:

Կարծեմ՝ նա բռնեց ձեռքս, որ ճանապարհ դնի մինչև ելքի դուռը: Ես այնքան հուզված էի ու վշտացած, որ չեմ հիշում, թե ինչպես դուրս եկա փողոց:

Երկար, շատ երկար կանգնեցի բանտի դռան մոտ՝ ի վիճակի չլինելով շարժվել տեղիցս: Հավանաբար անվերջ այդպես կկանգնեի, եթե պատահաբար ձեռքս գրպանումս չդիպչեր ինչ–որ կլոր, կարծր առարկայի: Ես իսկույն հիշեցի ժամացույցիս մասին: Ժամացո՛ւյց: Ես սեփական ժամացույց ունեմ, ի՛նչ երջանկություն: Ես կարող եմ դրանով իմանալ ժամանակը: Ժամացույցին նայելով՝ տեսա, որ ժամը ուղիղ տասներկուսն էր: Հրաժեշտի մի հայացք ձգելով մոայլ պատերին՝ որոշեցի, որ ճանապարհ ընկնելու ժամանակն է:

Նախ և առաջ ես պետք է գնեի Ֆրանսիայի քարտեզը: Ես գիտեի, որ քարտեզներ վաճառվում են Սենայի գետափին, և քայլերս ուղղեցի այնտեղ: Երկար ժամանակ չէի կարողանում այնպիսի քարտեզ գտնել, ինչպիսին պետք էր ինձ. ես ուզում էի, որ քարտեզը կպցրած լինի քաթանի վրա, հեշտությամբ ծալվի և լինի հնարավորինս էժան: Վերջապես ընտրեցի մի քարտեզ, որն այնքան հին էր ու քրքրված, որ վաճառողը զիջեց յոթանասունհինգ սանտիմով:



թվայնացրել է 1915.info կայքը

Հիմա ես այլևս ոչ մի անելիք չունեի և որոշեցի հնարավորինս շուտ դուրս գալ Փարիզից: Անցնելով Դե–Լուրսին փողոցի մոտով՝ ես ակամայից մտաբերեցի Գարաֆոլիին, Մատտիային, Ռիկարդոյին և իմ խեղճ, թանկագին Վիտալիսին, որը մեռավ այն պատճառով, որ չցանկացավ տալ ինձ այդ դաժան պադրոնեին:

Հանկարծ նկատեցի մի տղայի, որն ուժասպառ հենվել էր եկեղեցու ցանկապատին: Ինձ թվաց, որ դա փոքրիկ Մատտիան է: Նույն տխուր աչքերն էին, արտահայտիչ շրթունքները, նույն հնազանդ ու հեզ տեսքը, նույն մեծ գլուխը և ծիծաղելի, ծաղրանկարային կերպարանքը:

Ցանկանալով ավելի լավ տեսնել տղային՝ ես մոտեցա: Իսկապես դա Մատտիան էր: Նա նույնպես ճանաչեց ինձ, և նրա գունատ դեմքին ժպիտ երևաց:

— Դու եկել էիր Գարաֆոլիի մոտ հենց իմ՝ հիվանդանոց ընկնելու նախօրյակին: Քեզ հետ մի ծերուկ կար՝ ճերմակ մորուքով: Ա՛խ, ինչպես էր ցավում գլուխս այն օրը:

— Դու դեռ ապրում ես Գարաֆոլիի մո՞տ,— հարցրի նրան:

Նախքան պատասխանելը Մատտիան շուրջը նայեց և շշուկով ասաց.

— Գարաֆոլին բանտում է: Նրան ձերբակալել են այն պատճառով, որ մեռցնելու աստիճան ծեծել է Օռլանդոյին:

Ես մեծ հաճույքով լսեցի, որ Գարաֆոլին նստած է բանտում:

— Իսկ ո՞ւր են երեխաները:

— Չգիտեմ, երբ Գարաֆոլիին ձերբակալել են, ես այնտեղ չէի: Երբ ես դուրս եկա հիվանդանոցից, Գարաֆոլին որոշեց, որ ինձ ծեծելը ձեռնտու չէ, քանի որ դրանից հաճախակի հիվանդանում եմ, և ինձ վարձով ուղարկեց Գասոյի կրկեսը: Դու գիտե՞ս Գասոյի կրկեսը: Ո՞չ: Դե լավ, դա իսկական մեծ կրկես չէ, բայց և այնպես կրկես է: Նրանց պետք էր լարախաղաց երեխա: Ես Գասոյի մոտ մնացի մինչև այս երկուշաբթի, բայց հիմա նա ինձ հետ ուղարկեց Գարաֆոլիի մոտ, որովհետև գլուխս միշտ ցավում է, և ինձ համար դժվար է զանազան ակրոբատիկ շարժումներ կատարել:

Վերադառնալով Դե–Լուրսին փողոցը՝ ես այնտեղ ոչ ոքի չգտա: Բնակարանը փակ էր, իսկ հարևանը պատմեց, որ Գարաֆոլին նստած է բանտում: Ես էլ եկա այստեղ և չգիտեմ, թե ուր գնամ և ինչ անեմ:

— Իսկ ինչո՞ւ չես ուզում կրկես վերադառնալ:

— Որովհետև կրկեսը մեկնել է Ռուսան: Իսկ ոտքով ո՞նց հասնեմ Ռուսան: Դա շատ հեռու է, իսկ ես փող չունեմ: Ես երեկվանից ոչինչ չեմ կերել:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես էլ հարուստ չէի, բայց մի քիչ մանր փող ունեի և կարող էի օգնել այդ դժբախտ երեխային:

— Սպասի՛ր ինձ այստեղ,— ասացի Մատտիային և վազեցի հացավաճառի մոտ, որի կրպակը փողոցի անկյունում էր:

Շուտով վերադարձա՝ մի կտոր հաց ձեռքիս, և տվեցի տղային: Նա ագահորեն հարձակվեց հացի վրա:

— Իսկ հետո ի՞նչ ես մտադիր անելու:

— Չգիտեմ:

— Բայց չէ՞ որ դու մի գործով պետք է զբաղվես:

— Ես պատրաստվում եմ վաճառելու ջութակս: Ես դա ավելի շուտ կվաճառեի, բայց շատ դժվար է նրանից բաժանվել: Ջութակն իմ միակ ուրախությունն է: Երբ ես տխրում եմ, գնում եմ որևէ տեղ, ուր ինձ ոչ ոք չի լսում, և նվագում եմ ինքս ինձ համար:

— Ինչո՞ւ չես նվագում փողոցներում:

— Նվագել եմ, բայց ինձ ոչ ոք ոչինչ չի տալիս:

Ես արդեն իմ փորձից գիտեի, թե որքան հաճախ էր դա պատահում:

— Իսկ դո՞ւ,— հարցրեց Մատտիան,— ի՞նչ ես անում հիմա:

Ես ցանկացա գլուխս գովել և հպարտությամբ պատասխանեցի.

— Ես սեփական խումբ ունեմ:

— Ա՛խ, եթե դու համաձայնվեիր...— խեղճ ձայնով ասաց Մատտիան:

— Ինչի՞ն համաձայնվեի:

— Ինձ վերցնելու քո խումբը:

Ստիպված եղա խոստովանել, որ իմ ողջ խումբը Կապին է:

— Թող այդպես լինի, դա կարևոր չէ. երկուսով կլինենք: Աղաչում եմ, վերցրո՛ւ ինձ, հակառակ դեպքում ես ստիպված կլինեմ սովից մեռնել:

Մեռնել սովի՞ց: Ամեն մարդ չի կարող հասկանալ, թե ինչ են նշանակում այդ բառերը: Սիրտս ցավագին ճմլվեց: Ես արդեն գիտեի, թե ինչպես են մեռնում սովից:

— Ես ջութակ եմ նվագում,— շարունակեց Մատտիան,— թռչկոտում ու պարում եմ լարի վրա, ցատկում եմ օղակի միջով, ինչպես նաև երգում: Ես կանեմ ամեն բան, ինչ ցանկանաս, և կլսեմ քեզ: Դու կարող ես ինձ ծեծել, եթե վատ կատարեմ իմ պարտականությունները. ես համաձայն եմ դրան: Միակ բանը, որ խնդրում եմ, այն է, որ գլխիս չխփես, որովհետև գլուխս շատ զգայուն է:

թվայնացրել է 1915.info կայքը

Մատտիային լսելով՝ քիչ մնաց լաց լինեի: Ինչպե՞ս ասեի, թե չեմ կարող նրան իմ խումբը վերցնել: Չէ՞ որ ինձ հետ նույնպիսի հեշտությամբ կարող է սովից մեռնել, ինչպես և մենակ ժամանակ: Ես աշխատում էի համոզել նրան, բայց նա ոչինչ չէր ուզում լսել:

— Ո՛չ,— առարկեց նա,— երկուսով չեն մեռնում սովից, որովհետև մեկն օգնում է մյուսին: Նա, ով ունի, տալիս է նրան, ով չունի. այ, ինչպես որ հիմա դու արեցիր:

Ես այլևս չառարկեցի: Իհարկե, ես պետք է նրան օգնեմ:

— Դե լա՛վ, գնանք, դու կլինես իմ ընկերը:

Եվ տավիղն ուսիս գցելով՝ բացականչեցի.

— Առա՛ջ:

Քառորդ ժամ հետո մենք արդեն դուրս եկանք Փարիզից:

Քամին չորացրել էր ճանապարհը, և ամուր հողի վրա քայլելը հեշտ էր ու հաճելի:

Եղանակը հիանալի էր, գարնանային արևը վառ փայլում էր անամպ կապույտ երկնքում: Խոտը սկսում էր կանաչել, և այս ու այն տեղ արդեն երևում էին մարգարտածաղիկներն ու մորու ծաղիկները, որոնք դեպի արևն էին շրջել իրենց գլխիկները: Այգիներում՝ մատղաշ տերևների միջև, երևում էին չծաղկած յասամանի ողկույզները, և երբ փչում էր մեղմ քամին, բարձր պատերից մեր գլխներին էին թափվում դեղին շահպրակի թերթիկները:

Այգիներում, ճամփեզրի թփերում, մեծ ծառերի վրա՝ ամենուրեք, լսվում էր թռչունների ուրախ ճռվողյունը, և ծիծեռնակները, համարյա գետնի վրայով թռչելով, հետապնդում էին փոքրիկ մժեղներին:

Մեր ճամփորդությունը լավ էր սկսվում: Ես հաստատուն քայլերով գնում էի չոր ճանապարհով, Կապին վազվզում էր մեր շուրջը և հաչում անցնող կառքերի վրա, խճաքարի կույտերի վրա, հաչում անտեղի, միայն հաճույքի համար: Մատտիան, ինչ–որ բանի մասին մտածելով, լուռ քայլում էր կողքովս. ես չէի խախտում նրա լռությունը, որովհետև ինքս էլ շատ բաներ ունեի մտածելու:

Ո՞ւր էինք գնում այդպիսի վճռական քայլերով:

Ճիշտն ասած՝ ինքս էլ չգիտեի: Մենք ուղղակի գնում էինք առաջ, ուր տանում էր ճանապարհը, իսկ հետո ի՞նչ ենք անելու:

Ես խոստացել էի Լիզային տեսնել նրա եղբայրներին ու Էտյենետտային, իսկ հետո այցելել իրեն: Բայց ես չէի պայմանավորվել, թե առաջինն ում պետք է տեսնեմ՝ Բենժամենի՞ն, Ալեքսիի՞ն, թե՞ Էտյենետտային: Ես կարող էի

թվայնացրել է 1915.info կայքը

սկսել, որից որ ցանկանայի, այսինքն՝ կարող էի իմ ընտրությամբ գնալ արևմուտք, հյուսիս կամ հարավ:

Քանի որ մենք Փարիզից դուրս եկանք հարավային ուղղությամբ, ապա Բենժամենի մոտ գնալ չէինք կարող: Մնում էր ընտրություն կատարել Ալեքսիսի և Էդյենետտայի միջև:

Մի պատճառ էլ կար, որը ստիպում էր ինձ գնալ դեպի հարավ. ես ուզում էի տեսնել Բարբերեն մայրիկին: Եթե ես վաղուց չէի խոսում նրա մասին, ապա այդ չի նշանակում, որ մոռացել էի նրան: Շատ անգամ մտածում էի նամակ գրել նրան և ասել. «Ես հիշում եմ քեզ և առաջվա պես սիրում»: Բայց գիտեի, որ նա կարդալ չգիտի, և սարսափելի վախենում էի, որ նամակս Բարբերենի ձեռքն ընկնի:

Հանկարծ Բարբերենը իմ նամակով կգտնի ինձ, կրկին կտանի իր մոտ, կծախի մի նոր տիրոջ, որը բոլորովին նման չի լինի իմ Վիտալիսին: Ավելի լավ է սովից մեռնել, քան նման վտանգի ենթարկվել: Բայց եթե ես անհնարին էի համարում Բարբերեն մայրիկին նամակ գրելը, ապա ինձ թվում էր, որ ես կարող եմ որևէ կերպ տեսնել նրան: Հիմա, երբ արդեն ընկեր ունեի, այդ անելը շատ ավելի հեշտ էր: Ես նախ կուղարկեմ Մատտիային. նա կգնա Բարբերեն մայրիկի մոտ և որևէ առիթով կխոսի նրա հետ: Եթե մայրիկը մենակ լինի, Մատտիան նրան ամեն ինչ կպատմի իմ մասին: Այդ ժամանակ ես առանց վախի ներս կմտնեմ այն տունը, որտեղ անց է կացել իմ մանկությունը, և կնետվեմ իմ ստնտուի գիրկը:

Իսկ եթե ընդհակառակը, Բարբերենը տանը լինի, Մատտիան կխնդրի, որ Բարբերեն մայրիկը գա մի այնպիսի տեղ, ուր ես մենակ կարողանամ տեսնել նրան:

Այդ բոլոր ծրագրերը կազմում էի քայլելիս և դրա համար գնում էի լուռ: Նման կարևոր հարց որոշելն իսկապես որ հեշտ գործ չէր, և բացի այդ՝ մեր ճանապարհին պետք է գտնեի այնպիսի քաղաքներ ու գյուղեր, որտեղ մենք լավ վաստակելու հնարավորություն ունենայինք: Այդ անելու համար ամենալավն այն էր, որ դիմեի քարտեզին:

Ես տոպրակից հանեցի քարտեզը և փռեցի խոտին: Երկար ժամանակ չէի կարողանում կողմնորոշվել: Մտաբերելով, թե ինչպես էր այդ անում Վիտալիսը, ի վերջո այնպիսի ճանապարհ ընտրեցի, որ անպայման անցնենք Շավանոնով:

— Սա ի՞նչ է,— հարցրեց Մատտիան՝ մատնացույց անելով քարտեզը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես նրան բացատրեցի, թե ինչ է քարտեզը և ինչի համար է ծառայում՝ համարյա բառացիորեն կրկնելով այն, ինչ ինձ ասել էր Վիտալիսը:

Մատտիան, աչքերիս նայելով, ուշադրությամբ լսում էր:

— Դրա համար պետք է կարդալ իմանալ:

— Իհարկե, իսկ միթե դու կարդալ չգիտես:

— Ո՛չ:

— Իսկ ուզո՞ւմ ես սովորել:

— Շա՛տ:

— Դե լավ, ես քեզ կսովորեցնեմ:

Քանի որ ես արդեն բացել էի տոպրակիս բերանը, գլուխս մի միտք եկավ՝ զննելու նրա պարունակությունը: Բացի այդ՝ շատ էի ուզում ցույց տալ Մատտիային իմ հարստությունը և ամեն ինչ թափեցի խոտի վրա:

Պարզվեց, որ ես ունեմ կտավե երեք շապիկ, երեք զույգ գուլպա, հինգ թաշկինակ և մի զույգ հնամաշ կոշիկներ: Մատտիային ապշեցրեց իմ հարստությունը:

— Իսկ դո՞ւ ինչ ունես,— հարցրի ես:

— Ջութակս և հագիս շորերը:

— Դե լավ, ամեն ինչ հավասար կկիսենք: Չէ՞ որ մենք ընկերներ ենք. դու կունենաս երկու շապիկ, երկու զույգ գուլպա և երեք թաշկինակ. տոպրակն էլ հերթով կտանենք: Համաձա՞յն ես:

Հիմա երբ կրկին դարձա դերասան, որոշեցի ընդունել համապատասխան տեսք. դրա համար բացեցի Էտյենետտայի արկղիկը և այնտեղից հանեցի մկրատը:

— Մինչ ես կարգի կբերեմ շալվարը,— դիմեցի Մատտիային,— դու ինձ համար ջութա՛կ նվագիր:

— Հաճույքով:

Եվ ջութակը վերցնելով՝ նվագեց:

Այդ ժամանակ քաջաբար մկրատը խրեցի շալվարի մեջ՝ ծնկներից քիչ ցած, և սկսեցի կտրել: Դա հիանալի շալվար էր՝ նույնպիսի մոխրագույն մահուդից, ինչպիսին բաճկոնն ու բաճկոնակն էին: Հիշում եմ, որ ես շատ գոհ էի, երբ Ակենն այդ նվիրեց ինձ: Ես բոլորովին չէի կարծում, թե կարելով փչացնում եմ շալվարը, ընդհակառակը, ինձ թվում էր, որ հիմա դա ավելի լավ տեսք կունենա:

թվայնացրել է 1915.info կայքը

Սկզբում լսում էի Մատտիային և միաժամանակ կտրում շալվարը, բայց քիչ հետո ցած դրեցի մկրատը և սկսեցի ուշադրությամբ լսել: Մատտիան նվագում էր համարյա նույնքան լավ, որքան Վիտալիսը:

— Ո՞վ է քեզ սովորեցրել ջութակ նվագել,— հարցրի ես:

— Ոչ ոք և ամեն ոք: Գլխավորն այն է, որ ես միշտ վարժություններ եմ անում:

— Իսկ ո՞վ է քեզ նոտաներ սովորեցրել:

— Ես նոտաներ չգիտեմ, ես նվագում եմ լսողությամբ:

— Այդ դեպքում ես քեզ կսովորեցնեմ նոտաներով նվագել:

— Դու հավանաբար ամեն բան գիտես:

— Իհարկե: Չէ՞ որ ես խմբի ավագն եմ:

Ես էլ ցանկացա ցույց տալ Մատտիային, թե ինչպես եմ նվագում: Վերցրի տավիղը և երգեցի իմ նեապոլյան երգը:

Այդ ժամանակ Մատտիան, չցանկանալով պարտքի տակ մնալ, բարձրաձայն արտահայտեց իր գոհունակությունը: Բայց այլևս չէր կարելի ժամանակ վատնել փոխադարձ հաճոյախոսություններով և նվագել սեփական հաճույքի համար, անհրաժեշտ էր մտածել այն մասին, որ փող վաստակենք ընթրիքի և գիշերելու համար:

Ես կապեցի տոպրակը, և Մատտիան ուսին առավ այն:

Հիմա ճանապարհին պատահած առաջին իսկ գյուղում մենք պետք է կազմակերպեինք մեր խմբի առաջին ելույթը:

— Սովորեցրո՛ւ ինձ քո երգը,— խնդրեց Մատտիան:— Ես կփորձեմ ջութակով նվագակցել քեզ: Եվ դա պետք է որ լավ ստացվի:

Երբ մենք գյուղ հասանք և սկսեցինք հարմար տեղ փնտրել ներկայացման համար, մի ագարակի բաց դարպասից տեսանք, որ բակը լի է զուգված մարդկանցով: Բոլոր տղամարդկանց մերակնեերին ու կանանց գոտկատեղին ժապավենով ամրացված ծաղիկներ կային: Հավանաբար այստեղ հարսանիք էր: Գլխումս մի միտք ծագեց, որ այդ մարդիկ ուրախությամբ կընդունեն երաժիշտներին և հավանաբար կցանկանան պարել: Այդ մտածելով՝ Մատտիայի և Կապիի ուղեկցությամբ իսկույն մտա բակը և գլխարկը ձեռքիս բռնած ու խոր գլուխ տալով

թվայնացրել է 1915.info կայքը

(ինչպես Վիտալիսն էր անում)՝ մեր ծառայությունն առաջարկեցի առաջին հանդիպած գյուղացուն:

Մի գեր պատանի, որն աղյուսի պես կարմիր դեմք ուներ, և որի խիստ օսլայած օձիքը հասնում էր ականջները, բարեսրտորեն ժպտաց: Նա ինձ ոչինչ չպատասխանեց, բայց հետ շրջվելով՝ երկու մատը բերանը խոթեց և այնպիսի ականջ ծակող սուլոց արձակեց, որ Կապին վախեցավ:

— Էյ դուք,— գոռաց պատանին:— Էլ ի՞նչ եք մտածում երաժշտության մասին: Մեզ մոտ երաժիշտներ են եկել:

— Երաժշտությո՛ւն, երաժշտությո՛ւն,— գոռացին տղամարդիկ և կանայք:

— Գրավե՛ք ձեր տեղերը, կադրիլ ենք պարելու:

Եվ մի քանի րոպեում պարողները շարվեցին բակի կենտրոնում՝ այս ու այն կողմ քշելով վախեցած հավերին:

— Դու կադրիլ նվագել գիտե՞ս,— շշուկով հարցրի ես Մատտիային իտալերեն:

— Այո՛:

Եվ նա սկսեց ջութակով նվագել այդ պարեղանակը: Պարզվեց, որ ես նույնպես գիտեի: Մենք փրկված էինք:

Ինչ–որ ցախատնից դուրս քաշեցին երկակնանի մի սայլակ, դրեցին բարձր մի տեղ և ստիպեցին, որ մենք բարձրանանք վրան:

Չնայած ես ու Մատտիան երբեք միասին չէինք նվագել, բայց վատ չկատարեցինք կադրիլը: Բարեբախտաբար, մեր ունկնդիրները պահանջկոտ չէին և նուրբ լսողություն չունեին:

— Ձեզնից որևէ մեկը կոռնետապիստոն նվագել գիտի՞,— հարցրեց մեզ կարմրաթուշ հաստլիկ պատանին:

— Ես գիտեմ,— պատասխանեց Մատտիան:— Բայց ես կոռնետապիստոն չունեմ:

— Ես հիմա Ձեզ համար կգտնեմ: Ջութակն էլ լավ է, բայց շատ է քնքուշ:

— Մի՞թե դու կոռնետապիստոն նվագել էլ գիտես,— կրկին իտալերեն դիմեցի ես Մատտիային:

— Եվ փող, և՛ ֆլեյտա. ամեն բան, ինչով հնարավոր է նվագել:

Մատտիան իսկական գանձ էր:

Շուտով կոռնետապիստոնը բերեցին, և մենք կրկին սկսեցինք նվագել պոլկաներ ու վալսեր, բայց ամենից շատ՝ կադրիլներ: Մենք անդադար նվագեցինք մինչև գիշեր: Ինձ համար դա դժվար չէր, բայց Մատտիան, որը հոգնել էր ճամփորդությունից և երկարատև զրկանքներից, ուժասպառ էր եղել:

թվայնացրել է 1915.info կայքը

Ժամանակ առ ժամանակ նա գունատվում էր, կարծես վատ էր զգում իրեն, բայց շարունակում էր նվագել՝ ամբողջ ուժով կոռնետը փչելով: Վերջապես ոչ միայն ես, այլև հարսը նկատեց նրա գունատությունը:

— Հերի՛ք է,— հայտարարեց նա,— փոքրիկը հոգնել է: Հիմա գրպաննե՛րդ դատարկեք:

— Եթե Դուք թույլ տաք,— ասացի ես՝ սայլից ցած թռչելով,— ես դրամ հավաքելու գործը կհանձնարարեմ մեր գանձապահին:

Եվ ես գլխարկս նետեցի Կապիին, որը ատամներով բռնեց այն: Կապիին շատ ծափահարեցին այն շնորհալի շարժուձևի համար, որով նա դրամ հավաքելիս գլուխ էր տալիս: Բայց ավելի լավն այն էր, որ նրան փող շատ էին տալիս: Ես գնում էի նրա հետևից և տեսնում, թե ինչպես էին արծաթյա դրամներն ընկնում գլխարկի մեջ: Վերջին դրամը՝ հինգ ֆրանկը, դրեց փեսացուն:

Ինչպիսի՛ երջանկություն: Բայց դա դեռ բոլորը չէր: Մեզ կանչեցին խոհանոց, լավ հյուրասիրեցին և պառկեցրին՝ քնելու հարդանոցում՝ ծղոտի վրա:

Հետևյալ օրը, երբ մենք հեռանում էինք այդ հյուրընկալ տնից, մեր դրամագլուխը քսանութ ֆրանկ էր:

— Այդ քո շնորհիվ է, որ մենք այսքան վաստակեցինք, սիրելի՛ Մատտիա,— ասացի ընկերոջս:— Ես մենակ չէի կարողանա մի ամբողջ նվագախմբի դեր կատարել: Պարզվում է, որ ես այնքան էլ հիմար բան չեմ արել, որ քեզ վերցրել եմ իմ խումբը:

Քսանութ ֆրանկ գրպաններումս ունենալով՝ մենք շատ հարուստ էինք զգում մեզ և երբ եկանք հետևյալ գյուղը, կարող էինք մի քանի անհրաժեշտ գնումներ կատարել: Նախ երկաթավաճառից գնեցի մի կոռնետապիստոն, որն արժեր երեք ֆրանկ: Դա, իհարկե, նոր գործիք չէր և ոչ էլ գեղեցիկ, բայց երբ մենք մաքրեցինք, կարգին բան դարձավ: Հետո ես մեր գուլպաների համար կարմիր ժապավեն գնեցի, իսկ Մատտիայի համար՝ զինվորական մաշված մի պարկ:

Մենք իրերը հավասար բաժանեցինք և դրեցինք երկու տոպրակի մեջ, իսկ հետո ճանապարհ ընկանք:

Մեր գործերը հիանալի էին ընթանում: Գնումներից հետո մեզ մոտ մնաց մոտ քսան ֆրանկ: Մեր ռեպերտուարն այնքան բազմազան էր, որ մենք կարող էինք մի քանի օր ապրել միևնույն տեղում: Այդ ժամանակամիջոցում ես ու Մատտիան այնքան էինք մտերմացել, որ երկուսով միասին շատ լավ էինք զգում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գիտեմ ինչ,— ասում էր նա ծիծաղելով:— Քեզ նման տեր ունենալն ուղղակի հրաշք է: Դու նույնիսկ չես էլ կռվում:

— Ուրեմն դու գո՞հ ես:

— Գո՛հ եմ ես արդյոք: Այն օրից, ինչ թողել եմ իմ հայրենիքը, կյանքումս առաջին անգամ է, որ չեմ երազում հիվանդանոցի մասին:

Մեր հաջողությունները ոգեշնչեցին ինձ և նոր ծրագրեր ներշնչեցին: Գնալ Բարբերեն մայրիկի մոտ միայն նրան գրկելու համար, հիմա ինձ չէր բավարարում: Ես ցանկանում էի որևէ բանով երախտահատույց լինել իմ նկատմամբ ունեցած հոգատարության համար:

Հիմա, երբ սկսել էի փող վաստակել, կարող էի նրա համար մի նվեր գնել: Բայց ի՛նչ նվեր: Ես երկար չմտածեցի: Միայն մի նվեր կարող էր երջանկացնել նրան և ապահովել նրա ծերությունը. դա կով ունենալն էր, որը կփոխարիներ նրա սիրելի Շեկոյին:

Ինչպիսի ուրախություն կլիներ Բարբերեն մայրիկի համար, եթե ես նրան կով նվիրեի, և միաժամանակ ինչպիսի՜ ուրախություն կլիներ ինձ համար: Բայց որքա՞ն արժեր կովը: Այդ մասին ես գաղափար անգամ չունեի: Բարբերեխտաբար, այդ իմանալը դժվար չէր: Պանդոկներում հաճախ էի հանդիպում անասունների վաճառքով զբաղվող մարդկանց: Բայց երբ ես այդ հարցով դիմեցի մի նախրապանի, նա երեսիս ծիծաղեց: Բռունցքը սեղանին խփելով՝ նա մոտ կանչեց պանդոկապանին:

— Գիտե՞ս, թե ինչ է հարցնում այս փոքրիկ երաժիշտը: Նա հարցնում է՝ որքա՞ն արժե կովը, որ շատ խոշոր չլինի և ոչ էլ շատ գեր, բայց որ լինի շատ լավը: Էլ ի՞նչ եք պահանջում կովից. երևի նա պետք է նաև գիտուն լինի:

Պոռթկաց ծիծաղ, բայց դա ինձ բոլորովին չշփոթեցրեց:

— Կովը պետք է լավ կաթ տա և շատակեր չլինի:

— Իսկ գուցե նա պետք է թույլ տա, որ պարանը վզից կապած քա՞րշ տաս, ինչպես քո այդ շանն ես քարշ տալիս:

Երբ նա մի կուշտ ծիծաղեց և սպառեց իր սրամտությունները, ինձ հետ գործնական խոսակցություն սկսեց: Պարզվեց, որ նա ունի հանգիստ բնավորությամբ մի կով, որը առատ և թանձր կաթ է տալիս ու համարյա կեր չի պահանջում: Եթե ես սեղանին դնեմ հիսուն էկյու[8], այդ կովն իմը կլինի:

Հիսուն էկյուն կազմում էր հարյուր հիսուն ֆրանկ. այդ գումարը հավաքելու համար մենք դեռ շատ պետք է աշխատեինք:

---

[8] Էկյու — արծաթյա դրամ՝ երեք ֆրանկ արժողությամբ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կկարողանա՞նք այդքան վաստակել: Եթե բախտը ժպտա մեզ այնպես, ինչպես հիմա, կամաց-կամաց կկարողանանք հավաքել հարյուր հիսուն ֆրանկ: Բայց դրա համար ժամանակ է պետք:

Այդ րոպեին իմ գլխում նոր միտք ծագեց: Վատ չի լինի, եթե Շավանոն գնալու փոխարեն մենք նախ գնանք Վարս և այդ ընթացքում փող հավաքենք: Առավոտյան ես իմ նոր միտքը հաղորդեցի Մատտիային, և նա չաոարկեց:

— Գնա՛նք Վարս,— համաձայնեց նա:— Ինձ հետաքրքրում են հանքերը, և ես դեմ չեմ, որ մենք գնանք այնտեղ:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 2

ՍԵՎ ՔԱՂԱՔԸ

Վարսը սարի ստորոտում է, որի լանջերը տարածվում էին դեպի Միջերկրական ծովը: Փարիզը Վարսից շատ հեռու է. ուղիղ գծով որ գնաս, հինգվեց հարյուր կիլոմետր է: Մեզ համար այդ ճանապարհը կրկնակի երկար դարձավ, որովհետև մենք մտնում էինք զանազան քաղաքներ ու գյուղեր՝ հուսալով, որ այնտեղ կարող ենք լավ վաստակել:

Այդ ճանապարհը մեզնից խլեց մոտ երեք ամիս: Բայց երբ մենք մոտեցանք Վարսին, ես ուրախությամբ համոզվեցի, որ ժամանակն իզուր չէինք վատնել. իմ դրամապանակում հարյուր քսանութ ֆրանկ կար: Կով գնելու համար պակասում էր ընդամենը քսաներկու ֆրանկ:

Մատտիան նույնքան գոհ էր, որքան ես, և հպարտանում էր, որ մասնակից է եղել այդպիսի մեծ գումար վաստակելու գործին: Պետք է խոստովանեմ, որ առանց նրան, նամանավանդ առանց նրա կոռնետի, ես և Կապին երբեք այդքան փող չէինք հավաքի: Հիմա արդեն մենք չէինք կասկածում, որ Վարսից Շավանոն գնալիս կվաստակենք պակասող քսաներկու ֆրանկը:

Մենք Վարսի արվարձաններին հասանք կեսօրվա ժամը երեքի մոտ: Վառ արևը փայլում էր ջինջ երկնքում, բայց քանի առաջ էինք շարժվում, օրը կարծես սկսում էր մթագնել: Երկնքի և երկրի միջև ծխի թանձր ամպ

թվայնացրել է 1915.info կայքը

կախվեց քաղաք մտնելուց դեռ շատ առաջ: Մենք լսեցինք օդափոխիչների ուժեղ դղրդյունը, որը նման էր ծովի շառաչին և ջրաբաշխ մուրճի խուլ հարվածներին:

Ես գիտեի, որ Ալեքսիսի հորեղբայրն աշխատում է Վարսում որպես հանքափոր, բայց նրա հասցեն չունեի: Քաղաք գալով՝ շտապեցի տեղեկություն իմանալ նրա մասին: Պարզվեց, որ նա ապրում է հանքահորերից ոչ հեռու՝ մի կեղտոտ, ոլորապտույտ փողոցում, որը զառիթափով իջնում էր դեպի Դիվոնա գետը: Երբ ես մոտեցա նրա տանը և հարցրի նրա մասին, ինչ–որ մի կին, որը կանգնած էր դռան մոտ, բավականին անբարյացակամ պատասխանեց, որ նա տուն կվերադառնա ժամը վեցից ոչ շուտ: Այդ ժամանակ մենք որոշեցինք գնալ հանքահորի մոտ և աշխատանքից հետո դիմավորել Ալեքսիսին ու նրա հորեղբորը:

Մեզ ցույց տվեցին ստորերկրյա անցքը, որի միջով բանվորները դուրս են գալիս հանքահորից, և մենք մուտքի մոտ սպասեցինք Ալեքսիսին: Ժամը վեցը խփելուց մի քանի րոպե անց ստորերկրյա անցքի մութ խորքում նկատեցի ինչ–որ փոքրիկ, աղոտ ճրագներ, որոնք արագորեն մեծանում էին: Դա հանքից դուրս եկող բանվորների լապտերներն էին: Նրանք քայլում էին դանդաղ, ծանր քայլերով, կարծես նրանց ծնկները ցավում էին: Հետագայում, երբ ես ինքս աշխատեցի հանքահորում, հասկացա, թե դա ինչից է լինում: Նրանց դեմքը սև էր ծխնելույզ մաքրողների պես, հագուստն ու գլխարկները ծածկված էին ածխի փոշով ու ցեխով: Նրանք, անցնելով լապտերների բաժանմունքից, իրենց լամպերը կախում էին մեխից: Ես ուշադիր զննում էի դուրս եկողների դեմքերը, բայց նրանց մեջ այդպես էլ Ալեքսիսին չտեսա: Եթե նա ինքը գիրկս չնետվեր, ես ոչ մի դեպքում նրան չէի ճանաչի: Ոտքից գլուխ ածխի փոշով ծածկված՝ նա բոլորովին նման չէր իմ ընկերոջը, որը մի ժամանակ վազվզում էր այգու արահետներով՝ մաքուր բլուզ հագած, թևքերը քշտած և օձիքը բաց, որի տակից երևում էր նրա սպիտակ պարանոցը:

— Սա Ռեմին է,— դիմեց նա մոտ քառասուն տարեկան մի մարդու, որը քայլում էր նրա կողքից:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ տղամարդը նույնպիսի անկեղծ ու բարի դեմք ուներ, ինչպես Ակենը, և զարմանալի չէ, որովհետև նրանք հարազատ եղբայրներ էին:

Ես հասկացա, որ հորեղբայր Գասպարը հենց նա է:

— Մենք արդեն վաղուց է՝ սպասում ենք քեզ,— փաղաքշորեն դիմեց նա ինձ:

— Փարիզից մինչև Վարս շատ երկար ճանապարհ է:

— Իսկ ոտքերդ կարճ են,— ծիծաղեց նա:

Կապին իր ուրախությունն արտահայտում էր նրանով, որ ատամներով քաշում էր Ալեքսիսի բաճկոնի թևքը:

Ես Գասպար հորեղբորը ծանոթացրի Մատտիայի հետ և բացատրեցի, որ Մատտիան իմ ընկերն է և երաժշտության մեծ սիրահար է:

— Զրուցե՛ք միմյանց հետ, տղանե՛ր, դուք շատ խոսելիք ունեք, իսկ ես այդ ընթացքում կզրուցեմ այս երիտասարդ երաժիշտի հետ,— ասաց Գասպար հորեղբայրը՝ մատնացույց անելով Մատտիային:

Եվ իսկապես, մենք այնքան բան պետք է ասեինք միմյանց, որ նույնիսկ մի ամբողջ շաբաթն էլ բավական չէր լինի: Ալեքսիսը հետաքրքրվում էր մեր ճամփորդությամբ, իսկ ես ցանկանում էի իմանալ, թե ինչպես է նա հարմարվել նոր կյանքին: Մենք ընդհատում էինք միմյանց, հարցեր էինք տալիս՝ չհասցնելով պատասխանել: Մենք քայլում էինք շատ դանդաղ, և մյուս հանքափորները, որոնք տուն էին վերադառնում, մեզնից առաջ էին անցնում: Երբ մոտեցանք տանը, Գասպար հորեղբայրն ասաց.

— Տղանե՛ր, գնանք մեզ մոտ ընթրելու:

Այդ հրավերը ինձ մեծ հաճույք պատճառեց: Պետք է խոստովանեմ, որ ես երջանիկ էի ոչ միայն երեկոն Ալեքսիսի հետ անցկացնելու համար, այլև հույս ունեի կուշտ ուտել. Փարիզից դուրս գալուց հետո մենք այնքան էլ լավ չէինք սնվում. ուտում էինք հացի փշրանքներ կամ լավագույն դեպքում՝ մի կտոր հաց: Եվ չնայած մենք բավականաչափ փող ունեինք ու կարող էինք հիանալի ճաշել պատահած պանդոկում, բայց մենք չէինք ճաշում, որովհետև խնայողությամբ էինք ծախսում, որպեսզի փող հավաքենք կով գնելու համար:

Սակայն ես մեծ հուսախաբություն ապրեցի, որովհետև այդ երեկո մեզ չհաջողվեց լավ ընթրել: Ճիշտ է, մենք նստած էինք սեղանի շուրջը՝ ոչ թե գետնին, այլ աթոռների վրա, բայց տաք կերակուր չկար, և ընթրիքը երկար չտևեց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու կպառկես քնելու Ալեքսիսի հետ,— դիմեց ինձ Գասպար հորեղբայրը,— իսկ Մատտիային մենք կտեղավորենք ցախատանը՝ խոտի վրա:

Երեկոն և գիշերվա կեսը ես ու Ալեքսիսը խոսելով անցկացրինք: Գասպար հորեղբայրը աշխատում էր որպես հանքափոր, իսկ Ալեքսիսը նրա օգնականն էր: Երբ ջարդած ածուխը բեռնում էին վագոնիկը, Ալեքսիսը պետք է ռելսերով տաներ մինչև այնտեղ, ուր վագոնիկը ամրացնում էին փոկին և վերելակ մեքենայով բարձրացնում:

Չնայած շատ ժամանակ չէր, ինչ Ալեքսիսը աշխատում էր հանքահորում, բայց սիրում էր այդ աշխատանքը և հպարտանում էր իր հանքահորով: Ըստ նրա խոսքերի՝ դա ամենագեղեցիկ ու հիանալի հանքահորն էր ամբողջ շրջանում: Տեսնելով, որ ես ուշադրությամբ եմ լսում, նա ոգևորված սկսեց նկարագրել հանքահորի կառուցվածքը:

Ալեքսիսի պատմածը շարժեց իմ հետաքրքրությունը, և ես հանքահոր իջնելու ցանկություն զգացի: Բայց երբ հետևյալ առավոտ այդ մասին ասացի



թվայնացրել է 1915.info կայքը

Գասպար հորեղբորը, նա պատասխանեց, որ հանքահոր թողնում են միայն նրանց, ովքեր այնտեղ աշխատում են:

— Եթե դու միտք ունենաս հանքագործ դառնալու,— ավելացրեց նա ծիծաղելով,— այդ հեշտ է հաջողեցնել: Ի վերջո, այդ աշխատանքը մյուսներից վատ չէ, իսկ նրանց համար, ովքեր վախենում են անձրևից ու կայծակից, նրանց համար ամենահարմար տեղն է: Համենայն դեպս, դա շատ ավելի լավ է, քան թափառելը: Դու կապրես Ալեքսիսի հետ: Դե՛հ, համաձա՛յն ես: Մատտիայի համար էլ որևէ հարմար գործ կգտնենք:

Բայց չէ՞ որ ես Վարս էի եկել ոչ թե հանքագործ դառնալու, այլ բոլորովին այլ մտադրություններով: Սակայն հանգամանքները այնպես դասավորվեցին, որ ես շուտով ստիպված եղա մաշկիս վրա զգալ այն բոլոր սարսափները ու վտանգները, որոնք կրում են հանքափորները:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 3

ԵՍ ՀԱՆՔԱՔԱՐ ԵՄ ԿՐՈՒՄ

Այն օրվա նախօրեին, երբ ես պատրաստվում էի հեռանալու Վարսից, Ալեքսիսը տուն վերադարձավ ջարդված ձեռքով: Քարածուխի մի ծանր կտոր ընկել էր ձեռքին և ջարդել մատը: Վերքը շատ ծանր չէր, բայց նա աշխատել չէր կարող: Գասպար հորեղբայրը սովորաբար հեշտությամբ էր հաշտվում կյանքի բոլոր անախորժությունների հետ, և միայն աշխատանքը արգելակող հանգամանքները կարող էին հանել նրան հավասարակշռությունից: Լսելով, որ Ալեքսիսը մի քանի օր աշխատել չի կարողանա, նա զայրացավ: Ալեքսիսի հիվանդության ժամանակամիջոցում ոմն պետք է հանքաքարը կրի: Ալեքսիսին փոխարինող չկար: Եթե հարցը միայն Ալեքսիսին փոխարինող գտնելը լիներ, նա որևէ մեկին կգտներ, բայց մի քանի օրով փոխարինող գտնելը բոլորովին անհնարին էր: Աշխատող ձեռքեր քիչ կային, մանավանդ երեխաներ: Գասպար հորեղբայրը խիստ վշտացած էր, որովհետև առանց հանքաքար կրողի ինքն էլ չէր կարող աշխատել, իսկ նրա միջոցները չէին ներում, որ ձեռքերը ծալած նստի: Ես հասկանում էի նրա վիշտը և մտածում էի, որ պետք է որևէ կերպ օգնել նրան մեզ ցույց տված հյուրասիրության համար: Այդ պատճառով հարցրի, թե դժվա՞ր է արդյոք հանքաքար կրողի աշխատանքը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դրանից ավելի հեշտ ոչինչ չի կարող լինել: Պետք է վագոնիկը ռելսերով գլորել. ահա բոլորը:

— Իսկ վագոնիկը ծա՞նր է:

— Եթե Ալեքսիսը կարողանում է քշել, ուրեմն շատ ծանր չէ:

— Եթե Ալեքսիսն այդ անում է, ուրեմն ե՛ս էլ կարող եմ:

— Իհարկե, կարող ես, եթե միայն ցանկանաս:

— Եթե Ձեզ պետք է, ուրեմն ցանկանում եմ:

— Դու լավ տղա ես, և վաղը մենք միասին հանքահոր կիջնենք: Դա ինձ մեծ օգնություն կլինի, և այդ կարող է քեզ համար էլ օգտակար լինել: Եթե աշխատանքը քեզ դուր գա, ապա, ճիշտն ասած, շատ ավելի լավ է աշխատել, քան թափառաշրջիկ լինել:

Համենայն դեպս այնտեղ գայլեր չկան:

Իսկ ի՞նչ պետք է անի Մատտիան այն ժամանակամիջոցում, որ ես աշխատելու եմ հանքահորում: Չէ՞ որ նա չի կարող ապրել Գասպար հորեղբոր հաշվին:

Այդ պատճառով ես առաջարկեցի, որ նա Կապիի հետ ներկայացումներ տա Վարսի շրջակայքում: Մատտիան հաճույքով համաձայնվեց:

— Ես շատ ուրախ կլինեմ, եթե կարողանամ փող վաստակել կով գնելու համար,— ծիծաղելով պատասխանեց նա:

Այս երեք ամսվա ընթացքում, որ Մատտիան ապրել էր բաց երկնքի տակ, նա շատ էր փոխվել ու բոլորովին նման չէր նախկին դժբախտ, սովից մեռնող տղային: Առավել քիչ էր նմանվում այն այլանդակ տղային, որին ես հանդիպեցի Գարաֆոլիի ձեղնահարկում: Նրա գլուխն այլևս չէր ցավում: Արևն ու թարմ օդը նրան առողջ ու կենսուրախ էին դարձրել: Մեր ճամփորդության ժամանակ նա միշտ աշխույժ և ուրախ էր, հաճախ իմ հոգնածության ու տխրության րոպեներին մխիթարում էր ինձ:

Հետևյալ առավոտ ինձ տվեցին Ալեքսիսի աշխատանքային հագուստը: Ես վերջին անգամ խորհուրդ տվեցի Մատտիային ու Կապիին, որպեսզի հնարավորին չափ ողջամիտ լինեն, և գնացի Գասպար հորեղբոր հետևից:

— Ուշադրությո՛ւն,— ասաց նա՝ լապտերն ինձ տալով:— Ե՛կ իմ հետևից, բայց մինչև որ ոտքով չշոշափես աստիճանը, մյուս ոտքդ չփոխես:

Մենք մտանք ստորերկրյա անցքը. Գասպար հորեղբայրը գնում էր առջևից, ես՝ հետևից:

— Եթե աստիճանների վրա սայթաքես, աշխատի՛ր քեզ պահել, որ չընկնես, հիշի՛ր, որ այստեղ շատ խոր է:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես այդ խրատների կարիքը չունեի, քանի որ առանց այդ էլ բավականին զգույշ էի, որովհետև անսախորժ ու սարսափելի էր թողնել ցերեկային լույսը և այդքան խոր իջնելով՝ թաղվել խավարի մեջ: Ես ընազդաբար հետ նայեցի: Մենք արդեն բավականին առաջ էինք անցել ստորերկրյա անցքով, և այդ երկար, սև միջանցքի ծայրում երևացող լույսը թվում էր սպիտակ մի գունդ, ինչպես լուսինը՝ մութ, անաստղ երկնքում:

— Աստիճաններն են,— նախազգուշացրեց Գասպար հորեղբայրը:

Մեր առջև բացվում էր սև անդունդը, որի անտակ խորության մեջ նկատեցի լապտերների թրթռացող լույսերը, որոնք գնալով ավելի աղոտ էին դառնում: Դրանք այն բանվորների լապտերներն էին, որոնք մեզնից առաջ էին հանքահոր իջել: Նրանց խոսակցությունների արձագանքը նման էր խուլ մրմնջոցի, որը հասնում էր մեզ տաք օդի հետ միասին: Այդ օրն ինչ–որ տարօրինակ հոտ ուներ. կարծես եթերի և քացախի, էսենցիայի անդուր հոտերի խառնուրդ լիներ: Աստիճանները հաջորդում էին միմյանց:

— Ահա մենք հասանք առաջին հարկը,— նկատեց Գասպար հորեղբայրը:

Մենք քարե պատեր և կամարակապ առաստաղ ունեցող ստորերկրյա անցքում էինք: Կամարի բարձրությունը մարդկային հասակից քիչ ավելի էր, բայց կային և այնպիսի տեղեր, որտեղից անցնելու համար պետք էր կռանալ:

— Սա հողի ճնշումից է,— բացատրեց Գասպար հորեղբայրը:— Լեռն ամենուրեք փորփրված է, հողը նստում է, և երբ ճնշումը ուժեղանում է, քանդում է ստորերկրյա անցքը:

Գետնին ռելսեր կային, իսկ անցքի երկայնքով ոչ մեծ մի գետակ էր հոսում:

— Այս գետակը, ինչպես և մյուսները, գոյանում է ներծծվող ջրից, որոնք թափվում են ջրհորը: Ջրաքաշ մեքենան ամեն օր դուրս է հանում և Դիվոնան է թափում հազար երկու հարյուր խորանարդ լիտր ջուր: Եթե մեքենան դադարեցնի իր աշխատանքը, հանքահորը ջրով կլցվի: Մենք հիմա Դիվոնայի տակ ենք:

Եվ քանի որ ես ակամայից ինչ–որ շարժում արեցի, նա ծիծաղեց. «Հիսուն մետր խորությունում վտանգ չկա, թե ջուրը օձիքիցդ կթափվի ներս»:

— Իսկ եթե անցք բացվի:

— Բան ասացիր, ստորերկրյա անցքերը բոլոր ուղղություններով տարածվում են գետնի տակ, և կան հանքահորեր, որտեղ պետք է զգուշանալ ջրհեղեղից, բայց այստեղ՝ ոչ: Այստեղ այլ անախորժություններ կան. հանքային գազ, փլուզումներ, պայթյուններ:

թվայնացրել է 1915.info կայքը

Երբ մենք հասանք աշխատանքի վայրը, Գասպար հորեղբայրը բացատրեց, թե ես ինչ պետք է անեմ, իսկ երբ մեր վագոնիկը ածխով լցվեց, օգնեց ինձ մոտեցնելու հանքախորշին և սովորեցրեց, թե ինչպես պետք է անցնեմ պահեստային գիծը, երբ հանդիպեմ ուրիշ վագոնիկների: Նա իրավացի էր. քարածուխ կրողի աշխատանքը դժվար չէր, և մի քանի ժամ հետո արդեն լիովին ընտելացա: Ինձ պակասում էր միայն հմտությունն ու վարժությունը, որոնք անհրաժեշտ են ամեն գործում, որպեսզի աշխատանքը շատ հոգնեցուցիչ չլիներ: Բայց ես չէի գանգատվում հոգնածությունից: Այն կյանքը, որ վարում էի տարիների ընթացքում, մանավանդ վերջին երեքամսյա ճամփորդությունը, ինձ կոփել էր:

Գասպար հորեղբայրը հայտարարեց, որ ես քաջ տղա եմ և ժամանակի ընթացքում կարող եմ լավ հանքափոր դառնալ:

Չնայած ես շատ էի ցանկացել տեսնել հանքահորը, բայց ամենևին չէի պատրաստվում մշտապես աշխատելու այնտեղ: Ես ոչ մի ցանկություն չունեի հանքափոր դառնալու:

Երբ ես գլորում էի վագոնիկը ստորերկրյա մութ անցքերով, որոնք լուսավորված էին ձեռքի լապտերների աղոտ լույսով՝ ոչինչ չլսելով, բացի վագոնիկների հեռավոր դղրդյունից, առվակների քչքչոցից և մեռելային լռության մեջ հնչող քլունգի հարվածներից, աշխատանքի ժամերն ինձ թվում էին անսահման երկար ու տխուր: Որովհետև հանքահոր իջնելն ու այնտեղից դուրս գալը չափազանց դժվար գործ էր. հանքափորները գետնի տակ մնում էին տասներկու ժամ անընդհատ և նախաճաշում էին հենց տեղում:

Հորեղբայր Գասպարի հարևանությամբ աշխատում էր մի հանքաքար կրող, որը, ի տարբերություն մյուս կրողների, մոտ վաթսուն տարեկան մի ծերունի էր: Երիտասարդ ժամանակ նա աշխատել էր որպես ատաղձագործ և հետևում էր ստորերկրյա անցքերի ամրացմանը: Փլվածքի ժամանակ նրա երեք մատը ջարդվել էին, և դա ստիպել էր նրան փոխել մասնագիտությունը: Ընկերները նրան կոչում էին «ուսուցիչ», որովհետև նա այնպիսի բաներ գիտեր, որ չգիտեին ոչ միայն հասարակ հանքափորները, այլև նույնիսկ հանքի վարպետները:

Ես նրա հետ ծանոթացա ճաշի ժամանակ, և մենք իսկույն բարեկամացանք: Ես սիրում էի հարցեր տալ, իսկ նա՝ պատասխանել, և շուտով դարձանք անբաժան ընկերներ: Հանքահորում, որտեղ սովորաբար քիչ են խոսում, մեզ շատախոս անվանեցին:

թվայնացրել է 1915.info կայքը

Ալեքսիսի պատմածները չէին տալիս շատ հարցերի բացատրություն, որոնց պատասխանը ես ցանկանում էի իմանալ: Գասպար հորեղբոր պատասխանները բոլորովին չէին բավարարում ինձ: Օրինակ, երբ հարցնում էի նրան, թե «Ի՞նչ է քարածուխը», նա պատասխանում էր. «Դա ածուխ է, որը հողի մեջ է»[9]:

Երբ ես այդ հարցը տվեցի «ուսուցչին», նա բոլորովին այլ բան պատասխանեց:

— Քարածուխը,— ասաց նա,— շատ բանով չի տարբերվում փայտի ածուխից: Փայտի ածուխը մենք ստանում ենք փայտը վառարանում այրելով, իսկ քարածուխը միևնույն ծառերն են, որոնք աճել են անտառներում վաղեմի ժամանակներում և բնության ուժերի շնորհիվ դարձել են ածուխ:— Քանի որ ես զարմանքով նայեցի նրան, նա ավելացրեց:— Հիմա մենք խոսելու ժամանակ չունենք, հարկավոր է աշխատել, իսկ վաղը կիրակի է, արի՛ ինձ մոտ, ամեն բան քեզ կբացատրեմ: Ես ածխի կտորներ և տարբեր հանքատեսակների նմուշներ ունեմ, որոնք հավաքել եմ երեսուն տարվա ընթացքում, դրանք կօգնեն հասկանալու այն, ինչ քեզ հետաքրքրում է: Ինձ այստեղ ծաղրանքով կոչում են «ուսուցիչ», բայց դու կտեսնես, որ «ուսուցիչը» կարող է որոշ հարցերում պետքական լինել: Ուրեմն վաղը կհանդիպենք:

Հետևյալ օրը ես ասացի Գասպար հորեղբորը, որ պատրաստվում եմ գնալու «ուսուցչիս» մոտ:

— Էհ, լավ է,— պատասխանեց նա ծիծաղելով,— ուսուցիչն իր համար ունկնդիր է գտել: Եթե ցանկանում ես, գնա՛: Միայն թե տե՛ս, հա՛, նրա դասերը լսելով՝ չգոռոզանաս: Եթե «ուսուցիչը» այդքան հպարտ չլիներ, նա լավ մարդ կլիներ:

«Ուսուցիչը» ապրում էր քաղաքից հեռու՝ աղքատիկ ու տխուր մի վայրում, որի շրջակայքում բնական քարայրեր կային: Նա վարձով ապրում էր նկուղանման սենյակում մի ծեր կնոջ մոտ, որը փլուզման ժամանակ զոհված մի հանքափորի այրի էր: Ամենաչոր անկյունում ուսուցիչն իր համար անկողին էր պատրաստել. բայց այդ տեղը համեմատաբար էր միայն չոր, որովհետև մահճակալի փայտյա ոտքերին սունկեր էին աճել: Հանքափորները սովոր են մշտական խոնավության, և «ուսուցչին» դա բոլորովին չէր հուզում: Նրա համար ամենակարևորն այն էր, որ բնակարանը քարայրերի մոտ էր, որտեղ նա պեղումներ էր կատարում, և այն, որ այդ բնակարանում

---

[9] Այստեղ բառախաղ է. ֆրանսերենով քարածուխ բառացիորեն նշանակում է հողի ածուխ:

թվայնացրել է 1915.info կայքը

ինքը կարող էր տեղավորել քարածխի և բրածո կենդանիների ու բույսերի դրոշմներ կրող քարերի հավաքածուն:

Նա դիմավորեց ինձ ուրախ բացականչությամբ.

— Ես քեզ համար շատ համեղ ուտելիք եմ պատրաստել՝ խորոված շագանակ: Մենք կուտենք, իսկ հետո կզրուցենք, և ապա ցույց կտամ քեզ իմ հավաքածուն:

«Հավաքածու» բառը նա արտասանեց այնպիսի ձայնով, որ ես հասկացա, թե ինչու էին ընկերները նրան հպարտ մարդ համարում: Որքան հասկանում էի, նրա հավաքածուն իսկապես որ չափազանց հարուստ էր և զբաղեցնում էր ամբողջ սենյակը: Փոքրիկ նմուշները դրված էին տախտակների ու սեղանի վրա, ավելի խոշորները՝ ուղղակի գետնին: Շատ տարիների ընթացքում «ուսուցիչը» հավաքում էր այն ամենը, ինչ հետաքրքրական էր համարում, իսկ քանի որ Սենա ու Դիվոնա գետերի հանքահորերը հարուստ էին քարացած բուսականությամբ, նրա հավաքածուում հանդիպում էին շատ հազվադեպ նմուշներ, որոնք կարող էին հիացմունք պատճառել ամեն մի երկրաբանի ու բնագետի: Նա նույնքան անհամբերությամբ էր ուզում խոսել ինձ հետ, որքան ես՝ նրա, և մենք արագությամբ կերանք, վերջացրինք շագանակները:

— Դու ցանկանում ես իմանալ,— ասաց նա ինձ,— թե ինչ բան է քարածուխը: Ես քեզ մի քանի բառով կբացատրեմ: Երկրագունդը, որի վրա մենք ապրում ենք, միշտ այնպիսին չի եղել, ինչպես հիմա է: Նա շատ փոփոխություններ է կրել: Եղել է ժամանակ, երբ մեր երկիրը ծածկված է եղել այնպիսի բուսականությամբ, որը հիմա միայն տաք երկրներում է լինում, օրինակ՝ ձարխոտի ծառերը: Հետո այդ բուսականությանը փոխարինել է ուրիշ բուսականություն, և դա էլ է իր հերթին փոխվել: Այդպես շարունակվել է հարյուրավոր, հազարավոր, գուցե և միլիոնավոր տարիներ:

Ես քեզ հիմա ցույց կտամ ածխի մի քանի կտորներ, որոնք գլխավորապես պոկված են ստորերկրյա անցքերի պատերից և առաստաղից, որոնց վրայի զանազան բույսերի դրոշմները պահպանվել են այնպես լավ, ինչպես հերբարիումներում: Ածուխը գոյանում է, ինչպես արդեն ասացի, մեռած բույսերի ու ծառերի կուտակումից, ուրեմն դա ոչ այլ ինչ է, եթե ոչ քայքայված ու քարացած փայտանյութ: Մենք հողի մեջ գտնում ենք քսան–երեսուն մետր հաստություն ունեցող քարածխի շերտեր: Որքան ժամանակ է հարկավոր, որ այդպիսի նստվածք գոյանա: Դրա համար պահանջվում է, որ միևնույն տեղում հաջորդաբար աճեն հինգ հազար ծառ, այսինքն՝ հարկավոր է հինգ

թվայնացրել է 1915.info կայքը

հարյուր հազար տարի: Ապշեցուցիչ թիվ է, այնպես չէ՞: Բայց դա ստույգ թիվ չէ, որովհետև ծառերը միևնույն արագությամբ չեն աճում:

Հարյուր տարուց ավելի է պահանջվում, որ նրանք աճեն ու մահանան, իսկ երբ մի սերնդին հաջորդում է մյուսը, հարկավոր են նաև մի շարք փոփոխություններ և երկրի կեղևի տեղաշարժեր, որ քայքայված բույսերի այդպիսի շերտը կարողանա սնել նոր ծառեր: Հետևաբար դու տեսնում ես, որ հինգ հարյուր հազար տարին բավական չէ, և պահանջվում է շատ ավելի ժամանակ: Որքա՞ն: Այդ ես չգիտեմ և որոշել չեմ կարող: Ես ցանկանում եմ միայն, որ դու գաղափար կազմես քարածխի ծագման մասին, որպեսզի ի վիճակի լինես զննելու իմ հավաքածուն: Դե՛, սկսենք մեր գործը:

Իմ այցելությունը ձգձգվեց մինչև ուշ գիշեր, որովհետև ամեն մի քարի, բույսի, ամեն մի դրոշմի վրա «ուսուցիչը» նորից սկսում էր իր բացատրությունները: Վերջիվերջո սկսեցի հասկանալ շատ բաներ, ինչ նախկինում զարմանալի և անհասկանալի էին թվում ինձ:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 4

ՋՐՀԵՂԵՂԸ

Հետևյալ առավոտ ես և «ուսուցիչը» կրկին հանդիպեցինք հանքահորում:

— Դեի, գո՞հ ես տղայից,— հարցրեց նրան Գասպար հորեղբայրը:

— Այո՛, նա գիտի լսել, և հուսով եմ, որ շուտով կսովորի նաև տեսնել:

— Իսկ հիմա թող չմոռանա, որ ինքը ձեռքեր ունի և թող սկսի աշխատել,— ասաց հորեղբայրը:

Եվ նա մի կողմ քաշվեց՝ իր կողքին տեղ տալով ինձ, որ ես օգնեմ պոկելու քարածխի կտորը, որը նա սկսել էր կտրել:

Երբ ես արդեն երրորդ անգամ գլորում էի վագոնիկը դեպի հանքահորը, ինչ–որ անսովոր ու սարսափելի դղրդյուն լսեցի:

Ի՞նչ էր դա. նստվա՞ծք, թե՞ փլուզում: Ես ականջ դրեցի: Աղմուկը շարունակվում էր և լսվում էր բոլոր կողմերից: Իմ առաջին զգացումը վախն էր, և ես պատրաստվեցի վազելու դեպի աստիճանները: Բայց իմ վախենալու վրա այնքան էին ծիծաղել, որ ամաչեցի: Հավանաբար հանքահորում որևէ տեղ փոքրիկ պայթյուն է տեղի ունեցել, կամ կտրվել է վագոնիկի փոկը, իսկ գուցե ուղղակի հողն է թափվել:

Հանկարծ մոտիցս հեծելավաշտի պես սլացավ առնետների մի խումբ: Հետո ինձ թվաց, որ լսում եմ ինչ–որ տարօրինակ խշշոց, որը նման էր ջրի

թվայնացրել է 1915.info կայքը

ճողփյունի: Ես վերցրի լապտերը և լուսավորեցի գետինը: Այո՛, դա ջուր էր, որը գալիս էր հանքի ջրհորի կողմից և լցվում ստորերկրյա անցքը: Սարսափելի աղմուկն ու ոռնոցը հանքահորը խուժող ջրի ձայնն էր:

Վագոնիկը ռելսերի վրա թողնելով՝ գլխապատառ նետվեցի դեպի հանքափորները:

— Գասպար հորեղբայր, հանքահորը ջուր է լցվում:

— Հերիք է հիմարություններ դուրս տաս:

— Դիվոնան հեղեղում է հանքահորը, հարկավոր է փախչել:

— Հանգի՛ստ թող ինձ:

— Ինքնե՛րդ լսեք:

Ձայնս այնքան հուզված էր, որ նա ցած դրեց քլունգը և ականջ արեց: Աղմուկը գնալով ավելի սպառնալից ու սարսափելի է դառնում: Կասկած լինել չէր կարող. ջուրը հեղեղում էր հանքահորը:

«Հանքահորը ջուր է լցվում, փախի՛ր, շո՛ւտ արա»,— գոռալով Գասպար հորեղբայրը ճանկեց լապտերը և նետվեց դեպի ստորերկրյա անցքը:

Դեռ տասը քայլ չէինք վազել, երբ նկատեցի «ուսուցչին», որը նույնպես իջնում էր ստորերկրյա անցքը աղմուկի պատճառը իմանալու համար:

— Ջուրը լցվում է հանքահորը,— գոռաց Գասպար հորեղբայրը:

— Դիվոնան ծակվել է,— հայտարարեցի ես:

— Շատ հիմարն ես,— զայրացավ Գասպար հորեղբայրը:

— Ճարներդ տեսե՛ք,— բղավեց ուսուցիչը:

Ջուրն արագորեն հեղեղում էր ստորերկրյա անցքը և արդեն հասնում էր ծնկներիս՝ խիստ դանդաղեցնելով մեր շարժումները: «Ուսուցիչը» վազում էր մեր կողքից, և բոլորով միասին գոռում էինք.

— Փախե՛ք, ազատվե՛ք, հանքահորը ջուր է լցվում:

Ջուրը ներս էր խուժում կատաղի արագությամբ: Բարեբախտաբար, մենք աստիճաններից ոչ հեռու էինք, հակառակ դեպքում չէինք հասցնի ոտք դնելու այնտեղ: «Ուսուցիչը» առաջինը հասավ, բայց կանգ առավ:

— Նախ դո՛ւք բարձրացեք,— ասաց նա,— ես ամենածերն եմ, և խիղճս մաքուր է:

Ձևականությունների ժամանակ չէր: Գասպար հորեղբայրը առաջինը բարձրացավ, հետո՝ ես, մեր հետևից՝ «ուսուցիչը», իսկ մեզնից հետո՝ էլի մի քանի հոգի: Առաջին և երկրորդ հարկերի միջև եղած քառասուն մետրը դժվար թե երբևէ այդքան արագ անցած լինեին: Բայց մինչև կհասնեինք վեր-

թվայնացրել է 1915.info կայքը

ջին աստիճանին, ջրի ուժեղ հորձանքը փլվեց մեր գլխներին և հանգցրեց լապտերները:

— Ամո՛ւր կացեք,— ձայն տվեց Գասպար հորեղբայրը:

«Ուսուցիչը», Գասպար հորեղբայրը և ես ամուր կառչեցինք աստիճաններից, որպեսզի ցած չընկնենք, բայց մեր հետևից եկողներին ջուրը քշեց տարավ: Եթե մենք արդեն վերևում չլինեինք, հավանաբար նույնը կլիներ և մեզ հետ, որովհետև այդ հորձանքը իսկույն վերածվեց հեղեղի:

Չնայած մենք հասել էինք առաջին հարկը, բայց դեռ վտանգի տակ էինք, որովհետև նախքան գետնի երես դուրս գալը հարկավոր էր հիսուն մետր ևս բարձրանալ, իսկ ջուրն արդեն հեղեղում էր նաև այդ ճանապարհը: Բացի այդ՝ մենք մնացինք մթության մեջ, որովհետև լապտերները հանգել էին:

— Մենք կորած ենք,— բավականին հանգիստ ասաց «ուսուցիչը»:

Նույն ակնթարթում ստորերկրյա անցքում երևացին մի քանի լապտեր: Հանքափորները, որոնք մոտ վազեցին մեզ, ցանկանում էին ստորերկրյա անցքով հասնել աստիճաններին, որոնք համարյա մեր կողքին էին, բայց ինչպե՞ս հաղթահարել ճանապարհը փակող հորձանքը: Ինչպե՞ս խույս տալ դիմացից սլացող գերաններից: Նրանց շուրթերից դուրս թռան «ուսուցչի» ասած բառերը:

— Մենք կորա՛ծ ենք:

— Այո՛, այլևս փրկություն չկա,— բացականչեց «ուսուցիչը». նա միակն էր բոլորի մեջ, որ գլուխը չէր կորցրել,— միակ տեղը, որտեղ կարելի է թաքնվել, հին հանքահորերն են:

Հին հանքահորերը շատ վաղուց աչքաթող էին արված, և այնտեղ ոչ ոք չէր գնում՝ բացի «ուսուցչից», որը այնտեղ զանազան հետաքրքիր նմուշներ էր փնտրում:

— Վերադառնանք: Լապտերը տվե՛ք ինձ, ես ձեզ կառաջնորդեմ,— հայտարարեց նա:

Սովորաբար նրա բառերը ընդունում էին անվստահությամբ ու ծաղրանքով, բայց հիմա բոլորը հաճույքով ենթարկվում էին այդ ծերունուն, որի վրա դեռ հինգ րոպե առաջ ծիծաղում էին: Հանքափորները նրան մեկնեցին իրենց լապտերները: Նա մի ձեռքով արագորեն վերցրեց լամպը, մյուսով բռնեց իմ ձեռքից և առաջ ընկավ: Որովհետև մենք գնում էինք հորձանքի ուղղությամբ, ուստի բավականին արագ էինք շարժվում: Թե քանի րոպե կամ վայրկյան էինք քայլում ստորերկրյա անցքով, չգիտեմ, բայց հանկարծ «ուսուցիչը» կանգ առավ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մենք չենք հասցնի տեղ հասնել,— հայտարարեց նա.— ջուրը մեծ արագությամբ է խուժում:

Եվ իսկապես, ջուրն արդեն հասնում էր ազդրերիս և շարունակում էր բարձրանալ:

— Մենք պետք է պատսպարվենք հանքախորշում,— շարունակեց «ուսուցիչը»:

— Իսկ հետո՞:

— Հանքախորշը ելք չունի:

Բարձրանալ այնտեղ նշանակում էր ընկնել փակուղու մեջ, բայց ուրիշ ճար չկար: Պետք է շտապ մտնել հանքախորշը, շահել մի քանի րոպե, և գուցե փրկություն լիներ:

Մենք նետվեցինք դեպի հանքախորշը: Մեր ընկերներից երկուսը վազեցին ստորերկրյա անցքի երկայնքով, և մենք նրանց այլևս երբեք չտեսանք: Մի քիչ ուշքի գալով՝ մենք լսեցինք, թե ինչպես փլուզման աղմուկին, ջրի շառաչին, գերանների ճռճռոցին և գազի պայթյուններին միացավ խլացուցիչ դղրդյունը:

— Սա ջրհեղեղ է:

— Աշխարհի վերջը եկել է:

— Տղերք,— ասաց «ուսուցիչը»,— մեզ չի կարելի հուսահատվել: Եթե ոտքերով ու ձեռքերով այսպես կառչած մնանք, ապա շուտով ուժասպառ կլինենք: Անհրաժեշտ է փոսեր փորել, որ հենարան ունենանք:

Խորհուրդը ճիշտ էր, բայց դժվար էր կատարել, որովհետև բացի լապտերներից՝ ոչ մի գործիք չունենք:

— Փորձենք փորել լամպերի կեռերով,— շարունակեց «ուսուցիչը»:

Մենք սկսեցինք փորել հողը: Աշխատանքը դժվար էր, որովհետև հանքախորշը թեք էր ու սայթաքուն: Բայց այն գիտակցությունը, որ ցած ընկնելը մահ է նշանակում, կրկնապատկեց մեր ուժն ու ճարպկությունը: Մի քանի րոպեում մեզնից ամեն մեկը մի փոս փորեց, որտեղ կարելի էր ոտք դնել:

Դրանից հետո մենք շունչ առանք և զննեցինք միմյանց: Մենք վեց հոգի էինք. «ուսուցիչը», Գասպար հորեղբայրը, երկու հանքափորներ՝ Պաժեան ու Բերգունան, և երկու քարածուխ կրողներ՝ Կարորին և ես: Մյուս հանքափորները կորան ստորերկրյա անցքում:

Աղմուկը շարունակվում էր նույն կատաղի ուժով: Ցանկանալով հաղթահարել այդ՝ մենք խոսում էինք բարձրաձայն, և չնայած դրան՝ մեր ձայները խուլ էին հնչում:

թխայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

— Որևէ բա՛ն ասա,— խնդրեց ինձ «ուսուցիչը»:
— Ի՞նչ ասեմ:
— Ինչ ցանկանում ես:
Ես մի քանի բառ արտասանեցի:
— Լավ, հիմա մի քիչ ցածրաձայն: Այդպես, հիանալի է:
— Դու հավանաբար խելագարվում ես, «ուսուցի՛չ»,— ասաց Պաժեսը:
— Նա վախից խելքը կորցրել է:
— Թե՞ դու կարծում ես, որ արդեն մեռած ես:
— Ես կարծում եմ, որ ջուրը մեզ չի հասնի, և եթե մեզ վիճակված է մեռնել, ապա համենայն դեպս խեղդամահ չենք լինի:
— Ի՞նչ ես ուզում ասել:
— Նայի՛ր լապտերիդ:
— Հետո՞ ինչ, լապտերը վառվում է:
— Վառվում է, բայց սովորական ձևով:
— Ո՛չ, բոցն ավելի վառ է, բայց սովորականից կարճ է:
— Մի՞թե այստեղ շառաչող գազ կա:
— Ո՛չ,— ասաց «ուսուցիչը»,— մենք դրանից էլ վախ չունենք:
— Ինչ ես կախարդ ձևանում:
— Չեմ էլ մտածում: Մենք հիմա օդի զանգի մեջ ենք, և խտացած օդը թույլ չի տալիս, որ ջուրը բարձրանա: Հանքախորշը մեզ համար նույնն է, ինչ ապակյա գլխադիրը՝ սուզակի համար: Ջրի դուրս մղած օդը կուտակվել էր այս ստորերկրյա անցքում, և հիմա ինքն է դուրս մղում ջուրը:

Լսելով «ուսուցչի» բացատրությունը՝ հանքափորներն անվստահորեն փնթփնթացին:

— Ա՛յ քեզ հիմարություն: Մի՞թե ջուրն ամեն ինչից ուժեղ չէ:
— Այո՛, երբ ազատ հոսում է: Բայց եթե դու ջրով լի դույլի մեջ խորասուզում ես շրջած բաժակը, ջուրը հասնո՞ւմ է բաժակի հատակին: Ո՛չ, բաժակի մեջ ազատ տարածություն է մնում: Այստեղ այդ նույն բանն է: Մենք ասես շրջված բաժակի հատակին ենք, և ջուրը մեզ չի հասնի:
— Հասկանալի է,— ասաց Գասպար հորեղբայրը,— ես հիմա տեսնում եմ, որ մենք իզուր էինք ծիծաղում «ուսուցչի» վրա: Նա շատ բան գիտի, իսկ մենք ոչինչ չգիտենք:
— Ուրեմն մենք կփրկվե՞նք,— հարցրեց Կարորին:
— Կփրկվե՞նք: Հայտնի չէ: Բայց որ չենք խեղդվի, այդ ես հաստատ կարող եմ ասել: Մեր փրկությունն այն է, որ հանքախորշը ծածկված է, և

թվայնացրել է 1915.info կայքը

շնորհիվ դրա՝ օդը դուրս չի գալիս: Բայց այն, ինչը հիմա մեզ փրկում է, հետագայում կարող է կործանել: Օդն այստեղից չի կարողանում դուրս գալ, բայց մենք նույնպես դուրս գալ չենք կարող:

— Իսկ երբ ջուրն իջնի:

— Կիջնի՞ արդյոք. դա էլ հայտնի չէ: Դրա համար հարկավոր է իմանալ, թե որտեղից է գալիս այս ջուրը: Արդյոք Դիվոնան է դուրս եկել ափերից ու հեղեղել հանքահորերը: Փոթորի՞կ է սա արդյոք: Երկրաշա՞րժ: Պատասխանել այդ հարցերին կարելի կլիներ միայն այն ժամանակ, երբ մենք լինեինք վերևում, իսկ մենք, դժբախտաբար, գետնի տակ ենք:

— Հնարավո՞ր է, որ ողջ քաղաքը հեղեղված լինի ջրով:

— Հնարավոր է...

Ծանր լռություն տիրեց: Ջրի աղմուկը դադարեց: Ժամանակ առ ժամանակ լսվում էին միայն խուլ պայթյուններ, և զգացվում էին ինչ–որ ցնցումներ:

— Հանքահորը հավանաբար լցվել է ջրով, և այլևս հոսելու տեղ չկա,— բացատրեց «ուսուցիչը»:

— Լավ, իսկ ի՞նչ պետք է անենք մենք,— մի րոպե անց հարցրեց Բերգունան:

— Ոչինչ, պետք է սպասենք,— պատասխանեց «ուսուցիչը»:

— Սպասելով ի՞նչ կլինի:

— Ուղղակի պետք է սպասենք: Մի՞թե դու կարող ես լապտերի կեռով փորել այն քառասուն կամ հիսուն մետրը, որոնք մեզ բաժանում են երկրի մակերևույթից:

— Բայց մենք սովից կմեռնենք:

— Ամենամեծ վտանգը դա չէ:

— Լսի՛ր, «ուսուցի՛չ», դու մեզ մի՛ վախեցրու: Քո կարծիքով, ո՞րն է ամենամեծ վտանգը:

— Սովն այնքան էլ սարսափելի չէ: Ես կարդացել եմ, որ մի անգամ բանվորները, որոնք ջրհեղեղի պատճառով մեզ նման մնացել են հանքահորում, առանց ուտելու դիմացել են քսանչորս օր: Ո՛չ, սովն ինձ չի վախեցնում:

— Իսկ ինչի՞ց ես վախենում, եթե կարծում ես, որ ջուրն այլևս չի բարձրանա:

— Մենք գետնի տակ ենք՝ քառասուն մետր խորության վրա, և հավանաբար մեր գլխավերևում երեսունհինգ կամ քառասուն մետր բարձրությամբ ջուր կա: Դա նշանակում է, որ օդը ենթարկվում է չորս կամ հինգ մթնոլորտ ճնշման: Որքան ժամանակ կարելի է ապրել այդպիսի խտացրած օդում:

թվայնացրել է 1915.info կայքը

Ահա՛, թե ինչն է ինձ անհանգստացնում, և դա մենք կզգանք մեր սեփական մաշկի վրա:

Ես ոչ մի պատկերացում չունեի խտացրած օդի մասին, և դրա համար ինձ սաստիկ վախեցրին «ուսուցչի» խոսքերը: Իմ մյուս ընկերները նույնպես չգիտեին, ուստի ինչպես նրանց, այնպես էլ ինձ վախեցնում էր անորոշությունը: Չնայած «ուսուցիչը» գիտակցում էր մեր վիճակի անհուսալիությունը, բայց նա շարունակում էր մտածել, որ ինչքան հնարավոր է, երկար դիմանանք:

— Նախ և առաջ պետք է այնպես տեղավորվենք, որ ջրի մեջ չգլորվենք,— հայտարարեց նա:

— Մենք արդեն աստիճաններ ենք փորել:

— Շուտով դուք կհոգնեք միևնույն դիրքով կանգնելուց:

— Իսկ դու կարծում ես, որ մենք այստեղ երկա՞ր կմնանք ցցված: Մեզ օգնության կգան:

— Անկասկած: Բայց որքան ժամանակ կանցնի, մինչև կազմակերպեն մեզ փրկելու գործը: Միայն նրանք կարող են ասել այդ մասին, ովքեր վերևումն են: Իսկ մենք գետնի տակ ենք և պետք է հնարավորինս լավ տեղավորվենք: Եթե մեզնից որևէ մեկը սայթաքի, կորած է:

— Եկեք մեզ պարանով կապենք:

— Իսկ պարան կա՞:

— Բռնենք միմյանց ձեռք:

— Ինձ թվում է՝ ամենալավն այն կլինի, որ հարթակներ փորենք: Մենք վեց հոգի ենք, երկու հարթակում բոլորս էլ կարող ենք տեղավորվել:

— Իսկ ինչո՞վ փորենք:

— Քլունգներ չունենք:

— Որտեղ հողը փափուկ է՝ լապտերների կեռերով, որտեղ ամուր է՝ դանակներով:

Իր սառնասրտությամբ և վճռականությամբ «ուսուցիչը» հեղինակություն ձեռք բերեց, որը րոպե առ րոպե աճում էր: Նրա բնավորության մեջ խիզախության գեղեցկություն կար, որը հարգանք էր ներշնչում: Մենք զգում էինք, որ «ուսուցիչը» բարոյապես մեզնից ուժեղ է, և նրանից էինք փրկություն սպասում:

Բոլորը ջանասիրաբար սկսեցին աշխատել, որովհետև հասկացան՝ պետք է այնպես տեղավորել, որ չգլորվենք ջրի մեջ:

— Նախ ընտրենք այնպիսի տեղ, ուր փորելը հեշտ է,— առաջարկեց «ուսուցիչը»:

թվայնացրել է 1915.info կայքը

— Լսե՛ք,— դիմեց մեզ Գասպար հորեղբայրը,— ես մի առաջարկ ունեմ: Մեր մեջ միակ մարդը «ուսուցիչն» է, որը չի ընկճվել: Չնայած նա մեզ նման հանքափոր է, բայց բոլորիցս շատ գիտի: Ես առաջարկում եմ նրան ընտրել աշխատանքների պետ ու ղեկավար: Ի՞նչ կասեք, ընկերնե՛ր:

— Մենք սպասում ենք ձեր կարգադրություններին, «ուսուցի՛չ»:

— Եվ կենթարկվենք քեզ:

— Լավ,— պատասխանեց «ուսուցիչը»,— եթե դուք այդպես եք որոշում, ես համաձայն եմ, բայց մի պայմանով, որ դուք կանեք ամեն բան, ինչ ես կարգադրեմ: Մենք հավանաբար ստիպված կլինենք երկար մնալ այստեղ, և հայտնի չէ, թե դեռ ինչ կարող է պատահել: Բայց ինչ էլ լինի, դուք պարտավոր եք լսել ինձ որպես ձեր պետի:

— Կլսենք և կենթարկվենք,— միաձայն պատասխանեցին բոլորը:

— Երդվո՞ւմ եք,— հարցրեց «ուսուցիչը»:

— Երդվում ենք,— կրկին պատասխանեցին հանքափորները:

Եվ մենք աշխատանքի անցանք: Բոլորն էլ ունեին ամուր կոթով, դիմացկուն դանակներ:

— Մեզնից ովքեր ուժեղ են, կփորեն,— ասաց «ուսուցիչը»,— իսկ ավելի թույլերը՝ Ռեմին, Պաժեսը և ես, տեղը կհարթենք և կհավաքենք հանքանյութը:

— Ո՛չ, դու ոչինչ մի՛ արա,— ընդհատեցին նրան հանքափորները:— Դու մեր ճարտարագետն ես և աշխատելու համար արդեն ծեր ես:

Մենք պետք է թերթաքարի մեջ փորեինք երկու հարթակ այնպիսի մեծության, որ դրանցից ամեն մեկի վրա առանց ցած գլորվելու վտանգի տեղավորվեին երեք մարդ: Դանակներով այդ գործն անելը հեշտ չէր: Երկուսը փորում էին, երրորդը ցած էր նետում թերթաքարի կտորները: «Ուսուցիչը», լապտերը ձեռքին, հետևում էր աշխատանքին: Փորելիս մենք գտանք փայտի մի քանի կտոր, որոնք մեզ շատ պետք եկան: Դրանցով մենք պահում էինք խճաքարերը, չէինք թույլ տալիս, որ ցած թափվեն:

Երեքժամյա անդադար աշխատանքից հետո մենք փորեցինք մի հարթակ, որի վրա կարող էինք նստել:

— Առայժմ բավական է,— հայտարարեց «ուսուցիչը»:— Հետո մենք կմեծացնենք հարթակն այնքան, որ կարելի լինի պառկել: Կարիք չկա միանգամից շատ ուժ վատնել և հոգնել:

«Ուսուցիչը», Գասպար հորեղբայրն ու ես տեղավորվեցինք ներքևի հարթակում, իսկ մյուսները՝ վերևում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Պետք է խնայել լապտերները,— ասաց «ուսուցիչը»:— Հանգցնենք, թող միայն մեկը վառվի:

Նրա բոլոր կարգադրություններն անմիջապես կատարվում էին, բայց հենց որ մենք պատրաստվեցինք հանգցնելու լապտերները, «ուսուցիչը» կանգնեցրեց մեզ:

— Մի րոպե... իսկ եթե հանկարծ լապտերը հանգչի, ձեզնից որևէ մեկը լուցկի ունի՞:

Չնայած հանքահորում խստիվ արգելվում էր կրակ վառել, համարյա բոլոր բանվորների գրպանում լուցկի գտնվեց:

Չորս հոգի պատասխանեցին.

— Ես ունեմ:

— Ես էլ ունեմ,— շարունակեց «ուսուցիչը»,— բայց թաց է:

Պարզվեց՝ մյուսների լուցկիներն էլ թաց են, որովհետև դրված էին շալվարի գրպանում:

Կարորին, որն ամեն ինչ շատ ուշ էր հասկանում, վերջապես պատասխանեց.

— Ես էլ լուցկի ունեմ:

— Թա՞ց է:

— Չգիտեմ, գլխարկիս մեջ է:

— Այստեղ տո՛ւր գլխարկդ:

Հսկայական մորթե գլխարկը տալու փոխարեն Կարորին մեզ տվեց լուցկու տուփը: Լուցկիները չոր էին:

— Հանգցրե՛ք լապտերները,— կարգադրեց «ուսուցիչը»:

Վառվում էր միայն մի լամպ, որը հազիվ էր լուսավորում մեր վանդակը:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 5

ՀԱՆՔԱԽՈՐՇՈՒՄ

Հիմա հանքահորում լիակատար լռություն էր տիրում: Հանքահորը հեղեղված էր, ինչպես իրավացիորեն ասաց «ուսուցիչը», և ջուրը, բոլոր ստորերկրյա անցքերը լցվելով, ավելի հաստատուն էր բանտել մեզ, քան քարե վանդակը: Այդ ծանր, անթափանց, մեռելային լռությունն ավելի սարսափելի էր, քան խլացուցիչ աղմուկը, որը մենք լսեցինք ջրի ներխուժման ժամանակ: Մենք կենդանի թաղված էինք գերեզմանում: Մեր գլխավերևում մոտ քառասուն մետր հող կար:

Աշխատանքը ցրում է տխուր մտքերը, և մեր գործն ավարտելով՝ բոլորս իսկույն հուսահատության մեջ ընկանք:

Ծանր օդում շնչելը դժվարանում էր: Կրծքիս ծանրություն էի զգում, ականջներս զրնգում էին. հավանաբար «ուսուցիչը» իրեն մեզնից լավ չէր զգում, բայց ցանկանալով ցրել մեր մռայլ մտքերը՝ սկսեց խոսել.

— Իսկ հիմա եկեք տեսնենք, թե ինչ պաշար ունենք: Ո՞վ հաց ունի:

— Իմ գրպանում մի կտոր հաց կա,— պատասխանեցի ես:

— Ո՞ր գրպանումդ:

— Շալվարիս:

— Այդ դեպքում քո հացը ցեխ է դարձել: Բայց և այնպես ցո՛ւյց տուր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես ձեռքս գրպանս տարա, որտեղ առավոտյան դրել էի լավ թխված համեղ հացի մի կտոր և դուրս բերեցի այնտեղից ինչ–որ ցեխանման մի բան: Ես արդեն պատրաստվում էի դեն նետելու այն, բայց «ուսուցիչը» թույլ չտվեց:

— Պահի՛ր այդ շփոթը, շուտով դա քեզ շատ համեղ կթվա:

Այդպիսի գուշակությունը մխիթարական չէր, բայց այն ժամանակ մենք դրա վրա ուշադրություն չդարձրինք:

— Էլ ո՞վ հաց ունի,— հարցրեց նա:

Ոչ ոք չպատասխանեց:

— Դա շատ վատ է,— շարունակեց «ուսուցիչը»:

— Ինչ է, մի՞թե դու սոված ես:

— Ես իմ մասին չեմ մտածում, այլ Ռեմիի և Կարորիի: Հացը պետք կլինի նրանց համար:

— Իսկ ինչո՞ւ ոչ բոլորիս համար,— հարցրեց Բերգունան:— Դա անարդարացի է:

— Ուրեմն, եթե մենք հիմա հաց ունենայինք, պիտի կովեի՞նք միմյանց հետ: Բայց դուք կարծես խոստացաք լսել ինձ: Ես չեմ ցանկանում, որ վեճ ծագի, և հիմա կբացատրեմ, թե ինչու է հացը հարկավոր Ռեմիին և Կարորիին: Հաստատված է, որ հասուն տարիքի մարդիկ, բայց վաթսուն տարեկանից ոչ անց, սովորաբար ավելի դիմացկուն են, քան երիտասարդները: Իսկ Ռեմին ու Կարորին բոլորիցս երիտասարդ են:

— Բայց չէ՞ որ Ձեր տարիքը վաթսունից անց է:

— Այո՛, բայց ոչինչ: Բացի այդ՝ ես սովոր եմ քիչ ուտելուն:

— Ուրեմն,— ասաց Կարորին մի րոպե մտածելուց հետո,— եթե ես հաց ունենայի, այն կհասներ ինձ:

— Քեզ և Ռեմիին:

— Իսկ եթե ես չցանկանայի հացը տալ:

— Կխլեինք: Մի՞թե դու չէիր, որ խոստացար ենթարկվել ինձ:

Կարորին երկար ժամանակ լռեց, հետո հանկարծ գլխարկից մի կտոր հաց հանեց:

— Վերցրո՛ւ, ահա իմ հացը:

— Կարորիի գլխարկը լի է գանձերով: Ապա ինձ տվե՛ք դա,— կարգադրեց «ուսուցիչը»:

Կարորին բոլորովին չէր ցանկանում գլխարկը տալ, բայց նրա ձեռքից խլեցին և հանձնեցին «ուսուցչին»:

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

«Ուսուցիչը» վերցրեց լապտերը և սկսեց զննել գլխարկի պարունակությունը: Չնայած մեր տխրալի դրությանը՝ բոլորս մի րոպե զվարճացանք: Գլխարկն իսկական պահեստ էր: Նրա մեջ կային ծխամորճ, թութուն, բանալի, մի կտոր երշիկ, դեղձի կորիզից պատրաստված սուլիչ, երեք կանաչ ընկույզ և մի սոխ:

— Հացն ու երշիկը մենք երեկոյան կտանք քեզ ու Ռեմիին:

— Բայց ես հիմա արդեն ուտել եմ ուզում,— խղճալի ձայնով հայտարարեց Կարորին:

— Երեկոյան դու ավելի սոված կլինես:

— Ինչպիսի դժբախտություն, որ այս տղայի գլխարկում ժամացույց չհայտնվեց: Մենք հիմա կիմանայինք, թե ժամը քանիսն է:

Իմ ժամացույցը թրջվելուց հետո վերջնականապես փչացել էր: Իսկապես ժամը քանի՞սը կարող էր լինել: Երբվանի՞ց էինք մենք հանքախորշում: Ոմանց թվում էր, որ կեսօր է, մյուսներին՝ թե երեկոյան ժամը վեցն է: Ոմանք կարծում էին, որ արդեն տասը ժամ է, ինչ մենք նստած ենք այստեղ, մյուսները կարծում էին, որ հինգ ժամ էլ չի լինի:

Այդ հարցի մասին խոսելուց հետո բոլորը լռեցին: Ինչի մասին էին մտածում ընկերներս, չգիտեմ, բայց եթե ինձնով դատելու լինեի, ապա՝ հավանաբար շատ տխուր բաների: Ես վախենում էի ջրից, վախենում էի մթությունից, վախենում էի մահից: Լռությունը ճնշում էր ինձ, իսկ հանքախորշի անհուսալի պատերը կարծես ճզմում էին իրենց ծանրությամբ: Ուրեմն ես այլևս երբեք չեմ տեսնի Լիզային, Էտյենետտային, Ալեքսիսին, Բենժամենին: Հիմա նրանք ինչպե՞ս պետք է տեղեկություն ստանան միմյանց մասին: Արթուրին, տիկին Միլլիգանին, Մատտիային ու Կապիին նույնպես երբեք չեմ տեսնի: Իսկ Բարբերեն մայրիկին, խեղճ Բարբերեն մայրիկին: Մեկը մյուսից մոայլ մտքերը գլխումս հաջորդում էին միմյանց:

Հանկարծ լռության մեջ հնչեց հորեղբայր Գասպարի ձայնը:

— Ինձ թվում է,— ասաց նա,— մեր փրկության մասին դեռ չեն էլ մտածում:

— Ինչո՞ւ ես այդպես կարծում:

— Մենք ոչինչ չենք լսում:

— Հավանաբար դա երկրաշարժ էր, և ողջ քաղաքը քարուքանդ է եղել:

— Իսկ գուցե քաղաքում կարծում են, որ բոլորը զոհվել են, և ոչինչ անել հնարավոր չէ:

— Ուրեմն մեզ թողել են բախտի քմահաճույքի՞ն:

— Ինչո՞ւ այդքան վատ կարծիք ունեք ձեր ընկերների մասին,— ընդհատեց նրանց «ուսուցիչը»,— դուք շատ լավ գիտեք, որ երբ դժբախտություն է

թվայնացրել է 1915.info կայքը

պատահում, հանքափորներն ավելի շուտ իրենք կմեռնեն, քան իրենց ընկերոջն առանց օգնության կթողնեն: Միթե այդպես չէ:

— Այո՛, դա ճիշտ է:

— Այդ դեպքում ինչո՞ւ եք որոշել, թե մեզ չեն օգնի:

— Ոչինչ չի լսվում:

— Չի լսվում, ճիշտ է: Բայց ես կասկածում եմ, որ մենք կարող ենք այստեղ որևէ բան լսել. եթե մեզ փրկելու աշխատանքները դեռ սկսված չեն, դա չի նշանակում, որ մեզ լքել են: Չէ՞ որ մենք չգիտենք, թե աղետն ինչպես է տեղի ունեցել: Եթե դա երկրաշարժ է, ապա կենդանի մնացածների համար քաղաքում բավականին աշխատանք կա: Եթե միայն ջրհեղեղ է, ինչպես ես կարծում եմ, ապա պետք է իմանալ, թե ինչ վիճակում են հանքահորի հենասյուները: Հնարավոր է, որ թե՛ դրանք և թե՛ հանք իջնելու ճանապարհը քանդված են: Չեմ պնդում, որ մենք կփրկվենք, բայց վստահ եմ, որ մեզ փրկելու աշխատանքներն արդեն սկսված են:

Նա այդ ասաց այնպիսի վստահությամբ, որ ամենաթուլակամներն անգամ դադարեցին կասկածելուց:

Միայն Բերգունան առարկեց.

— Իսկ եթե մտածեն, որ մենք արդեն մահացե՞լ ենք:

— Միևնույնն է, նրանք իրենց գործը կանեն: Բայց մենք կաշխատենք ապացուցել, որ կենդանի ենք: Եկեք հնարավորինս ուժեղ բախենք պատը: Դուք գիտեք, որ հողի միջով ձայնը լավ է հաղորդվում: Եթե մեզ լսեն, ապա կհասկանան, որ պետք է շտապել, և կիմանան, թե որտեղ փնտրեն մեզ:

Բերգունան, որը հագին ուներ հաստ ներբաններով երկարաճիտք կոշիկներ, իսկույն սկսեց ոտքերով հարվածել պատին, կարծես թե հանքափորներին կանչելիս լիներ:

— Իսկ ի՞նչ ես կարծում, «ուսուցի՛չ»,— հարցրեց Գասպար հորեղբայրը,— նրանք ո՞նց պետք է փրկեն մեզ:

— Երկու հնարավորություն կա. առաջինը՝ անցք փորել դեպի այս հանքախորշը, իսկ երկրորդը՝ ջուրը դուրս քաշել:

— Անցք փորե՞լ:

— Ջուր դուրս քաշե՞լ:

Այդ բացականչությունները, սակայն, «ուսուցչին» չշփոթեցրին:

— Մենք քառասուն մետր խորության վրա ենք: Եթե ամեն օր փորեն ութ մետր, ապա յոթ–ութ օր հետո կհասնեն մեզ:

— Օրը վեց մետր էլ դժվար է փորել:

— Դժվար է, բայց ընկերների փրկության համար հնարավոր է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մենք ութ օր չենք դիմանա: Հապա մտածի՛ր, «ուսուցի՛չ», ո՛ւթ օր:

— Դե լավ, իսկ ջո՛ւրը: Ջուրը ինչպե՞ս պիտի դուրս քաշեն:

Սկսեցին վիճել, թե ինչ ձևով ավելի լավ կլինի գործել: Այդ վիճաբանությունից միայն մի բան հասկացա, որ ամենաբարենպաստ պայմանների դեպքում անգամ մենք ստիպված կլինենք ապրել այս գերեզմանում ութ օրից ոչ պակաս:

Ութ օր: Չգիտեմ, թե որքան ժամանակ էի այդ սարսափելի մտքի տպավորությամբ, երբ հանկարծ վեճը դադարեց:

— Լսե՛ք, լսե՛ք,— ասաց Կարորին:

— Ի՞նչ է:

— Ջրի հետ ինչ–որ բան է կատարվում:

— Դու երևի քար գցեցիր:

— Ո՛չ, ինչ–որ խուլ ձայն է գալիս:

Բոլորն ականջ դրեցին:

— Այո՛,— ասաց «ուսուցիչը»,— ջրի հետ ինչ–որ բան է կատարվում:

— Իսկ ի՞նչ, «ուսուցի՛չ»:

— Չգիտեմ:

— Ջուրն իջնո՞ւմ է:

— Ո՛չ: Ձայնը լսվում է հավասար ընդմիջումներով:

— Հավասար ընդմիջումներով: Տղե՛րք, մենք փրկված ենք: Ջուրը դուրս են հանում դույլերով:

— Ջո՛ւրը,— միաձայն բացականչեցին բոլորը և վեր թռան. կարծես էլեկտրական հոսանքը խփեց:

— Մենք մոռացանք, որ մեր գլխավերևում քառասուն մետր հող կա. այլևս չէինք զգում, որ օդը հեղձուցիչ է: Հանքախորշի պատերը մեզ այլևս չէին ճզմում, ականջներում խշշոցը դադարել էր: Ծնչում էինք թեթև, սրտներս խաղաղ բաբախում էր կրծքի տակ:

Հիմա, որպեսզի ավելի ստույգ նկարագրեմ ձեզ այդ սարսափելի աղետը, պետք է պատմեմ, թե ինչպես էր տեղի ունեցել այդ, և ինչ էր արվել մեր փրկության համար:

Երկուշաբթի առավոտը, երբ հանքափորները իջնում էին հանքահորը, երկինքը ծածկված էր ամպերով, և ամեն ինչից երևում էր, որ ամպրոպ է լինելու: Առավոտյան ժամը յոթի մոտ ճայթեց ամպրոպը, և տեղատարափ անձրև սկսվեց: Դա իսկական ջրհեղեղ էր: Մի քանի րոպեում Դիվանան դուրս եկավ ափերից, և ջուրը ծածկեց գետինն ու լցվեց հանքահորերը: Բանվորները, որոնք վերևում զբաղված էին հանքանյութի լվացումով, թաքնվե-

թվայնացրել է 1915.info կայքը

ցին ամպրոպից և լիակատար ապահով էին: Այս վայրում ջրհեղեղ շատ էր լինում, բայց քանի որ հանքահորերի մուտքը բավականին բարձր տեղում էր, բոլորը համարում էին, որ ջուրը չի կարող ներխուժել հանքահորերը, և աշխատում էին մի կերպ փրկել գերանների կույտը, որը բերված էր ստորերկրյա անցքերի ամրացման համար:

Այդ աշխատանքին հետևում էր հանքի ճարտարագետը: Հանկարծ նա նկատում է, որ ջրի հորձանքը խուժում է հենց նոր բացված ճեղքից ներս: Նա իսկույն հասկանում է, թե ինչ է պատահել: Գետնի մակերեսի ջուրը նվազում էր, որովհետև այն լցվում էր հանքահորը: Հետևաբար հանքահորերը կհեղեղվեն: Այդ օրը հարյուր հիսուն բանվոր էր գետնի տակ, որովհետև առավոտյան բաժանված էր հարյուր հիսուն լապտեր: Երեսուն լապտեր հետ էր վերադարձված, բայց հարյուր քսան հանքափոր դեռ մնում էին հանքահորերում: Արդյոք կենդանի՞ են նրանք: Կկարողանա՞ն պաշտպանվել ջրից: Այդ ժամանակ որոշ տեղերում հողն ու քարերը սկսեցին հօդս ցնդել: Տները ցնցվում էին, կարծես երկրաշարժ լիներ: Գազն ու օդը, ջրի կողմից դուրս մղվելով, հավաքվում էին այնտեղ, որտեղ հողի ճնշումն ավելի թույլ էր, և ճեղքում էին մակերևույթը: Աղետը կատարված էր:

Նորությունը Վարսում արագորեն տարածվեց:

Բոլոր կողմերից դեպի հանքերն էր վազում ժողովուրդը. բանվորները, հետաքրքրասեր մարդիկ, հանքերում եղող հանքափորների կանայք ու երեխաները: Նրանք հարցեր էին տալիս, պատասխան պահանջում ու գոռում:

— Մեզնից թաքցնում են ճշմարտությունը: Մեղավորը ճարտարագետն է: Մա՛հ նրան:

Եվ բազմությունը նետվեց գրասենյակը, որտեղ ճարտարագետը, գծագրերի վրա խոնարհված, ընտրում էր այն տեղերը, որտեղ կարող էին ապաստանել հանքափորները, և որոշում, թե որտեղից պետք է սկսել փրկության աշխատանքները:

Բարեբախտաբար, վրա հասան մյուս ճարտարագետները, հարևան հանքերի հանքափորներն ու քաղաքի բանվորները, և հաջողվեց զսպել ամբոխին:

— Հայրս: Ո՛ւր է ամուսինս: Տվե՛ք որդուս,— լսվում էին հուզված բացականչությունները, որոնք ընդհատվում էին հեկեկոցով:

Ինչ կարելի էր պատասխանել այդ դժբախտ երեխաներին, կանանց ու մայրերին:

— Մենք ամեն բան կանենք, ինչ հնարավոր է, մենք կգտնենք ու կփրկենք նրանց,— հանգստացնում էին ճարտարագետները:

թվայնացրել է 1915.info կայքը

Աշխատանքը կազմակերպված էր հենց այնպես, ինչպես ենթադրում էր «ուսուցիչը»: Ջուրը մեծ դույլերով դուրս էին քաշում հանքահորի երեք անցքերից, և այդ աշխատանքը պետք է կատարվեր գիշեր ու ցերեկ, մինչև որ ջրի վերջին կաթիլը հետ թափվեր Դիվոնա: Միաժամանակ սկսեցին ստորերկրյա անցքեր փորել: Ինչ ուղղությամբ պետք է փորվեին դրանք. ոչ ոք չգիտեր: Փորում էին ենթադրելով: Այդ առիթով ճարտարագետների մեջ անհամաձայնություններ ծագեցին: Ոմանք այդպիսի աշխատանքն անօգուտ էին համարում: Բայց հանքի ճարտարագետը հույս ուներ, որ մարդիկ թաքնվել են հին հանքահորերում, և պնդում էր, որ փորեն այդ ուղղությամբ:

Փորվածքը շատ նեղ էր: Այնտեղ տեղավորվում էր միայն մի հանքափոր: Ածուխը փորում էին, լցնում զամբյուղները, որոնք կոնվեյերով դուրս էին տանում: Հենց որ այդ հանքափորը հոգնում էր, նրան իսկույն փոխարինում էր մի ուրիշը: Այդպես, առանց դադարի գիշեր–ցերեկ կատարվում էր երկու աշխատանք՝ ջրի դուրս մղումը և անցքի փորումը:

Եթե վերևում աշխատողների համար ժամանակը դանդաղ էր անցնում, ապա այն շատ ավելի դանդաղ էր անցնում գետնի տակ: Մեզ՝ դժբախտ գերիներիս, մի բան էր մնում միայն. սպասել ու սպասել՝ հաստատ չիմանալով, թե կհասցնեն արդյոք փրկել մեզ: Ջրի դուրսմղման պատճառած ուրախությունը երկար չտևեց: Շուտով բոլորը կասկածների մեջ ընկան: Ճիշտ է, փրկելու աշխատանքները սկսված են, բայց որքան կտևեն դրանք, հայտնի չէ: Հենց դա էր ամենասարսափելին: Բարոյական տանջանքին հիմա ավելացավ և ֆիզիկականը: Նեղ հարթակում լինելով՝ մենք չէինք կարող ոչ մի ազատ շարժում անել, և դա մեզ սարսափելի հոգնեցնում էր: Բոլորի գլուխները սկսեցին ցավել, և գնալով ցավն ավելի ուժեղ ու տանջալից էր դառնում:

Բոլորից լավ, չգիտես ինչու, իրեն զգում էր Կարորին:

— Ես սոված եմ,— ժամանակ առ ժամանակ կրկնում էր նա:— «Ուսուցի՛չ», հա՛ց տվեք ինձ:

Ի վերջո «ուսուցիչը» որոշեց Կարորիի գլխարկի մեջ եղած հացից մեկական կտոր տալ մեզ:

— Սա քիչ է,— հայտարարեց Կարորին:

— Ստիպված ենք քիչ ուտել, որպեսզի հացը շուտ չվերջանա:

Մյուսներն էլ հաճույքով կուտեին, բայց նրանք խոստացել էին ենթարկվել և կատարում էին իրենց խոստումը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուտելն արգելված է, բայց խմել, կարծում եմ, կարելի է,— ասաց Բերգունան:

— Խմի՛ր, որքան ուզում ես. ջուր շատ կա:

— Թե կուզես, ամբո՛ղջը խմիր:

Պաժեսը ցանկանում էր ցած իջնել, բայց «ուսուցիչը» նրան թույլ չտվեց:

— Դու աղը կթափես ջրի մեջ: Ռեմին քեզնից թեթև է և ավելի ճարպիկ. նա ցած կիջնի և մեզ համար ջուր կբերի:

— Ինչո՞վ:

— Իմ ճտքակոշիկով:

Ճտքակոշիկը տվեցին ինձ, և ես պատրաստվեցի ցած սահելու:

— Սպասի՛ր,— ասաց «ուսուցիչը»,— ես քեզ կօգնեմ:

— Մի՛ վախեցեք, ես լողալ գիտեմ:

— Բռնի՛ր ինձնից,— և նա մեկնեց ձեռքը:

Արդյոք «ուսուցիչը» չհավասարակշռեց իր շարժումները, թե նրա ոտքերը թմրել էին, բայց նա սայթաքեց և գլխիվայր գլորվեց մութ փոսը: Նրա հետ ցած ընկավ և լապտերը: Մենք մնացինք լիակատար մթության մեջ: Բոլորը սարսափի ճիչ արձակեցին: Բարեբախտաբար, ես արդեն իջել էի և «ուսուցչի» հետևից նետվեցի ջուրը:

Իմ և Վիտալիսի թափառումների ժամանակ ես սովորել էի լավ լողալ ու սուզվել և ջրի մեջ զգում էի ինձ նույնքան լավ, որքան ցամաքում: Բայց ինչպե՞ս կողմնորոշվել այս մթության մեջ: Դրա մասին ես չէի մտածում, այլ միայն վախենում էի, որ «ուսուցիչը» կխեղդվի: Որտե՞ղ փնտրեմ նրան: Ո՞ր ուղղությամբ: Հանկարծ զգացի, որ նրա ձեռքը ջղաձգորեն բռնեց ուսս և քաշեց ինձ ջրի տակ: Ոտքի ուժեղ հարվածով ջրի մակերես դուրս եկա:

— Բռնե՛ք ինձնից, «ուսուցի՛չ», ամո՛ւր հենվեք ինձ և գլուխը վե՛ր բարձրացրեք: Ես Ձեզ կփրկեմ:

Բայց փրկության մասին խոսելը դեռ շուտ էր, որովհետև գաղափար անգամ չունեի, թե որ կողմը պետք է լողամ:

— Ինչո՞ւ եք լռել,— գոռացի ես:

— Ռեմի, դու ո՞ւր ես:

Դա Գասպար հորեղբոր ձայնն էր: Հիմա գիտեի, որ պետք է լողայի դեպի ձախ:

— Վառե՛ք լապտերը:

Համարյա իսկույն վառեցին լույսը: Ես բռնեցի քարածխի զանգվածից և դուրս քաշեցի «ուսուցչին»: Դա արվեց ճիշտ ժամանակին, որովհետև նա ջուր էր կուլ տվել և արդեն շնչահեղձ էր լինում: Գասպար հորեղբայրը և Կա-

թվայնացրել է 1915.info կայքը

որին «ուսուցչին» բարձրացրին հարթակը: Նրա հետևից բարձրացա և ես: «Ուսուցիչը» շուտով ուշքի եկավ:

Ճիշտ է, մենք չխեղդվեցինք, բայց ոտքից գլուխ թրջվել էինք, և դա շատ տհաճ էր: Սկզբում մենք դրա վրա ուշադրություն չդարձրինք, բայց շուտով ցուրտն իրեն զգալ տվեց:

— Ռեմիին մի բաճկո՛ն տվեք,— կարգադրեց «ուսուցիչը»:

— Ոչ ոք չպատասխանեց:

— Բոլորդ էլ լռում եք:

— Ես ինքս էլ եմ մրսում,— հայտարարեց Կարորին:

— Իսկ դու կարծում ես՝ մենք չե՞նք մրսում:

— Չէ՞ որ մենք ոտքից գլուխ թրջվել ենք,— ասաց «ուսուցիչը»:

— Ձեզ ով ասաց, որ ջուրն ընկնեք:

— Որ այդպես է,— ասաց «ուսուցիչը»,— ստիպված կլինենք վիճակ գցել, թե ձեզնից ով պետք է մեզ հագնելու մի բան տա:

Իմ բախտը բերեց. ես ստացա Բերգունայի բաճկոնը: Եվ քանի որ Բերգունան երկար ոտքեր ուներ, նրա բաճկոնը չոր էր մնացել, որի մեջ փաթաթվելով՝ շուտով տաքացա:

Այդ անախորժ դեպքից հետո, որը ժամանակավորապես աշխուժացրեց բոլորին, մենք կրկին ընկանք թմրության մեջ և կրկին սկսեցինք մտածել մահվան մասին: Հավանաբար այդ մտքերն ավելի շատ էին տանջում իմ ընկերներին, քան ինձ, որովհետև նրանք չէին կարողանում քնել, իսկ ես քնեցի: «Ուսուցիչը» գրկեց ինձ՝ վախենալով, որ քնած ժամանակ կարող եմ գլորվել ջրի մեջ, և ես ինձ զգացի, ինչպես մի երեխա, որ քնում է մոր ծնկներին:

«Ուսուցիչը» ոչ միայն խելոք, այլև բարի մարդ էր: Երբ ես արթնանում էի, նա շարժում էր իր թմրած ձեռքը և ասում.

— Քնի՛ր, տղա՛ս, մի՛ վախենա, ես քեզ բաց չեմ թողնի: Քնի՛ր, փոքրի՛կս:

Եվ ես կրկին խաղաղ քուն էի մտնում՝ իմանալով, որ արդեն ապահով եմ:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 6

ՄԵՆՔ ՓՐԿՎԱԾ ԵՆՔ

Նեղ հարթակներում նույն դիրքով անշարժ նստելն անտանելի էր դառնում: Որոշվեց լայնացնել հարթակները, և բոլորը համերաշխ աշխատանքի անցան: Մենք կրկին սկսեցինք փորել հողը, դուրս թափել խճաքարը: Որովհետև ոտքներիս տակ հաստատուն հենակետ ունեինք, աշխատելն ավելի հեշտ էր, և մենք արագորեն ընդարձակեցինք մեր բանտը: Հիմա կարող էինք ձգվել հասակով մեկ և ոչ թե առաջվա պես նստել ոտքներս ցած կախած, որը ծայրաստիճան տանջալի էր: Չնայած հացի կտորը տրվում էր մեզ փոքրիկ բաժիններով, բայց և այնպես դրա վերջն էլ եկավ: Պետք է ասեմ, որ վերջին կտորները մենք ճիշտ ժամանակին կերանք: Երբ «ուսուցիչը» տվեց մեզ հացի կտորները, մենք մյուսների հայացքից հասկացանք, որ եթե նրանք մի անգամ էլ հաց չստանան, ապա ուժով կվերցնեն:

Մենք այլևս չէինք խոսում փրկության մասին, որովհետև հույսներս կորցրել էինք և մտածում էինք միայն մահվան մասին: Երբ մեզնից որևէ մեկը սկսում էր հուսահատվել, «ուսուցիչը» աշխատում էր սիրտ տալ նրան:

— Դու մյուսներից շատ չես մնա այստեղ: Դույլերն աշխատում են, ջուրն իջնում է:

— Որքան էլ մեզ համոզես, դույլերով երբեք այսքան ջուրը դուրս չի քաշվի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես արդեն շատ անգամ եմ ապացուցել ձեզ, որ դա հնարավոր է: Մի քիչ էլ համբերե՛ք:

Եթե փրկության համար տարվող աշխատանքները բավականաչափ արագ չէին ընթանում, ապա դա ճարտարագետների կամ հանքափորների մեղքով չէր: Շեղակի անցք փորելու աշխատանքը շարունակվում էր անդադար: Բայց դա բավականին դժվար գործ էր: Ածխի շերտը, որի միջով պետք է փորվեր անցուղին, շատ կարծր էր, և դա դանդաղեցնում էր գործը: Մեր բանտարկության յոթերորդ օրը փորել էին ընդամենը քսան մետր: Սովորական պայմաններում այդպիսի աշխատանքը ամսից ավել կտևեր, և միայն աշխատողների ջանքերի շնորհիվ էր, որ գործն այդքան արագ էր առաջ ընթանում:

Բայց ահա յոթերորդ օրը հանքափորներից մեկը թեթև աղմուկ և թույլ հարվածների ձայն լսեց: Նա քլունգը ցած դրեց և ականջը գետնին հպեց: Մտածելով, որ դա իրեն թվում է միայն՝ նա մոտ կանչեց ընկերներից մեկին, և նրանք երկուսով սկսեցին լսել: Մի րոպե անց հարվածների թույլ ձայն, որը կրկնվում էր հավասար ընդմիջումներով, հասավ նրանց ականջին: Իսկույն ևեթ նորությունն անցավ բերնեբերան: Մարդիկ այդ լսում էին թերահավատորեն, բայց երբ լուրը հասավ ճարտարագետին, նա շտապեց դեպի հանքահորերը: Վերջապես: Նա մի կողմ քաշեց հանքափորներին և ականջը հպեց գետնին, բայց այնքան հուզված էր, որ ոչինչ չլսեց:

— Ես չեմ լսում,— հուսահատված բացականչեց նա:

Բայց այն հանքափորները, որոնք առաջինն էին լսել այդ ձայնը, հավատացնում էին, որ իրենք չեն սխալվում, և որ ձայները լսվում են՝ ի պատասխան իրենց հարվածների: Դրանք փորձված, իրենց կյանքը հանքերում անցկացրած մարդիկ էին, և չէր կարելի նրանց խոսքերին չհավատալ:

Ճարտարագետը ստիպեց, որ բոլորը դուրս գան: Մնացին միայն երկու հանքափոր: Նրանք քլունգով մի քանի անգամ ուժեղ հարվածեցին գետնին և հետո շունչները պահած՝ ականջները հպեցին հողին:

Անցան սպասման տանջալից րոպեները, և հանկարծ, ի պատասխան նրանց հարվածների, լսվեցին նույնպիսի համաչափ հարվածների ձայներ:

— Մի անգամ էլ խփեր, որ համոզվենք՝ դա արձագանք չէ:

Հանքափորները կրկին բախեցին գետինը, և ի պատասխան՝ լսվեցին հարվածներ՝ հանքափորների պայմանական նշանը:

Անկասկած, այնտեղ կենդանի մարդիկ կային:

թվայնացրել է 1915.info կայքը

Նորությունը տարածվեց քաղաքով մեկ, և ահռելի մի բազմություն, ավելի հուզված, քան աղետի առաջին օրը, նետվեց դեպի հանքերը: Վազեցին եկան տուժածների կանայք ու երեխաները, մայրերն ու բարեկամները:

Գետնի տակից լսվող ձայներն այնքան թույլ էին, որ անհնարին էր ստույգ որոշել, թե որտեղից են դրանք գալիս: Բայց պարզ էր, որ ջրհեղեղից փրկված մարդիկ երեք հին հանքահորերից մեկում էին: Այդ հանքախորշերին հասնելու համար անհրաժեշտ էր երեք ստորերկրյա անցք փորել: Հետագայում ոչ պիտանի ուղիների վրա աշխատելը դադարեցրին և բոլոր ուժերը կենտրոնացրին մեկի վրա:

Աշխատանքները վերսկսվեցին ավելի մեծ եռանդով: Հարևան հանքերը աղետի վայրն ուղարկեցին իրենց լավագույն հանքափորներին: Բացի այդ՝ սկսեցին հուսալ, որ հանքահորի ստորերկրյա անցքով էլ կարող են մեզ հասնել, որովհետև հանքահորում ջուրը սկսեց իջնել:

Երբ ճարտարագետի ազդանշանները հասան մեզ, մենք նույնպիսի մեծ ուրախություն ապրեցինք, ինչպես այն ժամանակ, երբ լսեցինք ջուրը դուրս քաշող մեծ դույլերի աղմուկը:

— Փրկված ենք:

Հետո, ինչպես և նախորդ անգամ, հույսին հաջորդեց հուսահատությունը: Քլունգների ձայները պարզորոշ ցույց էին տալիս, որ աշխատողները դեռ շատ հեռու են: Մեզ նրանցից բաժանում էր գուցե և երեսուն մետր: Որքա՜ն ժամանակ է պետք այդպիսի շերտը փորելու համար: Մի քանի օ՛ր, մի շաբա՛թ, ամի՛ս: Մեզնից ո՛վ կարող է այդքան երկար ապրել: Որքան ժամանակ էր արդեն, որ մենք ոչինչ չէինք կերել: Միայն «ուսուցիչն» էր, որ առաջվա պես արի էր մնացել, բայց ի վերջո մեր հուսահատությունը նրան էլ վարակեց: Բացի այդ՝ նա ֆիզիկապես սկսել էր զգալի կերպով թուլանալ:

Խմել մենք կարող էինք, որքան ցանկանում ենք, բայց ուտելիք չկար, և սովն այնքան տանջալից դարձավ, որ մենք փորձում էինք նույնիսկ ուտել ջրի մեջ փափկած ու փտած փայտը: Կարորին, որը բոլորիցս շատ էր տանջվում սովից, կտրատեց իր ճտքակոշիկը և անդադար ծամում էր կաշվի կտորները:

Լույսի բացակայությունը նույնպես մեծ տանջանք էր պատճառում մեզ: Լապտերների յուղը կամաց-կամաց նվազում էր: Եվ երբ պարզվեց, որ երկու լապտերի մեջ է միայն յուղ մնացել, «ուսուցիչը» որոշեց լույսը վառել միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Հիմա մենք ամբողջ ժամանակ նստած էինք մթության մեջ: Դա ոչ միայն սարսափելի էր, այլև շատ վտանգավոր: Ամենափոքր անզգույշ շարժման դեպքում կարող էինք ջուրն ընկնել:

թվայնացրել է 1915.info կայքը

Ժամանակ առ ժամանակ մենք բախում էինք պատը՝ ցանկանալով իմաց տալ մեր փրկարարներին, որ դեռ կենդանի ենք: Մենք լսում էինք, թե ինչպես են նրանց քլունգները առանց հանգիստ առնելու փորում գետինը, բայց հարվածների թույլ ձայնը ցույց էր տալիս, որ նրանք դեռ շատ հեռու են:

Մի անգամ, երբ ցած իջա՝ խմելու ջուր վերցնելու, ինձ թվաց, որ ջուրը մի քանի սանտիմետր իջել է:

— Ջուրն իջնում է:

— Տեր Աստված:

Եվ մենք կրկին ապրեցինք հույսի հրճվանքը: Մենք չէինք ցանկանում հանգցնել լապտերները, որ տեսնենք, թե ինչպես է ջուրն իջնում, բայց «ուսուցիչը» թույլ չտվեց:

— Լապտերները մեզ հետո պետք կգան: Եթե հիմա յուղը վերջանա, ապա ի՞նչ պետք է անենք, երբ լույսն անհրաժեշտ լինի: Մեզ մոտ դեռ մնացել է տասներեք լուցկի: Երբ որ ցանկանաք, մենք կարող ենք վառել դրանք:

Լապտերը հանգցրինք, բոլորս ջուր խմեցինք, իսկ հետո՝ երկար ու ձիգ ժամեր, գուցե և օրեր շարունակ չէինք շարժվում: Միակ բանը, որ հույս էր տալիս, փորող քլունգների հարվածների ձայնն էր և հանքահորերից ջուրը դուրս քաշող մեծ դույլերի աղմուկը:

Հետզհետե ձայներն ավելի լսելի էին դառնում, ջուրն իջնում էր. մոտենում էին մեզ: Բայց կհասցնե՞ն արդյոք փրկել:

Եթե րոպե առ րոպե փրկարար աշխատանքներն առաջ էին շարժվում, ապա մեր թուլությունն էլ գնալով աճում էր ու դառնում տանջալից: Մենք թուլանում էինք և՛ մարմնով, և՛ հոգով: Զրհեղեղի օրից իմ ընկերները ոչինչ չէին կերել: Բայց ամենավատն այն էր, որ թարմ օդի բացակայության պատճառով շնչելն ավելի ու ավելի դժվար էր դառնում: Բարեբախտաբար, ջրի պակասելու հետ մեկտեղ մթնոլորտային ճնշումը նվազում էր, հակառակ դեպքում բոլորս խեղդամահ կլինեինք:

Վերջապես քլունգի հարվածների ձայնն ավելի պարզորոշ դարձավ: Անկասկած, մոտենում էին մեզ: «Ուսուցիչը» սիրտ տալու համար հայտարարեց, որ փրկությունը մոտ է:

— Եթե նրանք այդքան մոտ լինեին, որքան դու կարծում ես, մենք կլսեինք նրանց ձայնը, բայց չենք լսում:

— Նրանք կարող են ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա լինել և չլսել մեր ձայնը. դա կախված է այն հանքանյութից, որը բաժանում է ձեզ:

— Կամ էլ՝ տարածությունից:

թվայնացրել է 1915.info կայքը

Մինչ այդ ջրի մակարդակը խիստ ընկավ, և շուտով մենք հասկացանք, որ ջուրն այլևս ստորերկրյա անցքի առաստաղին չի հասնում: Մենք լսեցինք ջրի ճողփյուն, և թվաց, թե ճանկռտում են հանքախորշի շերտաքարերը, կարծես ջրի մեջ ածխի կտորներ ընկան: Մենք վառեցինք լապտերը և տեսանք, որ ցածում հանքախորշի երկայնքով առնետներ են վազում. նրանք էլ մեզ պես փրկվել էին օդի զանգի մեջ և այժմ կեր փնտրելով՝ թողել էին իրենց ապաստանը: Եթե նրանց հաջողվել էր հասնել մեզ, հետևաբար ջուրն այլևս ստորերկրյա անցքի առաստաղին չէր հասնում:

Ես ցանկացա ցած իջնել, որպեսզի տեսնեմ, թե ինչ արագությամբ է նվազում ջուրը: Ստորերկրյա անցքի առաստաղի և ջրի միջև արդեն մեծ տարածություն էր գոյացել:

— Մեզ համար առնետնե՛ր որսա,— բղավեց Կարորին,— կուտենք:

Առնետ բռնելու համար հարկավոր էր ավելի ճարպիկ լինել, քան ես էի: Բայց ջրի մակարդակի իջնելը տեսնելով՝ ես մի միտք հղացա, որը հուզեց և հույս ներշնչեց ինձ: Ես կրկին բարձրացա հարթակը:

— Ինձ թվում է, «ուսուցի՛չ», որ եթե առնետները վազում են ստորերկրյա անցքով, ուրեմն այնտեղ ազատ տարածություն է գոյացել, որտեղով ես կարող եմ լողալ մինչև աստիճանները: Ես կսկսեմ գոռալ, ինձ կլսեն և ավելի շուտ կհասնեն մեզ, քան անցք փորելով:

— Ո՛չ, ես քեզ արգելում եմ:

— «Ուսուցի՛չ», ես շատ լավ եմ լողում, ինչպես ձուկը՝ ջրում:

— Իսկ եթե դու հեղձուցիչ օդից խեղդվես:

— Բայց եթե առնետները չեն խեղդվում, ապա ինձ էլ ոչինչ չի լինի:

— Գնա՛, Ռեմի,— գոռաց Պաժեսը:— Ես քեզ կնվիրեմ իմ ժամացույցը:

— Գասպա՛ր, Դուք ի՞նչ կասեք,— հարցրեց «ուսուցիչը»:

— Ոչինչ: Եթե նա մտածում է, որ կհասնի աստիճաններին, թող գնա, ես նրան խանգարելու իրավունք չունեմ:

— Իսկ եթե հանկարծ նա խեղդվի:

— Գուցե, ընդհակառակը, այստեղ մեռնելու փոխարեն կփրկվի:

«Ուսուցիչը» մի րոպե մտածեց, հետո ձեռքս բռնելով՝ ասաց.

— Դե՛հ, տղա՛ս, վարվի՛ր այնպես, ինչպես ցանկանում ես:

— Ես կարծում եմ, որ դա անհնարին է: Բայց անհնարինն էլ երբեմն հնարավոր է դառնում: Գրկի՛ր մեզ:

Ես համբուրեցի նրան և հորեղբայր Գասպարին ու ջուրը մտա:

— Անընդհատ ձա՛յն տվեք ինձ,— խնդրեցի ես:— Ձեր ձայները ինձ կօգնեն գտնելու ճանապարհը:

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

Արդյոք ստորերկրյա անցքի առաստաղի և ջրի միջև ընկած տարածությունն ազատ լողալու հնարավորություն կտա՞: Ահա թե ինչն էր հետաքրքրում ինձ:

Մի քանի շարժում անելով՝ որոշեցի, որ կարող եմ հանգիստ լողալ, բայց պետք էր լողալ դանդաղ, որպեսզի գլուխս առաստաղին չհարվածեի: Փորձը ցույց տվեց, որ դա հնարավոր է, բայց ինչ է սպասում ինձ առջևում. մա՞հ, թե փրկություն:

Ես հետ նայեցի և տեսա լապտերի լույսը, որն անդրադառնում էր գորշ ջրի մեջ: Դա իմ փարոսն էր:

— Լա՞վ ես լողում,— ձայն տվեց «ուսուցիչը»:

— Այո՛:

Եվ ես շարունակեցի զգուշորեն առաջ լողալ:

Հանքախորշից մինչև աստիճաններն ընկած ճանապարհի դժվարությունն այն էր, որ ստորերկրյա անցքերը մի տեղում հատվում էին: Մթության մեջ կարելի էր հեշտությամբ սխալվել և ճանապարհը կորցնել: Ստորերկրյա անցքի առաստաղով ու պատերով չէի կարող կողմնորոշվել, բայց գետնին կար հուսալի ուղեցույց՝ ռելսերը: Դրանց երկայնքով լողալով՝ ես անպայման կհասնեի աստիճաններին:

Ժամանակ առ ժամանակ իջեցնում էի ոտքերս և ռելսերը շոշափելով՝ շարունակում էի դանդաղ առաջ շարժվել: Ռելսերը և ընկերներիս ձայնը համոզում էին ինձ, որ իմ ճանապարհը ճիշտ էր: Ձայները գնալով խլանում էին, դույլերի աղմուկն ուժեղանում էր, ուրեմն առաջ էի շարժվում:

Վերջապես կտեսնեմ ցերեկվա լույսը, և իմ օգնությամբ ընկերներս կփրկվեն: Այդ մտքերն ինձ ուժ էին տալիս: Ես լողում էի ստորերկրյա անցքով, և բավական էր՝ ոտքս ցած իջեցնեմ, իսկույն զգում էի ռելսերի հպումը: Բայց հանկարծ հերթական շարժումն անելով՝ զգացի, որ ռելսերը չկան: Այդ ժամանակ ես սուզվեցի, որպեսզի ձեռքով գտնեմ ռելսերը, հետո լողացի անցքի մի պատից մինչև մյուսը, բայց ռելսերը չգտա: Միթե ես շեղվել էի ճանապարհից:

Շունչ առնելով և օդ հավաքելով՝ նորից սուզվեցի, բայց կրկին անօգուտ: Ռելսերը չկային: Հավանաբար սխալվել էի և գնացել ուրիշ ուղղությամբ: Պետք էր վերադառնալ: Բայց ո՞ւր: Իմ ընկերներն այլևս ձայն չէին տալիս, կամ ես չէի լսում նրանց: Մի վայրկյան կանգ առա՝ տանջալից տագնապով համակված՝ չիմանալով, թե որ կողմը գնամ: Միթե ես կմեռնեմ այստեղ՝ այս անթափանց մթության մեջ՝ այս հեղձուցիչ կամարի տակ՝ սառը ջրի մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց հանկարծ կրկին ձայներ լսեցի և գլխի ընկա, թե որ կողմը պետք է գնամ:

Մի քիչ տարածություն հետ լողալով՝ սուզվեցի և շոշափելով զգացի, որ նորից ռելսեր կային: Հետևաբար այստեղ սկսվում էր ճյուղավորումը: Ես փնտրում էի շրջադարձի օղակը և չէի գտնում, փնտրում էի ելքի անցքերը, որոնք պետք է լինեին, բայց թե՛ աջից, թե՛ ձախից դեմ էի առնում պատերի: Այդ ժամանակ գլխի ընկա, որ գծերը քանդված են, և ոչ մի ուղեցույց չկա:

Այդ պայմաններում իմ պլանն անիրագործելի էր. ստիպված էի վերադառնալ: Հիմա ճանապարհին ինձ ծանոթ էր, ես գիտեի, որ դա անվտանգ է, և լողում էի արագ՝ ցանկանալով շուտ հասնել հանքախորշին: Ընկերներիս ձայնն ուղեցույց էր ինձ համար: Ես շուտով հայտնվեցի հանքախորշի մուտքի մոտ:

— Լողա՛, լողա՛,— գոռաց «ուսուցիչը»:

— Ես ելքը չգտա:

— Դա կարևոր չէ. փորման աշխատանքն արագ առաջ է շարժվում: Նրանք լսում են մեր ձայները, իսկ մենք էլ՝ նրանց: Շուտով մենք կկարողանանք խոսել միմյանց հետ:

Ես արագ վեր մագլցեցի ու ականջ դրեցի: Քլունգի հարվածների ձայնը իսկապես հնչում էր շատ ավելի հատու, իսկ մեր փրկարարների բացականչությունները լսվում էին չնայած թույլ, բայց շատ պարզորոշ:

Երբ ուրախության առաջին վայրկյաններն անցան, ես զգացի, որ սարսափելի սառել եմ: Քանի որ տաք հագուստ չկար, ինձ մինչև պարանոցս թաղեցին մանր ածխի կույտի մեջ, որը միշտ պահպանում է որոշ ջերմություն: Իսկ Գասպար հորեղբայրը և «ուսուցիչը» սեղմվեցին ինձ: Այդ ժամանակ նրանց պատմեցի իմ հետախուզության և այն մասին, թե ինչպես կորցրի ռելսերը:

— Չվախեցա՞ր սուզվելուց:

— Ինչո՞ւ վախենամ: Միայն ցավալի է, որ ոչինչ չգտա:

Բայց, ինչպես ասաց «ուսուցիչը», արդեն դա նշանակություն չուներ: Եթե մենք չփրկվենք հանքահորի ելքով, ապա մեզ կազատեն փորված անցքի միջով:

Բացականչություններն ավելի ու ավելի պարզորոշ էին դառնում: Շուտով մենք լսեցինք դանդաղ, հատ–հատ արտասանված չորս բառ:

— Քանի՞ մարդ կա այդտեղ:

Հորեղբայր Գասպարը բոլորից բարձր էր խոսում, դրա համար նրան հանձնարարվեց պատասխանել:

— Վեց հոգի:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի րոպե լռություն տիրեց: Անկասկած, վերևում հույս ունեին, որ մենք ավելի շատ ենք:

— Շտապեք,— գոռաց Գասպար հորեղբայրը:— Մենք կիսակենդան ենք:

— Ձեր անունները:

Նա թվարկեց բոլորին. Բերգունա, Պաժես, «ուսուցիչ», Գասպար, Կարորի, Ռեմի:

Դրսում եղողների համար այդ վայրկյանն առանձնապես ողբերգական էր: Երբ տեղեկացել էին, թե շուտով կարելի կլինի մեզ հետ խոսել, վազել եկել էին կորած հանքափորների բոլոր հարազատներն ու մտերիմները, որոնց զինվորները մեծ դժվարությամբ էին հետ պահում ստորերկրյա անցքի մուտքի մոտ:

Երբ ճարտարագետը հայտարարեց, որ մենք ընդամենը վեց հոգի ենք, հուսախաբությունը համակեց մարդկանց. բայց ամեն մեկը դեռ հույս ուներ, որ այդ վեց մարդու մեջ կարող է լինել իր հարազատը:

Ճարտարագետը կրկնեց մեր անունները: Ավա՛ղ, արդարացան միայն չորս հանքափորի բարեկամների հույսերը: Որքա՜ն վիշտ ու արցունք՝ մյուս բոլոր մայրերի ու կանանց համար:

Մենք էլ մեր հերթին ցանկացանք իմանալ, թե բացի մեզնից՝ ովքե՞ր են փրկվել:

— Քանի՞ մարդ է փրկվել,— հարցրեց հորեղբայր Գասպարը:

Մեզ չպատասխանեցին:

— Շուտով ձեզ կփրկենք, քա՛ջ եղեք: Այլևս չխոսենք. դա խանգարում է աշխատելուն: Մի քանի ժա՛մ էլ դիմացեք:

Այդ ժամերը մեզ համար ամենաերկարն էին ու ամենատանջալին: Քլունգի ամեն մի հարվածը մեզ վերջինն էր թվում: Բայց այդ հարվածին հաջորդում էր մի ուրիշը, հետո՝ հետևյալը: Ժամանակ առ ժամանակ նոր հարցեր էին հնչում:

— Դուք սովա՞ծ եք:

— Սարսափելի:

— Եթե շատ եք թուլացել, մենք հորատանցք կբացենք և արգանակ կուղարկենք ձեզ, բայց դա կդանդաղեցնի աշխատանքը: Ավելի լավ է՝ դիմացե՛ք, շուտով կազատվեք:

— Կդիմանանք, շտապե՛ք:

Ոչ մի րոպե չէր դադարում նաև մեծ դույլերով ջուրը դուրս քաշելու աշխատանքը. ջուրը շարունակում էր նվազել:

— Զա՛յն տուր նրանց, որ ջուրն իջնում է,— ասաց «ուսուցիչը»:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գիտենք: Մեր փորած անցքի կամ հանքահորի միջով մենք շուտով կհասնենք ձեզ:

Քլունգի հարվածները սկսեցին թուլանալ: Հավանաբար պատրաստվում էին ծակելու մեզ բաժանող պատը, բայց վախենում էին փլվածքից, որը կարող էր ճզմել կամ ջուրը նետել մեզ:

«Ուսուցիչը» բացատրեց, որ պետք է զգուշանալ նաև օդի հարվածից: Հենց որ հանքախորշի մեջ անցք բացեն, օդը կարող է գնդացրային արկի պես ներխուժել և ամեն ինչ քարուքանդ անել: Ստիպված էինք շատ զգույշ լինել: Վերևից քլունգի հարվածներից թափվում էին ածխի ոչ մեծ կտորներ, որոնք ցած էին սահում և ընկնում ջուրը:

Տարօրինակ է. որքան ավելի էր մոտենում մեր փրկության րոպեն, այնքան ավելի էինք թուլանում մենք: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես արդեն այլևս շարժվել չէի կարողանում, և չնայած ցուրտ չէր, դողում էի ոտքից գլուխ:

Վերջապես պոկվեցին մի քանի մեծ կտոր և ընկան մեր հարթակին: Հանքախորշի վերևում անցք բացվեց, և պայծառ լույսը կուրացրեց մեզ: Հետո իսկույն տիրեց խավար. ուժեղ հողմը հանգցրեց լապտերները:

— Մի՛ վախեցեք, հիմա լույս կվառենք: Մի քիչ սպասե՛ք:

Սպասե՛լ, կրկի՛ն սպասել:

Բայց հանկարծ ստորերկրյա անցքում ջրի ճողփյուն լսվեց. հետ նայելով՝ լույս տեսա:

— Մի՛ վախեցեք,— ձայն տվեցին մեզ այնտեղից:

Ստորերկրյա անցքով մարդիկ էին մոտենում: Առջևից գալիս էր ճարտարապետը: Նա առաջինը հանքախորշ բարձրացավ, և ես չհասցրի մի բան ասել, երբ արդեն նրա գրկում էի:

Օգնությունը ժամանակին հասավ. արդեն կորցնում էի գիտակցությունս, բայց զգացի, որ ինձ տարան և փաթաթեցին վերմակի մեջ: Ես աչքերս փակեցի, բայց ցերեկվա վառ լույսը ստիպեց բացել: Մեզ դուրս էին բերել հանքահորից: Նույն վայրկյանին ինչ–որ սպիտակ բան նետվեց իմ կողմը. Կապին էր: Մի ոստյունով նա թռավ ճարտարապետի ձեռքերին և այժմ լիզում էր դեմքս: Հետո ինչ–որ մեկը բռնեց աջ ձեռքս և համբուրեց:

— Ռե՛մի,— թույլ ձայնով ասաց Մատտիան:

Շուրջս նայեցի և տեսա հսկայական մի բազմություն, որը, անցման տեղ թողնելով, կանգնած էր երկու խիտ շարքերով:

Բազմությունը լուռ էր. կարգադրված էր բացականչություններով չհուզել մեզ, բայց մարդկանց վշտալի դեմքերն ու հայացքները բառերից պերճախոս էին:

թվայնացրել է 1915.info կայքը

Քսան ձեռք մեկնվեց, որպեսզի վերցնեն ինձ, բայց ճարտարապետը, իր հաջողությունից երջանիկ ու հպարտ, ցանկացավ ինքը տանել ինձ մինչև գրասենյակ, որտեղ մեզ համար անկողիններ կային պատրաստված:

Երկու օր անց արդեն զբոսնում էի Վարսի փողոցներում՝ Մատտիայի, Ալեքսիսի, Կապիի ուղեկցությամբ, և հանդիպած բոլոր մարդիկ կանգ էին առնում, որպեսզի նայեն ինձ: Ոմանք մոտենում էին և արցունքն աչքերին՝ սեղմում ձեռքս: Մյուսները, ընդհակառակը, երես էին թեքում: Դրանք այն մարդիկ էին, ովքեր կորցրել էին հարազատներին: Ոմանք դառնացած մոտենում էին, թե ինչու է փրկվել այս որբ երեխան, իսկ իրենց հայրը կամ որդին՝ զոհվել հանքահորում: Ոմանք ինձ ճաշի էին հրավիրում կամ սրճարան:

— Պատմի՛ր ամեն բան, ինչ զգացել ես,— խնդրում էին նրանք:

Ես շնորհակալություն էի հայտնում, բայց չէի համաձայնվում: Բոլորովին չէի ցանկանում պատմել իմ ապրումների մասին այդ անտարբեր մարդկանց, որոնք մտադիր էին դրա համար վճարել ինձ՝ ճաշ կամ մի գավաթ գարեջուր տալով. բացի այդ՝ ես գերադասում էի լսել Ալեքսիսի ու Մատտիայի պատմածները, թե ինչ էր տեղի ունեցել վերևում, երբ մենք գետնի տակ էինք:

— Ես երբեք չէի հավատում, որ դու մեռել ես,— ասում էր Մատտիան:— Ես վստահ էի, որ դու չես կարող խեղդվել, և եթե փրկության աշխատանքները բավականաչափ արագ ընթանան, քեզ որևէ տեղում անպայման կգտնեն: Եվ բոլորին հարցնում էի. որքա՞ն ժամանակ կարելի է ապրել առանց ուտելու: Ե՞րբ դուրս կքաշեն ջուրը: Ե՞րբ կփորեն անցքը: Բայց ինձ ոչ ոք որևէ ստույգ բան ասել չէր կարողանում: Երբ ճարտարապետը տվեց ձեր անունները, ես գետնին ընկա ու լաց եղա: Ինչ–որ մեկը կոխկրտեց ինձ, բայց ես այնքան երջանիկ էի, որ ցավ համարյա չզգացի:

Մատտիան անհնարին էր համարում, որ ես կարող եմ մեռնել, և դա հպարտությամբ լցրեց սիրտս: Ահա թե որքան ամուր էր նրա հավատը իմ նկատմամբ:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 7

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

Վարսում արդեն բարեկամներ ունեի: Դեպքերը, որոնք ստիպում են մարդկանց հուզվել ու տանջվել, սովորաբար մտերմացնում են նրանց: Գասպար հորեղբայրը և մանավանդ «ուսուցիչը» շատ կապվեցին ինձ հետ: Բոլորը ցանկանում էին, որ ես ապրեմ Վարսում:

— Ես քեզ համար լավ հանքափոր կգտնեմ,— ասում էր Գասպար հորեղբայրը,— և մենք միմյանցից չենք բաժանվի:

— Ուզո՞ւմ ես գրասենյակում տեղ ստանալ,— առաջարկում էր ճարտարագետը:

Այդ խոսակցությունների ժամանակ Մատտիան մտազբաղ էր և շատ մռայլ: Ես բազմիցս հարցնում էի նրան, թե ինչ է եղել, բայց նա ամեն անգամ պատասխանում էր, որ ոչինչ չի պատահել:

Միայն այն ժամանակ, երբ ես նրան հայտնեցի, որ մենք հեռանում ենք Վարսից, նա խոստովանեց, թե ինչն էր իր տխրության պատճառը:

— Ուրեմն դու չե՞ս պատրաստվում թողնելու ինձ,— բացականչեց նա:

Պատասխանի փոխարեն ես մի լավ հասցրի նրա վզակոթին մասամբ այն պատճառով, որ նա համարձակվել է կասկածել, մասամբ՝ ցանկանալով

թվայնացրել է 1915.info կայքը

ծածկել սրտիս հուզմունքը: Չէ՞ որ Մատտիան ինձնից ոչ մի շահ չուներ: Նա առանց ինձ էլ կարող էր շատ լավ ապրել ու վաստակել:

Ճիշտն ասած՝ նա մեծ ընդունակություններ ուներ:

Նա շատ ավելի լավ էր նվագում երաժշտական գործիքներ, քան ես, բացի այդ՝ երգում էր, պարում, զանազան դերեր կատարում: Այն կարճ ժամանակամիջոցում մինչ ես աշխատում էի հանքում որպես քարածուխ կրող, նա հավաքել էր տասնութ ֆրանկ, որը զգալի գումար էր: Մեր ունեցած հարյուր քսանութ ֆրանկը և Մատտիայի վաստակած տասնութ ֆրանկը հարյուր քառասունվեց ֆրանկ էին: Կով գնելու համար պակասում էր ընդամենը մի քանի ֆրանկ:

Չնայած ես չէի մտածում մնալ Վարսում ու աշխատել հանքահորում, բայց և այնպես ինձ համար շատ տխրալի էր բաժանվել Ալեքսիսից, Գասպար հորեղբորից և «ուսուցչից»: Բայց այդպես էր ինձ վիճակված. բաժանվել նրանցից, ում սիրում էի և ում հետ մտերմանում էի:

Եվ ահա տավիղը՝ ուսիս, տոպրակը՝ մեջքիս՝ ես ու Մատտիան կրկին քայլում ենք մեծ ճանապարհներով: Կապին շատ երջանիկ էր և ուրախ–ուրախ թավալվում էր փոշու մեջ:

Խոստովանում եմ, որ ես նույնպես հաճույքով էի քայլում հարթ ճանապարհով, որը բոլորովին նման չէր հանքերի անտանելի գետնին: Ինչ հրաշալի էր արևը, ինչ գեղեցիկ էին ծառերը:

Նախքան ճանապարհ ընկնելը ես ու Մատտիան երկար քննարկում էինք, թե որ ճանապարհով ենք գնալու:

Այն ժամանակ, երբ ես աշխատում էի հանքում, Մատտիան հանդիպել էր արջ վարժեցնող մի մարդու, որը վերադառնում էր առողջարաններից: Ըստ նրա խոսքերի՝ այնտեղ կարելի էր լավ վաստակել: Մատտիան ցանկանում էր, որքան կարելի է, շատ փող հավաքել: Չէ՞ որ այդ դեպքում մենք կկարողանայինք գնել ամենալավ կովը, և Բարբերեն մայրիկը շատ գոհ կլիներ:

Եվ մենք որոշեցինք Շավանոն գնալ Կլերմոնով:

Փարիզից Վարս գալու ժամանակ ես սկսել էի պարապել Մատտիայի հետ: Ես նրան սովորեցրի կարդալ և որոշ բացատրություններ տվեցի երաժշտությունից: Վարսից Կլերմոն գնալիս մենք շարունակեցինք մեր դասերը:

Արդյոք ես էի վատ ուսուցիչ, որը շատ հնարավոր էր, թե Մատտիան էր վատ աշակերտ, որը նույնպես հնարավոր էր, բայց ընթերցանությունը նա ընկալում էր մեծ դժվարությամբ: Մատտիան գրքում կարդում էր զանազան

թվայնացրել է 1915.info կայքը

աներևակայելի բաներ, որոնք պատիվ էին բերում նրա երևակայությանը, բայց ոչ երբեք ուշադրությանը:

Այդ ժամանակ համբերությունից դուրս գալով՝ ես բարկացած գոռում էի, որ նրա գլուխը փայտից է: Նա չէր վիրավորվում և իր մեծ ու քնքուշ աչքերն ինձ հառած՝ ժպտալով ասում էր.

— Ճիշտ է, իմ գլուխը զգայուն է միայն այն ժամանակ, երբ հարվածում են: Գարաֆոլին հիմար չէր, նա իսկույն այդ նկատեց:

Անհնարին էր բարկանալ, երբ նա այդպես էր պատասխանում: Ես սկսում էի ծիծաղել, և մենք կրկին շարունակում էինք դասը:

Բայց բոլորովին այլ էր երաժշտության դեպքում: Երաժշտության մեջ Մատտիան հենց սկզբից այնպիսի զարմանալի և արտակարգ առաջադիմություն ցուցաբերեց, որ շատ շուտով իր հարցերով փակուղու առաջ կանգնեցրեց ինձ:

Խոստովանում եմ, որ դա և՛ վիրավորում, և՛ վշտացնում էր ինձ: Ես լրջորեն էի ստանձնել ուսուցչի դերը և ստորացուցիչ էի համարում, որ Մատտիան անդադար դիմում էր ինձ այնպիսի հարցերով, որոնց պատասխանել չէի կարողանում: Ի վիճակի չլինելով, ինչպես հարկն է, բացատրել նրան ամեն բան՝ ես անհամբերությամբ պատասխանում էի.

— Դա այդպես է, որովհետև պետք է այդպես լինի համաձայն օրենքի:

Մատտիան օրենքների դեմ ըմբոստացող տղա չէր: Բայց երբ ես նրան այդպես էի պատասխանում, նա նայում էր դեմքիս՝ բերանը բաց, աչքերը չռած, և այդ ինձ շատ էր շփոթեցնում:

Վարսից վերադառնալուց երեք օր հետո նա մի այդպիսի հարց էլ ինձ տվեց: Փոխանակ ուղղակի խոստովանելու, որ այդ չգիտեմ, ես հայտարարեցի. «Որովհետև այդպես է»: Նա մտահոգ տեսք ընդունեց և ամբողջ օրվա ընթացքում լուռ էր. դա արտասովոր բան էր նրա համար, որովհետև նա սիրում էր շատախոսել ու ծիծաղել: Ես հանգիստ չթողեցի նրան, մինչև որ վերջապես խոսեց.

— Իհարկե, դու լավ ուսուցիչ ես, և ես վստահ եմ, որ ոչ ոք չի կարող քեզնից ավելի լավ բացատրել, բայց և այնպես...— նա կանգ առավ:

— Բայց և այնպես ի՞նչ:

— Բայց և այնպես հավանաբար կան բաներ, որ դու չգիտես: Չէ՞ որ այդպես պատահում է նաև ամենագիտուն մարդու հետ, ճի՞շտ չէ: Ես կարծում եմ, որ մենք պետք է մեզ համար առնենք մի գիրք, որն, իհարկե, թանկ չարժենա, և որի մեջ շարադրված լինեն երաժշտության հիմնական օրենքները:

թվայնացրել է 1915.info կայքը

— Լավ, կգնենք:

— Ես այդպես էլ գիտեի, որ դու կհամաձայնվես: Վերջիվերջո, դու չես կարող իմանալ ամեն բան, ինչ կա գրքերում, և բացի այդ՝ չէ՞ որ դու գրքերով չես սովորել:

— Լավ ուսուցիչը ամենալավ գրքից էլ լավ է:

— Այն, ինչ դու հիմա ասացիր, ինձ մի միտք ներշնչեց: Եթե դու չես առարկում, ես ցանկանում եմ մի իսկական ուսուցչի մոտ դաս ստանալ, միայն մի դաս: Թող նա բացատրի ինձ այն ամենը, ինչ ես չգիտեմ:

— Իսկ ինչո՞ւ դու իսկական ուսուցչի մոտ չգնացիր, երբ մենակ էիր:

— Որովհետև իսկական ուսուցչին պետք է վճարել, իսկ ես չէի ցանկանում ծախսել քո փողը:

Եվ չնայած ինձ վիրավորել էին Մատտիայի՝ «իսկական ուսուցիչ» խոսքերը, բայց նրա վերջին բառերն ինձ շատ հուզեցին:

— Իզուր,— ասացի ես:— Մեր փողն ընդհանուր է, և դու ինձնից քիչ չես վաստակում: Դրա համար էլ վերցրո՛ւ այնքան դաս, որքան քեզ հարկավոր է:

Հետո ես արիաբար խոստովանեցի իմ տգիտությունը:

— Այդպիսով՝ ես նույնպես կկարողանամ սովորել այն, ինչ չգիտեմ:

Ուսուցիչ, իսկական արտիստ–ուսուցիչ և ոչ թե հասարակ. գյուղական երաժիշտ մենք կարող էինք գտնել միայն մեծ քաղաքում: Քարտեզով ես իմացա, որ մեր ճանապարհին ընկած ամենամեծ քաղաքը լինելու է Մանտը:

Մանտում մենք որոշեցինք թույլ տալ մեզ այդ շռայլությունը և երաժշտության դաս ստանալ: Ես ցանկանում էի, որ Մատտիան հնարավորինս շուտ վայելի այդ հաճույքը:

Մեժեանի բարձրավանդակն անցնելով, որը հավանաբար ողջ աշխարհի ամենատխուր վայրն է, ուր չկան անտառներ, գետեր, չմշակված դաշտեր, գյուղեր ու բնակիչներ, այլ միայն հսկայական, մռայլ պարապուտներ, մենք վերջապես հասանք Մանտ:

Քանի որ գիշերն արդեն վրա էր հասել, այդ երեկո մենք չկարողացանք ուսուցիչ փնտրել: Բացի այդ՝ մենք սարսափելի հոգնած էինք:

Բայց Մատտիան անհամբեր էր և ցանկանում էր իմանալ, թե Մանտում երաժշտության ուսուցիչ կա՞ արդյոք, և ընթրիքի ժամանակ հարցրի մեր իջևանած պանդոկի տիրուհուն, թե նրանց քաղաքում ո՞վ է ամենալավ երաժիշտը: Նրան շատ զարմացրեց իմ հարցը:

— Մի՞թե դուք չեք ճանաչում պարոն Էսպինասսուին,— ասաց նա:

— Մենք եկել ենք հեռու տեղից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հեռու տեղից: Իսկ որտեղից:

— Իտալիայից,— պատասխանեց Մատտիան:

Պանդոկի տիրուհու զարմանքը տեղի տվեց, և նա ասաց, որ այդ դեպքում մենք, իհարկե, կարող էինք չիմանալ այնպիսի երաժշտի մասին, ինչպիսին պարոն Էսպինասսուն է: Բայց եթե մենք եկած լինեինք որևէ ֆրանսիական քաղաքից, ապա նա նույնիսկ չէր էլ խոսի այնպիսի տգետների հետ, որոնք երբեք չեն լսել պարոն Էսպինասսուի մասին:

— Կարծես մենք գտել ենք այն մարդուն, որը պետք է,— իտալերենով դիմեցի ես Մատտիային:

Բայց ես վախենում էի, որ այդպիսի նշանավոր արտիստը չի ցանկանա դաս տալ աղքատ, թափառաշրջիկ երաժիշտներին:

— Իսկ պարոն Էսպինասսուն շա՞տ է զբաղված,— հարցրի ես:

— Հավանաբար, այո՛: Այլ կերպ էլ լինել չի կարող:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչ եք կարծում, նա կկարողանա՞ վաղն առավոտյան ընդունել մեզ:

— Իհարկե: Նա ընդունում է բոլորին, ով գրպանում փող ունի:

Մենք հանգստացանք և չնայած մեր հոգնածությանը՝ երկար ժամանակ քննարկում էինք, թե վաղը ինչ հարցեր ենք տալու այդ նշանավոր ուսուցչին:

Առավոտյան խնամքով լվացվելով և մաքուր զգեստներ հագնելով՝ մենք վերցրինք գործիքները. Մատտիան՝ ջութակը, ես՝ տավիղս, և գնացինք պարոն Էսպինասսուի մոտ: Կապին, իհարկե, ուզում էր գալ մեզ հետ, բայց մենք կապեցինք նրան ախոռում՝ մտածելով, որ անհարմար է շան հետ գնալ Մանտ քաղաքի նշանավոր երաժշտի մոտ: Մենք գնացինք մատնանշված հասցեով և տեղ հասնելով՝ շփոթված կանգ առանք: Տան ցուցափեղկում ճոճվում էին սափրվելու երկու փոքրիկ պղնձե թաս, և դա ոչ մի կերպ չէր կարող երաժշտության ուսուցչի ցուցանակ լինել: Մինչ մենք զննում էինք այդ ցուցափեղկը, մոտեցավ ինչ–որ կին, որին մենք հարցրինք, թե որտեղ է ապրում պարոն Էսպինասսուն:

— Այստեղ,— պատասխանեց կինը՝ մատնացույց անելով վարսավիրանոցը:

Ի վերջո, ինչո՞ւ երաժշտության պրոֆեսորը չի կարող ապրել վարսավիրի մոտ:

Մենք ներս մտանք: Խանութը բաժանված էր երկու մասի: Աջ մասում դարակների վրա դրված էին խոզանակներ, սանրեր, օծանելիքի բանկաներ ու օճառ: Ձախ մասում շարված և պատից կախված էին երաժշտական գործիքներ՝ ջութակներ, կոռնետապիստոններ ու փողեր:

— Կարելի՞ է տեսնել պարոն Էսպինասսուին,— հարցրեց Մատտիան:

Փոքրահասակ, աշխույժ ու շարժուն մի մարդ, որն այդ ժամանակ սափրում էր մի գյուղացու, թավ ձայնով պատասխանեց.

— Այդ ես եմ:

Ես նայեցի Մատտիային՝ հասկացնելով նրան, որ այդ երաժիշտ–վարսավիրը բոլորովին այն մարդը չէ, որը հարկավոր է մեզ, և հազիվ թե կարիք կա դիմելու նրան և փողը քամուն տալ: Բայց ինձ լսելու փոխարեն Մատտիան նստեց աթոռին և անհոգ տեսք ընդունած՝ հարցրեց.

— Երբ սափրելը վերջացնեք, կարո՞ղ եք մազերս կարգի բերել:

— Իհարկե, կարող եմ, երիտասարդ: Կարող եմ նաև սափրել, եթե ցանկանաք:

— Շնորհակալ եմ, մի ուրիշ անգամ,— պատասխանեց Մատտիան,— այսօր չեմ սափրվելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Մատտիայի վարվելակերպն ինձ շշմեցրեց, բայց նա ծածուկ նշան արեց ինձ՝ խնդրելով չբարկանալ, այլ սպասել:

Շուտով Էսպինաասան վերջացրեց գյուղացուն սափրելը և անձեռոցիկը ձեռքին՝ մոտեցավ Մատտիային:

— Պարո՛ն,— ասաց Մատտիան, երբ վարսավիրը նրա պարանոցին կապեց անձեռոցիկը,— ես և ընկերս վիճում ենք, և քանի որ Դուք հոչակավոր երաժիշտ եք, հավանաբար կարող եք լուծել մեր վեճը:

— Ինչ հարցի շուրջն է ձեր վեճը, երիտասարդնե՛ր:

Ես հասկացա, թե ինչ մտադրություն ուներ Մատտիան: Նախ և առաջ նա ցանկանում էր իմանալ, թե ի վիճակի՞ է արդյոք այդ սափրիչ–երաժիշտը պատասխանելու նրա հարցերին, հետո դասի համար վճարելու նրան այնքան, որքան արժեր մազեր խուզելը: Մատտիան շատ խորամանկը դուրս եկավ:

— Ինչո՞ւ,— հարցրեց Մատտիան,— ջութակը լարում են որոշակի նոտաներով:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես կարծում էի, որ վարսավիրը իմ պատասխանների նման մի պատասխան կտա, և արդեն կամացուկ քմծիծաղ էի տալիս, բայց վարսավիրը լրջորեն ասաց.

— Երկրորդ լարը, ըստ կամերտոնի, պետք է հնչի լյա, իսկ մյուսները ըստ դրա լարվում են այնպես, որ նրանց մեջ կվինտա[10] լինի, այսինքն՝ չորրորդ լարը՝ սոլ, երրորդը՝ ռե, երկրորդը՝ լյա, և առաջինը կամ ամենաբարձրը՝ մի:

Եվ այժմ ոչ թե ես էի ծիծաղում, այլ Մատտիան: Արդյոք նրան զվարճացնում էր իմ զարմացած դեմքը, թե նա ուրախանում էր, որ վերջապես իմացավ այն, ինչ վաղուց ցանկանում էր իմանալ, բայց նա ծիծաղում էր ի սրտե:

Մինչ վարսավիրը խուզում էր Մատտիայի մազերը, վերջինս հարցերի տարափ էր տեղում Էսպինասսուին, և ինչ էլ որ նա հարցնում էր, վարսավիրը պատասխանում էր նույն թեթևությամբ ու վստահությամբ, ինչպես ջութակի մասին տրված հարցին: Հետո նա իր հերթին սկսեց հարցուփորձ անել և շուտով հասկացավ, թե ինչ նպատակով էինք եկել նրա մոտ:

Նա բարձրաձայն ծիծաղեց:

— Ա՛յ, թե չարաճճիներն եք:

Հետո նա ցանկացավ, որ Մատտիան որևէ բան նվագի:

Մատտիան, ջութակը վերցնելով, սկսեց վալս նվագել:

— Եվ դու ոչ մի նոտա չգիտե՞ս,— զարմացավ վարսավիրը՝ ծափ զարկելով և Մատտիային «դու»–ով դիմելով, կարծես վաղուց ի վեր ճանաչելիս լիներ նրան:

Կարծեմ՝ արդեն ասել եմ, որ խանութում ուրիշ գործիքներ էլ կային: Ջութակ նվագելուց հետո Մատտիան վերցրեց կլառնետը:

— Ես նվագում եմ նաև կլառնետ և կոռնետապիստոն:

— Այդ դեպքում նվագի՛ր,— խնդրեց Էսպինասսուն:

Եվ Մատտիան այդ գործիքներով նվագեց փոքրիկ պիեսներ:

— Այս տղան իսկական հրաշք է,— բացականչեց Էսպինասսուն:— Եթե դու մնաս ինձ մոտ, ես քեզ մեծ երաժիշտ կդարձնեմ, լսո՞ւմ ես, մե՛ծ երաժիշտ: Առավոտները դու ինձ հետ կսափրես իմ հաճախորդներին, իսկ օրվա մյուս մասը կսովորես: Չկարծես, որ եթե ես սափրիչ եմ, չեմ կարող քեզ համար իսկական ուսուցիչ լինել: Հարկավոր է ապրել, ուտել, խմել. ահա թե ինչի համար է ինձ պետք գալիս ածելին:

---

10 Կվինտա (լատ.) — հինգերորդ (նկատի է առնված աստիճանը). երաժշտության տեսության մեջ այդպես է կոչվում հինգ աստիճան ձայների միջև ընկած ընդմիջումը:

թվայնացրել է 1915.info կայքը

Լսելով այդ բոլորը՝ ես նայում էի Մատտիային: Արդյոք ինչ կպատասխանի նա: Միթե ես ստիպված կլինեմ զրկվել իմ բարեկամից, ընկերոջից, եղբորից այնպես, ինչպես մեկը մյուսի հետևից կորցրի նրանց, ում սիրում էի: Սիրտս ճմլվեց:

Դրությունը որոշ չափով հիշեցնում էր այն վիճակը, որի մեջ էի, երբ տիկին Միլլիգանը խնդրում էր Վիտալիսին թողնել ինձ իրենց մոտ: Ես չէի ցանկանում կշտամբել ինքս ինձ այնպես, ինչպես հետագայում կշտամբում էր իրեն Վիտալիսը:

— Մտածիր միայն քո մասին, Մատտիա,— հուզված շշնջացի ես:

Բայց նա արագորեն մոտեցավ ինձ և բռնեց ձեռքս:

— Բաժանվել ընկերոջիցս: Ո՛չ, այդ անել չեմ կարող, շնորհակալ եմ:

Էսպինասսուն շարունակում էր պնդել և ավելացրեց, որ երբ Մատտիան ավարտի իր սկզբնական կրթությունը, ինքը միջոցներ կգտնի նրան Տուլուզա ուղարկելու համար, իսկ հետո՝ Փարիզի կոնսերվատորիան: Բայց Մատտիան առաջվա պես կրկնում էր.

— Բաժանվել Ռեմիից: Երբեք:

— Դե լավ, տղա՛,— ասաց Էսպինասսուն:— Բայց և այնպես ուզում եմ որևէ բան արած լինել քեզ համար: Ես կնվիրեմ քեզ մի գիրք, որի մեջ դու կգտնես այն բոլորը, ինչ չգիտես:

Եվ նա սկսեց քրքրել արկղերը, մինչև որ գտավ «Երաժշտության տեսություն» վերնագրով մի գիրք, որը շատ հին էր, շատ ճմռթված, շատ քրքրված, բայց դա, իհարկե, ոչ մի նշանակություն չուներ:

Գրիչը վերցնելով՝ Էսպինասսուն գրքի առաջին էջին գրեց. «Երբ որ տղան մեծ արտիստ դառնա, թող հիշի Մանտ քաղաքի վարսավիրին»:

Չգիտեմ, թե այն ժամանակ Մանտում, բացի վարսավիր Էսպինասսուից, երաժշտության ուրիշ ուսուցիչներ կային արդյոք, բայց մենք բախտ ունեցանք հանդիպելու, և, իհարկե, թե՛ ես, թե՛ Մատտիան երբեք չենք մոռանա նրան:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 8

ԿՈՎԸ

Ես միշտ էլ շատ էի սիրում Մատտիային, բայց Մանտից հետո ավելի սիրեցի: Չէ՞ որ Մատտիան հրաժարվեց խաղաղ, ապահով կյանքից, կրթություն ստանալու հնարավորությունից, ապագա հաջողություններից՝ ինձ հետ բաժանելու պատահականություններով ու վտանգներով լի մի կյանք՝ չիմանալով, թե ինչ է սպասում իրեն ոչ միայն ապագայում, այլև այսօր:

Ես չէի կարող Էսպինասսուի ներկայությամբ Մատտիային ասել, թե որքան հուզեց ինձ նրա բառերը ինձնից չբաժանվելու մասին: Եվ երբ մենք դուրս եկանք, ես բռնեցի Մատտիայի ձեռքը և ամուր սեղմեցի:

— Գիտես, հիմա մենք ցմահ ընկերներ ենք:

Մատտիան, իր մեծ աչքերն ինձ հառած, ժպտաց:

— Ես միշտ վստահ էի դրանում:

Մատտիան, որն առաջ այնքան վատ էր գլուխ հանում ընթերցանությունից, այն օրվանից, ինչ սկսեց կարդալ Կունի «Երաժշտության տեսությունը», զարմանալի առաջադիմություն ցուցաբերեց:

Դժբախտաբար, նա չէր կարող ուսմանն այնքան ժամանակ հատկացնել, որքան ցանկանում էր. մենք ստիպված էինք գիշեր–ցերեկ ճանապարհ գնալ:

թվայնացրել է 1915.info կայքը

Վերջապես հասանք հանքային ջրերի առողջարաններին, որոնք մեր ճամփորդության նպատակակետն էին: Իսկապես, արջ վարժեցնողի խորհուրդը ճիշտ դուրս եկավ, և շատ շուտով մենք հավաքեցինք վաթսունութ ֆրանկ: Վաթսունութ ֆրանկը մեզ մոտ եղած հարյուր քառասունվեց ֆրանկի հետ կազմում էր երկու հարյուր տասնչորս ֆրանկ: Հիմա կարող էինք գնալ Շավանոն: Մենք որոշեցինք անցնել Յուսելով, որտեղ եղջերավոր անասունների մեծ վաճառք պետք է լիներ, որտեղից կարող էինք կով գնել:

Մինչև այժմ այդ կովը գոյություն ուներ միայն մեր երևակայության մեջ, և, իմիջիայլոց, մեզնից ամեն մեկը յուրովի էր պատկերացնում նրան: Մատտիան ցանկանում էր գնել սպիտակ կով, իսկ ես երազում էի շիկավունի մասին՝ ի հիշատակ մեր խեղճ Շեկոյի: Կովը պետք է լիներ բարի, խելոք և շատ կաթ տար: Երազանքների մեջ այդ բոլորը հրաշալի էին:

Բայց ինչպե՞ս այդ երազն իրականություն դարձնենք: Լավ կով ընտրելը հեշտ գործ չէ: Ինչի՞ց պետք է իմանանք կովի լավ կամ վատ լինելը. մենք չգիտեինք: Բացի այդ՝ պանդոկներում զանազան սարսափելի պատմություններ էինք լսել: Մի գյուղացի տոնավաճառի ժամանակ գնել էր կով, որը հիանալի պոչ ուներ և այնքան երկար, որ կարող էր քշել նույնիսկ քթի ծայրին նստած ճանճերը: Հետևյալ առավոտ պարզվել էր, որ կովի պոչը կեղծ է: Մի ուրիշ մարդ գնել էր կեղծ եղջյուրներով կով, երրորդը, երբ ցանկացել էր կթել, տեսել էր, որ ստինքների մեջ օդ է լցրած, և որ օրական երկու բաժակից ավել կաթ չի տալիս:

Որքա՜ն սարսափելի կլիներ, եթե մենք Բարբերեն մայրիկին նվիրեինք մի կով, որը եղջյուրներ չունի կամ բոլորովին կաթ չի տալիս: Բայց մենք լսեցինք մի պատմություն, թե ինչպես մի անասնաբույծ մերկացրել է վաճառողի խարդախությունը: Այդ լսելով՝ մենք որոշեցինք կով գնելու համար հրավիրել անասնաբույծի: Դա մի նոր ծախս էր մեզ համար, բայց չէ՞ որ նա կօգներ մեզ: Այդ որոշումն ընդունելով՝ մենք ուրախ ճանապարհ ընկանք և երկու օր հետո՝ վաղ առավոտյան, հասանք Յուսել:

Այստեղ արդեն ես ինձ զգում էի, ինչպես տանը: Յուսելում առաջին անգամ էի ելույթ ունեցել հանդիսատեսների առաջ «Գեներալ Հոգյակի ծառան» պիեսում, և այստեղ՝ Յուսելում, գնեց Վիտալիսը իմ առաջին կաշվե կոշիկները, որոնք այնքա՜ն մեծ ուրախություն պատճառեցին ինձ: Մեր տոպրակներն ու նվագարանները թողնելով այն պանդոկում, որտեղ երբեմն իջևանել էինք ես ու Վիտալիսը, Մատտիայի հետ գնացինք անասնաբույծ

թվայնացրել է 1915.info կայքը

փնտրելու, որին շուտով գտանք: Մեր խնդիրքը լսելով՝ անասնաբույծը ծիծաղեց:

— Մեր վայրերում վարժեցված կովեր չկան:

— Մեզ բոլորովին էլ հարկավոր չէ, որ կովը վարժեցրած լինի:

— Մեզ պետք է լավ կաթնատու կով, և որն իսկական պոչ ունենա,— ավելացրեց Մատտիան, որովհետև նրան շատ էր անհանգստացնում կեղծ պոչի հարցը:

— Պարո՛ն անասնաբույծ, մենք որոշեցինք խնդրել, որ մեզ օգնեք, որովհետև վախենում ենք, որ շահամոլ վաճառականները մեզ խաբեն:

— Իսկ կովը ձեր ինչի՞ն է պետք,— հետաքրքրվեց անասնաբույծը:

Մի քանի բառով պատմեցի, թե ում համար եմ գնում կովը:

— Դուք լավ տղաներ եք,— ասաց նա:— Ես ձեզ հետ կգամ տոնավաճառ և կընտրեմ ամենալավ կովը: Կարող եք վստահ լինել, որ նրա պոչը կեղծ չի լինի:

— Ոչ էլ եղջյուրները,— հարցրեց Մատտիան:

— Ոչ էլ եղջյուրները:

— Ոչ էլ փքած ստի՞նք:

— Ո՛չ, նա կլինի մի գեղեցիկ ու լավ կով: Միայն թե այդ կովն առնելու համար փող է պետք:

Ես լուռ բացեցի թաշկինակս, որի մեջ պահում էի մեր գանձը:

— Հիանալի է, առավոտյան՝ ժամը յոթին, եկեք ինձ մոտ:

— Իսկ մենք որքա՞ն պետք է վճարենք Ձեզ, պարո՛ն անասնաբույծ:

— Ոչի՛նչ: Մի՞թե ես ձեզ նման տղաներից փող կվերցնեմ:

Խաղաղ, փոքրիկ Յուսել քաղաքը հետևյալ առավոտյան աղմկոտ էր և մարդկանցով լի: Դեռ մինչև արևածագը մենք լսեցինք սալահատակով անցնող սայլերի անդադար դղրդոց, ձիերի խրխինջ, կովերի բառաչ, ոչխարների մայուն և տոնավաճառ եկած գյուղացիների գոչյունները:

Երբ մենք ցած իջանք, մեր պանդոկի բակը լցված էր սայլերով: Ժամանում էին նորանոր սայլեր, որոնց միջից դուրս էին գալիս տոնական զգեստներ հագած գյուղացիները:

Ուղիղ ժամը յոթին մենք անասնաբույծի մոտ էինք: Նա արդեն սպասում էր մեզ: Մենք միասին գնացինք տոնավաճառ՝ մի անգամ էլ բացատրելով, թե ինչպիսի կով ենք ցանկանում: Երկու բառով դա կարելի էր շարադրել այսպես. կովը պետք է շատ կաթ տա և քիչ ուտի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ա՛յ, սա շատ լավն է,— հայտարարեց Մատտիան՝ մատնացույց անելով սպիտակ մի կով:

— Կարծում եմ, որ մյուսն ավելի լավն է,— առարկեցի ես՝ մատնացույց անելով շեկլիկ մի կով:

Անասնաբույծը հաշտեցրեց մեզ. նա կանգ չառավ ո՛չ մեկի, ո՛չ մյուսի մոտ, այլ մոտեցավ երրորդին: Դա ոչ մեծ, շիկամազ կով էր՝ շագանակագույն ականջներով, սև շրջագծերով երիզված աչքերով, իսկ դնչին էլ սպիտակ նշան ուներ:

— Ահա այս կովը ձեր ուզած կովն է,— հայտարարեց անասնաբույծը:

Մի վտիտ գյուղացի բռնել էր կովի պարանը: Անասնաբույծը հարցրեց, թե որքան է գնահատում կովը:

— Երեք հարյուր ֆրանկ:

Մեզ իսկույն դուր եկավ այդ ոչ մեծ կովը, որը չարաճճի դնչիկ ուներ, բայց լսելով «երեք հարյուր ֆրանկ» բառերը՝ ձեռքերս թուլացան. այդքան փող մենք չունեինք: Անասնաբույծին հասկացրի, որ պետք է ավելի էժանը փնտրել: Նա չհամաձայնվեց: Նրա և գյուղացու միջև բանավեճ սկսվեց: Անասնաբույծը առաջարկեց հարյուր հիսուն ֆրանկ, գյուղացին միայն տասը ֆրանկ էր իջեցնում: Անասնաբույծը գինը իջեցրեց հարյուր յոթանասուն ֆրանկի, գյուղացին իջավ երկու հարյուր ութսուն ֆրանկի: Վերջապես, հետզհետե գինն իջեցնելով՝ նա հասավ երկու հարյուր տասը ֆրանկի և դրա վրա կանգ առավ: Այդ ժամանակ Մատտիան, մոտենալով կովին, պոչից մազերի մի խուրձ պոկեց, որի համար կովը նրան աքացի տվեց:

— Լա՛վ, ես համաձայն եմ երկու հարյուր տասը ֆրանկ տալ,— ասացի ես և արդեն ուզում էի բռնել պարանը, բայց գյուղացին չտվեց:

— Իսկ կնոջս ընծայի համա՞ր…

Մենք կրկին սկսեցինք սակարկել և ի վերջո կանգ առանք քսան սուի վրա: Հիմա մեզ մնում էր ընդամենը երեք ֆրանկ:

Ես կրկին ձեռքս մեկնեցի, գյուղացին ձեռքս բռնեց և ամուր, բարեկամաբար սեղմեց:

Հասկանալի է, որ եթե ես նրա բարեկամն եմ, ապա չեմ մոռանա քաղցրավենիք գնելու համար աղջկան մի քանի սու տալ: Դա ինձ արժեցավ տասը սու:

Ես երրորդ անգամ բռնեցի պարանը, բայց գյուղացին կրկին կանգնեցրեց ինձ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ դուք ձեզ հետ պարան վերցրե՞լ եք,— հարցրեց նա։— Ես կովը վաճառում եմ առանց պարանի։

Հանուն բարեկամության՝ նա համաձայնվեց երեսուն սուով զիջել իր պարանը։ Առանց պարանի անհնարին էր կովը տանել, և ես բաժանվեցի երեսուն սուից՝ հաշվելով, որ մեզ մնում է դեռ քսան սու։

Գրպանիցս հանեցի երկու հարյուր տասներեք ֆրանկ և չորրորդ անգամ ձեռքս մեկնեցի դեպի կովը։

Վերջապես կովը պարանի հետ միասին հանձնվեց մեզ։ Բայց մենք հիմա համարյա ոչինչ չունեինք, որ կերակրեինք կովը, ինչպես և մեզ։

— Մի՛ անհանգստանա,— ասաց Մատտիան,— պանդոկները լեփ-լեցուն են։

Եթե մենք առանձին-առանձին շրջենք բոլոր պանդոկները, երեկոյան դեմ շատ փող կունենանք։

Կովը տարանք պանդոկ և գոմում ամուր կապելով՝ գնացինք մեր գործին։

Երեկոյան պարզվեց, որ Մատտիան վաստակել է չորս ֆրանկ հիսուն սանտիմ, իսկ ես՝ երեք ֆրանկ։ Գրպանում յոթ ֆրանկ և հիսուն սանտիմ ունենալով՝ մենք մեզ հարուստ էինք զգում։

Աղախնուն խնդրեցինք, որ մեր կովը կթի, և ընթրելու փոխարեն կաթ խմեցինք։ Երբեք մեր կյանքում այդպիսի համեղ կաթ չէինք խմել։ Մատտիան հայտարարեց, որ կաթը քաղցր է և նարնջի բուրմունք ունի, ինչպես այն կաթը, որն ինքը խմում էր հիվանդանոցում, բայց շատ ավելի համեղ է։ Մենք հիացած էինք և գնացինք՝ համբուրելու մեր կովի սև դունչը։ Ի պատասխան՝ նա իր կոշտ լեզվով լիզեց մեր դեմքը։

Հետևյալ օրը՝ առավոտյան, մենք արթնացանք արևածագին և ճամփա ընկանք Շավանոն։ Հիմա արդեն ամեն րոպե քարտեզին չէի նայում։ Ես գիտեի, թե ուր պետք է գնանք, չնայած շատ տարիներ էին անցել այն օրից, երբ Վիտալիսի հետ եղել էի այդտեղ։

Վախենալով հոգնեցնել կովին և չցանկանալով Շավանոն հայտնվել ուշ ժամի՝ որոշեցի գիշերել այն գյուղում, որտեղ անց էի կացրել տիրոջս հետ առաջին գիշերը։ Հետևյալ առավոտ մենք ճանապարհ ընկանք, որպեսզի հնարավորինս շուտ հասնեինք Բարբերեն մայրիկի մոտ։

Մինչ այդ ամեն ինչ լավ էր ընթանում, և բախտը ժպտում էր մեզ, բայց ճանապարհին պատահեց բոլորովին աննպաստելի մի բան։

Մենք որոշեցինք քիչ հանգստանալ, որպեսզի նախաճաշենք, և որ կարևորն է՝ արածեցնենք կովը։ Ժամը տասին մոտ մենք հանդիպեցինք կանաչ թարմ խոտով ծածկված մի մարգագետնի, մենք ցած դրեցինք մեր

թվայնացրել է 1915.info կայքը

տոպրակները, իսկ կովն առվի ափին սկսեց արածել: Սկզբում ձեռքիցս բաց չէի թողնում կովի պարանը, բայց կովն այնքան հանգիստ ու խաղաղ էր արածում, որ շուտով պարանը փաթաթեցի նրա պոզերին և, մի կտոր հաց ձեռքիս, նստեցի նրա կողքին: Հասկանալի է, որ մենք մեր նախաճաշը շատ ավելի շուտ ավարտեցինք, քան կովը: Մենք երկար հիանում էինք մեր կովով և, չիմանալով, թե ինչով զբաղվենք, սկսեցինք գնդակ խաղալ: Մենք շատ էինք սիրում զանազան մանկական խաղեր, և օր չէր լինում, որ գնդակ կամ աթուրմա չխաղայինք: Հաճախ Մատտիան աննպաստելիորեն ասում էր ինձ. «Արի՛ խաղանք»: Մենք արագորեն ցած էինք գցում տոպրակներն ու գործիքները և հենց ճանապարհին սկսում էինք խաղալ: Եթե ժամացույց չունենայի, մենք հաճախ կխաղայինք մինչև ուշ գիշեր: Բայց ժամացույցը միշտ հիշեցնում էր ինձ այն մասին, որ պետք է աշխատենք, ապրուստի փող վաստակենք, և կրկին ուսիս էի գցում տավիղի մաշված փոկն ու ասում. «Առա՜ջ»: Երբ մենք խաղն ավարտեցինք, կովը դեռ արածում էր, և տեսնելով, որ մենք մոտենում ենք՝ սկսեց ագահորեն խոտը պոկոտել՝ կարծես ցանկանալով ցույց տալ, որ ինքը դեռ սոված է:

— Մի քիչ սպասենք,— ասաց Մատտիան:

— Միթե դու չգիտես, որ կովն օրն ի բուն կարող է ուտել:

— Այդ դեպքում ես նրա համար կոռնետ կնվագեմ,— առաջարկեց Մատտիան, որն անգործ նստել չէր կարողանում:— Մեզ մոտ՝ Գասոյի կրկեսում, մի կով կար. երաժշտություն շատ էր սիրում:

Եվ Մատտիան տուշ նվագեց: Երաժշտության առաջին հնչյունները լսելով՝ կովը գլուխը բարձրացրեց, իսկ հետո՝ մինչև ես կբռնեի պարանը, գլխապատառ առաջ սլացավ:

Մենք նետվեցինք նրա հետևից:

Ես ձայն տվեցի, որ Կապին կանգնեցնի կովին: Այդտեղ մի հովվի շուն կար, որը կցատկոտեր կովի քթի տակ, եթե Կապին չբռներ նրա ոտքերը: Պարզ է, որ դա կովին չստիպեց կանգ առնել, ընդհակառակը, կովն ավելի արագ սլացավ: Մենք վազում էինք նրա հետևից: Վազելիս գոռում էի Մատտիայի վրա. «Դու հիմա՛ր ես», իսկ նա առանց կանգ առնելու պատասխանում էր. «Կարող ես վզակոթիս տալ, ես արժանի եմ»:

Մեր հանգստանալու տեղից մինչև մոտակա գյուղ երկու կիլոմետր էր, ուստի մեր կովը մեզնից շուտ հասավ գյուղ: Մենք հեռվից տեսանք, որ մարդիկ կտրեցին նրա ճանապարհն ու բռնեցին նրան: Այդ ժամանակ մենք մի քիչ դանդաղեցրինք մեր վազքը. կովը չի կորչի, նրան կանգնեցրին, և երբ

թվայնացրել է 1915.info կայքը

մենք տեղ հասնենք, կվերադարձնեն: Քանի մենք մոտենում էինք, կովի շուրջը եղած բազմությունը աճում էր, և երբ մենք տեղ հասանք, մոտ քսան մարդ կար հավաքված՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ, որոնք, մեզ նայելով, կարծես վիճում էին:

Ես կարծում էի, որ բավական է միայն ասել, որ ես կովի տերն եմ, և կովը ինձ կտան: Բայց դրա փոխարեն գյուղացիները շրջապատեցին մեզ և սկսեցին իրար հետևից հարցեր տալ, թե որտեղից ենք գալիս, որտեղից է այդ կովը: Բայց մեր անկեղծ պատասխանները նրանց չհամոզեցին, և ոմանք սկսեցին ասել, որ կովը, անկասկած, գողացված է, և որ մինչև գործը պարզելը պետք է մեզ բանտ տանել:

Վախից, որն ինձ ներշնչում էր բանտ բառը, գունատվեցի, սկսեցի կակազել, և քանի որ վազելուց շնչակտուր էի լինում, ապա մեզ արդարացնելու համար ոչ մի բան չկարողացանք ասել: Այդ ժամանակ հայտնվեց ոստիկանը: Մի քանի բառով նրան պատմեցին, թե ինչ է պատահել: Մեր բացատրությունները նրան կասկածելի թվացին, և նա հայտարարեց, որ կովը կվերցնի, իսկ մեզ բանտ կտանի:

Ես ցանկանում էի առարկել. Մատտիան նույնպես ուզում էր ինչ–որ բան ասել, բայց ոստիկանը կոպտությամբ ընդհատեց մեր խոսքը: Այդ ժամանակ հիշելով Վիտալիսի և Տուլուզայի ոստիկանի ընդհարումը՝ կարգադրեցի, որ Մատտիան լռի:

թվայնացրել է 1915.info կայքը

Ամբողջ գյուղը եկավ մեր հետևից մինչև այնտեղ, ուր բանտն էր: Չորս կողմից շրջապատել էին մեզ, հրում էին, հայհոյում, և հավանաբար եթե չլիներ մեզ հսկող ոստիկանը, կքարկոծեին՝ որպես գողերի ու հանցագործների:

Բանտապահը տարավ մեզ մի դռան մոտ, որի վրա կային մեծ կողպեք և երկու երկաթյա սողնակ, ու դուռը բացեց: Հետո մեզ խուզարկեցին, վերցրին փողը, դանակները, լուցկին, որից հետո սարսափելի ճռռոցով դուռը մեր հետևից փակվեց:

Մենք բանտում էինք: Արդյոք երկա՞ր ժամանակով, հայտնի չէր:

Երբ ես մտովի ինձ այդ հարցը տվեցի, Մատտիան մոտեցավ և գլուխը խոնարհելով՝ ասաց.

— Խփի՛ր ինձ, խփի՛ր գլխիս, ուժե՛ղ, ուժե՛ղ, իմ հիմա՛ր գլխին, տեղն է:

— Դու հիմարություն արեցիր, իսկ ես չկանխեցի, հետևաբար ես էլ եմ հիմար:

— Ես ուզում եմ, որ դու ինձ ծեծես, որ սիրտս մի քիչ թեթևանա: Խե՛ղճ կով: Խե՛ղճ կով:



թվայնացրել է 1915.info կայքը

Եվ նա լաց եղավ:

Ստիպված էի մխիթարել նրան: Բացատրում էի, որ մեր վիճակն այդքան էլ վատ չէ: Մենք կարող ենք ապացուցել, որ կովը ոչ թե գողացել ենք, այլ գնել: Մենք վկա ունենք. Յուսելի անասնաբույծը:

— Իսկ եթե մեզ մեղադրեն, որ կովը գնել ենք գողացված փողով, ինչպե՞ս կապացուցենք, որ փողը մեր վաստակածն է:

Մատտիան իրավացի էր:

— Հետո,— ասում էր Մատտիան՝ շարունակելով լացը,— եթե մենք նույնիսկ դուրս գանք այս բանտից, և կովը վերադարձնեն մեզ, կարո՞ղ ենք վստահ լինել, որ կգտնենք Բարբերեն մայրիկին:

— Իսկ ինչո՞ւ չպետք է գտնենք:

— Այն ժամանակից, ինչ նրանից բաժանվել ես, նա կարող է մեռած լինել:

Այդ ենթադրությունը մինչև սրտիս խորքը ցնցեց ինձ: Եվ իսկապես, Բարբերեն մայրիկը կարող էր մեռած լինել: Չնայած ես այն հասակում էի, երբ դժվարությամբ ես հավատում մահին, բայց իմ փորձից արդեն գիտեի, որ կարելի է կորցնել սիրած մարդուն: Մի՞թե չկորցրի Վիտալիսին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչո՞ւ դու առաջ չէիր ասում այդ մասին,— հարցրի ես:

— Որովհետև, երբ ես երջանիկ եմ, իմ հիմար գլխում միայն ուրախ մտքեր են լինում, իսկ երբ դժբախտ եմ՝ միայն տխուր մտքեր: Բայց քանի որ շատ երջանիկ էի, որ մենք Բարբերեն մայրիկին կով ենք նվիրելու, այլևս ոչ մի բանի մասին չէի մտածում:

— Ես էլ եմ քեզ նման հիմար, սիրելի՛ Մատտիա: Ես էլ էի ուրախությունից գլուխս կորցրել:

— Ա՛խ, մեր կովը,— լաց լինելով բացականչում էր Մատտիան:— Մեր խեղճ կովը:

Հետո նա վեր թռավ և ձեռքերն ուժեղ թափահարելով՝ շարունակեց.

— Իսկ եթե Բարբերեն մայրիկը մեռե՞լ է, իսկ զզվելի, չար Բարբերենը կենդանի՞ է: Եթե նա վերցնի մեր կովը և քեզ էլ տանի:

Անկասկած, մեզ այդպիսի տխուր մտքեր ներշնչեցին բազմության գոռոցներն ու սպառնալիքները, ոստիկանն ու բանտը: Բայց Մատտիային վշտացրել էր ոչ միայն մեր դրությունը, նրան անհանգստացնում էր նաև մեր կովի վիճակը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ո՞վ կկերակրի նրան, ո՛վ կկթի:

Մի քանի ժամ անցավ այդ տխուր մտածմունքների մեջ, և մենք ավելի ու ավելի էինք հուսահատվում:

Ես ամեն կերպ փորձում էի մխիթարել Մատտիային՝ ասելով, որ մեզ անպայման կհարցաքննեն, և հայտնի չէ, թե գործս ինչ ընթացք կստանա:

— Դեի լավ, իսկ ինչ պետք է ասենք մենք հարցաքննությանը:

— Ճշմարտությունը:

— Այդ դեպքում քեզ կրկին կվերադարձնեն Բարբերենին կամ էլ կհարցաքննեն Բարբերեն մայրիկին, որպեսզի ստուգեն, թե դու չես խաբում արդյոք... Իսկ այդ դեպքում աննկնկալը կխափանվի:

Դուռը դղրդյունով բացվեց, և մենք տեսանք տարիքն առած սպիտակահեր մի պարոնի: Նրա ազնիվ ու բարի դեմքն իսկույն հանգստացրեց մեզ:

— Վեր կացեք, սրիկաներ, և պատասխանեք պարոն դատավորին,— դիմեց մեզ բանտապահը:

— Դե, լավ, լավ,— ընդհատեց նրան դատավորը,— ես հիմա կհարցաքննեմ այ սրան,— և նա մատնացույց արեց ինձ:— Իսկ Դուք մյուսին դուրս տարեք, նրա հետ ես հետո կխոսեմ:

Մատտիան դուրս եկավ:

— Ձեզ մեղադրում են, որ դուք կով եք գողացել,— ուղիղ աչքերիս մեջ նայելով՝ հայտարարեց դատավորը:

Ես պատասխանեցի, որ այդ կովը մենք գնել ենք Յուսելում տոնավաճառի ժամանակ, և տվեցի անասնաբույծի ազգանունը, որը ներկա էր գնմանը:

— Դա կստուգենք:

— Շատ լավ: Այդ դեպքում Դուք կհամոզվեք, որ մենք գող չենք:

— Իսկ ինչո՞ւ էիք կով գնում:

— Որ տանենք Շավանոն ու նվիրենք իմ ստնտուին՝ ի շնորհակալություն իմ նկատմամբ ունեցած սիրո և հոգատարության:

— Ինչպե՞ս է այդ կնոջ անունը:

— Բարբերեն մայրիկ:

— Նա այն քարտաշի կինը չէ՞, որ մի քանի տարի առաջ հաշմանդամ դարձավ:

— Այո՛, պարո՛ն:

— Լա՛վ, ես կստուգեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրա այդ բառերը այնպիսի ուրախությամբ չընդունեցի, ինչպես Յուսելի անասնաբույծի մասին ասածը:

Տեսնելով, որ շփոթված եմ, դատավորը սկսեց հարցուփորձ անել. նրան բացատրեցի, որ եթե նա հարցաքննի Բարբերենն մայրիկին, ապա մեր հաճելի անակնկալը կխափանվի, և դա ինձ շատ է վշտացնում: Մյուս կողմից՝ շատ ուրախ էի, եթե դատավորը պատրաստվում է հարցաքննելու Բարբերեն մայրիկին, ուրեմն վերջինս կենդանի է: Հետո դատավորն ինձ մի կարևոր նորություն էլ հաղորդեց, որ ինքը՝ Բարբերենը, բավական ժամանակ է, ինչ Փարիզում է: Դա ինձ վերջնականապես հանգստացրեց, և կարողացա համոզել դատավորին, որ սահմանափակվի միայն անասնաբույծի ցուցմունքներով:

— Իսկ փողը որտեղի՞ց էր, երբ կով էիք գնում:

Նա տվեց հենց այն հարցը, որից վախենում էր Մատտիան:

— Մենք այդ փողը վաստակել ենք:

— Ինչպե՞ս և որտե՞ղ:

Այդ ժամանակ պատմեցի, թե ինչպես մենք Փարիզից եկանք Վարս, Վարսից՝ Յուսել, և թե ինչպես ճանապարհին նվագելով՝ փող էինք հավաքում:

— Իսկ ի՞նչ էիք անում Վարսում:

Այդ հարցը ստիպեց ինձ սկսել մի նոր պատմություն: Երբ հաշտարար դատավորը լսեց, որ ես կենդանի թաղված եմ եղել հանքերում, նա խոսքս ընդհատեց և մեղմորեն, համարյա բարեկամաբար հարցրեց.

— Իսկ ձեզնից ո՞վ է Ռեմին:

— Ես, պարո՛ն դատավոր:

— Այդ ինչպե՞ս կապացուցես: Ոստիկանն ասում է, որ դու անձնագիր չունես:

— Դա ճիշտ է, պարո՛ն դատավոր:

— Լա՛վ: Պատմի՛ր, թե Վարսում ինչպես տեղի ունեցավ աղետը: Ես այդ մասին կարդացել եմ թերթերում, և դու ինձ չես խաբի: Սկսի՛ր, ես լսում եմ:

Այն հանգամանքը, որ նա սկսեց «դու»–ով դիմել, սիրտ տվեց ինձ: Ես տեսա, որ նա բարյացակամորեն է տրամադրված:

Երբ ավարտեցի իմ պատմությունը, դատավորը երկար ժամանակ նայում էր ինձ բարի և հուզված աչքերով: Ես արդեն կարծում էի, որ նա անմիջապես կազատի մեզ, բայց այդպես չեղավ: Նա, ինձ ոչ մի բառ չասելով, հեռացավ: Հավանաբար գնաց հարցաքննելու Մատտիային, որ իմանա, թե մեր ցուցմունքները համընկնո՞ւմ են արդյոք:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես բավական ժամանակ մնացի մենակ իմ մտորումների հետ: Վերջապես դատավորը Մատտիայի հետ վերադարձավ:

— Ես հարցում կանեմ Յուսել և եթե, ինչպես ես հույս ունեմ, ձեր ցուցմունքները հաստատվեն, դուք վաղն առավոտյան կազատվեք:

— Իսկ մեր կո՞վը,— հարցրեց Մատտիան:

— Կովը կվերադարձնեն:

— Ես այդ մասին չէի հարցնում,— պատասխանեց Մատտիան:— Նրան ո՛վ կկերակրի ու կկթի:

— Մի՛ անհանգստացեք, տղա՛ս:

Մատտիան լիովին հանգստացավ:

— Երբ կովը կթեն, չի՞ կարելի արդյոք, որ մեզ մի քիչ կաթ տային,— հարցրեց նա:— Մենք լավ կընթրեինք:

Դատավորի գնալուց հետո ես Մատտիային երկու կարևոր նորություն հաղորդեցի, որոնք ստիպեցին մոռանալ, որ ես բանտում եմ. Բարբերեն մայրիկը կենդանի է, իսկ Բարբերենը Փարիզում է:

— Մեր կովը հանդիսավորությամբ կմտնի Շավանոն,— բացականչեց Մատտիան:

Ուրախությունից նա սկսեց պարել ու երգել: Նրա ուրախությամբ հափշտակված՝ բռնեցի նրա ձեռքերը, իսկ Կապին կանգնեց հետևի թաթերին և սկսեց թռչկոտել մեր շուրջը: Մենք այնպիսի աղմուկ բարձրացրինք, որ վախեցրինք բանտապահին, որը եկավ տեսնելու, թե արդյոք խռովություն չե՞նք բարձրացրել:

Նա կարգադրեց, որ լռենք: Բայց արդեն խոսում էր մեզ հետ ոչ այնքան կոպիտ, որքան առաջ: Մենք որոշեցինք, որ մեր վիճակը այնքան էլ վատ չէ, և շուտով համոզվեցինք դրանում: Քիչ հետո պահակը վերադարձավ և մի պուլիկով կաթ բերեց:

Մեր կովի կաթն էր: Բայց դա բոլորը չէր. կաթի հետ նա բերեց մի մեծ կտոր սպիտակ հաց և հորթի սառը միս, որոնք, ինչպես նա ասաց, ուղարկել էր դատավորը: Հավանաբար երբեք բանտարկյալների հետ այդքան լավ չէին վարվել: Հորթի միսն ուտելով և վրայից կաթ խմելով՝ կարծիքս փոխվեց բանտի մասին: Իսկապես որ բանտում այնքան էլ վատ չէր: Այդպես էր կարծում նաև Մատտիան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Անվճար ուտելիք և օթևան,— ասաց նա ծիծաղելով:— Իսկապես որ մեր բախտը բերեց:

Ես ցանկացա վախեցնել նրան:

— Իսկ եթե անասնաբույծը մեռած լինի, ո՞վ վկայություն կտա:

— Տխուր մտքերը մարդու գլուխն են գալիս միայն այն ժամանակ, երբ մարդը դժբախտ է, իսկ հիմա ես բախտավոր եմ,— հանդարտ պատասխանեց Մատտիան:



թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 9

ԲԱՐԲԵՐԵՆ ՄԱՅՐԻԿԸ

Բանտում մենք վատ չքնեցինք, համենայն դեպս մենք դրանից շատ ավելի անհաճո գիշերներ էինք անցկացրել բաց երկնքի տակ:

— Ես երազում տեսա, թե ինչպես ենք կովը տեղ հասցնում,— ասաց Մատտիան:

— Ես՝ նույնպես:

Առավոտվա ժամը ութին բանտասենյակի դուռը բացվեց: Ներս մտավ դատավորը մեր բարեկամ անասնաբույծի ուղեկցությամբ, որը եկել էր՝ անձամբ համոզվելու, թե արդյոք մեզ ազատել են: Դատավորը չբավարարվեց նախօրեին ուղարկած ճաշով, նա ինձ տվեց մի գեղեցիկ դրոշմաթուղթ:

— Առանց փաստաթղթերի չի կարելի ճամփորդել մեծ ճանապարհներով: Ահա անձնագիր, որ ես ստացա համայնքապետից ձեզ համար: Այսուհետև դա կլինի ձեզ պահպանող փաստաթուղթը: Բարի՛ ճանապարհ, տղաներ:

Նա սեղմեց մեր ձեռքերը, իսկ անասնաբույծը համբուրեց մեզ:

Մենք այս գյուղը մտանք բավականին անմխիթար ու խեղճ վիճակում, բայց դուրս էինք գալիս հաղթականորեն, գլուխներս հպարտությամբ բարձրացրած, և պարանից բռնած՝ տանում էինք մեր կովը: Տների շեմքին կանգնած գյուղացիները քնքուշ հայացքներով ճանապարհ էին դնում մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

Շուտով հասանք այն գյուղը, որտեղ ես մի ժամանակ գիշերել էի Վիտալիսի հետ: Երբ մենք անցնում էինք գյուղական փողոցի այն տան մոտով, որտեղ Ջերբինոն հաց գողացավ, գլխումս մի միտք ծագեց, և ես շտապեցի ասել Մատտիային:

— Հիշո՞ւմ ես, ես քեզ խոստացել եմ Բարբերեն մայրիկի տանը հյուրասիրել յուղաբլիթներով: Բայց յուղաբլիթների համար անհրաժեշտ է ունենալ յուղ, ալյուր և ձու:

— Յուղաբլիթները հավանաբար անչափ համեղ են:

— Անչա՛փ: Ա՛յ, կտեսնես՝ բլիթները ոլորում են ու խրում են բերանը: Բայց հավանաբար Բարբերեն մայրիկը ո՛չ ալյուր ունի, ո՛չ յուղ. չէ՞ որ նա շատ աղքատ կին է: Ի՞նչ ես կարծում, լավ չի՞ լինի, եթե մենք այդ բոլորը տանենք նրա համար:

— Հիանալի միտք է:

— Այդ դեպքում կո՛վը պահիր, բայց տե՛ս, հա՛, բաց չթողնես: Ես գնամ խանութ և ալյուր ու յուղ գնեմ: Ավելի լավ է՝ ձու չվերցնենք: Ճանապարհին կջարդենք: Եթե Բարբերեն մայրիկը ձու չունենա, որևէ մեկից փոխարինաբար կվերցնի:

Ես մտա խանութ, առա, ինչ անհրաժեշտ էր, իսկ հետո մենք կրկին ճանապարհ ընկանք:

Ես չէի ուզում, որ կովը հոգնի, բայց և այնպես ցանկանալով շուտ հասնել տեղ՝ ականջիցս քայլերս արագացնում էի: Մնում էր տասը կիլոմետր, հետո՝ ութ, հետո՝ վեց... Տարօրինակ է. հիմա, երբ գնում էի Բարբերեն մայրիկի մոտ, ճանապարհն ինձ թվում էր ավելի երկար, քան այն օրը, երբ հեռանում էի նրանից: Ես սարսափելի հուզված էի, տենդորեն բորբոքված և րոպեն մեկ նայում էի ժամացույցին:

— Գեղեցիկ վայրեր են, չէ՞,— հարցնում էի Մատտիային:

— Այո՛, ծառերը չեն ծածկում տեսարանը:

— Երբ մենք բլրակից իջնենք դեպի Շավանոն, դու կտեսնես հիանալի ծառեր՝ կաղնիներ ու շագանակենիներ:

— Իսկ այդ ծառերին շագանակ կա՞մ:

— Իհա՛րկե: Իսկ Բարբերեն մայրիկի այգում կա մի ծուռ տանձենի, որի վրա հարմար է նստել: Ծառի վրա մեծ–մեծ տանձեր կան. ահա այսպիսի... և շատ համեղ են: Դե՛հ, ինքդ կտեսնես:

Ինչ էլ նկարագրում էի, ամեն անգամ կրկնում էի՝ «ինքդ կտեսնես»: Ես անկեղծորեն հավատացած էի, որ տանում եմ Մատտիային հրաշքների

թվայնացրել է 1915.info կայքը

աշխարհը: Եվ իսկապես, միթե ինձ համար այդ վայրը հրաշքների վայր չէր: Չէ՞ որ այնտեղ իմ աչքերն առաջին անգամ տեսան լույսը, այնտեղ սկսվեց իմ գիտակցական կյանքը, այնտեղ երջանիկ էի ու սիրված: Ես իսկույն մտաբերեցի իմ մանկության տարիները և ակամայից համեմատեցի դրանք իմ թափառական, ծանր կյանքի, վշտերի ու տանջանքների հետ: Քանի մենք մոտենում էինք գյուղին, ուրախությունն ավելի էր համակում: Հարազատ գյուղի օդն արբեցնում էր ինձ: Ես ամեն բան վարդագույն էի տեսնում: Ամեն բան ինձ հրաշալի էր թվում:

Վերջապես մենք հասանք բլրի գագաթը, որտեղից սկսվում էր վայրէջքը, որտեղ բազմաթիվ արահետներ Բարբերեն մայրիկի տնակի մոտից ձգվում էին դեպի Շավանոն:

Մի քանի քայլ անելով՝ մենք հասանք այնտեղ, ուր Վիտալիսից նստելու թույլտվություն էի խնդրել, որ վերջին անգամ նայեմ Բարբերեն մայրիկի տնակին:

— Վերցրո՛ւ պարանը,— ասացի Մատտիային:

Մի ոստյունով հայտնվեցի հողաթմբին: Մեր հովտում ոչ մի բան չէր փոխվել. ամեն ինչ առաջվա պես էր: Երկու ծառախմբերի միջև նշմարեցի Բարբերեն մայրիկի տան տանիքը: Ծխնելույզից ուղիղ դեպի երկինք էր բարձրանում դեղին ծուխը:

— Բարբերեն մայրիկը տանն է,— բացականչեցի ես:

Թեթև քամին անցավ ծառերի վրայով, և ծխի քուլաները փչեցին ուղիղ դեմքիս: Այդ ծուխը կաղնու տերևների հոտ ուներ: Աչքերս արցունքով լցվեցին, և հողաթմբից ցած թռչելով՝ գրկեցի Մատտիային: Կապին թռավ վրաս, ես նրան էլ գրկեցի ու համբուրեցի: Իսկ Մատտիան սկսեց համբուրել կովի դունչը:

— Շո՛ւտ, իջնենք ցած,— ասացի ես:

— Եթե Բարբերեն մայրիկը տանն է, ապա ինչպե՞ս պիտի անակնկալի բերենք նրան,— հարցրեց Մատտիան:

— Դու ներս կմտնես և կասես, որ նրա համար կով ես բերել, որն ուղարկել է անծանոթ մի մարդ, իսկ երբ նա քեզ հարցնի, թե ով է այդ անծանոթը, կհայտնվեմ ես:

— Շատ ափսոս, որ մենք չենք կարող ներս մտնել հանդիսավոր կերպով՝ երաժշտությամբ: Հիանալի կլիներ:

— Մա՛տտիա, հիմար բաներ մի՛ ասա:

թվայնացրել է 1915.info կայքը



— Մի՛ անհանգստացի, երկրորդ անգամ ես այդպիսի հիմարություն չեմ անի: Բայց եթե այս վայրենի կովը սիրեր երաժշտություն, շեփորի հնչյունները հիմա շատ տեղին կլինեին:

Երբ մենք հայտնվեցինք ճանապարհի պտույտներից մեկում՝ հենց Բարբերեն մայրիկի տան վերևում, բակում տեսանք մի սպիտակ գլխաշոր: Դա Բարբերեն մայրիկի գլխաշորն էր: Նա բացեց դռնակը և ճանապարհով դուրս գալով՝ ուղղվեց դեպի գյուղ: Ես ասացի Մատտիային, որ նա Բարբերեն մայրիկն է:

— Նա գնում է, ինչպե՞ս պիտի անենք մեր հաճելի անակնկալը,— հարցրեց նա:

— Մի ուրիշ բան կմտածենք:

— Ի՞նչ:

— Չգիտեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Չայն տանք նրան:

Գայթակղությունը մեծ էր, բայց ես չհամարձակվեցի: Այնքան ժամանակ ես երազել էի այդ վայրկյանի մասին, որ հիմա դրանից հրաժարվել չէի կարող:

Մենք արագությամբ մոտեցանք իմ հարազատ տան դարպասին, և ես ներս մտա այնպես, ինչպես շատ անգամ ներս էի մտել առաջ: Ծանոթ լինելով Բարբերեն մայրիկի սովորություններին՝ վստահ էի, որ դարպասը միայն սողնակով է փակված, և որ մենք անարգել կերպով կարող ենք տուն մտնել: Բայց նախ և առաջ պետք էր կովը գոմ տանել: Ես մտա գոմը: Այնտեղ ամեն բան նույնն էր մնացել, միայն հիմա գոմում ցախ էին դարսել: Ես կանչեցի Մատտիային, մենք ցախը կիտեցինք մի անկյունում և կովը կապեցինք մուտքից: Այդ բոլորը կատարեցինք շատ արագ, որովհետև Բարբերեն մայրիկի ցախի պաշարը մեծ չէր:

— Հիմա,— դիմեցի ես Մատտիային,— տուն մտնենք: Ես կնստեմ վառարանի մոտ՝ անկյունում: Հենց որ դարպասը ճռռա, դու և Կապին կթաքնվեք մահճակալի հետևում, և նա կտեսնի միայն ինձ: Պատկերացնո՞ւմ ես, թե որքան կուրախանա նա:

Այդպես էլ արեցինք:

Մենք տուն մտանք: Ես նստեցի օջախի մոտ՝ այնտեղ, որտեղ անց էի կացրել ձմեռային շատ երեկոներ, երկար մազերս թաքցրի բաճկոնիս օձիքի տակ և կծկվեցի՝ աշխատելով, որքան հնարավոր է նմանվել նախկին Ռեմիին. Բարբերեն մայրիկի փոքրիկ Ռեմիին: Դռնակը իմ նստած տեղից լավ էր երևում, և կարող էի չվախենալ, որ Բարբերեն մայրիկը անսպասելիորեն կհայտնվի: Ես շուրջս նայեցի: Ինձ թվում էր, որ երեկ եմ միայն գնացել այս տնից: Այստեղ ոչինչ չէր փոխվել. ամեն բան առաջվա տեղում էր: Նույնիսկ թուղթը, որը կպցրել էինք իմ ջարդած ապակու տեղում, նույնն էր, միայն խիստ դեղնել էր ու մրոտվել: Եթե ես կարողանայի շարժվել տեղիցս, հաճույքով կմոտենայի ամեն մի առարկայի ու կզննեի, բայց Բարբերեն մայրիկը րոպե առ րոպե կարող էր վերադառնալ, ուստի պետք էր զգույշ լինել: Հանկարծ տեսա սպիտակ գլխաշորը, և նույն րոպեին դռնակը ճռռաց:

— Թաքնվի՛ր, շո՛ւտ,— շշնջալով ասացի Մատտիային:

Եվ, որքան կարող էի, կծկվեցի:

Դուռը բացվեց: Հենց շեմքի վրա Բարբերեն մայրիկը նկատեց ինձ:

— Ո՞վ է,— հարցրեց նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես նայում էի մայրիկին՝ ոչինչ չպատասխանելով. նա նույնպես լուռ նայում էր ինձ:

Հանկարծ նրա ձեռքերը դողացին:

— Տե՛ր Աստված,— մրմնջաց նա,— տե՛ր Աստված, միթե սա Ռեմին է:

Ես վեր թռա, նետվեցի դեպի նա և ամուր գրկեցի:

— Մայրի՛կ:

— Որդյա՛կ իմ, սա իմ որդին է:

Քիչ ժամանակ չանցավ, մինչև որ հանգստացանք և դադարեցրինք լաց լինելը:

— Եթե ես անդադար չմտածեի քո մասին, ապա ոչ մի դեպքում չէի ճանաչի քեզ. որքա՜ն ես փոխվել, ամրացել, մեծացել:

Մատտիայի ֆսֆսոցը հիշեցրեց ինձ, որ նա նստած է մահճակալի հետևում, և ես ձայն տվեցի նրան: Նա մոտեցավ:

— Իսկ սա իմ եղբայրն է՝ Մատտիան:

— Ուրեմն դու գտե՞լ ես քո ծնողներին,— բացականչեց Բարբերեն մայրիկը:

— Ո՛չ, սա իմ ընկերն ու բարեկամն է, որին ես իմ եղբայրն եմ համարում, իսկ սա Կապին է՝ նույնպես իմ ընկերն ու բարեկամը: Կա՛պի, բարևի՛ր Բարբերեն մայրիկին:

Կապին կանգնեց հետևի թաթերին և թաթիկը կրծքին սեղմելով՝ հանդիսավորությամբ գլուխ տվեց:

Դա շատ զվարճացրեց Բարբերեն մայրիկին և վերջնականապես չորացրեց նրա արցունքները:

Մատտիան, որն այնքան հուզված չէր, որքան ես, նշանով հիշեցրեց ինձ մեր նվերի մասին:

— Գնանք բակը,— դիմեցի ես Բարբերեն մայրիկին:— Ուզում եմ տեսնել ծուռ տանձենին, որի մասին հաճախ եմ պատմել Մատտիային:

— Դու կարող ես քո այգին էլ տեսնել, այնտեղ ամեն ինչ մնացել է այնպես, ինչպես դու թողել էիր: Ես միշտ հավատում էի, որ դու կվերադառնաս:

— Իսկ գետնատանձերս քեզ դո՞ւր եկան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուրեմն դո՛ւ էիր ինձ համար այդպիսի նվեր պատրաստել: Ես այդպես էլ մտածում էի: Դու միշտ սիրում էիր այդպիսի անսակնկալ նվերներ հրամցնել:

Պահը հարմար էր:

— Իսկ գո՞մը,— հարցրի ես:— Շեկոյին վաճառելուց հետո փոխվե՞լ է արդյոք: Խեղճ Շեկոն էլ ինձ նման չէր ցանկանում հեռանալ այստեղից:

— Գոմը նույնն է մնացել: Հիմա այնտեղ ցախ եմ պահում:

Մենք հենց գոմի մոտ էինք, և Բարբերեն մայրիկը դուռը հրեց: Մեր կովը, որոշելով, որ իր համար կեր են բերել, բառաչեց:

— Կո՞վ: Գոմում կո՞վ կա,— բացականչեց Բարբերեն մայրիկը:

Այդ ժամանակ այլևս չկարողանալով դիմանալ՝ ես ու Մատտիան ծիծաղեցինք: Բարբերեն մայրիկը զարմանքով նայում էր մեզ: Բայց գոմում կապված կովն այնպիսի անսպասելիություն էր նրա համար, որ չնայած մեր ծիծաղին՝ նա ոչինչ չհասկացավ:

— Սա նվեր է,— բացականչեցի ես:— Մեր նվերն է քեզ: Կարծում եմ, որ սա գետնատանձից վատ չէ:

— Օ՛հ, ի՜նչ բարի տղա ես դու, թանկագի՛ն զավակս,— բացականչեց Բարբերեն մայրիկը՝ համբուրելով ինձ:

Հետո մենք գոմ մտանք, որպեսզի մայրիկը կարողանա ավելի լավ զննել կովը: Մայրիկն անդադար ուրախ–ուրախ բացականչում էր. «Ինչ հիանալի կով է»:

Հանկարծ նա հարցրեց.

— Ուրեմն դու հարստացե՞լ ես:

— Իհա՛րկե,— ծիծաղելով պատասխանեց Մատտիան:— Մեզ մոտ դեռ մնացել է հիսունութ սու:

Բարբերեն մայրիկը նորից կրկնեց իր բացականչությունը, բայց արդեն այլ ձևով.

— Բարի տղաներ եք դուք:

Իսկ կովը շարունակում էր բառաչել:

— Կովը խնդրում է, որ իրեն կթեն,— ասաց Մատտիան:

Ես իսկույն տուն վազեցի՝ սպիտակ թիթեղյա դույլը բերելու, որը, ինչպես նկատեցի, առաջվա պես կախված էր իր սովորական տեղից: Ճանապարհին դույլը ջրով լցրի, որ լվանամ կովի փոշոտված ստինքը:

Որքան երջանիկ էր Բարբերեն մայրիկը, երբ տեսավ, որ դույլի երեք քառորդը լցվել է հիանալի, փրփրալի կաթով:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես կարծում եմ, որ այս կովն ավելի շատ կաթ կտա, քան Շեկոն,— հայտարարեց նա:

Կովը կթելով՝ մենք նրան տարանք բակը, որ արածի, և տուն վերադարձանք: Սեղանին՝ ամենաաչքի ընկնող տեղում, դրված էին յուղը և ալյուրը: Ես դույլը վերցնելիս հարցրի՝ սեղանի՞ն դնել դրանք:

Երբ Բարբերեն մայրիկն այդ նկատեց, նա կրկին սկսեց հիացած հառաչել, բայց ես խոստովանեցի, որ այդ նոր անակնկալն արված է ոչ այնքան նրա համար, որքան մեզ:

— Մենք սարսափելի սոված ենք և շատ ենք ուզում յուղաբլիթ ուտել: Այս անգամ, կարծում եմ, որ մեզ ոչ ոք չի խանգարի:

— Մի՞թե դու գիտես, որ Բարբերենը Փարիզում է,— հարցրեց մայրիկը:

— Այո՛:

— Այն էլ գիտե՞ս, թե ինչու է Փարիզ գնացել:

— Ո՛չ:

— Քո գործով:

— Ինչ,— հարցրի ես վախեցած:

Բայց պատասխանի փոխարեն Բարբերեն մայրիկն այնպես նայեց Մատտիային, կարծես չէր ցանկանում խոսել նրա ներկայությամբ:

— Մատտիան ինձ համար եղբոր պես է, և ես նրանից ոչինչ չեմ թաքցնում,— ասացի ես:

— Դա շատ երկար պատմություն է,— պատասխանեց մայրիկը:

Ես հասկացա, որ նա չի ցանկանում պատմել, և Մատտիային չվշտացնելու համար չպնդեցի:

— Իսկ Բարբերենը մտադի՞ր է շուտ վերադառնալ,— հարցրի ես:

— Կարծում եմ՝ ո՛չ:

— Այդ դեպքում զբաղվենք յուղաբլիթներով: Դու հետո ինձ կպատմես, թե նա ինչու է գնացել: Զու ունե՞ս:

— Ես հավ չեմ պահում:

— Մենք քեզ համար ձու չենք բերել, որովհետև վախենում էինք ջարդել ճանապարհին, բայց գուցե դու որևէ մեկից փո՞խ վերցնես:

Բարբերեն մայրիկը շփոթվեց: Ես հասկացա, որ նա հավանաբար շատ անգամ էր այդ արել և անհարմար էր զգում նորից դիմելու այդ միջոցին:

— Թերևս ավելի լավ կլինի, որ ես գնամ ու ձու առնեմ,— ասացի ես,— իսկ դու մինչ իմ գալը խմորը կանես: Ասա՛ Մատտիային, որ ցախ պատրաստի: Մատտիան շատ լավ գիտի փայտ կոտրել:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ ոչ միայն ձու գնեցի, այլև մի փոքր կտոր ճարպ:

Երբ վերադարձա, խմորը պատրաստ էր, և մնում էր միայն մեջը ձու գցել: Ճիշտ է, խմորը դեռ շատ չէր բարձրացել, բայց մենք չափազանց սոված էինք և սպասել չէինք կարող:

— Դե լավ,— ասաց Բարբերեն մայրիկը՝ ուժեղ հարելով խմորը,— ինչո՞ւ դու ինձ ոչ մի անգամ չգրեցիր: Ախր ես կարծում էի, որ դու մեռել ես: «Չի կարող պատահել,— մտածում էի ես,— որ իմ որդին կենդանի լինի և ինձ չգրի»:

— Ես գիտեի, որ դու կարդալ չգիտես և իմ նամակը կարդալ չես կարող: Բացի այդ՝ մահու չափ վախենում էի Բարբերենից: Մի՞թե նա ինձ քառասուն ֆրանկով չվաճառեց ծեր երաժշտին:

— Մի՛ հիշիր այդ մասին, իմ փոքրի՛կ Ռեմի:

— Ես չեմ գանգատվում, այլ միայն բացատրում եմ քեզ, թե ինչու չէի գրում: Ես վախենում էի, որ եթե Բարբերենն իմանա իմ տեղը, նա ինձ կրկին կցանկանա վաճառել: Դրա համար էլ քեզ ոչինչ չգրեցի, երբ ես կորցրի իմ տիրոջը:

— Ուրեմն նա մեռա՞վ:

— Այո՛, և դա ինձ համար մեծ վիշտ էր: Չէ՞ որ եթե ես հիմա որևէ բան գիտեմ, եթե կարող եմ կերակրել ինքս ինձ, ապա պարտական եմ միայն տիրոջս: Նրա մահից հետո ես կրկին հանդիպեցի բարի մարդկանց, որոնք ապաստան տվեցին ինձ, և աշխատում էի նրանց մոտ: Բայց եթե ես քեզ գրեի, որ աշխատում եմ Փարիզում որպես պարտիզպան, ինձ կսկսեին փնտրել և կամ փող կպահանջեին այդ բարի մարդկանցից, իսկ ես չէի ցանկանում ո՛չ մեկը և ո՛չ մյուսը:

— Այո՛, հասկանում եմ քեզ:

— Բայց ես երբեք չէի մոռանում իմ սիրելի մայրիկին: Իսկ երբեմն ծանր րոպեներին մտքումս միշտ օգնության էի կանչում քեզ: Եվ հենց որ կարողացա, տեսության եկա: Ճիշտ է, ուշ եկա, բայց միշտ չէ, որ վարվում ես այնպես, ինչպես ցանկանում ես: Եվ բացի այդ՝ ես մտադիր էի քեզ համար կով գնել, իսկ դրա համար պետք էր նախ փող վաստակել: Մենք ստիպված եղանք նվագել ամեն տեսակի ուրախ ու տխուր երգեր, ոտքով անցնել կիլոմետրեր, աշխատել ու զրկանքներ կրել, որպեսզի իրագործենք մեր միտքը: Բայց որքան շատ էին դժվարությունները, այնքան ավելի էինք ուրախանում: Ճի՞շտ չէ, Մա՛տտիա:

— Ախ դուք, իմ բարի՛, իմ լա՛վ տղաներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ խոսակցության ընթացքում Բարբերեն մայրիկը հունցում էր յուղաբլիթների խմորը: Մատտիան ցախ էր ջարդում, իսկ ես սեղանն էի սարքում: Հետո վազեցի և մի կուժ սառը ջուր բերեցի:

Երբ վերադարձա, թասը լի էր հիանալի, դեղին խմորով, իսկ Բարբերեն մայրիկը սկսում էր տապակելը: Վառարանում բոցավառվում էր կրակը, և Մատտիան մեկը մյուսի հետևից չոր ցախը գցում էր կրակի մեջ: Կապին, օջախի մոտ նստած, հիացած նայում էր այդ բոլոր նախապատրաստություններին, և քանի որ կրակը երբեմն այրում էր նրան, նա, կամացուկ կլանչելով, բարձրացնում էր մերթ մի թաթը, մերթ մյուս թաթը: Բոցն այնքան ուժեղ էր, որ լուսավորում էր անգամ ամենամութ անկյունները, և տեսնում էի՝ ինչպես էին մահճակալի վարագույրներին խաղում կրակի ցոլքերը, որոնք մանկության օրերին գիշերները վախեցնում էին ինձ:

Բարբերեն մայրիկը տապակը դրեց կրակին և դանակի ծայրով մի կտոր յուղ վերցնելով՝ գցեց նրա մեջ, որտեղ յուղն իսկույն հալվեց:

— Ա՛խ, ինչ անուշ բուրմունք է,— բացականչեց Մատտիան:

Յուղը ճոթճոթաց:

— Երգում է,— բացականչեց Մատտիան,— ես հիմա նրան կնվագակցեմ:

Մատտիան կարծում էր, որ ամեն բան պետք է արվի երաժշտության տակ: Նա վերցրեց ջութակը և սկսեց յուղի ճոթճոթոցին ներդաշնակող մեղմ ակորդներ նվագել, և դա շատ զվարճացրեց Բարբերեն մայրիկին: Բայց րոպեն շատ հանդիսավոր էր, որպեսզի կարելի լիներ տարվել անժամանակ ուրախությամբ:

Բարբերեն մայրիկը վերցրեց մեծ գդալը, խորասուզեց թասի մեջ, խմոր վերցրեց և լցրեց տապակի մեջ:

Ես առաջ թեքվեցի: Բարբերեն մայրիկը թափահարեց տապակը և ձեռքի ճարպիկ շարժումով վեր նետեց յուղաբլիթը, որից Մատտիան սարսափեց: Բայց Մատտիան իզուր էր վախենում: Յուղաբլիթը կրկին փովեց տապակի մեջ, բայց հակառակ կողմով՝ ցույց տալով մեզ իր կարմրած երեսը: Ես հազիվ հասցրի ափսեն դեմ անել, և յուղաբլիթը սահեց նրա մեջ:

Առաջին յուղաբլիթը հասավ Մատտիային: Այրելով մատները, շրթունքները, լեզուն, կոկորդը՝ նա արագությամբ կուլ տվեց այն:

— Որքա՜ն համեղ է,— լիքը բերանով ասաց նա:

Հիմա հերթը իմն էր, և ես էլ Մատտիայի պես չէի մտածում, թե կարող եմ այրվել: Երրորդ յուղաբլիթը պատրաստ էր, և Մատտիան ձեռքը մեկնեց նրան, բայց այս անգամ Կապին կատաղորեն մռնչաց՝ հայտարարելով իր

թվայնացրել է 1915.info կայքը

իրավունքների մասին: Լիովին արդարացի համարելով նրա պահանջը՝ Մատտիան նրան տվեց յուղաբլիթը՝ խիստ զայրույթ պատճառելով Բարբերեն մայրիկին: Նրան հանգստացնելու համար ես բացատրեցի, որ Կապին ուսյալ շուն է, որը մեզ հետ միասին փող է վաստակել կովը գնելու համար: Նա մեր ընկերն է և պետք է ուտի այն, ինչ մենք ենք ուտում: Ի վերջո Բարբերեն մայրիկը հայտարարեց, որ ինքը յուղաբլիթ չի ուտի, մինչև որ մենք չկշտանանք: Բավականին շատ ժամանակ պահանջվեց, որ մենք ի վերջո կշտանանք: Բայց և այնպես այդ վայրկյանը վրա հասավ, և մենք երկուսս էլ միաձայն հայտարարեցինք, որ այլևս ոչ մի յուղաբլիթ չենք ուտի, եթե Բարբերեն մայրիկը գոնե մի քանի հատ չուտի:

Մենք շատ էինք ցանկանում ինքներս թխել յուղաբլիթը: Յուղը դնելն ու խմորը լցնելը դժվար չէր, բայց մեզ ոչ մի կերպ չէր հաջողվում տապակի մեջ վեր նետելով շրջել յուղաբլիթը: Ես բլիթը գցեցի մոխրի մեջ, իսկ Մատտիան տաք յուղաբլիթներով այրեց իր ձեռքը:

Երբ թասը դատարկվեց, Մատտիան, լավ հասկանալով, որ Բարբերեն մայրիկը չի ցանկանում իր ներկայությամբ խոսել գործերի մասին, ցանկություն հայտնեց՝ տեսնելու, թե ինչպես է զգում իրեն կովը, և մեր առարկություններն չլսելով՝ գնաց բակը:

Ես մեծ անհամբերությամբ սպասում էի այդ րոպեին, և հենց որ Մատտիան դուրս գնաց, դիմեցի Բարբերեն մայրիկին:

— Հուսով եմ՝ հիմա կասես, թե ինչու է Բարբերենը Փարիզ գնացել:

— Իհարկե, զավակս, և նույնիսկ մեծ հաճույքով:

Մեծ հաճույքո՞վ: Ես զարմացած էի:

Բայց նախքան շարունակելը Բարբերեն մայրիկը նայեց դռանը: Ապա հանգստանալով՝ մոտեցավ ինձ և ժպտալով ցածրաձայն ասաց.

— Ռեմի, քո ընտանիքը փնտրում է քեզ:

— Իմ ընտանի՞քը:

— Այո՛, քո ընտանիքը:

— Ո՞վ է ինձ փնտրում: Բարբերե՛ն մայրիկ, դե շո՛ւտ ասա, խնդրում եմ: Ո՛չ, դա անհնարին է, Բարբերենն է ինձ փնտրում:

— Այո՛, իհարկե, նա փնտրում է քեզ, որ վերադարձնի քո ընտանիքը:

— Իսկ գուցե և նրա համար, որ կրկին վերցնի ինձ և վաճառի: Բայց դա նրան չի հաջողվի:

— Ռեմի, դու ինչպես կարող ես մտածել, թե ես կհամաձայնվեի մասնակցել այդպիսի գործի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նա քեզ խաբում է:

— Ինձ հանգիստ լսի՛ր և նոր սարսափելի բաներ մի՛ հորինիր:

— Ես հիշում եմ՝ ինչպես…

— Պատմեմ քեզ ամեն բան, ինչ ինքս լսել եմ, և հուսով եմ՝ դու կհավատաս: Հետևյալ երկուշաբթի մի ամիս կլինի, ինչ տեղի ունեցավ այդ դեպքը: Ինչ–որ անծանոթ մի մարդ եկավ մեզ մոտ. այդ ժամանակ տանն էր նաև Բարբերենը: Ես այդ ընթացքում հացատանն էի: «Ձեր ազգանունը Բարբերո՞ն է»,— հարցրեց անծանոթը, որը օտարերկրացու առոգանությամբ էր խոսում: «Այո՛,— պատասխանեց Ժերոմը,— ես եմ Բարբերենը»: «Դո՛ւք էիք Փարիզի փողոցում մի երեխա գտել և խնամել»: «Այո՛»: «Ասե՛ք, խնդրեմ, ո՛ւր է հիմա այդ երեխան»: «Իսկ Ձեր ի՞նչ գործն է»,— հարցրեց Ժերոմը:

Եթե ես նույնիսկ կասկածեի Բարբերեն մայրիկի խոսքերի ճշմարտությանը, ապա Բարբերենի սիրալիր պատասխանը կարող էր համոզել ինձ, որ գործը հենց այդպես էր եղել:

— Չէ՞ որ դու գիտես,— շարունակեց մայրիկը,— որ հացատանը լսվում է ամեն բան, ինչ խոսում են այստեղ: Բացի այդ՝ խոսակցությունը քո մասին էր, և ես ուզում էի լսել: Ես ավելի մոտեցա և պատահաբար ոտքս դրեցի չոր ճյուղին: Ճյուղը խշրտաց: «Մենք մենակ չե՞նք»,— տագնապով հարցրեց եկվորը: «Այդ իմ կինն է»,— պատասխանեց Ժերոմը: «Այստեղ շատ շոգ է,— ասաց անծանոթը:— Դուրս գանք փողոց և այնտեղ խոսենք»: Նրանք գնացին: Երեք, թե չորս ժամ հետո Ժերոմը մենակ տուն վերադարձավ: Ես սաստիկ ուզում էի իմանալ, թե ինչ էր խոսել եկվորը Ժերոմի հետ: Բայց Ժերոմը ոչինչ կարգին չկարողացավ պատմել: Նա ասաց միայն, որ այդ մարդը քո հայրը չէ. քեզ փնտրում է ընտանիքիդ հանձնարարությամբ:

— Բայց ո՛ւր է իմ ընտանիքը: Քանի՞ հոգուց է բաղկացած: Ես հայր ու մայր ունե՞մ:

— Այդ նույն բանը ես հարցրի Ժերոմին: Նա պատասխանեց, որ ոչինչ չգիտի: Հետո ավելացրեց, որ կգնա Փարիզ՝ ձեր երաժշտին փնտրելու այն հասցեով, որը նա թողել էր՝ Փարիզ, Դե–Լուրսին փողոց, Գարաֆոլի: Ես մտքումս պահեցի այդ հասցեն, դու էլ չմոռանաս:

— Մի՛ անհանգստացիր, ես այդ հասցեն գիտեմ:

— Իսկ Փարիզից Բարբերենը ոչինչ չգրե՞ց քեզ:

— Ո՛չ: Հավանաբար նա դեռ զբաղված է որոնումներով:

Այդ ժամանակ Մատտիան անցնում էր դռան մոտով, ես ձայն տվեցի նրան.

թվայնացրել է 1915.info կայքը

— Մա՛մտիա, իմ ծնողները փնտրում են ինձ: Ես ընտանիք ունեմ:

Բայց տարօրինակ բան. Մատտիան բոլորովին չուրախացավ և չհիացավ:

Չնայած դրան՝ ես պատմեցի ամեն բան, ինչ հաղորդել էր ինձ Բարբերեն մայրիկը:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 10

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

Քանի–քանի անգամ թափառումներիս ժամանակ երազում էի այն մասին, թե ինչպես կպառկեմ իմ մանկական մահճակալում և կծկված, վերմակը գլխիս քաշած, քաղցր կքնեմ: Քանի անգամ բաց երկնքի տակ գիշերելով՝ սառած ու թրջված տխրությամբ մտաբերում էի իմ տաք վերմակը:

Երբ պառկեցի, իսկույն քնեցի, որովհետև շատ էի հոգնել բանտում անցկացրած օրվա ու գիշերվա ընթացքում, բայց շատ շուտով արթնացա և այլևս չկարողացա քնել: Ինձ չափազանց հուզել էր այն միտքը, որ ես ընտանիք ունեմ:

Իմ ընտանիքը որոնում է ինձ, բայց հարազատներիս գտնելու համար ես պետք է հանդիպեմ Բարբերենին: Հենց միայն այդ միտքը թունավորում էր ամբողջ երջանկությունս:

Որտեղ էր Բարբերենը: Ստույգ հասցեն մայրիկը չգիտեր: Ենթադրում էր, որ նա կիջևանի Մուֆտար թաղամասում՝ վարձով սենյակներ տվող տանտերերից մեկի մոտ, որոնց ազգանունները Բարբերեն մայրիկին հայտնի էին:

Ուրեմն ես ինքս պետք է գնայի Փարիզ՝ որոնելու նրան, ով փնտրում էր ինձ:

Իհարկե, այն լուրը, որ ես ընտանիք ունեմ, ինձ համար աննպաստելի և մեծ ուրախություն էր, բայց այդ ուրախությունը մթագնում էին հետևյալ հանգա-

թվայնացրել է 1915.info կայքը

մանքները: Ես հույս ունեի հանգստանալ և մի քանի օր անցկացնել Բարբերեն մայրիկի մոտ, Մատտիայի հետ խաղալ իմ բոլոր սիրած խաղերը, բայց ստիպված էի հենց հետևյալ օրը կրկին ճամփա ընկնել:

Բարբերեն մայրիկի մոտ մի քանի օր մնալուց հետո ես պատրաստվում էի գնալու Էտյենետտայի մոտ, հետո գնալ Լիզայի մոտ և նորություններ հաղորդել նրան եղբայրների ու քրոջ մասին: Իսկ հիմա պետք է ամեն ինչից հրաժարվել և շտապել Փարիզ:

Համարյա ամբողջ գիշերը չքնեցի և տատանվում էի. մերթ ինձ թվում էր, որ ես պարտավոր եմ նախ կատարել իմ խոստումը և այցելել Էտյենետտային ու Լիզային, մերթ ընդհակառակը, որ պետք է շուտ գնամ Փարիզ և փնտրեմ իմ ընտանիքը: Այդպես էլ ոչինչ չորոշելով՝ քնեցի և այդ գիշերը, որի մասին այնքան կարոտով երազել էի, իմ հիշողության մեջ մնացած բոլոր գիշերներից ամենածանրն ու անհանգիստը եղավ:

Առավոտյան, երբ Բարբերեն մայրիկը, Մատտիան և ես հավաքվեցինք օջախի մոտ, սկսեցինք քննարկել այդ հարցը: Ես պատմեցի գիշերվա կասկածներիս մասին:

— Պետք է հենց հիմա Փարիզ գնալ,— ասում էր Բարբերեն մայրիկը:— Ծնողներդ քեզ փնտրում են, մի՛ սպասեցրու նրանց:

— Ուրեմն որոշված է. գնում ենք Փարիզ,— համաձայնվեցի ես:

Բայց Մատտիան, թվում էր, թե հավանություն չէր տալիս իմ որոշմանը:

— Դու կարծում ես, որ մենք չպե՞տք է գնանք Փարիզ,— հարցրի ես:— Բացատրի՛ր, թե ինչու:

Նա բացասաբար թափահարեց գլուխը:

— Ես կարծում եմ,— վերջապես պատասխանեց նա,— որ չի կարելի մոռանալ հին բարեկամներին հանուն նորերի: Մինչև այսօր Լիզան, Էտյենետտան, Ալեքսիսը և Բենժամենը եղել են քո քույրերն ու եղբայրները և սիրել են քեզ: Քո նոր ընտանիքին դու դեռ չես ճանաչում, նա քեզ համար ոչինչ չի արել՝ բացի նրանից, որ մի ժամանակ փողոց է նետել քեզ, և դու, հանուն այդ ընտանիքի, իսկույն թողնում ես նրանց, ովքեր քո նկատմամբ բարի են եղել:

— Իզուր ես ասում, թե Ռեմիի ծնողները փողոց են նետել նրան,— ընդհատեց Մատտիային Բարբերեն մայրիկը:— Հնարավոր է, որ նրանցից գողացել են երեխային, և խեղճերը մինչև հիմա ողբում են, փնտրում ու նրան սպասում:

— Ես այդ չգիտեմ: Բայց գիտեմ, որ Պիեր Ակենը վերցրեց մահամերձ Ռեմիին և խնամում էր նրան հարազատ որդու պես, և որ Ալեքսիսը,

թվայնացրել է 1915.info կայքը

Բենժամենը, Էտյենետտան և Լիզան եղբոր պես սիրում էին Ռեմիին: Ինձ թվում է, որ նրանք ավելի շատ իրավունք ունեն Ռեմիի բարեկամը կոչվելու, քան նրանք, ովքեր իրենց կամ ուրիշների մեղքով կորցրել են Ռեմիին: Ակենի ընտանիքի համար Ռեմին հարազատ չէր, և նրանք պարտավոր չէին հոգ տանել նրա մասին:

Մատտիան այդ բառերն այնպես ասաց, կարծես բարկանում էր ինձ վրա: Դա ինձ շատ վշտացրեց:

— Մատտիան իրավացի է: Առանց Էտյենետտային և Լիզային տեսնելու ես չեմ կարող Փարիզ գնալ,— ասացի ես:

— Իսկ ծնողնե՞րդ,— շարունակում էր պնդել Բարբերեն մայրիկը:

— Լավ, Էտյենետտայի մոտ մենք չենք գնա,— որոշեցի ես:— Մեր ճանապարհը շատ կերկարի: Բացի այդ՝ ես կարող եմ նրան նամակ ուղարկել: Բայց Փարիզ գնալու ճանապարհին մենք կմտնենք Դրեզի և կտեսնենք Լիզային: Դա մեզնից շատ ժամանակ չի խլի: Լիզան գրել չգիտի և հիմնականում նրա համար եմ կատարելու այս ճամփորդությունը: Ես կպատմեմ նրան

Ալեքսիի մասին և կխնդրեմ, որ Էտյենետտան նամակ գրի ինձ՝ Դրեզի, և հետո նրա նամակը կկարդամ Լիզայի մոտ:

— Լա՛վ,— ժպտալով համաձայնվեց Մատտիան:

Որոշվեց, որ ճամփա ընկնենք վաղը: Ես համարյա ամբողջ օրը անցկացրի Էտյենետտային նամակ գրելով. բացատրում էի, թե ինչու չեմ կարող նրան տեսության գնալ, ինչպես մտադիր էի սկզբում:

Հետևյալ օրը արդեն ստիպված էի հրաժեշտ տալ Բարբերեն մայրիկին, բայց, իհարկե, այդ բաժանումն այնքան տխրալի չէր, որքան այն ժամանակ,

թվայնացրել է 1915.info կայքը

երբ ինձ տարավ Վիտալիսը: Ես ջերմորեն գրկեցի Բարբերեն մայրիկին և խոստացա շուտով ծնողներիս հետ այցելության գալ նրան:

Եվ ահա տոպրակները մեջքներիս՝ մենք կրկին գնում ենք մեծ ճանապարհներով: Կապին վազում էր առջևից: Մենք գնում ենք մեծ քայլերով, որ շուտ հասնենք Փարիզ:

Մատտիան, որը սկզբում խոնարհությամբ հետևում էր ինձ, ասում է, որ եթե մենք այդքան շտապենք, ապա շուտ ուժասպառ կլինենք: Ես դանդաղեցնում եմ քայլերս, բայց հետո կրկին սկսում եմ արագ քայլել:

— Որքա՜ն ես շտապում,— վշտացած ասում է Մատտիան:

— Ճիշտ է, բայց ինձ թվում է՝ դու էլ պետք է շտապես: Չէ՞ որ իմ ընտանիքը նաև քո ընտանիքն է:

Նա բացասաբար թափահարեց գլուխը:

Այդ տեսնելով՝ ես վշտացա, որովհետև այն օրվանից, երբ պարզվեց, որ ես ընտանիք ունեմ, նկատեցի, որ Մատտիան հաճախ էր այդպես պատասխանում ինձ:

— Մի՞թե մենք եղբայրներ չենք:

— Օ՛, ինչ վերաբերում է մեզ, իհարկե, ես դրանում չեմ կասկածում: Ես քո եղբայրն եմ եղել և կմնամ ընդմիշտ:

— Դե, ուրեմն ամեն բան լավ է:

— Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ ես կդառնամ քո ծնողների զավակը և քո եղբայրների եղբայրը, եթե դու եղբայրներ ունես: Ամենից հավանականն այն է, որ նրանք չեն ցանկանա իրենց ընտանիքում ընդունել ինձ նման փոքրիկ, աղքատ տղայի, և ես ստիպված կլինեմ մենակ շարունակել իմ ուղին: Բայց ես երբեք չեմ մոռանա քեզ, ինչպես և հուսով եմ, որ դու նույնպես չես մոռանա ինձ:

— Իմ թանկագի՛ն Մատտիա, ինչպես կարող ես այդպիսի բաներ ասել:

— Ես ասում եմ այն, ինչ մտածում եմ: Ես չեմ կարող ուրախանալ, քանի որ վախենում եմ, որ մենք ստիպված կլինենք բաժանվել, իսկ ես հույս ունեի ամբողջ կյանքս ապրել քեզ հետ: Ես երազում էի, որ մենք միշտ չենք մնա աղքատ, փողոցային երաժիշտներ, այլ կսկսենք աշխատել, սովորել, կլինենք իսկական արվեստագետ: Ես շատ լավ գիտեմ, որ դու նույնպես ցանկանում ես այդ, բայց չէ՞ որ հիմա դու չես կարող ամեն ինչ անել քո ցանկությամբ:

Այդ ժամանակ ես վերջնականապես հասկացա նրա տխրության պատճառը: Մատտիան վախենում էր բաժանվել ինձնից: Նա ջերմորեն սիրում էր

թվայնացրել է 1915.info կայքը

ինձ, մտածում էր միայն մեր բարեկամության մասին և չէր ցանկանում բաժանվել:

Քանի որ մենք պետք է փող վաստակեինք ապրուստի համար, ապա հաճախ կանգ էինք առնում ճանապարհին հանդիպած մեծ գյուղերում և նվագում էինք: Բացի այդ՝ մենք որոշեցինք Լիզային նվեր տանել: Քաղաքներից մեկում մենք մի հրաշալի տիկնիկ գնեցինք՝ իր ամբողջ օժիտով: Բարեբախտաբար, տիկնիկը շատ ավելի էժան էր, քան կովը:

Շատիլյոնից մենք դուրս եկանք դեպի ջրանցք, որի անտառապատ ափերը, խաղաղ ջրերը և մեր կողքով լողացող լաստանավերը հիշեցրին ինձ այն երջանիկ ժամանակը, երբ տիկին Միլլիգանի և Արթուրի հետ նավարկում էի «Կարապով»: Հետաքրքիր է, ո՞ւր են հիմա «Կարապը» և նրա բնակիչները: Երբ մենք կտրում–անցնում էինք ջրանցքը կամ գնում նրա ափերի երկայնքով, ես անդադար հարցնում էի հանդիպած մարդկանց, թե չե՞ն տեսել արդյոք լողացող տնակ: Հավանաբար Արթուրն առողջացել էր, և տիկին Միլլիգանը նրա հետ վերադարձել էր Անգլիա: Բայց և այնպես, երբ հեռվից ձիեր էի տեսնում, որոնք քարշ էին տալիս լաստանավը, ես ամեն անգամ մտածում էի, թե գուցե «Կարապն» է մեզ ընդառաջ լողում:

Աշունը վրա հասավ, և օրվա ընթացքում մենք ավելի ու ավելի քիչ էինք կարողանում ճանապարհ անցնել: Մենք աշխատում էինք մինչ մութն ընկնելը հնարավորինս շուտ հասնել այն գյուղը, որտեղ պատրաստվում էինք գիշերելու: Եվ չնայած շատ էինք շտապում, մանավանդ վերջում, բայց և այնպես Դրեզի հասանք միայն ուշ երեկոյան:

Կատերինա հորաքրոջ ամուսինը ջրարգելակի հսկիչ էր և ապրում էր իր հսկողության տակ եղած ջրարգելակի կողքի տանը: Դրա համար էլ նրան գտնելը դժվար չէր: Նրանց տունը գյուղի ծայրին էր և շրջապատված էր բարձր ծառերով:

Սիրտս շատ ուժեղ էր բաբախում, երբ մենք մոտենում էինք այդ տանը: Լուսամուտից, որի վրա ո՛չ վարագույր կար, ո՛չ փեղկեր, ես տեսա Լիզային, որը նստած էր սեղանի մոտ՝ հորաքրոջ կողքին, իսկ նրա դիմաց՝ մեջքով դեպի մեզ, նստած էր հավանաբար հորաքրոջ ամուսինը:

— Նրանք ընթրում են,— հայտարարեց Մատտիան:

— Մենք ժամանակին եկանք:

Բայց կանգնեցրի նրան և նշան արեցի Կապիին, որ չհաչի: Հետո տավիղն ուսիցս իջեցնելով՝ պատրաստվեցի նվագել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հասկանում եմ,— շշնջաց Մատտիան:— Դու ցանկանում ես սերենադ[11] երգել:

— Ո՛չ, ես միայն կնվագեմ:

Եվ ես նվագեցի նեապոլյան երգի առաջին չափերը, բայց չերգեցի, որովհետև վախենում էի, որ ձայնս կդավաճանի ինձ:

Նվագելով նայում էի Լիզային: Նա բարձրացրեց գլուխը, և ես տեսա, թե ինչպես շողշողացին նրա աչքերը:

Այդ ժամանակ ես երգեցի:

Լիզան արագորեն ցած թռավ աթոռից և վազեց դեպի դուռը: Ես հազիվ հասցրի տավիղս տալ Մատտիային, երբ Լիզան արդեն իմ գրկում էր:

Հորաքույր Կատերինան հրավիրեց մեզ տուն, և ինձ ու Մատտիային իսկույն սեղան նստեցրին:

— Խնդրում եմ, մի ափսե՛ էլ դրեք,— խնդրեցի ես:— Մենք մենակ չենք, մեզ հետ է նաև մեր փոքրիկ ընկերուհին:

Ես տոպրակիցս հանեցի տիկնիկը և նստեցրի աթոռին՝ Լիզայի մոտ: Երբեք չեմ մոռանա, թե Լիզան ինչպիսի ջերմագին շնորհակալությամբ նայեց ինձ:

---

[11] Սերենադ (իտալ.) — գիշերերգ:

Գլուխ 11

ԲԱՐԲԵՐԵՆԸ

Եթե Փարիզ չշտապեի, ես երկար, շատ երկար կմնայի Լիզայի մոտ: Մենք այնքան բան պետք է հաղորդեինք միմյանց, իսկ բացատրվել այն լեզվով, որով ես և նա խոսում էինք, հեշտ բան չէր:

Լիզան ցանկանում էր պատմել, թե ինչպես է ապրել Դրեզիում, ինչպես են հորաքույրն ու նրա ամուսինը, որոնք երեխաներ չունեն, կապվել իր հետ, ուզում էր պատմել իր խաղերի, զբոսանքների և հաճույքների մասին:

Ես էլ իմ հերթին հարցուփորձ արի նրան, թե ինչ է գրում հայրը, և պատմեցի ամեն բան, ինչ պատահել էր մեր բաժանման ժամանակամիջոցում: Մենք օրերով զբոսնում էինք երեքով, ավելի շուտ՝ հինգով, որովհետև Կապին և տիկնիկը մասնակցում էին մեր բոլոր զվարճություններին:

Երեկոները, եթե եղանակը խոնավ չէր լինում, մենք նստում էինք տան շեմքին, իսկ եթե դուրսը մառախուղ էր, ապա՝ օջախի մոտ, որտեղ ես տավիղ էի նվագում՝ մեծ հաճույք պատճառելով Լիզային, իսկ Մատտիան՝ ջութակ ու կոռնետ, բայց Լիզան գերադասում էր տավիղը, և դրա համար ես ինձ շատ հպարտ էի զգում: Լիզան նախքան քնելը միշտ խնդրում էր ինձ, որ երգեմ նեապոլյան երգը:

թվայնացրել է 1915.info կայքը

Վերջապես ստիպված եղանք բաժանվելու Լիզայից և կրկին ճամփա ընկնելու: Եթե Մատտիան հետս չլիներ, ես կբավարարվեի քչով և վաստակելու հետևից չէի ընկնի, միայն թե հնարավորինս շուտ հասնեի Փարիզ: Բայց Մատտիան չէր համաձայնվում ինձ հետ:

— Կվաստակենք այնքան, որքան կարող ենք,— ասում էր նա՝ ստիպելով ինձ կրկին ու կրկին ձեռքս առնել տավիղը:— Ո՞վ գիտի, արդյոք շո՞ւտ կգտնենք Բարբերենին:

— Եթե նրան չգտնենք կեսօրին, ապա կգտնենք ժամը երկուսին: Մուֆտար փողոցը մեծ չէր:

— Իսկ եթե նա արդեն վերադարձել է Շավանո՞ն: Ստիպված կլինենք գրել նրան և պատասխանի սպասել: Իսկ ո՞նց կապրենք այդ ընթացքում, եթե գրպաններումս ոչ մի կոպեկ չունենանք: Կարելի է կարծել, որ դու բոլորովին չգիտես Փարիզը: Մի՞թե մոռացել ես Ժանտիլիի քարհանքը: Իսկ ես հիանալի հիշում եմ, թե ինչպես Փարիզում քիչ էր մնում սովից մեռնեի:

Մենք կրկին դուրս եկանք այն ճանապարհը, որով վեց ամիս առաջ Փարիզից գնում էինք Շավանոն: Մենք որոշեցինք կրկին մտնել այն ագարակը, որտեղ մի ժամանակ տվել էինք մեր առաջին համերգը: Նորապսակները ճանաչեցին մեզ և ցանկացան կրկին պարել մեր երաժշտության տակ: Պարերն ավարտելուց հետո մեզ ընթրիք տվեցին և թույլատրեցին գիշերել իրենց մոտ:

Հետևյալ առավոտ մենք այնտեղից ճամփա ընկանք Փարիզ: Մեր վերադարձի օրը այնքան էլ նման չէր Փարիզից հեռանալու օրվան: Եղանակն ամպամած էր և ցուրտ: Ո՛չ արև կար, ո՛չ էլ ճամփեզրին խոտեր ու ծաղիկներ: Վրա էր հասել աշունը, և նրա հետ՝ աշնանային մառախուղները: Այժմ բարձր պատերից մեր գլխին էին թափվում ոչ թե շահպրակների թերթիկներ, այլ դեղնած չոր տերևներ:

Բայց տխուր եղանակն այնքա՜ն չէր ազդում իմ տրամադրության վրա, սիրտս լի էր ուրախությամբ: Այն միտքը, որ ես շուտով կգրկեմ մայրիկիս, հարազատ մայրիկիս, իսկ հայրս ինձ իր զավակը կկոչի, արբեցնում էր ինձ:

Բայց քանի մենք մոտենում էինք Փարիզին, Մատտիան ավելի ու ավելի էր տխրում և հաճախ մի քանի ժամ շարունակ ոչ մի բառ չէր արտասանում: Նա ինձ չէր ասում, թե որն է իր տխրության պատճառը, իսկ ես, հասկանալով, որ նա վախենում է հնարավոր բաժանումից, չէի ցանկանում կրկնել այն, ինչ շատ անգամ ասել էի, այսինքն, որ իմ ծնողները երբեք չեն բաժանի մեզ:

Բայց երբ մոտեցանք Փարիզին և կանգ առանք ուղեկալի մոտ՝ նախաճաշելու համար, Մատտիան անսպասելիորեն ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Գիտե՞ս, թե հիմա ում մասին եմ մտածում:

— Ո՞ւմ մասին:

— Գարաֆոլիի: Ինչ կլինի, եթե նա հանկարծ դուրս եկած լինի բանտից: Չէ՞ որ ես չգիտեմ, թե որքան ժամանակով էր դատապարտված նա: Հնարավոր է, որ Գարաֆոլին արդեն դուրս է եկել բանտից և վերադարձել իր տունը: Մենք Բարբերենին փնտրելու ենք Մուֆտար փողոցում, այսինքն՝ այն նույն թաղամասում, որտեղ ապրում է Գարաֆոլին: Իսկ եթե հանկարծ պատահաբար հանդիպենք նրան: Նա իմ տերն է, իմ մորեղբայրը և հավանաբար կցանկանա նորից ինձ իր մոտ վերցնել. այդ դեպքում ես չեմ կարող ազատվել նրանից: Դու վախենում ես Բարբերենից և կարող ես պատկերացնել, թե որքա՜ն եմ վախենում Գարաֆոլիի ճանկն ընկնելուց:

Իմ երազանքներով տարված՝ բոլորովին մոռացել էի Գարաֆոլիի մասին: Այն, ինչ ասաց Մատտիան, իսկապես վտանգավոր էր:

— Ինչ ես մտածում,— հարցրի ես նրան:— Գուցե չարժե՞, որ դու Փարիզ գաս:

— Ես կարծում եմ, որ եթե չգամ Մուֆտար փողոցը, ապա հազիվ թե հանդիպեմ Գարաֆոլիին:

— Լա՛վ, դու չես գա Մուֆտար փողոցը: Ես մենակ կգնամ այնտեղ, իսկ երեկոյան՝ ժամը յոթին, ես ու դու կհանդիպենք որևէ տեղում:

Մենք որոշեցինք հանդիպել Փարիզի Աստվածամոր տաճարի մոտակայքում: Մատտիան ու Կապին գնացին բուսաբանական այգու կողմը, իսկ ես՝ Մուֆտար փողոցը: Այդպիսի մեծ քաղաքում առաջին անգամ մնացի մենակ՝ առանց Մատտիայի ու Կապիի: Ինձ համար ծանր էր ու սարսափելի, բայց ես չէի ընկճվում: Չէ՞ որ շուտով պետք է գտնեի Բարբերենին, իսկ նրա օգնությամբ՝ նաև իմ ընտանիքը:

Թղթի վրա գրել էի այն պանդոկատերերի անուններն ու հասցեները, որտեղ կարող էր իջևանած լինել Բարբերենը: Ես վաղուց անգիր էի արել դրանք՝ Պաժո, Բարաբո, Շոպինե:

Իմ ճանապարհին դրանցից առաջինը Պաժոն էր: Ես բավականին համարձակ ներս մտա փոքրիկ ճաշարանը, որը կահավորված սենյակների[12] առաջին հարկում էր, և դողացող ձայնով տեղեկացա Բարբերենի մասին:

— Ինչ պտուղ է այդ Բարբերենը:

— Բարբերենը Շավանոնից է:

---

[12] Էժան հյուրանոց, որտեղ տրվում են ոչ թանկ կահավորված սենյակներ ավելի երկարատև ժամանակով, քան հյուրանոցներում:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ ես նկարագրեցի Բարբերենին այնպես, ինչպես նա մնացել էր իմ հիշողության մեջ Փարիզից վերադառնալուց հետո. կոպիտ դիմագծեր, դաժան դեմք, գլուխը՝ աջ ուսին թեքված:

— Չգիտեմ: Մեզ մոտ այդպիսին չկա:

Շնորհակալություն հայտնելով՝ գնացի Բարաբոյի մոտ: Վերջինս ոչ միայն վարձով սենյակներ էր տալիս, այլև մրգեր էր վաճառում:

Ես կրկնեցի իմ հարցը: Սկզբում ինձ չէին լսում, որովհետև և՛ ամուսինը, և՛ կինը շատ զբաղված էին: Կինը սպանախ էր կտրատում, իսկ ամուսինը կռվում էր մի կին հաճախորդի հետ:

— Բարբերե՛ն... Այո՛, այդպիսի մեկն ապրում էր մեզ մոտ չորս տարի առաջ:

— Հինգ տարի առաջ,— ուղղեց նրան կինը,— և մի ամբողջ շաբաթվա համար պարտք մնաց մեզ: Ո՞ւր է նա՝ այդ սրիկան:

Ես դուրս եկա ծայրաստիճան հուսախաբ և նույնիսկ վշտացած: Մնում էր միայն Շոպինեն: Ինչ պետք է անեմ, եթե նա էլ ոչինչ չիմանա: Որտե՞ղ փնտրեմ Բարբերենին:

Շոպինեն ճաշարանատեր էր: Երբ ներս մտա, նա ճաշ էր եփում և միաժամանակ ճաշ էր բաժանում: Մի քանի այցելուներ նստած էին սեղանի մոտ:

Ես դիմեցի Շոպինեին, որն այդ ժամանակ, գդալը ձեռքին, ապուր էր լցնում, և հարցրի Բարբերենի մասին:

— Բարբերենն այլևս այստեղ չի ապրում,— պատասխանեց նա:

— Իսկ որտե՞ղ է ապրում,— հուզմունքով հարցրի ես:

— Ինչ իմանամ: Նա իր հասցեն չի թողել:

Հավանաբար ես այնպիսի վշտացած ու շփոթված տեսք ունեի, որ սեղանի շուրջը եղած տղամարդկանցից մեկը, որը նստած էր վառարանի մոտ, դիմեց ինձ.

— Իսկ քո ինչի՞ն է պետք այդ Բարբերենը:

Նրա հարցին անկեղծորեն պատասխանել չէի ցանկանում:

— Ես եկել եմ նրա հայրենիքից և տեղեկություն եմ բերել նրա կնոջից: Նա ինձ ասաց, որ Բարբերենին կգտնեմ այստեղ:

— Եթե գիտեք, թե որտեղ է Բարբերենը,— դիմեց ճաշարանի տերը նրան, ով խոսում էր ինձ հետ,— ասե՛ք տղային: Չէ՞ որ նա Բարբերենին ոչ մի վատ բան չի անի: Ճի՞շտ չէ, տղա՛:

— Իհա՛րկե:

Կրկին սկսեցի հույս տածել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բարբերենը հիմա ապրում է Կանտել հյուրանոցում՝ Աուստերլիցի կառանցում: Համենայն դեպս, երեք շաբաթ առաջ նա այնտեղ էր: Ես շնորհակալություն հայտնեցի և դուրս եկա: Բայց նախքան ցույց տրված հասցեով գնալը որոշեցի տեղեկանալ, թե ինչ է եղել Գարաֆոլին: Առանց այդ էլ պետք է անցնեի Դե–Լուրսին փողոցով, և միայն մի քանի քայլ էր բաժանում ինձ այն տնից, որտեղ երբեմն եղել էի Վիտալիսի հետ: Այս անգամ էլ, ինչպես ինձ համար անմոռանալի այն օրը, ինչ–որ ծերունի կեղտոտ պատին խղճուկ ցնցոտիներ էր փռում: Կարելի էր կարծել, որ այն օրից սկսած մինչև հիմա՝ նա զբաղվում էր այդ նույն գործով:

— Գարաֆոլին վերադարձե՞լ է,— հարցրի ես նրան:

Ծերունին նայեց ինձ և պատասխանի փոխարեն սկսեց հազալ:

Ես որոշեցի հասկացնել նրան, որ գիտեմ, թե որտեղ է Գարաֆոլին, հակառակ դեպքում նա ոչինչ չի ասի:

— Գարաֆոլին դեռ այնտե՞ղ է,— անտարբեր տեսք ընդունած՝ շարունակեցի ես:— Հավանաբար նա իրեն շատ լավ չի զգում:

— Հնարավոր է, բայց ժամանակն անցնում է:

— Այո՛, բայց ոչ այնքան նրա համար արագ, որքան մեզ համար:

Ծերուկն այդ կատակի վրա ծիծաղեց և դրանից նրա հազը նորից բռնեց:

— Չգիտե՞ք արդյոք, թե նա երբ է վերադառնալու,— հարցրի ես, երբ նրա հազը դադարեց:

— Երեք ամիս հետո:

Գարաֆոլին բանտում կմնա ևս երեք ամիս: Մատտիան կարող էր ոչ մի բանից չվախենալ: Այդ երեք ամսվա ընթացքում իմ ծնողները, իհարկե, միջոց կգտնեն նրան այդ սարսափելի մորեղբոր ոտնձգություններից պաշտպանելու:

Այլևս ոչ մի րոպե չկորցնելով՝ քայլերս ուղղեցի դեպի Աուստերլիցի կառանցը: Ուրախ մի զգացում համակեց ինձ, և ես արդեն շատ ավելի ներողամիտ էի Բարբերենի նկատմամբ: Նա հավանաբար այնքան չար չէ, որքան թվում էր. առանց նրա ես կսառչեի փողոցում կամ կմեռնեի սովից: Ճիշտ է, նա ինձ խլեց Բարբերեն մայրիկից և վաճառեց Վիտալիսին, բայց նա չէր ապրել ինձ հետ, չէր ճանաչում ինձ և դրա համար էլ չէր սիրում: Անկասկած, կարիքն էր ստիպել նրան այդպես վարվել, իսկ կարիքը, ինչպես հայտնի է, վատ խորհրդատու է: Ներկայումս Բարբերենը փնտրում է ինձ, զբաղված է իմ գործերով: Եթե ես գտնեմ ծնողներիս, ապա արդարությունը պահանջում է երախտապարտ լինել նրան:

թվայնացրել է 1915.info կայքը

Դե–Լուրսին փողոցից մինչև Աուստերլիցի կառանցը եղած հեռավորությունը մեծ չէր, և շուտով գտա Կարտել հյուրանոցը: Պարզվեց, որ չնայած դա հյուրանոց էր կոչվում, բայց իրականում աղքատիկ կահավորված սենյակներ էին միայն, որոնց տիրուհին խուլ, պառավ մի կին էր, որի գլուխը շարունակ ցնցվում էր:

Երբ դիմեցի նրան, նա ձեռքն ականջին դրեց և խնդրեց կրկնել ասածս:

— Վատ եմ լսում,— շշուկով ասաց նա:

— Ես ուզում եմ տեսնել Բարբերենի՛ն, Բարբերենի՛ն, որը եկել է Շավանոն գյուղից: Նա Ձեզ մո՞տ է ապրում:

Այդ խոսքերը լսելով՝ կինն այնքան ուժեղ թափահարեց ձեռքը, որ նրա ծնկներին քնած կատուն վախեցած ցած թռավ:

— Ա՛խ, ա՛խ,— հառաչեց նա՝ ինձ նայելով, և նրա գլուխը սկսեց ավելի ուժեղ ցնցվել:— Դու այն տղա՞ն ես:

— Ի՞նչ տղա:

— Որին նա փնտրում էր:

Այդ խոսքերից սիրտս ճմլվեց:

— Ի՞նչ է պատահել Բարբերենին,— վախեցած բացականչեցի ես:

— Պետք է ասել հանգուցյա՛լ, հանգուցյա՛լ Բարբերենին:

Որպեսզի չընկնեմ, հենվեցի տավիղիս:

— Մի՞թե նա մեռել է,— գոռացի ես ամբողջ ուժով, բայց հուզմունքից ձայնս խզվել էր:

— Մեռել է: Ութ օր առաջ մեռավ հիվանդանոցում:

Ես քարացա տեղումս: Բարբերենը մեռել է: Իսկ ի՞նչ կլինի իմ ընտանիքի հարցը: Հիմա ես որտե՞ղ և ինչպե՞ս գտնեմ ծնողներիս:

— Ուրեմն Դուք այն տղա՞ն եք,— շարունակեց պառավը,— որին նա փնտրում էր:

Ես կառչեցի այդ բառերից:

— Ուրեմն Դուք գիտե՞ք,— հարցրի ես:

— Գիտեմ միայն այն, ինչ պատմում էր խեղճ Բարբերենը, որ եկել է Փարիզ՝ ցանկանալով գտնել և ծնողներին վերադարձնել այն երեխային, որին տարիներ առաջ գտել էր փողոցում:

— Իսկ ո՞ւր է իմ ընտանիքը, ո՞ւր է իմ ընտանիքը,— շնչակտուր հարցրի ես:

— Ա՛խ, ուրեմն Դուք հենց այն տղա՞ն եք,— կրկնեց նորից պառավը:

Եվ շարունակելով գլուխը ցնցել՝ սկսեց ուշադրությամբ զննել ինձ, բայց ես թույլ չտվեցի շարունակելու այդ հետաքրքրական զբաղմունքը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Շատ եմ խնդրում, պատմեք ինձ ամեն բան:

— Բայց ես ոչինչ չգիտեմ՝ բացի նրանից, ինչ արդեն ասացի, տղա՛ս... ներեցեք, երիտասարդ:

— Պատմեք ամեն բան, ինչ ասել է Ձեզ Բարբերենն իմ ընտանիքի մասին: Դուք տեսնում եք, որ ես շատ հուզված եմ:

Այդ վայրկյանին ինչ–որ մի կին, հավանաբար աղախինը, ներս մտավ սենյակ: Կանտել հյուրանոցի տիրուհին դիմեց նրան:

— Ա՛յ քեզ պատմություն: Սա այն տղան է, որին փնտրում էր Բարբերենը: Նա հայտնվել է, իսկ Բարբերենն արդեն կենդանի չէ: Ա՛յ քեզ պատմություն:

— Բարբերենը երբևէ որևէ բան ասե՞լ է Ձեզ իմ ընտանիքի մասին: Որտե՞ղ է ապրում իմ ընտանիքը, ի՞նչ է նրանց ազգանունը,— ընդհատեցի նրան:

— Ո՛չ, այդ մասին նա երբեք ոչինչ չի ասել: Երբ Բարբերենը մեռավ, մենք աչքի անցկացրինք նրա բոլոր իրերը: Իհարկե, ոչ հետաքրքրասիրությունից, այլ նրա համար, որ հաղորդենք կնոջը, բայց մենք ոչինչ չգտանք: Հիվանդանոցում նույնպես նրա հագուստների մեջ ոչ մի թուղթ չգտան:

Ավա՛ղ, ես շատ լավ հասկացա ամեն բան, ինչ հաղորդեց ինձ պառավը: Բարբերենը մեռել է և իր հետ գերեզման տարել իմ ծննդյան գաղտնիքը: Համարյա նպատակակետիս հասած՝ ձեռնունայն մնացի: Իմ երազներն ու հույսերը խորտակվեցին:

Երկար ժամանակ անխոս կանգնած էի: Այդ կանայք պատմեցին ինձ ամեն բան, ինչ գիտեին: Բայց նրանք պարզապես ոչինչ չգիտեին, չնայած փորձել էին Բարբերենից կորզել նրա գաղտնիքը: Ես շնորհակալություն հայտնեցի և ուղղվեցի դեպի դուռը:

— Իսկ ո՞ւր եք գնում Դուք,— հարցրեց պառավը:

— Ես պետք է հանդիպեմ ընկերոջս:

— Ա՛խ, Դուք ընկե՞ր ունեք:

— Այո՛:

— Նա ապրում է Փարիզո՞ւմ:

— Մենք Փարիզ ենք եկել այս առավոտյան:

— Դե՛հ, եթե ապրելու տեղ է պետք, կարող եք ապրել ինձ մոտ: Ձեզ համար այստեղ շատ լավ կլինի: Կարող եմ հավատացնել, որ կապրեք օրինավոր տան մեջ: Բացի այդ՝ Ձեր ծնողները, Բարբերենից տեղեկություն չստանալով, անկասկած կգան ինձ մոտ, և Դուք կարող եք նրանց այստեղ հանդիպել: Ձեր ծնողները ինչպե՞ս կգտնեն Ձեզ, եթե այստեղ չլինեք: Այս

թվայնացրել է 1915.info կայքը

բոլորն ասում եմ՝ բացարձակապես Ձեր շահերից ելնելով: Իսկ քանի՞ տարեկան է Ձեր ընկերը:

— Ինձնից մի քիչ փոքր է:

— Զարմանալի է, այդքան երիտասարդ եք և մենակ թափառում եք Փարիզի փողոցներում: Աստված գիտի, թե ում կարող եք հանդիպել. չէ՞ որ այնպիսի հյուրանոցներ կան, ուր ապրում են ամեն տիպի մարդիկ: Այլ բան է ինձ մոտ: Այստեղ շատ խաղաղ է, և թաղամասն էլ՝ լավը:

Ես բոլորովին համաձայն չէի, որ սա խաղաղ ու լուռ թաղամաս է: Կանտալ հյուրանոցը ամենակեղտոտ և խղճուկ տներից մեկում էր, որ ես երբևէ տեսել էի: Իսկ պետք է ասեմ, որ իմ թափառական կյանքի ընթացքում կեղտոտ ու հետամնաց բնակավայրեր քիչ չէի տեսել: Բայց պառավի առաջարկի մասին հարկավոր էր մտածել:

— Որքա՞ն կարժենա սենյակն ինձ և ընկերոջս համար,— հարցրի ես:

— Օրը՝ տասը սու, թանկ չէ:

— Լավ, մենք կգանք Ձեզ մոտ այս երեկոյան:

— Որքան կարող եք շո՛ւտ վերադարձեք: Փարիզում գիշերը վտանգավոր է:

Քանի որ մեր հանդիպման վայրը գնալու համար դեռ վաղ էր, ես որոշեցի թափառել գետափին և նայել Սենային: Բայց ահա մութն ընկավ, վառվեցին գազալապտերները: Այդ ժամանակ քայլերս ուղղեցի դեպի Փարիզի Աստվածամոր տաճարը, որի աշտարակների սև ուրվանկարները ընդգծվում էին մայրամուտից շառագունող երկնքում: Նստարան տեսնելով՝ հաճույքով նստեցի. ոտքերս այնպես էին նվում, կարծես երկար ճանապարհ անցած լինեի: Ես կրկին խորասուզվեցի իմ տխուր մտքերի մեջ: Վաղուց ես ինձ այդքան ընկճված և հոգնած չէի զգացել: Վառ լուսավորված Փարիզի եռուզեռում ավելի միայնակ էի, քան դաշտերի ու անտառների մեջ: Կողքովս անցնող մարդիկ երբեմն հետ էին շրջվում ու նայում, բայց ինձ չէր հուզում ո՛չ նրանց հետաքրքրասիրությունը, ո՛չ նրանց կարեկցանքը. ես հույսով լի սպասում էի մտերիմ մարդկանց կարեկցանքին, որոնց, ավա՛ղ, չգտա: Միայն աշտարակի ժամացույցի զարկերն էին հետաքրքրում ինձ: Ես հաշվում էի դրանք և մտածում, թե որքան ժամանակ է մնացել մինչ այն րոպեն, երբ ես կհանդիպեմ Մատտիային, կտեսնեմ նրա փաղաքշող, ուրախ աչքերը, և որը ընկերաբար կհուսադրի և կմխիթարի ինձ:

Ժամը յոթից մի քանի րոպե պակաս ես լսեցի ուրախ հաչոց և նույն րոպեին տեսա ինչ–որ սպիտակ մի բան, որը մոտենում էր ինձ: Մինչ ես գլխի

թվայնացրել է 1915.info կայքը

կընկնեի, թե ինչ էր դա, Կապին թռավ ծնկներիս և սկսեց լիզել ձեռքերս: Ես նրան սեղմեցի կրծքիս և համբուրեցի քիթը:

Այդ րոպեին հայտնվեց Մատտիան:

— Դեհ, ի՞նչ կա,— հեռվից ձայն տվեց նա:

— Բարբերենը մեռել է...

Մատտիան սկսեց վազել՝ ցանկանալով շուտ մոտենալ ինձ:

Մի քանի բառով պատմեցի նրան ամեն բան, ինչ իմացել էի:

Նա անկեղծորեն վշտացավ, և նրա կարեկցանքը սիրտս թեթևացրեց: Ես հասկացա, որ չնայած Մատտիան վախենում էր, թե իմ ընտանիքը կարող է մեզ բաժանել, բայց և այնպես նա ջերմորեն ցանկանում էր, որ ես գտնեմ հարազատներիս:

Նա աշխատում էր մխիթարել ինձ սրտառուչ ու քնքուշ բառերով և ամեն կերպ համոզում, որ հուսահատվելու կարիք չկա:

— Քո ծնողները, Բարբերենից ոչ մի տեղեկություն չստանալով, կսկսեն անհանգստանալ: Նրանք կցանկանան իմանալ, թե խնդիրն ինչն է, և, իհարկե, կդիմեն Կանտալ հյուրանոցը: Գնանք հյուրանոց. մի քանի օր հետո ամեն բան կհարթվի:

Նույն բանն ինձ ասում էր նաև գլուխը ցնցող պառավը, բայց Մատտիայի շուրթերում այդ բառերն ինձ համար ավելի համոզիչ էին հնչում:

Անկասկած, կարիք չկար այդպես վշտանալու, հարկավոր էր միայն համբերությամբ սպասել: Մի քիչ խաղաղվելով՝ ես պատմեցի Մատտիային Գարաֆոլիի մասին:

— Դեռ երեք ամիս կա,— բացականչեց նա և ուրախությունից սկսեց փողոցում երգել ու պարել:

Մենք գետափով հասանք Աուստերլիցի կառանցը: Հիմա, երբ հուզմունքս անցել էր, ես հանգստությամբ կարող էի հիանալ լիալուսնի շողերով ողողված Սենայով: Լուսինն իր արծաթափայլ շողերը սփռել էր գետի վրա, որի ջուրը փայլփլում էր հսկայական շարժուն հայելու պես:

Հնարավոր է, որ Կանտալ հյուրանոցը «օրինավոր էր», բայց այն անվանել գեղեցիկ ու հարմար, ոչ մի դեպքում չէր կարելի: Մեզ տեղավորեցին մի փոքրիկ համարում, որը տանիքի տակ էր և լուսավորվում էր մոմի աղոտ լույսով: Համարն այնքան փոքր էր, որ մեզնից մեկը ստիպված էր նստել մահճակալին, որպեսզի մյուսը կարողանա անցնել: Բայց ոչինչ, ամեն բան դեռ լավ կլինի. այդպես մտածելով՝ ես քնեցի:



թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 12

ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Հետևյալ օրը՝ առավոտյան, սկսեցի նամակ գրել Բարբերեն մայրիկին: Ես պետք է հաղորդեի նրան ամեն բան, ինչ իմացել էի, և պարզվեց, որ դա հեշտ բան չէր: Չէր կարելի ուղղակի գրել, որ նրա ամուսինը մեռել է, երբ նա անկեղծորեն կապված էր իր ծերուկին: Երկար տարիներ նրանք ապրել էին միասին, և Բարբերեն մայրիկը շատ կվշտանար, եթե տեսներ, որ ես չեմ կարեկցում իրեն: Իհարկե, ես հաղորդեցի նրան նաև իմ հուսախաբության և նոր հույսերի մասին: Ես խնդրում էի, որ եթե հանկարծ իմ ընտանիքը նամակ գրի, թող ինքն անմիջապես հաղորդի նրանց հասցես՝ Փարիզ, Կանտալ հյուրանոց:

Հետո ես որոշեցի անմիջապես այցի գնալ Պիեր Ակենին, որ հաղորդեմ Լիզայի և Ալեքսիսի քնքուշ բարևներն ու համբույրները, և պատմեմ, թե ինչպես են նրանք ապրում:

Մատտիան եկավ ինձ հետ, որովհետև շատ էր ցանկանում տեսնել բանտը: Իսկ ես ցանկանում էի ծանոթացնել նրան այն մարդու հետ, որն ավելի քան երկու տարի հայրություն էր արել ինձ:

Հիմա ես գիտեի, թե ինչպես են թույլտվություն ստանում բանտարկյալների հետ տեսակցելու համար, և մենք ստիպված չեղանք երկար սպասել

թվայնացրել է 1915.info կայքը

բանտի դռան մոտ, ինչպես այն ժամանակ, երբ այստեղ եկա առաջին անգամ: Մեզ տարան ընդունարան, որտեղ շուտով եկավ Ակենը: Նա դեռ շեմքից ձեռքերը մեկնեց դեպի ինձ:

— Սիրելի՛ տղաս, իմ լա՛վ Ռեմի,— ասում էր նա՝ ինձ համբուրելով:

Ես մանրամասն պատմեցի, թե ինչպես են ապրում Լիզան և Ալեքսիսը: Բայց երբ սկսեցի բացատրել նրան, թե ինչու ինձ չհաջողվեց տեսնել Էտյենետտային, նա ընդհատեց ինձ.

— Իսկ ինչպե՞ս են քո ծնողները:

— Մի՞թե Դուք գիտեք:

Ակենը ինձ հաղորդեց, որ մոտ երկու շաբաթ առաջ Բարբերենը եղել է իր մոտ:

— Բարբերենը մեռել է,— ասացի ես:

— Ա՛յ քեզ դժբախտություն:

Ակենը պատմեց, որ Բարբերենը եկել էր բանտ՝ ցանկանալով իմանալ, թե ես որտեղ եմ:

Երբ Բարբերենը եկել էր Փարիզ, առաջին հերթին գնացել էր Գարաֆոլիի մոտ, և հասկանալի է, որ չէր գտել նրան: Այդ ժամանակ նա գնացել էր գավառ. այն բանտը, որտեղ նստած էր Գարաֆոլին, և վերջինս պատմել էր նրան, թե ինչպես էր Վիտալիսի մահից հետո մի այգեպան վերցրել ինձ իր ընտանիքը: Բարբերենը վերադարձել էր Փարիզ և գտել Ակենին բանտում: Ակենից նա իմացել էր, որ ես ճամփորդում եմ Ֆրանսիայում, և եթե չի կարելի ստույգ իմանալ, թե ես որտեղ եմ տվյալ րոպեին, ապա կարելի է վստահորեն ասել, որ վաղ թե ուշ ես կլինեմ իր երեխաներից մեկնումեկի մոտ: Բարբերենը նամակներ էր գրել ինձ՝ Դրեզի, Վարս, Էսնանդ և Սեն Կանտեն: Ես Դրեզիում չստացա նրա նամակը, հավանաբար այն պատճառով, որ մեկնեցի ավելի շուտ, քան այն տեղ էր հասել:

— Իսկ ի՞նչ ասաց Բարբերենն իմ ընտանիքի մասին:

— Ոչինչ, ավելի ճիշտ՝ շատ քիչ բան: Իբրև թե քո ծնողներն իմացել են ոստիկանապետից, որ ընկեցիկ երեխան տրվել է մի քարտաշի՝ Շավանոն գյուղից, որի ազգանունը Բարբերեն է: Ապա նրանք դիմել են Բարբերենին: Բայց քանի որ դու այնտեղ չէիր, նրանք խնդրել են, որ Բարբերենն օգնի իրենց, որպեսզի քեզ գտնեն:

— Նա Ձեզ չասա՞ց նրանց ազգանունը, կամ թե որտեղ են նրանք ապրում:

— Ես նրան հարցրի այդ մասին, բայց Բարբերենն ինձ պատասխանեց, որ հետո կասի ամեն բան: Ես չպնդեցի՝ շատ լավ հասկանալով, որ նա թաքցնում է ծնողներիդ ազգանունը՝ վախենալով կորցնել պարգևի մի

թվայնացրել է 1915.info կայքը

մասը, որը հույս ուներ ստանալ քո ծնողներից: Քանի որ ես նույնպես որոշ ժամանակ հայրություն եմ արել քեզ, ապա Բարբերենը կարծում էր, որ ես դրա համար մտադիր եմ փող ստանալու: Ես նրան գրողի ծոցն ուղարկեցի և այն օրվանից այլևս չեմ տեսել: Ես չէի էլ ենթադրում, որ նա մեռել է: Այդպես ուրեմն, դու գիտես, որ ծնողներ ունես, բայց այդ ծեր ժլատի պատճառով չգիտես, թե ովքեր են նրանք:

Ես նրան բացատրեցի, թե որն էր հիմա իմ հույսը, և նա լիովին համաձայնվեց ինձ հետ:

— Քո ծնողները գտել են Բարբերենին, իսկ Բարբերենը կարողացել է գտնել նախ Գարաֆոլիին, իսկ հետո՝ ինձ: Նրանք, անկասկած, կդիմեն Կանտալ հյուրանոցը, և դրա համար դու պետք է դեռևս ապրես այնտեղ:

Այդ խոսքերն ինձ շատ հաճելի էին և բարձրացրին տրամադրությունս: Մնացած ժամանակը մենք անցկացրինք՝ Լիզայի, Ալեքսիսի և հանքերում եղած աղետի մասին խոսելով:

— Ինչ սարսափելի աշխատանք է,— բացականչեց Ակենը, երբ ավարտեցի իմ պատմությունը:— Խեղճ Ալեքսիս... Ա՛խ, շատ ավելի լավ կլիներ, եթե նա այգեպան մնար:

— Այդպես էլ կլինի,— նկատեցի ես:

— Որպեսզի դա շուտ լինի,— ասաց ինձ Մատտիան, երբ փողոց դուրս եկանք,— մենք հիմա իզուր տեղը ժամանակ չպետք է կորցնենք, այլ պետք է փող վաստակենք:

— Եթե մենք Շավանոնից Դրեզի և այնտեղից էլ Փարիզ գնալիս չզբաղվեինք փող վաստակելով՝ ավելի շուտ կհասնեինք Փարիզ, և Բարբերենը դեռ կենդանի կլիներ:

— Ճիշտ է, ես ինքս վշտացած եմ, որ մենք ուշ եկանք, հետևաբար կարող ես ինձ չկշտամբել:

— Ես բոլորովին էլ չեմ կշտամբում քեզ, Մատտիա: Եթե դու չլինեիր, ես չէի կարող Լիզային տիկնիկ նվիրել, և մենք հիմա Փարիզում կմնայինք առանց մի կոպեկի:

— Լավ, եթե այն ժամանակ ես իրավացի էի, հիմա էլ հույսդ դի՛ր ինձ վրա: Բացի այդ՝ ամենալավ բանը, որ մենք հիմա կարող ենք անել, աշխատելն է: Փարիզում ես ինձ զգում եմ, ինչպես իմ տանը, և այստեղ շատ լավ տեղեր գիտեմ:

Նա իսկապես լավ գիտեր բոլոր սրճարանները, հրապարակները, բակերը, նրբանցքները, և երեկոյան դեմ մենք արդեն հավաքել էինք տասնչորս ֆրանկ:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդպես անցավ երեք օր: Իմ հարցերին հյուրանոցի տիրուհին ամեն օր նույն պատասխանն էր տալիս. «Բարբերենին ոչ ոք չի հարցրել. նամակներ չկան ո՛չ Ձեզ, ո՛չ Բարբերենին»: Բայց վերջապես չորրորդ օրը նա ինձ մի նամակ տվեց: Դա Բարբերեն մայրիկի պատասխանն էր, ավելի շուտ այն պատասխանը, որը գրված էր նրա խնդրանքով, որովհետև ինքը՝ մայրիկը, չգիտեր ո՛չ գրել, ո՛չ կարդալ: Այնտեղ ասված էր, որ մինչ ամուսնու մահը Բարբերեն մայրիկը նրանից նամակ է ստացել, որը ուղարկում է ինձ, որովհետև դրա մեջ տեղեկություններ կան իմ ընտանիքի մասին:

— Շո՛ւտ, շո՛ւտ,— գոռաց Մատտիան,— կարդա՛ Բարբերենի նամակը:

Դողացող ձեռքով սրտատրոփ բացեցի նամակը:

«Թանկագի՛ն կինս

Ես շատ հիվանդ եմ, պառկած եմ հիվանդանոցում և հազիվ թե լավանամ: Ուժասպառ եմ եղել և չեմ կարող գրել, թե ինչպես պատահեց, որ հիվանդացա, որովհետև պետք է շտապեմ և հաղորդեմ ամենակարևորը: Երբ ես մեռնեմ, գրի՛ր Լոնդոն, Լինկոլնս–Ինն, Գրինսկվեր, Գրես և Գելլի գրասենյակ: Այդ մարդկանց հանձնարարված է գտնել Ռեմիին: Այն մասին, թե ուր է Ռեմին, դու կարող ես իմանալ Ակեն ազգանունով ծեր այգեպանից, որը հիմա Փարիզում է՝ Կլիշի բանտում: Բայց մինչև իմ մահը ոչինչ մի՛ նախաձեռնի:

Համբուրում եմ քեզ վերջին անգամ:

Բարբերեն»:

Ես դեռ չէի ավարտել նամակը, Մատտիան վեր թռավ և գոռաց.

— Գնա՛նք, գնա՛նք Լոնդոն:

Ինձ այնքան էին ապշեցրել այդ տեղեկությունները, որ նայում էի Մատտիային և չէի հասկանում, թե նա ինչ է ասում:

— Եթե Բարբերենը գրում է, որ քեզ գտնելը հանձնարարված է Անգլիական գրասենյակին,— շարունակեց նա,— ուրեմն քո ծնողները անգլիացի են: Եթե նրանք ֆրանսիացի լինեին, ապա անգլիական իրավաբաններին չէին հանձնարարի Ֆրանսիայում որոնել իրենց կորած երեխային: Իսկ եթե դու անգլիացի ես, անհրաժեշտ է, որ Անգլիա գնաս: Ծնողներիդ շուտ գտնելու ամենաճիշտ միջոցը դա է:

— Գուցե ավելի լավ կլինի, որ նամա՛կ գրենք այդ իրավաբաններին:

— Ինչո՞ւ: Ավելի հեշտ է պայմանավորվել անձամբ, քան գրավոր: Մենք քառասուներեք ֆրանկ ունենք Անգլիա գնալու համար. դա ավելի քան բավական է: Բուլոնում մենք կնստենք շոգենավ, որը մեզ կտանի Լոնդոն:

թվայնացրել է 1915.info կայքը

— Միթե դու եղել ես Լոնդոնում:

— Դու շատ լավ գիտես, որ չեմ եղել: Բայց մեզ մոտ՝ Գասոյի կրկեսում, աշխատում էին երկու ծաղրածու, որոնք անգլիացիներ էին: Նրանք պատմում էին Լոնդոնի մասին և ինձ մի քանի անգլերեն բառ սովորեցրին, որ Գասոն մայրիկը, որը սիրում էր քիթը խոթել մեր գործերի մեջ, չհասկանա, թե ինչ ենք խոսում: Լոնդոնում ես կուղեկցեմ քեզ:

Վիտալիսն էլ է ինձ մի քիչ անգլերեն սովորեցրել:

— Այո՛, բայց երեք տարում դու, հավանաբար, ամեն բան մոռացել ես, իսկ ես դեռ հիշում եմ, այ կտեսնես: Բացի այդ՝ ես ուզում եմ քեզ հետ Լոնդոն գալ նաև մի այլ պատճառով:

— Ինչ պատճառով:

— Եթե քո ծնողները գան այստեղ՝ Փարիզ, նրանք կարող են ինձ չտանել իրենց հետ: Իսկ եթե ես արդեն Անգլիայում լինեմ, նրանք անհարմար կզգան ինձ ետ ուղարկել:

Այդ փաստարկումն ինձ բավականին ծանրակշիռ թվաց, և ես իսկույն համաձայնվեցի Մատտիայի հետ գնալ Լոնդոն:

Երկու րոպե անց մեր տոպրակներն արդեն կապված էին, և մենք պատրաստ էինք ճանապարհ ընկնելու:

Երբ հյուրանոցի տիրուհին մեզ տեսավ, սկսեց փնթփնթալ.

թվայնացրել է 1915.info կայքը

— Երիտասարդ, միթե Դուք չեք սպասի ձեր ծնողներին: Խելացի բան արած կլինեք, եթե մնաք այստեղ: Բացի այդ՝ Ձեր ծնողներն իրենք կտեսնեին, թե այստեղ ինչպես են հոգ տարել իրենց որդու մասին:

Բայց նրա պերճախոսությունն ինձ պահել չէր կարող: Գիշերելու փողը վճարելով՝ շտապեցի փողոց դուրս գալ, որտեղ ինձ սպասում էին Մատտիան ու Կապին:

— Իսկ Ձեր հասցեն,— հարցրեց պառավը:

Ես նրա գրքի մեջ գրեցի «Գրես և Գելլի» գրասենյակի հասցեն:

— Լոնդո՞ն,— բացականչեց նա:— Այսպիսի երեխաները գնում են Լոնդո՞ն: Հեռավոր ճամփորդությա՜ն... ծովո՞վ:

Փարիզից մինչև Բուլոն ընկած տարածությունը մենք անցանք ութ օրում: Կարճ ժամանակով կանգ էինք առնում ճանապարհին հանդիպած մեծ քաղաքներում, որ մի քանի ներկայացում տանք և ավելացնենք մեր դրամագլուխը: Ճանապարհին Մատտիան ինձ անգլերեն բառեր էր սովորեցնում, որովհետև ես շատ էի մտածում, թե արդյոք իմ ծնողները ֆրանսերեն կամ իտալերեն գիտե՞ն: Ինչպե՞ս եմ բացատրվելու, եթե նրանք միայն անգլերեն են խոսում, ի՞նչ պետք է ասեմ իմ եղբայրներին և քույրերին, եթե, իհարկե, ունեմ: Արդյոք ես նրանց համար ընդմիշտ օտար չե՞մ մնա, եթե չկարողանամ խոսել նրանց հետ:

Երբ մենք Բուլոն հասանք, մեր գրպանում երեսուներկու ֆրանկ կար. դա շատ ավելին էր, քան պահանջվում էր շոգենավով Լոնդոն հասնելու համար:

Շոգենավը մեկնում էր Լոնդոն հետևյալ օրը՝ առավոտյան ժամը չորսին:

Երեք անց կեսին մենք արդեն նավի վրա էինք և աշխատեցինք տեղավորվել հնարավորինս լավ, արկղերի կույտի հետևում, որը կարող էր որոշ չափով պաշտպանել մեզ հյուսիսային սառը և խոնավ քամուց:

Հատուկենտ լապտերների աղոտ լույսի տակ մենք տեսնում էինք, թե ինչպես են բեռնում նավը: Ճոռում էին ճախարակները, շրխկում էին նավամբար իջեցվող արկղերը, և նավաստիները խոպոտ ձայներով խոսում էին միմյանց հետ: Այդ աղմուկը խլացնում էր շոգու սուլոցը, որը սպիտակ քուլաներով դուրս էր գալիս ծխնելույզից: Վերջապես հնչեց զանգը, նավի պարաններն արձակեցին, և մենք ճանապարհ ընկանք... ճանապարհ՝ դեպի իմ հայրենիքը:

Ես հաճախ էի պատմում Մատտիային, որ չկա ավելի հաճելի բան, քան նավարկելը: Կամացուկ սահում ես ջրի մակերեսով՝ չզգալով նույնիսկ նավակի շարժումը: Ճի՞շտ որ հիանալի բան է, կարծես երազ լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ ասելով՝ մտաբերում էի «Կարապը» և մեր ճամփորդությունը Հարավային ջրանցքով: Բայց ծովը բոլորովին նման չէր ջրանցքին: Հազիվ էինք բաց ծով դուրս եկել, երբ նավը սկսեց ճոճվել: Շոգենավը խորասուզվում էր ջրի մեջ և ալիքների հետ կրկին բարձրանում, կարծես մի հսկայական ճլորթի լիներ: Այդ ցնցումների ժամանակ շոգին ծխնելույզից դուրս էր գալիս ականջ ծակող սուլոցով, հետո հանկարծ ամեն բան լռում էր, և լսվում էր միայն ջրին հպվող անիվների աղմուկը մերթ մի կողմում, մերթ մյուս, նայած թե որ կողմն էր թեքվում շոգենավը:

Հանկարծ Մատտիան, որն արդեն վաղուց էր լռել, թափով վեր թռավ:

— Ինչ է պատահել,— հարցրի նրան:

— Ես ինձ վատ եմ զգում: Ամեն բան շուրջս պտույտ է գալիս:

— Դու ծովային հիվանդություն ունես:

— Սատանան տանի, հավանաբար, այո՛:

Խեղճ Մատտիա, ինչպես էր նա տանջվում: Ես գրկում էի նրան, ձեռքս դնում գլխի տակ. ոչինչ չէր օգնում: Նա բարձրաձայն տնքում էր: Ժամանակ առ ժամանակ վեր էր կենում և երերալով գնում դեպի նավեզրը, հետո կրկին վերադառնում էր, որ կծկվի կողքիս: Այդ ժամանակ նա կես–քմծիծաղ, կես–բարկացած բռունցքով սպառնում էր ինձ և ասում.

— Օ՛հ, անգլիացիներդ, անգլիացիներդ անզգա մարդիկ եք:

— Եվ շատ լավ է, որ անզգա ենք:

Երբ բացվեց գունատ, մառախլապատ, խավարամած առավոտը, մենք տեսանք բարձրասլաց, սպիտակ ժայռեր և մերթ այստեղ, մերթ այնտեղ անշարժ կանգնած անառագաստ նավեր: Հետզհետե ցնցումները դադարեցին: Շոգենավը հիմա լողում էր համարյա նույնքան հանգիստ, որքան ջրանցքով: Երկու կողմից երևում էին, կամ ավելի ճիշտ, առավոտվա մառախուղի մեջ ուրվագծվում էին անտառապատ ափերը: Մենք մտանք Թեմզա:

— Ահա մենք Անգլիայում ենք,— հայտարարեցի ես Մատտիային:

Բայց նա բոլորովին չուրախացավ այդ նորության համար և մեկնվելով տախտակամածին՝ պատասխանեց.

— Թող քնեմ:

Ամբողջ ճանապարհին ես ինձ հիանալի էի զգում և դրա համար քնել չէի ուզում: Մատտիային հարմար տեղավորելով՝ բարձրացա արկղերի վրա և Կապիին ոտքերիս տակ նստեցնելով՝ տեղավորվեցի այնտեղ:

Շոգենավում Կապին լավ էր զգում իրեն: Հավանաբար նա «հին նավաստի» էր. նա Վիտալիսի հետ շատ էր ճամփորդել:

թվայնացրել է 1915.info կայքը

Արկղերի վրայից, որտեղ ես տեղավորվել էի, գետը և նրա երկու ափերը հիանալի երևում էին: Գետի վրա կար խարիսխ ձգած նավերի մի ամբողջ նավատորմ: Այդ նավերի շուրջն այս ու այն կողմ էին գնում փոքրիկ նավերը և նավաքարշները՝ իրենց հետևից ծխի սև ու երկար ժապավեններ թողնելով: Նավերից շատերը պատրաստ էին մեկնելու, և դրանց կայմերի վրա երևում էին նավաստիներ, որ բարձրանում և իջնում էին պարանասանդուքով, որը հեռվից ոստայնի նման բարակ էր թվում:

Որքան մեր շոգենավը վերև էր բարձրանում, տեսարանն ավելի գեղեցիկ ու գրավիչ էր դառնում: Բացի շոգենավերից և առագաստանավերից՝ հայտնվեցին մեծ, եռառագաստանի նավեր, օվկիանոսային հսկայական շոգենավեր, որոնք ժամանել էին հեռու երկրներից, ածուխ տանող սև բեռնանավեր, ծղոտով կամ խոտով բեռնված լաստանավեր, որոնք նման էին ջրի հոսանքով տարվող դեզերի: Կարմիր, սպիտակ ու սև տակառները ճոճվում էին ալիքների միջև: Հետաքրքիր էր նաև նայել ափերին, որտեղ երևում էին գեղեցիկ ներկված տներ, կանաչ դաշտեր, ծառեր, որոնց չէր դիպել այգեպանի դանակը, անդադար հանդիպում էին նավամատույցներ, ծովային հատուկ նշաններ, կանաչած ողորկ քարեր:

Ես, երկար նստած, այդպես շուրջս էի նայում և հիանում շրջապատով: Բայց ահա Թեմզայի երկու ափին ձգվեցին տների կարմիր խիտ շարքերը: Մթնեց. ծուխն ու մառախուղն այնպես միախառնվեցին, որ չէր կարելի տարբերել, թե որն է ավելի թանձր՝ ծուխը, թե մառախուղը: Ծառերին ու դաշտերին փոխարինեց նավակայմերի անտառը: Այլևս չհամբերելով՝ արագ ցած թռա և մոտեցա Մատտիային:

Նա արթնացել էր և ծովային հիվանդության նոպաներն այլևս չզգալով՝ այնպիսի լավ տրամադրության մեջ էր, որ համաձայնվեց ինձ հետ բարձրանալ արկղերի վրա: Նրան էլ, ինչպես ինձ, ամեն ինչ հիացմունք էր պատճառում: Մի քանի տեղում դաշտերի միջով ջրանցքներ էին անցնում, որոնք թափվում էին գետը և նույնպես լի էին շոգենավերով: Դժբախտաբար, մառախուղն ու ծուխը գնալով թանձրանում էին, և որքան ավելի էինք առաջ շարժվում, այնքան ավելի դժվար էր որևէ բան նշմարելը:

Վերջապես շոգենավը նավամատույց մտավ: Մենք հասել էինք Լոնդոն և ափ իջանք մարդկանց հորձանքի հետ, որոնք նայում էին մեզ, բայց չէին խոսում մեզ հետ:

— Ահա հասավ այն րոպեն, երբ քո անգլերենը կարող է պետք գալ,— դիմեցի Մատտիային:

թվայնացրել է 1915.info կայքը

Մատտիան, բոլորովին չշփոթվելով, մոտեցավ մի գեր մարդու, որը շիկահեր մորուք ուներ և գլխարկը հանելով՝ քաղաքավարությամբ հարցրեց, թե ինչպես կարող ենք դուրս գալ Գրինսկվեր:

Ինձ թվաց, որ Մատտիան չափազանց երկար է բացատրվում այդ մարդու հետ, որը նրան ստիպեց մի քանի անգամ կրկնել նույն բառերը: Բայց ես չէի ցանկանում ցույց տալ, որ կասկածի եմ ենթարկում ընկերոջս գիտելիքները: Վերջապես Մատտիան վերադարձավ:

— Դա շատ հեշտ է, պետք է գնալ Թեմզայի ափի երկայնքով:

Բայց այն ժամանակ Լոնդոնում գետափ չկար, տները կանգնած էին համարյա գետի մոտ, և մենք ստիպված էինք գնալ փողոցներով, որոնք ձգվում էին Թեմզային զուգահեռ:

Դրանք մռայլ փողոցներ էին՝ կեղտոտ կառքերով, արկղերով ու ապրանքների հակերով լի, և մենք ճանապարհին անդադար հանդիպող այդ խոչընդոտների միջով դժվարությամբ էինք առաջ շարժվում: Ես բռնել էի Կապիի վզնոցը, և նա կրնկակոխ գալիս էր իմ հետևից: Դեռ ժամը մեկն էր միայն, բայց խանութներում արդեն լույս էր վառվում: Պետք է խոստովանեմ, որ Լոնդոնը մեզ վրա այնպիսի լավ տպավորություն չթողեց, ինչպես Թեմզան: Հիմա մենք քայլում էինք ոչ թե մեծ, աղմկալի փողոցով, այլ փոքրիկ, խաղաղ փողոցներով, որոնք միահյուսվում էին: Թվում էր, թե մենք պտտվում ենք միևնույն տեղում, ինչպես լաբիրինթոսում:

Մենք արդեն մտածում էինք, որ մոլորվել ենք, երբ հանկարծ հայտնվեցինք ոչ մեծ մի գերեզմանատան մոտ, որի սև տապանաքարերը կարծես մրով ծածկված կամ ներկված լինեին: Դա էլ հենց Գրինսկվերն էր:

Մինչ Մատտիան խոսում էր մեր կողքով անցնող ինչ–որ ուրվականի հետ, ես կանգ առա՝ աշխատելով խաղաղեցնել իմ բաբախող սիրտը: Ես դժվարությամբ էի շնչում և ամբողջ մարմնով դողում էի:

Հետո գնացի Մատտիայի հետևից: Շուտով մենք կանգ առանք պղնձյա ցուցանակի առաջ և կարդացինք՝ «Գրես և Գելլի»:

Մատտիան ցանկանում էր դռան զանգը քաշել, բայց ես բռնեցի նրա ձեռքը:

— Ինչ պատահեց քեզ,— հարցրեց նա:— Դու շատ գունատ ես:

— Սպասի՛ր մի քիչ, թող շունչ առնեմ:

Մատտիան զանգահարեց, մենք ներս մտանք:

Ես այնքան հուզված էի, որ շուրջս չէի նկատում: Մենք հայտնվեցինք ինչ–որ գրասենյակում, որտեղ մի քանի հոգի, սեղաններին խոնարհված, ինչ–որ բան էին գրում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մատտիան, քանի որ ես նրան էի հանձնարարել բանակցություններ վարելու գործը, դիմեց այդ մարդկանցից մեկին.

Նա մի քանի անգամ կրկնեց «ընտանիք, տղա, Բարբերեն» բառերը: Ես հասկացա, որ Մատտիան բացատրում է նրանց, որ ես հենց այն նույն տղան եմ, որին իմ ընտանիքի հանձնարարությամբ պետք է գտներ Բարբերենը: Ուշադրությամբ զննելով ինձ ու Մատտիային՝ մարդը վեր կացավ, որ ուղեկցի մեզ մյուս սենյակը:

Մենք մտանք գրքերով ու թղթերով լի մի առանձնասենյակ: Գրասեղանի առաջ նստած էր ինչ–որ մի պարոն, իսկ մի ուրիշ պարոն, որն ուներ կեղծամ և պատմուճանը գցել էր ուսերին ու ձեռքին բռնել փաստաթղթերով լի բազմաթիվ կապույտ տոպրակներ[13], զրուցում էր նրա հետ:

Մեզ ուղեկցողը բացատրեց, թե ովքեր ենք մենք, և երկու պարոնն էլ ոտքից գլուխ զննեցին մեզ:

— Չեզնից ո՞րն է Բարբերենի մեծացրած երեխան,— ֆրանսերենով հարցրեց գրասեղանի մոտ նստած պարոնը:

Լսելով, որ նա խոսում է ֆրանսերեն, ես ինձ ավելի վստահ զգացի և առաջ անցա:

— Ես եմ:

— Իսկ ո՞ւր է Բարբերենը:

— Նա մեռել է:

Նրանք միմյանց նայեցին, և այն պարոնը, որը գլխին կեղծամ ուներ, դուրս եկավ՝ իր հետ տանելով տոպրակները:

— Իսկ դուք ինչպե՞ս եք այստեղ ընկել,— հարցրեց մարդը, որն առաջինը դիմեց մեզ:

— Ոտքով եկանք Բուլոն, իսկ Բուլոնից շոգենավով՝ Լոնդոն: Մենք հենց նոր ենք ժամանել:

— Որտեղի՞ց իմացաք, որ դուք պետք է գաք այստեղ:

Ես աշխատեցի հնարավորինս կարճ պատմել ամեն բան: Ես շատ էի ցանկանում ինքս էլ մի հարց տալ նրան, որն առանձնապես հետաքրքրում էր ինձ, բայց ես չհասցրի այդ անել:

Ստիպված եղա պատմել, թե ինչպես եմ ապրել Բարբերեն մայրիկի տանը, ինչպես ընկա Վիտալիսի մոտ, ինչպես Վիտալիսի մահվանից հետո Ակենն ինձ ընդունեց իր ընտանիքը, և թե ինչպես, ի վերջո, վերադարձա թափառական երաժշտի նախկին կյանքիս:

---

13 Այն ժամանակ Անգլիայում թղթապանակների փոխարեն փաստաթղթերի ու գրությունների համար օգտագործում էին հատուկ տոպրակներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մինչ ես պատմում էի, պարոնն ինչ–որ բան էր գրանցում և այնպես էր նայում դեմքիս, որ ինձ վատ էի զգում: Այդ պարոնը չար դեմք ուներ և ինչ–որ կեղծ քմծիծաղ էր տալիս:

— Իսկ այս տղան ո՞վ է,— հարցրեց նա՝ գրչի ծայրը մեկնելով դեպի Մատտիան՝ կարծես ցանկանալով խոցել նրան:

— Իմ բարեկամն է, ընկերս, եղբայրս:

— Շատ լավ: Որևէ պատահական ծանոթություն, հանդիպում մեծ ճանապարհին, այնպես չէ՞:

— Նա շատ քնքուշ սիրտ ունի և եղբոր պես սիրում է ինձ:

— Օ՛, ամենևին չեմ կասկածում:

Պահն ինձ հարմար թվաց տալու համար այն հարցը, որն ինձ հանգիստ չէր տալիս:

— Ասեք, իմ ընտանիքն Անգլիայո՞ւմ է ապրում:

— Այո՛, համենայն դեպս ներկայումս ապրում է Լոնդոնում:

— Ուրեմն ես կարո՞ղ եմ տեսնել հարազատներիս:

— Շատ շուտով կլինեք Ձեր ընտանիքում, Ձեզ կտանեն այնտեղ:

Նա զանգ տվեց:

— Պատասխանեք, խնդրեմ, մի հարցի ևս. արդյոք ես հայր ունեմ: Ես դժվարությամբ արտասանեցի «հայր» բառը:

— Ոչ միայն հայր ունեք, այլև մայր, եղբայրներ ու քույրեր:

— Օ՛հ, պարո՛ն…

Դուռը բացվեց, ես զսպեցի իմ զեղումները և միայն արցունքով լի աչքերով նայեցի Մատտիային: Պարոնը անգլերենով դիմեց ներս մտած ծերունուն, և ես հասկացա, որ նա կարգադրեց ծերուկին ուղեկցել մեզ:

Մենք ոտքի կանգնեցինք:

— Ա՛խ, այո՛,— դիմեց ինձ պարոնը:— Ես բոլորովին մոռացել էի ասել, որ Ձեր ազգանունը Դրիսկոլ է, այսինքն՝ այդպես է Ձեր հոր ազգանունը:

Չնայած դիմացինիս անհամակրելի դեմքին՝ ես, անկասկած, նրա գիրկը կնետվեի, եթե հասցնեի անել այդ, բայց նա մատնացույց արեց դուռը:

Մենք դուրս եկանք:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 13

ԴՐԻՍԿՈԼՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Ծերունին, որին հանձնարարված էր ինձ տանել ծնողներիս մոտ, փոքրիկ, չոր–չոր մի մարդ էր՝ կնճռոտ դեմքով, ճարպոտ, սև ֆրակով և սպիտակ փողկապով: Երբ մենք փողոց դուրս եկանք, նա սկսեց արագ շփել ձեռքերը, ճտճտացնել մատների հոդերը և թափահարել ոտքերը. կարծես ցանկանում էր ցած նետել իր մաշված կոշիկները: Քիթը վեր բարձրացնելով՝ նա մի քանի անգամ խոր շունչ քաշեց, ինչպես մի մարդ, որը երկար ժամանակ փակված էր եղել սենյակում:

— Նա կարծում է, որ այստեղ հաճելի բուրմունք է տարածված,— ասաց ինձ Մատտիան իտալերեն:

Ծերուկը նայեց մեզ և ոչինչ չասելով՝ շրթունքներով ինչ–որ տարօրինակ ձայն արձակեց՝ «Ֆըսս, ֆըսս...», հավանաբար դա նշանակում էր, որ մենք չպետք է հետ մնանք, որպեսզի չկորցնենք իրեն:

Շուտով մենք հայտնվեցինք մարդաշատ մեծ փողոցում. ծերուկը մի կառք կանգնեցրեց, որի կառապանը իր տեղում նստելու փոխարեն նստել էր հետնամասում և այնտեղից էր վարում կառքը: Հետագայում ես իմացա, որ այդպիսի կառքը կոչվում է քեբ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մեզ կառք նստեցնելով՝ ծերուկը վերին մասի փոքրիկ լուսամուտի միջից սկսեց վիճել կառապանի հետ: Մի քանի անգամ նա կրկնեց «Բեսնալ–Գրին». հավանաբար դա այն թաղամասի անունն էր, որտեղ ապրում էին իմ ծնողները: Ես գիտեի, որ անգլերեն «green» բառը նշանակում է «կանաչ», և դրա համար որոշեցի, որ այդ թաղամասը պետք է ծածկված լինի գեղեցիկ ծառերով: Իհարկե, դա բոլորովին նման չէ Լոնդոնի մոայլ, կեղտոտ փողոցներին, որոնցով մենք հիմա անցնում էինք: Տունն էլ հավանաբար շատ գեղեցիկ է՝ շրջապատված մեծ ծառերով:

Մեր ուղեկցի և կառապանի վեճը բավականին երկար տևեց: Մատտիան և ես, ամուր միմյանց սեղմված, Կապիին ոտքներիս մեջ առած, նստել էինք կառքի անկյունում: Նրանց վեճը լսելով՝ զարմանում էի, որ կառապանը հավանաբար չգիտեր, թե որտեղ է Բեսնալ–Գրինը: Միթե Լոնդոնում այդքան շատ են կանաչապատ գեղեցիկ թաղամասերը: Այն բոլորից հետո, ինչ մենք տեսել էինք, ես ավելի շուտ կհավատայի, որ Լոնդոնում անհամեմատ ավելի շատ են մրոտ, կեղտոտ թաղամասերը:

Վերջապես կառքը շարժվեց: Սկզբում մենք գնում էինք լայն փողոցներով, հետո՝ նեղ, հետո՝ կրկին լայն: Մառախուղ էր, և մենք համարյա չէինք տեսնում, թե ինչ է կատարվում մեր շուրջը: Ցուրտ էր, և միաժամանակ դժվար էր շնչելը: Բայց դա վերաբերում էր միայն ինձ ու Մատտիային, որովհետև մեր ուղեկիցն, ընդհակառակը, իրեն հիանալի էր զգում: Նա, բերանը բացած, խոր շնչում էր և այնպես էր ֆսսացնում, կարծես շտապում էր, որքան կարելի է, շատ օդ հավաքել իր թոքերը: Ժամանակ առ ժամանակ նա սկսում էր ճտճտացնել հոդերը և ձգել ոտքերը: Կարելի էր կարծել, որ նա մի քանի տարի չի շարժվել և չի շնչել:

Չնայած այն տենդագին հուզմունքին, որ համակում էր ինձ, երբ մտածում էի, որ մի քանի րոպե հետո վերջապես գտնելու եմ հորս, մորս, եղբայրներիս և քույրերիս, ես սարսափելի ցանկանում էի տեսնել քաղաքը, որի միջով անցնում էինք: Չէ՞ որ դա իմ հարազատ քաղաքն էր:

Բայց ես համարյա ոչինչ չէի կարողանում տեսնել՝ բացի գազալապտերների կարմրավուն լույսերից, որոնք, մառախուղի միջից թափանցելով, կարծես պարուրվում էին ծխի թանձր քուլաներով: Նույնիսկ հանդիպակաց կառքերի լապտերները դժվարությամբ էինք նշմարում և ժամանակ առ ժամանակ ստիպված էինք հանկարծակի կանգ առնել, որ չդիպչենք կամ կառքի տակ չգցենք փողոցներում խմբված մարդկանց:

թվայնացրել է 1915.info կայքը

Ցեխի ցայտքերը ընկնում էին կառքի մեջ և ծածկում մեզ սև բծերով. փողոցներում զզվելի հոտ էր տարածված: Միթե ամբողջ Անգլիան այնպիսին է, ինչպիսին այս կեղտոտ, քարե քաղաքը, որը կոչվում է Լոնդոն:

Այն րոպեից, ինչ մենք դուրս էինք եկել «Գրես և Գելլի» գրասենյակից, շատ ժամանակ էր անցել: Թվում է, թե ամեն բան հաստատում էր, որ իմ ծնողներն ապրում են քաղաքից դուրս: Ես և Մատտիան բռնել էինք իրար ձեռք, և այն մտքից, թե շուտով կտեսնեմ իմ ծնողներին, սեղմում էի Մատտիայի ձեռքը: Ես ուզում էի ասել նրան, որ հիմա, ինչպես երբեք, նրան իմ բարեկամն եմ համարում:

Բայց քաղաքից դուրս գալու փոխարեն մենք հայտնվեցինք շատ ավելի նեղ փողոցներում և լսեցինք շոգեքարշի սուլոցը:

Ինձ թվաց, որ մենք պտտվում ենք միևնույն տեղում, մեր կառապանը դանդաղեցնում էր կառքի ընթացքը, կարծես թե ճանապարհն էր փնտրում: Հանկարծ նա միանգամից կանգնեցրեց կառքը և լուսամուտը բացեց:

Կրկին սկսվեց խոսակցությունը, ավելի շուտ՝ վեճը: Մատտիան բացատրեց ինձ, որ կառապանը չի ցանկանում առաջ շարժվել, որովհետև ճանապարհը չգիտեր: Վեճը շարունակվում էր. կառապանը և ծերունին զայրացած խոսում էին փոքրիկ լուսամուտի միջով: Վերջապես ծերունին փող տվեց փնթփնթացող կառապանին, քերից դուրս եկավ և նորից սկսեց իր «փըստ–փըստը»: Մենք հասկացանք, որ նա առաջարկում է հետևել իրեն:

Մենք հայտնվեցինք մառախուղի մեջ կեղտոտ փողոցում: Մեր դիմաց վառ լուսավորված մի խանութ էր, և գազալապտերի լույսը, ոսկեզօծ հայելիների և ապակյա շշերի մեջ անդրադառնալով, թափանցում էր մառախուղի միջով և լուսավորում փողոցը:

Դա բար էր, որտեղ վաճառում էին օղու զանազան տեսակներ:

— Փըստ... փըստ...— կրկնեց մեր ուղեկիցը:

Եվ մենք նրա հետ միասին մտանք այնտեղ:

Մինչև հիմա ես երբեք այդպիսի շքեղություն չէի տեսել. ամենուրեք՝ հայելիներ, ոսկեզօծ իրեր, արծաթյա վաճառասեղան: Միայն թե մարդիկ, որոնք կանգնած էին այդ վաճառասեղանի մոտ կամ թիկն էին տվել պատին ու տակառներին, ցնցոտիներով էին, իսկ նրանց բոբիկ, կեղտոտ ոտքերին կարծես սև ներկ էին քսել, որը դեռ չէր չորացել:

Արծաթյա վաճառասեղանին մոտենալով՝ մեր ուղեկիցը պահանջեց մի բաժակ սպիտակ, հաճելի բուրմունք ունեցող ինչ–որ հեղուկ, որը մի շնչով, ագահությամբ կուլ տալով, ինչպես քիչ առաջ կուլ էր տալիս մառախուղը,

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

խոսակցության բռնվեց բաժակը մատուցող մարդու հետ: Դժվար չէր հասկանալ, որ նա խնդրում էր իրեն ցույց տալ ճանապարհը:

Վերջապես մենք կրկին ճանապարհ ընկանք մեր ուղեկցի հետ:

Հիմա փողոցն այնքան նեղ էր, որ չնայած մառախուղին՝ մենք փողոցի երկու կողմերում տեսնում էինք տները: Մի տնից մյուսը պարաններ էին ձգված, որոնց վրա կախված էր սպիտակեղեն ու զանազան փալասներ:

Ո՞ւր էինք գնում: Ես սկսեցի անհանգստանալ: Մատտիան երբեմն նայում էր ինձ, բայց ոչինչ չէր հարցնում:

Փողոցից մենք մտանք մի նրբանցք, հասանք մի բակ, որի միջով դուրս եկանք մի այլ նրբանցք: Այստեղ տներն ավելի աղքատիկ էին, քան Ֆրանսիայի ամենաաղքատ գյուղում: Շատ տներ ուղղակի տախտակներից էին և ամբարների կամ ախոռների տեսք ունեին, բայց դրանք բնակարաններ էին, որոնց շեմքերին կանգնած էին գլխաբաց կանայք ու երեխաներ:

Այնտեղ, որտեղ աղոտ լույսը թույլ էր տալիս որևէ բան տեսնելու, ես նշմարում էի գունատ, վուշի պես սպիտակ մազերով կանանց և կիսամերկ երեխաների, որոնց ցնցոտիները հազիվ էին ծածկում: Նրբանցքներից մեկում մենք տեսանք ինչ–որ գարշահոտ ջրափոսի մեջ թավալվող խոզերի:

Մեր ուղեկիցն անդադար առաջ էր գնում: Անկասկած, նա մոլորվել էր: Հանկարծ մեզ մոտեցավ մի տղամարդ՝ երկար, կապույտ սերթուկով և լաքե ժապավեն ունեցող գլխարկով: Նրա թևքին սև ու սպիտակ թելերով նշան էր գործված, իսկ գոտուց կախված էր մի փայտ: Ոստիկան էր: Նորից սկսվեց երկարատև մի խոսակցություն, որից հետո առաջ շարժվեցինք այդ ոստիկանի առաջնորդությամբ: Մենք անցանք նրբանցքներով, բակերով, ծուռումուռ փողոցներով, ինչ–որ խարխուլ տնակների մոտով: Վերջապես կանգ առանք մի բակում, որի կենտրոնում ջրափոս կար:

— Ահա՛, «Կարմիր առյուծի» բակը,— ասաց ոստիկանը:

Ես այնքան հուզված էի, որ չեմ հիշում, թե ինչպես բացվեց դուռը, որը նա բախեց: Բայց այն րոպեից, երբ մենք ներս մտանք ընդարձակ մի սենյակ, որը լուսավորված էր լամպով և օջախի կրակով, իմ հիշողություններն ավելի պարզ դարձան:

Կրակի առաջ՝ ծղոտե բազկաթոռին, փայտյա արձանի նման անշարժ նստած էր ճերմակամորուք մի ծերունի՝ սև թասակը գլխին: Սեղանի շուրջը նստած էին մոտ քառասուն տարեկան մի տղամարդ՝ խելոք, բայց ոչ հաճելի, չար դեմքով, որը հագել էր մոխրագույն թավշյա կոստյում, և մի կին՝ երկար շեկ մազերով, որոնք իջնում էին խաչաձև կապված ուսնոցին: Նրա հայացքը սառն էր ու անարտահայտիչ, իսկ շարժումները՝ անտարբեր և

թվայնացրել է 1915.info կայքը

ալարկոտ: Չնայած դրան՝ նա երիտասարդ ժամանակ հավանաբար գեղեցիկ էր եղել: Սենյակում կային նաև չորս երեխա՝ երկու տղա և երկու աղջիկ: Բոլորն էլ խարտյաշ էին մոր նման: Տղաներից մեծը կլիներ մոտ տասնմեկ–տասներկու տարեկան, փոքր աղջիկը՝ երկու տարեկանից ոչ ավելի. նա դեռևս չորեքթաթ էր անում հատակին:

Ես հասցրի բոլորին զննել, մինչ «Գրես և Գելլի» գրասենյակի մեր ուղեկիցը ավարտեց իր խոսքը:

Ինչ էր ասում նա՝ ես համարյա չլսեցի, ավելի ճիշտ՝ չհասկացա: Միայն Դրիսկոլ ազգանունը, իմ ազգանունը, որ գրասենյակում ասաց ինձ պարոնը, հասավ գիտակցությանս:

Բոլոր ներկաների, նույնիսկ անշարժ նստած ծերուկի աչքերը հառվեցին ինձ ու Մատտիային. միայն փոքրիկ աղջիկն էր զբաղված Կապիով:

— Ձեզնից ո՞վ է Ռեմին,— ֆրանսերեն հարցրեց մոխրագույն կոստյումով տղամարդը:

Ես մի քայլ առաջ անցա:

— Ես եմ:

— Դե՛հ, տղա՛ս, գրկի՛ր հորդ:

Առաջ այդ րոպեի մասին մտածելով՝ ես պատկերացնում էի, թե ինչպիսի երջանկությամբ կնետվեմ հորս գիրկը: Հիմա ես այդ ցանկությունը չէի զգում, բայց մոտեցա և համբուրեցի նրան:

— Ահա և քո պապը, մայրը, եղբայրներն ու քույրերը,— շարունակեց նա:

Նախ և առաջ մոտեցա մորս և գրկեցի նրան: Նա թույլ տվեց իրեն համբուրել, բայց ինքը չհամբուրեց ինձ, այլ երկու–երեք բառ արտասանեց միայն, որոնք ես չհասկացա:

— Սեղմի՛ր պապիկիդ ձեռքը, բայց զգուշությամբ. նա կաթված է ստացել,— ասաց հայրս:

Ես ձեռք մեկնեցի եղբայրներիս և ավագ քրոջս: Երբ ցանկացա գրկել փոքր քրոջս, նա հրեց ինձ, քանի որ նրա ամբողջ ուշադրությունը գրավել էր Կապին:

Մեկից մյուսին անցնելով՝ զայրանում էի ինքս ինձ վրա: Ի՞նչ է նշանակում սա: Ես ոչ մի ուրախություն չէի զգում, որ իմ ընտանիքում եմ: Ես ունեմ հայր, մայր, եղբայրներ և քույրեր, ունեմ պապիկ, վերջապես ես նրանց հետ եմ, բայց բոլորովին անտարբեր եմ: Ես տենդագին անհամբերությամբ սպասում էի այս րոպեին, ուրախությունս չափ ու սահման չուներ, երբ մտածում էի, որ արդեն կունենամ ընտանիք, ծնողներ, որոնց կարող եմ սիրել, և որոնք կսիրեն ինձ, և ի՞նչ: Ես շփոթված, հետաքրքրասիրությամբ զննում էի

թվայնացրել է 1915.info կայքը

ընտանիքիս անդամներին և սրտումս ոչ մի կաթիլ քնքշանք չէի գտնում, ոչ մի փաղաքշական բառ արտասանել չէի կարողանում: Միթե ես այդքան քարսիրտ էի և անարժան էի ընտանիք ունենալու:

Բայց ժամանակ չտվեցին զգացմունքներիս հանձնվելու:

— Իսկ սա ո՞վ է,— հարցրեց հայրս՝ մատնացույց անելով Մատտիային:

Ես բացատրեցի, որ ես ու Մատտիան կապված ենք մեծ բարեկամությամբ և շատ ենք սիրում միմյանց:

— Նա հավանաբար ցանկացել է նոր վայրեր տեսնել,— ասաց հայրս:

Ես ուզում էի առարկել, բայց Մատտիան ընդհատեց ինձ:

— Ճիշտ է,— հայտարարեց նա:

— Իսկ ո՞ւր է Բարբերենը,— շարունակեց հայրս,— ինչո՞ւ նա չի եկել ձեզ հետ:

Ես պատմեցի, որ Բարբերենը մեռել է, և ես խիստ վշտացած էի, երբ Փարիզ գալով՝ ոչինչ չկարողացա իմանալ ծնողներիս մասին:

— Դու անգլերեն չե՞ս խոսում,— հարցրեց հայրս:

— Ո՛չ: Ես գիտեմ ֆրանսերեն, և տերս, որի հետ ես ապրում էի Բարբերենի տնից գնալուց հետո, սովորեցրեց ինձ իտալերեն:

— Վիտալի՞ն:

— Դուք նրան ճանաչո՞ւմ եք:

— Այո՛, երբ ես Փարիզում էի, Բարբերենն ինձ պատմեց նրա մասին: Բայց հավանաբար դու ցանկանում ես իմանալ, թե ինչու մենք տասներեք տարի շարունակ քեզ չենք փնտրել և ինչու հանկարծ մտածեցինք դիմել Բարբերենին:

— Իհա՛րկե, դա շատ հետաքրքիր է:

— Մո՛տ նստիր կրակին, ես քեզ ամեն բան կպատմեմ:

Ես ցած դրեցի տոպրակս և նստեցի մատնացույց արված տեղում: Բայց երբ թաց ոտքերս մեկնեցի դեպի կրակը, պապիկը, ոչ մի բառ չասելով, թքեց իմ կողմը. նա բարկացած ծեր կատվի տեսք ուներ: Ես իսկույն հասկացա, որ դա նրան դուր չի գալիս և հետ քաշեցի ոտքերս:

— Ուշադրություն մի՛ դարձրու նրա վրա,— ասաց հայրս:— Ծերուկը չի սիրում, երբ նստում են կրակի մոտ: Բայց եթե դու սառել ես, տաքացի՛ր, ծերուկի հետ կարող ես հաշվի չնստել:

Ես զարմացած էի, որ հարգանքով չեն խոսում սպիտակահեր ծերունու մասին: Ինձ թվում էր, եթե պետք է հաշվի նստել որևէ մեկի հետ, ապա այդ մեկը հենց ծերուկն է, և ես որոշեցի ոտքերս ինձ քաշել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու մեր ավագ որդին ես,— շարունակեց հայրս:— Երբ ես ամուսնացա մորդ հետ, մի երիտասարդ աղջիկ, որը երազում էր իմ կինը դառնալ, այրող ատելությամբ լցվեց դեպի իր հակառակորդուհին, այսինքն՝ դեպի մայրդ: Ցանկանալով մեզնից վրեժ լուծել՝ նա քեզ գողացավ, տարավ Փարիզ ու փողոց նետեց: Մենք փնտրում էինք քեզ ամենուրեք, բայց, իհարկե, ոչ Փարիզում, որովհետև չէինք կարող ենթադրել, որ քեզ Ֆրանսիա են տարել: Մենք համարում էինք, որ դու մեռել ես, և երբեք չէինք գտնի քեզ, եթե երեք ամիս առաջ այդ կինը, ծանր հիվանդանալով, մահվանից առաջ ամեն բան չպատմեր մեզ: Ես անմիջապես գնացի Ֆրանսիա և դիմեցի այն թաղամասի ոստիկանապետին, որտեղ գցել էին քեզ: Այնտեղ ինձ հաղորդեցին, որ քեզ վերցրել է Բարբերեն ազգանունով մի քարտաշ: Ես իսկույն գնացի Շավանոն, բայց պարզվեց, որ Բարբերենը տվել է քեզ թափառաշրջիկ երաժիշտ Վիտալիսին, և որ դու նրա հետ թափառում ես Ֆրանսիայում: Քանի որ այլևս չէի կարող մնալ Ֆրանսիայում և որոնել Վիտալիսին, ապա այդ գործը հանձնարարեցի Բարբերենին և Փարիզ գնալու համար փող տվեցի նրան: Ես խնդրեցի նրան, հենց որ քեզ գտնի, անմիջապես հաղորդի այդ մասին «Գրես և Գելլի» գրասենյակին: Ես չէի կարող Բարբերենին տալ իմ Լոնդոնի հասցեն, որովհետև մեր ընտանիքն այստեղ ապրում է միայն ձմեռը: Մենք վաճառականներ ենք և տարվա տաք եղանակին սայլերով շրջում ենք Անգլիայում և Շոտլանդիայում: Ահա թե ինչպես պատահեց, որդիս, որ տասներեք տարի հետո դու կրկին վերադարձար քո ընտանիքը: Ես հասկանում եմ, որ դու մի քիչ վախեցած ես, մեզ չես ճանաչում, չես հասկանում այն լեզուն, որով մենք խոսում ենք այնպես, ինչպես մենք չենք հասկանում քեզ, բայց հուսով եմ, որ դու շուտով կընտելանաս:

Մինչև ես ուշադրությամբ լսում էի հորս պատմությունը, մայրս սեղան գցեց, դրեց երկնագույն ծաղիկներով ափսեները և մետաղյա սկուտեղ, որի վրա մի մեծ կտոր տավարի տապակած միս կար կարտոֆիլի հետ:

— Դուք, հավանաբար, շատ սոված եք, տղաներ,— հարցրեց հայրս՝ դիմելով ինձ ու Մատտիային:

Պատասխանի փոխարեն Մատտիան փայլեցրեց իր սպիտակ ատամները:

— Այսպես, ուրեմն սեղան նստենք,— ասաց հայրս:

Նախքան սեղան նստելը նա պապիկի բազկաթոռը մոտեցրեց սեղանին: Հետո մեջքը կրակին շրջելով՝ կտրատեց միսը և մեզնից յուրաքանչյուրին մեկական մեծ կտոր միս տվեց՝ կարտոֆիլի հետ միասին: Չնայած ես ոչ մի դաստիարակություն չէի ստացել, բայց և այնպես զարմացա, որ իմ եղբայրներն ու ավագ քույրը ձեռքով են ուտում. նրանք մատները թաթախում էին

թվայնացրել է 1915.info կայքը

թանձր հեղուկի մեջ ու լիզում էին, և ո՛չ հայրս, ո՛չ մայրս ուշադրություն չէին դարձնում այդ բանի վրա: Ինչ վերաբերում է պապիկին, ապա նա լիովին զբաղված էր ուտելով, և միակ ձեռքը, որը նա կարողանում էր շարժել, անդադար գնում-գալիս էր ափսեից դեպի բերանը: Եթե պատահում էր, որ նրա դողացող մատների միջից միսը ցած էր ընկնում, եղբայրներս ծիծաղում էին նրա վրա:

Ես կարծում էի, որ ընթրիքն ավարտելուց հետո ամբողջ ընտանիքով երեկոն կանցկացնենք բուխարիկի մոտ: Բայց հայրս ասաց, որ իր մոտ ընկերներ են գալու, և մենք պետք է պառկենք քնելու: Մոմը վերցնելով՝ նա ինձ ու Մատտիային ուղեկցեց ցախատունը, որը կից էր այն սենյակին, որտեղ մենք ընթրում էինք: Այնտեղ կանգնած էին երկու մեծ յայլակառք, որոնցով սովորաբար ճամփորդում են թափառաշրջիկ վաճառականները: Նա բացեց սայլակառքերից մեկի դռնակը, որը ուներ երկու պառկելատեղ:

— Ահա՛ ձեր անկողինները,— ասաց հայրս:— Հանգի՛ստ քնեք:

Այսպես դիմավորեց ինձ իմ ընտանիքը՝ Դրիսկոլների ընտանիքը:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 14

ԵՍ ՍԱՐՍԱՓՈՒՄ ԵՄ ԻՄ ԾՆՈՂՆԵՐԻՑ

Հեռանալիս հայրս մոմը թողեց, բայց դրսից կողպեց սայլակառքի դռնակը: Մեզ ուրիշ ոչինչ չէր մնում անելու, եթե ոչ պառկել ու քնել, և մենք այդպես էլ արեցինք, նույնիսկ առանց շատախոսելու միմյանց հետ, ինչպես սովոր էինք, և չհաղորդելով միմյանց օրվա տպավորությունները:

— Բարի գիշեր, Ռեմի,— ասաց Մատտիան:

— Բարի գիշեր, Մատտիա:

Մատտիան էլ, ինչպես ես, ցանկություն չուներ խոսելու, և դրա համար շատ ուրախ էի:

Եթե խոսել չէի ուզում, ապա քնել նույնպես չէի ուզում: Հանգցրի մոմը, բայց աչքիս քուն չէր գալիս, մտածում էի անցած օրվա իրադարձությունների մասին և շուռումուռ էի գալիս իմ նեղ անկողնում: Լսում էի՝ ինչպես է շարժվում Մատտիան, որի անկողինը իմ անկողնու վերևում էր, և հասկացա, որ նա էլ չի կարողանում քնել:

— Դու քնած չե՞ս,— շշուկով հարցրի ես:

— Քնած չեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հիվանդ ես:

— Ո՛չ, ես ինձ լավ եմ զգում: Միայն թե շուրջս ամեն ինչ ճոճվում է. կարծես դեռ ծովի վրա եմ:

Բայց արդյոք դա՞ էր խանգարում Մատտիայի քունը: Ավելի շուտ նրան անհանգստացնում էին նույն մտքերը, ինչ ինձ: Ես և նա շատ մտերիմ էինք. նա ջերմորեն սիրում էր ինձ, և հասկանալի է, որ չէր կարող անտարբեր մնալ իմ ճակատագրի հանդեպ:

Քունս չէր տանում, ժամանակն անցնում էր, բայց քանի որ մոտակայքում աշտարակի ժամացույց չկար, ապա ես չէի կարողանում որոշել, թե ժամը քանիսն էր:

Հանկարծ լսեցի, որ բավականին ուժեղ բախում են ցախատան այն դուռը, որը տանում էր փողոց: Բախում էին մի քանի անգամ որոշակի ընդմիջումներով, հետո մեր սայլակառքի մեջ լույս թափանցեց:

Դա ինձ շատ զարմացրեց, և ես արագ շուրջս նայեցի, իսկ Կապին, որը քնած էր ինձ մոտ, արթնացավ և զայրացած կլանչեց: Ես տեսա, որ լույսը թափանցում է մի փոքրիկ լուսամուտից, որը սայլակառքի նույն պատին էր, որտեղ մեր անկողիններն էին: Երբ պառկեցինք քնելու, ես այդ չէի նկատել, որովհետև լուսամուտի ներսի կողմից վարագուրված էր: Այդ լուսամուտի մի մասը Մատտիայի անկողնու գլխավերևում էր, իսկ մյուս կեսը՝ իմ: Վախենալով, որ Կապին չարթնացնի տան բոլոր բնակիչներին՝ ես նրա մոութը ձեռքով սեղմեցի և նայեցի, թե ինչ է կատարվում դրսում:

Ես տեսա, որ հայրս մտավ ցախատուն, հետո արագ և անաղմուկ բացեց փողոց տանող դուռը: Ապա նույնքան կամացուկ ծածկեց դուռը՝ ներս թողնելով երկու տղամարդու, որոնք բեռնված էին ծանր հակերով:

Հայրս, մատը շուրթերին դնելով, իսկ մյուս ձեռքով, որով բռնել էր գաղտնալապտերը, մատնացույց արեց մեր սայլակառքը: Դա հավանաբար նշանակում էր, որ պետք չէ աղմկել, որ մեզ չարթնացնեն: Նման ուշադրությունը հուզեց ինձ, և ես ուզում էի ձայն տալ նրան, որ քնած չեմ, բայց վախենալով, որ նա կբարկանա, լռեցի:

Հայրս երկու տղամարդկանց օգնեց հատակին գցելու հակերը, հետո դուրս եկավ և շուտով վերադարձավ մորս հետ: Նրա բացակայության ընթացքում մարդիկ բացեցին հակերը: Մեկի մեջ զանազան կտորեղենի փաթեթներ էին, մյուսում՝ գործվածքից կարված սպիտակեղեն, գուլպաներ, ձեռնոցներ: Հայրս վերցնում էր դրանք, լապտերի լույսով զննում և տալիս մորս,

թվայնացրել է 1915.info կայքը

իսկ վերջինս փոքրիկ մկրատով կտրում էր ապրանքանիշերը և դնում գրպանը:

Այդ բոլորն ինձ շատ տարօրինակ թվաց. տարօրինակ էր և ժամանակը, որ նրանք ընտրել էին ապրանք գնելու համար: Շարունակելով զննել ապրանքը՝ հայրս շշուկով խոսում էր հակերը բերող տղամարդկանց հետ: Անգլերեն չհասկանալով՝ ես հասկացա միայն մի քանի անգամ կրկնված «ոստիկանություն» բառը:

Երբ հակերի պարունակությունն ուշադրությամբ աչքի էր անցկացված, իմ ծնողները և երկու եկվորը դուրս եկան ցախատնից և մտան տուն, հավանաբար, որ ստանան իրենց վճարը: Սայլակառքում կրկին լռություն տիրեց:

Ես ինքս ինձ ասում էի, որ իմ տեսածի մեջ ոչ մի տարօրինակ բան չկա, բայց համոզել ինձ դրանում չէի կարողանում: Ինչո՞ւ իմ ծնողների մոտ եկած մարդիկ չմտան «Կարմիր առյուծի» բակը: Ինչո՞ւ էին ոստիկանության մասին շշուկով խոսում՝ վախենալով, որ իրենց կլսեն: Ինչո՞ւ էր իմ մայրը կտրում իրերի ապրանքանիշերը:

Այդ բոլոր հարցերն ինձ հանգիստ չէին տալիս, և պատասխան չգտնելով՝ իզուր էի ջանում հեռու քշել այդ մտքերը:

Որոշ ժամանակ անց սայլակառքի մեջ կրկին լույս թափանցեց, և ես նորից սկսեցի նայել ճեղքից: Ես ինքս ասում էի, որ լավ բան չեմ անում և միաժամանակ նայում էի. ես մտածում էի, որ լավ կլինի, եթե ես ոչինչ չիմանամ, բայց միաժամանակ ուզում էի իմանալ ամեն բան: Հիմա ծնողներս մենակ էին: Մինչ մայրս արագորեն կապկպում էր բերված ապրանքի հակերը,

թվայնացրել է 1915.info կայքը

հայրս ցախատան մի անկյունում սկսեց փորել ավազը: Հատակը ծածկող չոր ավազի տակ իջանցք բացվեց: Հայրս բարձրացրեց անցքը փակող կափարիչը և սկսեց հակերը ցած իջեցնել, իսկ մայրս այդ ժամանակ լապտերով լուսավորում էր: Հակերն իջեցնելով՝ հայրս բարձրացավ, փակեց իջանցքը և կրկին ծածկեց չոր ավազով: Երբ նա ավարտեց աշխատանքը, իջանցքի տեղը լիովին աննկատելի դարձավ: Հետո նրանք ավազի վրա լցրին ցախատան հատակին թափված ծղոտը և գնացին:

Երբ նրանք դուռը փակեցին և տուն մտան, ինձ թվաց, որ Մատտիան շարժվեց և գլուխն իջեցրեց բարձին: Արդյոք նա տեսա՞վ, թե ինչ կատարվեց այստեղ: Ես չհամարձակվեցի հարցնել նրան: Ես ոտքից գլուխ ծածկված էի սառը քրտինքով: Այդ վիճակում անցկացրի ամբողջ գիշերը: Աքլորի կանչը ասաց մեզ, որ լույսը բացվում է: Միայն այդ ժամանակ քնեցի, բայց քունս ծանր էր, անհանգիստ, լի սարսափելի մղձավանջով, որից շնչահեղձ էի լինում:

Ինձ արթնացրեց կողպեքի զրնգոցը: Մեր սայլակառքի դուռը բացվեց: Որոշելով, որ հայրս է եկել մեզ արթնացնելու, աչքերս փակեցի, որ չտեսնեմ նրան:

— Եղբայրդ դուռը բացեց,— ասաց Մատտիան,— նա արդեն գնաց:

Մենք վեր կացանք: Մատտիան խախտեց իր սովորությունը և ինձ չհարցրեց, թե լա՞վ եմ քնել արդյոք: Ես էլ իմ հերթին ոչ մի հարց չտվեցի նրան: Երբ նա նայեց ինձ, ես հայացքս փախցրի:

Մենք խոհանոց մտանք: Ո՛չ հայրս, ո՛չ մայրս այնտեղ չէին: Պապիկս առաջվա պես նստած էր կրակի առաջ՝ բազկաթոռին, կարծես այդպես էլ տեղից չէր շարժվել: Ավագ քույրս, որին կոչում էին Էննի, սեղանն էր սրբում, իսկ ավագ եղբայրս՝ Ալենը, ավլում էր սենյակը: Ես մոտեցա, որ բարի լույս մաղթեմ նրանց, բայց նրանք շարունակում էին իրենց աշխատանքը և չպատասխանեցին իմ բարևին: Այդ ժամանակ ես մոտեցա պապիս, բայց վերջինս, թույլ չտալով, որ ես մոտենամ, ինչպես որ արել էր նախորդ օրը, թքեց իմ կողմը, և ես տեղիցս չշարժվեցի:

— Իմացի՛ր, թե այսօր ժամը քանիսին կտեսնեմ ծնողներիս,— խնդրեցի Մատտիային:

Մատտիան կատարեց իմ խնդրանքը, և պապիկը, լսելով, որ անգլերեն են խոսում, մեղմացավ: Նրա դեմքը մի քիչ աշխուժացավ, և նա բարեհաճեց պատասխանել:

— Ինչ է ասում նա,— հարցրի ես:

թվայնացրել է 1915.info կայքը

— Քո հայրը գնացել է և ամբողջ օրը տուն չի գա, իսկ մայրդ քնած է, և մենք կարող ենք գնալ զբոսանքի:

— Ուրիշ ոչինչ չասա՞ց նա,— հարցրի ես՝ հասկանալով, որ Մատտիայի թարգմանությունն այնքան էլ ստույգ չէր:

Մատտիան շփոթվեց:

— Չգիտեմ, մնացածը ես լավ հասկացա՞ արդյոք:

— Ասա՛ ինձ, ինչ հասկացել ես:

— Նա ասաց, որ եթե մեզ որևէ հարմար բան հանդիպի, ձեռքից բաց չթողնենք, և հետո ավելացրեց. «Հիշի՛ր իմ խրատը: Պետք է ապրել հիմարների հաշվին»:

Հավանաբար պապը հասկացավ, որ Մատտիան հաղորդեց ինձ նրա բառերը, որովհետև առողջ ձեռքով այնպիսի շարժում արեց, կարծես ինչ–որ բան էր դնում գրպանը և աչքը կկոցեց:

— Գնա՛նք,— դիմեցի ես Մատտիային:

Երկու–երեք ժամ շարունակ մենք զբոսնում էինք «Կարմիր առյուծի» բակի մոտակայքում՝ չհամարձակվելով հեռու գնալ՝ վախենալով, որ կարող ենք մոլորվել: Ցերեկային լույսով Բեսնալ–Գրինը ինձ ավելի զզվելի թվաց, քան նախորդ օրը: Տների և մարդկանց վրա ծայրաստիճան աղքատության դրոշմ կար:

Ես ու Մատտիան լուռ զննեցինք ամեն ինչ, հետո հետ դարձանք և մտանք տուն:

Մայրս նստած էր սենյակում՝ գլուխը սեղանին դրած: Որոշելով, որ նա հիվանդ է, ես մոտ վազեցի, որ համբուրեմ նրան, որովհետև նրա հետ խոսել չէի կարող: Ես գրկեցի նրան: Նա գլուխը բարձրացրեց և անմիտ հայացքով նայեց ինձ: Նրանից օղու ուժեղ հոտ էր փչում: Ես ակամայից ընկրկեցի: Նա կրկին գլուխը սեղանին դրեց:

— Օղուց է,— ասաց պապիկը:

Նա ծաղրաբար նայեց ինձ և մի քանի բառ ասաց, որոնք ես չհասկացա: Ոչինչ չհասկանալով՝ մեխվել էի տեղումս: Մի քանի վայրկյան անց նայեցի Մատտիային: Նա նույնպես նայեց ինձ՝ արցունքով լի աչքերով:

Նրան նշան արեցի, և մենք դուրս եկանք:

Բավականին երկար ժամանակ քայլում էինք կողք կողքի՝ իրար ձեռք բռնած, ոչ մի բառ չարտասանելով, չիմանալով, թե ուր ենք գնում:

— Ո՞ւր ես գնում,— տագնապով հարցրեց Մատտիան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինքս էլ չգիտեմ մի որևէ տեղ, որտեղ կարող ենք խոսել: Ես այնքան բան ունեմ քեզ ասելու, իսկ այստեղ, ուր այսքան շատ մարդիկ կան, դա հնարավոր չէ:

Այդ ժամանակ մենք դուրս եկանք ավելի լայն մի փողոց, և ինձ թվաց, որ այդ փողոցի ծայրում ծառեր եմ տեսնում: Մենք ուղղվեցինք այնտեղ: Պարզվեց, որ հսկայական այգի է՝ մեծ կանաչ մարգագետիններով և մատղաշ ծառերի անտառակներով: Մեր խոսակցության համար դժվար թե ավելի լավ տեղ լիներ:

— Գիտես, սիրելի՛ Մատտիա, թե որքան եմ սիրում քեզ,— դիմեցի ընկերոջս, հենց որ մենք նստեցինք անդորր մի անկյունում,— և գիտես նույնպես, որ սիրուց դրդված՝ խնդրեցի, որ ուղեկցես ինձ Լոնդոն, և դրա համար վստահ եմ, որ դու չես կասկածի իմ բարեկամության վրա, ինչ էլ քեզնից խնդրելու լինեմ:

— Ինչ հիմարն ես,— փորձելով ժպտալ՝ պատասխանեց Մատտիան:

— Դու ծիծաղում ես, որ ես լաց չլինեմ, բայց իզուր. ո՛ւմ հետ կարող եմ լաց լինել, եթե ոչ քեզ հետ:

Եվ նրա գիրկը նետվելով՝ ես լաց եղա: Նույնիսկ այն ժամանակ, երբ ես բոլորովին մենակ էի, ինձ այսքան դժբախտ չէի զգացել: Լաց լինելով, սիրտս թեթևացնելով՝ աշխատեցի հանգստանալ: Ես Մատտիային այս այգին էի բերել ո՛չ իմ ճակատագրից գանգատվելու համար. մտածում էի ոչ թե իմ մասին, այլ նրա:

— Մա՛տտիա,— ասացի ես,— դու պետք է վերադառնաս Ֆրանսիա:

— Բաժանվել քեզնի՞ց: Երբեք:

— Ես նախապես գիտեի, որ դու այդպես կպատասխանես: Բայց մենք պետք է բաժանվենք: Գնա՛ Ֆրանսիա կամ Իտալիա, միևնույնն է, թե ուր, միայն թե Անգլիայում մի՛ մնա:

— Իսկ դո՞ւ: Դու ի՞նչ ես անելու:

— Ե՛ս: Ես կմնամ Լոնդոնում, որովհետև պետք է ապրեմ իմ ծնողների հետ: Վերցրո՛ւ ամբողջ փողը, որքան ունենք, և գնա:

— Այդպես մի՛ ասա, Ռե՛մի: Եթե մեզնից որևէ մեկը պետք է հեռանա այստեղից, ապա նախ և առաջ՝ դու:

— Ինչո՞ւ ես:

— Որովհետև…

Նա լռեց և դեմքը շրջեց իմ հարցական հայացքից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մա՛տտիա, պատասխանի՛ր ինձ անկեղծ և ճշմարտացիորեն՝ չվախենալով վշտացնել ինձ. դու այս գիշեր քնած չէի՛ր, դու տեսա՛ր:

Աչքերը չբարձրացնելով՝ նա խուլ ձայնով ասաց.

— Ես քնած չէի:

— Ի՞նչ տեսար:

— Ամեն բան:

— Եվ ի՞նչ որոշեցիր:

— Որ դա ոչ թե գնված ապրանք էր, այլ գողացված: Հայրդ նախատում էր եկվորներին, որ բախել են ոչ թե տան դուռը, այլ խորդանոցի: Եկվորները նրան պատասխանեցին, որ ոստիկանը հետևում էր իրենց:

— Դու ինքդ էլ տեսնում ես, որ անհրաժեշտ է գնալ այստեղից:

— Եթե ես պետք է հեռանամ, ապա դու՝ նույնպես: Դա հավասարապես անհրաժեշտ է երկուսիս համար:

— Լսի՛ր, դու ինձ հասկացի՛ր և ավելի մեծ վիշտ մի՛ պատճառիր. եթե Փարիզում մենք հանդիպեինք Գարաֆոլիին, և նա քեզ վերցներ իր մոտ, մի՞թե դու կցանկանայիր, որ ես էլ քեզ մոտ մնայի: Դու, անկասկած, կասեիր ինձ նույնը, ինչ ես հիմա ասում եմ քեզ:

Մատտիան լռում էր:

— Մի՞թե այդպես չէ, ասա՛ ինձ:

— Գուցե դու վախենում ես, որ ես էլ կսկսեմ գողացված ապրանքանիշերը կտրել:

— Լռի՛ր, Մա՛տտիա, լռի՛ր, իմ սիրելի՛ Մատտիա:

Եվ ձեռքերով ծածկեցի ամոթից կարմրած դեմքս:

— Դե՛հ, ի՞նչ արած: Եթե դու վախենում ես ինձ համար,— շարունակեց Մատտիան,— ապա ես էլ վախենում եմ քեզ համար և այդ պատճառով էլ ասում եմ. գնա՛նք միասին, վերադառնանք Ֆրանսիա՝ Բարբերեն մայրիկի մոտ՝ Լիզայի և քո բարեկամների մոտ:

— Դու կարող ես գնալ, իսկ ես՝ ոչ: Սրանք իմ ծնողներն են, և ես պարտավոր եմ մնալ նրանց հետ:

— Քո ծնողնե՞րն են: Այդ կաթվածահար եղած ծերուկը քո պա՞պն է: Սեղանին փռված այդ կինը քո մա՞յրն է:

— Մա՛տտիա, ես քեզ արգելում եմ այդպես խոսել: Չէ՞ որ դու խոսում ես իմ մոր և պապի մասին: Ես պետք է հարգեմ և սիրեմ նրանց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո՛, եթե նրանք իսկապես քո ծնողներն են: Բայց եթե նրանք քո ծնողները չեն, և եթե նա ամենևին էլ քո պապը չէ. միթե այդ դեպքում էլ ես պարտավոր հարգել ու սիրել նրանց:

— Բայց չէ՞ որ դու լսեցիր հորս պատմածը:

— Նրա պատմածը բոլորովին էլ ոչինչ չի ապացուցում: Նրանք կորցրել են քո հասակի մի երեխա, սկսել են փնտրել և գտել են համապատասխան տարիքի տղա: Ահա՛ և բոլորը:

— Դու մոռանում ես, որ նրանց երեխան նետված է եղել Փարիզում հենց նույն օրը, երբ Բարբերենը գտել է ինձ:

— Իսկ ինչո՞ւ չէին կարող նույն օրը երկու երեխա նետել միևնույն փողոցը: Միթե Դրիսկոլին Շավանոն ուղարկելով՝ ոստիկանապետը չէր կարող սխալված լինել: Չէ՞ որ կարող էր և այդպես լինել:

— Ո՛չ, դա հիմարություն է:

— Հնարավոր է, որ ես պատմում ու բացատրում եմ շատ անկապ: Մեկ ուրիշն իմ փոխարեն, հավանաբար, կբացատրեր շատ ավելի լավ ու հասկանալի:

— Ո՛չ, հարցը դա չէ:

— Վերջապես ուշադրությո՛ւն դարձրու այն բանին, որ դու բոլորովին նման չես ո՛չ հորդ, ո՛չ մորդ. քո մազերը թուխ են, իսկ եղբայրներդ ու քույրերդ, ուշադրությո՛ւն դարձրու, բոլորն էլ շիկահեր են: Եվ մի տարօրինակ բան էլ. այսպիսի աղքատ մարդիկ որտեղի՞ց կարող էին այդքան փող գտնել իրենց երեխային որոնելու համար: Այդ բոլորը ստիպում են ինձ մտածել, որ դու Դրիսկոլ չես. ես շատ լավ գիտեմ, որ հիմար եմ. ինձ միշտ ասել են այդ: Ինչ արած, եթե ես այդպիսին եմ, բայց դու Դրիսկոլ չես և չպետք է մնաս Դրիսկոլների մոտ: Իսկ եթե, չնայած այդ ամենին, դու որոշել ես նրանց հետ ապրել, ես կմնամ քեզ հետ: Բայց հարկավոր է, որ մենք հենց հիմա նամակ գրենք Բարբերեն մայրիկին և խնդրենք, որ նա ստույգ նկարագրի այն շորերը, որոնցով գտել են քեզ: Մենք պատասխանը կստանանք, դու այդ մասին կհարցնես հորդ, և այն ժամանակ գուցե որևէ բան պարզվի: Մինչ այդ ես ոչ մի տեղ չեմ գնա և կմնամ քեզ հետ: Եթե ստիպված լինենք աշխատել, կաշխատենք միասին:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 15

ԿԱՊԻՆ ԳՈՂ Է ԴԱՌՆՈՒՄ

Մենք տուն վերադարձանք միայն գիշերով: Ամբողջ օրը մենք անցկացրինք այգում, նախաճաշին մի կտոր հաց կերանք միայն: Հայրս տանն էր, իսկ մայրս արդեն կարողանում էր հաստատուն կանգնել ոտքերի վրա: Ո՛չ հայրս, ո՛չ էլ մայրս նկատողություն չարեցին մեզ երկարատև բացակայության համար:

Ընթրիքից հետո հայրս ասաց, որ պետք է խոսի երկուսիս հետ և դրա համար կանչեց մեզ բուխարիկի մոտ, իսկ պապս, որը կատաղորեն պահպանում էր իր տեղն օջախի մոտ, դժգոհությամբ փնթփնթաց.

— Պատմեք ինձ, թե ինչպես էիք փող վաստակում Ֆրանսիայում,— խնդրեց հայրս:

Ես պատասխանեցի նրան հետաքրքրող հարցին:

— Ուրեմն դուք երբեք չե՞ք վախեցել, որ կմեռնեք սովից:

— Երբեք: Մենք ոչ միայն ապրուստի փող էինք վաստակում, այլև կարողացանք կով գնել,— ավելացրեց Մատտիան և պատմեց, թե ինչպես մենք Բարբերեն մայրիկի համար կով գնեցինք:

— Դուք հավանաբար շատ տաղանդավոր եք: Ապա ցո՛ւյց տվեք, թե ինչ գիտեք:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես վերցրի տավիղս և մի եղանակ նվագեցի, միայն թե, իհարկե, ոչ իմ սիրելի նեապոլյան երգը:

— Շատ լավ,— ասաց հայրս,— իսկ ի՞նչ գիտի անել Մատտիան:

Մատտիան էլ մի եղանակ նվագեց ջութակի վրա, հետո՝ կոռնետապիստոնի: Վերջինս արժանացավ երեխաների աղմկալի ծափահարություններին, որոնք շրջապատել էին մեզ:

— Կապի՞ն,— հարցրեց հայրս:— Ի՞նչ գիտի անել Կապին: Չեմ կարծում, որ դուք սեփական հաճույքի համար եք հետևներիցդ քարշ տալիս այդ շանը: Նա հավանաբար նույնպես կարող է կերակրել ինքն իրեն:

Ես շատ էի հպարտանում Կապիի տաղանդով և հաճույքով ստիպեցի նրան ցույց տալ մի քանի հետաքրքիր շարժում: Կապին, ինչպես միշտ, երեխաների մոտ մեծ հաջողություն ունեցավ:

— Խելոք շուն է, իսկական գանձ,— հայտարարեց հայրս:

Բայց Կապին, հավանաբար, ամենևին չհպարտացավ նրա գովեստից:

— Եթե գործերն այդպիսին են,— շարունակեց հայրս,— ապա ես առաջարկում եմ հետևյալը... Բայց նախ և առաջ Մատտիան պետք է որոշի, թե ինքը համաձա՞յն է արդյոք մնալ Անգլիայում և ցանկանո՞ւմ է ապրել մեզ հետ:

— Ես ուզում եմ մնալ Ռեմիի հետ,— պատասխանեց Մատտիան,— և ուր էլ որ նա գնալու լինի, կգնամ նրա հետևից:

Հայրս, իհարկե, գլխի չընկավ, թե ինչ էին նշանակում Մատտիայի բառերը, և գոհ մնաց նրա պատասխանից:

— Այդ դեպքում կրկնում եմ իմ առաջարկը: Մենք հարուստ չենք, և բոլորս էլ ստիպված ենք աշխատել: Ամառը մենք ճամփորդում ենք Անգլիայում, և երեխաներն իմ ապրանքներն առաջարկում են նրանց, ովքեր ծույլ են, և իրենք չեն ցանկանում գնալ գնումների: Ձմեռը սովորաբար մենք համարյա թե աշխատանք չենք ունենում: Հիմա քանի դեռ ապրում ենք Լոնդոնում, Ռեմին և Մատտիան կարող են նվագել փողոցներում, և ես չեմ կասկածում, որ նրանք լավ կվաստակեն, նամանավանդ երբ վրա հասնեն Ծննդյան տոները: Բայց շատ ավելի ձեռնտու կլինի, եթե Կապին ներկայացումներ տա Ալենի և Նեդի հետ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կապին սովորել է ելույթ ունենալ միայն ինձ հետ,— իսկույն առարկեցի ես, որովհետև ոչ մի դեպքում չէի ցանկանում բաժանվել Կապիից:

— Մի՛ անհանգստանա, նա կսովորի աշխատել նաև Ալենի ու Նեդի հետ, իսկ երկու խմբի բաժանվելով՝ դուք ավելի շատ կվաստակեք:

— Հավատացնում եմ, որ առանց ինձ Կապին ոչինչ չի կարող անել, իսկ իմ և Մատտիայի վաստակը կպակասի: Կապիի հետ մենք շատ ավելի կվաստակենք:

— Լռի՛ր,— ընդհատեց ինձ հայրս:— Իմ ասածն օրենք է բոլորի համար: Այդպիսին է մեր տան կարգը: Դու պետք է հաշվի նստես այնպես, ինչպես և մյուսները:

Ես հասկացա, որ առարկելն անօգուտ է, և լռեցի: Բայց ինքս ինձ մտածեցի, որ Կապիի համար էլ նույնպես լավ չեղավ: Մեզ կբաժանեն: Դա մեծ վիշտ էր և՛ ինձ, և՛ Կապիի համար:

Մենք կրկին գնացինք՝ սայլակառքում քնելու:

Բայց այդ գիշեր հայրս արդեն չկողպեց դուռը:

Հետևյալ օրը ստիպված էինք առավոտից զբաղվել Կապիով: Քնքշորեն շոյելով՝ ձեռքս առա նրան և քիթը համբուրելով՝ բացատրեցի, թե ինչ է պահանջվում նրանից: Խեղճ շնիկ, ինչպես էր նայում ինձ և ինչպիսի ուշադրությամբ լսում: Կապիի վզնոցը Ալենի ձեռքը տալով՝ ես կրկին խրատներ կարդացի, բայց Կապին այնքան խելոք էր և հնազանդ, որ չնայած տխրությամբ, բայց առանց դիմադրելու գնաց եղբայրներիս հետևից:

Հայրս ինքը ցանկացավ տանել ինձ ու Մատտիային այնպիսի թաղամաս, որտեղ մենք կարողանայինք լավ վաստակել: Մենք կտրեցինք–անցանք ամբողջ Լոնդոնը և հայտնվեցինք քաղաքի այն մասում, որտեղ լայն փողոցներ ու գեղեցիկ այգիներով շրջապատված հարուստ տներ կային:

Այդ հոյակապ փողոցներում սոված, ցնցոտիապատ աղքատներ չէին երևում, այստեղ զբոսնում էին վառ զգեստներ հագած տիկնայք, ընթանում էին հայելու պես շողշողուն կառքերը՝ հրաշալի ձիերով, որ վարում էին օծված մազերով կառապանները:

թվայնացրել է 1915.info կայքը

Մենք ուշ վերադարձանք «Կարմիր առյուծի» բակը, և ես ուրախացա՝ տեսնելով Կապիին, որը չնայած ցեխոտված էր, բայց կայտառ էր: Չոր ծղոտով նրան լավ մաքրելով և ոչխարի մորթու մեջ փաթաթելով՝ պառկեցրի իմ կողքին քնելու: Երկուսից ո՞վ էր ավելի երջանիկ. դժվար է ասել:

Այդպես շարունակվեց որոշ ժամանակ: Մենք գնում էինք վաղ առավոտյան և վերադառնում ուշ երեկոյան՝ նվագելով մերթ այս, մերթ այն թաղամասում: Կապին այդ ժամանակ ներկայացումներ էր տալիս Ալենի և Նեդի ղեկավարությամբ:

Բայց մի անգամ երեկոյան հայրս հայտարարեց, որ ես կարող եմ Կապիին տանել ինձ հետ, քանի որ Ալենն ու Նեդը տանն են մնալու:

Ես և Մատտիան շատ գոհ էինք և որոշեցինք հնարավորինս շատ վաստակել, որպեսզի սրանից հետո Կապիին միշտ ուղարկեն մեզ հետ:

Մենք ցանկանում էինք հետ խլել Կապիին և դրա համար պատրաստ էինք ամեն տեսակ զոհաբերությունների:

Դժբախտաբար, մեր նախաձեռնության հաջողությանը խանգարում էր մառախուղը, որը երկու օր էր չէր ցրվում: Երկինքը, կամ այն, ինչ Լոնդոնում երկինք է կոչվում, նարնջագույն շոգու խտացած ամպ էր, իսկ փողոցներում կախված էր գորշ մառախուղ, որը խանգարում էր մի քանի քայլի վրա նույնիսկ որևէ բան տեսնելու: Անցորդներ քիչ կային, իսկ լուսամուտներից մեզ լսողները չէին կարող տեսնել Կապիին: Լավ վաստակելու համար դրանք վատ պայմաններ էին, և Մատտիան անիծում էր մառախուղը՝ չենթադրելով, թե մի քանի րոպե անց դա ինչպիսի ծառայություն է մատուցելու մեզ:

Մենք քայլում էինք արագ, Կապին վազում էր մեր հետևից: Ժամանակ առ ժամանակ ես ձայն էի տալիս նրան, և դա Կապիի համար նույնն էր, թե ես տանեի նրան՝ վզնոցից բռնած:

Շուտով մենք հասանք Հոլբորն՝ Լոնդոնի ամենամարդաշատ առևտրական փողոցներից մեկը: Հանկարծ նկատեցի, որ Կապին անհայտացավ: Ո՞ւր կորավ նա: Ես կանգ առա ծառուղիներից մեկում և կամացուկ սուլեցի՝ վախենալով, որ նա հեռվից ինձ չի տեսնի: Ես արդեն մտածեցի, որ նրան գողացել են, երբ հանկարծ Կապին մոտ վազեց՝ պոչը խաղացնելով, ատամներով մի զույգ բրդյա գուլպա բռնած: Առջևի թաթերը վրաս դնելով՝ նա գուլպան մեկնեց ինձ: Կապին այնպիսի հաղթական տեսք ուներ, կարծես հաջողությամբ կատարած լիներ իր ամենադժվարին աճպարարություններից մեկը և հիմա սպասում էր իմ հավանությանը: Այդ ամենը տեղի ունեցավ մի քանի վայրկյանում, և ես դեռ զարմացած կանգնած էի: Հանկարծ Մատտիան ձեռքիցս խլեց գուլպան և քարշ տվեց ինձ դեպի ծառուղին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Արագ գնանք, բայց չվազենք:

Մի քանի րոպե անց նա ինձ բացատրեց, թե ինչ է պատահել: Ես էլ էի զարմացած և չգիտեի, թե որտեղից հայտնվեց այդ գուլպան, երբ հանկարծ լսեցի ինչ–որ մեկի ձայնը. «Ո՞ւր է այդ գողը»: Իսկ գողը մեր Կապին էր, և եթե մառախուղ չլիներ, երկուսիս էլ հիմա ձերբակալած կլինեին գողության համար:

Ես շատ լավ հասկացա ամեն ինչ, և զայրույթը խեղդում էր ինձ: Նրանք գող են դարձրել մեր բարի, ազնիվ Կապիին:

— Տուն վերադառնանք,— ասացի ես Մատտիային:— Բռնի՛ր Կապիի վզնոցը:

Մատտիան ոչինչ չպատասխանեց, և մենք արագ քայլեցինք դեպի «Կարմիր առյուծի» բակը:

Հայրս, մայրս ու երեխաները նստած էին սեղանի շուրջը և կտորեղեն էին դասավորում: Ես գուլպան սեղանին շպրտեցի՝ դրանով հարուցելով Ալենի և Նեդի ծիծաղը:

— Ահա: Սա գողացել է Կապին, որովհետև նրան գողություն են սովորեցրել: Կարծում եմ՝ կատակի համար է արել:

Այդ բառերն արտասանելիս ես ամբողջ մարմնով դողում էի, բայց հաստատ որոշեցի արտահայտվել:

— Իսկ եթե դա կատակով չէ՛,— հարցրեց հայրս:— Ասա՛, խնդրեմ, այդ դեպքում ի՞նչ կանես:

— Վզից պարան կկապեմ և Թեմզայում կխեղդեմ, չնայած շատ եմ սիրում նրան: Ես չեմ ցանկանում, որ Կապին գող լինի ճիշտ այնպես, ինչպես ինքս չեմ ցանկանում գող դառնալ: Եթե ես իմանայի, որ այդպիսի բան կարող է պատահել, ապա կգերադասեի խեղդվել Կապիի հետ միասին:

Հայրս նայեց ուղիղ դեմքիս և այնպիսի շարժում արեց, կարծես ցանկանում էր ինձ սպանել. նրա աչքերն այրվում էին զայրույթից: Բայց ես հայացքս չխոնարհեցի: Զարհուրանքից ծռմռված նրա դեմքը հետզհետե իր սովորական արտահայտությունը ստացավ:

— Դու իրավացի ես. դա հիմար կատակ է,— ասաց նա,— և որպեսզի դա այլևս չկրկնվի, այսուհետև Կապին կգա միայն քեզ հետ:

Գլուխ 16

ԽԱԲՎԱԾ ՀՈՒՅՍԵՐ

Մտերմանալու իմ բոլոր ջանքերին Ալենը և Նեդը պատասխանում էին չարությամբ ու ատելությամբ. ինչ էլ փորձում էի անել նրանց համար, ոչինչ դուր չէր գալիս նրանց: Նրանք բացահայտ կերպով ինձ իրենց եղբայրը չէին համարում: Կապիի հետ պատահած դեպքից հետո մեր հարաբերությունները բոլորովին փչացան, որովհետև ես նրանց հասկացրի. ոչ թե, իհարկե, բառերով, որովհետև ես չէի կարողանում ազատ բացատրվել անգլերեն, այլ արտահայտիչ շարժումների օգնությամբ, ուր գլխավոր դերը կատարում էին բռունցքները, որ եթե նրանք փորձեն որևէ բան անել Կապիին, ես կկարողանամ պաշտպանել նրան և վրեժ լուծել:

Եղբայրներիս կողմից սիրված չլինելով՝ փորձում էի շահել քույրերիս համակրանքը: Բայց Էննին իմ նկատմամբ նույնքան անբարյացակամ էր, որքան և եղբայրներս: Օր չէր լինում, որ նա իմ գլխին որևէ խաղ չխաղար, և պետք է ասեմ, որ նա չափազանց հնարամիտն էր:

Մնում էր միայն փոքրիկ Կետը: Նա ընդամենը երեք տարեկան էր և այդ պատճառով դեռևս չէր կարող գործել բոլորի հետ մեկտեղ: Նա թույլ էր տալիս, որ ես փաղաքշեմ իրեն, նախ որովհետև ես ստիպում էի Կապիին զանազան հետաքրքիր հնարքներ անել նրա համար և, բացի այդ,

թվայնացրել է 1915.info կայքը

քաղցրավենիք էի բերում, որը ներկայացման ժամանակ նվիրում էին մեզ հարուստ երեխաները՝ հանդիսավորությամբ հայտարարելով՝ «Շան համար»: Ես շնորհակալությամբ էի ընդունում այդ քաղցրավենիքը, որովհետև դա ինձ հնարավորություն էր տալիս պահպանելու փոքրիկ Կետի բարեհաճ վերաբերմունքը:

Եվ այսպես, ողջ ընտանիքից, այն ընտանիքից, որի նկատմամբ Անգլիա գալու ժամանակ ես այնպիսի քնքշանք էի տածում, միայն Կետն էր, որ ինձ թույլ էր տալիս իրեն սիրել: Պապս շարունակում էր ամեն անգամ կատաղորեն թքոտել, երբ մոտենում էի նրան: Հայրս իմ մասին մտաբերում էր միայն երեկոյան՝ մեր հավաքած փողն ընդունելիս: Մայրս մեծ մասամբ հարբած էր լինում: Ինչպիսի՛ դառը հուսախաբություն:

Մատտիան շատ լավ էր կռահում իմ տխուր մտքերը և դրանց պատճառը: Այդպիսի րոպեներին նա կարծես, ինքնիրեն խոսելով, ասում էր.

— Գոնե շուտ ստանայինք Բարբերեն մայրիկի պատասխանը:

Մենք խնդրել էինք, որ մայրիկը նամակն ուղարկի ցպահանջ, և դրա համար ամեն օր մտնում էինք կենտրոնական փոստը: Եվ ահա վերջապես մենք ստացանք այդ երկար սպասված նամակը:

Կենտրոնական փոստն այնքան էլ հարմար տեղ չէր նամակը ընթերցելու համար: Մենք դուրս եկանք փողոց, որ մի քիչ հանգստանանք, և այնտեղ բացեցի մայրիկի նամակը, ավելի ճիշտ այն նամակը, որը գրված էր նրա խնդրանքով, քանի որ ինքը գրել չգիտեր:

«Թանկագի՛ն Ռեմի

Դու խնդրում ես հայտնել, թե ինչպիսին էին բարուրի շորերը, որոնցով դու փաթաթված էիր: Ես առանց դժվարության կարող եմ այդ անել, որովհետև խնամքով պահել եմ քո բոլոր իրերը՝ մտածելով, որ դրանք պետք կգան, եթե մի օր ծնողներդ փնտրելու լինեն քեզ:

Նախ և առաջ պետք է ասեմ, որ իսկական բարուրի շորեր դու չունեիր: Ես քեզ այդպես եմ ասել ըստ սովորության, որովհետև մեր երեխաները միշտ բարուրված են լինում: Իսկ դու ոչ թե բարուրված էիր, այլ հագնված: Ահա թե ինչ շորեր կային հագիդ. գեղեցիկ ժանեկազարդ գլխանոց, նուրբ կտավե, եզրերն ասեղնագործած շապիկ, ֆլանելի վերմակ, սպիտակ բրդյա գուլպաներ, հյուսված ծոպավոր ոտնամաններ, սպիտակ ֆլանելի երկար շոր և վերջապես երկար մուշտակ՝ գեղեցիկ ասեղնագործած սպիտակ քիշմիրի վեղարով:

թվայնացրել է 1915.info կայքը

Կտավի փաթաթաններ դու չունեիր, որովհետև ոստիկանապետի մոտ այն փոխարինել էին հասարակ անձեռոցիկով: Պետք է ավելացնեմ, որ այդ իրերից ոչ մեկը անվանանիշ չուներ, իսկ ֆլանելի վերմակը և շապիկը երևի նիշ ունեցել էին, բայց այն անկյունները, որտեղ սովորաբար դրվում է նիշը, կտրված էին՝ հավանաբար որոնումները դժվարացնելու համար: Ահա այն բոլորը, ինչ ես կարող եմ հաղորդել քեզ, թանկագի՛ն Ռեմի: Եթե դու կարծում ես, որ այդ իրերը կարող են քեզ պետք գալ, գրի՛ր, և ես կուղարկեմ դրանք:

Ուրախությամբ հաղորդում եմ, որ մեր կովը լիովին առողջ է: Նա առաջվա պես շատ կաթ է տալիս, և նրա շնորհիվ ապրում եմ ապահով: Երբ նայում եմ նրան, ապա միշտ հիշում եմ քեզ և քո բարի ընկերոջը՝ փոքրիկ Մատտիային:

Ես շատ ուրախ կլինեմ, եթե քեզնից լուր ստանամ և հույս ունեմ, որ կստանամ լավ լուր: Դու այնքան քնքուշ ու բարի տղա ես, որ չես կարող երջանիկ չլինել քո ընտանիքում: Հայրդ, մայրդ, եղբայրներդ ու քույրերդ՝ բոլորն էլ, անկասկած, կսիրեն քեզ այնքան, որքան դու արժանի ես:

Մնաս բարո՛վ, թանկագի՛ն զավակս, սրտագին համբուրում եմ քեզ:

Քո ստնտու, այրի Բարբերեն»:

«Սիրելի Բարբերե՛ն մայրիկ,— տխրորեն մտածեցի ես,— որքան բարի է նա իմ նկատմամբ: Նա սիրում է ինձ, և նրան թվում է, որ բոլորն էլ պետք է սիրեն ինձ այնպես, ինչպես ինքը»:

— Ինչ լավ կին է,— ասաց Մատտիան.— նա իմ մասին էլ է հիշել: Բայց եթե նա ինձ նույնիսկ մոռացած էլ լիներ, ես համենայն դեպս շատ շնորհակալ կլինեի նամակի համար: Այստեղ ամեն բան այնքան մանրամասն է նկարագրված, որ պարոն Դրիսկոլը պետք է զգույշ լինի, որ քո հագին եղած հագուստը թվարկելիս չսխալվի:

— Նա կարող է մոռացած լինել, թե իմ հագին ինչ է եղել:

— Չի կարելի մոռանալ կորած երեխայի հագուստը, երբ այդ հագուստով հույս ունես գտնելու նրան:

Ինձ համար շատ դժվար էր հարցնել հորս, թե ինչպես էի հագնված եղել այն օրը, երբ ինձ գողացել էին: Եթե ես այդ հարցը տայի առանց որևէ հետին մտքի, ամեն բան հեշտ կլիներ, բայց մեր գաղտնի մտադրությունը ամաչկոտ ու երկչոտ էր դարձնում ինձ:

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց ահա մի անգամ, երբ սառը անձրևը սովորականից շուտ ստիպեց մեզ տուն վերադառնալ, ես սիրտ առա և խոսք բացեցի ինձ տանջող ու վախեցնող հարցի մասին:

Իմ առաջին բառերը լսելով՝ հայրս շեշտակի նայեց դեմքիս, ինչպես անում էր սովորաբար, երբ իմ ասածը կպչում էր նրա սրտին: Բայց նրա հայացքն այնքան էլ չազդեց ինձ վրա, որքան ենթադրում էի: Հայրս իսկույն զսպեց իր զայրույթը և ժպտաց: Ճիշտ է, այդ ժպիտի մեջ ինչ–որ դաժան բան կար, բայց և այնպես նա ժպտաց:

— Իմ որոնումների մեջ ինձ ամենից շատ օգնեց այն, որ ես կարողանում էի ստույգ նկարագրել, թե ինչ հագուստ կար քո հագին,— ասաց նա:— Ժանեկազարդ գլխանոց, կտավի ասեղնագործ շապիկ, ֆլանելի հագուստ, բրդյա գուլպաներ, հյուսված ոտնամաններ, ասեղնագործված վեղարով սպիտակ մուշտակ: Ես շատ մեծ հույս էի կապել «Ֆ. Դ.» նիշի վրա, որը նշանակում էր Ֆրենսիս Դրիսկոլ: Բայց նիշերը մտածված կտրել էր այն կինը, որը քեզ գողացել էր. նա մտածում էր, որ դա կարգելի գտնել քեզ: Ստիպված եղանք ներկայացնել քո կնքման վկայագիրը, որը վերադարձրին ինձ, և որը հիմա ինձ մոտ է:

Եվ նա արտակարգ պատրաստակամությամբ սկսեց քրքրել արկղը, հետո մեկնեց ինձ դրոշմված մի թուղթ:

— Եթե թույլ տաք, Մատտիան դա կթարգմանի ինձ համար:

— Հաճույքով թույլատրում եմ:

Մատտիայի կցկտուր թարգմանությունից ես իմացա, որ ծնվել եմ հինգշաբթի՝ օգոստոսի 2–ին, և Պատրիկ Դրիսկոլի ու նրա կնոջ՝ Մարգարիտ Գրենժի որդին եմ:

Էլ ինչ ապացույցներ կարող էի պահանջել:

Բայց չնայած դրան՝ Մատտիան հավանաբար դրանով չբավարարվեց: Երեկոյան, երբ մենք գնացինք մեր կառասայլը, նա կրկին շրթունքները հպեց ականջիս, ինչպես այդ անում էր միշտ, երբ պետք էր որևէ գաղտնի բան հաղորդեր, և շշնջաց.

— Ուզո՞ւմ ես՝ քեզ մի բան ասեմ, որ ինձ հանգիստ չի տալիս: Դու պարոն Դրիսկոլի որդին չես. նա քեզ գողացել է:

Ես ցանկանում էի առարկել, բայց Մատտիան արդեն բարձրացել էր իր քնելու տեղը: Եթե ես Մատտիայի տեղը լինեի, ապա նրա նման ազատություն կտայի երևակայությանս, բայց ես այդ անել չէի կարող, քանի որ խոսքը վերաբերում էր իմ հորը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչը կարող է ավելի սարսափելի լինել, քան կասկածանքը: Իսկ ինձ ամեն ինչ կասկածելի էր թվում, չնայած կասկածել չէի ցանկանում: Արդյոք այդ մարդն իմ հայրն էր: Արդյոք այդ կինն իմ մայրն էր: Եվ այդ ընտանիքը իմ ընտանիքն էր:

Կարոհղ էի արդյոք ենթադրել, որ երբևէ դառնորեն լաց եմ լինելու այն բանի համար, որ ընտանիք ունեմ:

Ինչպես իմանալ ճշմարտությունը: Ես ի վիճակի չէի պարզելու ինձ տանջող հարցերը:

Սիրտս անչափ ծանրացած էր, բայց չնայած դրան՝ ստիպված էի երգել, ուրախ պարեղանակներ նվագել, ծիծաղել և խեղկատակություն անել: Ինձ համար լավագույն օրը կիրակին էր, որովհետև կիրակի օրերը Լոնդոնի փողոցներում արգելվում էր նվագել, և ես կարող էի զբոսնել Մատտիայի ու Կապիի հետ և հանձնվել տխուր մտքերիս:

Ես հիմա քիչ էի նմանվում այն տղային, ինչպիսին էի դեռևս մի քանի ամիս առաջ:

Մի կիրակի, երբ ես պատրաստվում էի Մատտիայի հետ գնալու զբոսանքի, հայրս կանգնեցրեց ինձ՝ ասելով, որ ես պետք է նրան և Մատտիային մենակ ուղարկեմ զբոսնելու: Պապիկս իր սենյակում էր, մայրս Էննիի և Կետի հետ ինչ–որ տեղ էր գնացել, իսկ եղբայրներս վազվզում էին փողոցում: Տանը մնացել էինք միայն հայրս ու ես: Մոտ մի ժամ մենք մենակ էինք, իսկ հետո դուռը բախեցին: Հայրս գնաց դուռը բացելու և վերադարձավ մի մարդու ուղեկցությամբ, որը բոլորովին նման չէր նրա սովորական այցելուներին: Դա լավ հագնված մի պարոն էր՝ դեմքի գոռոզ և օտար արտահայտությամբ: Արտաքուստ նա կլիներ մոտ հիսուն տարեկան: Ամենից շատ ինձ զարմացրեց նրա ժպիտը, երբ շրթունքները շարժելիս բացվում էր ողջ ատամնաշարը՝ սպիտակ և սուր, ինչպես ջահել շան ատամները, և դժվար էր հասկանալ՝ նա ժպտո՞ւմ է ուզում, թե՞ կծել:

Հորս հետ նա խոսում էր անգլերեն և րոպեն մեկ նայում էր իմ կողմը: Բայց երբ նրա հայացքը հանդիպում էր իմ հայացքին, իսկույն շրջում էր գլուխը:

Մի քանի րոպե խոսելով՝ նա անգլերենից անցավ ֆրանսերենի, որով բացատրվում էր ազատ և համարյա առանց օտար առոգանությամբ:

— Սա այն տղա՞ն է, որի մասին Դուք ինձ պատմում էիք,— հարցրեց նա հորս՝ մատնացույց անելով ինձ:— Նա կարծես առողջ է և ամրակազմ:

— Դե, պատասխանի՛ր,— դիմեց հայրս ինձ:

— Դու լիովին առո՞ղջ ես,— հարցրեց ինձ պարոնը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո՛:

— Եվ երբեք չե՞ս հիվանդացել:

— Ես թոքերի բորբոքում եմ ունեցել:

— Այդպե՞ս, իսկ ինչպե՞ս հիվանդացար:

— Ուժեղ սառնամանիքին գիշերել էի ձյան վրա: Իմ տերը սառեց, իսկ ես հիվանդացա թոքերի բորբոքումով:

— Եվ դա վաղո՞ւց է եղել:

— Երեք տարի առաջ:

— Իսկ հիվանդությունից հետո ոչ մի բարդություն չեղա՞վ:

— Ո՛չ:

— Դու երբեմն հոգնածություն կամ թուլություն չե՞ս զգում, գիշերները չե՞ս քրտնում:

— Երբեք:

Նա ոտքի կանգնեց և մոտեցավ ինձ: Հետո շոշափեց զարկերակս, ձեռքի ափը դրեց սրտիս, ականջը սեղմեց մեջքիս ու կրծքիս՝ խնդրելով, որ խոր շնչեմ, հետո ստիպեց, որ հազամ:

Այդ ամենն անելով՝ նա երկար ժամանակ ուշադրությամբ նայում էր դեմքիս, և ես որոշեցի, որ նա հավանաբար սիրում է կծել. այնքա՜ն զզվելի էր նրա ժպիտը:

Ինձ ոչինչ չասելով՝ կրկին սկսեց խոսել հորս հետ, և մի քանի րոպե հետո նրանք դուրս եկան սենյակից, բայց գնացին ոչ թե փողոց, այլ խորդանոց:

Մենակ մնալով՝ ես զարմացած հարց էի տալիս ինքս ինձ, թե ինչ էր նշանակում այդ պարոնի հարցուփորձը: Գուցե նա ցանկանում է ինձ ծառայությա՞ն վերցնել: Բայց այդ դեպքում ես ստիպված կլինեմ բաժանվել Մատտիայից և Կապիից:

Մի քանի րոպե անց հայրս վերադարձավ: Նա ասաց, որ ինքը պետք է գնա, իսկ ես կարող եմ զբոսնել:

Ես ոչ մի ցանկություն չունեի զբոսնելու: Բայց ի՞նչ անեի մենակ այս տխուր տանը: Ավելի լավ էր զբոսնել, քան մնալ այստեղ ու ձանձրանալ:

Քանի որ անձրև էր գալիս, ես գնացի կառասայլը՝ ոչխարի մորթին վերցնելու: Ինչպիսի՜ զարմանք, երբ այնտեղ տեսա Մատտիային: Ես ուզում էի խոսել նրա հետ, բայց նա ձեռքը դրեց բերանիս և կամացուկ ասաց.

— Գնա՛ բաց ցախատան դուռը: Ես կամացուկ դուրս կգամ քո հետևից: Կարիք չկա՝ իմանան, որ ես նստած էի կառասայլում:

Եվ միայն այն ժամանակ, երբ մենք հայտնվեցինք փողոցում, Մատտիան համարձակվեց խոսել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գիտեմ, թե ով էր այն պարոնը, որ եկել էր հորդ մոտ,— հարցրեց նա:— Ջեյմս Միլլիգանն էր՝ քո ընկերոջ՝ Արթուրի հորեղբայրը:

Ես քարացած կանգնեցի փողոցի մեջտեղում: Մատտիան բռնեց ձեռքս և առաջ տարավ ինձ՝ շարունակելով պատմել:

— Քանի որ շատ տխուր էր այս ամայի փողոցներում միայնակ զբոսնելը, ես որոշեցի տուն վերադառնալ և քնել: Ես պառկեցի, բայց չքնեցի: Այդ պարոնը և հայրդ մտան ցախատուն, և ես ակամայից լսեցի նրանց խոսակցությունը: «Քարի պես ամուր է,— ասաց պարոնը:— Նրա փոխարեն մի ուրիշը կմեռներ, իսկ նա միայն թոքերի բորբոքում է ստացել»: Ենթադրելով, որ խոսքը քո մասին է, ես սկսեցի ականջ դնել, բայց հանկարծ սկսեցին ուրիշ բանի մասին խոսել: «Իսկ ինչպե՞ս է Ձեր եղբոր որդու առողջությունը»,— հարցրեց հայրդ: «Լավ է, նա այս անգամ էլ փրկվեց: Երեք ամիս առաջ բժիշկները կրկին մահվան էին դատապարտել նրան, բայց «սիրելի մայրիկը» կրկին խնամեց ու փրկեց նրան: Այո՛, տիկին Միլլիգանը հիանալի մայր է»: Դու պատկերացնում ես, թե այդ անունը լսելով՝ ինչպես սրեցի ականջներս: «Եթե Ձեր եղբոր որդին իրեն լավ է զգում,— շարունակեց հայրդ,— Ձեր բոլոր ջանքերն իզուր են»: «Ներկա պահին գուցե,— պատասխանեց պարոնը,— բայց ես չեմ կարծում, որ Արթուրը կենդանի մնա: Դա հրաշք կլիներ, իսկ աշխարհում հրաշքներ չկան: Անհրաժեշտ է, որ նրա մահվան օրը ոչ մի նոր, անսպասելի խոչընդոտ չլինի, և այդ դեպքում ես՝ Ջեյմս Միլլիգանս, միակ ժառանգը կլինեմ»: «Հանգի՛ստ եղեք,— պատասխանեց հայրդ,— այդպես էլ կլինի, հավատացնում եմ Ձեզ»: «Իմ հույսը Դուք եք»,— ասաց պարոնը և ավելացրեց մի քանի բառ ևս, որ այնքան էլ լավ չհասկացա: Մոտավորապես կարող եմ թարգմանել, չնայած դրանք ինձ շատ անիմաստ թվացին. «Այդ դեպքում մենք կորոշենք, թե ինչպես վարվենք նրա հետ»: Դրանից հետո պարոնը գնաց:

Երբ ես լսեցի այդ պատմությունը, առաջին իսկ րոպեին ցանկացա գնալ հորս մոտ և իմանալ նրանից Ջեյմս Միլլիգանի հասցեն, որպեսզի տեղեկանամ Արթուրի և նրա մոր մասին: Բայց ես իսկույն հասկացա, որ դա հիմարություն էր: Միթե կարելի է եղբորորդու առողջության մասին հարցնել մի մարդուց, որն անհամբերությամբ սպասում էր այդ եղբորորդու մահվանը: Բացի այդ՝ պարոն Միլլիգանը չպետք է իմանար, որ Դրիսկոլի հետ ունեցած իր խոսակցությունը որևէ մեկը լսել է:

Արթուրը կենդանի է, նա առողջանում է: Ինձ համար այդ ուրախալի նորությունն էլ առայժմ բավական էր:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 17

ՏՈՆԵՐԸ

Հիմա ես և Մատտիան խոսում էինք միայն Արթուրի, տիկին Միլլիգանի և Ջեյմս Միլլիգանի մասին: Ներկայումս որտեղ են Արթուրը և նրա մայրը: Որտեղ փնտրենք նրանց: Ջեյմս Միլլիգանի այցելությունից հետո մենք կազմեցինք գործունեության պլան, որը մեզ թվում էր հեշտ իրագործելի: Եթե Ջեյմս Միլլիգանը մի անգամ արդեն եկել էր «Կարմիր առյուծի» բակը, ապա հավանաբար երկրորդ անգամ էլ այստեղ կգա: Անկասկած, նա ինչ–որ գործեր ունի հորս հետ: Ջեյմս Միլլիգանը չէր տեսել Մատտիային, դրա համար էլ Մատտիան կարող էր գնալ նրա հետևից և իմանալ, թե որտեղ է ապրում նա: Այդ դեպքում մենք կաշխատենք հարցուփորձ անել նրա ծառաներին և այդպիսով գուցե իմանանք, թե որտեղ է Արթուրը:

Ինչու չէ: Երազանքներում այդ ամենը մեզ լիովին իրագործելի էր թվում:

Այդ հիանալի ծրագիրը լավ էր նրանով, որ հնարավորություն էր տալիս գտնելու Արթուրին և ժամանակավորապես ազատում էր ինձ այս կամ այն որոշումն ընդունելու անհրաժեշտությունից:

Կապիի արկածից և Բարբերեն մայրիկի նամակից հետո Մատտիան անդադար միևնույն բանն էր կրկնում. «Վերադառնանք Ֆրանսիա»: Բայց ես միշտ նույնն էի պատասխանում. «Ես իրավունք չունեմ ընտանիքս թողնելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես պետք է մնամ,— և ավելացնում էի,— որ գտնեմ Արթուրին»: Մատտիան չէր կարողանում առարկել, որովհետև մենք պարտավոր էինք նախազգուշացնել տիկին Միլլիգանին, թե ինչպիսի գաղտնի մտադրություններ ուներ նրա հանգուցյալ ամուսնու եղբայրը:

Վրա հասավ այնպիսի ժամանակ, երբ մենք վաստակելու էինք գնում գիշերները, որովհետև Ծննդյան տոների համերգները սովորաբար տեղի էին ունենում գիշերը: Մենք հույս ունեինք, որ մեզնից մեկնումեկին կհաջողվի տեսնել Արթուրի հորեղբորը:

— Այնքան եմ ուզում, որ դու կրկին հանդիպես տիկին Միլլիգանին,— մի անգամ հայտարարեց Մատտիան:

— Իսկ ինչո՞ւ:

Նախքան պատասխանելը նա բավականին ժամանակ տատանվում էր:

— Որովհետև նա շատ բարի է եղել քո նկատմամբ,— և ավելացրեց,— բացի այդ՝ նա հավանաբար կօգնի, որ դու գտնես ծնողներիդ:

— Մա՛տտիա:

— Ես մի վայրկյան անգամ պատկերացնել չեմ կարող, որ դու պատկանում ես Դրիսկոլի ընտանիքին: Ապա նայի՛ր այդ ընտանիքի բոլոր անդամներին ու քեզ: Ես հիմա խոսում եմ ոչ միայն արտաքին նմանության մասին. դու բոլորովին ուրիշ ես, նման չես Դրիսկոլներից ոչ մեկին և հետևաբար նրանց ընտանիքին չես պատկանում: Դա կպարզվի, երբ մենք գտնենք տիկին Միլլիգանին:

— Ինչը կպարզվի:

— Ոչինչ, ես մի միտք ունեմ:

— Ինչ միտք:

— Չեմ ասի:

— Ինչո՞ւ:

— Որովհետև եթե դա հիմարություն լինի...

— Թող լինի:

— Եթե դա ճիշտ չլինի, ապա շատ ցավալի է: Կարիք չկա երազել ուրախությունների մասին, որոնք երբեք չեն իրականանալու: Հիշո՞ւմ ես, թե ինչպիսին էինք պատկերացնում Բեսնալ–Գրինը և գեղեցիկ, կանաչ մարգագետիններում լինելու փոխարեն ընկանք կեղտոտ ջրափոսերի մեջ: Այդ դասը պետք է որոշ բան սովորեցնի մեզ:

Բայց դեռևս մենք շարունակում էինք թափառել Լոնդոնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մենք այն արտոնյալ երաժիշտների թվին չէինք պատկանում, որոնք ունեին իրենց ընտրյալ թաղամասերը և սեփական ունկնդիրները: Մենք բավականին փոքր էինք ու անփորձ և ստիպված էինք զիջել նրանց, ովքեր կարողանում էին ուժով պաշտպանել իրենց իրավունքները: Քանի–քանի անգամ մեր ելույթից հետո փող հավաքելու փոխարեն մենք ստիպված ենք եղել գլուխներս առած փախչել ծալքավոր շրջազգեստով, վրան պլեդ[14] քաշած և փետրազարդ գլխարկով մի որևէ հսկա շոտլանդացուց, որն իր պարկապզուկի մի հնչյունով միայն մեզ փախուստի էր մատնում: Մատտիան կարող էր կոռնետապիստոնով խլացնել այդ պարկապզուկի ձայնը, բայց մենք չէինք կարող հաղթել նրա տիրոջը: Մենք չէինք կարող մրցել նաև փողոցային նեգր երաժիշտների խմբի հետ: Այդ մարդիկ, նեգրերի պես գրիմ արած, տարօրինակ երկարափեշ ֆրակներով, որոնց հսկայական օձիքների միջից թղթյա ծաղիկների փնջի պես ցցվում էին նրանց գլուխները, ավելի էին սարսափեցնում մեզ, քան շոտլանդական երգիչները: Հենց որ նրանք հայտնվում էին փողոցում, և հնչում էր նրանց գործիքների ձայնը, մենք հարգալից լռում էինք ու հեռանում կամ համբերությամբ սպասում, մինչև նրանց համերգը ավարտվի:

Մի անգամ, երբ մենք կանգնել ու լսում էինք նրանց նվագը, նեգրերից մեկը, որը մյուսներից ավելի տարօրինակ էր հագնված, սկսեց ինչ–որ նշաններ անել Մատտիային: Սկզբում մտածեցի՝ ծաղրում է մեզ, բայց զարմանքով նկատեցի, որ Մատտիան բարեկամաբար ողջունեց նրան:

— Միթե դու ճանաչում ես նրան,— հարցրի ես:

— Դա Բոբն է:

— Ինչ Բոբ:

— Գասոյի կրկեսի իմ բարեկամ Բոբը: Հիշո՞ւմ ես՝ ես քեզ պատմել եմ երկու ծաղրածուների մասին. նրանցից մեկն է. այդ նա է, որ ինձ մի քիչ անգլերեն է սովորեցրել: Սատանան տանի: Ես նրան բոլորովին չճանաչեցի: Գասոյի մոտ նա գլխին ալյուր էր ցանում, իսկ այստեղ սև ներկ է քսում:

Երբ նեգրերն ավարտեցին իրենց համերգը, Բոբը մոտեցավ մեզ: Երբ նա դիմեց Մատտիային, նրա ձայնից հասկացա, որ շատ է սիրում իմ ընկերոջը: Նախկին ծաղրածուն թափառական երաժիշտ էր դարձել, որովհետև կրկեսում զրկվել էր աշխատանքից: Մատտիային տեսնելով՝ նա այնպես ուրախացավ, կարծես տեսնում էր հարազատ եղբորը. դա զգացվում էր նրա

---

14 Տղամարդկանց ուսերին գցելու բրդյա հաստ քառանկյունի կտոր:

թվայնացրել է 1915.info կայքը

աչքերի արտահայտությունից: Բայց մենք ստիպված էինք շուտ բաժանվել: Նա պետք է գնար իր խմբի հետ, իսկ մենք՝ մի ուրիշ թաղամաս:

Որոշեցին հանդիպել կիրակի օրը, որ պատմեն միմյանց ամեն բան, ինչ արել է նրանցից յուրաքանչյուրն իրենց բաժանման օրից սկսած: Մատտիայի բարեկամը լինելով՝ Բոբն ինձ էլ ջերմ վերաբերմունք ցույց տվեց, և շուտով նա մեզ համար դարձավ այնպիսի բարեկամ, որի փորձի և խորհուրդների շնորհիվ մեր կյանքը Լոնդոնում բավականին թեթևացավ: Բոբը շատ սիրեց Կապիին և հաճախ նախանձով ասում էր, որ եթե ինքն այդպիսի շուն ունենար, ապա արդեն կարողության տեր եղած կլիներ: Շատ անգամ էր նա առաջարկել, որ մենք երեքս, ավելի շուտ՝ չորսս միանանք և միասին աշխատենք:

Այսպիսին էին մեր գործերը, երբ վրա հասան Ծննդյան տոները:

Հիմա, առավոտյան տնից դուրս գալու փոխարեն, մենք թաղամասերն էինք գնում երեկոյան ուշ ժամերին:

Սովորաբար սկսում էինք այն փողոցներից, որտեղ կառքերի երթևեկությունն արդեն դադարել էր: Որպեսզի մարդիկ փակ դռների հետևում լսեն մեր նվագը, ու երեխաները քնից արթնանան, անհրաժեշտ էր, որ լիակատար

թվայնացրել է 1915.info կայքը

լռություն լիներ: Հետո գնում էինք կենտրոնական փողոցները: Անցնում էին վերջին կառքերը, որոնք թատրոններից տուն էին տանում մարդկանց, և ցերեկային խլացուցիչ աղմուկին հաջորդում էր գիշերային լռությունը:

Այդ ժամանակ մենք սկսում էինք նվագել մեր ամենասիրած, ամենահուզիչ երգերը: Ելույթն ավարտելով՝ ունկնդիրներին բարի գիշեր և ուրախ ծնունդ էինք մաղթում, ապա շարունակում մեր ճանապարհը և սկսում նորից նվագել:

Հավանաբար շատ հաճելի է գիշերը, անկողնումդ պառկած, տաք վերմակի մեջ փաթաթված, երաժշտություն լսել: Իսկ մենք ստիպված էինք նվագել փողոցում, չնայած մեր մատները սառչում էին ցրտից: Մառախլապատ, խոնավ եղանակ էր. հյուսիսային քամին թափանցում էր մինչև ոսկորները:

Ծննդյան տոների օրերը մեզ համար շատ ծանր օրեր էին, բայց մենք ոչ մի գիշեր բաց չթողեցինք: Մենք գիտեինք, որ հարուստներն իրենց երեխաների համար Ծննդյան տոներին զարդարված տոնածառ են սարքում, շքեղ նվերներ ու քաղցրավենիք գնում, իսկ մենք՝ խեղճ աղքատներս, ստիպված էինք թափառել փողոցներում և միայն մեր երևակայության մեջ պատկերացնել այդ հրաշալի ընտանեկան տոնակատարությունները:

Տոներից հետո մենք կրկին սկսեցինք առավոտից երեկո թափառել փողոցներում, և Ջեյմս Միլլիգանին հանդիպելու հնարավորությունը քիչ հավանական դարձավ: Մեր ամբողջ հույսը կիրակի օրվա վրա էր. դրա համար կիրակի օրերը զբոսանքի գնալու փոխարեն հաճախ մնում էինք տանը և համբերությամբ սպասում:

Մատտիան որոշեց խորհրդակցել իր բարեկամ Բոբի հետ, թե ինչպես կարող ենք իմանալ տիկին Միլլիգանի կամ Ջեյմս Միլլիգանի հասցեն: Բոբը պատասխանեց, որ պետք է իմանալ, թե ով է այդ տիկինը, և կամ ինչով է զբաղվում Ջեյմս Միլլիգանը, քանի որ Միլլիգան ազգանունը շատ տարածված է ոչ միայն Լոնդոնում, այլև ամբողջ Անգլիայում: Դրա մասին մենք չէինք մտածել: Մեզ համար գոյություն ուներ միայն մի տիկին Միլլիգան՝ Արթուրի մայրը, և մի Ջեյմս Միլլիգան՝ Արթուրի հորեղբայրը:

Այդ ժամանակ Մատտիան կրկին սկսեց պնդել, որ Ֆրանսիա վերադառնանք, և մեր վեճերը նորից վերսկսվեցին:

— Ուրեմն դու ուզում ես հրաժարվել տիկին Միլլիգանին նախազգուշացնելու մտադրությունից,— ասում էի ես նրան:

— Իհարկե ոչ, բայց մեզ հայտնի չէ, թե տիկին Միլլիգանն արդյոք Անգլիայում է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ նա Ֆրանսիայում է:

— Դա ամենահավանականն է: Եթե Արթուրը կրկին հիվանդ է, մայրը, իհարկե, տարել է նրան այնպիսի երկիր, որտեղ կլիման ավելի լավ է:

— Լավ կլիմա միայն Ֆրանսիան ունի:

— Արթուրը մի անգամ արդեն Ֆրանսիայում է առողջացել, և մայրը, անկասկած, նրան տարել է նորից այնտեղ: Բացի այդ՝ ես ցանկանում եմ, որ դու գնաս այստեղից: Հակառակ դեպքում կտեսնես, որ մեզ հետ որևէ դժբախտություն կպատահի: Հեռանանք այստեղից, քանի դեռ ուշ չէ:

Չնայած որ Դրիսկոլների ընտանիքի բոլոր անդամների վերաբերմունքն իմ նկատմամբ նույնն էր մնացել, բայց և այնպես ես սիրտ չէի անում հետևելու Մատտիայի խորհրդին: Ես կարող էի կասկածել և կասկածում էի, բայց հաստատ վստահ չէի, թե ես Դրիսկոլների ընտանիքին չեմ պատկանում:

թվայնացրել է 1915.info կայքը



Գլուխ 18

ԳՈՂԱՑՎԱԾ ԱՊՐԱՆՔ

ՎԱՃԱՌՈՂՆԵՐԸ

Օրերն անցնում էին օրերի հետևից, շաբաթները՝ շաբաթների, և վերջապես հասավ այն ժամանակը, երբ մեր ընտանիքը պետք է դուրս գար Լոնդոնից և շրջագայեր Անգլիայում:

Կառապայլերը նորից ներկեցին և բեռնեցին ապրանքներով, որ պետք է ամառը վաճառեին: Ինչ ասես, որ չկար այնտեղ, և զարմանալի է, թե ինչպես այդ բոլորը տեղավորվեցին երկու կառապայլում, որի լուսամուտից ես և Մատտիան հետևում էինք, թե ինչպես էին գետնափոսից դուրս բերվում բազմաթիվ հակեր, որոնք «Կարմիր առյուծի» բակն էին ընկել այնպիսի արտասովոր միջոցով: Վերջապես ապրանքը տեղավորված էր, ձիերը գնված էին՝ որտեղից և ինչպես, հայտնի չէ, բայց դրանք բերվեցին, և ամեն բան պատրաստ էր ճանապարհ ընկնելու համար:

Հայրս, համարելով, որ ես ու Մատտիան ջութակ ու տավիղ նվագելով վատ չենք վաստակում, որոշեց մեզ՝ որպես երաժիշտների, տանել իր հետ: Իր որոշման մասին նա հայտնեց մեզ միայն մեկնելու նախօրեին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Վերադառնանք Ֆրանսիա,— ասաց Մատտիան:— Օգտվենք առաջին իսկ հարմար առիթից և փախչենք:

— Ինչո՞ւ չշրջագայենք Անգլիայում: Գուցե հենց Անգլիայում հանդիպենք տիկին Միլլիգանին:

— Որովհետև մեզ հետ անպայման մի վատ բան կպատահի:

Կրկին մենք գնում էինք մեծ ճանապարհներով, բայց արդեն ես չէի կարող ազատ գնալ, ուր ուզում եմ, և անել այն, ինչ ցանկանում եմ: Մենք կապված էինք Դրիսկոլների ընտանիքին:

Թեթևացած սրտով էի թողնում Լոնդոնը: Ես այլևս չեմ տեսնի «Կարմիր առյուծի» բակը և այն փոսը, որն ակամայից դեպի իրեն էր քաշում հայացքս: Քանի–քանի անգամ գիշերները հանկարծ արթնանում էի մղձավանջային տեսիլքներից, երբ ինձ թվում էր, թե քողարկիչ ունեցող լապտերի կարմիր լույսն է թափանցում մեր կառասայլի փոքրիկ լուսամուտից:

Մենք գնում էինք ոտքով, կառասայլերի հետևից և Բեսնալ–Գրինի գարշահոտությունների ու վնասակար գոլորշիների փոխարեն այժմ շնչում էինք դաշտերի մաքուր օդը: Գեղեցիկ վայրերը, որոնցով մենք անցնում էինք, չնայած «կանաչ» չէին կոչվում, բայց մեզ հաճույք էին պատճառում իրենց թարմ կանաչով և թռչունների ուրախ ճռվողյունով:

Մեր ճամփորդության առաջին օրն արդեն տեսա, թե ինչպես է կատարվում այդքան հեշտությամբ ձեռք բերված ապրանքների վաճառքը: Մենք հասանք մի մեծ գյուղ և կանգ առանք հրապարակում: Կառասայլի մի կողքը իջեցրինք և վաճառասեղանի նման մի բան պատրաստեցինք, որի վրա հետաքրքրասեր գնորդների համար շարեցինք բոլոր ապրանքները:

— Ուշադրություն դարձրեք գբերիֆն, որքան ցածր գներ են,— գոռում էր հայրս:

— Ավելի էժան ապրանք դուք ոչ մի տեղ չեք գտնի: Քանի որ ես ինքս երբեք չեմ վճարում ապրանքների համար, ապա կարող եմ դրանք էժան վաճառել: Ես չեմ վաճառում, այլ ձրի եմ տալիս: Ուշադրություն դարձրեք գբերիֆն: Տեսեք՝ ինչպիսի գներ են:

Եվ ես լսում էի՝ ինչպես էին մարդիկ հեռանալով ասում.

— Հավանաբար գողացված ապրանք է:

— Դե, նա ինքն էլ այդ չի թաքցնում:

Եթե գնորդները նայեին ինձ, ապա ամոթից կարմրատակած դեմքիցս կհասկանային, որ իրենց ենթադրությունները ճիշտ են:

թվայնացրել է 1915.info կայքը

Մարդիկ չտեսան, թե ես ինչպես կարմրեցի, բայց Մատտիան այդ շատ լավ նկատեց և երեկոյան խոսակցություն բացեց այդ մասին, չնայած սովորաբար խուսափում էր անկեղծորեն խոսելուց:

— Ինչպե՞ս ես կարողանում տանել մի այսպիսի խայտառակություն,— հարցրեց նա ինձ:

— Լռի՛ր, խնդրում եմ, եթե չես ուզում ինձ ավելի դժբախտ դարձնել:

— Ես բոլորովին էլ այդ չեմ ուզում: Ուզում եմ, որ մենք վերադառնանք Ֆրանսիա: Նորից եմ ասում, որ մեզ հետ դժբախտություն կպատահի: Զգում եմ, որ այդ շատ շուտ կլինի: Հասկացի՛ր, ոստիկանությունը վաղ թե ուշ կսկսի հետաքրքրվել, թե ինչու է պարոն Դրիսկոլն իր ապրանքներն այդպիսի ցածր գներով վաճառում...

— Մա՛տտիա, աղաչում եմ քեզ:

— Ո՛չ, ես պետք է բացեմ աչքերդ: Այն ժամանակ նրանց բոլորին կձերբակալեն, մեզ նույնպես, չնայած մենք ոչ մի բանում մեղավոր չենք: Բայց մեզ համար դժվար կլինի այդ ապացուցել: Մի՞թե մենք չենք ուտում այն հացը, որը գնված է գողացած ապրանքների վաճառքի փողով: Մեզ բոլորիս բանտ կնստեցնեն, և դու ոչ միայն չես կարողանա գտնել քո իսկական ընտանիքը, այլև չես կարողանա տիկին Միլլիգանին հաղորդել Ջեյմս Միլլիգանի հանցավոր մտադրությունները: Փախչենք, քանի դեռ ուշ չէ:

Դեռ երբեք Մատտիայի բառերը, հորդորանքը և խնդրանքներն այնպես ուժեղ չէին հուզել ինձ: Դրանց մասին մտածելով՝ ես ինքս ասում էի ինձ, որ այլևս տատանվել չի կարելի, որ անհրաժեշտ է վերջապես որևէ որոշակի և հաստատուն որոշում ընդունել:

թվայնացրել է 1915.info կայքը

Անսպասելի հանգամանքներն արեցին այն, ինչ ես ինքս քաջություն չունեի անելու:

Լոնդոնից դուրս գալուց մի քանի շաբաթ անց մենք հասանք մի քաղաք, որի շրջակայքում պետք է տեղի ունենար ձիարշավ: Անգլիայում ձիարշավը ժողովրդական մեծ տոն է, որը սկսվելուց մի քանի օր առաջ արդեն երկրի բոլոր ծայրերից ձիարշավի վայրն էին ժամանում փողոցային մարմնամարզիկներ, գնչուներ և շրջիկ վաճառականներ, որոնք այստեղ տոնավաճառի նման ինչ–որ բան էին կազմակերպում: Մենք նույնպես որոշեցինք մասնակցել տոնավաճառին: Մատտիան և ես՝ որպես երաժիշտներ, իսկ Դրիսկոլի ընտանիքը՝ որպես վաճառականներ: Բայց դաշտ գալու փոխարեն, որտեղ պետք է տեղի ունենար ձիարշավը, հայրս կանգ առավ քաղաքում՝ հուսալով հավանաբար ավելի ձեռնտու գներով վաճառել ապրանքները: Քանի որ մենք շուտ էինք եկել և չէինք մասնակցում ապրանքների ցուցահանդեսին, ապա ես և Մատտիան գնացինք ձիարշավի դաշտը, որը քաղաքին բավականին մոտ էր:

Մենք դուրս եկանք տափաստան, որը սովորաբար ամայի էր և խաղաղ, իսկ հիմա ծածկված էր հապճեպ պատրաստված բարաքներով, որտեղ տեղավորված էին զանազան գինետներ, խանութներ և նույնիսկ հյուրանոցներ: Ամենուրեք երևում էին վրաններ, կանգնած էին սայլեր, վառվում էին խարույկներ, որոնց շուրջը խմբված էին գունագեղ հագուստներով մարդիկ:

Այդպիսի խարույկներից մեկի մոտ, որի վրա կաթսա էր կախված, մենք տեսանք մեր բարեկամ Բոբին: Նա մեզ տեսնելով՝ շատ ուրախացավ: Բոբը ձիարշավի էր եկել երկու լարախաղաց ընկերների հետ և մտադիր էր այստեղ մի քանի ներկայացում տալ: Բայց գործը կարող էին խափանել երաժիշտները, որոնք, չգիտես ինչու, չէին հայտնվել: Այժմ Բոբը վախենում էր, որ իրենց վաստակը շատ կպակասի: Բոբն առաջարկեց, որ մենք փոխարինենք բացակայող երաժիշտներին՝ խոստանալով ստացած փողը հավասար բաժանել բոլոր մասնակիցների մեջ և նույնիսկ բաժին հանել Կապիին: Ես հասկացա, որ Մատտիան շատ է ցանկանում օգնել Բոբին, և քանի որ մենք կարող էինք անել այն, ինչ ցանկանում էինք, միայն այն պայմանով, որ փող տանեինք տուն, ապա ես հաճույքով համաձայնվեցի: Որոշվեց, որ վաղն առավոտից մենք կլինենք Բոբի ու նրա ընկերների տրամադրության տակ:

Բայց երբ վերադարձանք քաղաք, և ես պատմեցի հորս մեր մտադրության մասին, նա անսպասելիորեն առարկեց:

— Կապին վաղը ինձ էլ է պետք, դուք ստիպված կլինեք գնալ առանց նրա:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ բառերը շատ անհանգստացրին ինձ: Գուցե նա Կապիին ուզում է մասնակից դարձնել որևէ կեղտոտ գործի: Բայց հայրս իսկույն ցրեց իմ կասկածները:

Կապին սուր լսողություն ունի և հիանալի պահակ է: Նրան կթողնենք կառասայլերի մոտ, քանի որ այս խառնաշփոթության մեջ մեզ հեշտությամբ կարող են թալանել: Գնացեք Բոբի մոտ և եթե մինչև ուշ գիշեր չվերադառնաք, ապա կգտնեք մեզ «Մեծ կաղնու պանդոկում»:

«Մեծ կաղնու պանդոկը», որտեղ մենք անց էինք կացրել նախորդ գիշերը, ձիարշավի դաշտից մի կիլոմետր հեռավորության վրա էր՝ ամայի և մոայլ մի վայրում: Պանդոկապետն ու նրա կինը արտաքուստ ոչ մի վստահություն չէին ներշնչում: Այդ պանդոկը գտնելը նույնիսկ գիշերն էլ դժվար չէր. ճանապարհին ուղիղ տանում էր այնտեղ:

Հետևյալ առավոտ ես մի քիչ զբոսնեցի Կապիի հետ, կերակրեցի, ջուր տվեցի նրան, որ համոզված լինեմ, որ նա ամբողջ օրը սոված չի մնա, ապա կապեցի կառասայլից, որը նա պետք է պահպաներ:

Հետո ես ու Մատտիան գնացինք ձիարշավի դաշտը և իսկույն սկսեցինք նվագել: Մենք նվագում էինք մինչև երեկո: Իմ մատների ծայրերն այնպես էին ցավում, կարծես փշերով ծակծկված լինեին, իսկ Մատտիան այնքան փչեց իր կոռնետապիստոնը, որ դժվարությամբ էր շնչում, Բոբը և նրա ընկերները առանց հոգնելու ցույց էին տալիս իրենց հետաքրքիր հնարքները, և մենք նրանցից հետ մնալու իրավունք չունեինք: Ես հույս ունեի, որ երբ երեկոն վրա հասնի, կհանգստանանք, բայց դրա փոխարեն մենք վրանից տեղափոխվեցինք հսպճեպ պատրաստված փայտյա մի մեծ գինետուն, որտեղ վերսկսեցինք մեր ելույթը: Այդպես շարունակվեց մինչև կեսգիշեր: Ես դեռ մի կերպ մատներս զարկում էի տավիղի լարերին, բայց արդեն վատ էի հասկանում, թե ինչ եմ նվագում: Մատտիան ավելի լավ վիճակի մեջ չէր: Քսան անգամ Բոբը հայտարարում էր, որ սա վերջին ներկայացումն է, և քսան անգամ ամեն բան նորից էր սկսվում:

Մեր ընկերներն էլ շատ էին հոգնել, այնքան, որ նրանց որոշ համարներ ձախողվեցին: Եվ հանկարծ այն հաստ ձողը, որ ծառայում էր նրանց վարժությունների համար, ընկավ Մատտիայի ոտքին: Ցավն այնքան ուժեղ էր, որ Մատտիան գոռաց: Բարեբախտաբար, լուրջ վնասվածք չկար. միայն ոտքն էր ուժեղ ցավում, մաշկը քերծված էր, բայց ոսկորն անվնաս էր: Բայց և այնպես Մատտիան քայլել չէր կարողանում:

Ինչպե՞ս վարվել:

թվայնացրել է 1915.info կայքը

Մենք որոշեցինք, որ նա Բոբի կառասայլում գիշերելու մնա, իսկ ես մենակ կգնամ «Մեծ կաղնու պանդոկը»: Ես պետք է իմանայի, թե վաղն ուր է մեկնելու Դրիսկոլների ընտանիքը:

Չնայած հոգնածությանս՝ ես քայլում էի արագ և բավականին շուտ հասա «Մեծ կաղնու պանդոկը»: Բայց իզուր էի փնտրում մեր կառասայլերը: Պանդոկի մոտ կանգնած էին քաթանե ծածկերով ինչ-որ խղճուկ սայլակներ, կային նաև փայտաշեն մեծ բարաք և երկու փակ վանդակ, որոնց մոտենալիս լսեցի գիշատիչ գազանների մռնչոց: Բայց Դրիսկոլների կառասայլերը ոչ մի տեղ չէին երևում:

Պանդոկի շուրջը պտտվելով՝ լուսամուտներից մեկում լույս նկատեցի և, ենթադրելով, որ այնտեղ դեռ բոլորը քնած չեն, բախեցի դուռը: Պանդոկապանը, որի վանող դեմքը նկատել էի դեռ նախորդ օրը, բացեց դուռը և լապտերի լույսն ուղղեց դեմքիս:

Ես տեսա, որ նա ինձ ճանաչեց, բայց տուն թողնելու փոխարեն լապտերը հետ տարավ, նայեց շուրջն ու ականջ դրեց:

— Ձեր կառասայլերը գնացել են,— շշնջաց նա:— Հայրդ կարգադրել է առանց ժամանակ կորցնելու իրենց հետևից գնալ Լուիս: Բարի ճանապարհ:

Եվ այլևս ոչ մի բառ չավելացնելով՝ նա ուղիղ քթիս առաջ փակեց դուռը:

Ես արդեն այնքան գիտեի անգլերեն, որ կարող էի հասկանալ այդ նախադասությունը: Բայց մի բան, որն ամենակարևորն էր, ես չհասկացա. դա «Լուիս» բառն էր, որն ասաց պանդոկապետը, իսկ ի՞նչ էր նշանակում այդ: Բայց եթե ես նույնիսկ իմանայի էլ, թե որտեղ է Լուիսը, միևնույնն է, չէի կարող գնալ այնտեղ, որովհետև ստիպված կլինեի թողնել հիվանդ Մատտիային: Չնայած հոգնածությանս՝ ճամփա ընկա և ժամուկես հետո արդեն պառկած էի Բոբի կառասայլում՝ Մատտիայի կողքին:

Մի քանի բառով պատմելով այն, ինչ տեղի էր ունեցել, ես անմիջապես քնեցի: Քունը վերականգնեց ուժերս: Առավոտյան արթնացա՝ պատրաստ Լուիս գնալու, եթե միայն Մատտիան կարողանար գալ ինձ հետ:

Կառասայլից դուրս գալով՝ մոտեցա Բոբին, որն ինձնից շուտ էր արթնացել և հիմա խարույկ էր վառում: Ես նայում էի, թե ինչպես էր նա, չորեքթաթ կռացած, ամբողջ ուժով փչում կրակին: Հանկարծ ինձ թվաց, որ տեսնում եմ Կապիին: Բայց իմ Կապիին, չգիտես ինչու, վզնոցից բռնած՝ բերում էր ոստիկանը:

Մինչդեռ ես ինքս ինձ հարց էի տալիս, թե ինչ է նշանակում դա, Կապին, զգալով իմ ներկայությունը, թափով առաջ նետվեց և դուրս պրծավ

թվայնացրել է 1915.info կայքը

ոստիկանի ձեռքից: Վայրկենաբար նա հայտնվեց իմ կողքին: Ոստիկանը մոտեցավ մեզ:

— Սա ո՞ւմ շունն է,— հարցրեց նա:

— Իմն է:

— Այդ դեպքում ես պետք է ձերբակալեմ Ձեզ,— և նա ամուր բռնեց ձեռքս:

Այդ տեսնելով՝ Բոբը շտապով մոտեցավ մեզ:

— Դուք ինչո՞ւ եք ցանկանում ձերբակալել այս տղային:

— Իսկ Դուք, ի՞նչ է, նրա եղբայրն եք:

— Ո՛չ, ես նրա բարեկամն եմ:

— Այս գիշեր մի տղամարդ ու մի տղա, շարժական աստիճաններ դնելով, մտել են Սուրբ Գևորգ եկեղեցին, նրանց հետ եղել է նաև այս շունը, որ նրանք նստեցրել են՝ իրենց պահպանելու համար: Բայց գողությունը չի հաջողվել, և հանցագործները փախել են լուսամուտից՝ շանը թողնելով եկեղեցում: Ես հավատացած էի, որ շունը կօգնի ինձ գտնելու ավազակներին, և ահա՛ այժմ մեկին արդեն բռնեցի: Իսկ ո՞ւր է հայրդ:

Ես ոչինչ չպատասխանեցի: Դա սոսկալի հարված էր ինձ համար:

Բայց ես շատ լավ հասկացա, թե ինչ է տեղի ունեցել: Կապիին վերցրել էին ինձնից ոչ թե կառապայլը պահպանելու, այլ որ պահպանի և նախազգուշացնի նրանց, ովքեր թալանելու էին եկեղեցին: Կառապայլերը մեկնել էին ուշ գիշերով, որովհետև գողերը հայտնաբերվել էին, և նրանք փրկվելու համար ստիպված էին եղել փախուստի դիմել:

Բայց հիմա ես պետք է հոգ տանեի իմ մասին: Ինչպիսին էլ լիներ նրանց մեղքը, պետք է պաշտպանվել և ապացուցել, որ մենք մասնակից չենք եղել այդ գործին, պետք է բացատրել, թե այդ գիշեր ես ինչ էի անում:

Մինչ ես այդպես խորհում էի, Մատտիան, լսելով աղմուկը և իմ ու ոստիկանի խոսակցությունը, դուրս թռավ կառապայլից և կաղալով վազեց իմ կողմը:

— Ասա՛ նրան, որ այդ գողությանը ես չեմ մասնակցել,— խնդրեցի ես Բոբին:— Չէ՞ որ մինչև ժամը մեկը ես ձեզ հետ էի, իսկ հետո գնացի «Մեծ կաղնու պանդոկը», խոսեցի պանդոկապետի հետ և իսկույն վերադարձա:

Բոբն իմ բառերը թարգմանեց ոստիկանին, բայց դրանք բոլորովին չհամոզեցին նրան, և թերևս՝ ընդհակառակը:

— Գողերն էլ հենց գիշերվա ժամը մեկ անց տասնհինգ րոպեին են մտել եկեղեցի, և եթե տղան գնացել է այստեղից ժամը մեկին կամ մի քանի

թվայնացրել է 1915.info կայքը

րոպե էլ շուտ, ինչպես Դուք հաստատում եք, նա այդ ժամանակ կարող էր լինել եկեղեցում:

— Բայց այստեղից մինչև քաղաք քառորդ ժամից ավելի տևող ճանապարհ է,— առարկեց Բոբը:

— Իսկ եթե նա վազելով է գնացել,— ասաց ոստիկանը:— Եվ ո՞վ կարող է երաշխավորել, որ նա գնացել է ուղիղ ժամը մեկին:

— Ես կարող եմ երդվել,— բացականչեց Բոբը:

— Դո՛ւք,— քմծիծաղ տվեց ոստիկանը:— Նախ պետք է իմանալ, թե ինչ արժեք ունի Ձեր ցուցմունքը: Իսկ մինչ այդ ես կտանեմ տղային. նա ամեն բան կբացատրի դատարանում:

Մատտիան նետվեց դեպի ինձ: Ես մտածեցի, որ նա ուզում է հրաժեշտ տալ ու համբուրել ինձ:

— Քա՛ջ մնա,— շշնջաց նա ինձ,— մենք քեզ կօգնենք:

Եվ այդ բառերից հետո նա համբուրեց ինձ:

— Վերցրո՛ւ Կապիին,— դիմեցի ես Մատտիային ֆրանսերենով: Բայց ոստիկանը հասկացավ ինձ:

— Ո՛չ, ո՛չ, շունն ինձ մոտ կմնա: Նա ինձ օգնեց գտնելու մեկին, կօգնի գտնելու նաև մյուսներին:

Առաջին անգամ չէր, որ ինձ ձերբակալում էին, բայց հիմա ինչ–որ առանձնահատուկ տանջալից ամոթ էի զգում: Այն ժամանակ ինձ մեղադրեցին սեփական կովի գողության մեջ, և ինձ համար դժվար չէր ապացուցել այդ մեղադրանքի անարդարացիությունը: Բայց ներկայումս կարծես իսկապես գողերի գործակիցը լինեի:

Բանտախուցը, որտեղ ինձ փակեցին, բոլորովին նման չէր այն գյուղական բանտի խցին, որտեղ նստած էի առաջին անգամ: Սա արդեն իսկական բանտ էր: Միակ լուսամուտը փակված էր երկաթյա հաստ ձողերով: Փախուստի մասին մտածելն անգամ ավելորդ էր: Բանտախցում կար մի նստարան և պառկելու տեղ:

Ես ընկա նստարանին և երկար ժամանակ նստած էի խոր հուսահատության մեջ: Որքա՜ն սարսափելի էր իմ ներկան, և որքա՜ն էր ինձ վախեցնում ապագան:

«Քա՛ջ մնա, մենք քեզ կօգնենք»,— ասել էր ինձ Մատտիան: Բայց ի՞նչ կարող է անել Մատտիան, և նույնիսկ՝ Բոբը, եթե նա ցանկանա օգնել Մատտիային:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես մոտեցա լուսամուտին և բացեցի այն՝ ցանկանալով փորձել երկաթյա ձողերը, որոնք դրսից ամրացված էին քարին: Բանտախցի պատերը մոտ մի մետր հաստություն ունեին, գետինը սալահատակված էր, իսկ դուռը՝ երկաթապատ: Լուսամուտը դուրս էր գալիս նեղ ու երկար բակը, որը շրջապատված էր չորս մետրից ոչ պակաս բարձրություն ունեցող պատով: Այդպիսի բանտից փախչել չէր կարելի նույնիսկ ամենանվիրված ընկերների օգնությամբ:

Օրվա ընթացքում ապրածս հուզմունքը թույլ չտվեց ինձ քնել ամբողջ գիշեր, չնայած նախորդ օրը խիստ հոգնել էի: Ես ձեռք չտվեցի այն ուտելիքին, որ ինձ բերեցին, բայց հարձակվեցի ջրի վրա: Քառորդ ժամը մեկ ես ձեռքս մեկնում էի գավաթին և ագահորեն ջուր էի խմում, բայց ոչ մի կերպ չէի կարողանում հագեցնել ծարավս և մեղմացնել բերանիս դառնությունը:

Երբ բանտապահը մտավ խուցը, ես շատ ուրախացա: Ինձ անհանգստացնում էր այն հարցը, թե ինձ շո՞ւտ կտանեն հարցաքննության, ավելի ճիշտ արդյոք շո՞ւտ կարդարանամ ես:

Այդ հարցով էլ դիմեցի բանտապահին, որն ինձ չար մարդ չթվաց: Նա մեծ հաճույքով պատասխանեց, որ դատը նշանակված է վաղը, և իր հերթին ինքն էլ սկսեց հարցաքննել ինձ:

— Դուք ինչպե՞ս եկեղեցի մտաք,— հարցրեց նա:

Ես բողոքեցի այդ մեղադրանքի դեմ և հայտարարեցի, որ ոտք անգամ չեմ դրել եկեղեցի: Նա թերահավատությամբ նայեց ինձ և ուսերը թոթվելով՝ զայրացած ասաց.

— Որքա՜ն փչացած են Լոնդոնի տղաները:

Եվ դուրս եկավ:

Նրա բառերը ցնցեցին ինձ: Եթե նույնիսկ բանտապահը չհավատաց ինձ, դատավորը կհավատա՞: Բարեբախտաբար, ես վկաներ ունեմ. նրանք ցուցմունք կտան, և դատավորը պարտավոր է նրանց լսել: Բայց դրա համար նրանք պետք է հայտնվեն դատարան, իսկ կհայտնվե՞ն արդյոք, հայտնի չէ:

Ա՛խ, որքան հիմար էի ես, երբ չէի հավատում Մատտիայի նախազգացումներին:

Հետևյալ առավոտ բանտապահը մտավ իմ խուցը և բերեց ինձ համար ջրով լի կուլա ու թաս: Նա ինձ առաջարկեց լվացվել՝ ասելով, որ շուտով ես պետք է ներկայանամ դատարան, և ավելացրեց, որ օրինավոր տեսքը հաճախ պաշտպանության ամենալավ միջոցն է:

թվայնացրել է 1915.info կայքը

Լավ լվացվելով՝ ես ուզում էի նստել, բայց տեղումս մնալ չէի կարողանում և սկսեցի վանդակն ընկած գազանի պես գնալ–գալ:

Ես միտք էի անում, թե ինչպես պաշտպանեմ ինձ և ինչպես պատասխանեմ դատավորին: Բայց հոգիս այնքան խռովված էր, որ չէի կարողանում մտածել, թե ինչ է սպասում ինձ: Իմ հոգնած ուղեղում ծագում էին բազմապիսի անիմաստ մտքեր: Բանտապահը վերադարձավ և կարգադրեց հետևել իրեն: Մի քանի միջանցք անցնելով՝ մենք հայտնվեցինք փոքրիկ դռան առաջ, որ երբ նա բացեց, տաք օդը խփեց դեմքիս, և լսեցի ինչ–որ անորոշ աղմուկ:

Ներս մտնելով՝ հայտնվեցի դատարանի դահլիճում: Դա ընդարձակ, բարձր առաստաղով, լայն լուսամուտներով սենյակ էր, որը բաժանված էր երկու մասի. մի մասը դատավորների համար էր, մյուսը՝ հասարակության:

Դատավորը նստած էր բարձր տեղում: Մի քիչ ցած նրա դիմաց նստած էին ևս երեք պաշտոնյաներ. դրանցից մեկը դատարանի քարտուղարն էր, մյուսը՝ տուգանք հավաքողը և դատախազը: Ուղիղ իմ դիմաց նստած էր պատմուճանով և կեղծամով մի մարդ, ինչպես հետո պարզվեց, իմ դատապաշտպանը:

Մյուս կողմում տեսա Բոբին, նրա երկու ընկերներին, «Մեծ կաղնու պանդոկի» տիրոջը և ուրիշ անծանոթ մարդկանց: Նրանց դիմաց նստած էր ինձ ձերբակալող ոստիկանը, իսկ նրա կողքին՝ ևս մի քանի մարդ: Ես հասկացա, որ նրանք բոլորն էլ վկաներ էին: Բազմության մեջ տեսա Մատտիային: Մեր հայացքները հանդիպեցին, և ես իսկույն սիրտ առա: Ընկերներս հոգ են տարել իմ մասին, ինձ կպաշտպանեն: Ես չպետք է ընկճվեմ, այլ պետք է ինքս էլ պաշտպանվեմ:

Դատախազը սկսեց խոսել. մի քանի բառով, հավանաբար շտապում էր, նա պատմեց գործի էությունը. Սուրբ Գևորգ եկեղեցում կատարված է գողություն: Գողերը՝ մի տղամարդ և մի տղա, լուսամուտից շարժական աստիճանների օգնությամբ մտել են եկեղեցի: Նրանց հետ կար մի շուն, որին բերել էին, որ վտանգի դեպքում զգուշացնի իրենց: Գիշերվա ժամը մեկ անց տասնհինգ մի անցորդ տեսնում է, որ եկեղեցում լույս կա, նա ականջ է դնում և լսում է ինչ–որ աղմուկ: Անցորդն իսկույն արթնացնում է եկեղեցու պահակին, և նրանք ուրիշ մարդկանց հետ միասին գնում են եկեղեցի: Մինչև կբացեին դուռը, գողերը փախչում են լուսամուտից՝ եկեղեցում թողնելով շանը, որը չէր կարող իջնել աստիճաններով: Ոստիկան Ջերրին, ինքը չի կարող չգովել նրա հնարամտությունն ու ջանասիրությունը, տարավ շանը ձիարշա-

թվայնացրել է 1915.info կայքը

վի դաշտը, և այնտեղ շունը ճանաչեց իր տիրոջը, որը նստած է մեղադրյալների նստարանին: Երկրորդ գողի հետքն արդեն գտնված է:

Հետո իմ մեղավոր լինելու մասին իր փաստարկումներն ասելով՝ դատախազը լռեց, և լսվեց ինչ–որ մեկի խիստ ձայնը. «Լռությո́ւն»:

Այդ ժամանակ դատավորը, նույնիսկ չշրջվելով իմ կողմը, կարծես խոսում էր ինքնիրեն, հարցրեց իմ ազգանունը, տարիքը և մասնագիտությունը:

Ես պատասխանեցի անգլերեն, որ իմ անունը Ֆրենսիս Դրիսկոլ է, և որ ես ապրում եմ ծնողներիս հետ Լոնդոնում՝ Բեսնալ–Գրինում՝ «Կարմիր առյուծի» բակում: Հետո ես թույլտվություն խնդրեցի խոսել ֆրանսերենով՝ բացատրելով դատավորին, որ ես մեծացել եմ Ֆրանսիայում, և ընդամենը մի քանի ամիս է, ինչ Անգլիայում եմ:

— Մի՛ փորձեք ինձ խաբել,— խստորեն ասաց դատավորը,— ես գիտեմ ֆրանսերեն:

Ես սկսեցի խոսել ֆրանսերեն և բացատրեցի, որ ոչ մի կերպ չէի կարող ժամը մեկին լինել եկեղեցում, որովհետև այդ ժամանակ ձիարշավի դաշտում էի, իսկ երեք անց կեսին՝ «Մեծ կաղնու պանդոկում»:

— Իսկ մեկ անց քառորդ որտե՞ղ էիր,— հարցրեց դատավորը:

— Ճանապարհին:

— Հենց այդ էլ պահանջվում է ապացուցել: Դուք ասում եք, որ «Մեծ կաղնու պանդոկը» տանող ճանապարհին էիք, իսկ մեղադրող կողմն այն կարծիքին է, որ Դուք եկեղեցում եք եղել: Եթե ձիարշավի դաշտից գնացել եք ժամը մեկից մի քիչ շուտ, լիովին կարող էիք հանդիպել Ձեր համագործակցին, որը, շարժական աստիճանը վերցրած, սպասում էր Ձեզ եկեղեցու պատի մոտ, իսկ գողությունից հետո կարող էիք գնալ «Մեծ կաղնու պանդոկը»:

Ես փորձում էի ապացուցել, որ դա անհնարին է, բայց տեսնում էի, որ դատավորն ինձ չի հավատում:

— Բացատրե՛ք մեզ, թե ինչպես Ձեր շունը հայտնվեց եկեղեցում,— հարցրեց ինձ դատավորը:

— Ես ինքս էլ այդ հասկանալ չեմ կարող: Շունն ինձ հետ չէր: Առավոտյան պանդոկից գնալիս ես նրան կապեցի մեր կառասայլից:

Ես այլևս ոչինչ չավելացրի, որովհետև վախենում էի, որ հորս դեմ մեղադրանքի փաստեր կտամ նրանց ձեռքը: Նայեցի Մատտիային, նա նշան արեց, որ շարունակեմ, բայց ես լռում էի:

Այն ժամանակ կանչեցին Սուրբ Գևորգ եկեղեցու պահակին, առաջարկեցին երդվել, որ կասի միայն ճշմարտությունը: Դա ցածրահասակ, գեր

թվայնացրել է 1915.info կայքը

մարդ էր և չնայած իր կարմիր դեմքին ու կապույտ քթին՝ բավականին փառահեղ տեսք ուներ:

Նա սկսեց մանրամասն պատմել, թե որքան զայրացած ու անհանգստացած էր ինքը, երբ հանկարծ իրեն արթնացրին և ասացին, որ գողերը մտել են եկեղեցի, թե ինչպես ինքը սկսեց շտապով հագնվել, և նույնիսկ բաճկոնակից երկու կոճակ պոկվեց, ինչպես վազելով եկավ եկեղեցի, բացեց դուռը և տեսավ... ոմ՝ շանը:

Իմ դատապաշտպանը, որը մինչ այդ լռում էր, հանկարծ վեր կացավ, թափահարեց կեղծամը, ուղղեց ուսերին գցած պատմուճանը և խոսք խնդրեց:

— Երեկ երեկոյան ո՞վ է փակել եկեղեցու դուռը,— հարցրեց նա:

— Ես,— պատասխանեց պահակը:— Դա իմ պարտականությունն է:

— Շատ լավ, իսկ Դուք կարո՞ղ եք երդվել, որ այս շանը ինքներդ չեք փակել եկեղեցում:

— Եթե շունը եկեղեցում լիներ, ես նրան կտեսնեի:

— Դուք լա՞վ տեսողություն ունեք:

— Տեսողությունս նորմալ է:

— Իսկ Դուք չէի՞ք, որ վեց ամիս առաջ զարնվեցիք մսավաճառի խանութի առջև կախված մսին:

— Կարծում եմ, որ իմաստ չունի այդպիսի հարցեր տալ ինձ նման մարդուն,— գոռաց պահակը՝ զայրույթից կանաչելով:

— Բարի՛ եղեք պատասխանելու այս հարցին՝ ենթադրելով, որ դա որևէ իմաստ ունի:

— Ճիշտ է, ես զարնվեցի մսին, որը, չգիտես ինչու, կախել էին մսավաճառի խանութի առաջ:

— Ուրեմն Դուք միսը չնկատեցի՞ք:

— Ես մտքերի մեջ էի:

— Դուք եկեղեցու դուռը փակեցիք ճաշելուց հետո՞:

— Իհա՛րկե:

— Իսկ մսին զարնվեցիք նույնպե՞ս ճաշից հետո:

— Բայց...

— Դուք ուզում եք ասել, որ այդ օրը չէիք ճաշել:

— Ո՛չ, ճաշել էի:

— Իսկ ճաշի ժամանակ ի՞նչ գարեջուր եք խմում. թո՞ւյլ, թե՞ ուժեղ:

— Ուժեղ:

— Իսկ քանի՞ շիշ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Երկու:
— Երկուսից շատ երբեք չե՞ք խմում:
— Երբեմն խմում եմ երեք շիշ:
— Իսկ պատահո՞ւմ է, որ խմեք չորս կամ վեց շիշ գարեջուր:
— Շատ հազվադեպ:
— Իսկ ճաշից հետո դուք գրոգ[15] խմո՞ւմ եք:
— Երբեմն խմում եմ:
— Դուք թո՞ւյլ գրոգ եք սիրում, թե՞ ուժեղ:
— Ոչ այնքան թույլ:
— Իսկ քանի՞ բաժակ եք խմում:
— Նայած հանգամանքներին:
— Կարո՞ղ եք երդվել, որ երբեմն չեք խմում երեք կամ նույնիսկ չորս բաժակ:

Պահակը զայրույթից կաս–կարմիր կտրեց և ոչինչ չպատասխանեց: Իսկ դատապաշտպանը, նստելով իր տեղը, ասաց.

— Այս վկայի հարցաքննությունը ցույց տվեց, որ նա կարող էր ինքը փակած լինել շանը եկեղեցում: Նա ճաշից հետո երբեմն այնքան մտածկոտ է լինում, որ չի նկատում նույնիսկ կախված միսը: Ես միայն այդքանն էի ուզում իմանալ:

Եթե ես կարողանայի, ապա կհամբուրեի իմ դատապաշտպանին: Իսկապես, ինչու Կապին չէր կարող պատահաբար փակված լինել եկեղեցում: Իսկ եթե պահակն ինքն է նրան փակել, ուրեմն ես չեմ տարել Կապիին եկեղեցի, հետևաբար մեղավոր չեմ:

Իմ դեմ եղած միակ մեղադրանքը հերքվում էր:

Պահակից հետո ցուցմունքներ էին տալիս այն մարդիկ, որոնք նրա հետ եկեղեցի էին եկել: Բայց նրանք բոլորովին ոչինչ չէին նշում՝ բացի բաց լուսամուտից, որտեղից փախել էին գողերը:

Հետո ելույթ ունեցան ինձ պաշտպանող վկաները՝ Բոբը, նրա ընկերները և պանդոկապանը: Նրանք բոլորն էլ ցուցմունք էին տալիս, թե որտեղ էի ես այն երեկո և որ ժամին: Բայց մի հարց. այն էլ ամենակարևորը, թե ժամը քանիսին ես գնացի ձիարշավի դաշտից, այդպես էլ չպարզվեց:

Հարցաքննությունն ավարտելով՝ դատավորը հարցրեց, թե ես չե՞մ ցանկանում արդյոք որևէ բան ասել՝ նախազգուշացնելով, որ կարող եմ և չխոսել, եթե կարծում եմ՝ անհրաժեշտ չէ:

---

[15] Գրոգ — ալկոհոլային խմիչք՝ եռացրած ջրի ու ռոմի կամ կոնյակի և շաքարի խառնուրդով:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես պատասխանեցի, որ մեղավոր չեմ և հույսս լիովին դնում եմ արդարադատության վրա:

Դատավորը բարձրաձայն կարդաց ցուցմունքների արձանագրությունը, իսկ հետո հայտարարեց, որ ինձ պետք է փոխադրեն մի ուրիշ բանտ: Այնտեղ ես պետք է սպասեմ այն որոշմանը, թե հարկ կա՞ արդյոք իմ գործը երդվյալների դատարան ներկայացնելու:

Երդվյալների դատարան:

Ես ընկա նստարանին: Ինչո՞ւ չլսեցի Մատտիային:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 19

ԲՈԲԸ

Բանտիս խցիկը վերադառնալով՝ երկար մտածմունքից հետո միայն գտա պատճառը, թե ինչու ինձ չարդարացրին: Դատավորն ուզում էր ինձ պահել, մինչև որ ձերբակալեն նրանց, ովքեր եղել են եկեղեցում, և այդպիսով պարզել, թե ես արդյոք նրանց համախո՞հն եմ: Ինչպես ասաց դատախազը. «Նրանց հետքն արդեն գտնված է, և հավանաբար մոտ ժամանակներս ես նրանց հետ կնստեմ մեղադրական աթոռին:

Գիշերվա մոտ լսեցի կոմնետապիստոնի ձայնը և ճանաչեցի Մատտիայի նվագը: Իմ ընկերը հավանաբար ուզում էր դրանով ասել, որ մտածում էր իմ մասին և նույնպես քնած չէ:

Հնչյունները լսվում էին այն պատի հետևից, որը իմ լուսամուտի տակ էր: Հավանաբար Մատտիան կանգնած էր փողոցում՝ պատի այն կողմում, և մեզ մեծ տարածություն չէր բաժանում՝ ընդամենը մի քանի մետր: Դժբախտաբար, աչքերով չի կարելի ճեղքել քարերը, բայց եթե հայացքը չի թափանցում պատերի միջից, ապա ձայնը կթափանցի: Կոմնետի հնչյուններին միացան քայլերի աղմուկ, խառնիխուռն ձայներ, և ես որոշեցի, որ Մատտիան ու Բոբը ներկայացում են տալիս:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչո՞ւ են նրանք ընտրել այս վայրը: Մի՞թե հույս ունեն, որ այստեղ լավ կվաստակեն, թե՞ ցանկանում են որևէ բան նախազգուշացնել ինձ:

Հանկարծ ես լսեցի Մատտիայի ձայնը: Նա չափազանց պարզ, ֆրանսերենով բացականչեց. «Վաղը՝ լուսաբացին»: Եվ իսկույն ավելի ուժգնությամբ հնչեց կոռնետը:

Ես անմիջապես գլխի ընկա, որ Մատտիան ոչ թե անգլիացի հանդիսատեսների էր դիմում, այլ ինձ՝ «Վաղը՝ լուսաբացին» բառերով, բայց հասկանալ, թե ինչ էին նշանակում այդ բառերը, բավականին դժվար էր:

Կրկին գլխումս բազմաթիվ հարցեր ծագեցին, որ պատասխանել չէի կարող: Միայն մի բան պարզ էր ու որոշակի. վաղն առավոտյան ես պետք է արթնանամ մինչ լույսը բացվելը և սպասեմ ինչ–որ բանի, իսկ մինչ այդ պետք է համբերեմ: Հենց որ մթնեց, ես պառկեցի՝ որոշելով քնել, բայց չկարողացա: Ես մի քանի անգամ լսեցի աշտարակի ժամացույցի զարկերը:

Երբ արթնացա, դեռ բոլորովին մութ էր. աստղերը շողշողում էին երկնքում, ոչինչ չէր խախտում լռությունը: Հավանաբար մինչև լույսը բացվելը դեռ շատ ժամանակ կար: Շուտով աշտարակի ժամացույցը խփեց երեքը: Ես արթնացել էի շատ վաղ, բայց վախեցա նորից պառկել. բացի այդ՝ վստահ էի, որ եթե նույնիսկ քնելու ցանկություն էլ ունենամ, չեմ կարողանա քնել:

Պատին հենված՝ ես աչքս չէի կտրում լուսամուտից: Վերջապես այն աստղը, որին ես նայում էի, սկսեց խամրել, և երկինքը թեթևակիորեն շիկնեց: Լույսը բացվում էր: Հեռվում կանչեցին աքաղաղները:

Ես վեր կացա և ոտքիս թաթերին քայլելով՝ մոտեցա լուսամուտին: Հեշտ չէր անաղմուկ բացել լուսամուտը, բայց ես դանդաղորեն և զգուշությամբ բացեցի: Դեռ մնում էին երկաթյա ձողերը, հաստ պատերը և երկաթապատ դուռը: Այսպիսի պայմաններում ազատվելու հույսն աննշան էր թվում, և չնայած դրան՝ ես հույսս չէի կորցնում:

Աստղերն ավելի ու ավելի էին աղոտանում: Ես դողում էի առավոտյան ցրտից, բայց չէի հեռանում լուսամուտից, նայում էի ու ականջ դնում՝ ինքս էլ չիմանալով, թե ինչ պետք է տեսնեմ կամ լսեմ: Մառախուղը բարձրացավ ու ցրվեց, և բոլոր առարկաները հետզհետե սկսեցին ավելի պարզ երևալ: Ես շունչս պահած կանգնել էի, բայց ոչինչ չէի լսում՝ բացի սեփական սրտիս զարկերից:

Հանկարծ ինձ թվաց, որ ինչ–որ մեկը ճանկռոտում է պատը, իսկ քանի որ ես քայլերի ձայն չէի լսել, ապա որոշեցի, որ սխալվել եմ: Եվ չնայած դրան՝

թվայնացրել է 1915.info կայքը

լսողությունս լարեցի: Ձայնը շարունակվում էր, հետո պատի վերևում մի գլուխ երևաց, և չնայած դեռ մութ էր, ես իսկույն ճանաչեցի Բոբին:

Նա տեսավ, որ ես կանգնած եմ լուսամուտի երկաթներին սեղմված:

— Սլ՛ս,— հազիվ լսելի ձայնով ասաց նա և ձեռքով նշան արեց, որ հեռանամ լուսամուտից:

Չհասկանալով, թե դա ինչ իմաստ ունի՝ համենայն դեպս կատարեցի նրա ասածը: Ինձ թվաց, որ մյուս ձեռքում Բոբը բռնել էր երկար, փայլուն մի խողովակ, որը կարծես ապակուց էր պատրաստված: Նա այդ խողովակը դրեց բերանին: Հետո լսեցի կամացուկ սուլոց և միևնույն ժամանակ տեսա, թե ինչպես լուսամուտից ներս թռավ փոքրիկ, սպիտակ մի գունդ և ընկավ ոտքերիս մոտ: Բոբի գլուխն իսկույն անհայտացավ պատի հետևում: Ամեն բան լռեց:

Արագորեն նետվեցի դեպի գնդիկը: Արճճի փոքրիկ մի կտորի վրա բարակ թուղթ էր փաթաթած: Ինձ թվաց, որ թղթի վրա ինչ–որ բան է գրված, բայց քանի որ դեռ լավ չէր լուսացել, ես չէի կարող կարդալ: Ստիպված էի սպասել, որ օրը բացվի: Ես աշխատեցի հնարավորինս կամացուկ ծածկել լուսամուտը և գնդիկը ձեռքիս՝ արագ պառկեցի:

Բավականին երկար ժամանակ լույսը չէր բացվում. ինձ համար դա չափազանց երկար թվաց, որովհետև սպասում էի դրան մեծ անհամբերությամբ: Բայց ահա նախ՝ դեղին, իսկ հետո վարդագույն լույս խաղաց բանտախցի պատերին. այդ ժամանակ ես բացեցի թուղթը և կարդացի. «Վաղն առավոտյան քեզ տեղափոխելու են քաղաքային բանտը: Դու գնալու ես ոստիկանի հետ գնացքով՝ առանձին խցիկով: Նստի՛ր այն դռան մոտ, որտեղից վագոն կբարձրանաս: Որոշ ժամանակ անց (առանձնապես ուշադի՛ր եղիր) մի գծից մյուսն անցնելիս գնացքը կդանդաղեցնի ընթացքը: Այդ ժամանակ դո՛ւռը բաց և համարձակ ցա՛ծ թռիր: Թռչելիս ձեռքերդ առա՛ջ մեկնիր և աշխատի՛ր ամուր կանգնել գետնին: Հետո բարձրացի՛ր բլրակը, որը կլինի քո ձախ կողմում, այնտեղ մենք կհանդիպենք քեզ և կբերենք ձի ու սայլ: Ոչնչից մի՛ վախենա: Երկու օր հետո մենք կլինենք Ֆրանսիայում: Համարձա՛կ եղիր, չընկճվես: Միայն թե աշխատի՛ր, որքան հնարավոր է, թռչել հեռու և ամո՛ւր կանգնիր ոտքերիդ»:

Փրկված եմ: Հիմա ինձ չեն դատի, և ես չեմ տեսնի այն, ինչ տեղի կունենա դատարանում: Ինչպիսի՛ երջանկություն: Ա՛խ, իմ թանկագի՛ն Մատտիա, թանկագի՛ն Բոբ: Ես չէի կասկածում, որ Բոբն է օգնում Մատտիային:

թվայնացրել է 1915.info կայքը

«Այնտեղ մենք կհանդիպենք քեզ և ձի կբերենք»: Պարզ է, Մատտիան մենակ չէր կարող գլուխ բերել այդ գործը:

Եվ ես կրկին կարդացի գրությունը. «...գնացքը կդանդաղեցնի ընթացքը», «բլրակը, որը կլինի ձախ կողմում», «ամուր կանգնի՛ր ոտքերիդ»: Իհարկե, ես աներկյուղ առաջ կնետվեմ: Ավելի լավ է մեռնել, քան դատապարտվել գողության համար:

Ա՛խ, ինչ լավ է մտածված ամեն բան: «Երկու օր հետո մենք կլինենք Ֆրանսիայում»:

Իմ ուրախությունը մթագնում էր միայն Կապիի հարցը, բայց ես աշխատում էի չմտածել այդ մասին: Չի կարող պատահել, որ Մատտիան թողնի Կապիին: Եթե նա միջոց է գտել իմ փախուստը կազմակերպելու, անկասկած կգտնի նաև որևէ միջոց Կապիին փրկելու համար:

Ես գրությունը կարդացի երկու թե երեք անգամ, հետո ծամեցի ու կուլ տվեցի: Հիմա ես պետք է մի լավ քունս առնեի, դրա համար պառկեցի ու քնեցի մինչ այն ժամը, երբ բանտապահը ուտելիք բերեց ինձ համար:

Ժամանակն անցավ բավականին արագ: Հետևյալ օրը՝ կեսօրից հետո, ինձ մոտ մտավ անծանոթ մի ոստիկան և կարգադրեց հետևել իրեն: Ես ուրախությամբ մտածեցի, որ նա բավականին տարիք ուներ և դանդաղշարժ էր:

Ամեն բան դասավորվում էր ճիշտ այնպես, ինչպես գրել էր Մատտիան: Երբ գնացքը շարժվեց, ես նստեցի մուտքի դռան մոտ: Ոստիկանը նստած էր իմ դիմաց: Մենք մենակ էինք խցիկում:

— Դու խոսո՞ւմ ես անգլերեն,— հարցրեց ինձ ոստիկանը:

— Մի քիչ:

— Իսկ անգլերեն հասկանո՞ւմ ես:

— Հասկանում եմ համարյա ամեն բան, եթե շատ արագ չեն խոսում:

— Այդ դեպքում, տղա՛ս, լսի՛ր իմ բարի խորհուրդը. մի՛ խորամանկիր դատարանի առաջ, խոստովանի՛ր մեղքդ: Դու դրանով կշահես ընդհանուրի համակրանքը: Ոչինչ չկա ավելի վատ, քան երբ մարդիկ հերքում են այն, ինչ ակնհայտ է: Ուստի նա, ով խոստովանում է իր մեղքը, արժանանում է համակրանքի և բարի վերաբերմունքի: Դե՛ ասա, թե գործն ինչպես եղավ, և ինձնից դրամ կստանաս: Դու կտեսնես, որ փողը քեզ շատ պետք կգա բանտում:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես քիչ մնաց պատասխանեի. «Ես խոստովանելու ոչինչ չունեմ», բայց իսկույն սթափվեցի և լռեցի՝ որոշելով, որ ինձ անհրաժեշտ է շահել ոստիկանի համակրանքը:

— Լավ մտածիր,— շարունակեց նա,— և երբ կգնահատես իմ խորհուրդը, կանչիր ինձ քեզ մոտ: Իմ անունը Դոլֆեն է: Լավ:

Ես գլխով արի:

Ես կանգնել էի՝ դռանը հենված: Դռան ապակին իջեցված էր: Լուսամուտից նայելու թույլտվություն խնդրեցի ոստիկանից, և քանի որ նա նույնպես ցանկանում էր «շահել իմ համակրանքը», ապա պատասխանեց, որ կարող եմ նայել, որքան ուզում եմ: Նա վախենալու ոչինչ չուներ:

Գնացքը սլանում էր լրիվ ընթացքով: Շուտով ոստիկանը երևի մրսեց, որովհետև քամի էր փչում լուսամուտից: Նա դռնից հեռացավ և նստեց: Ինչ վերաբերում է ինձ, ես ցուրտ չէի զգում: Կամացուկ դուրս հանելով ձախ ձեռքս՝ դռան բռնակը պտտեցի, իսկ աջով պահում էի դուռը, որ չբացվի: Ժամանակն անցնում էր: Հանկարծ գնացքը սուլեց և սկսեց դանդաղեցնել ընթացքը: Վրա հասավ ցանկալի վայրկյանը: Ես արագորեն հրեցի դուռը, ուժեղ ոստյունով դուրս նետվեցի վագոնից և հայտնվեցի առվի մեջ: Բարեբախտաբար, ես չվնասվեցի, որովհետև ձեռքերով հենվեցի ճմապատ զառիթափին, բայց հարվածն այնքան ուժեղ էր, որ ցած ընկա և գիտակցությունս կորցրի:

Երբ ուշքի եկա, ինձ թվաց, որ ես դեռ գնում եմ գնացքով: Բայց տարօրինակ բան. ամբողջ դեմքս թաց էր, այտերիս ու ճակատիս զգում էի ինչ–որ մեկի քնքուշ ու ջերմ շոյանքը:

Ես աչքերս բացեցի: Ինձ մոտ մի շուն կար: Ինչ–որ զզվելի, դեղին մի շուն, որը լիզում էր ինձ: Իմ հայացքը հանդիպեց Մատտիայի հայացքին, որը ծնկի էր եկել կողքիս:

— Դու փրկված ես,— բացականչեց նա՝ հեռացնելով շանը և համբուրելով ինձ:

— Որտեղ ենք:

— Սայլում: Մեզ Բոբն է տանում:

— Ինչպե՞ս են գործերը,— շրջվելով հարցրեց Բոբը:

— Չգիտեմ, կարծես թե ամեն ինչ կարգին է:

— Փորձի՛ր շարժել ոտքերդ ու ձեռքերդ,— գոռաց Բոբը:

Ես կատարեցի նրա կարգադրությունը:

— Հիանալի է,— ասաց Մատտիան,— ոչ մի տեղդ չի կոտրվել:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչպե՞ս եղավ այս ամենը:

— Դու բարեհաջող թռար գնացքից, բայց ցնցումը շշմեցրեց քեզ, և դու գլորվեցիր առուն: Բոբը, տեսնելով, որ դու չես գալիս, արագ ցած սլացավ բլրակից և ձեռքերի վրա առած՝ բերեց: Մեզ թվաց, որ դու մեռել ես: Մենք անչափ վախեցանք ու վշտացանք: Բայց, փա՛ռք Աստծո, դու կենդանի ես:

— Իսկ ոստիկա՞նը:

— Գնում է գնացքով, որը, իհարկե, կանգ չառավ:

Ես ամենակարևորն իմացա: Շուրջս նայելով՝ տեսա դեղին շանը, որը քնքշորեն նայում էր ինձ հավատարիմ աչքերով, որոնք նման էին Կապիի աչքերին: Բայց չէ՞ որ իմ Կապին սպիտակ էր:

— Իսկ Կապի՞ն,— հարցրի ես:— Ո՞ւր է նա:

Մինչ Մատտիան կպատասխաներ, դեղին շունը նետվեց դեպի ինձ և սկսեց կլանչել ու լիզել:

— Ահա՛ Կապին,— ասաց Մատտիան:— Մենք նրան ներկել ենք:

Այդ ժամանակ ես էլ իմ հերթին սկսեցի շոյել և համբուրել Կապիին:

— Ինչո՞ւ ես ներկել,— հարցրի ես:

— Դա երկար պատմություն է, հիմա կպատմեմ:

Բայց Բոբը թույլ չտվեց, որ նա պատմի:

— Չի՛ն քշիր,— դիմեց նա Մատտիային,— և լա՛վ բռնիր սանձը: Իսկ ես հիմա կզբաղվեմ սայլով: Պետք է սայլին այնպիսի տեսք տալ, որ ուղեկալնե-րում չճանաչեն:

Մեր սայլը սովորական սայլ էր՝ կտավե ծածկոցով, որը ամրացված էր օղակներով: Բոբը օղակալները դրեց սայլի մեջ, քաթանը չորստակ ծալեց և պատվիրեց ինձ, որ վրաս գցեմ: Հետո Մատտիային էլ խորհուրդ տվեց թաքնվել կտավի տակ: Այդպիսով՝ սայլն իսկույն փոխեց իր տեսքը. այն ծածկոց չուներ այլևս, և երեք մարդու փոխարեն սայլում նստած էր միայն մեկ մարդ: Մեզ հետապնդողները մոլորության մեջ կընկնեն:

— Ո՞ւր ենք գնում,— հարցրի ես Մատտիային, երբ նա նստեց կողքիս:

— Լիտոլհեմպտոն: Դա փոքրիկ ծովափնյա նավահանգիստ է, որտեղ Բոբի եղբայրն է, որը մի փոքրիկ նավի կապիտան է. այդ նավը գնում է Ֆրանսիա՝ յուղ ու ձու բերելու: Եթե մենք փրկվենք, իսկ մենք հավանա-բար կփրկվենք, ապա լիովին պարտական կլինենք Բոբին: Ամեն բան նա է արել: Ես մենակ ի՛նչ կարող էի անել: Բոբի միտքն էր գրությունը խողովակով փչելը, քո ցած թռչելը գնացքից. նա համոզեց իր ընկերներին, որ ձի տան մեզ: Վերջապես նա գտավ նավ Ֆրանսիա գնալու համար, որովհետև եթե

թվայնացրել է 1915.info կայքը

դու փորձեիր գնալ շոգենավով, քեզ անպայման կբռնեին: Տեսնո՞ւմ ես՝ ինչքան լավ է բարեկամներ ունենալը:

— Իսկ ո՞վ մտածեց Կապիին վերցնելու մասին:

— Ես: Բայց այդ Բոբը որոշեց ներկել նրան դեղինով, որպեսզի նրան չճանաչեն: Չէ՞ որ մենք Կապիին գողացել ենք ոստիկան Ջերրիից, «հնարամիտ» Ջերրիից, ինչպես կոչեց նրան դատախազը: Այս անգամ նա այնքան հնարամիտ չեղավ և ձեռքից բաց թողեց Կապիին: Ճիշտ է, Կապին, զգալով, որ ես մոտ եմ, համարյա ամեն բան ինքն արեց:

— Իսկ ինչպե՞ս է ոտքդ:

— Լավացել է, համարյա լավացել է: Ճիշտն ասած, չգիտեմ: Ես ժամանակ չունեի դրա մասին մտածելու:

Անգլիայի ճանապարհներով չի կարելի այնպես ազատ երթևեկել, ինչպես Ֆրանսիայի: Ամենուրեք ուղեկալներ կան, և անցնելու համար պետք է վճարել սահմանված գումարը: Երբ մոտենում էինք այդպիսի ուղեկալների, Բոբը կարգադրում էր մեզ լռել ու չշարժվել. այդ պատճառով պահակները

թվայնացրել է 1915.info կայքը

տեսնում էին մի սայլ, որի մեջ միայն մի մարդ էր նստած: Բոբը նրանց հետ մի քիչ կատակում էր և հանգստությամբ շարունակում ճանապարհը: Բոբը գրիմ էր արել և իսկական ագարակատիրոջ տեսք ուներ: Նույնիսկ նրանք, ովքեր լավ գիտեին Բոբին, հիմա չէին կարողանա ճանաչել նրան:

Մենք գնում էինք արագ, ձին լավ ձի էր, և Բոբը հիանալի էր վարում սայլը: Բայց պետք էր հանգիստ տալ ձիուն և կերակրել նրան: Մենք պանդոկ չմտանք: Բոբը կանգ առավ անտառում, հանեց ձիու սանձը, նրա վզին գցեց վարսակով լի տոպրակը, որը դուրս բերեց սայլից: Համարյա բոլորովին մթնել էր, և մենք կարող էինք չվախենալ, որ մեզ կտեսնեն:

Հիմա ես կարող էի խոսել Բոբի հետ և շնորհակալություն հայտնել նրան: Բայց նա թույլ չտվեց ինձ ասել այն ամենը, ինչ ցանկանում էի:

— Այն ժամանակ Դուք ինձ փրկեցիք,— ասաց նա՝ ձեռքս սեղմելով,— իսկ այսօր ես եմ փրկում Ձեզ: Բացի այդ՝ Դուք Մատտիայի ընկերն եք, իսկ այնպիսի լավ տղայի համար, ինչպիսին Մատտիան է, կարելի է շատ բան անել:

Ես հարցրի, թե որքան է մնում մինչև Լիտոլհեմպտոն հասնելը: Նա պատասխանեց, որ մնում է երկու ժամվա ճանապարհ, և որ պետք է շտապել: Իր եղբոր նավը Ֆրանսիա է գնում շաբաթ օրերը, իսկ այսօր ուրբաթ է, և ինքը կարծում է, որ տեղատվությունն այսօր շուտ կսկսվի:

Մենք կրկին պառկեցինք ծղոտի վրա՝ կտավի տակ: Ձին, որ արդեն հանգստացել էր, վազում էր արագ:

— Դու վախենո՞ւմ ես,— հարցրեց ինձ Մատտիան:

— Վախենում եմ, որ ինձ նորից կարող են բռնել:

— Մի՛ վախենա, ոչինչ էլ չի լինի: Երբ գնացքը կանգնի, ոստիկանը կսկսի զեկուցագիր գրել: Բայց մինչև սկսվեն որոնումները, շատ ժամանակ կանցնի, և մենք արդեն հեռու կլինենք: Բացի այդ՝ նրանք չեն կարող իմանալ, որ մենք պատրաստվում ենք մեկնելու Լիտոլհեմպտոնից:

Իսկ մեր ձին, որ վարպետությամբ վարում էր Բոբը, աշխույժ վազում էր ամայի ճանապարհով: Ժամանակ առ ժամանակ մենք հանդիպում էինք սայլերի, բայց դրանցից ոչ մեկը մեզնից առաջ չէր անցնում: Գյուղերում, որոնց միջով անցնում էինք, լռություն էր տիրում, միայն մի քանի լուսամուտում լույս կար: Շներն էին սոսկ ուշադրություն դարձնում մեր արագ ընթացքին և հաչոցով ճանապարհ էին դնում մեզ:

Մենք հիմա պառկել էինք կտավի տակ, արդեն ոչ թե թաքնվելու համար, այլ որ պաշտպանվեինք ցուրտ քամուց: Մեր շրթունքները լիզելիս

թվայնացրել է 1915.info կայքը

զգում էինք, որ աղի էին, հետևաբար մոտենում էինք ծովին: Շուտով լույս նկատեցինք, որը հավասար ընդմիջումներով մերթ անհայտանում էր, մերթ կրկին հայտնվում: Դա փարոսն էր: Մենք տեղ էինք հասել:

Բոբը քաշեց ձիու սանձը՝ ստիպելով, որ դանդաղ ընթանա, և զգուշորեն դուրս բերեց մեզ գյուղամիջի ճանապարհը:

Սայլից իջնելով՝ նա պատվիրեց մեզ մնալ սայլի մեջ, իսկ ինքը գնաց՝ իմանալու, թե այստեղ է արդյոք իր եղբայրը և կարող է մեզ տանել իր նավով:

Պետք է խոստովանեմ, որ Բոբի բացակայությունն ինձ շատ երկար թվաց: Ես ու Մատտիան լուռ ականջ էինք դնում մեզնից ոչ հեռու՝ ավազոտ ափին զարնվող ծովի աղմուկին: Այդ աղմուկն ավելի էր սաստկացնում մեր հուզմունքը: Երկուսս էլ դողում էինք:

Վերջապես քայլերի ձայն լսվեց. վերադառնում էր Բոբը: Հիմա կվճռվի իմ բախտը:

Բոբը մենակ չէր: Երբ նա մոտեցավ մեզ, տեսանք, որ նրան ուղեկցում է ծովայինի գլխարկով և մոմլաթե բաճկոնով մի մարդ:

— Ահա իմ եղբայրը,— ասաց Բոբը:— Նա ձեզ տանելու է իր հետ, և հենց ինքն էլ նավ կնստեցնի ձեզ, իսկ հիմա ավելի լավ է՝ բաժանվենք: Թող չիմանան, որ ես այստեղ եմ եղել:

Ես սկսեցի շնորհակալություն հայտնել Բոբին, բայց նա ընդհատեց իմ խոսքը և ամուր սեղմեց ձեռքս:

— Շնորհակալության կարիք չկա,— ասաց նա:— Ընկերները պարտավոր են օգնել միմյանց: Հուսով եմ, որ մենք դեռ կհանդիպենք: Ես երջանիկ եմ, որ օգնեցի Մատտիային:

Մենք գնացինք Բոբի եղբոր հետևից և անցնելով քաղաքի մի քանի ամայի փողոցներով՝ հասանք ծովափ, որտեղ ծովի քամին փչում էր ուղիղ երեսներիս: Ոչինչ չասելով՝ Բոբի եղբայրը մատնացույց արեց նավը, որը պատրաստ էր արդեն մեկնելու:

Մի քանի րոպե անց մենք արդեն նավի վրա էինք, որտեղ Բոբի եղբայրը ստիպեց, որ իջնենք փոքրիկ նավախցիկը:

— Ես ծով պիտի դուրս գամ երկու ժամից ոչ շուտ: Նստեք այստեղ և չաղմկեք:

Հենց որ նա բանալիով փակեց մեր նավախցիկի դուռը, Մատտիան նետվեց գիրկս և ամուր համբուրեց ինձ: Հիմա նա այլևս չէր դողում:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 20

«ԿԱՐԱՊԸ»

Կապիտանի գնալուց հետո որոշ ժամանակ մեր շուրջն ամեն ինչ խաղաղ էր ու լուռ, միայն քամին էր սուրում նավակայմերի մեջ, և նավի տակ ճողփում էր ջուրը: Բայց կամաց–կամաց նավը կյանք առավ տախտակամածի վրա. լսվեց քայլերի ձայն. ցած ընկան նավը կապող պարանները. ճոռացին ճախարակները, պտտվեցին կարապիկները, որոնք փաթաթում ու բաց էին թողնում շղթաները:

Նավաստիները բարձրացրին առագաստները, շարժվեց ղեկը, և հանկարծ նավը, ձախ կողին թեքվելով, ցնցվեց: Մենք հեռացանք ափից. ես փրկված էի:

Նավի օրորումը սկզբում թույլ էր, բայց շուտով ուժեղացավ: Նավը սուզվում էր, հետո վեր թռչում, ծովի ծանր ալիքները զարնվում էին աջ նավեզրին:

— Խեղճ Մատտիա,— ասացի ես ընկերոջս և բռնեցի նրա ձեռքը:

Այդ ժամանակ բացվեց նավախցի դուռը:

— Եթե դուք ցանկանում եք տախտակամած բարձրանալ, կարող եք. դա հիմա վտանգավոր չէ,— հայտարարեց կապիտանը:

— Իսկ որտեղ է ավելի քիչ ճոճում,— հարցրեց Մատտիան:

— Երբ պառկած ես, ավելի քիչ է ճոճում:

— Շնորհակալություն: Այդ դեպքում ես կմնամ այստեղ ու կպառկեմ:

Եվ Մատտիան մեկնվեց տախտակների վրա:

Ես ուզում էի մնալ նրա մոտ, բայց նա ինձ տախտակամած ուղարկեց:

— Այս բոլորը դատարկ բան են,— ասաց նա,— չէ՞ որ դու ազատ ես: Երբեք չէի կարող մտածել, որ նույնիսկ ծովային հիվանդությունը կարող է ինձ հաճույք պատճառել:

Երբ ես տախտակամած բարձրացա, պարզվեց, որ այնտեղ կարելի է կանգնել միայն նավակապ պարանից բռնած: Մթության մեջ ոչինչ չէր երևում՝ բացի սպիտակ փրփուրից: Մեր փոքրիկ նավը սլանում էր այդ փրփուրի միջով, և այնպես էր թեքվում, կարծես պատրաստվում էր շրջվելու, բայց չէր շրջվում, այլ, ընդհակառակը, թեթևորեն սահում էր բարենպաստ քամուց առաջ քշվող ալիքների վրայով:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես հետ նայեցի: Նավահանգստի լույսերը մառախլապատ մշուշի մեջ փոքրիկ, շողշողուն կետեր էին թվում, և, տեսնելով, թե նրանք ինչպես են հետզհետե անհետանում, ես ազատության ուրախ զգացումով հրաժեշտ էի տալիս Անգլիային:

— Եթե քամին միշտ այդպես փչի,— դիմեց կապիտանը ինձ,— այս երեկոյան մենք Ֆրանսիայում կլինենք: «Էկլիպսը» լավ առագաստանավ է:

Քանի որ «Էկլիպսը» նավահանգիստ մտավ միայն ուշ երեկոյան, կապիտանը թույլատրեց մեզ գիշերել նավում: Հետևյալ առավոտ մենք հրաժեշտ տվեցինք նրան՝ ջերմագին շնորհակալություն հայտնելով օգնության համար:

— Եթե ցանկանաք Անգլիա վերադառնալ,— ասաց նա՝ ամուր սեղմելով մեր ձեռքը,— ապա իմացե՛ք, որ «Էկլիպսը» այստեղից մեկնում է երեքշաբթի օրերը և պատրաստ է ծառայելու ձեզ:

Նրա կողմից դա շատ սիրալիր առաջարկ էր, բայց ո՛չ ես, ո՛չ Մատտիան ցանկություն չունեցանք օգտվելու այդ առաջարկությունից: Մեզնից ամեն մեկը դրա համար իր պատճառներն ուներ:

Մենք ափ իջանք Ֆրանսիայում՝ չունենալով ոչինչ՝ բացի հագուստից և մեր գործիքներից: Դեռ լավ էր, որ Մատտիան հիշել և վերցրել էր իմ տավիղը: Մեր տոպրակներն իրենց ամբողջ պարունակությամբ մնացել էին Դրիսկոլի կառապայլում:

Բարեբախտաբար, Մատտիան իր մոտ հավաքած ուներ տասներկու ֆրանկ՝ դրան ավելացրած և այն փողը, որ մենք վաստակել էինք Բոբի և լարախաղացների հետ ունեցած ելույթի ժամանակ: Ամբողջը միասին մոտ քառասուն ֆրանկ էր, որը մեզ համար զգալի գումար էր: Մատտիան ուզում էր այդ փողով հատուցել իմ փախուստի հետ կապված ծախսերը, բայց Բոբը պատասխանեց, որ ընկերներին մատուցած ծառայությունների համար չեն վճարում, և ոչինչ չցանկացավ վերցնել:

Ափ իջնելով՝ մենք առաջին հերթին գնացինք՝ զինվորական հին ուսապարկ գնելու, իսկ հետո գնեցինք ճանապարհի համար ամենաանհրաժեշտ իրերը և վերջապես այն, ինչ մեզ պետք էր ամենից շատ՝ Ֆրանսիայի քարտեզը:

Հիմա մենք պետք է որոշենք, թե ուր ենք գնալու և որ ճանապարհով:

— Ինչ վերաբերում է ինձ,— հայտարարեց Մատտիան,— ես պատրաստ եմ գնալու այնտեղ, ուր ցանկանում ես, միայն թե մի բան եմ խնդրելու:

— Ինչ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Որպեսզի գնայինք գետի կամ որևէ ջրանցքի ափով: Դրա համար ես իմ պատճառներն ունեմ:

Ես չհարցրի Մատտիային, թե ինչ պատճառներ էին դրանք, և նա շարունակեց.

— Ես հիմա կբացատրեմ, թե ինչ եմ մտածում: Երբ Արթուրը հիվանդ էր, տիկին Միլլիգանը նրա հետ նավարկում էր գետով, և դու գետափին հանդիպեցիր «Կարապին»:

— Հիմա Արթուրն առողջացել է:

— Այսինքն՝ նա իրեն հիմա ավելի լավ է զգում: Բայց նա շատ լուրջ հիվանդ էր, և ինձ թվում է, որ տիկին Միլլիգանը նորից է նրա հետ նավարկում այն գետերով ու ջրանցքներով, որտեղով որ կարող է անցնել «Կարապը»: Եթե մենք գնանք այդ գետերի երկայնքով, ապա հավանաբար կհանդիպենք «Կարապին»:

— Քեզ ոմն ասաց, որ «Կարապը» Ֆրանսիայում է:

— Ոչ ոք: Բայց մենք պետք է փորձենք: Ես ցանկանում եմ, ինչ գնով էլ լինի, գտնել տիկին Միլլիգանին և կարծում եմ, որ մենք, հանուն այդ բանի, պետք է դիմենք բոլոր միջոցներին:

— Իսկ ինչպես վարվենք Լիզայի, Ալեքսիսի, Բենժամենի և Էդուենետտայի հետ:

— Տիկին Միլլիգանին փնտրելիս մենք բոլորին էլ կայցելենք: Պետք է միայն գնալ գետի կամ ջրանցքի ափով: Նայի՛ր քարտեզին, թե որ գետն է մեզ ամենամոտը:

Մենք քարտեզը փռեցինք խոտի վրա և սկսեցինք որոնել ամենամոտ գետը: Պարզվեց, որ դա Սենան էր:

— Շարժվենք դեպի Սենա,— ասաց Մատտիան:

— Բայց այդ դեպքում մենք ստիպված կլինենք մտնել Փարիզ:

— Թող այդպես լինի:

— Ես Վիտալիսից լսել եմ, որ եթե ցանկանում ես գտնել որևէ մեկի, ապա փնտրի՛ր նրան Փարիզում: Եթե անգլիական ոստիկանությունը գողության համար ինձ սկսի փնտրել և Փարիզում ձերբակալի, այդ դեպքում չարժեր նույնիսկ հեռանալ Անգլիայից:

— Մի՞թե անգլիական ոստիկանությունը կարող է քեզ հետապնդել Փարիզում:

— Չգիտեմ: Բայց եթե այդպես լինի, ապա չարժե Փարիզ գնալ:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ դեպքում Սենայի ափով գնանք մինչև Փարիզի շրջակայքը, հետո շրջանցենք Փարիզն ու կրկին գնանք Սենայով: Ես այլևս ցանկություն չունեմ Գարաֆոլիին հանդիպելու:

— Հասկանալի է:

— Դե լավ, ճանապարհին կսկսենք հարցուփորձ անել բոլոր նավաստիներին ու մերձակա բնակիչներին, և քանի որ «Կարապը» նման չէ սովորական լաստանավերի, ապա, անկասկած, նկատած կլինեն: Եթե մենք Սենայում չգտնենք, ապա կսկսենք որոնել Լուարում, Հարոննայում և Ֆրանսիայի բոլոր գետերում: Վերջ ի վերջո մենք նրանց կգտնենք:

Այդպես որոշելով հարցը՝ մենք զբաղվեցինք Կապիով: Դեղինով ներկված Կապին ինձ համար օտար շուն էր: Մենք հեղուկ օճառ գնեցինք և ճանապարհին հանդիպած հենց առաջին գետում սկսեցինք լողացնել. երբ մեզնից մեկը հոգնում էր, մյուսը փոխարինում էր նրան:

Բայց մեր բարեկամ Բոբի ներկը հիանալի որակի էր: Հարկ եղավ բազմաթիվ անգամներ լողացնել ու անդադար օճառել նրան, և շաբաթներ ու նույնիսկ ամիսներ անցան, մինչև Կապին վերջապես իր բնական գույնը ստացավ:

Երբ անտառապատ բլուրների բարձունքից ստվերաշատ ճանապարհի շրջադարձին տեսանք մեր առջև փռված Սենան, որի խաղաղ ու հզոր ջրերը հոսում էին ալիք–ալիք, Սենան, որը ծածկված էր շոգենավերով, որոնց ծուխը բարձրանում և հասնում էր մեզ, Մատտիան հայտարարեց, թե այդ հիանալի տեսարանը հաշտեցնում է իրեն ջրի հետ: Նա հիմա հասկանում է, թե որքան հաճելի է սահել այդ խաղաղ մակերևույթով, թարմ մարգագետիններից, մշակված դաշտերի ու հովասուն անտառների միջով, որոնք փռված էին նրա ափերին:

— Ես վստահ եմ, որ տիկին Միլլիգանը հենց Սենայով է տանում իր հիվանդ որդուն,— ասաց նա:

— Հիմա կիմանանք: Արի հարցուփորձ անենք ներքևի գյուղի բնակիչներին:

Բայց շուտով պարզվեց, որ «Կարապը» այստեղով չի անցել կամ անցել է գիշերը, որովհետև ոչ ոք չէր տեսել:

Բարեբախտաբար, երբ մենք հասանք Շարանտոն, «Կարապի» մասին արված մեր առաջին իսկ հարցին պատասխանեցին, որ այստեղ տեսել են տաղավար ունեցող լաստանավը: Մատտիան սաստիկ ուրախացավ

թվայնացրել է 1915.info կայքը

և սկսեց գետափին պարել: Հետո վերցրեց ջութակը և ոգևորված նվագեց հաղթական մի քայլերգ:

Իսկ ես այդ ժամանակ շարունակում էի հարցուփորձ և վերջապես համոզվեցի, որ դա իսկապես «Կարապն» է եղել: Մոտ երկու ամիս առաջ «Կարապը» անցել է Շարանտոնի մոտով և Սենայով գնացել է դեպի վեր:

— Երկու ամի՛ս:

Այդ երկու ամսվա ընթացքում «Կարապը», իհարկե, կարող էր շատ հեռու գնացած լինել, բայց դա ոչինչ չի նշանակում: Մենք ի վերջո կհասնենք նրան, չնայած «Կարապը» քաշում են երկու լավ ձիեր, իսկ մենք կարող ենք հույս դնել միայն մեր ոտքերի վրա:

«Կարապի» հետքերով գնալով՝ մենք միևնույն ժամանակ մոտենում էինք Դրեզիին, որտեղ ապրում էր Լիզան: Սիրտս ուժեղ բաբախում էր, երբ քարտեզին նայելով՝ հարց էի տալիս ինձ. ի՛նչ ճանապարհ է ընտրել տիկին Միլլիգանը, և այդ ճանապարհը կանցնի՞ արդյոք Նիվերնեյան ջրանցքով:

Պարզվեց, որ «Կարապը» Իոննայով ուղևորվել է դեպի վեր: Ուրեմն մենք կանցնենք Դրեզիով և կտեսնենք Լիզային: Լիզան ինքը կպատմի մեզ տիկին Միլլիգանի և Արթուրի մասին:

Այն օրվանից, ինչ գնում էինք «Կարապի» հետքերով, մենք քիչ ժամանակ էինք հատկացնում մեր ներկայացումներին, և Կապին, լինելով բարեխիղճ արտիստ, չէր հասկանում մեր շտապողականությունը: Ինչո՞ւ թույլ չէինք տալիս իրեն, որ գավաթը ատամներով բռնած՝ նստի «հարգարժան հասարակության» մոտ և համբերությամբ սպասի, մինչև մարդիկ բացեն իրենց քսակները: Գնալով մենք ավելի ու ավելի քիչ էինք վաստակում, իսկ մեր ունեցած փողը օրըստօրե նվազում էր:

Երեկոները, չնայած օրվա ընթացքում անցած երկար ճանապարհին, մենք չէինք գանգատվում, որ հոգնած ենք. ընդհակառակը, հետևյալ առավոտ մենք աշխատում էինք վեր կենալ հնարավորինս շուտ և նորից ճանապարհ էինք ընկնում:

— Չմոռանաս ինձ արթնացնել,— ասում էր Մատտիան, որը սիրում էր քնել:

Եվ երբ նրան արթնացնում էի, նա անմիջապես վեր էր թռչում:

Որպեսզի անտեսեինք փողը, կրճատեցինք մեր ծախսերը, իսկ քանի որ շոգ էր, ապա Մատտիան հայտարարեց, որ ինքն այլևս չի ուզում միս ուտել, որովհետև ամառը միս ուտելը վնասակար է: Հիմա մենք բավարարվում էինք

թվայնացրել է 1915.info կայքը

մի կտոր հացով և եփած ձվով, որը հավասար կես էինք անում, և կամ մի քիչ կարագ ու հացով:

Ամեն հանդիպած ջրարգելակի մոտ մենք մի որևէ նորություն էինք իմանում «Կարապի» մասին, որովհետև այդ ջրանցքի նավագնացությունը մեծ չէր և բոլորի ուշադրությունը գրավել էր: Մեզ ոչ միայն ասում էին «Կարապի» մասին, այլև նույնիսկ պատմում էին տիկին Միլլիգանի և Արթուրի մասին, «որը համարյա միշտ պառկած է տախտակամածում՝ կանաչներով ու ծաղիկներով պատած տաղավարի հովանու տակ»: Ըստ նրանց խոսքերի՝ Արթուրը երբեմն վեր էր կենում:

Նշանակում է՝ նա իրեն ավելի լավ էր զգում:

Մենք մոտենում էինք Դրեզիին. մնում էր երկու օր, հետո՝ մի օր, և վերջապես՝ մի քանի ժամ: Մենք տեսանք անտառը, որտեղ անցյալ աշուն խաղում էինք Լիզայի հետ: Տեսանք ջրարգելակը և Կատերինա հորաքրոջ տնակը: Առանց պայմանավորվելու երկուսս էլ արագացրինք քայլերս: Հետո ես և Մատտիան արդեն ոչ թե քայլում էինք, այլ վազում: Կապին, ծանոթ վայրերը տեսնելով, արագ վազում էր մեր առջևով: Նա Լիզային կհասկացնի, որ մենք եկել ենք, և Լիզան իսկույն մեզ ընդառաջ կվազի:

Բայց մենք տեսանք ոչ թե Լիզային, այլ Կապիին, որը հետ էր վազում այնպիսի տեսքով, կարծես նրան դուրս էին վռնդել: Մենք վայրկենաբար կանգ առանք՝ չհասկանալով, թե այդ ինչ էր նշանակում: Այդպես էլ մեր կասկածները չպարզելով՝ կրկին առաջ շարժվեցինք: Կապին շփոթված վազում էր մեր հետևից:

Ինչ–որ մի մարդ շարժման մեջ էր դնում ջրարգելակը, բայց դա Լիզայի քեռին չէր:

Մենք մոտեցանք տանը: Անծանոթ մի կին գնում–գալիս էր խոհանոցում:

— Ո՞ւր է Կատերինա հորաքույրը,— հարցրինք նրան:

Մի րոպե ոչինչ չպատասխանելով՝ նա լուռ նայում էր մեզ, կարծես մենք նրան անմիտ հարց էինք տվել: Վերջապես նա պատասխանեց.

— Կատերինան այլևս այստեղ չէ:

— Իսկ որտե՞ղ է:

— Եգիպտոսում:

Մենք ստույգ չգիտեինք, թե ինչ երկիր է Եգիպտոսը և թե որտեղ է: Մենք միայն աղոտ պատկերացնում էինք, որ հեռու է, շատ հեռու, ինչ–որ մի տեղ՝ ծովերից այն կողմ:

— Իսկ Լիզա՞ն: Դուք Լիզային ճանապա՞րհ եք:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իհարկե: Լիզան էլ է գնացել: Նրան իր հետ տարել է այստեղից անցնող անգլուհին:

Լիզան «Կարապի» վրա՞, ո՛չ, դա երազ է:

Կինը բացատրեց մեզ, թե ինչպես է տեղի ունեցել այդ ամենը:

— Դուք Ռեմի՞ն եք,— հարցրեց նա ինձ:

— Այո՛:

— Դե, երբ հորաքույր Կատերինայի ամուսինը խեղդվեց...— սկսեց նա:

— Ինչպե՞ս թե խեղդվեց:

— Խեղդվեց ջրարգելակում: Օ՛հ, չէ՞ որ Դուք չգիտեք, որ նա ջուրն ընկավ և մնաց լաստանավի տակ, որտեղից դուրս գալ չէր կարողացել, որովհետև հագուստը մեխին էր ընկել... Մեր աշխատանքի մեջ այդպիսի բաներ հաճախ են լինում: Երբ նա խեղդվեց, Կատերինան մնաց ծանր դրության մեջ, չնայած որ տղամարդ կին էր: Նրան առաջարկեցին գնալ Եգիպտոս՝ այն ընտանիքը, որտեղ առաջ նա ծառայում էր որպես ստնտու, բայց նա չգիտեր, թե ինչ անի փոքրիկ Լիզային: Մի երեկո ջրարգելակի մոտ կանգ առավ մի լաստանավ, որով իր հիվանդ որդու հետ նավարկում էր մի անգլուհի: Երկու կանայք սկսեցին զրուցել: Անգլուհին մի երեխա էր փնտրում, որ իր որդուն խաղընկեր լինի, որովհետև որդին շատ էր տխրում առանց ընկերների: Նա խնդրեց, որ Լիզային իրեն տան, խոստացավ հոգ տանել նրա մասին և ասաց, որ կաշխատի բուժել Լիզային ու ապահովել նրա կյանքը: Կատերինան ընդունեց այդ անգլուհու առաջարկը, և Լիզան տեղափոխվեց լաստանավ, իսկ Կատերինան մեկնեց Եգիպտոս: Հիմա իմ ամուսինը փոխարինում է նրա ամուսնուն: Մեկնելուց առաջ Լիզան հորաքրոջ միջոցով խնդրեց ինձ այս բոլորը պատմել Ձեզ, երբ Դուք գաք այստեղ: Ահա և բոլորը:

Ես ապշած էի և խոսք չէի գտնում ասելու, բայց Մատտիան իրեն չկորցրեց:

— Իսկ ո՞ւր գնաց անգլուհին,— հարցրեց նա:

— Չգիտեմ, Ֆրանսիայի հարավային մասը, թե Շվեյցարիա: Լիզան խոստացավ նամակ գրել, որ ես Ձեզ հանձնեմ նրա հասցեն, բայց ես նրանից դեռ ոչինչ չեմ ստացել:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 21

ԵՐԱՋՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑԱՆ

Ես դեռ շարունակում էի կանգնած մնալ ապշած ու լուռ:

Մատտիան իմ փոխարեն պատասխանեց, ինչ հարկավոր էր:

— Մենք շատ շնորհակալ ենք Ձեզնից,— քաղաքավարությամբ ասաց նա և թեթևակի բոթելով ինձ՝ դուրս բերեց խոհանոցից:

— Ճանապարհ ենք ընկնում,— հայտարարեց նա:— Դե, առա՛ջ: Մենք հանդիպելու ենք ոչ միայն տիկին Միլլիգանին և Արթուրին, այլև Լիզային: Ինչ լավ դասավորվեց ամեն բան: Մենք պետք է ժամանակ կորցնեինք Դրեզիում, իսկ հիմա կարող ենք անմիջապես ճանապարհ ընկնել: Ա՛յ, սա արդեն հաջողություն է: Մենք երկար ժամանակ ձախորդության մեջ էինք, գուցե հիմա բախտը մեզ ժպտա:

Եվ ժամանակ չկորցնելով՝ մենք ճանապարհ ընկանք «Կարապի» հետքերով՝ կանգ առնելով միայն գիշերելու և մի քանի սու վաստակելու համար:

Դեսիզում, ուր Նիվերնեյան ջրանցքը թափվում է Լուարը, մեզ նոր տեղեկություններ հաղորդեցին «Կարապի» մասին, որ գնացել է շրջանցող ջրանցքով և այնտեղից պետք է դուրս գա Կենտրոնական ջրանցքը, որով և կնավարկի մինչև Շալոն:

Լիոնում մենք կրկին ընկանք դժվարին կացության մեջ. ինչ ճանապարհ է ընտրել «Կարապը». Ռոնայով դեպի վեր, թե վար: Այսինքն՝ ո՞ւր է գնացել տիկին Միլլիգանը. Հարավային Ֆրանսիա՞, թե Շվեյցարիա: Մենք հարցուփորձ արեցինք բոլոր նավաստիներին, նավավարներին ու առափնյա բնակիչներին և ի վերջո համոզվեցինք, որ տիկին Միլլիգանը գնացել է Շվեյցարիա: Այդ իմանալով՝ մենք շարժվեցինք Ռոնայի հոսանքով:

— Շվեյցարիայից հեշտ է Իտալիա ընկնելը,— ասաց Մատտիան:— Ա՛յ, թե տիկին Միլլիգանին որոնելիս երջանիկ դիպվածով ընկնենք իմ հայրենիքը, որքա՜ն երջանիկ կլինի Քրիստինան:

Իմ սիրելի՛, իմ բարի՛ Մատտիա, նա օգնում էր ինձ գտնելու նրանց, ում ես սիրում էի, և ոչինչ չարեց իր փոքրիկ քրոջը գրկելու համար:

Լիոնից դուրս գալուց հետո մեր և «Կարապի» միջև ընկած տարածությունը սկսեց զգալիորեն նվազել, որովհետև արագահոս Ռոնայով վեր նավարկելն ավելի դժվար էր, քան Սենայով: Բայց քարտեզն ուսումնասիրելով՝ մտածում էի, որ մենք կարող ենք «Կարապին» հասնել միայն

թվայնացրել է 1915.info կայքը

Շվեյցարիայում: Այն ժամանակ ես դեռ չգիտեի, որ Ռոնայով հնարավոր չէ հասնել Ժնևի լճին. մենք ենթադրում էինք, որ տիկին Միլլիգանն ուզում է Շվեյցարիա հասնել «Կարապով», իսկ Շվեյցարիայի քարտեզը մենք չունեինք:

Սեյսել քաղաքը հասնելով, որը գետը բաժանում էր երկու մասի, իսկ գետի վրա գցված էր շարժական կամուրջ, մենք ափ իջանք: Ինչպիսին էր իմ զարմանքը, երբ հեռվից նկատեցի «Կարապը»: Մենք առաջ վազեցինք: Այո՛, անկասկած, դա «Կարապն» էր, բայց, չգիտես ինչու, նավը անմարդաբնակ էր թվում: «Կարապը» կանգնած էր ծածկի տակ հաստատուն, խարիսխ գցած, և բոլոր լուսամուտները փակ էին: Պատշգամբում ծաղիկներ չկային:

Ինչ է պատահել, ինչ է եղել Արթուրին:

Մենք, հուզմունքից շնչակտուր լինելով, կանգ առանք: Բայց հարկավոր էր գնալ ու իմանալ, թե ինչ էր պատահել:

«Կարապի» պահապանը մեզ հաղորդեց հետևյալը.

— «Կարապով» ժամանած անգլուհին երկու երեխաների՝ անդամալույծ տղայի և մի փոքրիկ համր աղջկա հետ այժմ Շվեյցարիայում է: Ռոնայով առաջ շարժվելն այլևս հնարավոր չէ: Տիկինը երեխաների հետ գնացել է ձիով: Աշնանը նա կվերադառնա լաստանավ և կնավարկի մինչև ծովը, իսկ ձմեռը անց է կացնելու հարավում:

Մենք թեթևացած շունչ առանք:

— Իսկ հիմա որտե՞ղ է այդ տիկինը,— հարցրեց Մատտիան:

— Նա ցանկանում էր ամառանոց վարձել Վեվեում, բայց ստույգ հասցեն չգիտեմ: Այնտեղ է անցկացնելու ամառը:

Դե ուրեմն ճանապարհ ընկնենք դեպի Վեվե: Ժնևում մենք ձեռք կբերենք Շվեյցարիայի քարտեզը և կգտնենք այդ քաղաքը կամ գյուղը: Քանի որ տիկին Միլլիգանը պատրաստվում էր ամբողջ ամառն ապրելու ամառանոցում, մենք վստահ էինք, որ կգտնենք նրան:

Սեյսելից դուրս գալուց չորս օր հետո մենք Վեվեի շրջակայքում՝ հենց երկնագույն լճի ափին և շրջակա լեռների լանջերին, արդեն որոնում էինք Միլլիգանին, Արթուրին ու Լիզային: Մենք տեղ էինք հասել ճիշտ ժամանակին. մեր գրպանում մնացել էր ընդամենը երեք սու, իսկ կոշիկներիս ներբանները պոկվել էին:

Բայց Վեվեն փոքրիկ գյուղակ չէր, ինչպես մենք ենթադրում էինք: Դա քաղաք էր և բավականին մեծ քաղաք, որովհետև նրան էին միանում շրջակայքում եղած բազմաթիվ գյուղերը, որոնք նրա հետ միասին ամբողջություն էին կազմում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մենք շատ շուտով հասկացանք, որ անօգուտ է հարցնել, թե որտեղ է ապրում տիկին Միլլիգանը հիվանդ որդու և համր աղջկա հետ»: Վեվե քաղաքը և լճափը լեփ–լեցուն էին անգլիացիներով ու անգլուհիներով ոչ պակաս, քան Լոնդոնի շրջակայքի բուժավայրերը: Ավելի լավ կլիներ, որ ինքներս շարունակեինք որոնումները: Մեզ համար դա դժվար չէր. հարկավոր էր միայն փողոցներում նվագել ու երգել մեր երգերը:

Մի օրվա մեջ մենք շրջեցինք ամբողջ Վեվեն, բայց տիկին Միլլիգանի հետքերը չգտանք:

Հետևյալ օրը մեր որոնումները շարունակեցինք արդեն Վեվեի շրջակայքում: Մենք գնում էինք ենթադրաբար, ուր տանում էր ճանապարհը, ու նվագում տների լուսամուտների տակ՝ ուշադրություն չդարձնելով, թե արդյոք լուսամուտները բաց են, թե փակ: Երեկոյան մենք վերադարձանք ձեռնունայն, չնայած եղել էինք համարյա ամենուր, գնել ամբողջ շրջակայքը և ժամանակ առ ժամանակ հարցուփորձ արել այն մարդկանց, որոնք մեզ դուր էին եկել:

Այդ օրը մենք երկու անգամ անտեղի ուրախացանք: Մի անգամ մեզ պատասխանեցին, որ շատ լավ գիտեն այդ անգլուհուն, որի մասին մենք հարցնում ենք, միայն թե չգիտեն նրա ազգանունը, և ուղարկեցին մեզ լեռներում գտնվող մի տնակ: Մի ուրիշ անգամ հավատացրին, որ մեր անգլուհին ապրում է լճի ափին: Եվ իսկապես, լեռների մեջ եղող տնակում ու լճի ափին անգլուհիներ ապրում էին, բայց ո՛չ մեկը, ո՛չ մյուսը տիկին Միլլիգանը չէին:

Ուշադրությամբ հետախուզելով Վեվեի շրջակայքը՝ մենք դուրս եկանք դեպի Կլարան և Մոնտր տանող ճանապարհը՝ վշտացած, բայց հույսներս չկորցրած: Այն, ինչ մեզ չհաջողվեց այսօր, անկասկած կհաջողվի վաղը: Մենք քայլում էինք բանուկ ճանապարհներով, որոնք երկու կողմից երիզված էին կանաչ ցանկապատերով, խաղողի ու մրգի այգիներով, ոլորապտույտ արահետներով, հսկայական շագանակենիների ստվերաշատ ծառուղիներով, որտեղ օդն ու լույսը չէին թափանցում խիտ սաղարթի միջից, և որոնց տակ ոչինչ չէր աճում՝ բացի թավշյա մամուռից: Ամեն քայլափոխի հանդիպում էին երկաթյա կամ փայտյա ցանկապատեր, իսկ դրանց հետևում երևում էին ավազապատ ծառուղիներ ու ծաղիկներով և թփերով զարդարված մարգագետիններ: Հեռվում՝ ծառերի մեջ, երևում էին գեղեցիկ տներ կամ շքեղ ամառանոցներ: Համարյա ամեն մի այգում՝ ծառերի կամ թփերի մեջ, մի բացատ էր թողնված, որտեղից երևում էր գորշ լեռներով շրջապատված շողշողուն լիճը:

Digital edition © 2020 Lightmatter

թվայնացրել է 1915.info կայքը

Մենք ստիպված էինք նվագել ու երգել շատ բարձրաձայն, որ մեզ լսեն նրանք, ովքեր ապրում են այդ ամառանոցներում, և երեկոյան մենք բոլորովին ուժասպառ էինք լինում:

Մի անգամ ցերեկը մենք երգում էինք փողոցում՝ ինչ–որ այգու ցանկապատի մոտ. մեր հետևում բարձր մի պատ կար, որ մենք ուշադրություն չէինք դարձրել: Ես բարձրաձայն երգում էի իմ նեապոլյան երգի առաջին քառյակը և հենց ուզում էի շարունակել, հանկարծ պատի մյուս կողմից մի ճիչ լսեցինք, իսկ հետո ինչ–որ տարօրինակ մի թույլ ձայն երգեց իմ երգի երկրորդ քառյակը:

— Ո՞վ կարող էր լինել:

— Արթուրն է,— ենթադրեց Մատտիան:

Ո՛չ, այդ նրա ձայնը չէ, իսկ այդ ընթացքում Կապին արտահայտում էր ուրախության բոլոր նշանները. կլանչում էր ու պատը ճանկռոտում:

Ի վիճակի չլինելով ինձ զսպել՝ ես ձայն տվեցի.

— Ո՞վ է երգում:

Անծանոթ մի ձայն արտասանեց.

— Ռեմի:

Պատասխանի փոխարեն ես լսում էի իմ անունը: Ես ու Մատտիան զարմացած նայեցինք միմյանց:

Մինչ մենք տարակուսած կանգնել էինք դեմ առ դեմ, ես պատի մյուս ծայրում, որտեղ սկսվում էր ցանկապատը, նկատեցի քամուց ծածանվող սպիտակ թաշկինակ: Մենք նետվեցինք դեպի այն:

Մոտ վազելով ցանկապատին՝ տեսանք, որ թաշկինակը թափահարում էր Լիզան:

Վերջապես մենք գտանք նրան, իսկ նրա հետ մեկտեղ՝ և տիկին Միլլիգանին ու Արթուրին: Բայց այն ո՞վ էր երգում: Հենց որ ես ու Մատտիան ուշքի եկանք, այդ հարցով միաժամանակ դիմեցինք Լիզային:

— Ես,— պատասխանեց նա:

Լիզան երգո՞ւմ է, Լիզան խոսո՞ւմ է:

Ճիշտ է, հազար անգամ լսել էի այն մասին, թե Լիզան երբևէ կխոսի, և որ հավանաբար դա տեղի կունենա հոգեկան ուժեղ ցնցումից հետո: Բայց ես չէի հավատում այդ հնարավորությանը:

Բայց հրաշքը կատարվեց: Կատարվեց այն ժամանակ, երբ նա լսեց իմ երգը, երբ իմացավ, որ ես վերադարձել եմ իր մոտ, իսկ նա ինձ ընդմիշտ կորած էր համարում: Ուրախությունը վերադարձրեց նրան խոսելու

թվայնացրել է 1915.info կայքը

ունակությունը: Ինձ այնքան էր հուզել այդ միտքը, որ ստիպված էի բռնել ցանկապատից, որպեսզի վայր չընկնեմ:

Բայց հիմա ժամանակը չէր զգացմունքներով տարվելու:

— Որտե՞ղ է տիկին Միլլիգանը, որտե՞ղ է Արթուրը,— հարցրի ես:

Լիզան շարժեց շուրթերը՝ փորձելով պատասխանել, բայց ոչինչ չկարողացավ ասել:

Այդ ժամանակ, որպեսզի մենք ավելի լավ հասկանանք, նա սկսեց բացատրվել նշաններով: Լեզուն դեռ վատ էր ենթարկվում նրան: Ես աչքերով հետևում էի նրա բացատրությանը:

Հանկարծ ստվերաշատ ծառուղու ծայրում երևաց մի սայլակ, որը քշում էր ծառան: Այդ սայլակում պառկած էր Արթուրը, իսկ հետևից գալիս էր նրա մայրը... Ես առաջ թեքվեցի, որ ավելի լավ տեսնեմ... Եվ տեսա Ջեյմս Միլլիգանին: Վայրկենաբար թաքնվեցի ցանկապատի հետևում և ասացի, որ Մատտիան էլ անի նույնը՝ բոլորովին մոռանալով, որ Ջեյմս Միլլիգանը չէր ճանաչում Մատտիային: Երբ վախի առաջին րոպեներն անցան, ես մտածեցի, որ Լիզան հավանաբար զարմացած էր, որ մենք հանկարծակի անհայտացանք: Գլուխս բարձրացնելով՝ կիսաձայն նրան ասացի.

— Կարիք չկա, որ Ջեյմս Միլլիգանը տեսնի մեզ, թե չէ նա կվերադարձնի ինձ Անգլիա:

Լիզան ձեռքերը վախեցած բարձրացրեց:

— Մի՛ շարժվիր,— շարունակեցի ես,— և մեր մասին ոչինչ մի՛ ասա: Վաղը՝ առավոտվա ժամը իննին, մենք կրկին կգանք այստեղ: Աշխատի՛ր մենակ լինել, իսկ հիմա գնա՛:

Լիզան հապաղում էր:

— Դե՛ գնա, խնդրում եմ: Հակառակ դեպքում դու ինձ կկործանես:

Մենք կծկվեցինք պատի հետևում, վազելով հասանք խաղողի այգիներին և թաքնվեցինք այնտեղ: Երբ մեր ուրախությունը մի քիչ խաղաղվեց, սկսեցինք խոսել:

— Գիտե՞ս ինչ,— ասաց Մատտիան,— ես ամենևին էլ մտադիր չեմ տիկին Միլլիգանին տեսնելու համար սպասել մինչև վաղը: Այդ ժամանակամիջոցում Ջեյմս Միլլիգանը կարող է սպանել Արթուրին: Ես հենց հիմա կգնամ տիկին Միլլիգանի մոտ և կասեմ նրան ամեն բան... ինչ մենք գիտենք: Քանի որ Ջեյմս Միլլիգանն ինձ երբեք չի տեսել, ապա վախենալու հարկ չկա: Թող տիկին Միլլիգանն ինքը որոշի, թե մենք ինչպես պետք է վարվենք:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես համաձայնվեցի Մատտիայի հետ և թույլ տվեցի, որ գնա՝ պայմանավորվելով հանդիպել մոտակա շագանակենիների տակ: Այնտեղ ես կարող էի թաքնվել, եթե հանկարծ Ջեյմս Միլլիգանը հայտնվեր:

Մամռապատ գետնին պառկած՝ ես շատ երկար սպասեցի Մատտիայի վերադարձին և հազար անգամ հարց էի տալիս ինձ, թե արդյոք մենք ճիշտ վարվեցինք: Վերջապես Մատտիան հայտնվեց տիկին Միլլիգանի ուղեկցությամբ:

Ես մոտ վազեցի, նա գրկեց ինձ և խոնարհվելով քնքշորեն համբուրեց ճակատս:

Կյանքիս ընթացքում նա երկրորդ անգամ էր համբուրում ինձ, բայց թվաց՝ առաջին անգամ նա այնքան ամուր չէր սեղմել ինձ իր գրկում:

— Խեղճ տղա,— ասաց նա:

Հետո ձեռքով հետ գցեց ճակատի մազերը և երկար ժամանակ նայում էր ինձ:

— Այո՛, այո՛...— շշնջաց նա:

Այդ բառերը հավանաբար պատասխան էին նրա ինչ–որ գաղտնի մտքերի, բայց ես այնքան հուզված էի, որ չհասկացա նրանց իմաստը: Ես զգում էի տիկին Միլլիգանի քնքշությունը, տեսնում էի նրա փաղաքուշ աչքերը և այնքան երջանիկ էի, որ ոչ մի բանի մասին մտածել չէի կարող:

— Մանկի՛կս,— ասաց նա՝ աչքն ինձնից չկտրելով,— քո ընկերը ինձ չափազանց կարևոր տեղեկություններ հաղորդեց: Խնդրում եմ, որ դու նույնպես պատմես, թե ինչպես ընկար Դրիսկոլների ընտանիքը, ինչպես նաև պատմեց Ջեյմս Միլլիգանի այցելության մասին:

Ես մանրամասն պատմեցի ամեն բան, ինչ խնդրեց տիկին Միլլիգանը: Նա ինձ մի քանի անգամ ընդհատեց, որպեսզի ճշտի որոշ մանրամասնություններ: Երբեք և ոչ ոք ինձ այդպիսի ուշադրությամբ չէր լսել: Նա աչքը չէր կտրում ինձնից:

Երբ ես ավարտեցի, նա բավական ժամանակ լուռ էր ու շարունակում էր նայել ինձ և վերջապես ասաց.

— Այդ բոլորն անչափ կարևոր է և՛ քեզ, և՛ մեզ համար, բայց պետք է գործել զգուշությամբ և խորհրդակցելով փորձված մարդկանց հետ: Բայց այս պահից դու կարող ես քեզ համարել Արթուրի ընկերը,— նա կանգ առավ...— և նույնիսկ եղբայրը: Դու պետք է քո պատանի ընկերոջ հետ միասին վերջ տաս նախկին թափառական կյանքին: Երկու ժամ հետո կգնաք «Ալպեր» հյուրանոցը: Ես մի հուսալի մարդու կուղարկեմ այնտեղ, որ ձեզ տեղավորի: Այնտեղ մենք կրկին կհանդիպենք, իսկ հիմա ես պետք է գնամ:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա կրկին համբուրեց ինձ և Մատտիայի ձեռքը սեղմելով՝ արագ հեռացավ:

— Ինչ պատմեցիր տիկին Միլլիգանին,— հարցրի ես Մատտիային:

— Այն, ինչ նա քեզ ասաց, և էլի շատ բան: Ա՛խ, ինչ հիանալի, ինչ բարի կին է նա:

— Դու տեսար Արթուրին:

— Միայն հեռվից, բայց նա իսկույն դուր եկավ ինձ:

Ես դեռ ուզում էի շատ հարցուփորձ անել Մատտիային, բայց նա, չգիտես ինչու, խուսափում էր պատասխանելուց կամ տալիս էր անորոշ պատասխաններ: Մենք սկսեցինք շատախոսել ուրիշ բաների մասին մինչև այն ժամանակ, երբ տիկին Միլլիգանի կարգադրությամբ պետք է գնայինք «Ալպեր» հյուրանոցը:

Չնայած մենք իսկական աղքատների տեսք ունեինք, բայց մեզ դիմավորեց ծառան և իսկույն տարավ մեզ հատկացված սենյակը: Ա՛խ, ինչ հիանալի սենյակ էր դա: Այնտեղ դրված էին երկու սպիտակ մահճակալ, լուսամուտները նայում էին լճի վրա կախված պատշգամբին, որտեղից բացվում էր հիանալի տեսարան: Երբ մենք կրկին սենյակ վերադարձանք, ծառան, որ սպասում էր մեր կարգադրություններին, հարցրեց, թե ինչ ենք ցանկանում ուտել ճաշին, որը կմատուցվի պատշգամբում:

— Դուք քաղցր կարկանդակներ ունե՞ք,— հարցրեց Մատտիան:

— Ունենք... խավարծիլով, ելակով և հաղարջով:

— Հիանալի է: Բերե՛ք մեզ համար:

— Երեք տեսակի՞ց էլ:

— Իհա՛րկե:

— Իսկ ի՞նչ ճաշեր կցանկանաք: Ի՞նչ բանջարեղեն:

Ծառայի ամեն մի առաջարկության ժամանակ Մատտիան լայն բացում էր աչքերը, բայց բոլորովին չէր շփոթվում:

— Դա միևնույնն է,— ասաց նա:

Ծառան դուրս գնաց:

— Կարծում եմ, որ մենք այստեղ ավելի լավ կճաշենք, քան Դրիսկոլների ընտանիքում,— հայտարարեց Մատտիան:

Հետևյալ առավոտ մեզ մոտ եկավ տիկին Միլլիգանը: Նա իր հետ դերձակուհի բերեց, որը վերցրեց մեր չափերը, որպեսզի մեզ համար նոր զգեստներ կարի:

Տիկին Միլլիգանը հաղորդեց, որ Լիզան շարունակում է խոսել, և բժիշկը կարծում է, որ նա առողջացել է: Նա մեզ մոտ մնաց մի ժամ, հետո, քնքշորեն համբուրելով ինձ և սեղմելով Մատտիայի ձեռքը, գնաց:

Այդպես այցելում էր նա մեզ չորս օր և գնալով ավելի ու ավելի ջերմ ու քնքուշ էր վարվում ինձ հետ, բայց թվում էր՝ ինչ–որ բան շփոթեցնում է նրան, և նա չէր ցանկանում ենթարկվել այդ զգացմունքին կամ արտահայտել դա:

Հինգերորդ օրը նրա փոխարեն եկավ աղախինը, որին առաջ ես տեսել էի «Կարապի» վրա: Նա հաղորդեց, որ տիկին Միլլիգանը հրավիրում է մեզ իր ամառանոցը, և որ հյուրանոցի դռան մոտ մեզ սպասում է կառքը: Մատտիան իսկույն կառք նստեց այնպես փքված ու անկաշկանդ տեսքով, կարծես մանկությունից սովոր էր դրան: Կապին նույնպես, բոլորովին չքաշվելով, բարձրացավ նստատեղին: Ամառանոցը հեռու չէր: Ճանապարհին ինձ շատ կարճ թվաց: Ես կարծես երազում լինեի: Մեզ առաջնորդեցին մի սենյակ, որտեղ ես տեսա տիկին Միլլիգանին բազմոցին պառկած, ապա՝ Արթուրին ու Լիզային:

Արթուրն ինձ մեկնեց երկու ձեռքը: Ես մոտ վազեցի և ամուր գրկեցի նրան, հետո համբուրեցի Լիզային: Իսկ տիկին Միլլիգանը ինքը մոտեցավ և համբուրեց ինձ:

— Վերջապես հասավ ժամը, երբ դու կարող ես լիակատար իրավունքով գրավել քո տեղը,— ասաց նա:

Ես նայում էի տիկին Միլլիգանին, չհասկանալով, թե ինչ են նշանակում նրա բառերը: Իսկ նա գնաց, դուռը բացեց, և ես նույն րոպեին տեսա Բարբերեն մայրիկին, որը թևին գցած բերում էր մանկական հագուստներ. սպիտակ քաշմիրի մուշտակ, ժանեկազարդ գլխանոց և հյուսված ոտնամաններ:

Նա հազիվ հասցրեց այդ իրերը դնել սեղանին, երբ ես գիրկս առա նրան: Մինչ ես համբուրում էի մայրիկին, տիկին Միլլիգանը ինչ–որ կարգադրություններ էր անում ծառային: Ջեյմս Միլլիգանի անունը լսելով՝ գունատվեցի:

— Մի՛ վախենա,— քնքշորեն ասաց տիկին Միլլիգանը:— Մոտեցի՛ր ինձ և տո՛ւր ձեռքդ:

Այդ ժամանակ դուռը բացվեց, և սենյակ մտավ Ջեյմս Միլլիգանը: Նա, ինչպես միշտ, ժպտում էր՝ ցույց տալով իր սուր ատամները: Երբ նա ինձ տեսավ, նրա ժպիտը վայրկենաբար փոխվեց սարսափելի ծամածռության:

Տիկին Միլլիգանը թույլ չտվեց, որ նա խոսի:

— Ես հրավիրել եմ Ձեզ այստեղ,— ասաց նա դանդաղ ու փոքր–ինչ դողացող ձայնով,— որ ներկայացնեմ Ձեզ իմ ավագ որդուն, որին վերջապես, բարեբախտաբար, գտա:— Եվ նա ամուր սեղմեց իմ ձեռքը:— Ահա՛ նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Դուք ճանաչում եք նրան. տեսել եք և հետաքրքրվել եք նրա առողջության մասին այն մարդուց, որը գողացել էր նրան:

— Ինչ է կատարվում այստեղ,— այլայլված դեմքով հարցրեց Ջեյմս Միլլիգանը:

— Այդ մարդը եկեղեցում կատարած գողության համար նստած է բանտում և ամեն բան խոստովանեց: Ահա նամակը, որ հաստատում է դա: Նամակում նա պատմում է, թե ինչպես է գողացել երեխային, ինչպես է փողոց նետել նրան Փարիզում, ինչ միջոցների է դիմել, որ երեխան չգտնվի. կտրել է նրա հագուստի նիշերը: Ահա այդ հագուստը: Սա պահպանել է մի կին, որն անձնազոհ կերպով մեծացրել է իմ որդուն: Ցանկանո՞ւմ եք կարդալ նամակը և նայել իրերը:

Ջեյմս Միլլիգանը մի րոպե կանգնած էր անշարժ՝ հավանաբար մեզ բոլորիս խեղդելու մեծ ցանկություն զգալով: Հետո նա քայլերն ուղղեց դեպի դուռը, բայց մինչև դուրս գալը շրջվեց և հայտարարեց.

— Տեսնենք, թե ինչ կասի դատարանը Ձեր այդ կեղծ երեխայի մասին:

Չշփոթվելով տիկին Միլլիգանը (այժմ կարող եմ համարձակորեն ասել իմ մայրը) պատասխանեց.

— Դուք կարող եք դատի տալ մեզ, բայց ես չեմ պատրաստվում պատասխանատվության կանչելու մի մարդու, որը իմ ամուսնու եղբայրն է:

Դուռը հորեղբորս հետևից ծածկվեց: Այդ ժամանակ ես մորս գիրկը նետվեցի և առաջին անգամ համբուրեցի նրան:

Երբ մեր հուզմունքը մի քիչ խաղաղվեց, Մատտիան մոտեցավ ինձ:

— Ասա՛ մայրիկիդ, որ ես լավ պահեցի գաղտնիքը:

— Մի՞թե դու որևէ բան գիտեիր,— հարցրի ես:

Նրա փոխարեն պատասխանեց մայրս.

— Երբ Մատտիան ամեն ինչ ինձ պատմեց, ես խնդրեցի, որ նա լռի, չնայած հոգուս խորքում հաստատ վստահ էի, որ խեղճ, փոքրիկ Ռեմին իմ որդին է: Բայց ինձ լուրջ ապացույցներ էին հարկավոր, որ չսխալվեի: Ինչպիսի վիշտ կլիներ քեզ համար, թանկագի՛նս, եթե քեզ իմ որդին ճանաչելուց հետո ստիպված լինեի ասել, որ ես սխալվել եմ: Հիմա բոլոր ապացույցները կան: Այսուհետև դու միշտ կապրես քո մոր ու եղբոր հետ և նրանց հետ,— նա մատնացույց արեց Լիզային ու Մատտիային,— ովքեր սիրել են քեզ քո դժբախտ օրերին:

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ 22

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Անցել են շատ ու շատ տարիներ: Հիմա ես ապրում եմ Անգլիայում մորս, եղբորս և կնոջս հետ: Մայրս քիչ է փոխվել. նրա դեմքն առաջվա պես գեղեցիկ է և պահպանել է քնքշության ու բարության հրաշալի արտահայտությունը, միայն անհետացել է այն թախիծը, որը մի ժամանակ մթագնում էր նրա դեմքը:

Արթուրը, բժիշկների բոլոր գուշակություններին և մեր հորեղբայր Ջեյմս Միլլիգանի ցանկությանը հակառակ, վերջնականապես առողջացել է և դարձել ամուր, առույգ մի պատանի, լավ որսորդ ու մարմնամարզիկ:

Ընթերցողը հավանաբար գլխի է ընկնում, թե ով է իմ կինը. իմ կինը այն փոքրիկ Լիզան է, որին դուք արդեն ճանաչում եք: Նա մեծացել է իմ մոր տանը և իմ աչքի առաջ դարձել երիտասարդ, հիանալի մի աղջիկ՝ օժտված բոլոր կատարելություններով, որովհետև ես նրան սիրում եմ: Ես ու Լիզան ապրում ենք համերաշխ ու երջանիկ:

Վերջերս մենք մի տղա ունեցանք՝ փոքրիկ Մատտիան, որին խնամում է Բարբերեն մայրիկը: Երբ ես գտա իմ ընտանիքը, Բարբերեն մայրիկը, չնայած իմ բոլոր խնդրանքներին, չհամաձայնվեց մնալ մեզ մոտ:

— Դու հիմա պետք է սովորես, և ես այստեղ անելիք չունեմ: Թո՛ւյլ տուր՝ վերադառնամ Շավանոն: Մի՛ վշտանա, մենք ընդմիշտ չենք բաժանվում: Դու կմեծանաս, կամուսնանաս, երեխաներ կունենաս, այն ժամանակ, եթե ցանկանաս, ես կգամ և կօգնեմ քեզ մեծացնելու նրանց: Մինչ այդ ես արդեն կծերանամ, բայց դա չի խանգարի ինձ լավ խնամելու քո երեխաներին, սիրել նրանց և, իհարկե, թույլ չտալ, որ նրանց գողանան, ինչպես գողացել էին քեզ:

Այդպես էլ մենք որոշեցինք: Մեր երեխայի ծնվելուց մի քանի օր առաջ մարդ ուղարկեցինք Շավանոն՝ Բարբերեն մայրիկին բերելու: Նա թողեց ամեն ինչ՝ հարազատ գյուղը, իր տնակը, ծանոթներին, կովը, մեր կովի աղջկան, և եկավ մեզ մոտ: Լիզան ինքն է կերակրում փոքրիկ Մատտիային, բայց նրան խնամում, զվարճացնում ու պահում է Բարբերեն մայրիկը: Նրա կարծիքով մեր երեխան ամենահիանալի երեխան է, որի նմանը նա չի տեսել կյանքում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մոտ օրերս կլրանա մեր որդու մի տարին, և ես որոշեցի այդ առիթով հրավիրել իմ բոլոր բարեկամներին:

Ես արդեն հեռագիր եմ ստացել Մատտիայից:

Նա ժամանում է այսօր: Մանտ քաղաքի վարսավիր Էսպինասսուի գուշակությունը լիովին իրականացավ. փողոցային փոքրիկ երաժիշտը՝ իմ ընկերն ու աշակերտը, հիմա հռչակավոր ջութակահար է դարձել: Նա առաջվա պես մնում է իմ ամենամտերիմ ընկերը: Ես չափազանց հպարտանում եմ նրա հաջողություններով, քանի որ դրա մեջ ես էլ մաս ունեմ, իսկ Մատտիան ուրախ է, որ ես երջանիկ եմ, ինչպես որ ուրախ կլիներ սեփական երջանկության համար:

Նրանից բացի՝ գալու է նաև Լիզայի ամբողջ ընտանիքը՝ հայրը՝ Ակենը, Կատերինա հորաքույրը, Էտյենետտան, Ալեքսիսը և Բենժամենը: Վարսի ծեր «ուսուցիչը» դեռ ապրում է և գալու է նրանց հետ միասին: Նա մեծ ցանկություն ունի տեսնելու Ուելսի հանքերը և հարստացնելու իր հավաքածուն նոր, հետաքրքրական նմուշներով: Գալու է նաև մեր բարեկամ Բոբը և նրա եղբայրը՝ «Էկլիպսի» կապիտանը:

Իմ սիրելի բարեկամներից միայն մեկը ներկա չի լինի մեր ընտանեկան տոնին... Իմ թանկագին Վիտալիս, որքան ուրախ կլինեի տեսնելու քեզ իմ տանը: Եթե բախտի քմահաճույքին թողնված թշվառ երեխան վատ ճանապարհով չգնաց և չկործանվեց, ապա դրանով նա պարտական է քեզ, քո դասերին, քո օրինակին, իմ սիրելի՛ ուսուցիչ: Եվ ես միշտ սրբորեն կպահեմ քո հիշատակը...

Ինչպես պայմանավորվել էինք, իմ բոլոր բարեկամները հավաքվեցին: Տոնական ճաշկերույթից հետո, որի ժամանակ մենք շատ խոսեցինք անցյալից, Մատտիան մոտեցավ ինձ:

— Գիտե՞ս,— ասաց նա,— մենք միշտ նվագել ենք օտարների համար, իսկ հիմա պետք է նվագենք մեր հարազատների ու բարեկամների համար:

— Դու առաջվա պես չես կարողանում ապրել առանց երաժշտության: Հիշո՞ւմ ես՝ ինչպես վախեցրիր մեր կովին:

— Նվագե՞նք քո նեապոլյան երգը:

— Հաճույքով: Այդ երգի շնորհիվ էր, որ Լիզան սկսեց խոսել:

Մատտիան վերցրեց իր հին, էժանագին ջութակը, որը գեղեցիկ տուփի մեջ էր, իսկ ես տոպրակից հանեցի տավիղը, որի փայտը ժամանակն ու անձրևները բոլորովին չէին կարողացել սևացնել:

թվայնացրել է 1915.info կայքը

Բոլորը խմբվեցին իմ շուրջը: Այդ րոպեին հայտնվեց մի շուն: Դա իմ լավ, սիրելի Կապին էր: Խեղճը բոլորովին ծերացել էր և խլացել, բայց դեռ լավ էր տեսնում: Նա հանգիստ պառկած էր իր բարձին, բայց, նկատելով, որ ես տավիղը վերցրի, կաղալով եկավ՝ ներկայացմանը մասնակցելու: Ատամներով նա բռնել է ափսեն և ցանկանում է հետին թաթերին կանգնած շրջել «հարգարժան հասարակության» մեջ, բայց ուժերը չեն ներում, Կապին նստում է և հանդիսավոր գլուխ տալով ներկաներին՝ թաթը սեղմում է կրծքին:

Ես չեմ կարողանում դիմանալ և համբուրում եմ նրա քիթը, ինչպես այն ժամանակ, երբ նա մխիթարում էր ինձ իմ տխուր օրերին:

— Դե, տեսնո՞ւմ եք,— ծիծաղելով ասում է Մատտիան,— հիմա «Ռեմիի խումբը» լրիվ կազմով այստեղ է: Սկսում ենք համերգը…

Սրանով ես ավարտում եմ իմ հուշերը, որոնք գրված են հարազատներիս ու բարեկամներիս համար:

ՎԵՐՋ

թվայնացրել է 1915.info կայքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Գլուխ 1. Գյուղում 11
Գլուխ 2. Ընտանիքի կերակրողը 19
Գլուխ 3. Սինյոր Վիտալիսը և նրա թատերախումբը 25
Գլուխ 4. Հարազատ տունը 34
Գլուխ 5. Ճանապարհին 42
Գլուխ 6. Իմ առաջին ելույթը 47
Գլուխ 7. Ես կարդալ եմ սովորում 57
Գլուխ 8. Դատը 63
Գլուխ 9. Ես մնում եմ մենակ 73
Գլուխ 10. Լողացող տնակը 80
Գլուխ 11. Իմ առաջին ընկերը 88
Գլուխ 12. Ընկեցիկը 96
Գլուխ 13. Զյունն ու գայլերը 102
Գլուխ 14. Հոգյակը 114
Գլուխ 15. Ես ընկնում եմ Փարիզ 124
Գլուխ 16. Գարաֆոլին 130
Գլուխ 17. Ժանտիլիայի քարհանքը 143
Գլուխ 18. Լիզան 152
Գլուխ 19. Ես աշխատում եմ պարտեզում 161
Գլուխ 20. Մնանկացած ընտանիքը 167

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ 1. Առաջ 183
Գլուխ 2. Սև քաղաքը 196
Գլուխ 3. Ես հանքաքար եմ կրում 201
Գլուխ 4. Ջրհեղեղը 208
Գլուխ 5. Հանքախորշում 218
Գլուխ 6. Մենք փրկված ենք 228
Գլուխ 7. Երաժշտության դասը 239
Գլուխ 8. Կովը 248
Գլուխ 9. Բարբերեն մայրիկը 262
Գլուխ 10. Հին և նոր ընտանիքները 275
Գլուխ 11. Բարբերենը 282
Գլուխ 12. Որոնումներ 292
Գլուխ 13. Դրիսկոլների ընտանիքը 303
Գլուխ 14. Ես սարսափում եմ իմ ծնողներից 312
Գլուխ 15. Կապին գող է դառնում 320
Գլուխ 16. Խաբված հույսեր 325
Գլուխ 17. Տոները 333
Գլուխ 18. Գողացված ապրանք վաճառողները 339
Գլուխ 19. Բոբը 353
Գլուխ 20. «Կարապը» 362
Գլուխ 21. Երազները իրականացան 369
Գլուխ 22. Ընտանիքում 379

թվայնացրել է 1915.info կայքը

ՀԵԿՏՈՐ ՄԱԼՈ

Վրաշկ տներում

Նկարազարդումը՝
Շաուլոթե Դեմաթոնսի

Թարգմանությունը ռուսերենից՝
Աիդա Հայրապետյանի

Հրատարակչության տնօրեն՝ ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Գեղարվեստական ղեկավար՝ ՄԱՐԻԱՄ ԿԱՆԱՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝ ՆՎԱՐԴ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Գրական խմբագիր՝ ԱԼՎԱՐԴ ՋԻՎԱՆՅԱՆ
Լեզվական խմբագիր և սրբագրիչ՝ ՆԱՐԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ ԺԱԳ ԹՈՓԱԼԱԳՅԱՆԻ
Շապիկի ձևավորումը՝ ՄԱՐԻԱՄ ԿԱՆԱՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 70×100 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 24 տպ. մամուլ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

Downloaded from http://www.biomedcentral.com/1756-0500/4/1

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

LONDON
Borfleur
Isigny
Normand
Brest
Bretagne
Vilaine
Mayenne
Loire
Nantes
Poitou
Eshandes
Charent
Chan
Bordeoux
Long
Landes
Mont-de-Ma
Adour
Pau